ՀՈՎՍԵՓ ԱՎԱԳ
ՔԱՀԱՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ

ԵՐԿՐԱՅԻՆ ՀՐԵՇՏԱԿԸ

(Քարոզների ընտրանի)

ՍԲ. ԷՋՄԻԱԾԻՆ

2020

ՄԱՅՐՍ ՆՇԱՆՎԱԾ ԺԱՄԱՆԱԿ
ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ
75 ԵՎ 90 ՏԱՐԵԿԱՆՈՒՄ

«Մեր տան ճրագն է մայրս,
Մեր տան արեգակն է մայրս»
Հովհաննես Շիրազ «Մայրս»

«ԵՐԿՐԱՅԻՆ ՀՐԵՇՏԱԿԸ»

ՀՈՎՍԵՓ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ
Գրքի կողքի ձևավորումը՝ Մաշտոց Չոպանյանի

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ն.Ս.Օ.Տ.Տ.

ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Հրամանաւ Տեառն Յովնանու Արքեպիսկոպոսի

Առաջնորդին Միացեալ Նահանգաց

Արեւմտեան Թեմի

«ԵՐԿՐԱՅԻՆ ՀՐԵՇՏԱԿԸ» ԱՆՈՒՆԸ

ԿՐՈՂ ՔԱՐՈԶՆԵՐԻՍ ԸՆՏՐԱՆԻՆ

ՆՎԻՐՎՈՒՄ Է ՀՈԳԵԼՈՒՅՍ ՄՈՐՄ՝

ԱՆԺԻԿ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

ԻՐ ԶԱՎԱԿՆԵՐԻ ԵՎ ԹՈՌՆԵՐԻ

ԿՈՂՄԻՑ

WESTERN DIOCESE OF
THE ARMENIAN CHURCH OF NORTH AMERICA
Հարաւային Ամերիկայի Արեւմտեան Թեմ
HIS EMINENCE ARCHBISHOP HOVNAN DERDERIAN, PRIMATE

ԽՕՍՔ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ
ԱՐԺ. Տ. ՅՈՎՍԷՓ ԱՒԱԳ ՔՀՆՅ ՅԱԿՈԲԵԱՆԻՆ

Մեզ համար ուրախութիւն է տեսնել Արժ. Տ. Յովսէփ Աւագ Քհնյ Յակոբեանի քարոզներու նոր ժողովածուն։ Անոր բովանդակութեան մէջ ներկայացուող 72 քարոզները, որ նուիրուած են քրիստոնէական բարոյականութեան, հաւատքի տարաբնոյթ հարցերու, կենսական մէկ ուղիով կարծես կապակցուած ըլլան աստուածային սիրոյ մարմնաւորում հանդիսացող էութեան՝ մայրական սիրոյ գաղափարին։ Եւ ներքին զոհունակութեամբ է, որ կը յայտնենք, որ Տէր Հայրը ներկայ ժողովածուն ձօնած է իր սիրեցեալ մօր՝ հոգելոյս Անժիկ մայրիկի յիշատակին։

Մեր ձգտումը մշտապէս պէտք է ըլլայ ազնուացնել, հարստացնել մեր ներաշխարհը, հոգին, որ *«առաւել է, քան զմարմին»*, եւ Տէր Յովսէփի քարոզներու ներկայ ժողովածուն մի նոր ու լաւ առիթ կ՚ընծայէ մեր հաւատացեալներուն՝ սնուցանելու իրենց հոգին հոգեւոր ու բարոյական արժէքներով, լուսաւորելու իրենց էութիւնը հոգեւորապէս, ինչպէս նաեւ ֆիզիկապէս, քանզի մաքրութեամբ առաւել տեսանելի կը դառնայ Աստուծոյ ներկայութիւնը։

Մեր օրհնութիւնն ու գնահատանքը կը բերենք գրքի հեղինակին, թող որ Արժ. Տ. Յովսէփ Աւագ Քհնյ Յակոբեանի հոգեւոր և ստեղծագործական կեանքը բազմապատկուի ու յարատեւէ։

Յովնան Արք. Տէրտէրեան
Առաջնորդ Հիւսիսային Ամերիկայի
Արեւմտեան Թեմի

Մայիս, 2020

3325 North Glenoaks Blvd., Burbank, CA 91504
Tel: 818.558.7474 Fax: 818.558.6333 E-mail: info@wdacna.comwww.WDACNA.com

ՆԱԽԱԲԱՆ

«Երկրային Հրեշտակը» քարոզներիս ընտրանին բաղկացած է *72* քարոզներից, մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի *72* աշակերտների օրինակով:

Ովքե՞ր էին Հիսուսի 72 աշակերտները: Գիտենք, որ Հիսուսի Առաքյալները *12-ն* էին, ովքեր միշտ Նրա հետ էին, մինչև նրա Համբարձումը:

Քրիստոս ընտրեց ևս *72* աշակերտ՝ աշխարհին փրկության Ավետարանը քարոզելու և Աստծո խոսքը տարածելու համար. *«Ով ձեզ լսում է, ինձ է լսում, և ով ձեզ մերժում է, ինձ է մերժում» (Ղուկաս 10:16):*

Կարմիր ծովն անցնելուց հետո Մովսես մարգարեն ժողովրդին առաջնորդեց անապատ, նրանք սկսեցին տառապել սաստիկ ծարավից ու տրտնջալ: Իսկ երբ Եղիմ հասան, այնտեղ տասներկու աղբյուրներ և յոթանասուներկու արմավենիներ տեսան: Այս պատմության մեջ Մովսեսն օրինակն է Քրիստոսի, իսկ տասներկու աղբյուրները՝ տասներկու առաքյալների: Տասներկու աղբյուրներն սկզբում դառնահամ էին, իսկ երբ Մովսեսն Աստծու ցույց տված փայտը գցեց ջրի մեջ, դրանք քաղցրահամ դարձան, ինչպես և առաքյալներն էին սկզբում դառնահամ, իսկ հետո խաչով քաղցրացան:

Յոթանասուներկու արմավենիները շատ էին վեր խոյացել, սակայն Մովսեսի աղոթքներով դրանք ներքև խոնարհվեցին, որպեսզի ժողովուրդը կարողանա քաղել և ուտել դրանց պտուղներից: Յոթանասուներկու արմավենիները յոթանասուներկու աշակերտների օրինակն են, ովքեր բոլոր արարածներին կերակրեցին աստվածային քաղցրաճաշակ վարդապետությամբ, որն առավել է ամեն տեսակի անուշահամ կերակուրներից (կարդալ Ելից 15:22-27):

Քրիստոս *72* աշակերտներով բաբելոնյան մեղքի արդյունքում *72* լեզուների ու ազգերի բաժանված մարդ-

կանց համախմբեց մեկ հավատի ներքո։ Յոթանասուներկու անհայտ անձիք դարձան բոլոր ազգերի մեջ Քրիստոսի անունը տարածողները. *«Այնուհետև Տերը նշանակեց ուրիշ յոթանասուներկու հոգի ևս և նրանց իրենից առաջ երկու-երկու ուղարկեց այն բոլոր քաղաքներն ու վայրերը, ուր ինքը գնալու էր։ Եվ նրանց ասաց. «Հունձն առատ է, իսկ մշակները՝ սակավ։ Արդ, խնդրեցե՛ք հնձի Տիրոջը, որ մշակներ ուղարկի իր հնձի համար։ Գնացե՛ք, ահա ուղարկում եմ ձեզ իբրև գառներ գայլերի մեջ։ Մի՛ վերցրեք ո՛չ քսակ, ո՛չ մախաղ, ո՛չ կոշիկներ և ճանապարհին ոչ ոքի ողջույն մի՛ տվեք։ Որ տունը մտնեք, նախ ասացե՛ք. «Խաղաղությո՛ւն այս տանը». եթե այնտեղ կա խաղաղասեր մարդ, ձեր խաղաղությունը նրա վրա կհանգչի. ապա թե ոչ՝ ձե՛զ կվերադառնա։ Նույն տանը գիշերեցե՛ք, կերե՛ք և խմեցե՛ք նրանց ունեցածից, որովհետև մշակը արժանի է իր վարձին. տնից տուն մի՛ տեղափոխվեք։ Ո՛ր քաղաքը որ մտնեք, և ձեզ ընդունեն, կերե՛ք, ինչ որ ձեր առաջ դնեն։ Եվ բժշկեցե՛ք դրա մեջ եղած հիվանդներին և նրանց ասացե՛ք. «Մոտեցել է ձեզ Աստծո արքայությունը» (Ղուկ. 10:1-10):*

Յոթանասուներկու աշակերտները քարոզեցին ու պատմեցին Աստծու մասին, գալիք փրկության ու երկնքի արքայության մասին։

Տիրոջ *72* աշակերտներից առավել հայտնիներն են՝ Անանիան (Գործք 9:10,17), ով մկրտեց Սբ. Պողոս Առաքյալին, Շիղան (Գործք 15:22), ով դարձավ Կորնթոսի եկեղեցու առաջին եպիսկոպոսը, Բառնաբասը (Գործք 4:36, 9:27), ով դարձավ Սբ. Պողոս առաքյալի գործընկերը, Հուստոսը, ով Սբ. Մատաթիա Առաքյալի հետ թեկնածու էր ուրացող Հուդայի տեղը լրացնելու, բայց, վիճակի չընկնելու պատճառով, չլրացրեց նրա տեղը (Գործք 1:23) և ուրիշներ։

Ղուկասի Ավետարանի 10-րդ գլխից մեզ պարզ է դառնում 72-ի առաքելության մանրամասները։

ա. Նրանք կոչվեցին զույգերով վկայել Տիրոջ Ավետարանը (Ղուկ. 10:3)։

բ. Նրանք կոչվեցին աշխարհային ավելորդություններից հեռու մնալ (Ղուկ. 10:4)։

գ. Նրանք կոչվեցին խաղաղություն բաշխել այն տներին, որոնք պիտի այցելեին (Ղուկ. 10:5-6)։

դ. Նրանք կոչվեցին բժշկել հիվանդներին, սրտով բեկյալներին, վհատվածներին… (Ղուկ. 10:9)։

ե. Նրանք կոչվեցին իրենց կյանքի օրինակով և ուսուցմամբ քարոզել Աստծո Արքայությունը (Ղուկ. 10:9)։

Միևնույն ժամանակ Տերը նրանց զգուշացրեց պատրաստ լինել մարդկանցից մերժվելուց և անգամ իրենց կոշիկների փոշին թոթափել նրանց առջև ովքեր մերժում են Տիրոջ Ավետարանը։

Բացի տասներկու առաքյալներից եղան մարդիկ, ովքեր կոչվեցին Քրիստոսի աշակերտներ։ Բայց ի՞նչ է նշանակում լինել Քրիստոսի աշակերտ։

«Եթե մեկը կամենում է իմ ետևից գալ, թող ուրանա իր անձը և իր խաչը մշտապես վերցնի և գա իմ ետևից, որովհետև ով որ կամենա իր անձը փրկել, այն պիտի կորցնի, իսկ ով որ իր անձը ինձ համար կորցնի, այն պիտի փրկի» (Ղուկ. 9:23-24)։

Լինել Քրիստոսի աշակերտ՝ նշանակում է իմանալ՝ ինչպես մեռնել հավիտենական կյանք ստանալու և հավիտենություն ձեռք բերելու ու ինչպես ծածուկ մնալ երկրում, երկնքի արքայության մեջ հայտնվելու համար։

«Աշակերտ լինել նշանակում է անվերապահորեն հետևել Քրիստոսին՝ սովորելով Նրանից։ Ինչպես Քրիստոսի 72 աշակերտները լսելով սովորեցին և գնացին տարածելու Նրա խոսքը, բայց մնացին աշակերտ, և ոչ թե իրենց վերագրեցին այդ ուսմունքը, այդպես էլ մենք աշակերտ մնալով պետք է լինենք Քրիստոսի խոսքի և վարդապետության փոխանցողը»,- ասում է Տեր Միքայել քահանա Նուրիջանյանը։

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին Քրիստոսի *72* աշակերտների հիշատակության օրը տոնում է Վարագա Խաչին հաջորդող շաբաթ օրը՝ հիշեցնելու համար, որ ամեն օր այդ յոթանասուներկուսին կարող է միանալ ևս մեկը, բայց անհայտ մնալ։

Հիսուսի *72* աշակերտներին նվիրված շարականն է՝ «Իմաստութիւն երկնային»-ը.

Քրիստոս, Դու, որ տասներկու առաքյալներիդ և յոթանասուներկու ընտրյալ աշակերտներիդ օրինակը սկզբից ճանաչել տվեցիր Եղիմի արմավենիների և աղբյուրների թվով, մարդասեր Փրկիչ, նրանց աղաչանքով խնայիր մեզ։

Հոր իմաստություն Հիսուս, Դու, որ տունդ՝ եկեղեցին կառուցեցիր և նրա մեջ Սուրբ Հոգու յոթնարփյան զորությունը իբրև սյուն կանգնեցրեցիր, ու ծառաներիդ՝ սուրբ առաքյալներին ուղարկեցիր հեթանոսներին հրավիրելու ևս մասնակից դառնալու լի բաժակի ուրախությանը, մարդասեր Փրկիչ, նրանց աղաչանքով խնայիր մեզ։

Դու, որ սուրբ առաքյալներիդ մարդկանց երկնքում և երկրի վրա կապելու ու արձակելու Քո Տերունական իշխանությանը մասնակից դարձրեցիր, երբ դատելու աթոռի վրա նստես, խոստացար Քեզ աթոռակից դարձնելու, մարդասեր Փրկիչ, նրանց աղաչանքով խնայիր մեզ։

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ

Իմ հայրենի ժողովրդի ընթերցանությանն եմ հանձնում իմ նոր *Քարոզների Ընտրանին,* որը անվանել եմ *«ԵՐԿՐԱՅԻՆ ՀՐԵՇՏԱԿԸ»:* Այն նվիրված է լուսահոգի Մորս՝ Անժիկ Հակոբյանի հիշատակին: Ինչո՞ւ այս վերնագիրը ընտրեցի, որովհետև մորս անունը Անժիկ է, անգլերենով Angel, որ թարգմանվում է Հրեշտակ: Բոլոր մայրերը Աստծու կողմից նշանակված երկրային հրեշտակներ են, մայրս էլ մեկն էր դրանցից: Այդ պատճառով էլ գրքիս անունը դրեցի *«ԵՐԿՐԱՅԻՆ ՀՐԵՇՏԱԿԸ»* նվիրելով նրա հիշատակին: Մորս ճանաչողներից մեկն ասաց. *«Երկրքում մի հրեշտակ էլ ավելացավ»:* Հավերժ լույս իմ մոր հիշատակին:

Աղոթող եմ Ազգիս Վեհափառ Հայրապետի՝ Ն.Ս.Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի քաջառողջության և իր եկեղեցանվեր ու հայրենաշեն գործոց հաջողության համար:

Արևելահայերենի ուղղագրության և մտքի դասավորման, ինչպես նաև գրքի կազմը պատրաստելու աշխատանքի մեջ, իրենց կարևոր լուման ունեն Առաջնորդարանի աշխատակիցներ՝ ինձ շատ սիրելի Հայկ Մաղոյանն ու Մաշտոց Չոպանյանը, որոնց նույնպես հայտնում եմ իմ սերն ու շնորհակալությունը:

Քարոզգրքիս լույս ընծայման նպատակն է ինչ որ չափով հագեցնել մեր ժողովրդի հոգու ծարավը: Եթե մի կաթիլ իսկ հաջողվեմ իմ այս առաքելության մեջ, դա կլինի իմ վարձը: Աղոթեցեք ինձ համար:

Սիրով՝

Հովսեփ Ավագ Քահանա Հակոբյան

Մայիս, 2020
Բրբենկ, Կալիֆորնիա, ԱՄՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ուրախ սրտով և ներքին սպասումով ենք սկսում Արժ. Տեր Հովսեփ Ավագ Քահանա Հակոբյանի նոր՝ *«Երկրային հրեշտակը»* ժողովածուի ընթերցումը։ Ծանոթ ենք բանիբուն մեր քահանայի գրքերին, որ քարոզների խիտ ժողովածուներ լինելով՝ հոգևոր ճառագայթներ են հավելում ու սփռում մեր շուրջը։ Եվ ահա նոր արդյունք՝ ընտրանի քարոզների, որ ձոնված է հեղինակի Անժիկ մայրիկին, և ուրեմն՝ մայրերին ու մայրությանը ընդհանրապես։

Քարոզը Քրիստոսի պատգամը, ավետարանական խոսքը քրիստոնյային մատուցող մի ուղի է։ Քարոզը մեզ՝ բոլորիս հետ հոգևորականի հաղորդակցությունն է, որի մեջ ենք տեսնում մեր հոգևոր հայրերին ու նրանց գործը։ Ձևափոխելով հայտնի խոսքը կարելի է ասել՝ հոգևորականն այն է, ինչ իր քարոզներն են։ Այդ խորհրդով ենք մենք մոտենում Տեր Հովսեփին և իր երկերին, գրվածքներին, փորձում քարոզների հատվածների միջից արտածել և ըմբռնել հոգևոր բյուրեղացված մտքերը։

Ովքեր անձամբ ճանաչում են եռանդուն Տեր Հովսեփին և ականատես են եղել նրա սփոփիչ խոսքին ու զրույցներին, այս գրքում վերստին կտեսնեն նույն անձը՝ մարմնացած մտքերի հոսքի մեջ։ Ովքեր չեն ունեցել այդ պատեհությունը, այս գրքով կբացահայտեն սրտաբաց ու անկեղծ, և որ քիչ կարևոր չէ՝ հայրենասեր հոգևորականին ու հեղինակին։ Տեր Հովսեփի խոսքով վերստին կխորհրդածեն, որ *«աշխարհի արժեքներով չտարվելը մեզ պիտի առաջնորդի սրբության»,* որ *«եթե մեր սրտի դռները փակ են Արարչի առաջ, ինչպե՞ս պիտի նա ներս մտնի»։* Տեր Հովսեփին բնորոշեցինք հայրենասեր, որը հպարտ է *«ճեմարանով, հավատարիմ է մեր նախնյաց սուրբ հավատքին, Ս. Մեսրոպի այբ-բեն-գիմ-ին, մեր հերոսների անընկճելի ոգուն»,* որ մեր նախնի ոգով հռչակում է՝ *«Աստված իջել է մեր հայրենի հողի վրա՝ Սբ. Էջմիածին»։* Մեր օրերի ու ներկա աշխարհի վայրիվերումների, տագնապ-

ների արձագանքն ենք գտնում քարոզներում, որից ծնվում է հեղինակի՝ հավերժական թվացող հարցը. *«Շարունակու՞մ ենք արդյոք ապրել քրիստոնյայի կյանքով»:*

Մեր հավատքը սեր է: Եվ ի՞նչն է ամենից շատ համապատասխանում սիրո զգացումին: Անշուշտ՝ մայրը: Խիստ սիրելի է Տեր Հովսեփի տողերի մեջ տեսնել մայրիկին, և սա առիթ է՝ յուրաքանչյուրիս մայրիկի լույս կերպարին անդրադառնալու և քրիստոնեական պատգամներով վերամաքրվելու նրա առաջ: Ժողովածուի էջերը ընթերցելիս վերստին լցվում ես մայրական սիրո զգացումներով ու գոտեպնդվում անսայթաք այդ սիրո ամրութեամբ: Եվ դրա մեջ հասնում ենք գրքի խորհրդի գագաթնակետին, երբ կույր աղջիկն ասում է՝ *«Աստված իմ մոր նման է»:*

Մայրապաշտ է մեր ժողովուրդը: Հազարամյակների խորքից նվիրական իրողությունները կապում ենք մոր հետ՝ Մայր Հայրենիք, Մայր Եկեղեցի, Մայրենի Լեզու, Մայր Բնություն: Դրան համահունչ է հեղինակի խոսքը՝ *«Ինչպես մենք խոնարհվում ենք Աստծո և մեր սրբությունների առաջ՝ Հայրենիքի, Հավատքի, Եկեղեցու, այնպես էլ խոնարհվենք մեր մայրերի առաջ»:*

Հավատքի հարցերին առնչվելիս չենք կարդացել առավել կարևոր ու սթափեցնող միտք, ինչ որ ասում է Տեր Հովսեփը. *«Մի՛ հավատացեք այն մարդու հավատքին, որ Աստծուն սիրում է, իսկ ծնողին՝ ոչ»:*

Ժողովածուն ընթերցելով պիտի մաղթենք, որ յուրաքանչյուր քարոզ մի-մի աշակերտ դարձած, Քրիստոսի 72 աշակերտների նման, տարածվի ու թափանցի մարդկանց հոգիներից ներս, դիպչի ընթերցողի սրտին, փափկացնի այն: Մոր սիրո զգացմունքների թևերով Տեր Հովսեփի քարոզները, նրանցում ամբարված պատգամները թող ներս մտնեն մեր սրտերն ու մտքերն ու հոգիները: Մեր փափագը միացնենք Տեր Հովսեփին և աղոթք անենք՝ *«Միրելի մայրեր, միշտ երջանիկ լինեք, ուրախ, հպարտ, որ բարի ու արդար է Ձեր ստեղծագործությունը»:*

Նորայր Պողոսյան
Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ

ԱՄՈՒՐ ԺԱՅՌԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՆ

«Անձրևները թափվեցին, և գետերը հորդեցին, հողմերը փչեցին և զարկեցին այդ տանը, բայց չկործանվեց, որովհետև ժայռի վրա էր հաստատված» (Մատթ. 7:24-27):

Որևէ հավատացյալ կարող է հարցնել, թե՝ *«Ինչո՞ւ հատկապես այս բնաբանը ընտրեցի»:* Ավելի քան քառասուն չորս տարի է, որ ծառայում եմ Հայց. Առաքելական Եկեղեցուն ու ինձ միշտ հետաքրքրել է այն հարցը, թե մեր ժողովուրդը հասկացե՞լ է, կամ պիտի հասկանա՞ն և կամ պիտի կարողանան հասկանալ, թե՝ *«Ի՞նչ է իրենից ներկայացնում Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին, թե ի՞նչ է եղել նրա դերը մեր պատմության մեջ և կամ թե՝ ի՞նչ է նրա խորհուրդը այսօր»:*

Սակայն մինչև այս հարցին պատասխանելը ուզում եմ անդրադառնալ, թե մեր Տերը Լերան քարոզի վերջավորության ինչո՞ւ հատկապես արտասանեց իմ ընտրած բնաբանի այս խոսքերը։

Երկու հիմնական պատճառներով.

Առաջինը՝ Նա գիտեր, որ Իրեն լսողների մեջ կարող են լինել մարդիկ, ովքեր պարզապես եկել էին լսելու համար։ Այդ պատճառով ուզեց հանդիմանել նրանց իրենց անհոգության համար, նմանեցնելով այն հիմար մարդուն, ով իր տունը կառուցում է ավազի վրա. *«Ով որ լսում է իմ այս խոսքերը և դրանք չի կատարում, կնմանվի մի հիմար մարդու, որ իր տունը շինեց ավազի վրա. անձրևները թափվեցին, գետերը բարձրացան, հողմերը փչեցին և զարկեցին տանը, և նա ընկավ, և նրա կործանումը մեծ եղավ» (Մատթ.7:24-27):*

Երկրորդ, Իրեն լսողներին ու Իր քարոզած ճըշմարտությունները գործադրողներին ուզեց ցույց տալ իրական և հավիտենական ճանապարհը, նրանց նմանեցնելով այն իմաստուն մարդուն, ով իր տունը կառուցում է

անխորտակելի ժայռի վրա. *«Ով որ լսում է իմ այս խոսքերը և կատարում է դրանք, կնմանվի մի իմաստուն մարդու, որ իր տունը շինեց ժայռի վրա, անձրևները թափվեցին, գետերը բարձրացան, հողմերը փչեցին և զարկեցին տանը, բայց չկործանվեց, որովհետև ժայռի վրա էր հաստատված» (Մատթ. 7:24-27):*

Աստծու խոսքերը ոչ միայն պետք է լսել, այլ որ կարևոր է դրանք պետք է գործադրել, քանի որ երկուսն էլ իրար հետ կապված իրականություններ են: Հիսուս ասում է. *«Մանավանդ երանի է նրանց, որ լսում են Աստծու խոսքը և կպահեն» (Ղուկ. 11:28):*

«Ես հայ քրիստոնյա եմ» ասելը բավարար չէ, եթե մեր սիրտը լցված չէ Աստծու սիրով ու մենք չենք փորձում Նրա կամքը կատարել:

Ուրեմն, նա ով որ միայն արտաքնապես անունով է քրիստոնյա, պարզապես ցույց տալու համար, դժբախտաբար ինքն իրեն է խաբում:

Իմաստուն մարդը նա է, ով իր գործը սկսելուց առաջ մտածում է նրա հետևանքների մասին: Չափում է, ձևում, թե այն որքանո՞վ շահութաբեր է, ստուգելուց հետո, երբ տեսնում է, թե պիտի կարողանա այդ գործից գլուխ հանել, այն ժամանակ է միայն ձեռնարկում դրան: Հիսուս ասում է. *«Զեզնից ո՞վ, եթե կամենա աշտարակ շինել, նախ նստելով չի հաշվի ծախսերը, թե ավարտելու համար բավական դրամ ունի՞» (Ղուկ. 14:28-29):* Ուրեմն իմաստուն մարդը նա է, ով նախ ամեն ինչ պատրաստում է ու հետո է գործի անցնում և ոչ միայն սկսում է, այլև նախազգուշական միջոցներ է ձեռք անում գալիք պատահարների ու դժվարությունների դեմ: Այդպես էլ հոգևոր կյանքում. իմաստուն հավատացյալը նա է, ով իր կյանքը, հավատն ու հույսը հաստատում է Աստծու վրա, առանց վախենալու ապագա դժվարություններից ու զոհաբերություններ կատարելով, շատ լավ հասկանում է, որ պիտի շահի հավիտենական կյանքի բոլոր բարիքները:

Առաքյալենը ենթարկվեցին ամեն ձևի զրկանքների և չարչարանքների, բայց ոչ մի րոպե չթուլացան ու չհեռացան իրենց հավատից։ Նրանք ցուց տվեցին, որ իրենց հավատը հաստատված է անխորտակելի մի ժայռի վրա, որին դիպչելով փշրվեցին աշխարհի բոլոր տեսակի փոթորիկները։

«Իգնատիոս Անտիոքացի Հայրապետը ձերբակալված էր և դատապարտված կրկեսի մեջ առյուծների առջև նետվելու՝ իր քրիստոնյա լինելու համար։ Վերջին երեկոյան, նրա բարեկամներից շատերը հնարավորություն են ստեղծում, որպեսզի նրան բանտից փախցնեն, բայց Հայրապետը մերժում է, ասելով.

«Ես չպիտի վախենամ ու բանտից փախչեմ։ Աստված այնպես է տնօրինել, որ վաղը ես գազանների համար կեր դառնամ։ Ես նմանվում եմ այն ցորենին, որ ջրաղացի քարերի միջև փշրվում է, որպեսզի հաց դառնա և ուրիշներին սնունդ լինի։ Վաղը ես էլ պետք է գազանների բերանում փշրվեմ, որ հավատի հաց դառնամ և բաժանվեմ մարդկանց, որպեսզի նրանց հավատը ուժեղանա»։

Սրանք նահատակվող Հայրապետի վերջին խոսքերն էին։

Իրապես էլ, հաջորդ օրը, երբ գազանները կրկեսում հարձակվում են նրա վրա և բզկտում, ժողովուրդը տեսնում է նրա քաջությունն ու վեհ կեցվածքը։ Ասում են, թե այդ պահին Հայրապետը ծնկի եկած աղոթելիս է եղել։ Շատ անաստվածներ ազդվել են այդ տեսարանից ու իրենք էլ քրիստոնյա մկրտվել»։

Քսանմեկերորդ դարում ենք ապրում և մեր շուրջը կան բազում հրապուրիչ ուժեր՝ դրամ, վայելք, հանգիստ կյանքի պայմաններ։ Ապրում ենք մի աշխարհում, ուր մարդիկ և պետություններ դժբախտաբար իրար միս են ուտում, ուր գիտությունն առաջ է ընթանում սրընթաց կերպով և ուր մարդիկ ծուռ աչքերով են նայում մեկը մյուսին։ Մեռնում են թագավորություններ, ծնվում են նոր պե-

տություններ և այս արևի տակ ամեն օր, ամեն ժամ ու ամեն րոպե մի բան փոխվում է, նույնիսկ մարդը, որն Աստծու կատարյալ ստեղծագործությունն է, նա էլ է փոխվում։

Միակ բանը, որը մնում է հաստատ, անխախտ ու անփոփոխ, դա մեր քրիստոնեական հավատն է։

Հայ Եկեղեցին միակ վայրն է, ուր հոգիները կարող են թարմանալ։ Օտարները կարիք չունեն Եկեղեցու շաղախին իրենց դիմագիծը պահելու համար, բայց վա՛յ այն հայ քրիստոնյային ու հայ երիտասարդին, որը կհեռանա ու կմոռանա իր դարավոր Եկեղեցու ճանապարհը։

Օտար մի աստվածաբանի՝ Պերտրանդ Պարեզի կարծիքը. *«Ես հաճախ և շատ հստակ տպավորություն եմ ունեցել, որ հայը, եթե դադարի անգամ հավատալուց, չի դադարի հավատացյալ լինելուց։ Նա ներքնապես կզգա, որ եթե իր Եկեղեցու նշանակությունը վերցվի, իր բոլոր զգացմունքների շենքը կփլվի»։*

«Անձրևները թափվեցին, գետերը բարձրացան, հողմերը փչեցին և զարկեցին տանը, բայց չկործանվեց, որովհետև ժայռի վրա էր հաստատված»։

Երեկ դու հայ քրիստոնյա էիր, այսօր շարունակո՞ւմ ես ապրել հայ քրիստոնյայի կյանքով։ Ապագայում եկող սերունդներ շարունակեք ապրել հայ քրիստոնյայի կյանքով։ Եվ թող մեր Հայրապետների հավատից մի կաթիլ, նրանց հայրենասիրությունից մի կայծ իջնի ձեր հոգիների մեջ, մաքրի ու լվա, բյուրեղացնի ու գեղեցկացնի, ավելի հայացնի, ավելի քրիստոնեացնի՝ չօտարանալու և չկորչելու համար. ուստի չձուլվելու համար ամուր կառչած մնանք մեր Մայր և Սուրբ Եկեղեցու տեսիլքին ու Խորանին։

Կալիֆորնիայում և Ամերիկայի այլ նահանգներում անձրևախառն ու ձյունախառն փոթորիկներ եղան։ Բոլորս էլ տեսանք, թե ինչպես անձրևները հեղեղի վերածվելով շատ միլիոնանոց տների տակից սրբեցին տա-

բան հողը և դրանք փուլ եկան, որովհետև նրանց հիմքը հաստատված էր ավազի վրա։

Մեր հեռատես ու խելացի Հայրերը Հիսուսի ճշմարիտ խոսքերին հետևելով, նմանվեցին իմաստուն մարդուն և Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին հաստատեցին ամուր ժայռի վրա։ Փառք ու պատիվ նրանց։

Հիշենք Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանցի խոսքը.

«Այսօր էլ նույն պատերազմը ունինք, ո՛չ զենքի, ո՛չ հալածանքի դեմ ծառանալու, այլ մի ուրիշ ահավոր թշնամու, որ անտարբերության հոգի է կոչվում դեպի ազգային ժառանգությունները, երկպառակության համառ հոգի, որ սպառնում է երկրորդականը կարևորից և սխալն ու ճշմարիտը իրարից զանազանելու կարողության։ Մեզ վիճակված է մի ծանր դրություն, որ սփյուռքի հայության մահ է սպառնում ցրված բազմաթիվ ազգերի ու պետությունների մեջ և մոռանում ենք, թե մեզ հավաքող ու միացնող մի հաստատություն ունինք, որի պաշտպանության համար ծառացել էին Վարդանանք և այդ՝ Հայաստանյայց եկեղեցին է իր քրիստոնեական և ազգային բովանդակությամբ» (Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանց «Դեպի Լույս և Կյանք», Գանձասար մատենաշար, Երևան 1994)։ Ամեն։

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

«Էջ Միածինն ի Հօրէ և լոյս փառաց ընդ նմա
Զայնք հնչեցին սանդարամետք անդնդոց։
Տեսեալ զլոյս մեծ Հայրապետին Գրիգորի
Պատմէր ցնծութեամբ հաւատացեալ արքային։
Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ.
Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս
Ի Հայաստան աշխարհի։ (Շարական)

«Ի՞նչ է նշանակում եկեք կառուցենք լույսի սուրբ խորանը։ Կառուցել նշանակում է քարը քարի վրա դնել, աղյուս աղյուսի վրա շարել, մի գործ, որ կատարում են ճարտարապետները, որմնադիրներն ու աշխատավորները։ Սակայն բուն եկեղեցին, ճշմարիտ եկեղեցին մեր հոգիներում կառուցվեց 4–րդ դարում Սուրբ Գրիգոր Լուսավորչի ձեռքերով, հավատի եկեղեցին, որը ծնունդ է տալիս նյութեղեն եկեղեցուն։ Այն եկեղեցին, որը գաղտնի մի ճանապարհ ունի դեպի երկինք։ Պատկերացրեք, թե մեր պատմության մեջ քանի հազարավոր եկեղեցիներ կառուցվեցին, և քանիսները խոնարհվեցին։ Բոլոր տեսակի թշնամիները քարը, աղյուսը, փայտը կարողացան քանդել և գտնել եկեղեցու նյութեղեն ճանապարհը; Եվ ինչպես մեր մեծ բանաստեղծ Վահան Թեքեյանն է ասել· «Եկեղեցին հայկական գաղտնի ճամբա մը ունի, որ կանցնի հոգիներեն և կերթա առ Աստված»։ «Ահա մեր անմահության գաղտնիքը, այդ գաղտնի ճանապարհը մեր թշնամիները չկարողացան գտնել։ Այդ եկեղեցին ձեր հոգիների և սրտերի մեջն է, որը Աստծու կողմից է կառուցված» (Գարեգին Ա.)։

«Մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի քարոզչության և կյանքի օրինակին հետևելով՝ յուրաքանչյուր հովիվ, եթե ուզում է սիրվել ու հասկացվել պիտի լինի իր ժողովրդի մեջ, ժողովրդի հետ և աշխատի նրա համար։ Հովվությունը ժողովրդի մեջ լինելու և նրա հետ աշխատելու առաքե-

լությունն է: «Էջմիածինը քար չէ, Էջմիածինը հիշատակ չէ, Էջմիածինը միայն սրբություն չէ, Էջմիածինը առաքելություն է»,- ասել է Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Ցավ է ինձ համար այս մասին խոսել, սակայն այսօր, դժբախտաբար թե՛ Հայրենիքում և թե՛ Սփյուռքում, մեր ժողովրդի զավակներից շատերի սրտերում և հոգիներում տեղ են գտել տարբեր տեսակի մոլորեցուցիչ հոգեվոր *«ուսմունք»-ներ,* որոնք խորթ են մեր պապերի սրբազան հավատին: Մեր Տերը Հիսուս իր ժամանակին խարազանով վռնդեց ամեն անսուրբ գործ և բոլոր անմաքուր մարդկանց՝ ասելով, «*Գրված է՝ իմ տունը աղոթքի տուն պիտի կոչվի, իսկ դուք ավազակների որջ եք արել այդ» (Մատթ· 21:13):* Նրանք, որոնք շեղվել են ճշմարիտ ճանապարհից և կամ փորձում են շեղվել, թող սթափվեն ու միշտ հիշեն, որ իրենց նախահայրերը նահատակվեցին, զոհվեցին և հայրենիքի ու հավատի համար իրենց արյունը թափեցին, իսկ այսօր մենք ի՞նչ ենք անում, մի կտոր հացի ու մի քանի դոլարի համար նրանց թափած արյո՞ւն ենք մոռանում: Ի՞նչ պատասխան պիտի տանք մեր միլիոնավոր նահատակների սուրբ հոգիներին, երբ հատուցման ու հաշվետվության ժամանակը գա:

Մարդիկ երբեմն մտածում են, թե սուրբ լինել, նշանակում է՝ կատարյալ և մաքուր լինել: Մեր խոսքի ու կեցվածքի մեջ չպետք է թերություն լինի: Իրոք, այսպե՞ս պետք է հասկանալ սրբությունը; Բայց կատարյալ ի՞նչ կա աշխարհում: Կատարյալ մարդ կարելի՞ է գտնել: Ուրեմն սըրբություն չկա՞:

Աշխարհի արժեքներով, չափանիշներով, հաճույքներով չտարվելը, նրանցից զրկվելը, կարծում ենք, որ մեզ պիտի առաջնորդեն սրբության: Ճգնավորները մեկ-մեկ այդ տպավորությունն են թողնում մեզ վրա: Բայց չէ՞ որ աշխարհն էլ Աստծու աշխարհն է, պիտի անտեսվի՞ այն, բայց չէ՞ որ մենք մի Աստված, մի Հայր ունենք, Ով առա-

վոտից մինչև երեկո այս աշխարհի հոգատարությանն է լծված և նախախնամական Իր արարքներով պահպանում է Իր արարչագործությունը: Ի՞նչ եք կարծում Աստված այսպես վարվելով սխալվո՞ւմ է:

Իսկ հիմա կարող ենք նաև այս հարցը տալ, թե ինչո՞վ և ինչո՞ւ է Էջմիածինը սուրբ, որովհետև քարե՞րն են որոշ ձևով դասավորվել, թե պարզապես որովհետև մենք սուրբ ենք ասում; Մայր Աթոռը անկրկնելի մեկ հատիկ Սրբություն Սրբոց է: Ինչո՞ւ: Պատասխանը պարզ է, որովհետև Աստված իջել է հայրենի հողի վրա, Ինքն է հայտնվել: Այնտեղ ենք մենք հանդիպել Նրան: Աստված այդ տեղը ընտրել է հայ ժողովրդի հետ Իր ուխտի համար; Կարող ենք ուրիշ եկեղեցի կառուցել, ուր բնականաբար ևս Աստված կլինի, մեր հավատով կհայտնվի, բայց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը միակ այն տեղն է, ուր Աստված Ինքն է ընտրել՝ Ինքնիրեն մեզ հայտնելու, մեր կյանքը և մեզ սրբացնելու համար:

Աստվածային գործերը անքննելի են, նրանք բարձր են երկնքի պես, խոր ու անմեկնելի: Այդպիսին էր Միածնի էջքը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Վաղարշապատ քաղաք: Այդ ժամանակ բազմաթիվ ազգեր և ժողովուրդներ կային, որոնք ավելի մեծ ու հզոր էին, ինչպես Հռոմը, բայց Միածինը իջավ հայոց փոքր ժողովրդի մոտ: Նշանակում է, որ մենք ընտրյալ ժողովուրդ ենք ու Աստված միշտ էլ մեզ օգնական և պահապան է եղել ու վստահ եմ պիտի լինի:

Մենք ունենք Սուրբ Էջմիածին, որի գլխավերևում շողում է Լուսավորչի կանթեղը, իսկ նրա ետևում փայլփլում են հայ հերոսների սրերը: Դարեր կգան ու դարեր կանցնեն, բայց Սուրբ Էջմիածինը հավերժ կմնա, իր քարեղեն գոյությամբ ու մանավանդ՝ իր ոգեղեն զորությամբ:

Մեր եկեղեցական պատմության ընթացքում հայոց կաթողիկոսները շատ անգամներ հարկադրված թողել են Սուրբ Էջմիածինն ու գնացել ուրիշ երկրներ: Բայց Սուրբ Էջմիածինը մնացել է հայության սրբավայրը՝ անկրկնելի և

միակ ուխտավայրը, ուր ամեն հայ պիտի գնա՝ ինքն իրեն հայ քրիստոնյա զգալու։

Հաճախ մենք նայում ենք աշխարհին, հուսահատվում ենք և ասում, թե հնարավոր չէ աշխարհում հայ քրիստոնյա մնալ։ Ի վերջո որոշում ենք բոլորի պես լինել, հոսանքին հակառակ չգնալ, որպեսզի կարողանանք ապրել։ Բայց եթե մարդիկ իրենց շրջապատին նայեն, անպայման կհուսահատվեն։ Սակայն շատ կարևոր է, որ մենք նայենք դեպի ներս, դեպի մեր հոգու խորքը, մեր էությունն ու հավատը, որտեղ Աստված անպայման ներկա է, եթե սրտով մաքուր ու արդար ենք։

Գարեգին Արք. Հովսեփյանցը 1918 թվականին իր խոսքն է ուղղում Սարդարապատի հերոսամարտին թըրքական բանակների դեմ կռվի գնացող հայ քաջարի ու անձնվեր զինվորներին.

«Հայրենակիցներ, եղբայրներ և որդիներ, հին դարերում, երբ հայոց զորքը պատրաստվում էր գնալ թշնամու դեմ, նրա հրամանատարները գալիս էին Էջմիածին՝ Կաթողիկոսի մոտ՝ նրա աջը համբուրելու և օրհնությունը ստանալու։ Բայց այս անգամ վտանգն այնքան մեծ է և ահավոր, որ ես ահա Սբ. Էջմիածնից եկել եմ ձեր բոլորի ձեռքը համբուրելու, որ փրկեք Հայրենիքը… փրկեք ձեր պատիվը, հայի պատիվը…»։

Սրբազան Հայրը այս խոսքերը ուղղել է հայ քաջարի զինվորներին, որպեսզի փրկեին Հայրենիքը, հայի պատիվը։ Մեր պատիվը մեր հավատն է։

Եկեղեցին մենք ենք և այդ պատճառով կարիք չկա փոխելու մեր ինքնությունը կամ հրաժարվելու մեր արմատներից։

Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին հայ ազգի ինքնության խարիսխն ու հենարանն է։ Հայ Եկեղեցին խորհրդանշող գերագույն խորհրդանիշը արարատանման Սուրբ Էջմիածինն է, որը հայրենի հողի ծնունդն է։ Նոր Վարդանանք՝ Սարդարապատի հերոսնե-

ը իրենց համբույրը դրոշմեցին Սուրբ Էջմիածնի քարերին ու այնտեղից իրենց հետ տարան հաղթանակը դեպի Սարդարապատ: Այսօր մեզ համար ամեն մեկ օր մահու կենաց պայքար է: Ուզում ենք հայեցի ապրել, ամուր պահել մեր հավատը և տեր կանգնել մեր ազգային ավանդություններին: Եթե այս է մեր պահանջը, ապա չբաժանվենք մեր ինքնությունը խորհրդանշող հավերժական լույսի ու հավատի, հայոց քաջերի ներշնչումի անսպառ օրրան՝ Սուրբ Էջմիածնից, որտեղից լսում ենք մեր սուրբ ու քաջ հերոսների ձայնը ներդաշնակված Աստծու ձայնի հետ:

Ապրում ենք մի աշխարհում, որտեղ մարդիկ հոշոտում են իրար, գիտությունը սրընթաց առաջ է ընթանում, մարդիկ ծուռ հայացքով են նայում իրար: Ստեղծվում են նոր տեսություններ, նոր նշանաբաններ, նոր պայմաններ, մեռնում են թագավորություններ, ծնվում նոր պետություններ, և այս արևի տակ ամեն օր, ամեն ժամ և ամեն րոպե մի բան փոխվում է, նույնիսկ մարդն է փոխվում:

Ժողովրդական առածն ասում է. «*Եթե ուզում ես ապրել երկու կամ երեք տարիներ, ցորեն ցանիր, եթե ուզում ես քսան և երեսուն տարիներ ապրել, ծառ տնկիր, իսկ եթե ուզում ես հարյուր և ավելի տարիներ ապրել, դպրոց կառուցիր, իսկ եթե ուզում ես հազար և յոթ հարյուր տարիներ ապրել, եկեղեցի կառուցիր»:* Ուրեմն այս 1700-ամյա Եկեղեցու խարիսխը, որին հենվեց հայ ժողովուրդը, դիմացավ բոլոր աղետներին ու փորձություններին, նույնիսկ ցեղասպանության, Սուրբ Էջմիածինն էր:

Երջանկահիշատակ և մեր բոլորի սիրելի Վազգեն Վեհափառն իրեն հատուկ ներքին պոռթկումով բացականչում է.

«Սուրբ Էջմիածինը այն մայր հնոցը եղավ, ուր դարբնվեցին հայոց հանճարի անճառ ձևերը և այն գանձարանը, ուր մեկտեղվեցին այդ հանճարի լույս գոհարները:

Սբ. Էջմիածինը մեր Սինա լեռն է, մեր Ակրոպոլը, մեր Սբ. Պետրոսը:

Էջմիածինը սակայն անցյալ չէ միայն, նա նաև ներկա է և մեր ապագան:: Նա կենդանի է ու մշտանորոգ: Սբ. Էջմիածինը միշտ բաշխվում է ու չի նվազում, ինչքան բաշխում է, այնքան շատանում է, ինչքան լույս է սփռում, այնքան շողում է: Դարեր կգան, դարերը կանցնեն, նա միշտ կբարձրանա, կլուսավորի ու կներշնչի, կյանք տալով՝ կապրի:

Ծովերը, օվկիանոսները կամ օտար ձեռքերը մեզ կարող են բաժանել, բայց Էջմիածինը միշտ մոտ է մեզ: Եվ ինչքան հեռու, այնքան մերն է նա, այնքան դառնում է խորհուրդ ու հրաշք, երազ և իսկություն, հույս ու ստուգություն» (Մտորումներ, Մոնրեալ, Կանադա, 2004, էջ 30, արտասանված 23 հունիս, 1957, Ս. Էջմիածնի Կաթողիկեի տոնին):

Սխալվում ենք նրանք, որոնք կարծում են, թե հայ ժողովուրդը պաշտում է Սուրբ Էջմիածնի քարերը: Այդ շփոթությունն էլ ունեցավ Պարսից Շահ Աբբասը: Մայր Տաճարից քարեր տարավ Սպահան՝ զարգացնելու, շենացնելու և ճոխացնելու իր երկիրը, սակայն, ինչպես ասում է հայրենի գրող Ավետիք Իսահակյանը. *«Էջմիածինը կառուցված է ո՛չ թե հաստաբեստ սյուների վրա, այլ հայ ժողովրդի հոգու և սրտի մեջ և դրա համար էլ խորտակելի չէ և անսասանելի է«:* Ուրիշ մի բանաստեղծ՝ Վահան Թեքեյանն ասել է, թե՝ *«Եկեղեցին հայկական անառիկ բերդն է հայ հոգիին«:* Եվ Էջմիածնեցի մի բանաստեղծ էլ՝ Հովհաննես Հովհաննիսյանը ավելացրել է·

Դարեր եկան, դարեր անցան Էջմիածին,
Քո հիմն անշարժ ու անսասան Էջմիածին:

Երկրներ ավերող, ժողովուրդներ կոտորող և ոչընչացնող, աշխարհը հրի ու սրի սարսափների մեջ դողացնող լենկթեմուրները, չինգիզխանները, շահաբասները

հարգեցին և նույնիսկ խնայեցին Սուրբ Էջմիածինը՝ գլուխ խոնարհելով նրա սրբության առջև։

Պատմական դեպքեր շատ կան, դրանցից մեկն է այս.

17-րդ դարում, երբ պարսիկները օսմանցիներից գրավում են Արարատյան գավառը, շատ ավերածություններին շարքին, քանդում են նաև բոլոր եկեղեցիների զանգակատները։

Երբ քանդող բանակը մոտենում է Վաղարշապատին *(Էջմիածին քաղաքի նախկին անունը, որը ներկայումս պաշտոնապես վերականգնված է),* հրամանատարը լուր է ուղարկում զորքերի սպարապետին. *«Աշխարհի բոլոր հայերի ամենամեծ սրբարանի՝ Էջմիածնի Մայր Տաճարի առջև ենք, արդյոք պե՞տք է կործանենք նրա զանգակատներն էլ»։*

«Ո՛չ,- լինում է սպարապետի պատասխանը,- թողեք, որ մայրը հաճախ խոսի իր զավակների հետ, մի՛ կտրեք նրա լեզուն»։

Պատասխանն ավելի քան անսպասելի ու զարմանալի է այդպիսի դաժան ու սարսափ ազդող դահիճների կողմից, բայց իրողություն է։

Սուրբ Էջմիածինը եղել է մայրը, իր թևերի տակ առել է իր վիրավոր զավակներին, իր վերջին շուրջառն ու վեղարը պատռել՝ սպեղանի և բալասան դարձնելու համար իր վիրավոր ձագերին։ Նա մեր փառքն է, խիղճը, որովհետև ինչ որ ունենք քաղաքակիրթ աշխարհին ներկայացնելու, մենք այս բոլորն ստացել ենք Սուրբ Էջմիածնի միջոցով;

Թուլացնել Սուրբ Էջմիածինը, նշանակում է սառեցնել Հայ Ժողովրդի ոգին։ Սուրբ Էջմիածինը կա, կմնա մեր հավատի Սրբություն Սրբոցը։ Հայ Եկեղեցին այն միակ վայրն է, ուր մեր հոգիները թարմանում են։

Սուրբ Մաշտոցն իր լուսաբաց աչքերով Սուրբ Էջմիածնի օրհնության լույսի ներքո տեսավ հայոց ոսկե-

ղենիկ լեզվի աստվածատուր շնորհները և իր սուրբ աջով, որպես նոր կտակ իր ժողովրդին, գծագրեց հայատառ առաջին խոսքերը. *«Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»:* Նույն ինքը՝ Սուրբ Մեսրոպ Վարդապետը, Սուրբ Սահակ Հայրապետն ու նրանց աշակերտները, թարգանիչ մեծ սուրբերը անխոնջ տքնությամբ Սուրբ Էջմիածնի կամարների ներքո թարգմանեցին Սուրբ Գիրքը և անմար ջահը վառեցին հայ դպրության ու գրականության, հիմքը դրեցին հայ դպրոցի, որը դարձավ վահան ամրության:

Ազգիս ամենաօրհասական պահերից մեկին, երբ հայի լինելիությունն էր որոշվում, նույն ինքը՝ Վաղարշապատի Կաթողիկեն, օրհնեց սուրը Վարդանի *«Վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց»:* Ավարայրի դաշտում Սուրբ էջմիածնի աղոթքով, Լուսավորչի խաչվառով ու լուսաճաճանչ խաչով Սուրբ Ղևոնդ Երեցն ու նրա հոգևոր եղբայրները դուրս եկան անհաղթելի թվացող թշնամու դեմ:

Մեր պատմության հնարավորություններով լի այս օրերին դարձյալ Սուրբ Էջմիածինն է, որ հակառակ ժամանակի բազում դժվարությունների ու պատահարների, շարունակում է իր պատմական աստվածատուր առաքելությունը՝ կենտրոնաձիգ իր ներուժով հրապուրելով և խթան հանդիսանալով հայրենիքի վերաշինության ու ծաղկման աշխատանքներին:

Հայ ժողովրդի պատմության ամենահուսահատական օրերին Սուրբ Էջմիածինը հավատի ամրոց, սրխրանքի բարձունք, ոգեշնչման փարոս, հույսի աղբյուր, քաջալերության օրրան և սիրո ներշնչում դարձավ մեր ժողովրդի զավակների համար՝ ամրության կապ լինելով աշխարհացրիվ մեր ժողովրդի հատվածներ միջև:

Փառք Սուրբ Էջմիածնին, թող անսասան մնա մեր հավատի Տունը Արարատի անմիջական շուքի ներքև, որպեսզի Լուսավորչի անմար կանթեղից ճառագայթող հավատի ու անմահության լույսը պայծառ շողա մեր ամբողջ

ժողովրդի վրա, ամենուր, ուր որ նրանք ապրում են՝ հավատարիմ Ամենայն Հայոց Սրբություն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին, որի հարազատ ու հավատարիմ զավակներից մեկն էլ ես եմ՝ իբրև Գևորգյան Հոգևոր Ճեմարանի շրջանավարտ, և հպարտ եմ դրանով ու հավատարիմ մեր նախնիների սուրբ հավատին, Սուրբ Մեսրոպի Այբ, Բեն, Գիմ-ին և իրենց արյունը թափած մեր քաջարի հերոսների անընկճելի մարտնչումներին։ Ամեն։

ՍԻՐՈՒ ԱՂԱՎՆԻՆ՝ ԱՍՏՎԱԾ ԱՂԱՎՆՈՒ ՍԻՐՏԸ՝ ՄԱՅՐԸ

«Բոլոր մայրերը կույս են...»
Վազգեն Վեհափառ

Այսօր մայրերի տոնն է: Ինձ համար և վստահ եմ ամեն հասկացող ու իրենց մայրերին գնահատող զավակների համար հրաշալի և գեղեցիկ օր է, մի ուրախ առիթ, երբ կարող ես արտահայտել քո իրական ու անշահախնդիր սերը քեզ ստեղծողի և աշխարհ բերողի նկատմամբ:

«Ո՞Վ Է ՄԱՅՐԸ»:

Ինչքա՜ն գեղեցիկ խոսքեր ու արտահայտություններ են պետք, նկարագրելու համար, թե՝ *«Ո՞վ է մայրը»* և կամ *«Ի՞նչպիսին է մայրը»:* Մայրը մի նոր մարդու կյանք տվողն է, ստեղծիչը մի նոր էակի, որի համար շատ անգամներ իր կյանքն է զոհել, երբ պետք է եղել ընտրություն կատարել՝ զավա՞կը, թե՞՝ մայրը: Առանց տատանվելու մոր խոսքը եղել է՝ *«Թող ապրի իմ զավակը»* և աչքերը հավիտյան փակել զավակի կարոտը իր սրտում:

Մի՞թե սրանից ավելի մեծ զոհողություն կամ հերոսություն կարող է լինել: Այո՛, մայրերը հերոսուհիներ են:

Քանի որ Աստված ֆիզիկապես միանգամից ամեն տեղ չէր կարող լինել, այս պատճառով էլ ստեղծեց մորը: Ծաղկաստան է մոր սիրտը:

Առաջին մայրը՝ Եվան, Աստծու ստեղծագործությունն էր, նշանակում է նրա սրտում աստվածային սեր կար: Որով մայրական սերը անկրկնելի է, որն իր մէջ պարունակում է՝ *նվիրում, զոհողություն, գուրգուրանք ու սիրբություն:*

Մի անգամ մի փոքրիկ կույր աղջկա հարցրել են, թե՝ *«Աստված ո՞ւմ նման է»: «Աստված ճիշտ ու ճիշտ իմ մոր նման է»,-* պատասխանել է նա: Մայրը մի հրեշտակ է միայն մի տարբերությամբ, որ նա երկրի վրա է: Նա հե-

րոսության և քաջության սքանչելի մի օրինակ է ու նրա սերը ժամանակ և սահման չի ճանաչում:

«Բոլոր մայրերը կույս են,- երջանկահիշատակ Վաղգեն Վեհափառի խոսքն է սա. *«Ո՞ր հայրը ի տես իր նորածին երեխայի չի բացականչում հրա՛շք և մի պահ իր կնոջ մեջ չի տեսնում պատկերը Սուրբ Կույս Մարիամի: Կինը մայրությամբ վեր է բարձրանում մարմնականի պայմանից և պսակվում ծննդյան հրաշքի Լույսով: Նա իր էության մեջ զգում է սարսուռը արարչագործության ու ծնկի եկած իր ծնած երեխայի առջև նրա մեջ տեսնում է պտուղը Աստուծո շնորհաբաշխ ուժի և տեսիլքը ունենում նմանվելու Հիսուս ծնող Սուրբ Կույսին»:*

«Ահա հոգեկան հիմնական մի ճշմարտություն մայրության մասին, որը կարծում ենք իբրև հիմք պիտի ծառայի մեր բոլոր մտածումների՝ ընտանիքի և ընտանեկան կյանքի վերաբերյալ»:

«Գիտությունը իր բոլոր հայտնաբերումներով ու հաստատումներով մնում է ծննդյան հրաշքի մարմնական մեքենականությունը և գոյատևման պայմանները հետազոտողի ու բացատրողի դերում: Սակայն հրաշքը մնում է հրաշք, անիմանալի խորհուրդ: Ավելին, գիտության լույսի տակ հրաշքը դառնում է առավել հրաշալի»: «Հրաշալիքը ծնունդի և սրբությունը մայրության, ահա ընտանիքի հիմքը: Զի ընտանիքն է խորանը այդ հրաշքի և աղբյուրը մայրական սրբության»:

Իրապես հրաշալի խոսքեր են՝ արժանի մեր մայրերին:

Կյանքում յուրաքանչյուրիս համար ամենաքաղցր խոսքերն են՝ *երկինք, տուն, սեր ու մայր:*

«Պատմվում է, որ պատանի Բենջամին Ուեսթի մայրը մի անգամ պատվիրում է նրան, որ քրոջը Մելիին հսկի իր բացակայության ժամանակ: Բենջամինը գունավոր թանաք գործածելով, գծում է քրոջ նկարը: Երբ մայրը վերադառնում է, թանաքի հետքեր է գտնում աթոռների, հագուստների ու գետնի վրա: Առանց մի բառ իսկ ասելու

թափթփուքի համար, նկատում է նկարը: Հետո բացակա-չում է. «Աստված իմ ի՜նչ լավ ես նկարել քրոջդ»: Նա գրկում ու համբուրում է Բենջամինին:

1763-ին, 25 տարեկան հասակում, այս ամերիկացի նկարիչը՝ Բենջամին Ուեսթը, իր օրերի լավագույն արվեստագետներից մեկն էր նկատվում: Երբ հարցնում են, թե ինչպե՞ս քաջալերվեցիր նկարելու, նա պատասխանում է, թե մոր համբույրն էր իրեն նկարիչ դարձրել»:

Մոր նկարագիրը քաղցր է ու սուրբ: Նա իր կամքով՝ տան սյունն է, հավատով՝ հիմքը, իսկ իր սիրով՝ սիրտը ու հոգին: Մայրը իր զավակի առաջին ու լավագույն դաստիարակն է, որը նրան սովորեցնում է բարին, գեղեցիկն ու ճշմարիտը: Նա մի ճարտարապետ է, որ ոչ միայն իր զավակի նկարագրի հատակագիծն է գծում, այլ նաև կերտում է նրա ուղիղ, ապահով ու հաջող ճանապարհը:

Նա իր սրբազան պարտականությունները անթերի է կատարում և այս աշխարհում ներկայացնում է աստվածային անսպառ ու անսակարկ սերը, հոգատարությունն ու գերագույն զոհողությունը: Նա միայն ապրում է՝ ապրեցնելու համար:

Մայրը զավակներին մեծացնելու համար զոհում է իր կյանքի ծաղիկ շրջանը: Մի՞թե այս հրաշալի զոհողության դիմաց չի կարելի նրան արժանացնել մի փոքրիկ հարգանքի, չասելու համար խոնարհության: Այո՛, խոնարհության: Ինչպես մենք խոնարհվում ենք Աստծու ու մեր սրբությունների առաջ՝ *Հայրենիք, Հավատ, Սրբություն, Եկեղեցի,* այնպես էլ պիտի խոնարհվենք մեր մայրերի առաջ, քանի որ նրանք մեզ կյանք տվող, սեր բաշխող հերոսուհիներն են: Վա՛յ այն զավակին, որն իր մորը կը հարգի պարզապես պարտականություն կատարած լինելու համար: Չե՞ք կարծում, որ այդպիսի զավակը ոչ միայն երջանիկ կյանք չպիտի ունենա, այլ արդեն իսկ Աստծու կողմից դատապարտված է: Մորը սիրելը խոսքով կամ բաժակաճառով չի լինում, այլ միայն ու միայն գործով:

Այո՛, միայն գործով: Մեր սերը, գնահատանքն ու հարգանքը պիտի արտահայտենք գործով: Մեր մայրը թող օրինի մեզ, որպեսզի երջանիկ ու խաղաղ կյանք ունենանք: Երիտասարդ, մայր սիրող և գնահատող երիտասարդ, խիղճդ հանգիստ թող լինի, քանի որ այն աստվածային է:

Բոլոր մայրերը անկախ իրենց գույնից ու սեռից մայր են, հարգանքս ու սերս բոլորի նկատմամբ, բայց ինձ համար իմ մայրը ուրիշ մի մայր է: *«Ինչո՞ւ, ի՞նչ է տարբերությունը»,*-կարող է հարցնել մեկը: Տարբերությունը նրանում է, որ նա իմ մայրն է, մյուսներն էլ թող իմ նման մտածեն, նրանք էլ թող լինեն նրանց մայրերը, միայն կարևորը սերն ու գնահատանքն է: Բոլոր մայրերը նույն ցավով են ծնում իրենց երեխաներին, բայց իմ մոր ցավերը տարբեր են եղել ինձ համար: Աշխարհը կուզենայի տալ նրան, որպեսզի երբեք զավակ ծնելու ցավից բացի, այլ ցավ չզգար և առավելապես իր զավակի կորստյան ցավը չզգար: *«Իմ անուշիկ մայրիկ, քեզ համար ես մի մեծ նվեր եմ պատրաստել այսօր, նվեր, որը ոչ մի բանով չի գնվի, իմ որդիական սիրո անխառն ու սրտանց համբույրը, իմ շնորհակալության համբույրը, որ դու կաս ու ես ապրում եմ քո շնորհիվ»:*

Թող յուրաքանչյուր զավակի համար իր մայրը տարբեր լինի և նա սիրի իր մորը առանձնահատուկ երկյուղածությամբ ու իր սերը գործի վերածի, որպեսզի մոր մայրամուտին ստանա նրա բացառիկ օրհնությունը. *«Օրհնեալ լինես, զավակս»:* Իմ կարծիքով ավելի մեծ երջանկություն չկա, քան մոր օրհնությամբ ապրելը:

Վաշինգտոն Ըրվինգը ասել է, թե՝ *«Մի հայր իր զավակից կարող է երես թեքել, եղբայրներն ու քույրերը իրար հետ կարող են մոլեգին թշնամիներ դառնալ, ամուսինները կարող են թողնել իրենց կանանց և հակառակը, կանայք՝ իրենց ամուսիններին, բայց մի մոր սերը կհանդուրժի բոլորին լավի կամ վատի պարագայում էլ, նույնիսկ աշխարհի երեսին բոլորի*

կողմից դատապարտվելու պարագայում էլ մայրը կշարունակի սիրել իր զավակին, միշտ հույս ունենալով, թե մի օր նա ետ պիտի վերադառնա, գոջա ու դարձի գա իր վատ ճանապարհից: Մայրը միշտ հիշում է իր զավակի ժպիտները, թե նա իր մանկության ժամանակ իր մայրական գիրկը լցնում էր ուրախ ու զվարթ ծիծաղով: Հիշում է նրա մանկության ուրախ աղաղակները ու պատանեկության խոստումնալից վիճակը: Այս բոլորից հետո նա երբեք չի կարող մտածել, թե իր զավակը անարժեք մեկն է»:

Ուզում եմ ձեզ պատմել Հայաստանում ապրող մի 15-ամյա որբ աղջկա պատմությունը:

«Որբ աղջիկը փողոցում կանգնած տեսնում է մի փոքրիկի իր մոր ձեռքը բռնած անցնելիս: Նա ծիծաղում էր և մայրը ուրախ էր: Նրանք երջանիկ էին: Մայրն իր ձեռքում բռնել էր մի ամբողջ աշխարհ, էլ ոչինչ պետք չէր: Որբ աղջիկը թախծոտ աչքերով, հոգու կարոտի ճիչը սրտում, ուզում էր բղավել, ճչալ. «Երանի ես էլ իմ մայրիկի համար լինեի մի աշխարհ, թեկուզ ամենավատ մայրիկի...»: Ամենավա՞տ: Ո՛չ, մայրիկին բնութագրել նման խոսքով անկարելի է, աններելի: Մայրը սուրբ է, միշտ կատարյալ:

Նա հաճախ էր հանդիպում աղջիկների, որոնք առանց քաշվելու գանգատվում էին իրենց մայրիկներից: Զարմանում էր ու խիստ զայրանում: Նման դեպքերում նա գնում էր մի տեղ, մեկի մոտ, ում կարող էր հայտնել իր մանկական սրտի վրդովմունքն ու բողոքը: Նա, ում այցելում էր որբուկը, հասկանում էր ամեն բան...

Մայրության և գեղեցկության տոնն էր: Աղջիկը ծաղիկներ էր գնել՝ չիմանալով թե ո՞ւմ համար: Բոլորն էլ ծաղիկներ ունեին ձեռքերում. բոլորն էլ շնորհավորում էին միմյանց: Քայլերն էլի ուղղեց այնտեղ... Եկեղեցու գոր ու խորհրդավոր պատից իրեն դիմավորեց սուրբ ու ամենակատարյալ Մայրը: Նա հասկանում էր, մխիթարում ու հույս էր տալիս իրեն: Մոտեցավ,

կանգնեց ու խոնարհվելով ծաղիկները դրեց նկարի առաջ և կամացուկ շշնջաց. «Դրսում գարուն է, նոր կյանք, զարթոնք...» «Շնորհակալ եմ, որ դու կաս, դու երբեք չես լքի ինձ: Ահա սա էլ...,- կմկմաց նա՝ մի քնքուշ ծաղիկ առանձնացնելով մյուսներից,- սա էլ խնդրում եմ փոխանցիր մայրիկիս: Ես գիտեմ նա բարի է քեզ պես ու գեղեցիկ: Մայրերը միշտ էլ այդպիսին են»:

«Նկարից նայող տուրբի աչքերը կարծես ժպտացին, ճառագեցին անսահման քնքշություն, հուզում և սեր: Այդ պահին Աստվածամոր պատկերից նայում էր փոքրիկ աղջկա մայրիկը»

«Շնորհավոր տոնդ, մայրիկ»:

Կյանքից վերցված այս որբ աղջկա պատմությունը շատ հուզեց ինձ, վստահ եմ, որ ձեզ էլ կհուզի: Երանի՜ ոչ մի տեղ որբեր չլինեն: Իբրև իմ մոր զավակը նախ գրկում ու համբուրում եմ նրան և ապա ձեզ սիրելի մայրեր ու սրտանց շնորհավորում մորս և ձեր բոլորի տոնը:

Այս գեղեցիկ բանաստեղծությունը ձեզ բոլորիդ է նվիրում Հայաստանից Փիրուզա Վարդանյանը.

ՄԱՅՐԻԿԻՍ

Ա՜խ, ինչեր կտամ անուշ մայրիկիս.
Թե զանձ ունենամ, զանձերս կտամ.
Իմ միակ սերը նրան կընծայեմ,
Իմ հոգու վերջին փշրանքը կտամ:

Ամեն ինչ կտամ քաղցր մայրիկիս.
Միայն թե նրա բարդ հոգին կարդամ.
Իմ ամբողջ հոգով ես կնվիրեմ.
Միայն թե նրա փակ սիրտը բանամ:

Ու եթե նրա սիրտը ես բանամ.
Որքան վերքեր էլ ես տեսնեմ այնտեղ,
Իմ արցունքներով դրանք կլվամ
Եվ իմ մազերով դրանք կսրբեմ:

Ես այնտեղ բազում մոմեր կվառեմ.
Որ կյանքում երբեք-երբեք չհանգչեն,
Որ իմ մայրիկի ցավերը նրանց

Ա՜խ, գոնե իրենց լույսով սփոփեն:

Ամեն զավակ հետևելով մեր Տիրոջ օրինակին պիտի սիրի իր մորը, պարզ հասկացողությամբ, թե նա իրեն կյանք է տվել, պետք է հարգի նրան իր համար արած անհամար զոհողությունների համար և գուրգուրա նրա վրա տկարության ու անկարողության տարիներին: Խրիմեան Հայրիկն ասում է, թե ծնողների օրինակը պատճենահանվում է զավակների մեջ: Ի՞նչ եք կարծում ծնող չսիրող, չգնահատող ու չհարգող զավակների երեխաները ի՞նչ պիտի սովորեն նրանցից: Պատկերացնո՞ւմ եք նրանց վիճակը, երբ երեխաները մեծանան ու նույնը անեն իրենց, ինչ որ իրենք արել էին իրենց ծնողներին: Ավա՜ղ, գուցե անդրադառնալու համար արդեն իսկ ուշ լինի: Նրանց այլևս չեն կարող փրկել ո՛չ իրենց հարստությունը, ո՛չ ունեցվածքը ու թանկագին մեքենաները, ո՛չ տիտղոսներն ու վկայականները, մի խոսքով ո՛չ մի բան: Նրանց ներսից մի բան միշտ պիտի անհանգստացնի իրենց. *«Խիղճդ, խիղճդ, ո՞ւր էր խիղճդ»:* Բոլոր մայրերը ներող են, նույնիսկ գերեզմանում: Սակայն Աստված կների՞: Գուցե, քանի որ Նա էլ ներողամիտ է ու գթասիրտ: Բայց ես վստահ չեմ: Աստված սիրում է մայրերին, քանի որ նրանց ստեղծելու շնորհքը տվեց: Երիտասարդ զավակներ զգույշ եղեք Աստծու վրեժխնդրությունից: Մենք դատավոր չենք: Աստված ասաց. *«Իմն է վրեժխնդրությունը»:* Դուք դա Ինձ թողեք և ես գիտեմ թե ինչ պիտի անեմ: Ուրեմն եկեք սիրենք մեր մայրերին առանց որևէ ակնկալության, երբ նրանք ողջ են ու պետք ունեն մեր սիրույն և օգնության:

Արժանաշնորհ Տ. Վարդան Ավագ Քահանա Դյուլգերյանի խոսքը մոր մասին.

«...Ո՛վ դուք, որ մայր պիտի լինեք, մի՛ թողեք, որ ձեր գուրգուրանքից զրկվելով զավակը վաղաժամորեն խամրի և ձեզ համար մի դժբախտ օր, իր անառակություններով ու ոճիրներով անպատվի ձեզ, անպատվի իր ազգն ու հայրենիքը:

Հիշեցեք ու մեծարեցեք ձեր աննման մայրերին, որոնք ձեզ հետ չեն այլևս, բայց առավել սիրեցեք ու գուրգուրացեք հանգստյան

տներում ձեր կարոտով տոչորվող ձեր անմխիթար մայրերի համար, որոնք դեռ ապրում ու ամենից ավելի այսօր պետք ունեն ձեր բոլորանվեր սիրույն և հոգատարության:

«Մեծանուն գրագետ Արշակ Չոպանյանը Փարիզում ներկա է լինում մի հայ նկարիչի ցուցահանդեսին և բոլոր նկարները ուշադիր դիտելուց հետո, կանգ է առնում յուղաներկ մի պատկերի առջև, ուր երիտասարդ մի աղջիկ ամուր գրկել էր ալևորված մի կնոջ:

– Ի՞նչ է այս նկարի խորհուրդը, որ այս երկու կանայք իրար ամուր գրկած ողջագուրվում են:

– Այս ծերունազարդ կինը ներկայացնում է զոհողությունը,- պատասխանում է նկարիչը, Իսկ այս երիտասարդուհին՝ երախտագիտությունը: -

– Օ՜, հիմա եմ հասկանում, թե ինչո՞ւ են այդպես գրկել իրար,- պատասխան է տալիս գրագետը,- *որովհետև հազվադեպ է պատահում, որ կյանքում այս երկու առաքինությունները իրար հանդիպեն»:*

Պողոս Առաքյալը հորդորում է բոլոր զավակներին, նրանց ուշադրության հանձնելով այս խոսքերը. *«Որդիներ, հնազանդ եղեք ձեր ծնողներին, որովհետև դա է ճիշտը» (Եփես. 6:1):* Հնազանդվել նշանակում է հարգել ու սիրել:

Սիրելի Մայրիկ և սիրելի Մայրեր, իմ աղոթքս է, որ դուք միշտ երջանիկ լինեք, ուրախ ու հպարտ, որ բարի և արդար գործ եք կատարել զավակներ ծնելով ու ազգը հարստացնելով: Եթե կան զավակներ, որոնք ցավեցնում, չեն գնահատում ու չեն սիրում ձեզ, դա իրենց վնասն է: Աստծու դատաստանը մոտ է նրանց համար: Ձեր շունչը նրանց մեջն է, վաղ թե ուշ նրանք էլ ուզեն կամ չուզեն պիտի շարունակեն ձեր բարի գործը: Հանգիստ և ապահով եղեք ու մի՛ լացեք: Ձերն է Աստծու Տան մեջ վայելելու սերը և ուրախությունը: Ամեն:

ԱՍՏՎԱԾԱՍԵՐ ՄԱՐԴԸ

«Ամեն ոք, որ մարդասեր է, ուրեմն աստվածասեր է, և ամեն ոք, որ աստվածասեր է, նաև մարդասեր է»

Ընդհանրական Քրիստոնեական Վարդապետներ

Այս խոսքը վերցրել եմ Ընդհանրական Քրիստոնեական Վարդապետների խրատներից:

Վստահ եմ, որ բոլորիս սրտին խոսող նյութ է սա, որովհետև խոսքը գնում է մարդասեր և աստվածասեր լինելու մասին:

Հարց է ծագում. *«Ո՞վ է մարդասերը, որը նաև աստվածասեր է, և ո՞վ է աստվածասերը, որը նաև մարդասեր է»:*

Եկեք մի պահ մտածենք այս երկու բառերի իմաստների մասին. մարդասեր, նշանակում է մարդ սիրող, աստվածասեր՝ Աստված սիրող: Ի՞նչ կապ կա այս երկուսի միջև: Կապը պիտի փնտրենք հենց մարդու ստեղծագործության մեջ: Աստված մարդուն ստեղծեց Իր պատկերի համաձայն և Իր սերը դրեց նրա մեջ: Ո՛չ միայն սերը, այլ նաև խիղճը, կամքն ու խելքը: Նա ամեն օր ստեղծելով աշխարհի բարիքները, տեսավ, որ լավ են և ասաց. *«Թող լինեն»:* Ուրեմն Աստված սիրով ստեղծեց ամեն ինչ ու կատարյալ էր: Բայց Նա մտածեց, որ այս բոլորի համար պիտի ստեղծի ամենակատարյալը, որը Մարդն էր: Եվ Աստված սիրով դա արեց:

Ուստի մարդը ոչ միայն մարդասեր է, քանի որ իր նմանին է տեսնում, այլ մարդ սիրելով բնականաբար նաև աստվածասեր է: Հակառակը չի կարող լինել, քանի որ անկեղծ ու սրտանց սեր կա: Եթե մեկը մարդկանց չի սիրում և նրանց հետ վատ հարաբերություններ ունի, կնշանակի նա, եթե ասի էլ, թե Աստծուն սիրում է, ինքն իրեն է խաբում: Եթե մեկը Աստծու ստեղծածին, որին տեսնում է, չի սիրում ինչպե՞ս կարող է սիրել Նրա Ստեղծողին, որին չի

տեսնում: Դա նման է այն զավակին, որն ասում է, թե ես Աստծուն սիրում եմ, բայց իր ծնողներին անտեսում է, ուշադրություն չի դարձնում, չի հիշում նրանց, զբաղվում է իր առօրյա գործերով: Բացարձակապես սուտ է, մի՛ հավատացեք նրա խոսքերին: Նա երբեք էլ Աստծուն չի սիրում, քանի որ Նրա ներկայացուցիչներին՝ Իր ծնողներին, երկրի վրա անտեսում է:

Ավարայրի երգիչ Սուրբ Եղիշե Վարդապետն ասում է. *«Անմահ Աստծու անմահ պատկերը մարդն է»* և միաժամանակ ցույց է տալիս, թե մարդն ինչո՞վ է նման Աստծուն. *«Բանական է միայն մարդը և հրեշտակը, իսկ Աստված վեր է երկնքից և երկրից»:* Աստծուց տրվածը մեր մեջ արտահայտված է երեք կարողություններով՝ խելք, ազատ կամք և խղճմտանք, որի պատճառով մեր ֆիզիկական մարմնով կապված ենք աշխարհի հետ, բայց Աստծուց տրված հոգով ազատ ու անկախ ենք նրանից:

Դժբախտաբար մարդը հենց սկզբից՝ Ադամից սկսած, մեղք գործեց և իր աստվածատուր կարողությունները փոխեց դրանով, որը մարդու հոգին վերածեց պատերազմի դաշտի, ուր նա պայքարում է չարի՝ սատանայի դեմ, որն ուրախանում ու հրճվում է մարդու ամեն մի ձախողությամբ:

Վանականներից մեկը պատմում է.

«Մենք սառած գետ տեսանք և դրա ափին բազմաթիվ մարդկանց: Մոտեցանք և գետով անցնող մարդկանց տեսանք: Նրանցից ոմանք գնում էին ընտանիքների հետ, լուսավոր և ուրախ դեմքեր ունեին, որովհետև միասին էին: Իսկ մյուսները գնում էին առանձին-առանձին և տխուր էին ու համարյա ամեն քայլափոխի գետն էին ընկնում: Ոմանք գետն անցան և շարունակեցին իրենց ճանապարհը, իսկ ոմանք այդպես էլ մնացին ջրի մեջ: Ես իմ ուղեկից ծեր վանականին հարցրեցի. «Ինչո՞ւ են ոմանք գետն անցնում, իսկ ուրիշները չեն կարողանում»: Նա ինձ ասաց. «Ով երկրի վրա ապրելով, խոստովահայր է ընտրել և ընդունել նրա խրատները, երբ խոստովանել է, կատարել մեղքերի դիմաց

գրված ապաշխարանքները, ահա դրանց ես դու այժմ տեսնում գետն անփորձ անցնելիս: Իսկ նրանք, ովքեր դրա մեջ են ընկնում ու խեղդվում, կյանքի ընթացքում խոստովանահայր չեն փնտրել, անփութորեն խոստովանել են և ասել. «Մենք ինքներս էլ գիտենք, թե ի՞նչ է մեղքը, ի՞նչը՝ ոչ»: Ու ահա գետի միջով նրանց ոչ ոք չի ուղեկցում և աջակցում…Մենք էլ անցնե՞նք գետը»,- ասում է նա: Վախենում եմ,- ասացի ես,- գետն ընկնեմ: - Քո խոստովանահայրը քեզ կպահի»,- ժպիտով պատասխանեց ծեր վանականը»:

Եղիշե վարդապետը շարունակում է. *«Ես (Աստված) Իմ կենդանի պատկերը մարդու կենդանի դեմքի վրա նկարեցի, և աշխարհում ոչ ոք չի կարող նմանվել Ինձ, բայց միայն մարդը: Աստված ոչ մեկին չի երևում, բայց միմիայն մարդուն, երկրի վրա Աստված ոչ մեկին այդքան չի սիրում, որքան մարդուն: Միայն Աստված է մարդասեր և միայն մարդը՝ աստվածասեր»:*

Խոսրով եպիսկոպոս Անձևացին՝ Սբ. Գրիգոր Նարեկացու հայրը, գրում է. *«Շար է մեղքի երևույթը, և առավել չար է գործողի համար…, մեկին՝ աշխարհական ցնորքների, մյուսին՝ արծաթսիրության, մեկ ուրիշին՝ փառամոլության, երրորդին՝ նախանձի ու ատելության մեջ…»:* Իսկ Վարդան վարդապետ Այգեկցին շարունակում է. *«Այս պատճառով բոլոր սրբերը նրան (մեղքին) կոչեցին չարիք, մեղք, անօրենություն, մահ, ապականություն, դժողք, կորուստ, նաև շուն՝ լրբության, առյուծ՝ չարաչար պատառոտելու, զվարակ՝ խփելու պատճառով և վիշապ, որովհետև մեղքը հեշտությամբ է մոտեցնում մարդուն, տգրուկ կոչեցին նրան, որովհետև չի կշտանում մեղքերից, որոնք գործվում են աշխարհում և չի ասում. «Բավականացա և կշտացա»:*

Վաղինակ Վրդ. Մելոյանը այսպես է բացատրում մարդու աստվածասեր և մարդասեր լինելը.

«Ինչո՞ւ աստուածսիրության և մարդասիրության պատվիրանները իրարից անբաժան են ներկայացվում (Մատթ. 22:37-39, Ղուկ.10:27): Աստվածասեր եղողը չի կարող մարդասէր չլինել… Մարդասեր լինելը նշանակում է մահից կյանքի անցնել. «Մենք գիտենք, որ մահվանից դեպի կյանք անցանք, քանզի սիրում ենք մեր եղբայրներին» (Ա.Հովի 3:14): …Փաստենք հետևվաբար, որ մահից կյանքի ենք անցել՝ սիրելով մեր նմանին…:

Մարդիկ իրենք է,որ մեր սիրույն կարոտ են և ոչ թե Աստված: Հովհաննես առաքյալն ասում է. «Ով չի սիրում իր եղբորը,

որին տեսնում է, ինչպե՞ս կարող է սիրել Աստծուն, որին չի տեսել» (Ա. Հովհ. 4:20): Անտեսանելիի հանդեպ մեր սերը ապացուցվում է տեսանելիի նկատմամբ մեր ցուցաբերած սիրով: Ի՞նչ է իմաստը «Ով չի սիրում իր եղբորը, որին տեսնում է…» բառերի: Առաքյալը ուզում է ասել, որ եթե չենք սիրում գործնականում օգտակար լինել մեր եղբորը, որին տեսնում ենք կարոտյալ և թշվառ վիճակում, ինչպե՞ս կարող ենք հանդգնել մենք մեզ աստուածասեր համարել:

Արդարև, ի՞նչ օգուտ, երբ սեր ենք ցուցաբերում Աստծուն, որին Նա երբեք էլ կարիք չունի և ոչ մի սիրո կաթիլ մարդկանց նկատմամբ, որին նրանք այնքան կարոտ են: Ի՞նչ օգուտ, երբ սիրում ենք Աստծուն, բայց չենք սիրում մարդուն, որի սիրո համար Աստծու սիրտը սրախողխող եղավ խաչի վրա: Ինչո՞վ կօգտվենք, երբ սիրո անթիվ մարգարիտներ ունենք մեր սրտի գանձանակում, մինչ մեր շրջապատը լցնում ենք սիրո անթիվ մուրացկաններով: Սիրո դրամների կարիքը ունեցող մարդկանց թիվը շատ ավելի է, քան ոսկյա դրամների կարիքը ունեցող մարդկանց…» («Ես եմ ճամբան, ճշմարտությունը և կյանքը» քարոզգրքից):

Եկեք ուրեմն փորձենք մեղք չգործել, սիրենք մարդկանց և Աստծուն անկեղծ սրտով՝ մարդասեր և աստվածասեր լինենք: Խնդրենք, որ Տերը մեզ բոլորիս պարգևի առավել շնորհներ ու կարողություն, որպեսզի այս անցավոր աշխարհում կարողանանք մեր նմանների նկատմամբ բարի ու արդար գործեր կատարել, ի փառս Աստծու: Ամեն:

ԱՐԴԱՐԻ ԱՂՈԹՔԸ

«Արդարի աղոթքը շատ ազդեցիկ է և օգնում է» (Հակոբոս 5:16):

Այս խոսքը ես վերցրել եմ Հակոբոս Առաքյալի Ընդհանրական թղթի 5-րդ գլխի 16 համարից, ուր նա խոսում է, թե արդարի աղոթքը շատ ազդեցիկ է և օգնում է:

Որպեսզի ավելի պարզ լինի Հակոբոս Առաքյալի այս խոսքի իմաստը, մեջբերենք 5-րդ գլխի 13-16 համարները. *«Ձեզնից մեկը վշտի՞ մեջ է ընկել, թող աղոթի. մեկը բերկրանքի՞ մեջ է, սաղմոս թող ասի. հիվա՞նդ է ձեզնից մեկը, թող կանչի եկեղեցու երեցներին և նրանք նրա վրա թող աղոթք անեն, թող յուղով օծեն նրան Տիրոջ անունով: Եվ հավատով եղած աղոթքը կփրկի հիվանդին, ու Տերը նրան ոտքի կկանգնեցնի: Եվ եթե մեղք գործած լինի, այդ նրան պիտի ներվի: Ձեր մեղքերը միմյանց խոստովանեցեք և միմյանց համար աղոթք արեք, որպեսզի բժշկվեք, քանզի արդարի աղոթքը շատ ազդեցիկ է և օգնում է» (Հակոբոս 5: 13-15)* ու շարունակում է *«…Եղբայրներ իմ, եթե ձեզնից մեկը շեղվի ճշմարտության ճանապարհից, իսկ մեկ ուրիշը նրան հետ բերի, թող իմանա, որ, ով մեղավորին իր մոլորության ճանապարհից հետ է բերում, կփրկի նրա հոգին մահվանից և կծածկի մեղքերի մի ամբողջ բազմություն» (Հակոբոս 5: 13-20):*

Առաքյալի այս խոսքը չի վերաբերում միայն արդարներին, այլ նաև մեզանից յուրաքանչյուրին:

Հարց է ծագում, թե՝ *«Ո՞վ է արդարը և ինչո՞ւ է արդարի աղոթքը ազդեցիկ»:*

Բացատրությունը Ադամ Քահանայինն է. *«…Արդար լինելու մասին Պողոս առաքյալը Հռոմեացիներին ուղղված թղթում ասում է. «Ոչ ոք արդար չէ, ոչ իսկ մեկ հոգի» (Հռոմ. 3:10): Պողոս Առաքյալը Կորնթացիներին ուղղված առաջին թղթում խոսում է նաև հոգեպես կատարյալների մասին (Կորնթ. 2:6): Ուրեմն, պետք է ար-*

դար հասկացության մի քանի տեսակներ առանձնացնենք՝ բացարձակապես արդարություն, որ հատուկ է Աստծուն և համեմատական արդարություն, որ հատուկ է մարդուն: «Ոչ ոք արդար չէ» խոսքը վերաբերում է համեմատական արդարությանը, որովհետև Աստծո բացարձակ արդարության համեմատ ոչ ոք արդար չէ, բացի դրանից դա ցույց է տալիս մարդու մեղավոր լինելը:… Պողոս առաքյալի նշած՝ հավատքով կատարյալներն արդեն այն մարդիկ են, ովքեր, մեղքերի համար զղջալով, հավատքի, հոգևոր ապրումների մեջ առաջանալով, հասել են հոգևոր առումով որևէ առաջընթացի…: Հակոբոս առաքյալը հենց այսպիսիներին նկատի ունի, երբ ասում է, որ արդարի աղոթքը զորավոր է և կարող է օգնել: Սակայն պետք է նկատի ունենալ, որ այդպիսի աղոթքը կարիքն ունի այն մարդու գործակցության, ում համար աղոթում են, որպեսզի այդ մարդը նաև իր կամքով չշարունակի մնալ մեղքերի մեջ և ապրի աստվածահաճո կերպով» (Ադամ Քահանա Մակարյան, «Ոչ միայն հացիվ»):

Մարդիկ կան, որոնք մեղք են գործում իրենց նմանի նկատմամբ և կարծում են, թե Աստծուն խոստովանելով, թողություն կարող են ստանալ ու դա բավական է: Բայց Հակոբոս առաքյալն ասում է, որ դա բավական չէ, քանի որ այդ մեղքը, որը կատարել ենք, պետք է խոստովանենք ու նրանից ներում խնդրենք: Սա անհրաժեշտ պայման է: Զղջալ և ներում հայցել ու ապա աղոթել, որպեսզի արժանանանք Աստծու ողորմածությանը:

«Արդարի աղոթքը շատ ազդեցիկ է և օգնում է»: Բոլոր առաքյալները իրենց Վարդապետի օրինակով մշտապես աղոթքի մեջ էին: Բանտերի փակ դռները և շղթաները բացվում ու կտրվում էին նրանց աղոթքների զորությամբ: Իսկ ի՞նչ է այսօր իրականությունը: Ո՞ւր են աղոթողները: Դժբախտաբար այսօր սրտանց ու անկեղծ

աղոթողների թիվը պակասել է, մարդիկ նույնիսկ իրենք չեն աղոթում, ուր մնաց որ աղոթեն ուրիշների համար: Երանի չէր այդպես լիներ: Բայց չհուսահատվենք, դեռ կան մարդիկ, ովքեր աղոթում են ամեն օր և ոչ միայն իրենց, այլ նաև մեր երիտասարդների համար, որոնք, ցավով եմ ասում, սխալ ճանապարհների մեջ են և հիվանդ են: Երբեմն մարդիկ թերահավատորեն ասում են, թե ի՞նչ օգուտ մեր աղոթքից, մեկ է չարը իր գործը անելու է, մենք անզոր ենք ու ձեռքները հուսահատ թափ են տալիս: Թուլակամ մարդիկ են այդպես մտածում: Պիտի հիշենք, որ մեր աղոթքները, խնդրանքի ձևով ուղղված են Աստծուն, որպեսզի Նա օգնի մոլորվածներին: Մենք ո՞վ ենք, իբրև մարդիկ ի՞նչ զորություն ունենք, բայց ձեռքներս ծալած չպիտի նստենք. «*Կաթիլն էլ օվկիանոսին օգուտ է, եթե ես իմ բարի գործն ու աղոթքը չանեմ, օվկիանոսը զուրկ կմնա իմ կաթիլից»,*- ասում է Մայր Թերեզան: Հետևենք նրան և սրբտանց աղոթենք:

Ես հավատում եմ բոլորիս աղոթքների զորությանը: Մանավանդ մայրերի աղոթքի ուժին:

Այս հեքիաթը աղքատի մասին է.

«Հավատա միայն քո Տեր Աստծուն, ապավինեցեք Աստծու զորությանը»:

Ժամանակով մի բարի թագավոր կար: Նա սովորություն ուներ ամեն իրիկուն հասարակ հագուստներով շրջելու քաղաքում, որպեսզի տեսնի, թե ինչպե՞ս է ապրում իր ժողովուրդը:

Մի երեկո՝ իր սովորական պտույտի ժամանակ, տեսնում է մի աղքատ մարդու, ով իր խրճիթի դռան առջև նստած, աղոթում էր ու մրմնջում.

Տեր Աստված ինձ 100 ոսկի տուր:

Թագավորը լսում է ու անցնում: Քիչ այն կողմ գնալով՝ տեսնում է մի ուրիշ աղքատի, ով նույնպես աղոթում էր ու ասում.

Տեր թագավոր ինձ 100 ոսկի տուր:

Հետևյալ օրը թագավորը հրամայում է սկուտեղի վրա 100 ոսկի դնել, ծածկել փլավով ու հավի մսով և ուղարկել այն աղքատին, ով թագավորից էր 100 ոսկի խնդրում:

Այն հիմարին էլ թող Աստված տա,- ինքնիրեն մրմնջում է թագավորը՝ մտածելով մյուս աղքատի մասին:

Նույն օրը երեկոյան թագավորը նորից դուրս է գալիս պալատից և ուղղվում դեպի այն աղքատի տունը, որին 100 ոսկի էր ուղարկել: Աղքատը, իր խրճիթի դռանը նստած, դարձյալ աղոթում էր ու ասում.

Տեր թագավոր ինձ 100 ոսկի տուր:

Այս լսելով՝ թագավորը շատ է զարմանում: Մոտենում է ու հարցնում.

Ա՛յ մարդ, թագավորի կողմից այսօր քեզ փլավ չբերի՞ն:

Բերին, շնորհակալ եմ:

Կերա՞ր:

Կերա:

Ի՞նչ կար մեջը:

Նուշ ու չամիչ:

Ուրի՞շ:

Հավի միս:

Ուրիշ բան չկա՞ր:

Ո՛չ:

Բոլորը կերա՞ր:

Ո՛չ, շատ էր: Մնացածը տվեցի ինձ պես աղքատ ու քաղցած հարևանիս:

Թագավորը մորուքը շոյում է ու հեռանում: Քիչ այն կողմ տեսնում է մյուս աղքատին, ով ասում էր Աստծուն.

Շնորհակալ եմ, Տե՛ր Աստված. որ լսեցիր աղոթքս ու 100 ոսկի ուղարկեցիր:

Թագավորը համոզվում է, որ ա՛յս մարդն էր խելացի: Նա դիմել էր ո՛չ թե իր աշխարհիկ տիրոջը՝ թագավորին, այլ Աստծուն, Ով ղեկավարում է ոչ միայն մարդկանց, այլև ամբողջ Տիեզերքը:

Դուք էլ, ձեր կյանքում շարժվեցե՛ք Աստծուն խնդրող աղքատի նման»:

Շատ անգամ ինձ դիմում են իբրև հոգևոր հայր, որպեսզի աղոթեմ իրենց համար. «*Տեր Հայր, աղջիկս հիվանդ է, նեղությունների մեջ ենք, խնդրում ենք աղոթիր մեզ համար*» կամ «*Տեր*

Հայր, հոգեկան անհանգստություն ունեմ, գիշերները չեմ կարողանում քնել, մի տեսակ ներքին տագնապ ունեմ, խնդրում եմ աղոթքներիդ մեջ հիշիր ինձ» և այլն։ Ամեն մեկս էլ կարող ենք աղոթել և խնդրել մեր նմանների համար՝ առողջություն, հոգեկան հանգստություն, հոգսերից ու մտահոգություններից ազատում։ Ուրիշների համար աղոթելով, մենք մեզ էլ հոգեպես հանգիստ կզգանք, այն մտածումով, թե մի բարի գործ ենք կատարում և հավատացեք, Աստված մեզ ավելիով կտա։ Աղոթող են այն մարդիկ, ովքեր մարդասեր ու աստվածասեր են, խղճմտանք, օգնելու ցանկություն ունեն, Աստծու պատվիրաններին հետևող են, մի խոսքով իրենց հավատը գործի վերածող են։

Եկեք ամեն օր աղոթենք մեկս մյուսի, մանավանդ մեր երիտասարդների համար, մոտենանք ու խոսենք Աստծու հետ, մեր հոգսերն ու մտահոգությունները, մեր հավատարմությունը, սերն ու գոհունակությունը աղոթքի միջոցով հանձնենք ու հայտնենք Նրան։ Պողոս Պատրիարքն ասում է. *«Եթե մեկը խնդրում է կյանք, իմաստություն, զավակ կամ ունեցվածք, մտքում պիտի դնի դրանցով ծառայել Աստծուն, այսինքն՝ կյանք է խնդրում, որ ապաշխարի, իմաստություն, որ սխալվելով մեղքի մեջ չընկնի, զավակ, որ նրան Աստծու ծառա դարձնի, ունեցվածք, որ աղքատներին ու կարոտյալներին բաշխի… Աղոթելիս պետք է խնդրել, որ Աստծու կամքը կատարվի մեր մեջ և ո՛չ թե մերը՝ ըստ այսմ. «…ո՛չ թե ինչպես ես եմ կամենում, այլ ինչպես Դու ես կամենում» (Մարկ. 14:36):* Ամեն։

ՀԻՍՈՒՍ ԹԱԿՈՒՄ Է ՄԵՐ ԴՈՒՌԸ

«Ահավասիկ ես դռան առաջ եմ և բախում եմ, եթե մեկը ականջ դնի իմ ձայնին և բաց անի դուռը, կմտնեմ նրա մոտ և կընթրեմ նրա հետ և նա՝ ինձ հետ» (Հայտ. 3:20):

Այս խոսքը ես վերցրել եմ Հովհաննես Առաքյալի Հայտնության գրքի 3-րդ գլխի 20 համարից: Այս համարից կարող ենք առանձնացնել երկու կարևոր մտածում.

ա. Ես դռան առաջ եմ և բախում եմ.

բ. Եթե մեկը ականջ դնի իմ ձայնին և բաց անի դուռը, կմտնեմ նրա մոտ կընթրեմ նրա հետ ու նա՝ ինձ հետ:

Իհարկե այս երկու մտածումն էլ բառացի չպետք է հասկանանք, քանի որ Հիսուս այսօր ֆիզիկապես մեզ հետ չէ և ուղղակիորեն չի կարող մեր նյութական դուռը թակել: Պատկերացրեք, եթե Հիսուսի փոխարեն ձեր դուռը ծեծում է մի մուրացկան կամ կարիքավոր մեկը և դուք նայում եք դռան արանքից ու տեսնելով նրա տխուր և աղքատիկ վիճակը, դուռը չեք բացում նրան օգնելու ու ինչ որ ձևով թեթևացնելու նրա վիճակը, դուք մերժում եք ոչ թե մուրացկանին, այլ՝ Հիսուսին, քանի որ Նա ասաց. *«Ճշմարիտ եմ ասում ձեզ, քանի որ իմ այս փոքր եղբայրներից մեկին արեցիք այդ՝ ինձ համար արեցիք» (Մատթ.25:40):* Հիսուս ձեր դռան առաջ էր ու ծեծում էր այն, քանի որ Ինքը եկավ մուրացկանի ու աղքատի կերպարանքով, բայց դուք մերժեցիք նույնիսկ դուռը բացել: Եթե ասեք հավատ ունեք, դուք ձեր դեմ կմեղանչեք, քանի որ ձեր հավատի արտահայտությունը մեղքն էր: Հակոբոս առայալն ասում է. *«Հավատը առանց գործերի մեռած է»:*

Դժբախտաբար ապրում ենք այնպիսի մի ժամանաշրջանում, երբ մարդկանց ականջները խլացել են և չեն լսում Հիսուսի դռան թակոցը, ո՞չ միայն չեն լսում, այլ նույնիսկ չեն բացում այն: Եթե դուռը փակ է, եթե մեր սրտերի դռները փակ են ու չենք ուզում դրանք բացել մեր

Արարչի առաջ, ինչպե՞ս Նա պիտի մտնի ներս, ի՞նչ ձևով: Ինչպե՞ս Նա կընթրի մեզ հետ ու առավել ևս մենք՝ Նրա հետ:

Շատերը պատճառաբանում են, թե մի կյանք ենք ապրում, *Հիսուս, Աստված, հոգևոր բարիքներ,* սրանք մեզ չեն կշտացնի, *դրամը, ունեցվածքը, հարստությունն են,* որոնք մեզ հնարավորություն պիտի ստեղծեն լավ ապրելու ու վայելելու կյանքը: Սատանան երբեք չի քնում, նա միշտ արթուն է ու նա մարդուն ստիպում է դառնալ դրամի երկրպագուն: Այսօր մենք ո՛չ թե խոնարհվում ենք Ամենազոր Աստծու առաջ ու հավատում Նրա զորությանը, այլ՝ դժբախտաբար դարձել ենք չարի ստրուկը, որը երևում է զանազան վայելքների ու հաճույքների կերպարանքով: Իսկ երբևէ մտածե՞լ ենք, թե ի՞նչ ենք տանելու այս աշխարհից, ո՞ւմ ենք թողնելու մեր հարստությունը, մեր ունեցվածքը, ոսկիներն ու դրամները: Մի պահ միայն, երբ գերեզմանոցում ենք, գիտակցում ենք, որ բոլորիս վերջը այնտեղ է, բայց հետո… խաղատներ, գինետներ. ճաշարաններ, կեր ու խում, ահա մեր կյանքը: Չենք գիտակցում, որ սրանք բոլորն էլ ժամանակավոր հաճույքներ են, անցողիկ ու անհրապույր: Հիսուս ծեծում է մեր դուռը, ո՞վ պիտի բացի Նրա առաջ: Եթե հավատում ենք, ուրեմն առանց տատանվելու, պիտի խոնարհվենք Հավատի Զորագլխի առաջ և լայնորեն բացենք մեր դռներն ու սրտերը Նրա զորության առաջ, որպեսզի գա և մեր հոգիները փրկության արժանացնի:

Այսօր Հիսուս մեզ հետ է, բայց մենք Նրա հե՞տ ենք: Իրականությունը ցույց է տալիս, որ մենք շատ հեռու ենք Հիսուսի հետ լինելուց: Նա տեղ չունի մեր տան մեջ:

Գյուղում մի կոշկակար էր ապրում: Արդար կյանքով էր ապրում, մեծ հավատ ուներ: Եվ ահա, եկեղեցական մի մեծ տոնից առաջ հիվանդանում է ու շատ է վշտանում, որ չի կարող եկեղեցի գնալ: Հանկարծ, տոնի նախօրեին, ինչ-որ մեկի մեղմ ու հեզ ձայնը երազում նրան ասում է.

«Քանի որ դու չես կարող ինձ մոտ գալ, Ես կգամ քեզ մոտ»: Կոշկակարն արթնանում է և ուրախանում. «Մի՞թե Աստված Ինքն է այցելելու ինձ»: Ողջ առավոտ տունը մաքրում ու կարգի է բերում, որքան կարող էր տոնական հյուրասիրություն է պատրաստում և սպասում ցանկալի Հյուրի այցին: Եվ ահա, պատրաստության ժամանակ, պատուհանից մի լացող տղայի է տեսնում: Իր մոտ է կանչում նրան ու հարցնում. «Ինչո՞ւ ես լալիս»: «Այսօր միակ կոշիկներս պատռվեցին և այլևս հագնելու ոչինչ չունեմ, իսկ մեր ընտանիքն աղքատ է ու նորը գնել չի կարող»,- ասում է տղան: Այն ժամանակ կոշկակարը հանգստացնում է տղային և ասում. «Կոշիկներդ ինձ տուր, ես կվերանորոգեմ»: Կարճ ժամանակ անց, երջանկությունից շողացող տղան, կանգնած էր վերանորոգված կոշիկներով: Նրան ճանապարհելով՝ կոշկակարը շարունակում է իր գործը: Երեկոյան մի աղքատ կին է գալիս նրա մոտ և ասում. «Ներիր ինձ, խնդրում եմ: Երկարաճիտք կոշիկներս քեզ եմ տվել վերանորոգելու, իսկ վճարել չեմ կարող… Բայց առանց դրանց էլ անհնար է դուրս գալ, որովհետև ցրտել է…»: Կոշկակարը ժպտում է ու ասում. «Երկարաճիտք կոշիկներդ պատրաստ են, կրիր և մի՛ մաշիր»,- ու դրանք կնոջն է տալիս՝ առանց որևէ բան պահանջելու:

Մթնում է: Կոշկակարը, գործերը վաղուց ավարտած, նստել էր պատուհանի մոտ և սպասում էր խոստացված Հյուրին: Արդեն քնելու ժամն էր, երբ անպտուղ սպասումից ընկճված կոշկակարն սկսում է անկողինը բացել: Եվ ահա, դուռը թակում են: Բացելով այն, նա իր առջև տեսնում է մի անցորդի, ով ասում է. «Թույլ տուր այստեղ գիշերեմ, ողջ օրը քայլել եմ, բայց գիշերելու տեղ չունեմ, ոչ ոք ինձ գիշերելու տեղ չի տալիս… Կոշկակարը խղճում է նրան և հրավիրում ներս: Իր անկողինը նրան է տալիս, իսկ ինքը տեղավորվում է հատակին: Նստած մտածում էր. «Երևի անարժան գտնվեցի Հյուրին, որովհետև այդպես էլ չայցելեց ինձ այսօր… Հավանաբար ար-

ժանի չեղա այդ մեծ տոնական օրը Նրա հետ անցկացնելու պատվին»: Այսպիսի տխուր մտքերով էլ կոշկակարը քնում է: Եվ կրկին այն նույն մեղմ ձայնն է լսում երազում.«Ես այսօր երեք անգամ քեզ մոտ եկա և ամեն անգամ դու Ինձ ուրախությամբ ընդունեցիր»:

Տեսա՞ք, Հիսուս ինչպե՞ս է այցելում մեզ, ի՞նչ կերպարանքով և ո՞ւմ միջոցով: Կոշկակարը արժանի եղավ, որ գնահատվի Հիսուսի կողմից, քանի որ բարի գործեր կատարեց:

Վերադարձել եք աշխատանքից, հոգնած, օրվա դժվարություններից նեղված ու բարկացած, փորձում եք հանգստանալ և հանկարծ մեկը թակում է դուռը: *«Ո՞վ է»,*- ասում եք ձեր մտքում, հյո՞ւր է, չեմ սպասում որևէ մեկին, բացե՞մ, թե՞ չբացեմ: Ձեր մեջ ալեկոծումներ են սկսում, չեք կարողանում կողմնորոշվել, ի՞նչ անել: Բացեք, պիտի զբաղվեք հյուրով, որի համար շատ ժամանակ չունեք, քանի որ հոգնած եք: Չբացեք, մի տեսակ նեղացրած կլինեք եկողին, որը ո՞վ գիտե գուցե ձեր հարազատներից կամ ընկերներից մեկն է: Վերջապես մի քանի րոպե մտածելուց հետո, որոշում եք բացել: Դժկամությամբ և հոգնած տեսքով բացում եք դուռը և ո՞վ հրաշք, դուռը թակողը հենց Ինքն է, Հիսուսը: Նրան տեսնելով հիշում եք Իր խոսքը. *«Ահավասիկ ես դռան առաջ եմ և բախում եմ, եթե մեկը ականջ դնի իմ ձայնին և բաց անի դուռը, կմտնեմ նրա մոտ և կընթրեմ նրա հետ և նա՝ ինձ հետ»:* Ուրախությամբ բացում եք դուռը և Հիսուս ողջագուրվում է ձեզ հետ: Լույսը մտնում է ձեր տունը ու պայծառորեն լուսավորում ձեր մութ բնակարանը:

Հիսուսի համար փակ դռներ չկան: Երկրներ կան, ուր մարդիկ վախի մեջ են և իրենց դռների վրա մի քանի փականքներ ունեն, որպեսզի ապահով լինեն, բայց արդյո՞ք ապահով են: Գողերը այնքան վարպետացած են, որ տասը փականք էլ լինի դռան վրա, եթե փորձեն կողոպտել, նորից իրենց չար մտադրությունը կիրագործեն; Ի՞նչ

պիտի անենք այդ պարագային։ Եթե Հիսուս մեզ հետ է, ոչ մի բանից չպիտի վախենանք։ Պիտի լսենք Հիսուսի թակոցը։ Ճիշտ է աշխարհի աղմուկի մեջ բավական դժվար է լսել Նրա մեղմ թակոցը, բայց եթե մեր սրտում ու հոգում տեղ ունի մեր Տերը, մենք անպայման կլսենք նրա թույլ թակոցը ու լայնորեն կբացենք մեր տան դռները, որոնք մեր սրտի ու հոգու դռներն են և Հիսուս ժպիտով կմտնի մեզ մոտ ու կընթրի մեզ հետ։ Երանելի են այդպիսի ծառաները։

Եկեք բացենք մեր սրտի դռները Տիրոջ առջև, խոստովանենք Նրան մեր մեղքերը, խոսենք Նրա հետ մեր տկարությունների, նեղությունների, թուլությունների ու սխալների մասին։ Նա անպայման կլսի մեզ ու ներս կմտնի մեր սրտերից ներս և ինչպես բարի կոշկակարի հետ տեղի ունեցավ, Հիսուս երեք անգամ այցելեց նրան, մենք էլ փորձենք օգտակար լինել մեր նմաններին, կարիքավորներին, նեղյալներին և մեր ողորմությունը չզլանանք տկարներին, որպեսզի արժանանանք Տիրոջ ողորմությանն ու այցելությանը։ Ամեն։

ԸՆՏԱՆԻՔԸ ՈՒԺ Է
ՀՈԳ ՏԱՆԵԼ ԸՆՏԱՆԻՔԻ ՄԱՍԻՆ

«Եթե մեկը յուրայիններին և մանավանդ ընտանիքին խնամք չի տանում՝ հավատն ուրացել է և ավելի չար է, քան անհավատը» (Ա. Տիմ. 5:8):

Այս խոսքը ես վերցրել եմ Պողոս Առաքյալի իր աշակերտ Տիմոթէոսին ուղղած առաջին նամակի 5-րդ գլխի 8-րդ համարից, ուր նա շեշտում է Ընտանիքին հոգատարություն ցույց տալու և ուշադրության արժանացնելու մասին: Իսկ եթե մեկը հոգ չի տանում և ուշադիր չի իր ընտանիքի նկատմամբ, նշանակում է *«նա իր հավատն ուրացել է ու ավելի չար է, քան՝ անհավատը»:* Պողոս Առաքյալը ուղղակի հարվածում է նշանակետին: Ընտանիքը իրապես սիրտն է յուրաքանչյուր ազգի, առավելապես մեր դարավոր ու բազմաչարչար ժողովրդի: Ընտանիքը ազգի հենասյունն է: Եթե չկա առողջ, համերաշխ ու սիրող ընտանիք, կա հիվանդ ազգություն: Ազգի ամրությունը՝ ընտանիքի սրբության ու համերաշխության և սիրո մեջ է:

Հարց է առաջանում, թե՝ *«Ի՞նչ է Ընտանիքը: Կարե՞լո՞ր է ընտանիք ունենալը: Մեր ազգի համար ի՞նչ է Ընտանիքը»:*

Այս հարցերի պատասխանը տալիս է Ամենայն Հայոց Վշտի Կաթողիկոս Խրիմյան Հայրիկը. *«Ընտանիքը մի փոքր թագավորության երկիրն ու սահմանն է: Սույն ընտանեկան պալատի ու թագավորության մեջ ո՛չ ոստիկան կա, ո՛չ սուր, ո՛չ բռնություն, ո՛չ գավազան, այլ ամեն ինչի տեղ՝ հայրական սերն ու մայրական գորովն է:... Դուք ձեր զավակներին օրհնեցեք այնպես, որ նրանք հայրենատուր սուրբ կրոնը, հավատը, սուրբ ավանդությունները անարատ ու անեղծ պահեն:... Օրհնեցեք, որ նրանք Ավետարանը գրկեն ու սովորեն նրա սիրո դասերը, եղբորը սիրեն, ընկերոջը սիրեն ու մարդասեր լինեն»:*

Մի անգամ մի եպիսկոպոսի մոտ պիղծ ոգուց տանջվող մի պատանու բերեցին: Միշտ մարդասեր եպիսկոպոսը, առանց խնդրանքների բժշկում էր բոլորին, բայց այս անգամ դժկամություն ցուցաբերեց: Ծնողները լացակումած աղաչում էին Աստծո մարդուն, որ խղճա իրենց որդուն և ազատի այդ պիղծ ոգուց: Ու Աստծու մարդը ասաց. «Ձեր որդին անարժան է բժշկության, այդ տանջող ոգին տրված է նրան, որովհետև նա հայրասպան է»: Ծնողները լսելով այս սարսափում են: Իսկ եպիսկոպոսը հարցնում է նրանց. «Ձեր որդին հաճախ է ձեզ անպատվում»: «...«Այդ ճիշտ է», -պատասխանում է հայրը: «Եվ դուք մի անգամ այդ արարքից խիստ դառնացած աղոթել էիք, որ Աստված պատժի նրան, այդպես չէ՞»,- շարունակում է եպիսկոպոսը: «Մեղք ենք գործել Աստծո առաջ»,- հառաչելով պատասխանում են տղայի ծնողները: «Ո՛չ, թող ձեր տղան տանջվի, որպես արժանի պատիժ»,- ասում է Աստծու մարդը: Բայց դժբախտ ծնողները խղճահարվելով իրենց որդու համար, չէին դադարում աղաչել, որ նա Աստծուն խնդրի և բժշկի իրենց որդուն: Ու միայն պատանու ծնողների արցունքների համար, եպիսկոպոսը օրհնում և Աստծուն աղոթելով բժշկում է նրան» (Վկայություններ Սուրբ Գրքից):

Սուրբ Պսակի ժամանակ քահանան խրատում է. *«Դրա համար տղամարդը պիտի թողնի հորը և մորը ու պիտի գնա իր կնոջ հետևից, և երկուսը մեկ մարմին պիտի լինեն: Ապա ուրեմն ոչ թե երկու, այլ մեկ մարմին են: Արդ, ինչ որ Աստված միացրեց, մարդը թող չբաժանի» (Մատթ. 19:5-6):* Աստծու պատգամը շեշտում է ընտանիքի կարևորությունը: Այն սխալ չհասկանանք: Աստված չի պատվիրում, որ այր և կին մոռանան իրենց ծնողներին, այլ շեշտում է ու առաջին գծի վրա է դնում ընտանեկան կյանքը: Եթե ընտանիքը իր ամբողջությամբ համերաշխության ու սիրո մթնոլորտում է ապրում, ապա դա մեծ ուրախություն է առաջին հերթին նրանց ծնողների համար, որոնք տարի-

ներ շարունակ չարչարվել են, անքուն գիշերներ անցկացրել, զոհողությամբ ու նվիրումով նրանց հասցրել են այդ վիճակին: Եվ երբ տատիկներն ու պապիկները իրենց գիրկն են առնում նրանց պտուղներին՝ զավակներին, թոռներին, ապրում են ու վայելում իրենց բարի գործի՝ անձնվիրության արդյունքը:

Հետաքրքիր է, որ հին ժամանակներում Կ. Պոլսի եկեղեցիներից մեկում մի տուփ էր կախված, որի մեջ ամեն նոր ամուսնացած մարդ փող էր գցում, եթե մի տարվա ընթացքում չէր զղջացել իր ամուսնության համար: Եվ այդ տուփը համարյա միշտ լիքն էր լինում: Ի՞նչ կպատահեր, եթե հիմա մեզանում էլ սահմանեին մի այդպիսի տուփ. անկասկած միշտ դատարկ կլիներ: Ինչո՞ւ Կ. Պոլսում այդպես չէր, որովհետև այնտեղ օրիորդները դաստիարակվում էին քրիստոնեական ոգով, և նրանց ներշնչում էր առաքինության զգացումը, որը դժբախտաբար մեր ժամանակների կանանց կարծես անծանոթ մի բան է: ..

Սուրբ Հովհան Ոսկեբերան Հայրապետն ասում է. *«Քանդակագործը անկենդան մարմին է ստեղծում, իսկ իմաստուն դաստիարակը կենդանի պատկեր, որին նայելով ուրախանում է թե՛ Աստված և թե՛ մարդ:... Հաճախ ծնողներից շատերը ամեն ինչ անում են, որ զավակը ունենա հիանալի ձի, աքանչելի տուն կամ թանկարժեք ունեցվածք, իսկ այն մասին, որ նա ունենա ընտիր հոգի ու բարեպաշտ մտածմունքներ նրանք ոչ մի ուշադրություն չեն դարձնում:... » (Սբ. Հովհան Ոսկեբերան):* Շատ գեղեցիկ և ուսանելի խոսքեր են:

Հովհաննես Առաքյալը իր Ընդհանրական թղթի երրորդ գրքում ասում է.*«Չունեմ ավելի մեծ ուրախություն, քան այն, երբ լսում եմ, թե իմ որդիները ճշմարտությամբ են ընթանում» (Գ. Հովհ. 1:4):*

Այս պատմությունը ընտանիքի երջանկության մասին է.

«Մի փոքրիկ քաղաքում իրար հարևանությամբ ապրում էին երկու ընտանիք: Ընտանիքներից մեկում անդադար վեճ ու կռիվ էր, ուր շարունակ իրար էին մեղադրում և պարզաբանում, թե ո՞վ է ճիշտ, ո՞վ սխալ, իսկ մյուս ընտանիքում ամեն ինչ խաղաղ էր, ո՛չ վեճ կար, ո՛չ կռիվ:

Անհամերաշխ ապրող ընտանիքի կամակոր կինը զարմանում է, թե իր հարևանները ինչո՞ւ չեն կռվում իրար հետ: Ու այս տրամադրությամբ, մի օր նա իր ամուսնուն ասում է.

Գնա՛ ու տե՛ս, թե ի՞նչ են անում հարևանները, որ իրենց մոտ ամեն ինչ այդպես հարթ է ու խաղաղ:

Ամուսինը գնում է և թաքնվում հարևանի բաց պատուհանի տակ ու սկսում ուշադիր հետևել, թե ի՞նչ են անում տանտերերը: Այդ պահին տանտիրուհին տունն էր կարգի բերում: Մի շատ թանկագին ծաղկաման ձեռքին նրա փոշին էր մաքրում: Իսկ ամուսինը հեռուստացույց էր դիտում: Հանկարծ այդ պահին հեռախոսը զանգում է: Կինը արագ ծաղկամանը դնում է սեղանի ծայրին, այնպիսի դիրքով, որը կարող էր թեթև շարժումից ընկնել ու վազում է հեռախոսի մոտ:

Հակառակի պես ամուսինն էլ ուզում է սենյակից ինչ որ մի բան վերցնել: Սեղանի մոտից անցնելուց, անզգուշորեն դիպչում է ծաղկամանին, որը վայր ընկնելով կոտրվում է:

Թաքնված հարևանը վախեցած մտածում է.

Վա՛յ, ի՞նչ կլինի հիմա:

Կինը մոտենում է, ափսոսանքով հոգոց է անում ու մեղմ ասում ամուսնուն.

Ներիր ինձ, սիրելիս, ես եմ մեղավորը: Ծաղկամանը ճիշտ տեղում չէի դրել:

Ի՞նչ ես ասում, թանկագինս: Այդ ես եմ մեղավոր: Շտապում էի ու անզգուշաբար չնկատեցի ծաղկամանը:

Ոչինչ, մի՛ մտածիր, թող ավելի մեծ դժբախտություն չունենանք:

Թաքնված հարևանը շատ է նեղվում, տուն է գալիս անտրամադիր: Կինը նրան անհամբեր հարցնում է.

Ինչո՞ւ այսքան ուշացար: Մի բան իմացա՞ր:

Այո՛:

Եվ ի՞նչ են նրանք անում:

Չգիտեմ, թե նրանք ի՞նչ են անում, բայց մի բան ինձ համար պարզ դարձավ, որ նրանց տանը բոլորը մեղավոր են, իսկ մեր տանը բոլորը ճիշտ են»:

Մի այլ պատմություն

«Ամուսինը գոջաց, սակայն չհասցրեց ասել…

Երբ ամուսինը վերադարձավ, կինը պատրաստել էր ընթրիքի սեղանը: Միասին ճաշեցին, ամուսինը այլևս չհամբերեց, բռնելով կնոջ ձեռքը, ասաց, որ կարևոր բան ունի ասելու… լարեց բոլոր ուժերը, մի ներքին ձայն նրան համարձակություն տվեց և նա ասաց կնոջը, որ ուզում է բաժանվել նրանից, որ իր սիրտը արդեն ուրիշին է պատկանում, միասին ապրելն արդեն ցանկալի չէ: Զարմանքը մեծ եղավ ամուսնու, երբ կնոջ դեմքի արտահայտությունը չփոխվեց, բայց ցավ տեսավ աչքերի մեջ: Հաջորդ օրը ամուսինը շատ ուշ վերադարձավ, սեղանին մի գրություն գտավ, այսպիսի բովանդակությամբ. «Ես չեմ ճաշել, ուղղակի շուտ պառկեցի հոգնածության պատճառով»:

Առավոտյան կինը առաջարկեց ամուսնուն մի քանի պայմաններ ամուսնալուծության վերաբերյալ, չպահանջելով ոչինչ ամուսնուց: Միայն խնդրեց, որ ամուսնալուծությունը հետաձգի մեկ ամսով, և հնարավորության սահմաններում այդ մեկ ամիսը սիրալիր լինեն միմյանց նկատմամբ, որովհետև իրենց տղան քննությունների է նախապատրաստվում, չլինի թե իրենց որոշումը ազդի նրա հոգեբանության վրա, ով դեռ ոչինչ չի զգացել նրանց հարաբերություններից: Եվս մի տարօրինակ առաջարկ արեց ամուսնուն, որ վերջինս այդ մեկ ամսվա ընթացքում իրեն

ձեռքերի վրա տանի ննջասենյակից մինչև հյուրասենյակ, ինչպես դա արել էր իրենց հարսանիքի օրը:

Ամուսնուն տարօրինակ թվաց առաջարկը, նույնիսկ մտածեց, որ կինը խելքը թռցրել է, բայց համաձայնվեց, որովհետև մտքում ծրագիր ուներ նոր սիրո հետ: Երբ առաջին օրը ձեռքերի վրա տարավ կնոջը, այնքան անսովոր էր, որ նույնիսկ երեխան ծիծաղեց ու զարմացավ: Անցնում էին օրերը, ամուսինը ամեն օր զգում էր, որ կինը ավելի թեթև է քան նախորդ օրերը և մի օր էլ զգաց, որ տանում է այնպիսի ջերմությամբ, ինչպես ձեռքերի վրա տարել է հարսանիքի օրը: Տղան գնաց դասի, կինը՝ աշխատանքի, ամուսինը մնաց մենակ. մի միտք էր նրան տանջում. նա հասկացել էր, որ մանրուքներ են պակասել իրենց ամուսնական հարաբերությունների մեջ, խորհեց և վճռական դուրս եկավ տնից: Մեքենան վարում էր սովորականից շատ արագ, իջավ մեքենայից, նույնիսկ դուռը չփակեց, վախենալով, որ մի վայրկյանը կարող էր իր որոշումը փոխել: Գնաց սիրուհու մոտ. ասաց, որ փոխել է մտադրությունը ամուսնալուծության վերաբերյալ ու չի կարող իր հետ ամուսնանալ. դեռ միտքը չավարտած զգաց ապտակը երեսին և հազիվ հասցրեց լսել դռան չխկոցը ու անհարգալից բառեր…

Արդեն վստահ որոշմամբ մտավ ծաղկի խանութ, պատվիրեց վաճառողին, որ ծաղկեփնջի բացիկի վրա գրի այսպիսի տողեր. «Սիրելիս ես քեզ ձեռքերիս վրա կտանեմ այնքան ժամանակ, մինչև մահը կբաժանի մեզ»: Վերցրեց ծաղիկը ամենայն ուրախությամբ, մտքում նախապատրաստելով գեղեցիկ նախադասություններ, գոչման խոսքեր կնոջը ասելու համար: Երեկոյան վերադարձավ տուն, կնոջը գտավ անկողնում մահացած: Պարզվեց, որ նա տառապել է քաղցկեղով քանի ամիս շարունակ, մինչ ամուսնու սիրտը զբաղված էր այլ կնոջով: Ամուսինը նույնիսկ չէր էլ նկատել նրա տառապանքը: Իսկ կինը վերջին քայլերը արել էր միայն նրա համար, որպեսզի ինքը տղայի աչքում մնա որպես սիրող ամուսին և հոգատար հայր: Մանրուքներ կան, որոնք ընտանիքում շատ ավելի կարևոր են քան դրյակը, շքեղ մեքենան, բանկային հաշիվը… Հետևաբար գտեք ժամանակ ձեր կեսի համար և կատարեք մանրուքներ միմյանց համար, որոնք կդարձնեն ձեզ ավելի մտերիմ ընտանեկան հարաբերություններում: Թող ձեր ընտանիքը լինի ամենաերջանիկը («Հոգևոր քարոզներ»):

Ընտանիքը ո՛չ միայն ազգի հենարանն է, այլ նաև մի փոքրիկ եկեղեցի է։ Խորհրդային տարիներին, երբ արգելված էր Աստված, կրոն, եկեղեցի, խաչ, հավատ բառերը, հայ քրիստոնյա ընտանիքը մնաց իր հավատի բարձրության վրա ու պահեց, պահպանեց իր բոլոր ավանդություններն ու սրբությունները։ Փառք ու պատիվ հայ ընտանիքին։

Տեսեք թե ի՞նչ է ասում այս մասին մեր հայրենի գրողներից Մուրացանը. *«Ազգերի զորությունը ընտանիքների մեջ է։ Զորավոր է ա՛յն ազգը, որ ունի զորավոր ընտանիքներ. սիրով, միությամբ, առաքինի և հավատարիմ կենակցությամբ ապրող ընտանիքներ։ Ով որ կամենում է զորավոր տեսնել յուր ազգը և հաղթող՝ հայրենիքը, նա ամենից առաջ ընտանիքները պիտի խնամե, ինչպես մի հոգատար պարտիզպան, որ ծառի ճյուղերը զորացնելու և նրանից պտուղ քաղելու համար խնամում է ծառի արմատները, որոնք թեպետ հողի մեջ են թաղված և չեն երևում մարդկանց, բայց իրանց մեջ ամփոփում են ծառի կենդանությունը։ Ինչպես որ չի կարող ապրել այն տունկը, որի արմատները չորացած են կամ որդնակեր, այնպես և կանգուն չի մնալ այն ազգը, որի ընտանիքներում տիրում է ապականություն, որոնցից հալածական է սերը, միությունը, առաքինությունը, և, նամանավանդ, Աստուծո երկյուղը»։*

Եկեք աղոթենք, որ Տերը մեր ազգին պարգևի ավելի ամուր, համերաշխ ու սիրով լի մի ընտանիք, ընտանիք՝ բազում զավակներով, որոնք դաստիարակվելով դառնան մեր ժողովրդին դեպի հավիտենություն առաջնորդող ու դեպի Աստված տանող մի հրաշալի սերունդ։ Ամեն։

ՀՈԳԵՎՈՐ ԿՈՒՐՈՒԹՅՈՒՆ

«Մարմնի ճրագը աչքն է, երբ աչքը առողջ է, ամբողջ մարմինը լուսավոր կլինի…(Ղուկ.11:34):

Այս խոսքը Ղուկաս Ավետարանչինն է. շարունակելով 11-րդ գլխի 34-36 համարները կարդում ենք. *«Մարմնի ճրագը աչքն է, երբ աչքը առողջ է, ամբողջ մարմինը լուսավոր կլինի, իսկ երբ աչքը պղտոր է, մարմինն էլ խավար կլինի: Արդ, զգույշ եղիր, գուցե այն լույսը, որ քո մեջ է, խավար լինի: Եթե քո ամբողջ մարմինը լուսավոր է, և նրա մեջ խավարի մաս չկա, ամեն ինչ այնպես լուսավոր կլինի, ինչպես երբ ճրագը իր շողերով լուսավորի քեզ» (Ղուկ.11:34):*

Հետաքրքրական է սակայն իմանալ, թե ինչի՞ց է առաջ գալիս հոգևոր կուրությունը:

«Ով չարիք է գործում, ատում է լույսը և չի գալիս դեպի լույսը, որպեսզի նրա գործերը իր երեսովը չտան» (Հովհ. 3:19),- ասում է Հովհաննես առաքյալը:

Հոգևոր կուրության արդյունքը անհավատությունն է, և *«Այդ անհավատների մտքերը այս աշխարհի աստվածը կուրացրեց, որպեսզի նրանց մեջ չծագի Քրիստոսի Ավետարանի փառքի լույսը» (Բ. Կորնթ. 4:4),*- ասում է Պողոս Առաքյալը Կորնթացիներին ուղղած երկրորդ թղթում:

Իսկ անհավատության արդյունքը պարզապես ատելությունն է, որովհետև՝ *«Ով ասում է, թե ինքը լույսի մեջ է և ատում է իր եղբորը, սուտ է և խավարի մեջ է տակավին: Ով սիրում է իր եղբորը, բնակվում է լույսի մեջ և նրա մեջ գայթակղություն չկա: Իսկ ով ատում է իր եղբորը, խավարի մեջ է, խավարի մեջ է շրջում և չգիտէ, թե ուր է գնում, որովհետև խավարը կուրացրել է նրա աչքերը» (Ա. Հովհ. 2:9-11):*

Կուրությունը մեծ դժբախտություն է, քանի որ կույրը չի կարող տեսնել Աստծու ստեղծած բոլոր բարիքները:

Սակայն ավելի մեծ դժբախտություն է հավատի կուրությունը, քանի որ նրանից տառապողը զրկված է աստվածային լույսից և չի կարող տարբերել չարը՝ բարուց:

Ճրագի նպատակը լուսավորել է: Առանց լույսի խավար կլինի: Խավարի մեջ հնարավոր չէ բնականոն կյանքով ապրել:

Հոգևոր կույրերի համար իրենց շրջապատը նեղ է թվում և ուզում են տարածվել, իրենց ազդեցությունը ընդարձակել, որովհետև իրենց սահմանն ու կարողությունը չեն տեսնում: Եթե կարողանային տեսնել, այն ժամանակ իրենց գործունեությունը կկենտրոնացնեին և ուրիշների դժբախտությունների պատճառ չէին լինի:

Ի՞նչ է սրա բուժումը: Ֆիզիկական կույրը դիմում է բժշկին: Հոգևոր կույրը պիտի դիմի Քրիստոսին. *«Ես եմ աշխարհի լույսը, ով իմ հետևից է գալիս, խավարի միջով չի քայլի, այլ կընդունի կենաց լույսը» (Հովհ. 8:12):*

Այս պատմությունը եկեղեցական հայրերի կյանքից է. կարդացեք և մտածեք ձեր հոգու փրկության ու կուրության մասին:

«Մի վանահայր իր վերակացության տակ ուներ տասը վանական: Այս վանականներից մեկը շատ անհոգ էր և իր փրկության համար ոչ մի ջանք չէր թափում: Վանահայրը, հաճախ այցելելով նրան, խնդրում էր· «Եղբայր, աշխատիր հոգուդ փրկության համար, որովհետև եթե մահանաս, այդ ապրելակերպիդ պատճառով հավիտենական տառապանքներից չես խուսափի»: Սակայն եղբայրը միշտ անհնազանդություն էր ցուցաբերում և չէր լսում վանահորը: Եվ մի օր էլ նա հանկարծամահ եղավ: Վանահայրը շատ տխրեց եղբոր համար, քանի որ նա բավականին ծույլ ու անհոգ ապրեց: Վշտից աղոթքի մղվելով՝ վանահայրն ասաց· «Տեր Հիսուս Քրիստոս, ցույց տուր ինձ եղբոր հոգին»: Եվ այսպես երկար աղոթեց: Մի անգամ աղոթքի ժամանակ ընկավ տեսիլքի մեջ և տեսավ մի կրակե գետ, նրա մեջ բազմաթիվ մարդկանց, որոնք, կրակի մեջ

պապակվելով, տառապալից տնքում էին: Իսկ նրանց մեջտեղում իր վանականին, որ մինչև վիզը մխրճված էր կրակի մեջ: Վանահայրն ասաց աշակերտին· «Օ՜հ, եղբայր և որդի, մի՞թե չէի աղաչում, որ հոգ տանեիր հոգուդ համար, որպեսզի չընկնեիր այս տառապանքների մեջ»: Եղբայրը պատասխանեց, «Փառք եմ տալիս Աստծուն այն բանի համար, որ քո աղոթքներով գոնե գլուխս կրակից դուրս է մնացել»:

Մաքրեք ձեր հոգիները աղոթքով, որպեսզի բացվեն ձեր հոգու աչքերը: Մի՛ զրկեք ձեզ երկրային բարիքները վայելելուց, բայց մի՛ մոռացեք դրանց Ստեղծողին՝ Գերագույն Ծնողին: Այս ձևով ձեր հոգիները փրկած կլինեք հավիտենական կրակների մեջ այրվելուց ու կբացվեն ձեր հոգու աչքերը»:

«…Ով անաստվածություն է քարոզում, նա նախապատրաստում է մարդկանց համար ամենամեծ պատուհասները՝ սանձարձակություն, ստորացում, ստրկություն և տանջանք... Մեր սերունդը կոչված է ցույց տալու մարդկանց իրենց սպասող ահռելի ճակատագիրը, որպեսզի հավաստիացնի նրանց, որ առանց Աստծո ճանապարհը տանում է դեպի կործանում... Բայց ինչպե՞ս ցույց տալ դա հոգևոր կույր մարդկանց, ովքեր չեն կարող և չեն էլ ուզում տեսնել»,- ասում է մտածողներից մեկը:

Ժողովրդական հին իմաստության համաձայն, մտքի պակասությունը աչքի կուրությունից ավելի վատ է: Սակայն հոգու կորությունը գերազանցում է այս բոլորին իր չափից ավելի վարակված վիճակում, որովհետև հոգեվոր կուրություն, այս վիճակում, նշանակում է արևի լույսի ներքև ապրող մի մարմնի մեջ խավար հոգի ու միտք:

Պողոս Առաքյալը Կորնթացիներին ուղղած իր նամակում ասում է. *«Ոչ հոգևոր մարդը Աստծու Հոգուց եկած ճշմարտությունները չի ընդունում, որովհետև այդ հիմարություն է նրա համար և չի կարող հասկանալ, քանզի հոգևոր կերպով են քննվում դրանք» (Ա. Կորնթ.2:14):*

Ռուս Ուղղափառ Եկեղեցու միաբան՝ Միտրոպոլիտ Իլարիոն Ալֆեևն ասում է.

«Մարդը, որը զուրկ է հավատից, հոգեպես կույր է: Այդպիսի մարդը չի տեսնում սեփական մեղքերը, չի նկատում Աստծո նախախնամությունն իր կյանքում: Եթե նույնիսկ նրա աչքի առաջ հրաշք կատարվի, նա կփորձի բացատրել դա կամ հանգամանքների բերմամբ կամ դեպքերի բնական ընթացքով: Այդ մարդուն չի դիպչում Աստծո շնորհը, քանի որ նրա սիրտը կարծրացած է, իսկ աչքերը չեն տեսնում Աստծո լույսը: Հավատը հնարավորություն է տալիս տեսնել իրերի իմաստը: Այն հնարավորություն է տալիս մարդուն տեսնել Աստծո նախախնամությունը սեփական կյանքում: Այն բացում է մարդու աչքերը տեսնելու սեփական մեղքերը և անկատարությունները՝ թույլ տալով գիտակցել դրանք, ապաշխարել և բժշկվել դրանցից, ինչպես մարդիկ բուժվում են ֆիզիկական հիվանդություններից:

Ըստ էության՝ անհավատությունը հիվանդություն է, իսկ հավատը՝ հոգևոր առողջություն: Այդ իսկ պատճառով, երբ մենք մեր կյանքում հանդիպում ենք անհավատ մարդու, իսկ այդպիսիք բավականին շատ են մեր շրջապատում, ապա մենք պետք է հասկանանք, որ չարժի նրա անհավատության մեղքն ամբողջովին բարդել հենց այդ մարդու վրա: Ինչպես հիվանդությունները՝ մեկի մոտ այն կարող է լինել ի ծնե, մեկ ուրիշի մոտ՝ ձեռքբերովի: Բայց չէ՞ որ մենք չենք մեղադրում հիվանդներին իրենց հիվանդության համար, այլ նրանց ապաքինում ենք մաղթում և ինքներս էլ, որքանով կարողանում ենք, փորձում ենք օգնել նրանց առողջանալ: Այդպես և անհավատ մարդկանց հետ մեր փոխհարաբերություններում մենք պետք է հասկանանք, որ անհավատությունը հոգևոր կուրություն է: Բայց դա այնպիսի կուրություն է, որից հնարավոր է ապաքինվել, նույնիսկ եթե մարդն ի ծնե է կույր: Բժշկողը Աստված է, բայց մենք էլ այդ հարցում հանդիսանում ենք

օգնականներ անհավատ մարդկանց համար: Մարդիկ կհավատան Աստծուն, եթե մեզնից ոչ միայն գեղեցիկ խոսքեր լսեն, այլև տեսնեն, թե ինչպես ենք մենք քրիստոնեավայել ապրում, կատարում Աստծո պատվիրանները և, ամենակարևորը, թե ինչպես է Հիսուսի հանդեպ հավատը վերափոխում մեր կյանքը:

Ու ինչպես աշխարհը չէր ստեղծվի առանց Աստծո, այնպես էլ ամբողջ մարդկային մշակույթը կկործանվեր, եթե Աստծու Հոգին հեռանար նրանից: Չէր լինի կյանք առանց արևի: Չի կարող լինել մարդկային հոգի՝ առանց Աստծու: Մարդը՝ մերժված ու լքված Աստծու կողմից, կորցնում է իր ստեղծագործ ուժը՝ նա դառնում է անսիրտ, առանց ոգեշնչման, դաժան մի արարած, որն անզոր է հայեցության ու նոր, կատարյալ ձևերի ստեղծման մեջ, այլ ավելի ունակ փոխադարձ տանջահարելուն ու համընդհանուր ավերածության, և նրա կյանքը լցվում է վախով, տաժանակիր աշխատանքով ու փոխադարձ մատնությամբ: Պատմությունը տվել է այդ բոլորի ծանրակշիռ վկայությունները, մի՞թե անհրաժեշտ են նոր հաստատումներ և հետագա տառապանքներ...»:

Ամեն օր աղոթեցեք նրանց համար, ովքեր հիվանդ են, անօգնական են, մերկ են, տուն չունեն, բանտում են, հարբեցող ու ծխող են: Հավատացեք և մի՛ կասկածեք, որ ձեր աղոթքների շնորհիվ բարի գործ արած կլինեք, կբացվեն ո՛չ միայն ձեր հոգու աչքերը, այլ նաև նրանց, որոնց համար դուք աղոթում եք ու Աստված լսելով ձեր աղոթքները իր ժամանակին անպայման նրանց կտա հոգու խաղաղություն և փրկություն: Ամեն:

ՆՄԱՆՎԵՑԵՔ ԱՍՏԾՈՒՆ

«Նմանվեցեք Աստծուն, որպես սիրելի զավակներ, և ընթացեք սիրով, ինչպես որ Քրիստոս սիրեց մեզ և իր անձը մատնեց մեզ համար որպես անուշահոտ պատարագ և զոհ Աստծուն» (Եփես.5:1-2):

Այս խոսքը ես վերցրել եմ Պողոս Առաքյալի Եփեսացիներին գրած նամակի 5-րդ գլխի 1-2 համարներից, ուր Հիսուս մեզ խրատում է նմանվել Աստծուն:

Հետաքրքիր է, իսկ մենք ինչպե՞ս պիտի կարողանանք նմանվել Աստծուն: Իմ բնաբանում, Պողոս Առաքյալը հստակ ասում է. *«Նմանվեցեք Աստծուն, որպես սիրելի զավակներ, և ընթացեք սիրով, ինչպես որ Քրիստոս սիրեց մեզ»:*

Ուրեմն, նմանությունը Աստծու հետ միմիայն կարող է լինել սիրով, քանի որ Աստված Քրիստոսի միջոցով սիրեց մեզ Նրան ուղարկելով մեր մեղքերի փրկության համար: *«Քանի որ Աստված այնքան սիրեց աշխարհը, որ մինչև իսկ իր միածին Որդուն տվեց, որպեսզի, ով նրան հավատում է, չկորչի,այլ ընդունի հավիտենական կյանքը. որովհետև Աստված Իր որդուն չուղարկեց աշխարհ, որ դատապարտի աշխարհը, այլ՝ որպեսզի աշխարհը նրանով փրկվի: Ով նրան հավատում է, չպիտի դատապարտվի, և ով նրան չի հավատում, արդեն իսկ դատապարտված է, քանի որ Աստծու միածին Որդու անվանը չհավատաց» (Հովհ. 3:16-18),- ասում է Հովհաննես Ավետարանիչը:*

Աստծուն նմանվելու ու նրա ճանապարհով ընթանալու համար, հեռու պիտի մնանք կյանքի սխալ արարքներից՝ պոռնկությունից, խաբեբայությունից, ստախոսությունից, ագահությունից, դրամասիրությունից, կռապաշտությունից, ավազակությունից: Աստված մեզ զգուշացնում է, որ հեռու մնանք այսպիսի բաներից ու մասնակից չլինենք ինչ պարագայում էլ, որ լինի. *«Ուրեմն,*- շարունակում է Պողոս Առաքյալը Եփեսացիներին ուղղած իր

նամակում,- *«Նրանց մասնակից մի՛ եղեք, որովհետև թեպետև մի ժամանակ խավար էիք, հիմա լույս եք ի Տեր. ընթացեք ինչպես լուսո որդիներ, քանզի լուսո պտուղներն են բարությունը, արդարությունը և ճշմարտությունը» (Եփես. 5:7-9):*

Հարց է ծագում, թե՝ *«Ի՞նչ է Աստծուն մոտենալու ամենակարևոր և առաջին քայլը»:*

Աստծուն նմանվելու և Նրան մոտենալու առաջին և ամենակարևոր քայլը մարդուն սիրելն է: Մարկոս Ավետարանիչը իր Ավետարանի 12-րդ գլխի 28-34 համարներում պատմում է, թե մի օր՝ *«Օրենսգետներից մեկը, մոտենալով, լսում էր նրանց, մինչ վիճում էին, երբ նա տեսավ, թե Հիսուս նրանց պատասխանը լավ տվեց, հարցրեց նրան և ասաց. «Ո՞ր պատվիրանն է առաջինը»:* Եվ Հիսուս ասաց նրան. *«Ամենից առաջինն է՝... մեր Տեր Աստվածը միակ Տերն է, և դու պիտի սիրես քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով, քո ամբողջ մտքով և քո ամբողջ զորությամբ», սա է առաջին պատվիրանը: Եվ երկրորդը նման է սրան. «Դու պիտի սիրես քո ընկերոջը քո անձի պես» չկա ուրիշ պատվիրան ավելի մեծ, քան սրանք»:* Եվ օրենսգետը նրան ասաց. *«Լավ է, Վարդապետ, ճշմարտությամբ ասացիր, թե Աստված մեկ է, և բացի նրանից, ուրիշ Աստված չկա, և նրան ամբողջ սրտով, ամբողջ զորությամբ ամբողջ մտքով սիրելը, ինչպես և ընկերոջն իր անձի պես սիրելը առավել է, քան ողջակեզները և զոհերը»:* Եվ Հիսուս տեսնելով, թե նա իմաստությամբ պատասխան տվեց, նրան ասաց. *«Հեռու չես Աստծու արքայությունից»: Եվ այլևս ոչ ոք չէր համարձակվում նրան բան հարցնել» (Մարկոս 12:28-34):*

Այս պատմությունը հետաքրքիր է.

«Օրերից մի օր մի ճամփորդ մոտենում է հոգևոր հովվին ու ասում, որ ցանկանում է ապրել հոգևոր և ճգնակյաց կյանքով: Խոհեմ և երկար տարիներ ճգնակյաց

կյանքով ապրող հովիվը մեղմ ժպտալով ասում է. «Որդի՛ս, իսկ դու երբևէ որևէ կնոջ սիրե՞լ ես»:

«Ո՛չ, դուք ինձ սխալ հասկացաք, ես ասում եմ, որ ինձ բացարձակ չի հետաքրքրում աշխարհիկ կյանքը, ես ուզում եմ ինձ ամբողջովին նվիրել Աստծուն և ապրել միմիայն հոգևոր կյանքով»,- բողոքում է ճամփորդը:

«Որդի՛ս, խնդրում եմ՝ լսիր ինձ ուշադիր, ես հարցնում եմ. դու քո կյանքի ընթացքում արդյոք չե՞ս սիրել որևէ կնոջ կամ գոնե երեխայի, մի՞թե դու ոչ ոքի չես սիրել»:

«Ախր, ես պարզ ասում եմ, որ աշխարհիկ կյանքն ինձ չի հետաքրքրում, ինձ ոչինչ պետք չէ այս ունայն աշխարհից, որտեղ ամեն հարաբերության մեջ մի օր կեղծիք է ծլում, որտեղ մարդիկ ավելի շատ իրենց շահն են հետապնդում, քան միմյանց հարգելն ու սիրելը, որտեղ մարդիկ օրվա հացը վաստակելու համար ուրանում են ամեն մի սրբություն, որտեղ մարդիկ իրենք էլ են հոգնել իրենցից: Ախր, ես ինչպե՞ս կամ ինչո՞ւ սիրեմ նրանց, ո՛չ, ես ուզում եմ բարձրանալ լեռները, առանձնանալ ու ինձ լիովին նվիրել Աստծուն:

Ետ վերադարձիր աշխարհ, փորձիր սիրել մարդկանց. դա է Աստծուն մոտենալու ու նմանվելու առաջին քայլը,- պատասխանում է Հովիվը»:

Ադամ քահանա Մակարյանը գրում է մարդուն Աստծուն նմանվելու հատկանիշների մասին. *«Մարդու մասին շատ հետաքրքիր մտքեր ունի Սուրբ Գրիգոր Նյուսացին: Եկեղեցական Հայրն ասում է, որ ի տարբերություն կենդանիների՝ մարդը չունի բնական զենքեր՝ կոտոշ, պաշտպանող մազեր, արագություն, ճիրաններ, և կարծես թե խղճալի է իր այս մերկությամբ: Բայց եթե մարդն այդ բնական զենքերն ունենար, ապա կարիք չէր զգա մյուս արարածների, մինչդեռ հիմա իշխում է նրանց: Արագության համար մարդն օգտագործում է ձիուն, մերկությունը ծածկելու համար՝ ոչխարին, պաշտպանության համար՝ ատամներով զինված շանը: Մարդն ուղիղ իրան ունի, իսկ կենդանիներն ունեն ներքև հակված մարմին: Դա ցույց է տալիս մարդու իշխող*

դիրքը և դեպի երկինք ուղղված հայացքը: Կենդանիներն իրենց զգացումներն արտահայտում են ձայներով և մարմնի շարժումներով: Մարդն իր զգացումներն արտահայտում է լեզվով, սակայն լեզվով նա նաև թաքցնում է իր մտքերը: Կենդանիներն զգում են և հասկանում, մարդը կարող է անել ավելին՝ մտածում է և իմանում, բայց նրանք երկուսն էլ ցանկանում են: Սակայն ցանկանալու ունակությունը մարդը պետք է օգտագործի ո՛չ թե կենդանիների պես՝ մարմնական հաճույքների և մեղսալի կրքերի համար, այլ առավել պետք է ցանկանա հաստատուն մնալ այն ճանապարհին, որ ցույց տվեց Աստված... Եվ մարդը պատկերն է Աստծո առաջին հերթին իր ազատ կամքով, նաև հոգու անմահությամբ...: Եվ Աստծո պատկերը մեր հոգիներում անաղարտ պահելու համար քրիստոնեությունը մեզ պատվիրաններ է տալիս, որոնցով մենք կարող ենք ապրել աստվածահաճո ընթացքով և արժանանալ Երկնքի Արքայության...» (Ադամ Քահանա Մակարյան «Քրիստոնեության Իսկությունը» գրքից):

Աստված սեր է: Եվ եթե մենք ուզում ենք նմանվել Նրան, պետք է սիրենք ո՛չ միայն Աստծուն, այլև մարդկանց՝ մեր ծնողներին, մեր ընտանիքը, մեր ընկերներին, մեր Հայրենիքը, մեր Եկեղեցին, մի խոսքով երկրի վրա Աստծու ստեղծած ապրող ու շնչող մարդկանց: Տիրոջ պատգամը այս է՝ Սեր և միմիայն Սեր: *«Սիրեցեք միմյանց»,*- ասաց Տերը: Եվ սերը միայն խոսքով չի լինում, այլ մեր ամենօրյա գործնական կյանքով: Եթե սիրենք մարդկանց անկեղծ ու մաքուր սիրով, Աստծուն նմանվելու և Նրան մոտենալու կարևոր և առաջին քայլը կատարած կլինենք ու ինչպես Հիսուս է ասում. *«Հեռու չենք լինի Աստծու Արքայությունից»:* Ամեն:

ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆ

«…Եվ մի տար փորձության, այլ փրկիր մեզ չարից»
Տերունական Աղոթք

Հիսուսի տված *«Հայր Մեր»* աղոթքը ամեն անգամ արտասանելիս հանդիպում ենք այս խոսքին, որը զգուշացնում է մեզ հեռու մնալ չարի փորձությունից, չար, որը ոչ մի բանի առջև կանգ չի առնում, այլ ամեն րոպե և ամեն պահ փորձում է մեզ դարձնել մեղավոր, մեղքի մեջ թաթախված կտրված Աստծու հովանուց:

Չարը, սատանան նույնիսկ Հիսուսին փորձեց, երբ անապատում քառասուն օր ո՛չ խմեց, ո՛չ էլ կերավ: Եվ Սատանան նրան ասաց. *«Եթե Աստծո Որդի ես, այդ քարին ասա, որ հաց լինի»:* Հիսուս նրան պատասխանեց. *«Գրված է. «Միայն հացով չէ, որ կապրի մարդ, այլ՝ Աստծու ամեն խոսքով»:* Հետո սատանան Նրան փորձեց ևս երկու անգամ: Բոլոր փորձությունները հաղթահարելով և պատասխանները տալով Հիսուս նրան ասաց. *«Ինձանից հեռու գնա, սատանա, որովհետև գրված է՝ պիտի երկրպագես քո Տեր Աստծուն և միայն Նրան պիտի պաշտես» (Մատթ. 4:10):*

Այս պատմությունը մի ճգնավորի մասին է, որին չարը փորձության է ենթարկում.

«Մի օր միջօրեին, երբ շոգը հասել էր իր գագաթնակետին,- պատմում է աբբա Եղիան,- իմ քարանձավի դուռը ծեծեցին: Դուրս գալով ես տեսա մի կնոջ և հարցրեցի նրան· «Քեզ ի՞նչ է պետք»: «Հայր իմ, ես էլ եմ ապրում նույն կյանքով, ինչ դու: Իմ փոքրիկ քարանձավը քոնից մի քարընկեցի հեռավորության վրա է գտնվում»:

Եվ նա ցույց տվեց ինձ հարավային կողմում գտնվող իր քարանձավը:

«Անցնելով անապատով,- շարունակեց նա,- սաստիկ շոգից ես ծարավեցի, խնդրում եմ ինձ մի քիչ ջուր տուր»: Դուրս բերելով գավաթը՝ ես տվեցի նրան: Նա էլ

խմելով հեռացավ: Իսկ նրա հեռանալուց հետո սատանան իմ դեմ մարմնավոր սաստիկ պատերազմ սկսեց՝ անմաքուր խորհուրդներ բերելով մտքիս: Այդ պատերազմից հյուծվելով և էլ անկարող լինելով հանգցնել մարմնավոր կրակը, ես վերցրեցի գավազանս ու ելա քարանձավից, այն ժամանակ երբ շոգից նույնիսկ քարերն էին սաստիկ տաքացել. ես շտապեցի գնալ կնոջ մոտ՝ մարմնավոր այդ կրքին բավարարություն տալու համար: Ես համարյա մոտեցել էի նրա քարանձավին, իսկ կիրքն այրում էր ինձ: Եվ հանկարծ ես ընկա զմայլանքի մեջ և տեսա, որ հողը բացվեց ու կլանեց ինձ: Եվ ահա տեսնում եմ, որ ամենուր փռված են մեռած մարմիններ՝ նեխած ու քայքայված, որոնք անտանելի գարշահոտություն էին արձակում: Մեկը, որ փայլում էր սրբությամբ, մատնացույց արեց այդ մարմինների կողմը և ասաց· «Ահա սա կնոջ մարմին է, իսկ սա տղամարդու: Բավարարիր կիրքդ, ինչպես կուզես և ինչքան կուզես:··· Եվ այսպիսի հաճույքի համար տես, թե որքան սխրագործություններ ես ցանկանում կորցնել: Հանուն ինչ-որ մեղքի ցանկանում ես քեզ զրկել երկնքի արքայությունից: Օ՜, թշվառ մարդկություն: Մեկ ժամվա մեղավոր հաճույքի համար դուք պատրաստ եք կորստի մատնել ձեր ամբողջ կյանքի սխրանքները:

Իսկ այդ ընթացքում ահագնացող գարշահոտությունից ես ընկա գետին: Մոտենալով՝ սուրբ այրն ինձ վեր բարձրացրեց և սանձեց իմ մեջ բորբոքված այդ պատերազմը: Եվ ես վերադարձա իմ խուցը՝ գոհություն հայտնելով Աստծուն»:

Պողոս առաքյալի թղթերից մեկում ասված է. *«Ինքը չարչարվեց՝ փորձն առնելով. կարող է և փորձվողներին օգնական լինել» (Եբր. 2:18):* Այս բառերով Պողոս առաքյալը Տեր Հիսուս Քրիստոսի մասին է խոսում. Ով փորձվեց և փորձվողներին կարող է օգնել: Իրոք, մեր Տերը կրեց երկրային կյանքի բոլոր նեղությունները, ողջ տառապանքը, ընդհուպ՝ խաչելությունը: Հիսուս մարդկանցից ոչ

միայն մարմնավոր տառապանք, նեղություն, զրպարտանք, անարգություն ունեցավ, այլ սատանայից էլ նեղություն կրեց:

Սուրբ Հայրերն ասում են, որ երբ մեզ վրա որևէ փորձություն է հասնում, ամենից առաջ մենք ինքներս մեզ պիտի նախատենք: Մենք պետք է հիշենք, որ մեղավոր ենք և դրա համար էլ ամեն տեսակ նեղությունների ենք արժանի: Պողոս առաքյալն իր թղթերից մեկում ասում է. *«Աստված ձեր կարողությունից ավելի փորձության մեջ ձեզ չի գցի» (Ա. Կորնթ. 10:13):* Դրա համար էլ, երբ փորձություններ են վրա հասնում, պետք է հիշենք, որ մեր ուժերից վեր փորձություն չենք ունենալու:

Երբեմն մենք հուսալքության մեջ ենք ընկնում և խռովքն է մեր հոգին պարուրում, որովհետև մտածում ենք, որ փորձությունները մեր ուժերից վեր կլինեն: Բայց իրականում ուժերից վեր փորձություններ չեն ուղարկվում և Տերը, դրանք ուղարկելով, մխիթարություն էլ է մեզ տալիս, իսկ անհրաժեշտ պահին փորձությունից ընդհանրապես ազատում է:

Ռուս Ուղղափառ Եկեղեցու վարդապետներից Բորիս Խոլչևն ասում է. *«Փորձությունները ո՛չ միայն մարդու կյանքն են ուղեկցում, այլ դրանք մահվան ժամանակ էլ են անխուսափելի: Մահվան սարսափելի ժամին փորձություններն են մարդու հոգին պատում: Հոգևոր մի գիրք կա՝ «Անտեսանելի պատերազմ»: Այդ գրքում պատմվում է երեք փորձությունների մասին, որոնք մարդուն իր մահվան ժամին են հասնում:*

Առաջին փորձությունը հավատքի կասկածներն են: Հանկարծակի Աստծո գոյության, Քրիստոս Փրկչի Աստվածամարդության և հավատքի կրոնական այլ հարցերի վերաբերյալ կասկածներ են ծագում: Այս կասկածները սուր նետի պես մարդու հոգին խոցում են: Իսկ երբեմն Աստծո և մարդու վերաբերյալ հայհոյական մտքերն են դրանց միանում:

Երկրորդ փորձությունը վախն է: Այն պարուրում է հոգին, որը մահացողին մոտեցող դիվական խավար գնդերի մերձենալն է զգում: Այդ ժամանակ դևերը մարդու հոգին վախով են ջանում պարուրել:

Վերջապես մահվան ժամի երրորդ փորձությունը հուսալքությունն է: Երբ մարդը հոգին ավանդելուն է մոտ, դևերը հուսալքության մեջ են աշխատում նրան զցել: Նրանք ասում են. «Դու չես փրկվի: Քեզ համար դարձ չկա: Միևնույն է՝ դու կորած ես»: Եթե մարդը համաձայնի դիվական այդ ներշշումներին, նրան հուսալքությունը, փոքրոգությունն է պատում:

Այս երեք փորձություններն են մահվան ժամին մարդու վրա հասնում. հավատքի մեջ կասկած և հայհոյիչ մտքեր, վախ, հուսալքություն և թերահավատություն փրկության համար: Այն խոստովանահայրերը, ովքեր վերջին խոստովանությունն են ընդունում, ովքեր մահացողներին ճանապարհ են դնում մահվանից մեկ օր կամ մի քանի ժամ առաջ, հավաստում են, որ այս երեք փորձությունները մահվան ժամին իսկապես փոթորկում են մարդուն: Նրանք կարող են վկայել, որ իսկապես խավարի ուժերը մահացողներին կա՛մ հավատքի կասկածներ, կա՛մ վախ, կա՛մ էլ փրկության վերաբերյալ հուսալքություն են ներշնչում» (Բորիս Արքիմանդրիտ Խոլչև. «Զրույցներ Տերունական աղոթքի մասին, խնդրվածք վեցերորդ»):

Իսկ Հույն Ուղղափառ Եկեղեցու եպիսկոպոսներից, ով Հույն Եկեղեցու սրբերի շարքն է դասվել, Թեոփան Արգելականն ասում է. *«Մաքսավորությունները, որոնց մարդը հանդիպում է, յուրատեսակ մի փորձություն են: Դրանցում թշնամիները նույնպես փորձության են ենթարկում մարդուն, աշխատում են տարբեր խարդավանքներով Աստծուց հեռացնել նրան: Եթե մարդը երկրային կյանքի ընթացքում սովորել է փորձություններին դիմանալ, ապա նա մաքսավորություններում էլ փորձչին կհաղ-*

թի: Իսկ եթե կյանքում փորձություններին տեղի է տալիս, ապա մաքսավորություններում կպարտվի:

Եթե մենք փորձություններն անհրաժեշտ ձևով կրենք, աղոթել սովորենք, ապա մեր կամքը, զորությունը, առ Աստված ձգտումը կամրապնդվի, մենք դիմանալու զորություն կստանանք: Իսկ փրկվելու, Աստծուն մոտենալու ցանկությունն ամեն մի մարդ ունի: Այդ ցանկությունը սատանան ուզում է փորձությունների, նեղությունների միջոցով վերացնել»:

Սատանան արթուն է և մշտապես մեզ տանում է փորձության: Ուրեմն, պետք է հավատի մեջ ավելի զորանանք, մշտապես Աստծուն կանչենք օգնության: Հիսուս հաղթահարեց սատանայի փորձությանը, երբ անապատում քառասուն օր ծոմ պահեց: Վերջին հարցումից հետո, Նա սատանային ասաց· *«Ինձանից հեռու գնա, սատանա»:* Մենք էլ ամեն անգամ, երբ այսպիսի փորձության առջև կգտնվենք, երբ կզգանք, որ այլևս փրկվելու ճանապարհ չկա ու չարը պիտի իր կամքը թելադրի և շեղի մեզ Աստծու ճշմարիտ ճանապարհից, Հիսուսի նման ասենք· *«Տիրոջ անունով հրամայում ենք քեզ, մեզանից հեռու գնա, սատանա և հանգիստ թող մեզ»,* այն ժամանակ Աստված մեզ կվերցնի Իր ամուր ձեռքերի վրա ու մենք կզգանք հոգեպես թեթևացած, հանգստացած և ամրացած: Ամեն:

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ

«Իսկ եթե խոստովանենք մեր մեղքերը, հավատարիմ է նա և արդար՝ մեր մեղքերը մեզ ներելու և մաքրելու համար մեզ ամեն անիրավությունից» (Ա. Հովհ. 1:9):

Այս խոսքը վերցրել եմ Հովհաննես Առաքյալի Ընդհանրական առաջին թղթի 1-ին գլխի 9-րդ համարից, ուր Առաքյալը խոսում է խոստովանության մասին:

«Ի՞նչ է խոստովանությունը: Ինչպե՞ս պիտի խոստովանվենք, ինչո՞ւ պիտի խոստովանվենք, ինչի՞ց պիտի խոստովանվենք, ո՞ւմ պիտի խոստովանվենք, քանի՞ անգամ պիտի խոստովանվենք, խոստովանությունը անհրաժեշտությո՞ւն է»:

Երկու առաքյալներ խոսում են մեղքերի մասին: Հակոբոս Առաքյալն ասում է. *«Ձեր մեղքերը միմյանց խոստովանեցեք և միմյանց համար աղոթք արեք, որպեսզի բժշկվեք» (Հակ. 5:16):* Իսկ Հովհաննես Առաքյալն ասում է. *«Իսկ եթե խոստովանենք մեր մեղքերը, հավատարիմ է նա և արդար՝ մեր մեղքերը մեզ ներելու և մաքրելու համար մեզ ամեն անիրավությունից»:*

Խոստովանություն նշանակում է մի սխալ գործված արարք գիտակցել ու ընդունել այնպես, ինչպես որ կատարված է, նման այն հիվանդին, որն ընդունում է, թե հիվանդ է և ապա դիմում է բժշկի, որպեսզի ստանա համապատասխան բուժում: Այսինքն՝ գիտակցել և ընդունել, որ մեղավոր ես: Մեղքի գիտակցություն:

Խոստովանությունը սկսվեց մկրտությամբ: Մատթեոս Ավետարանիչը պատմում է, թե Հովհաննես Մկրտիչը սկսեց քարոզել և ապաշխարության հրավիրել ժողովրդին. *«Այն ժամանակ նրա մոտ էին գնում բոլոր երուսաղեմացիները, ամբողջ Հրեաստանն ու Հորդանանի շրջակայքի ժողովուրդը, մկրտվում էին նրանից Հորդանան գետում և խոստովանում էին իրենց մեղքերը» (Մատթ. 3:5-6):*

Ամեն քայլափոխի մեղք ենք գործում, ուզելով կամ չուզելով, գիտակցաբար կամ անգիտակցաբար։ Կարևորն ու գլխավորը այն է, թե արդյոք մենք զղջո՞ւմ ենք մեր կատարածի համար, ապա փորձո՞ւմ ենք այդ մեղքը քավել և կամ թողություն ստանալ։

Այստեղ հարց է ծագում, թե՝ *«Ո՞վ կարող է թողություն տալ մեր մեղքերին, Ո՞վ ունի այդ իշխանությունը»։*

Հիսուս ամեն իշխանություն ուներ մեղքերին թողություն տալու։ Եվ նկատի առնելով, որ Ինքը մարմնապես ներկա չպիտի լինի մեր մեջ, երկրի վրա, հիմնեց Իր Խորհրդական Մարմինը՝ Եկեղեցին, որպեսզի շարունակի Իր սրբազան ու աստվածային գործը։ Իբրև հետևորդներ նշանակեց Իր առաքյալներին, որոնց ուղարկեց մասնավոր մի առաքելությամբ. *«Ինձ է տրված ամեն իշխանություն երկնքում և երկրի վրա, ինչպես Հայրը ինձ ուղարկեց, ես էլ ձեզ եմ ուղարկում» (Մատթ. 28:18)։* Իր աշակերտներին տված իշխանությունը ավելի հստակեցրեց. *«Ճշմարիտ եմ ասում ձեզ, ինչ որ կապեք երկրի վրա, կապված պիտի լինի երկնքում։ Եվ ինչ որ արձակեք երկրի վրա, թող արձակված լինի երկնքում» (Մատթ. 18:18)* և *«Եթե մեկի մեղքերը ներեք, նրանց ներված կլինի, եթե մեկի մեղքերը չներեք, ներված չի լինի» (Հովհ. 20:23)։*

Առաքյալներից շարունակաբար այդ իշխանությունը փոխանցվեց Եկեղեցու հոգևոր հայրերին։ Այսօր մեր եկեղեցիներում, երբ հավատացյալը ուզում է խոստովանվել իր մեղքերը, Սուրբ Պատարագի ընթացքում քահանան կարդում է զանազան ընդհանուր մեղքեր և ապա թողություն է տալիս։ *«Եվ ես ինձ տրված քահանայական իշխանությամբ ու մեր Տիրոջ՝ Հիսուսի Իր աշակերտներին տված հրամանի զորությամբ, թե՝ «ինչ որ կապեք երկրի վրա՝ կապված պիտի լինի երկնքում և ինչ որ արձակեք երկրի վրա, արձակված պիտի լինի երկնքում», արձակում եմ քեզ քո բոլոր մեղքերից, լինեն դրանք մտքով, խոսքով թե՝ գործով, Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով։ …»։* Քա-

հանան շեշտում է, թե Հիսուսի Իր աշակերտներին տված հրամանի զորությամբ և իր ունեցած քահանայական իշխանությամբ է, որ արձակում է հավատացյալին իր մեղքերից: Մեղքերի խոստովանությունը, որը մեր Եկեղեցում կատարվում է հավաքական կերպով, միշտ էլ կարող ենք ունենալ, դրա համար ժամանակ չկա, քանի որ ամեն քայլափոխի մեղք ենք գործում: Դժբախտաբար կա մի իրականություն, որը չենք կարող անտեսել. այսօր ամեն մարդ, ով քիչ թե շատ ծանոթ է հոգևոր Խոսքին, իրեն է վերապահում այդ *«իշխանությունը»,* որը չունի:

Մեղքերի խոստովանությունից հետո թողություն ստացած հավատացյալը մոտենում է Սուրբ Հաղորդության Խորհրդին և ստանում Հիսուսի մարմինն ու արյունը:

Աբրոսիոսը ասում է. *«Երբ մարդու մեղքերը ծանոթ են Աստծուն, ինչի՞ց պիտի ամաչի դրանք խոստովանելուց. այն հոգին ազատում է մահվանից, բացում է երկրնքի դռները և մեզ փրկության հույս է բերում»:*

Սրբերը եթե սրբացան, պատճառն այն է, որ նրանք Աստծու և աշխարհի առջև ճշմարտությունը խոստովանեցին իրենց արյան գնով իսկ: Խոստովանությունը կրոնական մի օրենք է: Աստծու առջև ոչինչ ծածուկ չպիտի մնա;

Հույն միտրոպոլիտ Աթանաս Լեմեսոսին ասում է. *«Մենք մեղավոր ենք այն բանի համար, որ Քրիստոսին չճանաչող մարդիկ կան և վիթխարի պատասխանատվություն պիտի զգանք այդ մարդկանց հոգիների համար: Մենք արդարացի չենք մեր այն եղբայրների հանդեպ, որոնք մեր մեջ սրբություն չեն տեսնում, ուստի և Ավետարանին չեն մոտենում: Ուրեմն այն, ինչը որ մեզ իրապես անհրաժեշտ է, Եկեղեցու մեջ սրբությունն է և սուրբ մարդիկ:*

Ես խոստովանահայր դարձա ու սկսեցի մարդկանց խոստովանեցնել, երբ դեռ Աթոսում էի ապրում ու շատ երիտասարդ էի: Մի անգամ ծեր Պահիսիոսին հարցրեցի, թե ի՞նչ հարցեր ուղղեմ այն մարդկանց, ովքեր խոս-

տովանության են գալիս: Բանն այն է, որ նրանցից ոմանք խնդրում էին, որ ես իրենց հարցեր տամ և հետո իրենք պատասխանեն: Ծեր Պահիսոն ասաց.

Հարցեր տալուց խուսափիր, բայց եթե մարդիկ շատ են համառում, ապա առաջին հարցը թող լինի այն, թե մարդն արդյոք սիրու՞մ է Աստծուն, ի՞նչ հարաբերություններ ունի Նրա հետ: Հետո հարցրու, թե այդ մարդն իր կողքի մարդկանց, ինքն իրեն և իրեն շրջապատող ամեն բան սիրու՞մ է արդյոք:

Որովհետև հենց Տերն է ասում, որ առաջին ու ամենամեծ պատվիրանը Աստծուն ողջ սրտով սիրելն է, իսկ դրան կմիանան և մնացածը:

Աթոսում ես այսպիսի մի պատմություն եմ լսել. ոմն վանականի խոստովանահայրը մահանում է և նա ծերի շորերը գերանին հագցնելով, ասել է. «Քանի որ այլևս խոստովանահայր չունեմ, այս գերանին եմ հարցնելու»: Այդպես էլ սկսում է անել ու մի անգամ, երբ ինչ-որ բան է հարցնում, գերանից լսում է՝ «Ոչ, այդպես չանես»:

Այնպես որ Տերը գործում է մեր հավատին համապատասխան…Վա՛յ մեզ, եթե հենվենք ոչ թե Աստծու, այլ մարդկանց վրա:

Պատճառներից մեկը, որ ես անձամբ եմ մարդկանց խոստովանեցնում, այն է, որ չեմ ուզում գրասենյակում նստել ու ինչ-որ կառավարիչ լինել: Խոստովանությունն ամենապարզ միջոցն է իմանալու, թե ինչի՞ մասին են մտածում մարդիկ, ինչո՞վ են մտահոգ, ինչ խնդիրներ ունեն: Ես շատ եմ ուրախանում, երբ մարդիկ հանձին իրենց եպիսկոպոսի հայր են տեսնում: Ուրախանում եմ, երբ գիտեմ, որ մարդիկ կարող են գալ եկեղեցի, գտնել ինձ և պատմել իրենց խնդիրների մասին: Առաջնորդարան՝ իմ գրասենյակը, ամիսը մեկ-երկու անգամ եմ գնում: Այնտեղ ես ինձ քաղաքապետի պես եմ զգում, ուստի նախընտրում եմ լինել եկեղեցում ու մարդկանց հետ տեսնվել: Եկեղեցին եպիսկոպոսի բնական վայրն է»:

Աշխարհային իմաստով խոստովանությունը ծիծաղելի բան է, որովհետև կրոնը իբրև դիմակ օգտագործողների համար էականը դիրքն է և ոչ թե սրբությունը: Նրանց համար ճշմարտությունը խոստովանվելը մի կորած ճակատամարտ է, որովհետև նյութի և դիրքի զորությունը կարող է խեղաթյուրել այդ ճշմարտությունը: Բայց ոչ մեկը չի կարող ուրանալ, թե վերջնական հաղթանակը միշտ պատկանում է ճշմարտությանը հոգեկան արիությամբ և անկեղծ խոստովանությամբ:

Մեղքը խավար է, իսկ խոստովանությունը՝ լույս: *«Աստված լույս է, և նրա մեջ խավար չկա, բոլորովին չկա» (Ա. Հովհ. 1:5):* Խոստովանվողը լույսի մեջ է ապրում, լույսի մեջ ապրողը հոգեպես հաղորդակցվում է Աստծու հետ:

Ճշմարտության խոստովանությունը մեծ նկարագրի առաքինություն է: Իսկ մեղքերի խոստովանությունը սրբության առաքինությունն է:

Կան հարյուրավոր մեղքեր, սակայն ուզում եմ թվել մի քանի մեղքեր, որպեսզի պարզ լինի, թե ինչպիսի՞ մեղքերի է, որ Քահանան իր իշխանությամբ թողություն է տալիս. «…*Խորամանկություն, անզգամություն, շռայլություն, զեխություն, ժլատություն, ատելություն, նենգություն, արվամոլություն, իգամոլություն, անասնական, գրաստական. պոռնկական խորհրդով, հարբեցողություն, անեծք, տրտունջ, բամբասանք, հայհոյություն, գողություն, սպանություն* և այլն»: Այս բոլորից բացի մեր նախահայրերը ընտրել ու առանձնացրել են յոթը մահացու մեղքեր՝ «*Հպարտություն,նախանձ,բարկություն, ծուլություն, ագահություն, որկրամոլություն (շատակերություն), բղջախոհություն (ցանկասիրություն) և սրանց տեսակները»:*

Քահանայի խոստովանության արձակման աղոթքը.

«Թող Մարդասերն Աստված ողորմի և թողություն շնորհի քո բոլոր մեղքերին, նրանք, որոնք խոստովանվեցիր և նրանք, որոնք մոռացար: Եվ ես ինձ տրված քահա-

նայական իշխանությամբ ու մեր Տիրոջ Հիսուսի Իր աշակերտներին տված հրամանի զորությամբ՝ թե՝ «ինչ որ կապեք երկրի վրա՝ կապված պիտի լինի երկնքում և ինչ որ արձակեք երկրի վրա, արձակված պիտի լինի երկնքում», արձակում եմ քեզ քո բոլոր մեղքերից, լինեն դրանք մտքով, խոսքով թե՝ գործով, Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով ու հանձնարարում եմ, որ հաղորդակից մնաս Սուրբ Եկեղեցուդ խորհուրդներին, որպեսզի ինչ բարի գործ, որ անես՝ ծառայի քո օգտին և հավիտենական կյանքի փառքի համար»: Ամեն:

ՆԱԽԱՆՁՈՏ ՄԱՐԴԸ

«Որովհետև, ուր հակառակություն և նախանձ կա, այնտեղ կա անկարգություն և ամեն չար բան»
(Հակ.3:16):

Հակոբոս Առաքյալի այս խոսքերը ասում է ցույց տալու համար նախանձող մարդու կյանքի ընթացքը, այսինքն այն նմանվում է մի ցեցի, որը մարդու սրտում թաքնված մշտապես կրծում է, ուտում, սպառում նրան, այն ամենամեծ ու ուժեղ ծառերի նման, որոնց ներսում թաքնված որդերը կրծելով տապալում են նրանց:

«Ի՞նչ է նախանձը: Ինչո՞ւ պիտի նախանձենք, ինչի՞ համար: Նախանձելը անհրաժեշտությո՞ւն է: Ինչպե՞ս կարող ենք ազատվել նրանից»:

Նախանձը յոթը մահացու մեղքերից մեկն է: Մեր եկեղեցական Հայրերը իրավամբ բազում մեղքերի կողքին հատկապես առանձնացրել են յոթը մեղքեր, որոնց անվանել են մահացու: Նախանձի կողքին մահացու մեղքեր են նաև՝ հպարտությունը, բարկությունը, ծուլությունը, ագահությունը, որկրամոլությունը, ցանկասիրությունը և սրանց զանազան կերպերը:

Օգոստինոս Հայրապետի բացատրությամբ նախանձը *«Ուրիշների բախտավորությանց համար տխրություն է, և միաժամանակ նրանց ձախորդությունների համար էլ՝ ուրախություն»:*

Նախանձողը նման է այն մարդուն, որը լցված է ատելությամբ և եթե չի կարողանում իր ատած մարդուն վնասել, ինքն իրեն է թույնում: Նույնն է նաև նախանձող մարդու պարագային: Նրա ուղեղը անընդհատ աշխատում է, ինքն իրեն տանջելու աստիճան, ուրիշների առաջադիմությունների, հաջողությունների ու նվաճումների պատճառով:

Նախանձը լինում է և՛ հարուստի և՛ աղքատի մոտ: Եթե նախանձողը նույնիսկ միլիոնատեր է և ամեն օր իր

սեղանին առատ ուտելիքներ ունի ու դրանք մատուցվում են թանկարժեք ամանեղենի մեջ, երբ տեսնում է, թե իր աղքատ հարևանը մի թռչնի միս է ուտում, նախանձում է նրան, որովհետև իր աչքին նրա այդ քիչը իր առատ ուտելիքից ավելի մեծ է երևում:

Մեզանից յուրաքանչյուրը կյանքում բախվում է կոպտության, նախանձի, ատելության, վիրավորանքի հետ, սակայն միայն քչերն են կարողանում ճիշտ արձագանքել դրանց: Որպեսզի կարողանաք ձեր հոգեբանական առողջ վիճակը պահպանել, չպետք է թույլ տաք, որ հույզերը կառավարեն ձեզ:

Պետք է հիշեք, որ ավելի հաճախ վիրավորվում են դժբախտ մարդիկ, իսկ նույնատիպ պատասխան տալը կամ վիրավորելը պարզապես անիմաստ է: Ավելի լավ է վարվել այնպես, ինչպես դա արեց այս առակում սամուրայը:

«Իմաստուն սամուրայը ռազմական գաղտնիքներ էր սովորեցնում երիտասարդ զինվորներին և կիսվում էր նրանց հետ իր ունեցած փորձով ու գիտելիքներով: Մի անգամ նրա մոտ է գալիս զինվորներից մեկը՝ Զայկորա անունով, ով հասցրել էր ճանաչում ձեռք բերել իր դաժանությամբ և սանձարձակությամբ: Նա անտեղի վիրավորում էր հակառակորդներին և մարտի ժամանակ դիմացինի բարկությունը ի շահ իրեն օգտագործելով գետնին էր տապալում վերջինիս:

Նա մի օր մոտենում է ու սկսում վիրավորել սամուրային: Սակայն նրա վիրավորանքները անպատասխան էին մնում, իսկ սամուրայը շարունակում էր իր ուսուցումը: Զայկորան անվերջ փորձում էր վիրավորել իր ուսուցչին, սակայն վերջինս շարունակում էր անտեսել նրան: Ցանկալի արդյունքին չհասնելուց հետո նա հեռանում է: Զինվորները հարցնում են իրենց ուսուցչին, թե ինչո՞ւ չպատժեց իրեն նեղացնողին ու վիրավորողին:

Զինվորների հարցին իմաստուն սամուրայը պատասխանում է.- «Ատելությանը, նախանձին և վիրավորանքին պետք է կարողանալ վերաբերել որպես նվերի, որը, ոչ մի պարագայում, չպետք է ընդունենք: Երբ մենք հրաժարվում ենք նվերից, թողնում ենք, որ այն մնա տիրոջ մոտ…»:

Այս առակը մեզ սովորեցնում է ճիշտ արձագանքել անտեղի վիրավորանքին, կոպտությանը և նախանձին:

Նախանձը հոգու ցեցն է, որ ուտում է զգայարանները, տոչորում է սիրտը, նեղում է միտքը, կտրում է քունը, ալեկոծում է հոգին, դող է գցում մարմնի մեջ և վատ ժանգի պես ապականում է մարդու բոլոր բարեմասնությունները: Նախանձը մինչև անգամ մարդու կերպարանքն է փոխում, և նույնիսկ՝ խարխլում առողջությունը: Այսպես նախանձոտը կրակով է եփում իրեն, այլ ոչ թե ուրիշներին: Յուրաքանչյուր մոլություն հակառակվում է մեկ առաքինության. օրինակ՝ հպարտությունը՝ խոնարհությանը, ագահությունը՝ առատաձեռնությանը և բարկությունը՝ հեզությանը:

Նախանձի մեջ այնքան չարություն կա, որ ոչ միայն ուրիշին է վնաս հասցնում, այլ մանավանդ ավելիով՝ ինքն իրեն:

Այս պատմությունը հետաքրքիր է.

«Թագավորներից մեկը խոստանում է նախանձոտ և ագահ մարդկանց, թե ի՞նչ խնդրեն իրենից, նրանց կտա իրենց ուզածը, սակայն մի պայմանով, որ ով վերջինը խնդրի, նրան կրկնակի պիտի տա: Եվ երբ երկուսն էլ դանդաղում են խնդրել թագավորից, հրամայում է, որ նախ նախանձոտ մարդը խնդրի:

Եվ պատկերացնո՞ւմ եք, թե ի՞նչ է խնդրում նախանձոտը մարդը, աներևակայելի է: Նա խնդրում է իր մեկ աչքը հանել, ինչո՞ւ. չէ՞ որ թագավորը ուզեց օգնել նրան իր ուզածը կատարելու, ինչո՞ւ նախանձոտ մարդը ուզեց, որ թագավորը իր մեկ աչքը հանի: Կարծում եմ պարզից էլ

պարզ է: Նա չուզեց բարի մի բան, որպեսզի ագահ մարդուն թագավորը կրկնակի բարիք չանի ավելին տալով նրան»:

Մի՛ նախանձեք, մեկ է, ոչինչ չեք շահելու:

Այն օրից, երբ այդ մոլությունը մտնում է մարդու սիրտը, էլ ոչ մի չարությունից չի նեղվում, չի խնայում անմեղին, չի վախենում մարդասպանությունից, նույնիսկ հայրասպանությունից: Նախանձն էր, որ շարժեց Կայենին Աբելի դեմ, Եսավին՝ Հակոբի դեմ, 11 եղբայրներին՝ Հովսեփի դեմ, որովհետև, ինչպես առաքյալն ասում է. *«Ուր որ նախանձ ու կռիվ կա, այնտեղ են անկարգությունն ու ամեն չարությունները»:*

Փիլիսոփաներից Սոկրատն ասում է. *«Նախանձը հպարտության դուստրն է և ոճրագործության ու վրեժի հեղինակը: Այն գաղտնի խռովության սկիզբն է և մշտապես առաքինությունը չարչարողը: Այն հոգու փափուկ և կպչուն պինդ շաղախն է: Մի թույն, մի սնդիկ, որը ուտում է մարմնի միսը և չորացնում ոսկորների ծուծը»:*

Բոլորս էլ հիշում ենք Կոլոմբոսի պատմությունը: Երբ նա Ամերիկան հայտնաբերում է, իր վայելած ժողովրդականության համար պալատականներից շատերը նախանձում են ու սկսում հալածել նրան: Մի օր ճաշի ժամանակ նա տեսնելով իր նկատմամբ ունեցած նրանց այս վերաբերմունքը, ուզում է դաս տալ ու ասում է. *«Ո՞վ կարող է այս ձուն ծայրի վրա կանգնեցնել»:* Բոլորը փորձում են և չեն կարողանում, երբ հերթը հասնում է Կոլոմբոսին, նա մոտենում է սեղանին, ձվի մի ծայրը հարվածում է սեղանին ու կոտրում և այդպես կանգնեցնում է այն: Մյուսները ծիծաղում են ու ասում, թե իրենք էլ կարող էին այդպես անել: *«Գլխավորը այն մտածելն ու գործադրելն է»,*- պատասխանում է նա:

Հունական դիցաբանության մեջ պատմվում է մի նախանձողի մասին.

«Ըստ այդ պատմության հույներից մեկը անձնասպան է լինում: Ինչո՞ւ, ի՞նչն էր պատճառը: Պարզվում է՝ պատճառը և դա նախանձն է: Հույները օլիմպիական խաղերի իրենց հերոսի արձանը կանգնեցնում են հրապարակի վրա, ի նշան գնահատանքի: Եվ քանի որ ինքնասպան եղող մարդը հերոսի հակա-

ռակորդն է եղել, գիշերները գաղտագողի գնացել և փորձել է արձանը տապալել, որովհետև նախանձից մեռնում էր։ Երկար փորձերից հետո նրան հաջողվում է արձանը վայր գցել, սակայն չկարողանալով այդ քարե զանգվածից արագ հեռանալ, տակն է մնում ու ճզմվում»։

Անտիսթենես փիլիսոփան ասում էր. *«Եթե մեկն ստիպի ինձ ընտրություն անել, ես ավելի լավ կհամարեմ ագռավ լինել, քան նախանձոտ, որովհետև ագռավները միայն մեռելների դիակ են ուտում, իսկ նախանձոտները կենդանի մարդկանց են պատառոտում»։*

Պիտի գիտակցենք, թե Աստծու պատկերով ստեղծված յուրաքանչյուր մարդ տարբեր կարողության տեր է։ Աշխարհի վրա ապրող միլիոնավոր մարդիկ որևէ մեկը մյուսին նման չեն ո՛չ դեմքով և ո՛չ էլ մտքով։ Ամեն մարդ տարբեր տեսք ու կարողություն ունի։ Աստված ամեն մեկին տարբեր շնորհներ է տվել։

Հարց է ծագում, *«Իսկ ինչպե՞ս կարող ենք ազատվել նախանձից։ Կա՞ արդյոք մի դեղամիջոց, որը հնարավորություն կտա ընդհանրապես ձերբազատվել այդ մահացու մեղքից»։* Աշխատեք առաջին հերթին այդ մեղքով չտառապել։

Իսկ մեր եկեղեցական Հայրերը խրատում են. *«Ուզո՞ւմ եք ազատվել նախանձից, արհամարհեք ժամանակավորը և սիրեք հավիտենականը, այսինքն հավատով զորացրեք ինքներդ ձեզ ու Աստծու օգնությամբ և օրհնությամբ փորձեք ձերբազատվել դրանից։ Մենք մեզ պիտի փոխենք, այնքան քաջություն պիտի ունենանք, որ մենք մեզ հաղթենք, փորձենք չար մտքերն ու կասկածները հեռացնել մեզանից, այն ժամանակ կլինենք մի այլ աշխարհում, որը հաճելի կլինի և՛ մեզ և՛ մեր շրջապատի մարդկանց»։* Ամեն։

ԲԱՄԲԱՍԱՆՔԸ ՄԵՂՔ Է

«Ականջ մի դիր բամբասողին, ընդունելու նրա բամբասանքները, որպեսզի մահ չծնվի քո հոգում, քանի որ բամբասանքը մահվան կերակուր է»:
Երանելի Օգոստինոս Հայրապետ

Այս խոսքը ես վերցրել եմ Ընդհանրական Քրիստոնեական Հայրերից՝ Երանելի Օգոստինոս Հայրապետի խրատներից: Խոսքը բամբասանքի մասին է:

«Ի՞նչ է բամբասանքը, մարդիկ ինչո՞ւ են բամբասում, կարելի՞ է չբամբասել»:

Բամբասել նշանակում է որևէ մեկին ստերով ու զրպարտություններով ստորացնել: Քանզի սուտն ինքնին մեղք է:

Անգլիացի նշանավոր թատերերգակ Վիլյամ Շեքսպիրը ահա թե ինչպե՞ս է ներկայացնում բամբասողներին. *«Բամբասողի շրթունքը դաշույնից ավելի սուր է, նրա լեզուն գերազանցում է Նեղոսի բոլոր թունալից որդերին, նրա շունչը քամիների վրա է բազմում և շրջում է աշխարհի բոլոր կողմերը»:*

Այսօր աշխարհի ամեն կողմում մարդիկ հեռախոսներ ունեն և այնքան անգործ մարդիկ կան, ովքեր ժամերով խոսում են սրա նրա ու բոլորի մասին, իմանալով կամ չիմանալով ճիշտն ու սխալը:

Աստծու պատվերը այս է. մի՛ բամբասեք, մեղք է:

Պողոս Պատրիարք Ադրիանապոլսեցին ասում է. *«Շատ անգամ մարդն անգիտությամբ է ընկնում բամբասանքի մեջ, երբ պատմում է մեկի գործերի մասին: Եվ թեպետ ասողի միտքն ուղղակի նպատակ չունի ուրիշներին դատել, այլ միայն պարզապես ասել ինչ որ տեսավ կամ լսեց, սակայն խոսքն այնպես է շրջվում, որ լսողն իր հետաքրքրասիրությամբ խոսքը բամբասանքի է վերածում: …Ուստի պետք է խիստ զգույշ լինել որևէ մեկի մասին ինչ-որ բան պատմելիս»:*

Ահա ձեզ մի ցայտուն օրինակ.

«Մի մարդ իր երազը պատմում է կնոջը, ուր իբրև թե իր բերանից մի թռչյուն է թռել և կատակով պատվիրում, որ ոչ մեկին չասի այս մասին։

Ամուսինը հազիվ ոտքը տանից դուրս է հանում, թե չէ կինը կանչում է հարևանուհուն ու ծիծաղելով ասում նրան այդ մասին։ Բնական է, հարևանուհին էլ զանգում է իր բարեկամուհուն և ասում, թե հարևանի ամուսնու բերանից երկու թռչյուն է դուրս թռել։ Երկուսը դառնում է չորս և մինչև երեկո չորսը դառնում է քառասուն։ Երեկոյան, երբ մարդը տուն է վերադառնում, իր ընկերներից մեկը կանգնեցնում է նրան ու ծիծաղելով հարցնում. «Այս ինչե՞ր եմ լսում, այսօր առավոտյան երազում քո բերանից քառասուն թռչյո՞ւն է դուրս եկել»։

Ահա ձեզ սուտ ու կեղծ մի պատմություն, որ մի օրվա մեջ քառասուն անգամ բազմապատկվել է չարամտությամբ, առանց տեսնելու այն և անդրադառնալու նրա իմաստին։

Պողոս Պատրիարքը շարունակում է. *«Մի բամբասանքից սովորաբար երեք չարիք է ծնվում. առաջին՝ բամբասողը մահու չափ մեղանչում է, երկրորդ՝ լսողը մեղսակից է դառնում, երրորդ՝ բամբասվածը նույն մեղքով մեղանչում է կամ ուրիշ մեղքեր էլ գործում…։ Արդարև, չարիքների մեջ բամբասանքից ավելի մեծը չկա և այժմ չկա նրանից ավելի տարածվածը, ու թեպետ ամենքը գիտեն, որ ուրիշներին բամբասելը ծանր մեղք է, բայց դեռևս շարունակում են նույնը»։*

«Կարելի՞ է չբամբասել»։ Այո՛, կարելի է, երբ մարդն ինքն իրեն է բամբասում, իրավացի է, ոչ մեկին չի վնասում ու չի դատապարտում և ինքն իրեն մեղավոր է համարում։ Եթե նա կարողանում է այդպես վարվել, ուրեմն ճշմարտախոս, արդար ու բարի միտք ունեցող մեկն է։

«Եղբայրներ, միմյանց մի՛ բամբասեք. ով բամբասում է իր եղբորը կամ դատում է իր եղբորը, չարախոսում

է օրենքի մասին և դատում է օրենքը. իսկ եթե օրենքն ես դատում, օրենքը պահող չես, այլ՝ դատավոր: Կայ մեկ Օրենսդիր և Դատավոր, որ կարող է փրկել և կործանել. դու ո՞վ ես, որ դատում ես քո մերձավորին» (Հակ. 4:11-12),- ասում է Հակոբոս Առաքյալը:

Լսենք այս պատմությունը

«Մի մարդ գալիս է իր հոգևոր ուսուցչի մոտ և ասում. «Գիտե՞ք ինչ ասաց ձեր մասին այսօր ձեր ընկերը»:

«Սպասի՛ր,- կանգնեցնում է նրան ուսուցիչը,- սկզբից, այն ինչ ուզում ես ասել, անցկացրու երեք մաղերով».

«Որո՞նք են այդ երեք մաղերը»,- զարմանում է աշակերտը:

Նախ՝ պետք է անցկացնենք <u>ճշմարտության մաղով</u>: Դու համոզվա՞ծ ես, որ այն ինչ ուզում ես ինձ ասել ճիշտ է»,

«Ոչ, ես պարզապես լսել եմ այդ մասին»,

«Լավ, ուրեմն դու չգիտես՝ ճի՞շտ է դա, թե՞՝ ոչ:

Երկրորդ՝ <u>լավության մաղով</u>: «Դու ուզում ես ասել իմ ընկերոջ մասին ինչ-որ լա՞վ բան»;

«Ոչ»,-ափսոսանքով պատասխանում է աշակերտը:

«Եթե լավ չի, ուրեմն վատ բան է, բայց անգամ վստահ չես, որ ասածդ ճիշտ է լինելու»:

Երրորդ՝ <u>օգտակարության մաղով</u>: «Կարիք կա՞, որ ես լսեմ այդ մասին»:

«Ոչ, կարիք չկա»,- համաձայնվում է աշակերտը:

«Այսպիսով, – եզրակացնում է ուսուցիչը,- այն ինչ դու ինձ ուզում ես ասել, ո՛չ ճիշտ է, ո՛չ լավ, ո՛չ էլ օգտակար: Ուրեմն, ինչո՞ւ ես ինձ ասում»:

Հիշենք, և նախքան մեր ծանոթների մասին լուրեր ու բամբասանքներ տարածելը, այդ ամենը անցկացնենք ճշմարտության, լավության և օգտակարության մաղերով:

Սարգիս Վարդապետ Շնորհալին ասում է. *«Եթե մեղավոր է նա, ում դատում ես, պետք է գթաս նրան ու արտասվես նրա համար, ոչ թե դատապարտես, պետք է*

կարեկցես ու ցավակից լինես, ոչ թե բամբասես…: Այս պատճառով է, որ «Բամբասողներն Աստծո արքայությունը չեն ժառանգելու» (Ա. Կորնթ.6:10): … Արդ, եղբայրներ, դադարենք միմյանց դատելուց, մեր լեզուն լռեցնենք բամբասելուց…Ուրիշների համար բժիշկ չդառնանք՝ ինքներըս մեծամեծ ցավերով լցված լինելով: Ինքներս մեզ նայենք ու մեր սրտի գաղտնածածուկ խորհուրդները քննենք, մեր մեղքերը դատապարտենք և մեր ցավերը բժշկենք ու խոստովանությամբ բոլորը մեկ առ մեկ ներկայացնենք. ոչ միայն գործով կատարվածները, այլև դատարկ խոսքերն ու չար խորհուրդները, արատավոր հայացքները, կեղտոտ բաներ լսելը կամ մտքի ոչ բարի շարժումները: Բոլորս եթե մեկ առ մեկ ներկայացնենք մեր մեղքերը, Տերը կների…»:

Այն լեզուն, որ ուրիշներին բամբասում է, ուրիշների մեղքերն իրենով մաքրում է, իսկ ով իրեն է բամբասում, իր մեղքերի խոցը մաքրում ու բուժում է:

«Մի մարդ քայլում էր թաղամասով՝ անիծելով քահանային և նրա մասին տարածելով չար և կեղծ բամբասանքներ: Մի գեղեցիկ օր նա զգում է իր մեղքը և գալիս է քահանայի մոտ, որպեսզի ներողություն խնդրի: Նա քահանային ասում է, որ պատրաստ է ամեն ինչի, որպեսզի իր մեղքերին թողություն տրվի: Քահանան նրան պատասխանում է.

Ես ուրախ եմ քեզ համար: Շատ կարևոր է, որ դու անդրադարձել ես ու ընդունել սխալդ: Տերը թող ների քեզ, ես մինչև քո գալը, արդեն քեզ ներել էի: Աղոթիր և Աստծուց ներում խնդրիր: Իսկ ես կաղոթեմ քեզ համար»:

Պողոս Պատրիարքը շարունակում է.

«Այսուհետև զգույշ եղեք անօգուտ քրթմնջյունից և բամբասանքներից խնայեցեք ձեր լեզուն, որովհետև գաղտնի շշնջյունը զուր չի անցնի, և ստահոս բերանը կսպանի հոգին» (Իմաստ. 1:11):

Շատ անգամ մարդն անգիտությամբ է ընկնում բամբասանքի մեջ, երբ պատմում է մեկի գործերի մասին…:

Բամբասանքն այլ մոլություններից ավելի հաճախ է հանդիպում մարդկանց մեջ, որովհետև առաջ է գալիս գործի կամ խոսքի որևէ թերությունից: Եվ քանի որ առանց թերության մարդ չկա, մեկը գործերի մեջ է սխալվում, մյուսը՝ խոսքի, եթե մեկի բոլոր սխալները մեջտեղ բերելով՝ մարդ բամբասի, հարկ է, որ բոլորին բամբասի, և այդ-ժամ բամբասողին ո՞վ կդատի, որովհետև ինքն էլ է սխալական մարդ:

Ուրեմն՝ մի՛ բամբասեք, այլ՝ ներեք: Ամեն:

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ «ՍԽԱԼԸ»

«Ահա Քո աշակերտները անում են մի բան, որ շաբաթ օրն անել օրինավոր չէ» (Մատթ. 12:2):

Հիսուսին արդեն մոտիկից ճանաչում էին և հեռավոր տեղերից հարյուրներով մարդիկ գալիս էին լսելու, մխիթարվելու ու հոգեպես զորանալու Նրա քարոզություններից: Այս ձևով հետզհետե շատանում էին Նրա հետևորդները: Այդ պատճառով էլ Նրա վայելած ժողովրդականությունը Փարիսեցիների դուրը չէր գալիս, և շարժում էր այդ ժամանակվա ուղղափառ ու օրինապաշտ հրեաների նախանձը:

Հիսուսին հետևելով, նրանք տեսնում են, որ Նրա խոսքերը գրավիչ զորությամբ և ուժեղ հեղինակությամբ խոր ազդեցություն էին թողնում լսողների վրա, որովհետև Նա ոչ միայն քարոզում էր, այլ նաև հրաշքներ էր գործում. սեղան էր նստում մեղավորների ու հիվանդների հետ. իսկ սա հրեաների համար անպատշաճ արարք էր և անհարգալից վերաբերմունք հրեական սովորությունների նկատմամբ: Սակայն նրանք չեն համարձակվում Նրա օրինազանցությունների մասին դիտողություն անելու, բայց այդ մասին թեթև կերպով ասում են Նրա աշակերտներին:

Սակայն պատահում է մի դեպք, որի մասին նրանք ուղղակի ասում են Հիսուսին:

Այդ մասին կարդում ենք Մատթէոսի Ավետարանում: *«Հիսուս շաբաթ օրով անցավ արտերի միջով. նրա աշակերտները քաղցած էին և սկսեցին հասկ պոկել և ուտել: Փարիսեցիները երբ այս տեսան, Հիսուսին ասացին. «Ահա քո աշակերտները անում են մի բան, որ շաբաթ օրն անել օրինավոր չէ» (Մատթ. 12:2-6):*

Եթե օրենքի տեսանկյունից նայենք, նրանց դիտողությունը արդարացի էր, որովհետև Աստծու պատվիրանների մեջ գրված էր, որ Շաբաթ օրը չաշխատեն, այլ սուրբ պահեն: Մինչ Քրիստոսի աշակերտները պղծում էին Շա-

բաթի սրբությունը, որովհետև հասկեր էին քաղել, շփել իրենց ափերի մեջ ու կերել ցորենը:

Աստծու տված տասնաբանյա պատվիրաններից չորրորդում ասվում է. «Հիշիր շաբաթ օրը, որպեսզի սուրբ պահես այն: Վեց օր պիտի աշխատես և պիտի կատարես քո բոլոր գործերը: Յոթներորդ օրը քո տեր Աստծու շաբաթ օրն է: Այդ օրը դու ոչ մի գործ չպիտի անես…» (Ելք 20:8-10):

Հիսուս ո՛չ թե սաստեց ու արգելեց նրանց այդ անելու, այլ արդարացրեց Իր աշակերտներին: Երբ իրեն մեղադրեցին չընդունեց և երկու դեպքեր հիշեց հրեական պատմությունից.

ա. Նա հարց տվեց Փարիսեցիներին. *«Մի՞թե չէք կարդացել թե ինչպես Դավիթ թագավորն ու իր հետևորդները երբ քաղց զգացին, Աստծու Տունը մտան ու կերան Առաջավորաց հացը, որը Մովսիսական օրենքով միայն վերապահված էր քահանաների համար:… «Եվ նա նրանց ասաց. «Դուք չե՞ք կարդացել, թե ինչ արեց Դավիթը, երբ քաղց զգաց նա և նրանք, որ նրա հետ էին: Թե ինչպես մտավ Աստծու տունը և կերավ առաջավորության հացը, որն ուտել օրենք չէր ո՛չ նրա և ո՛չ էլ նրա հետ եղողների համար…» (Մատթ. 12:2-6):*

բ. Նրանց հիշեցրեց քահանաների պարագան, որոնք խախտելով օրենքը Շաբաթ օրով հաց են եփում, զոհելի անասուններ են մորթում, բայց և չեն դատապարտվում, որովհետև ուզեն կամ չուզեն պետք է այդ գործերը կատարեն Շաբաթ օրով: *«…Կամ թե Օրենքում չե՞ք կարդացել. որ շաբաթ օրերը տաճարում քահանաները պղծում են շաբաթը և անմեղ են: Բայց ասում եմ ձեզ, որ այստեղ տաճարից մեծ մեկը կա» (Մատթ. 12:2-6):*

Իր խոսքը վերջացնելով Հիսուս եզրակացնում է. *«Դավիթը իր սովածության համար անտեսեց օրենքը. արդարացավ, քահանաները՝ նույնպես արդարացան. ուրեմն ինչո՞վ են պակաս Իմ աշակերտները, որոնք ծառայելու համար հասկեր քաղեցին և ցորենը կերան, որ-*

պեսզի ուժ առնեն ու շարունակեն Ինձ ծառայել, քանի որ Տաճարից ավելի մեծը կա այստեղ»:

«ԱՐԴՅՈՔ ԻՆՁ ԷԻ՞Ր ՓՆՏՐՈՒՄ…

Ամբրոսիոս անունով հռչակավոր մի ճգնավոր է լինում: Նրա համբավը և հրաշագործությունները ամենուր տարածված են լինում: Մի երիտասարդ ցանկանում է նրա աշակերտը դառնալ, ավելի ճանաչել Աստծուն, նվիրվել հոգևոր կյանքին: Մի անգամ հանդիպում է մի ծերունու, ով նրան ասում է.

Եթե ուզում ես ավելին իմանալ Աստծու մասին, այդ դեպքում փնտրիր Ամբրոսիոս ճգնավորին, նա քո առջև կբացահայտի Աստծո խորհուրդները: Երիտասարդը ճամփա է ընկնում ու գտնում հռչակավոր սրբին ու ասում.

Հա՛յր սուրբ, մանկությունից Աստծուն եմ փնտրել և կամեցել Նրան լավ ճանաչել, Նրա ճանապարհներն ու շավիղներն իմանալ և Նրան հետևել: Խնդրում եմ, ընդունիր ինձ որպես աշակերտ քեզ մոտ: Ճգնավորը նայում է երիտասարդին, ժպտում ու հարցնում.

Արդյո՞ք կարող ես թողնել աշխարհը և հետևել ինձ;

Կարող եմ,- պատասխանում է երիտասարդը:

Ճգնավորն ասում է.

Այդ դեպքում, հետևիր ինձ ու լսիր, թե Տիրոջ մասին քեզ ինչ կասեմ ու կպատմեմ, և թե ինչպես է պետք հոգևոր կյանքով ապրել: Եվ նրանք զրուցելով քայլում են: Նրանց դեմ-դիմաց գեղեցիկ կառք է գալիս քաղաքի եպիսկոպոսը՝ ոսկեզոծ զգեստներ հագած ու մեծ հարգանքով բարևելով ճգնավորին ասում է.

Հա՛յր սուրբ, գիտեմ, որ Աստծո առաջ մեծ շնորհ ունես և բազում աշակերտներ: Ինձ մի օգնական է պետք, ուղարկիր աշակերտներիցդ որևէ մեկին՝ որպես ինձ օգնական:

Երիտասարդը տեսնելով գեղեցիկ կառքը, հրաշագեղ նժույգներն ու եպիսկոպոսի ոսկեզոծ հագն ու կապը, խնդրում է.

Սրբազան հայր, մանկությունիցս ի վեր ցանկացել եմ ծառայել Աստծուն ու Նրա շավիղներն ու ճանապարհները իմանալ վերցրու ինձ՝ իբրև քեզ օգնական: Եպիսկոպոսը նայում է ճգնավորին, որը գլխի շարժումով իր հավանությունն է տալիս: Երիտասարդը մեծ ուրախությամբ նստում է կառքը և հեռանում եպիսկոպոսի հետ: Ետ է նայում ու մի տեսիլք է տեսնում, որ ճգնավորի հետ մի ծերունի է քայլում: Ծերունին կանգնում է, շրջվում: Դա այն ծերունին էր, որ երիտասարդին խորհուրդ էր տվել գտնել ճգնավորին ու աշակերտել նրան: Այնուհետև ծերունին վերափոխվում է և երիտասարդը պայծառ լույսի մեջ տեսնում է Հիսուսին: Հիսուս նրան հարցնում է.

Արդյո՞ք ինձ էիր փնտրում:

Երիտասարդը պատասխանում է.

Տե՛ր իմ, գիտես, որ միշտ քեզ եմ փնտրել, քանի որ հոգևոր էությունս միշտ կամեցել է Քեզ մոտ շատ լինել և Քեզ ավելի լավ ճանաչել: Հիսուս նրան պատասխանում է.

Եթե դու հոգևոր լինեիր, կճանաչեիր Իմ խոսքը, կլսեիր Իմ ձայնը՝ կանչն ու հրավերը և կհետևեիր Ինձ, բայց դու ընտրեցիր աշխարհը և նրա անցողիկ փառքը» («Հայելի Վարուց, բարոյա-խրատական պատումներ»):

«Աստված օրենք էր սահմանել մեր բարիքի, կարիքի ու մեր օգտի համար: Երբ Նա պատվիրեց Շաբաթ օրը չաշխատել, այլ սուրբ պահել, նկատի ուներ, որ մեր մարդկային այս թույլ ֆիզիկական մարմինը վեց օր անընդհատ տքնաջան աշխատանքից հետո կարիք ունի հանգստի, կազդուրման: Նույնպես այդ վեց օրվա աշխատանքի ընթացքին, մեր մտքերը զբաղված լինելով աշխարհային մտահոգություններով, ընտանեկան, տնտեսական և այլ կարգի հարցերով, մենք ժամանակ չունենք հոգալու մեր հոգևոր կարիքները: Հետևաբար, մեզանից յուրաքանչյուրը իր պարտքը պիտի նկատի Աստծու կողմից մեր բարիքի համար սահմանված այդ սուրբ օրը նվիրելու իր հոգեկան ու մարմնական կարիքները հոգալուն» (Բաբկեն Վրդ. Թոփչյան, «Քարոզներ»):

Մի անգամ Անտոն Մեծը հուսահատության և ինչ-որ մռայլ մտքերի տրվեց, բայց շուտով ինքն իրենից վախենալով, աղաղակեց առ Աստված. *«Տեր, ես ցանկանում եմ փրկվել, բայց չգիտեմ, թե ինչով զբաղվեմ: Ինձ ցույց տուր պիղծ մտքերից ազատվելու միջոցը: Ինձ փրկվել սովորեցրու»:* Որոշ ժամանակ անց Անտոն Մեծը դուրս եկավ խցից և մի անծանոթ մարդու տեսավ, որը սկզբում նստած գործում էր, իսկ հետո կանգնեց և աղոթեց, հետո նորից նստեց և սկսեց զամբյուղ գործել, որից հետո դարձյալ աղոթքի կանգնեց… Դա ճգնավորի տեսքով Աստծո կողմից ուղարկված հրեշտակն էր, որպեսզի ուղղեր և նախազգուշացներ Անտոնին: Եվ երբ սուրբ Անապատականը նայեց նրան, անմարմին պահապանն ասաց նրան. *«Այսպես վարվիր և փրկված կլինես»:* Լսելով այս՝ սուրբ Անտոնն ուրախությամբ և հույսով լցվեց և այդ ժամանակից այլևս չէր խախտում հրեշտակային կանոնը: Ինչպիսի կոչում էլ որ քեզ տված լինի Աստված, ինչպիսի հանգամանքներ էլ որ շրջապատելու լինեն քեզ, աղոթիր քո հոգու փրկության համար:… Աղոթքն ու աշխատանքը փոխադարձաբար ամրացնում են մեկը մյուսին:

Հիսուս չդարձավ *«Շաբաթ»-ի* գերին, քանի որ Շաբաթի տերն էր: Բժշկեց հիվանդներին, բացեց կույրերի աչքերը, խուլերի ականջները և համրերի փակ բերանները, խնամեց որբերին, քաջալերեց և մխիթարեց այրիներին, ներեց մեղավորներին ու վստահություն ներշնչեց կարոտյալներին: Մի խոսքով Հիսուս դուրս գալով հրեական օրենքի նեղ շրջազծից, սիրով ծառայեց մարդկության, որովհետև քրիստոնեությունը ճշմարտություն է և կյանք: Ամեն:

«ՄԵՂՔԸ Ո՞ՒՄՆ Է» (ՀՈՎՀ. 9:2)

Երբ առաքյալները Երուսաղեմում հանդիպեցին ի ծնե կույրին, Հիսուսին հարցրեցին. *«Ռաբբի՛, մեղքը ո՞ւմն է, որ կույր է ծնվել, սրա՞նն է, թե՞ հորն ու մորը» (Հովհ. 9:2):* Հիսուս պատասխանեց. *«Ո՛չ դրա մեղքն է և ո՛չ էլ իր հոր ու մոր, այլ՝ որպեսզի դրա վրա Աստծու գործերը հայտնի լինեն…» (Հովհ. 9:2-6):*

Կուրությունը մեծ դժբախտություն է, քանի որ կույրը չի կարող տեսնել Աստծու ստեղծած բոլոր բարիքները: Սակայն ավելի մեծ դժբախտություն է հավատի կուրությունը, քանի որ նրանից տառապողը զրկված է աստվածային լույսից և չի կարող տարբերել չարը բարուց: 5-րդ դարի Վարդանանց հերոսամարտի պատմիչ, մեր թարգմանիչ վարդապետներից Եղիշեն ասել է. *«Լավ է կույր աչոք, քան կույր մտոք»,* այսինքն՝ ավելի լավ է, որ մարդ ֆիզիկապես կույր լինի, քան մտքով:

Մարկոս Ավետարանիչը պատմում է մի կույրի մասին.

«Եկան Բեթսայիդա. և Նրա առաջ բերեցին մի կույրի ու աղաչում էին, որ դիպչի նրան: Եվ Նա բռնելով կույրի ձեռքից՝ գյուղից դուրս հանեց. նրա աչքերը թքով թրջեց և ձեռքը նրա վրա դրեց. և հարցնում էր կույրին, թե բան տեսնո՞ւմ է: Նա բացեց աչքերը և ասաց. «Տեսնում եմ մարդկանց, որ շրջում են ինչպես ծառեր»: Նա կրկին ձեռքերը դրեց նրա աչքերի վրա. կույրը իր աչքերը բացեց և տեսնում էր. բժշկվեց և ամեն ինչ հստակ տեսնում էր: Նրան իր տունն արձակեց և ասաց. «Գյուղ մի մտիր, այլ գնա քո տունը, իսկ երբ գյուղ մտնես, գյուղում ոչ ոքի չասես» (Մարկ. 8:22-26):

Քրիստոս եկել էր մարդկանց կուրացած հոգիները բժշկելու:

Սբ. Գրիգոր Վարդապետ Տաթևացին ասում է, որ մարդն ունի երեք տեսողություն:

«Առաջինը՝ մարմնավոր աչքերն են, որոնցով տեսնում է աշխարհը և ճանաչում ամեն ինչ: Եվ ամեն մեկը չէ, որ լավ տեսողություն ունի. կա, որ թույլ տեսողություն ունի, կա կույր և կա շատ լավ տեսնող:

Երկրորդը՝ մտավոր տեսողությունն է, որովհետև Աստված մեր մտքին թռիչք է շնորհել. մեր մտքով տեսնում ենք երևույթներ, իրողություններ, որ մարմնավոր աչքերով չենք տեսնում, ինչպես երազները, տեսիլքները և այլն: Եվ ամեն մեկը չէ, որ մտքի լավ երևակայություն, մտապատկերներ ունի: Կա, որ հստակ է, կա թույլ և կա դժվար, որովհետև կան մտագարներ, մտավոր հետամնացներ, թույլեր, տկարներ, որ մտքի տեսողությունից շատ թույլ են:

Եվ երրորդը՝ հավատի տեսողությունն է, որ մեր սրտի մեջ Աստված է դրել: Եվ բոլորը չէ, որ օժտված են հավատի տեսողությամբ. կան սուրբեր, ովքեր կատարյալ հավատի տեսողությամբ են օժտված, կան սովորական մարդիկ, ովքեր ունեն հավատ, բայց այն թույլ է, չեն զարգացրել իրենց հավատը, չեն նմանվում սուրբերին, բայց Աստծու ողորմածությանն են ապավինում: Եվ կան անհավատներ, որ չեն հավատում Աստծուն, այլ ինչպես Սբ. Դավիթ մարգարեն է ասում՝ «Անզգամն ասաց իր սրտում, թե՝ «Աստված չկա»» (Սղմ. 52:1): Իրապես, Աստծո գոյությանը չհավատալը անզգամություն է: Եվ այս կույր մարդը կարծես այդ երեք կարգի մարդկանց էր խորհրդանշում, որովհետև չէր տեսնում ոչինչ, բայց եկավ և Տիրոջ առջև ընկավ: Երբ Քրիստոս թքով թրջեց նրա աչքերը, նա սկսեց տեսնել մարդկանց ծառերի նման, բայց դեռ կատարյալ տեսողություն չէր ստացել: Իսկ երկրորդ անգամ, երբ Քրիստոս ձեռքերը դրեց նրա աչքերի վրա, բժշկվեց: Ճիշտ այդպես էլ այս աշխարհում, քանի դեռ մարդը մեղքի, չարիքների և անօրինությունների մեջ է թավալված, չի տեսնում Տիրոջ ողորմությունը, չի հավատում Նրան, չի հասկանում, որ Աստված ոչնչից է ստեղծել ամեն ինչ: Բայց երբ զղջում է ու դարձի գալիս, սկսում է հավատալ աստ-

վածային ողորմություններին, սակայն պարզ աչքերով դեռևս հստակ չի տեսնում այն խոստումներն ու բարիքները, որ Աստված պարգևել է մարդկանց, այլ տեսնում է ինչպես ծառեր, որովհետև դեռևս ամբողջապես մեղքերից չի հրաժարվել ու ձերբազատվել, այլ իր հին սովորությունները, մեղքերի հակումները թույլ չեն տալիս, որ աստվածային, երկնային իրողություններն ու ճշմարտությունները տեսնի հստակ, մաքուր հավատի տեսությամբ»:

Երբ մարդու հոգևոր տեսողությունը կատարելապես բացվում է, ապա ճանաչում է աստվածային բոլոր բարիքները, ապրում է Տիրոջով՝ ազատ մեղքերից, ուրախ, խաղաղ և երջանիկ կյանքով:…

Եվ որքան թույլ է ներթափանցում մեր հոգու մեջ աստվածային լույսը, այնքան ավելի վատ ենք տեսնում աստվածային իրողությունները, սկսում ենք թերահավատել, ամբողջությամբ չվստահել Տիրոջը, ինչպես այսօրվա կույրն էր առաջին բժշկությունից հետո միայն ծառեր տեսնում, մարդկային կերպարանքները նմանեցնում ծառերի, այդպես էլ մենք աստվածային իրողությունների ստվերներն ենք միայն տեսնում, ծառեր ենք տեսնում և ոչ բուն խորհուրդները:

«Չգնահատված անձնազոհություն... առակ

Մի աղջիկ կար, ով ատում էր ինքն իրեն և ողջ աշխարհը, որովհետև, ի տարբերություն մյուսների, կույր էր ու չէր կարողանում տեսնել: Աշխարհում նա միայն մի սիրելի էակ ուներ. դա մի տղա էր, ով սիրում էր աղջկան, ամենուր նրա կողքին էր ու պաշտպանում էր կյանքի դժվարություններից և նեղություններից: Մի օր աղջիկը նրան ասաց. «Եթե կարողանայի տեսնել, անպայման կամուսնանայի քեզ հետ»:

Ու հրաշք տեղի ունեցավ. հիվանդանոցից զանգահարեցին ու աղջկան հայտնեցին, որ ստացել են աչքեր և հնարավոր է փոխպատվաստման միջոցով վերականգնել նրա տեսողությունը:

Վիրահատությունը հաջող անցավ ու երբ աղջիկը բացեց աչքերը, առաջին մարդը, ում տեսավ, բնականաբար, իր սիրելին էր, որը նրան, անմիջապես, հարցրեց. «Այժմ, երբ դու արդեն տեսնում ես, կամուսնանա՞ս ինձ հետ»: Աղջիկը կարոտալից հայացքով նայեց տղային ու ի՞նչ տեսավ… Տղան կույր էր: Աղջիկը չէր սպասում այդպիսի հարվածի: Այն միտքը, որ կյանքի մնացյալ օրերը անցկացնելու է նայելով այդ կույր երիտասարդին, սարսափեցրեց նրան: Նա հրաժարվեց ամուսնանալ կույր տղայի հետ: Երիտասարդ սիրահարը, արցունքն աչքերին, հեռացավ իր սիրելիից:

Օրեր անցան և աղջիկը մի երկտող ստացավ. տղան գրում էր. «Սիրելիս, խնդրում եմ քեզ, հոգ տար աչքերիդ, քանի որ քոնը լինելուց առաջ, դրանք ինձ էին պատկանում»:

Ահա թե ինչպիսի՞ն է մարդ արարածը և թե ինչպե՞ս է արձագանքում նրա ուղեղը իրավիճակների փոփոխությանը: Շատ քչերն են հիշում, թե ինչպիսին էր կյանքը ընդամենը մի քանի րոպե առաջ, ով էր կանգնած նրանց կողքին ամենացավալի իրավիճակներում, ով էր ասում՝ դիմացիր, սիրելիս, Աստված ամեն բան ինքը կհոգա»:

Հովհաննես Վարդապետ Երզնկացին ասում է. *«Աստված մարդուն ստեղծեց հոգով և մարմնով ու զարդարեց Իր պատկերի նմանությամբ և միտքը դարձրեց հոգու աչքը ու աչքը՝ մարմնի ճրագ: Մարմնի աչքով (մարդը) տեսնում է տեսանելի երկրիս գեղեցկությունը, իսկ հոգու աչքով՝ Աստծու հրամանները, որոնք լույս են և լուսավորում են հոգին»:*

Իսկ 12-րդ դարի մեր վարդապետներից Բարսեղ Մաշկևորցին շարունակում է. *«Մեղքի բնությանը մի նայիր, թե փոքր է, այլ՝ նկատի առ, որ մեղքը անհոգությունից մեծանում է, ինչպես մարմնի ցավերը, որոնք իրենց փոքրության մեջ, երբ անտեսվեն, հետզհետե կմեծանան: Այդ-*

պես էր Հուդայի պարագան, ուր փոքր բաներից մեծամեծ չարիքներ ծնվեցին. աղքատների ունեցածից գողանալը եթե նա փոքր բան չհամարեր, մատնությունն էլ չէր անի: Նույնպես են պոռնկությունն ու այլ չարիքներ, որովհետև մեկը անմիջապես չարիքին չի դիմում, այլ՝ աստիճանաբար»:

Ուրեմն, ի՞նչ է մեզ մնում. աղոթքով ու պաղատանքով խնդրել և հայցել Տիրոջից, որպեսզի Իր աստվածային շնորհը ամբողջապես հեղի մեր հոգու խորքերը, որպեսզի ինչպես արեգակով է մեր աչքի ոսպնյակը լուսավորվում և տեսնում ամեն ինչ, այդպես էլ աստվածային շնորհի լույսով լուսավորվի մեր միտքը, մեր հոգին, մեր սիրտը և մեր ողջ էությունը: Ամեն:

«ԵՂԻՑԻՆ ԿԱՄՔ ՔՈ...» ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ «ՀԱՅՐ ՄԵՐ»

«ԹՈՂ ՔՈ ԿԱՄՔԸ ԼԻՆԻ»

«Ոչ թէ հսկողութեան տակ ծառայելով, որպէս մարդահաճոյ անձեր, այլ որպէս Քրիստոսի ծառաներ՝ կատարելու համար Աստծու կամքը» (Եփես. 6:6):

Այս խոսքը ես վերցրել եմ Պողոս Առաքյալի Եփեսացիներին ուղղած նամակի 6-րդ գլխի 6-րդ համարից, ուր նա խոսում է այն մասին, թե իբրև Քրիստոսի ծառաներ, ո՛չ թե մարդկանց պիտի ծառայենք և հաճելի լինենք նրանց, այլ կատարենք Աստծու կամքը:

Հարց է առաջանում. *«Ի՞նչ է Աստծու կամքը: Ինչո՞ւ Աստծու կամքը պիտի լինի և ոչ մարդու: Ինչո՞վ է Աստծու կամքը զանազանվում մարդու կամքից»:* Հարցեր են, որոնք պատասխանի են սպասում:

Շատ անգամ մարդիկ ասում են, որ մենք ամեն օր արտասանում ենք Հիսուսի Տերունական աղոթքը, բայց Աստված խուլ է մեր աղոթքին և մեր խնդրանքները չեն կատարվում: Ինչո՞ւ: Աստված չի նայում մարդու արտաքինին, շքեղությանը, պալատի նման տներին, թանկարժեք մեքենաներին, այլ նայում է՝ մեր սրտին: Հիսուս ասում է, երբ կաղոթեք Աստծուց երկրային բաներ մի՛ խնդրեք, այլ՝ միայն Երկնքի Արքայությունը: Ամեն անգամ աղոթելուց սրտանց և ամբողջ հոգով պիտի ասենք. *«Տեր Աստված թող Քո կամքը լինի»:*

Աստծու կամքը կատարելու համար մարդկանց օգտակար պիտի լինենք, ցույց պիտի տանք նրանց ճիշտ ճանապարհը հասկացնելու համար, որ իրենց հույսը

չդնեն մարդկանց վրա, այլ խնդրեն Աստծուն, որ Իր կամքը լինի: Առանց Աստծու կամքի մի տերև իսկ չի կարող շարժվել աշխարհում: Ո՞վ է այն մարդը, որը անտեսելով Աստծու կամքը, կփորձի շրջանցել Նրան ու մարդկանց հաճո-

յանալ: Պիտի փորձենք նախ մարդկանց սովորեցնել Աստծու ճանապարհը և այնուհետև, թե ինչպե՞ս պիտի կատարենք Նրա կամքը: Կան մարդիկ, որոնք Աստծու կամքին հակառակ են գործում և ծառայում են չարին: Ո՛չ միայն ծառայում են, այլ նաև մեծ վնասներ են հասցնում իրենց նմաններին, կեղծավորությամբ, շողոքորթությամբ, քծնելով և մանավանդ հաճոյանալով բարձր պաշտոններ զբաղեցնող պաշտոնյաների առաջ:

Սուրբ Անտոն Մեծն ասում է. *«Մարդիկ հաճախ խելացի են անվանվում այդ բառի սխալ մեկնաբանությամբ: Խելացիները նրանք չեն, ովքեր հին իմաստունների ասացվածքներն ու գրվածքներն են ուսումնասիրել, այլ նրանք՝ ում հոգին է խելացի, ովքեր կարող են հասկանալ, թե ո՞րն է բարին ու չարը, և փախչում են չարից ու հոգու համար վնասակարից:... Իսկապես խելացի մարդը մեկ հոգս ունի միայն. ողջ հոգով և ամեն կերպ Աստծուն հնազանդվել ու գոհացնել Նրան»:*

Շատ անգամ մեծամիտ մարդիկ իրենց չափից ավելի գիտունի և խելացու տեղ են դնում, կարծում են իրենք Աստված են, իսկ շրջապատի մարդիկ՝ իրենց ծառաներն են: Նրանք մոռանում են Հիսուսի խոսքը. *«Ես չեկա ծառայեցնելու, այլ՝ ծառայելու: Ես ձեր մեջ սպասավորի պես եմ»:* Չմոռանանք, որ այս խոսքերը ասողը Աստծու Որդին էր, Ով պետք չուներ ծառա լինելու, քանի որ Ինքը բոլորից էլ բարձր էր: Սակայն խոնարհվեց, որպեսզի մեզ՝ մարդկանց բարձրացնի: Եթե մենք այս կարևոր բանը հասկանանք, կգիտակցենք, թե մենք ինչքան փոքր ենք Աստծու կամքի առաջ, թե մենք իբրև մարդ մի փոքրիկ հյուլե էլ չենք Նրա մեծ զորության առաջ:

Այս կյանքում մարդկանց երեք դասակարգեր կան՝ իրար հակառակ ըմբռնումներով և բարքերով:

ա. Շատերը մտածում են, որ ԿՅԱՆՔԸ ՄԻ ԱՆԿՈՂԻՆ Է, որի վրա պառկում են և ուզում, որ ուրիշները ծառայեն իրենց: Սակայն այս դասակարգին պատկանող-

ները շատ շուտ հուսահատության են մատնվում և ծանր դժբախտությունների մեջ են միայն հասկանում, թե հանգստավետ կարծած այդ անկողինը, իրենց համար շատ հաճախ վշտի ու մահվան անկողնի է վերածվում:

բ. Ոմանք էլ կարծում են, թե ԿՅԱՆՔԸ ՄԻ ՄԵԾ ՊԱՐԿ Է, որը պարտավոր են լցնել ոսկով, պատիվներով, փառքերով ու ամեն տեսակի հաճույքներով: Այս դասակարգի մարդիկ նյութապաշտության զոհերն են: Շաբաթվա յոթ օրը աշխատում են լցնել այդ պարկը, բայց առանց հաջողություն ունենալու իրենց վազքի մեջ, հանկարծակի մահը վրա է գալիս և կանգնեցնում նրանց բազմաշխատ վազքը:

գ. Կա սակայն մարդկանց փոքրաթիվ մի խումբ, որոնք հավատում են, թե ԿՅԱՆՔԸ ՄԻ ՃՐԱԳ Է, որը վառվում ու լուսավորում է շրջապատին: Սրանց նպատակը ծառայելն է և ոչ թե ծառայություն ընդունելը. ապրում են Աստծու լույսի մեջ և ամբողջությամբ զոհաբերում են ու զոհաբերվում, որ թշվառների նեղությունները և ցավերը մեղմացնեն: Նրանք շատ լավ հասկանում են, թե ուր կարոտություն և արցունք կա: Նրանք ճշմարիտ կյանքի ճրագներն են, որոնք շարունակ վառվում են ու փարատում շրջապատի խավարը: Եղեք Աստծու լույսին հետևող (Վարդան Ա. Քհն. Դուլգերյան «Արձակ և չափածո մանրավեպեր»):

Մի՞թե ժամանակավոր մարդը կարող է ուժեղ լինել ու միշտ հրամայող: Այնպիսի բռնակալ-ուժեղներ են աշխարհ եկել ու գնացել, առանց դույզն իսկ մի հետք թողնելու: Այդպիսիները միշտ պիտի հիշեն, թե բիրտ ուժը, երբեք էլ հավիտենական չէ:

Իհարկե առանց Աստծու մարդը չի կարող խելացի լինել և եթե ցանկանում է, միայն Նրա կամքի շնորհիվ կարող է լինել: Պողոս Առաքյալը Եփեսացիներին ուղղած իր նամակում ասում է. *«Դրա համար անմիտ մի՛ եղեք, այլ իմացեք, թե ինչ է Տիրոջ կամքը» (Եփես. 5:17):*

Մեր եկեղեցական հայրերից մեկն ասում է, որ մարդը երեք կամքից մեկը կարող է կատարել.

ա. Աստծո կամքը, որը կատարյալ ու փրկագործ է.

բ. Մարդու կամքը, որն առանց Աստծու չի կարող փրկչական լինել.

գ. Չարի կամքը, որը տանում է դեպի կործանում:

Այս երեքից կարելի է եզրակացնել, որ միայն Աստծու կամքն է, որ մարդուն առաջնորդում է դեպի հոգու փրկություն: Դրա համար էլ ամեն անգամ աղոթելիս ուրիշ բաներ խնդրելու փոխարեն, փնտրենք Աստծու կամքը:

Աստծու կամքը կատարել, նշանակում է հնազանդվել Աստծու պատվիրաններին և ապրել աստվածահաճո կյանքով:

«Թող Քո կամքը լինի»:

Աստծու կամքն է, որ աղոթենք նաև ուրիշ մարդկանց համար, նրանք, ովքեր հիվանդ ու մոլորված են, խռովյալ վիճակ ունեն, մեկը մյուսի հետ չեն խոսում: Երբ կաղոթենք մեր նմանների համար, մենք ինքներս մեզ կմաքրենք, բարի կդառնանք, չարությունը դուրս կգա մեր միջից, սատանան կնահանջի: Չարը միշտ արթուն է, նա չի քնում, իսկ երբ մենք Աստծու հետ ենք, չարը անպայման կհեռանա մեզանից: Հիշեք, որ Աստված միշտ մեզ հետ է, մնում է, որ մենք աշխատենք մեր կյանքով Նրա հետ լինել:

Պողոս առաքյալն ասում է. *«Դրա համար մենք էլ՝ այն օրվանից, երբ լսեցինք այդ, չենք դադարում ձեզ համար աղոթելուց և Աստծուն աղաչանքներ մատուցելուց, որպեսզի լցվեք նրա կամքի գիտությամբ՝ ունենալով կատարյալ իմաստություն և հոգևոր իմացություն՝ ապրելու համար Տիրոջն արժանի և ամեն ինչում նրան հաճելի ձևով, բոլոր բարի գործերում պտղաբեր լինելու և Աստծու գիտությամբ աճելու համար՝ զորացած նրա ամբողջ ուժով, նրա փառքի զորությամբ, կատարյալ համբերությամբ և հարատևությամբ» (Կող. 1:9-11):*

Ուստի կարևոր է, որ բոլորս հիշենք այս զգուշացնող պատվերը, թե՝ ամեն մարդու մի՛ հավատացեք:

Որևէ հարուստ, որքան էլ իմաստուն ու բարի լինի, հնարավոր չի որ թերություն չունենա, որովհետեւ սխալական մարդ է՝ ընկած իրեն շրջապատող հաճելի մարդկանց անթիվ երազների մեջ, մանավանդ եթե դաստիարակվել է սնափառության ու ազատամտության մեջ:

Սաղմոսաց գրքում ասվում է: *«Աստված ցրելու է երեսպաշտների ոսկորները» (Սաղմ. 52:6):* Թշվառ է տվյալ մարդը, երբ նա թունավորվում է շողոքորթների ու կեղծավորների խոսքերից, որոնց նա կապում է իր կյանքը, քանի որ նրա կողքին առաքինի մարդիկ չկան, որոնք նրան ճշմարիտ ճանապարհը ցույց տան:

«Պահպանիչ» աղոթքի մեջ ասվում է. *«Խաղաղությամբ պահպանիր մեզ Քրիստոս Աստված սուրբ և պատվական խաչիդ հովանու տակ: Փրկիր մեզ երևելի և աներևույթ թշնամուց: Արժանի դարձրու մեզ գոհությամբ փառավորել Քեզ Հոր և Սուրբ Հոգու հետ միասին, այժմ և միշտ և հավիտյանս: Ամեն»:*

Սրանք այդ աներևույթ թշնամիներն են, որոնք չափից ավելի վտանգավոր են և շատ անգամ անկարելի է դառնում նրանց դեմ պայքարելը: Միակ ճանապարհը մեր հույսը Աստծու վրա դնելն է, որ մեզ պահպանի նրանցից, քանի որ Նա ամեն ինչ տեսնում է ու լսում, այն ինչ որ մեզ համար հնարավոր չէ:

Աղոթենք, որ Տերը բոլոր մարդկանց ուժ և կարողություն պարգևի, որպեսզի գիտակցեն ու հասկանան, թե իրենց կամքով չեն կարող իրենց նպատակները իրագործել, այլ պիտի խնդրեն Աստծուն, որ Նրա կամքը լինի ամեն ինչում, ամեն գործի մեջ և ամեն պարագայում: Ամեն:

ՃՇՄԱՐԻՏ ԻՄԱՍՏՈՒՆԸ

«Ճշմարիտ իմաստունը նա է, որ ոչ միայն խոսքով է ուսուցանում, այլև գործով է վարդապետում»
Ընդհանրական Քրիստոնեական Վարդապետներ

Այս խոսքը ես վերցրել եմ Ընդհանրական Քրիստոնեական Վարդապետների ուսուցումներից: Իմ բնաբանը վերաբերում է ճշմարիտ իմաստունին, ո՛չ թե նրան, ով միայն խոսքով է սովորեցնում, այլ գործով է իր ուսուցումը արժևորում:

Այստեղից հարց է ծագում. *«Ի՞նչ է իմաստությունը կամ ո՞վ է ճշմարիտ իմաստունը»:*

Հին Կտակարանից կարելի է մեջբերել Սողոմոն թագավորի խնդրանքը Աստծուն.

«…Քո ծառան քո ժողովրդի մեջ է, մի ժողովուրդ, որը բազմամարդ է, անթիվ ու անհամար: Իմաստություն տուր քո ծառային, որ նա կարողանա արդարությամբ լսել ու դատել քո ժողովրդին, խելամտություն ունենա տարբերելու բարին ու չարը, որովհետև, ո՞վ կարող է ղեկավարել քո այս բազմամարդ ժողովրդին»: Տիրոջը հաճելի եղավ Սողոմոնի այս խնդրանքը և Տերն ասաց նրան. «Քանի որ դու այդ բանը խնդրեցիր ինձնից, խնդրեցիր ո՛չ թե կյանքի երկար օրեր, հարստություն կամ քո թշնամիների մահ, այլ խնդրեցիր խելամտություն՝ դատ անելու. ուստի քո ասածի համաձայն եմ վարվելու. քեզ եմ տալիս իմաստուն ու հանճարեղ միտք, այնպես որ ո՛չ քեզնից առաջ է քո նմանը եղել և ո՛չ էլ քեզնից հետո քո նմանը կհայտնվի: Քեզ եմ տալիս նաև այն, ինչ դու չխնդրեցիր՝ հարստություն ու փառք, այնպես որ քո ապրած կյանքի օրերին թագավորներից ոչ ոք չի լինելու քեզ նման…» (Գ. Թագ. 3:8-13):

Սողոմոն թագավորը հասկացել էր, որ առանց խելամտության ու իմաստության չպիտի կարողանար ճիշտ դատել, տարբերել բարին ու չարը, դրա համար էլ Աստծուց

իմաստություն խնդրեց ու ստացավ ավելին։ Սողոմոն իմաստունի արդար դատերից մեկը կարող ենք կարդալ Գ. Թագավորության 3-րդ գլխի 16-28 համարներում, ուր նա երկու անառակ կանանց զավակների վիճելի հարցը լուծում է իմաստությամբ ու բարձրանում իր ժողովրդի աչքում…։

Երանի բոլոր մարդիկ, Աստծուց խնդրեն իմաստություն, խելամտություն, որպեսզի կարողանան տարբերել չարն ու բարին, իրենց նմանների նկատմամբ լինեն սիրալիր, հանդուրժուղ ու համբերատար և Աստված նրանց կտա ավելին։ Օրինակը՝ Սողոմոն իմաստունն է և մեր ժողովրդի շնորհալի զավակներից շատ շատերը պատմության ընթացքին։

12-րդ դարի մեր վարդապետներից Սարգիս Շնորհալին ասում է.

«Իմաստությունը երկու տեսակ է. Մեկը երկրավոր ու բանական է, որ ճարտասանությամբ է իմացվում, իսկ մյուսը հոգևոր է, որ գործերով է ճանաչվում: Սրանց միջև շատ տարբերություններ կարելի է տեսնել: Այն իմաստությունը, որ ճարտասանությամբ է արտահայտվում, իր մեջ խառնված շատ կեղծիք ունի, իսկ այն իմաստությունը, որ գործով է դրսևորվում, անմասն է խաբեությունից և մերձավոր է ճշմարիտ Իմաստությանը, ա՛յն Իմաստությանը, ում մասին Պողոս առաքյալն ասաց. «Քարոզում ենք Քրիստոսին որպես Աստծո զորություն ու իմաստություն» (Ա. Կորնթ. 1:24): Որովհետև Նա Իր բոլոր խոսքերը գործով իրականացրեց աշխարհում և հեզությամբ արտահայտեց Իր իմաստությունը…Իրապես նա՛ է իմաստուն, ով գործով է ուսուցանում իր իմաստությունը: Նա՛ է Աստծուց ընտրված ուսուցիչ, ով նախ կատարում է և ապա՛ ուսուցանում, ինչպես ճշմարիտ Իմաստությունը՝ Հիսուսը, Ով նախ սկսեց գործել մեզ սովորեցնելու նպատակով և ապա՝ խոսքով ուսուցանել…» («Խրատանի ապաշխարության»):

Իմաստուն մարդը, եթե հավատ չունի և գործով այն չի կարողանում ցույց տալ, փուչ ու դատարկ է իր ունեցած գիտելիքներով, քանի որ այդ պարագային նրա մոտ նահանջ է ապրում համեստությունն ու խոնարհությունը և հպարտության մահացու մեղքն է տիրում նրա մեջ: Աստված սիրում է խոնարհներին, բայց տեղ չի տալիս ամբարտավաններին:

Նշանավոր փիլիսոփաները, որոնք բավականաչափ իմաստություն ունեին, չէին ընդունում Աստծու գոյությունը, Նրա հավիտենականությունը, հոգու անմահությունը: Նրանցը՝ միայն փիլիսոփայությունն էր և այդ չափանիշով էլ ապրում էին; Սակայն իրենց կյանքի մայրամուտին, վերջ ի վերջո իրենց փիլիսոփայությունն ու իմաստությունը մի կողմ դրած, վկայում էին, որ մահից այն կողմ, պատի ետևում մի բան կա:

Իմաստուն մարդը դյուրահավատ է, հեզ է և խոնարհ, քանի որ հասկանում է ու ընդունում, որ իր շնորհները և իմաստությունը ստացել է Գերագույնից, ինչպես Սողոմոն իմաստունը, քանի ուր հեզություն ու դյուրահավանություն կան, այնտեղ է նաև մարգարեության հոգին:

Այս պատմությունը փոքրիկ մի օրինակ է նրանց համար, ովքեր ուզում են իմանալ,. թե իրական իմաստությունը կյանքում ի՞նչ է.

«Մի անգամ, նստած գետի ափին զրուցում էին ծեր իմաստունն ու նրա աշակերտը: Աշակերտը հարցնում է.

Օ՜, մեծագույն իմաստուն, դու այնքան իմաստուն ես, և մորուքդ վաղուց զարդարվել է ճերմակով, հուշիր ինձ, ինչպե՞ս հիմարս կարողանամ ճանաչել մարդկանց: Ո՞ւմ վստահել և ումի՞ց խուսափել:

Միրտը քո դեռ շատ երիտասարդ է իմ բարեկամ: Սակայն իմաստությունը կարող է օգտակար լինել յուրաքանչյուր տարիքում և այդ պատճառով կբացեմ քեզ մի

գաղտնիք: Առաջին հերթին խուսափիր տեսքով հնազանդից: Մի՛ փառաբանիր նրան և մի՛ գրկիր: Եթե տեսնում ես, որ երիտասարդը կամ ծերունին քո հանդեպ չափազանց հնազանդություն է ցուցաբերում՝ խուսափիր նրանից, ինչպես կրակից:

Ես չեմ հավատում իմ ականջներին: Իմաստուն, բացատրիր ինձ, ինչպե՞ս կարող է այդպես լինել, - զարմանում է աշակերտը:

Այդ մարդը կլինի առաջինը, ով քեզ կդավաճանի, ով կզրպարտի քո անունը՝ երբ կշրջվես,- հոգոց հանելով պատասխանում է ծերունին:

Այդ դեպքում ո՞ւմ վստահել,- հարցնում է աշակերտը:

Վստահիր նրան, ով պարզ է քեզ հետ, և միշտ ասում է քեզ ճշմարտությունը՝ ինչպիսին էլ որ այն լինի: Որովհետև, երբ դժբախտությունը ծեծի դուռդ, այդ մարդը առաջինը կգա քեզ օգնության:

Իմաստունը մտամոլոր լռում է, մի պահ նայում արևին, որն արդեն մայր էր մտնում և կամաց ասում է. «Իրական հնազանդությունը միշտ աննկատ է, այդ պատճառով այն դժվար է գտնել, բայց երբ գտնես նրան՝ նա երբեք քեզ չի դավաճանի» (mediamag.am):

Պողոս Պատրիարք Ադրիանապոլսեցին ասում է. *«Սակավ ամոթ չէ իմաստունին, եթե որևէ անգրագետ նրանից ավելի բարեգործ է: Ճշմարիտ իմաստունը նա չէ, ով բազում գիտություններ է սովորել, այլ նա, ով նաև սովորել է բարիք գործել: Շատերը բազում գրքեր գրեցին և տվեցին աշակերտներ՝ նրբամիտ ու գիտուն, այո՛, բայց ոչ՝ բարի ու առաքինի: Որովհետև գրքերը գրելիս այն բանի համար չաշխատեցին, որ դրանք ընթերցողները բարիք գործել սովորեն ու բարի լինեն, այլ միայն հպարտությամբ փորձեցին իրենց գիտելիքները հայտնել: Իհարկէ, մարդ պիտի սովորի իմաստասիրական գրքերից ոչ այն բանի համար, որ միայն գիտուն հռչակվի, այլ մանավանդ*

որպեսզի բարի լինի: Քանզի գիտուն ու առաքինի մարդը նման է մաքուր ոսկու՝ թանկարժեք ակով ընդելուզված ու զարդարված: Իսկ եթե մարդ երկուսն էլ միաժամանակ չկարողանա ձեռք բերել, նախընտրելի է լինել բարի, քան գիտուն» («Խրատի Թանգարան»):

Ուշադրություն դարձրեք նրա վերջին նախադասության վրա. *«Իսկ եթե մարդ երկուսն էլ միաժամանակ չկարողանա ձեռք բերել, նախընտրելի է լինել բարի, քան գիտուն»:* Հետևենք Պողոս Պատրիարքի այս խրատներին և ճշմարիտ իմաստունի պես մեր ունեցած բարությունը ի սպաս դնենք մեր դարավոր Հայրենիքի, մեր Սուրբ Եկեղեցու և մեր բազմաչարչար ժողովրդի բարօրությանը, բարգավաճմանն ու պայծառությանը:

Ուրեմն եկեք մեր այս կարճ ու անցավոր կյանքում, անկախ մեր ունեցած կարգավիճակից, հողագործ, թե՝ պաշտոնյա, հոգևորական, թե՝ արհեստավոր, Աստծուց տրված մեր շնորհները, իմաստությունը, խելքը, կամքը, խիղճը օգտագործենք բարի ու արդար գործեր կատարելով, որպեսզի արժանանանք Աստծու ողորմածությանն ու գթությանը: Ամեն:

ԸՆՏՐՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Կանչվածները շատ են, բայց սակավ են ընտրյալները» (Մատթ. 20:16):

Այս խոսքը ես վերցրել եմ Մատթեոս Ավետարանչի 20-րդ գլխի 16 համարից:

Ավետարանիչը պատմում է *«Այգու մշակների վարձի մասին» առակը.«Երկնքի արքայությունը նման է մի տանուտերի, որ առավոտյան ելավ իր այգու համար մշակներ վարձելու: Եվ մշակների հետ օրավարձը մեկ դահեկան սակարկելով՝ նրանց ուղարկեց իր այգին: Եվ առավոտյան ժամը իններ մոտ դուրս ելնելով՝ տեսավ ուրիշների, որ պարապ կանգնել էին հրապարակում: Նրանց էլ ասաց. «Դուք էլ գնացեք իմ այգին, և ինչ որ է արժան է, կտամ ձեզ»: Նրանք ևս գնացին: Եվ դարձյալ դուրս ելնելով կեսօրին ու կեսօրից հետո ժամը երեքի մոտ՝ նույն ձևով արեց: Եվ ժամը հինգի մոտ դուրս ելնելով՝ գտավ ուրիշների, որ պարապ կանգնել էին, նրանց ասաց. «Ինչո՞ւ եք այստեղ ամբողջ օրը պարապ կանգնել»: Նրան ասացին. «Որովհետև մեզ ոչ ոք չվարձեց»: Նրանց ասաց. «Դուք էլ գնացեք այգին, և ինչ որ արժան է, կստանաք»: Եվ երբ երեկո եղավ, այգու տերը իր գործավարին ասաց. «Կանչիր մշակներին և տուր նրանց վարձը՝ սկսած վերջիններից մինչև առաջինները»: Երբ եկան ժամը հինգի մոտ վարձվածները, յուրաքանչյուրը մեկ դահեկան ստացավ: Առաջիններն էլ գալով՝ կարծում էին, թե ավելի կստանան, բայց նրանք էլ յուրաքանչյուրը մեկ դահեկան ստացավ: Երբ առան, տրտնջում էին տիրոջից ու ասում. «Դրանք՝ այդ վերջինները, մեկ ժամ գործ արեցին, իսկ դու դրանց հավասար արեցիր մեզ, որ տարանք օրվա ծանրությունը և տոթը»: Նա պատասխանեց նրանցից մեկին և ասաց. «Ընկեր, քեզ չեմ զրկում, չէ՞ որ ինձ հետ մեկ դահեկանի սակարկեցիր, ստացիր քոնը և գնա՛. այս վերջիններին կամենում եմ տալ որքան և քեզ. մի՞թե իրավունք չունեմ ունեցածիս հետ վարվելու, ինչպես*

կամենում եմ կամ թե՝ նախանձո՞ւմ ես, որ ես առատաձեռն եմ»: Այսպես վերջինները առաջին պիտի լինեն, և առաջինները՝ վերջին. որովհետև բազում են կանչվածները, բայց սակավ են ընտրյալները» (Մատթ. 20:1-16):

Առակը անշուշտ փոխաբերական իմաստով է ասված, որի մեկնաբանությունը կարող ենք ամփոփել բաժանելով այն մի քանի մասերի.

ա.Առաջին և վերջին մշակներին հրավիրող Տանուտերը՝ Աստված է:

բ. Առաջին մշակները նրանք են, ովքեր սակարկեցին տիրոջ հետ աշխատելու մեկ դահեկան օրավարձով:

գ. Օրվա վերջում եկած մշակները, քանի որ աշխատանք չունեին, Տանուտերը հրավիրեց այդ խեղճերին աշխատելու. *«Դուք էլ գնացեք այգին և ինչ որ արժան է, կստանաք»:* Մշակներ, ովքեր նույնիսկ չսակարկեցին Տիրոջ հետ, թե ի՞նչ պիտի վճարի իրենց:

դ. Վճարումը առաջիններին և վերջիններին եղավ հավասարապես՝ բոլորին մեկ դահեկան:

ե. Առաջինները, որոնք ավելի քան ութը, ինը ժամ աշխատել էին, նույնպես ստացան մեկ դահեկան, ինչպես վերջինները և բողոքեցին դրա համար. *«Դրանք՝ այդ վերջինները, մեկ ժամ գործ արեցին, իսկ դու դրանց հավասար արեցիր մեզ, որ տարանք օրվա ծանրությունը և տոթը»:*

զ. Տիրոջ պատասխանը առաջինների բողոքին. *«Ընկեր, քեզ չեմ զրկում, չէ՞ որ ինձ հետ մեկ դահեկանի սակարկեցիր, ստացիր քոնը և գնա. այս վերջիններին կամենում եմ տալ որքան և քեզ. մի՞թե իրավունք չունեմ ունեցածիս հետ վարվելու, ինչպես կամենում եմ: Կամ թե՝ նախանձո՞ւմ ես, որ ես առատաձեռն եմ»:*

Այս առակն ասվեց ի պատասխան Պետրոս Առաքյալի միամիտ հարցին, թե՝ *«Ահավասիկ, մենք թողեցինք ամեն բան և եկանք Քո հետևից. արդ, մենք ի՞նչ կունենանք» (Մատթ. 19: 27):*

Այս առակում Տերը ցույց է տալիս կրոնի նկատմամբ սպառողական մոտեցման ոչ ճիշտ լինելը: Մարդն իր փրկության համար այնքան քիչ բան է անում, որ վաստակի և պարգևատրման մասին խոսք լինել չի կարող: Այս առակը մեզ սովորեցնում է, որ Աստծու շնորհը, ինչպես և հավիտենական կյանքը, տրվում է մարդուն ո՛չ թե նրա գործերի կամ եկեղեցում անցկացրած ժամանակի թվաբանական հաշվարկի արդյունքում, այլ՝ Աստծու ողորմության շնորհիվ:

Սուրբ Հովհան Ոսկեբերան Հայրապետն ասում է. *«Իմացեք, որ մենք վարձված մշակներ ենք: Տիրոջ հետ սակարկելը վայել չէ. աշխատիր, կատարիր Նրա սուրբ պատվիրանները, իսկ պարգևատրելը Նրան թող: Նա Գթասիրտ է և կտա քեզ ավելին, քան կարող ես ցանկանալ.... Մեզ էլ Տերը տարբեր ժամերին է կանչում՝ աշխատելու հոգու փրկության համար...»:*

Տերը կանչում է մեզ Իր այգում աշխատելու, այգի, որը խորհրդանշում է Սուրբ Եկեղեցին: Մարդն ինքն է որոշում լսել, թե չլսել այդ հրավեր-կանչը, ընդունել իր սրտում Աստծու այդ շնորհի ազդեցությունը կամ ոչ: Առաջին մարդուց՝ Ադամից սկսած Տերը մեզ կանչում է աշխատելու և վաստակելու հավիտենական կյանքը՝ կարճ ժամանակով ու վարձատրությունը ընդամենը մեկ դահեկան է, որպեսզի կարողանանք այդ ձևով երկնքում ժառանգել հավիտենական երանությունը, ստանալով այդ պարգևը:

Երբ Տերը առաջիններին նույն գումարը տվեց, ինչ որ վերջիններին, նրանց ուզեց հասկացնել, թե սխալ են արել իր հետ սակարկելով օրավարձի կապակցությամբ, այլ ճիշտ կլիներ, եթե նրանք վստահեին Նրա բարությանը: Այդ պարագային գուցե և նրանց վարձը ավելին կլիներ: Եթե մենք այսօր էլ չենք վստահում Տիրոջը, Նրա ողորմածությանն ու հպարտանում ենք մեր բարի և արդար գործերով, ինչպիսի՞ վարձատրություն պիտի սպասենք Ամենակալից: Ի՞նչ շնորհներ ենք ուզում ստանալ Նրանից, երբ չենք հավատում ու վստահում Նրան: Աստված ողորմած և գթառատ է բոլորի հանդեպ, ինչպես առակի վերջին մշակների պարագային, որոնք անգործ կանգնած էին ամբողջ

օրը, սակայն տանուտերից հրավեր ստանալով անմիջապես առանց սակարկելու գնացին այգին աշխատելու: Մենք էլ այսօր, երբ Աստված մեզ հրավիրում է, չփորձենք Նրա հետ պայմանագիր կապել կամ նյութական պայմաններ դնել Նրա առաջ, այլ վստահենք Նրան ու հավատանք:

Մաղաքիա Արք. Օրմանյանը այսպես է մեկնաբանում այս առակը.

«Սակայն Հիսուսի առակում մի իմաստ էլ կա: Սակարկող և գործը վաղ սկսած մշակները Հին Օրենքի մարդիկ են, որոնց հետ Աստված Մովսեսի միջնորդությամբ դաշինք կնքեց և ուխտ հաստատեց: Իսկ մի պահ անգործ մնացող մշակները հեթանոսներն են, որոնց հետ կնքված չէր աստվածային ուխտը և այգուց դուրս էին մնացել, բայց երբ տեսնում են Տանուտերին և գործի առիթը բացվում է, շտապում են հետզհետե իրենց պարտքը կատարելու: Աստված նրանց հանդեպ գթասիրտ է գտնվում, նրանց էլ արժանացնելով այն շնորհին, որին արժանացել էին Հին Ուխտի մարդիկ: Այսպես վերջինները հավասարվում են առաջիններին, մինչ առաջիններն էլ նույնանում են վերջիններին: Իսկ «բազում են կանչվածները, բայց սակավ են ընտրյալները» ասածը, պատմված առակի հետ բաղդատելով, այն իմաստն է տալիս, թե բոլոր սրանք, որ վարձի արժանացան, «ընտրյալ» են, և թե որևէ ժամվա մեջ Ավետարանի այգում աշխատության կոչեցյալները շատ են: Ամբողջ աշխարհը հրավիրված է, բայց, դժբախտաբար, բոլորը չեն ներկայանում, չեն աշխատում, վարձի չեն արժանանում» (Մաղաքիա Արք. Օրմանյան «Համապատում»):

Ուրեմն, մեզ տրված է առիթը, լսելու և ընդունելու Տիրոջ հրավերը՝ առանց սակարկության ապրելու աղոթքի, բարության, արդարության, խաղաղության և սիրո կյանքով: Ամեն:

ԽՈՍՔԻ ՈՒ ԳՈՐԾԻ ԱՐԺԵՔԸ

«Քո գործերը թող ամոթի չմատնեն քո շրթների խոսքերը, որպեսզի, երբ խոսես, չասեն «Ինչո՞ւ չես անում, ինչ որ ասում ես» - Սբ. Գրիգոր Աստվածաբան

Սուրբ Գրիգոր Նազիանզացին կամ ինչպես հայտնի է Սուրբ Գրիգոր Աստվածաբանը, ապրել է 4-րդ դարում ու մեկն է Ընդհանրական Քրիստոնեական Եկեղեցու այն մեծագույն սրբերից, ով իր մաքրակենցաղ վարքով և ուղիղ դավանությամբ շատ-շատերին լուսավորեց ի վերուստ իրեն շնորհված Սուրբ Հոգու վարդապետությամբ: Սբ. Բարսեղ Կեսարացու և Սբ. Գրիգոր Նյուսացու հետ նա կազմում է *«Երեք մեծ կապադովկիացիների»* եռյակը:

Այսօրվա իմ բնաբանը ես վերցրել են նրա խոսքերից. *«Քո գործերը թող ամոթի չմատնեն քո շրթների խոսքերը, որպեսզի, երբ խոսես, չասեն «Ինչո՞ւ չես անում, ինչ որ ասում ես»:* Սուրբը իրապես եղավ իր այս արտահայտության կրողը: Լինելով մեծահարուստի որդի, կամավոր զրկեց իրեն և իր բոլոր հարստությունը բաժանեց աղքատներին, այսինքն՝ ինչ որ իր քարոզած խոսքերն էին՝ գործի վերածեց ու իր ամբողջ կյանքը անցկացրեց զրկանքներով և զոհողությամբ: Եվ իրավամբ իր մահից հետո արժանացավ սրբի կոչմանը:

Իսկ այսօր մենք ի՞նչ ենք անում: Ապրում ենք մի այնպիսի դարում, երբ մեր շուրջը մարդիկ ո՛չ միայն իրենց խոսքի տերը չեն, այլ ստում են, խաբում, կողոպտում, շատ անգամներ էլ մարդկանց նեղացնում են, խոստանալով ու չկատարելով. մի խոսքով ասում են մի բան, բայց անում են մի այլ բան: Խոսքով սարեր են խոստանում, բայց գործով՝ ոչինչ:

Հիսուս յուրաքանչյուր քրիստոնյայի համար եղավ օրինակ՝ բարության, ազնվության, հավատի, սիրո և մաքրության: Ինչ որ ասեց, քարոզեց, գործի վերածեց: Նրա

շրթները բացվեցին և գործերը ամոթով չթողեցին Նրան։ Կույրերի աչքերը բացեց, կաղերը քայլեցին, բորոտները մաքրվեցին, մեռածները նույնիսկ հարություն առան։ Հիսուս ասաց. *«Ինչ որ հավատով խնդրեք, կտրվի ձեզ»։* Իսկ Հակոբոս Առաքյալը շարունակում է. *«Ինչպես որ մեռած է մարմինը առանց հոգու, այնպես էլ մեռած է հավատը առանց գործերի» (Հակ.2:26)։* Այո՛, եթե իրապես հավատում ենք, գործով պիտի ապացուցենք։

«Մի երիտասարդ տղամարդ ողջ սրտով ընդունեց ուղղափառ հավատն ու իր հետ կնոջը և դստերն էլ Եկեղեցի բերեց։ Նա ջանասիրությամբ զբաղվում էր հոգևոր կյանքով և սովորում ուղղափառության ճշմարտությունները։ Սակայն մի քանի տարվա բարեպաշտ կյանքից հետո նրա հավատն սկսեց նկատելիորեն թուլանալ։ Նրա սրտում կասկածներ հայտնվեցին եկեղեցական ավանդությունների և դավանաբանական հարցերի վերաբերյալ։ Եվ միևնույն ժամանակ կրկին հետաքրքրություն առաջացավ արևելյան պաշտամունքների նկատմամբ, որոնցով տարված էր մինչ ի Քրիստոս դառնալը։

Ընտանիքի գլխի Եկեղեցուց հեռանալը, սակայն, չազդեց նրա կնոջ ու դստեր վրա և նրանք մնացին Եկեղեցու հավատարիմ զավակները։ Նրանք շատ էին մտահոգվում իրենց հարազատի համար, չնայած որ երբեմն ստիպված էին լինում տառապել նրա կողմից իրենց հավատի հասցեին ուղղված կատակներից։

Մի անգամ, երբ նրանք տեղափոխվեցին իրենց նորակառույց տունը՝ մի ծանոթ հոգևորականի հրավիրեցին տնօրհնեքի կարգ կատարելու համար։ Քահանան կարդաց սահմանված աղոթքներն ու առաջ անցավ՝ երկհարկանի տունն օրհնված ջրով ցողելու համար։ Երբ մոտեցավ երկրորդ հարկ տանող աստիճանին, ընտանիքի գլուխը՝ տղամարդը, հեգնանքով, ասում է.

Տե՛ր Հայր, աստիճանը մի լավ ցողեք, թե չէ մեկնումեկը կարող է դրա վրայից ցած ընկնել։

Կինն ու դուստրը վիրավորվեցին այս խոսքերից, քանի որ զգացին դրանց տակ թաքնված հեգնանքը, իսկ քահանան չզգաց ենթատեքստն ու աստիճանը ցողելով՝ վեր բարձրացավ: Երբ երկրորդ հարկն էլ էր օրհնված՝ բոլորը ներքև ուղղվեցին: Վերջինն ընտանիքի հայրն էր գնում: Կինը, դուստրն ու քահանան բարեհաջող ցած իջան, իսկ ամուսինը սայթաքեց ամենավերին աստիճանի վրա ու ցած գլորվեց: Դստեր սիրտը մի պահ կանգ առավ վախից, կարծեց, թե հայրը ողնաշարը կկոտրի: Սակայն ինչ-որ անհավանական կերպով նրան հաջողվեց ճաղաշարից բռնվել ու խուսափել սարսափելի անկումից:

Բոլորը վախից քարացել էին, տղամարդու գունատված դեմքին առանձնանում էին անսովոր կերպով լայն բացված, վախով լի աչքերը:

Դե հիմա, սիրելի՛ հայրիկ,- ասաց դուստրը,- մտածիր, թե ինչո՞ւ մենք երեքս հանգիստ իջանք աստիճաններով և միայն դու սայթաքեցիր»:

Ես մարդիկ գիտեմ, որ ամեն օր վաղ առավոտյան գնում են քայլելու այգում: Իսկ այգում գիշեր ցերեկ, ցրտին ու քամուն, անձրևին ու փոթորկին, արևին ու տաքին բացօթյա կամ վրանի տակ ապրում են տնազուրկներ, ինչպես Ամերիկայում ասում են անգլերենով homeless-ներ: Մարդիկ անցնում են նրանց կողքով անտարբեր, սովորական, ոչ մի վերաբերմունք ցույց չտալով: Մի պահ մտածեք, մենք տուն ունեք, ամեն հարմարություններով, քնում ենք փափուկ անկողնում, ամառը օդափոխիչներ ունենք, ձմեռը՝ տաքացուցիչներ, պաշտպանված ենք անձրևից ու փոթորիկից, աշխատանք, դրամ և ունեցվածք ունենք, այս բոլորով մենք ապահովված ենք, բայց նրանք՝ չունեն: Մայր Թերեզան, որին վերջերս Կաթոլիկ եկեղեցին սրբերի շարքը դասեց, Հնդկաստանում խնամում էր աղքատներից ամենաաղքատներին: Իսկ մենք չե՞նք կարող օգնել, կարող ենք, եթե ցանկություն ու խիղճ ունենք; Մեկը կար, որին ճանաչում եմ, ամեն օր առավոտյան իր քայլելուց և մարզանք կատարելուց հետո այդ տնազուրկներից մեկին ողորմություն էր տալիս

փոքրիկ մի գումար նախաճաշի համար։ Այդ մարդը, ով ուզում էր մի փոքրիկ օգնություն տալ տնազուրկին, իր համար ըսկզբունք էր արել՝ խոսքը գործի վերածելու։ Նրա արածը Աստծու մոտ գնահատելի և ընդունելի է։

Այս պատմությունը հետաքրքիր է։

«Մեծն Փիլիպպոս թագավորի ժամանակ, մի այրի կին քաղաքի դատավորներից անիրավվելով կորցնում է իր տնակը, որը գտնվում էր պալատականի մի դղյակի մոտակայքում։ Ուր որ դիմում է կինը, որին որ խնդրում է, որպեսզի իր բողոքը լսեն և լուծում տան, հաջողություն չի ունենում։ Միակ միջոցը մնում է ներկայանալ թագավորին և արդարություն խնդրել։ Ամիսներով սպասում է, մինչև որ Մեծն Փիլիպպոս թագավորը տոնական մի օր իր շքախմբով երևում է Աթենքի հրապարակում։ Այրի կինը հակառակ իր մեծության, հաջողում է ճեղքել մարդկանց բազմությունը և հասնել թագավորի մոտ։ Հազիվ սկսում է բարձրաղաղակ իր ցավը պատմել, թագավորը կոպտորեն ընդհատում է նրան. «Տիկի՛ն, հիմա քեզ լսելու ժամանակ չունեմ»։ Այս կոպիտ պատասխանից այրին խորապես վրդովված, ավելի է բարձրացնում իր ձայնը, առանց նկատի առնելու իր հանդգնության ծանր հետևանքը. «Եթե դու, ով Մեծն Փիլիպպոս, ժամանակ չունես հպատակներիդ լսելու, ուրեմն, իրավունք էլ չունես նրանց վրա թագավորելու»։ Հուզված ու հիացական մի լռություն է տիրում ժողովրդի մեջ։ Թագավորը այրի կնոջ արցունքներից զգացված, հրամայում է, որ խստորեն պատժվի անիրավ պալատականը և չքավոր այրու արդար իրավունքը վերականգնվի»։

«Ֆրանսիացի Կլաստիոս փիլիսոփային մի օր լուր են տալիս, թե մի մտավորական, որը անպատվել էր իրեն իր գրքում, հոգեպես ծանր հիվանդ է և գտնվում է ապրուստի կարոտ վիճակում։

Փիլիսոփան մտածում է իր մի բարեկամի միջոցով որոշ գումար ուղարկել իբրև օգնություն, պայմանով, որ նրան չհայտնվի իր անունը։

Հասկանո՞ւմ ես,- ասում է փիլիսոփան իր բարեկամին,- այդ մարդը այնքան մեծ չարիք է արել հրապարակով զրպարտելով ինձ, որ մեծապես իր արժանապատվությունը կվիրավորվի, երբ իմանա, որ այդ օգնությունը գալիս է նրանից ում ինքը··· զրպարտել է»։

Հիսուս Իր ներողամտության ոգով հորդորեց սիրել կյանքում տեսանելի թշնամիներին և ոչ միայն սեր ցույց տալ նրանց նկատմամբ, այլև ողորմություն անել: Իսկ Առակաց գիրքն ասում է. *«Եթե թշնամիդ քաղցած է, կերակրիր նրան, եթե ծարավ է, ջուր տուր խմելու, քանզի այդպես անելով՝ դու նրա գլխին կրակի կարծեր կդիզես, և Տերը քեզ պիտի բարություն հատուցի» (Առակ. 25:21-22):*

Մարդը մեկ քայլ է անում դեպի Աստված, իսկ Նա տասը քայլ է անում դեպի մարդը: Ինչպես Երանելի Օգոստինոսն է ասում. *«Փնտրի՛ր, գտի՛ր, սիրի՛ր Աստծուն և ինչ ուզում ես արա»:* Իսկ Աստծուն սիրողը ոչ թե վատ բան չի անում, այլ անելուց անմիջապես զղջում է և վազում է Հոր մոտ ներողություն խնդրելու: Պետք չէ հետևել որևէ մեկի փորձառությանը, որովհետև մեր Եկեղեցու Հայրերից ավելի փորձառու ոչ ոք չէ, նրանք ապրել են իրենց քարոզած կյանքը և գրքեր են գրել մեզ համար: Քրիստոնյան պրպտող, հետաքրքրվող և գտնող պետք է լինի առավել, քան կույր հավատացյալ, քանի որ այդ գտածը իր կյանքում պետք է գործածի...

Եկեք փորձենք մեր կյանքը լցնել բարի գործերով, գործեր, որոնք ցույց կտան մեր նկարագիրը ու այսպես մենք կատարած կլինենք Սբ. Գրիգոր Աստվածաբանի խոսքը. *«Քո գործերը թող ամոթի չմատնեն քո շրթների խոսքերը, որպեսզի, երբ խոսես, չասեն «Ինչո՞ւ չես անում, ինչ որ ասում ես»:* Ամեն:

ՔԱՋ ԵՎ ԶՈՀՎՈՂ ՀՈՎԻՎԸ

«Ես եմ լավ հովիվը. լավ հովիվը իր կյանքն է տալիս ոչխարների համար» (Հովհ. 10:11) :

Հովհաննես Ավետարանչի 10–րդ գլխի 11-15 համարներում խոսվում է Քաջ Հովիվի մասին, Հովիվ, ով իր անձը զոհում է ոչխարների համար:

Ո՞վ է քաջ Հովիվը: Իհարկե մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, Ով Իր երիտասարդ կյանքը զոհեց հանուն մարդկության մեղքերի մաքրման: Հեշտ է ասել, զոհեց: Պատկերացրեք, որ Հիսուս ընդամենը 33 տարեկան էր: Ինչպիսի վիճակում կհայտնվի մի մայր, երբ իր 33 տարեկան զավակը իր կյանքը զոհաբերի հանուն ինչ որ մի նպատակի: Հիսուսի խաչելության ու զոհողության ներկա էր նրա մայրը՝ Մարիամը՝ արցունքը աչքերին:

Ավետարանիչը շարունակում է. *«Իսկ վարձկանը, որ հովիվ չէ, և ոչխարներն էլ իրենը չեն, երբ տեսնում է, որ գայլը գալիս է, թողնում է ոչխարներին և փախչում է: Եվ գայլը հափշտակում է նրանց ու ցրում է. քանի որ վարձկան է, և ոչխարների համար հոգ չի անում: Ես եմ լավ հովիվը, և ճանաչում եմ իմ ոչխարներին ու ճանաչվում նրանցից» (Հովհ. 10:12-15):*

Հարց է առաջանում. *«Իսկ ո՞վ է Քահանան և Հոգևոր Հովիվը, ո՞ւմ է մեր Տերը լավ Քահանա և Հովիվ համարում»:*

Անշուշտ ինչպես շեշտեցինք ճշմարիտ և քաջ Հովիվն ու Քահանայապետը Ինքը մեր Տերն է, Ով Իր Հարությամբ և Սուրբ Հոգու գալստյամբ հավատ ու ուժ ներշնչեց Իր աշակերտներին, որոնք պատվով կատարեցին իրենց առաքելությունը՝ տարածելով և ուսուցանելով Մեծ Վարդապետի ուսմունքը՝ նույնիսկ իրենց նահատակության գնով:

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Հովսեփյանցի խոսքը Հիսուսի Անձի մասին իբրև Քաջ Հովիվ. *«Մեր Փրկիչը՝ կրոնական անձնավորության կատարելա-*

տիպը, այստեղ կենդանի կերպով կանգնած է մեր առաջ և բարոյական կատարելության, զոհաբերության ճանապարհ է ցույց տալիս։ «Հա՛յր, եթե կամենում ես, այս բաժակը ինձնից հեռացրո՛ւ, բայց ոչ թե իմ կամքը, այլ քո՛նը թող լինի» (Ղուկ. 22:42), հակիրճ, բայց սրտառուչ աղոթք, որ Աստուծո կամքի հպատակության մի սրբազան ուխտ էր։ Հիսուսի կյանքի, գործունեության ամբողջ էությունը կարելի է այդ աղոթքի մէջ ամփոփել։ Նա եկել էր՝ Իր Հոր կամքը կատարելու և դորանով հաստատելու, թե կատարելության իսկական, արքայական պողոտան Աստուծո հնազանդության ճանապարհն է» (Գարեգին Արքեպս. Հովսէփյանց, «Դեպի Լույս և Կյանք», էջ 180)։

Հիսուս Իրեն իբրև աշակերտ ընտրեց պարզ ձկնորսներին, կանչելով նրանց հետևելու Իրեն և ասաց. *«Եկեք»* և նրանք իրենց բոլոր գործերը թողած հավատացին Հիսուսին ու հնազանդվելով եկան Նրա հետևից։ Երեք տարիներ շարունակ Հիսուս նրանց համար դարձավ տիպար Քահանայապետ և Հովիվ՝ խոնարհության, ազնվութեան, հավատի, սիրո ու համբերության, որից հետո նրանք ականատեսները եղան իրենց Վարդապետի մատնության, չարչարանքներին, տանջանքներին, տեսան խաչի վրա Նրա տառապելը և սակայն ուրախությունը ունեցան ողջունելու հրեշտակների Հարության բարի լուրը։ Հիսուս Իր Հարությունից հետո քառասուն օրեր երևաց Իր աշակերտներին և հետևողներին, քաջալերեց, զորացրեց ու ապա Իր երկինք համբառնալուց առաջ նրանց պատվիրեց. *«Գնացե՛ք ուրեմն աշակերտ դարձրեք բոլոր ազգերին, նրանց մկրտեցե՛ք Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով։ Ուսուցանեցե՛ք նրանց պահել այն բոլորը, ինչ որ ձեզ պատվիրեցի…» (Մատթ. 28:19-20)։*

Ուրեմն Հիսուս իբրև ճշմարիտ Քահանայապետ և քաջ Հովիվ կանչեց Իր առաքյալներին ծառայության, նվիրումի ու հավատի զորացման և ասաց. *«Գնացե՛ք և սովորեցրե՛ք»* նույնիսկ ձեր կյանքի գնով։ Հիսուս դարձավ իրա-

պես տիպար օրինակ մեզ համար ծառայության, նվիրումի և հավատի: Հիշենք իր խոսքը. *«Մեծարանք ընդունելու չեկա, այլ՝ ծառայելու»: Ես ձեր մեջ եմ իբրև սպասավոր» (Ղուկ. 22:27):*

Մեր պատմության ընթացքին մենք էլ ունեցել ենք շատ ու շատ հերոսներ, որոնք հանուն հավատի ու հայրենիքի իրենց երիտասարդ կյանքն են զոհաբերել: Օրինակները շատ են, չենք ուզում կրկնվել, բայց վերցնենք մեր ժամանակների Արցախյան պատերազմում զոհված շատ ու շատ ազատամարտիկների, ովքեր գիտեին, ինչի համար են պայքարում, սակայն անվախ և առանց երկմտելու մտան այդ ծանր պայքարի մեջ ու հաղթեցին:

Չենք կարող չհիշել 1918 թվականի Սարդարապատի հերոսամարտից առաջ հայ զինվորներին քաջալերող՝ պայքարի անվեհեր մարտիկ՝ Գարեգին Հովսեփյանց Եպիսկոպոսին, ով զինվորներին կոչ էր անում ո՛չ թե մեռնել ու նահատակության պսակին արժանանալ, որը չպիտի օգներ Հայ ժողովրդին գոյություն ունենալու, այլ՝ *«Կռվել ու հաղթել, հաղթել ու ապրել». «Եթե պարսիկն Ավարայր էր հասել… մեր հավատն ու ազգային ինքնությունը վերացնելու, այսօրվա թշնամին մեր ազգի կեսը կոտորել և մյուս կեսն է ուզում ոչնչացնել… Փոխվել են ժամանակները, փոխվել են ազգերն ու ցեղերը: Ավարայրում մեր դեմ կանգնած բռնակալն ուզում էր ոչնչացնել մեր լեզուն ու հավատը: Թուրքը մեզ ուզում է լրիվ ոչնչացնել: Ուրեմն այստեղ նահատակությունն էլ չի կարող օգնել, որովհետև մեր նահատակությունից հետո ոչ մի հայ չի մնա, որպեսզի բարի հիշի սարդարապատյան նահատակությունը: Պատմության դասերն այլևս անզոր են այսօրվա մեր ազգային աղետի առաջ: Այսօր միայն հաղթանակն է, որ պիտի հայությանը փրկի վերահաս կործանումից: Ուրեմն, կռվենք ու հաղթենք, հաղթենք ու ապրենք, ի հեճուկս դարավոր թշնամու ցանկությանը…»:*

«Բարոյական կատարելություն և զոհաբերություն», այս է քաջ Հովիվի ուղին, որն այնքան էլ վարդերով լցված չի:

Այդ օրերից անցել են ավելի քան երկու հազար տարիներ: Հիսուսի օրհնությամբ Առաքյալները շարունակեցին քարոզել և ուսուցանել Աստծու խոսքը: Նրանցից երկուսը՝ Սբ. Թադեոս և Սբ. Բարթողիմոս Առաքյալները եկան Հայաստան և դարձան առաջին լուսավորիչները: Այսօր 21-րդ դարում մենք իբրեւ քահանաներ և Հոգևոր Հովիվներ նրանց հաջորդներն ենք:

Որպեսզի ավելի հստակ լինի, թե ինչպիսի՞ն պիտի լինի քահանան և Հոգևոր Հովիվը, ուզում եմ ձեզ պատմել Հայ Բժշկության Նահապետ՝ 12-րդ դարի հայ գիտնական Մխիթար Հերացու մասին.

«Բժշկությունը կոչում է և խիղճ» - Մխիթար Հերացի:

Իբրև բժիշկ Մխիթար Հերացին հայտնի էր իր բարությամբ և ազնվությամբ: Նրա տան դուռը բաց էր հիվանդի ու կարոտյալի առջև ու լույսը մինչև առավոտ վառվում էր: Նա լուսավոր դեմք էր հայ ժողովրդի հոգևոր և մշակութային կյանքում: Մի գիշեր. երբ բժշկապետը իր սենյակում զանազան բույսեր էր ուսումնասիրում, դուռը թակում են: Դռան առաջ կանգնած էր մի օտարական, որն ասում է. «Ներեցեք բժիշկ, որ անհարմար ժամի եմ անհանգստացնում ձեզ: Հեռուներից եմ գալիս ու ձեր բարի խորհրդի կարիքն ունեմ«: Հերացին կարծելով, թե եկողը սովորական մի հիվանդ է, ներս է հրավիրում նրան: Երբ օտարականը նստում է, բժիշկը սկսում է հարց ու փորձ անել հյուրին իր առողջության մասին:

Ես հիվանդ չեմ, բժիշկ, եկել եմ ձեզ երեք հարց տալու.

Կարո՞ղ եմ իմանալ, թէ ինչո՞ւմն է կայանում ձեր բժշկության գաղտնիքը:

Իմ բժշկությունը ոչ մի գաղտնիք էլ չունի,- պատասխանում է Հերացին,- այն ամբողջական և անշահախնդիր սեր է մարդկանց հանդեպ:

Իսկ դժվա՞ր է բժշկի աշխատանքը:

Այո՛, դժվար է, նույնիսկ երբեմն կարելի է ասել չափազանց դժվար է: Սակայն նկատի ունեցեք, որ բբժշկությունը պարտականություն չէ: Ամենից առաջ այն կոչում է եւ խիղճ:

Երրորդ և վերջին հարցս: Ինձ աշակերտ կընդունե՞ք:

Այս պահին չեմ կարող պատասխանել,- ասում է Հերացին,- մինչև որ չասեք, թե մի հիվանդի համար կարո՞ղ եք ամեն ինչից ձեզ զրկել: Կարո՞ղ եք ձեր ամենօրյա հացի փոխարեն հիվանդի համար դեղ գնել: Կարո՞ղ էք անքուն գիշերներ անցկացնել նրա անկողնի մոտ: Վերջապես կարո՞ղ եք միանգամընդմիշտ ընդունել, թե բժշկի աշխատանքը միայն պարտականություն չի, այլ սեր մարդկանց հանդեպ, նվիրում և սրբազան գործ: Եթե անկեղծ մարդ եք, ասացեք ճշմարտությունը:

Օտարականը շփոթվում է և պատասխանում.

Ես անկեղծ մարդ եմ, բժիշկ, ձեզ չեմ կարող խաբել: Ավելի լավ է ես գնամ ու շարունակեմ զբաղվել իմ արհեստով՝ տակառագործությամբ:

Մխիթար Հերացին մոտենում է, գրկում օտարականին և ասում. «Ապրեք, դուք այս րոպեին ապացուցեցիք, որ իրապէս խղճամիտ մարդ էք»:

Ուրեմն, ըստ Մխիթար Հերացու բժշկությունը կոչում է եւ խիղճ:

Մի այլ պատմություն ևս, որը նույնպես վերաբերվում է բժշկության և հետաքրքիր է.

«Հրաշալի լեզվագետ Հրաչյա Աճառյանը, որը տիրապետում էր բազում լեզուների քերականության և գիտեր 10 լեզու, իր կենսագրության մէջ պատմում է, թե երբ իր հայրը հիվանդացել է՝ բժիշկ է կանչել, որպեսզի նրան

բուժի: Մի քանի շաբաթ հետո նա առաջարկել է, որպեսզի երկու բժիշկներ ևս կանչվեն, խորհրդակցելու և եզրակացութեան գալու իր հոր հիվանդության վերաբերյալ: Քննությունից հետո նրանք երեքով անցնում են կողքի սենյակը, որը տախտակի մի պատով բաժանված էր և ինչ որ խոսեին պարզ լսվում էր: Բժիշկները խոսել են զանազան նյութերի շուրջ, բայց ոչ՛ մի բառ՝ հիվանդի մասին: Վերադառնալով նրանք հաւաստիացրել են, որ հիվանդը պիտի առողջանա…»:

Եզրակացությունը թողնում ենք ձեզ: Ամեն բժիշկ չէ որ բժիշկ է, դժբախտաբար մեր օրերում առավել ևս:

Քահանայության և հոգևոր հովվության ասպարեզը կոչում է, խիղճ և նվիրում: Սիրել մարդկանց և ծառայել նրանց հոգիների փրկության ի խնդիր՝ ավելի վեհ ու բարձր է, քան բժշկել մարդու մարմինը: Մարմինն էլ կարևոր է, բայց հոգին ավելի կարևոր է:

Եթե բժշկությունը բարձր նվիրում է պահանջում, որը մարդու մարմինը ցավից ու հիվանդությունից փորձում է փրկել ու բուժել, ապա Եկեղեցու և ժողովրդի ծառայությունը ինչքան անձնուրացություն, անշահախնդիր սեր, հավատ ու նվիրում է պահանջում Աստծու սպասավորից:

Տարիներ առաջ ես պատրաստվում էի քահանայության: Երիտասարդ Սարկավագ էի՝ 24 տարեկան: Էջմիածին քաղաքում հոգևորականներ շատ կային, բայց կար մեկը, ով շատ սիրված էր ժողովրդի կողմից, այն աստիճան, որ նույնիսկ փողոցը, ուր որ նրա տունն էր, մարդիկ առ ի հարգանս նրա կոչել էին իր անունով, հակառակ որ փողոցը մի բուլղարացի կոմունիստի անունն էր կրում: Չմոռանանք, որ իմ խոսքը 1970-ական թվականների մասին է, երբ Խորհրդային անաստված կարգերն էին տիրում և եկեղեցին ու հոգևորականությունը բավական ճնշված վիճակ ունեին: Երբ առիթ եղավ, ես նրան խնդրեցի պատասխանել ինձ հուզող մի քանի հարցերի: Առաջին հարցս. *«Ինչո՞ւ են մարդիկ ձեզ սիրում, երբ կան շատ*

հոգևորականներ, որոնց նույնիսկ չեն էլ ճանաչում, ի՞նչն է պատճառը»: Ժպտաց և փորձառու հոգևորականի շեշտով պատասխանեց. *«Միրվելու համար նախ պետք է սիրես և գործով ապացուցես, որ սերդ անկեղծ է: Սա մեկ. երկրորդ ժողովուրդը այն աղբյուրն է, որից մենք հոգևորականներս մշտապես ջուր ենք խմում, աշխատիր երբեք չկեղտոտես այդ աղբյուրը, ընդհակառակը փորձիր մաքուր պահել»:*

Երկրորդ հարցս. *«Իսկ ի՞նչ է նշանակում անձնուրաց և նվիրյալ ծառայություն»:* Նորից ժպտաց և պատասխանեց. *«Պատասխանեմ Հակոբոս Առաքյալի խոսքով. «Հավատը առանց գործի մեռած է»: Իմ դուռը բոլորի համար միշտ բաց է և ես գիշեր ու ցերեկ պատրաստ եմ այցելելու հիվանդին, օգնելու կարիքավորին, նեղյալին: Անձնուրացաբար և նվիրեալ ծառայություն չի նշանակում միայն ծիսական արարողություններով ժողովրդին ծառայել: Այո՛, մկրտությունը, պսակը, թաղումը և մյուս արարողությունները բնական կերպով մաս են կազմում մեր առաքելության, բայց մեր հիմնական առաքելությունը ժողովրդին ցույց տալն է Աստծու ճշմարիտ ճանապարհը, հավատը ու Նրա սերը: Իմ խորհուրդս է քեզ, հակառակ կյանքի հարվածներին, դժվարություններին, նեղություններին, հիշիր Հիսուսի խօսքը. «Որովհետև իմ լուծը քաղցր է և բեռը՝ թեթև» ու աղոթքով և համբերությամբ շարունակիր ծառայությունդ: Մի՛ կարծիր, թե իսկապես նվիրյալ սիրով լի քահանայի ծառայությունը այդքան հեշտ է: Ժամանակը կգա, տարիների փորձառություն կունենաս, այն ժամանակ ավելի լավ կհասկանաս»:*

Այդ օրերից անցել են ավելի քան 44 տարիներ: Ավագագույն Քահանայի խրատները ինձ համար դարձան իմ հոգևոր ծառայության հիմքը: Հիմա լավ եմ հասկանում նրա իմաստուն խրատների կարևորությունը և իմ աղոթքով մշտապես փառք եմ տալիս Աստծուն, որ այդպիսի ծառայասեր, նվիրեալ ու անձնուրաց քահանաներ մեզ՝ երիտասարդներիս համար եղան տիպար օրինակներ:

Հիմա այդ հոգևորականը չկա, վաղուց վախճանվել է, բայց նրա բարի անունը մարդկանց շուրթերին է:

Ինչպես Քրիստոս Իր առաքյալներին կանչեց և նրանք պարզ ձկնորսներից դարձան մարդկանց որսորդներ, հետաքրքիր է, որ ավելի քան հիսունինը տարիներ առաջ, ես էլ կանչվեցի ծառայության, երբ ընդամենը տասը տարեկան պատանի էի: Կյանքում ոչ մի պատահականություն չի լինում, կա Աստծու նախախնամությունը և կամքը:

Հայաստանյայց Առաքելական Մայր Եկեղեցին Աստծու սպասավորներից ակնկալում է, որ իրենց նպատակը դարձնեն ազնիվ ու նվիրյալ ծառայությունը: Այդ ճանապարհը արդեն իսկ Հիսուս Իր օրինակով ցույց է տալիս մեզ. *«Եվ մինչդեռ նրանք գնում էին, ճանապարհի վրա մեկը նրան ասաց. «Կգամ քո հետևից, ինչ տեղ էլ գնաս»: Հիսուս նրան ասաց. «Աղվեսները որջեր ունեն, և երկնքի թռչունները՝ հանգստանալու տեղ, բայց մարդու Որդին գլուխը դնելու տեղ չունի»: Մի ուրիշի էլ ասաց. «Արի՛ իմ հետևից»: Եվ սա ասաց. «Տե՛ր, հրաման տուր ինձ, գնալ նախ թաղել իմ հորը»: Հիսուս նրան ասաց. «Թող որ մեռածնե՛րը թաղեն իրենց մեռելներին, իսկ դու գնա՛ քարոզիր Աստծու արքայությունը»: Մեկ ուրիշն էլ ասաց. «Քո հետևից կգամ, Տե՛ր, բայց նախ թո՛ւյլ տուր ինձ, որ հրաժեշտ տամ իմ տանը»: Հիսուս նրան ասաց. «Ո՛չ ոք իր ձեռքը մաճի վրա կդնի և ապա հետ կնայի, եթե հարմար է Աստծու արքայությանը» (Ղուկ. 9:57-62):*

Ձեռքը մաճի վրա դնել նշանակում է Հիսուսի ծառայության մեջ մտնել: Հիսուսի կատարելությունը և տիպար օրինակ լինելը՝ Իր անսակարկ սիրո, խոնարհության ու հեզության մեջ էր: *«Իմ լուծը ձեր վրա վերցրե՛ք և սովորեցեք ինձնից, որ հեզ եմ և սրտով խոնարհ» (Մատթ. 11:29):* Քահանան իբրև հոգևոր սպասավոր իր ծառայությամբ Քրիստոսի նման հեզ ու խոնարհ պիտի լինի, խաչ պիտի բարձրանա և Հիսուս ապրի իր մեջ. *«Քրիստոսի*

հետ խաչը ելա, կենդանի եմ այսուհետև. բայց ոչ թե ես. այլ իմ մեջ ապրում է Քրիստոս» (Գաղ. 2:20),- ասում է Պողոս Առաքյալը Գաղատացիներին ուղղած իր նամակում:

Քաջ և զոհվող Հովիվը պիտի ունենա ծառայության կոչում, նվիրում, խիղճ, անսահման հավատ և սեր Աստծու ու մարդկանց նկատմամբ: Ամեն:

ԲԱՐՏԻՄԻՈՍ ԿՈՒՅՐԻ ԽՆԴՐԱՆՔԸ

«Ի՞նչ ես ուզում, որ քեզ անեմ: Վարդապետ, աչքերս թող բացվեն» (Մարկ. 10: 51):

Որպեսզի կարողանանք լիովին հասկանալ, թե այս խոսքերով, Հիսուս ի՞նչ էր ուզում ասել կույրին, որը հավատով դիմել էր նրան իր աչքերը բացելու համար, մեջ եմ բերում Մարկոս Ավետարանչի 10-րդ գլխի 46-52 համարները. *«Եվ եկան Երիքով: Եվ մինչ նա Երիքովից դուրս էր գալիս իր աշակերտներով, բազում ժողովրդով, Տիմէի որդին՝ կույր Բարտիմեոսը, նստել մուրում էր ճանապարհի եզրին: Երբ լսեց, թե անցնողը Հիսուս Նազովրեցին է, սկսեց աղաղակել և ասել. «Դավթի Որդի, Հիսուս, ողորմիր ինձ»: Եվ շատերը նրան սաստում էին, որ լռի, իսկ նա առավել ևս աղաղակում էր. «Դավթի, Որդի, ողորմիր ինձ»: Հիսուս կանգնեց և հրամայեց, որ նրան կանչեն: Կույրին կանչեցին ու նրան ասացին. «Քաջալերվիր, վեր կաց, կանչում է քեզ»: Եվ նա, դեն գցելով իր զգեստները, վեր կացավ եկավ Հիսուսի մոտ: Հիսուս նրան ասաց.«Ի՞նչ ես ուզում, որ քեզ անեմ»: Կույրը նրան ասաց. «Վարդապետ, աչքերս թող բացվեն»: Եվ Հիսուս նրան ասաց. «Գնա, քո հավատը քեզ փրկեց»: Եվ իսկույն նրա աչքերը բացվեցին, և ճանապարհին գնում էր նրա հետևից» (Մարկ. 10:46-52):*

Մարկոս Ավետարանչի այս պատմությունից կարելի է առանձնացնել երկու բան.

ա. Կույրի փափագը և խնդրանքը, որը գալիս էր Հիսուսի նկատմամբ ունեցած իր վստահությունից և հավատից:

բ. Նա խնդրում էր Հիսուսի ողորմածությունը, քանի որ հավատում էր Նրան և մտածում էր, եթե Տերը ողորմի իրեն, նաև կբուժի ու դրա համար, երբ Հիսուս նրան հարցնում է, թե՝ *«Ի՞նչ է ուզում, որ Ինքը նրա համար անի»,* նա ներքին հուզումով ու հավատով պատասխանում է. *«Վարդապետ, թող աչքերս բացվեն»:* Նա վարդա-

պետից լույս էր ուզում, լույս, որը ինքը կորցրել էր, լույս, որը իրեն հնարավորություն պիտի տար տեսնելու աշխարհի գեղեցկությունները. *«Ես եմ աշխարհի լույսը. ով իմ հետևից է գալիս, խավարի միջով չի քայլի, այլ կընդունի կենաց լույսը» (Հովհ. 8; 12),*- ասում է Հիսուս։

Կույրը զրկված էր լույսից, քայլում էր խավարում։ Նա ոչինչ չէր տեսնում, այլ միայն լսում էր, որ կան գեղեցկություններ, որոնցից ինքը զրկված էր՝ արևի լույսից, բնության հրաշքներից և նրանցից, որոնք հաճելի են մարդկանց։ Եվ երբ բարձրաձայն կանչում էր Հիսուսին. *«Դավթի Որդի, Հիսուս, ողորմիր ինձ»,* Տերը լսում է նրա՝ աղաչողի ու խնդրողի ձայնը և պատասխանում է. *«Կանչեք նրան ինձ մոտ»։* Հիսուսի շուրջը գտնվողները կույրին ասում են. *«Քաջալերվիր, վեր կաց, Նա կանչում է քեզ»,* այսինքն՝ ուրախացիր, ցնծա, քո ժամը եկել է, խնդրանքդ տեղ է հասել ու շուտով Աստված քեզ կօգնի։

Մարդկանց վրա, եթե հույս դնենք, երբեք վստահ չենք կարող լինել, որ անպայման կհասնենք ինչ որ բանի։ Իսկ Աստծու վրա հույսը դնող անձը, խելքն ու կամքը և խիղճը գործածելով, անպայման կհասնի իր նպատակին։ Ճիշտ այդպես եղավ և Բարտիմիոս կույրը։ Նա հավատաց ու հասկացավ, որ իր աչքերը կարող են բացվել միայն Աստծու շնորհիվ ու Նրա զորությամբ և Հիսուսի այն հարցմանը, թե՝ *«Ի՞նչ է ուզում, որ Ինքը նրա համար անի»,* պատասխանում է այդ կանչին մեծ հույսով ու հավատով, թե՝ *«Վարդապետ, թող աչքերս բացվեն»։*

Ես այս պահին ապրում եմ կույրի վիճակով։ Նա հույսով ու հավատով սպասում էր։ Երկար տարիների իր երազն էր, թե մի օր պիտի բացվեն իր աչքերը։ Եվ եկել էր ժամանակը, պահը, որ իր երազը իրականություն դառնար։ Ու իր այս հարցմանը, Հիսուս պատասխանում է. *«Գնա՛, քո հավատը քեզ փրկեց»։* Եվ Ավետարանիչը շարունակում է, թե՝ իսկույն նրա աչքերը բացվեցին, և ճանապարհին գնում էր նրա (Հիսուսի) հետևից»։

«Ժպտա՛ և ողջ աշխարհը կժպտա քեզ.

Մի ծեր մարդ իր 25-ամյա տղայի հետ նստում է գնացք... Տղան նստում է պատուհանի մոտ...

Երբ գնացքը շարժվում է, նա ձեռքը տանում է պատուհանից դուրս ու հանկարծ ուրախացած բացականչում է.

Հայրի՛կ, բոլոր ծառերը հետ են գնում, տեսնո՞ւմ ես…

Հայրը լսում է տղային ու ժպտում... նրանց դիմաց ամուսնական մի զույգ էր նստած ու տարօրինակ հայացքով հետևում էր երիտասարդի քայլերին... նա այդքան մեծ էր ու իրեն փոքր երեխայի պես էր պահում...

Հայրի՛կ, տեսնո՞ւմ ես լիճն ու կենդանիներին… ամպերին նայի՛ր, տես՝ ի՞նչ չքնաղ են:

Քիչ անց սկսում է անձրև տեղալ... տղան, երբ զգում է անձրևի կաթիլն իր ձեռքի վրա, կրկին ժպտում է ու ասում.

Հայրի՛կ, անձրև է գալիս, տեսնո՞ւմ ես… տեսնո՞ւմ ես հայրի՛կ…

Ամուսնական զույգը որոշում է հարց տալ ծերունուն.

Պարոն, ինչո՞ւ ձեր տղային հոգեբույժի մոտ չեք տանում: Շատ լավ մասնագետներ կան ու կօգնեն նրան...

Ծերունին, նայելով զույգին, ժպտալով պատասխանում է.

Մենք հենց հիմա հիվանդանոցից ենք գալիս... այսօր իմ տղան առաջին անգամ տեսողություն է ձեռք բերել…»:

Մի րոպե դուք ձեզ պատկերացրեք կույրի դրության մեջ: Խավար էր տիրում իր շուրջը: Նա ոչինչ չէր տեսնում: Հիսուսի հրամանով իսկույն խավարը լույսի վերածվեց: *«Ժողովուրդ, մարդիկ, սիրելիներ, ես տեսնում եմ, տեսնում եմ»,*- բարձրաձայն գոռում էր կույրը: Ուրախություն, ցնծություն, խնդություն: Տերը լույս է սփռում՝

կույրերի աչքերը բացելով։ Հիսուս ոչ միայն կույրի ֆիզիկական աչքերը բացեց, այլ նաև նրա հոգու աչքերը. *«Գնա՛, քո հավատը քեզ փրկեց»։* Եվ միանգամից բացվեցին նրա ֆիզիկական և հոգու աչքերը։

Մենք էլ շատ անգամ կույրի վիճակում ենք։ Մեր ֆիզիկական աչքերը բաց են, մենք տեսնում ենք աշխարհի լույսը, բայց դժբախտաբար փակ են մեր հոգու աչքերը, քանի որ լիիրավ աղոթքի կյանքով չենք ապրում։ Աղոթքը թեթևացնում է մարդու հոգին, մաքրում, զտում ու պարզություն է մտցնում մարդու հոգում։ Աղոթող մարդը միշտ էլ լավատես է, երբեք չի բողոքում, այլ գոհ է իր վիճակից ու Աստծուն փառք է տալիս իր ամենօրյա կյանքի համար։ Ես երբեմն զարմանում եմ, երբ մարդիկ բողոքում են իրենց կյանքից։ Կարծում եք նրանք շահո՞ւմ են այդպես բողոքելով։ Իհարկե, ոչ. ընդհակառակը այդպես անելով նրանք իրենց սրտում ու հոգում կուտակում են ավելորդ տառապանք, հոգս ու տրտմություն։ Եվ դա կաթիլ առ կաթիլ ազդում է նրանց հոգեկանի վրա։ Աստծուն փառք տալով, մենք մեզ ապահովում ենք, քանի որ Տերն է հոգում ամեն ինչ։ Մեր հույսը Նա է։

Այսօր էլ Հիսուս մեզանից յուրաքանչյուրին կարող է հարցնել. *«Զավակս, ի՞նչ ես ուզում, որ Ես քեզ համար անեմ»։* Մենք պատրաստ պիտի լինենք այս հարցին պատասխանելու համար. *«Վարդապետ, թող բացվեն մեր հոգու աչքերը»,* որպեսզի մենք սրբված, մաքրված և հավատի մեջ զորացած շարունակենք մեր կյանքը՝ ամեն օր փառք տալով Երկնավոր Հորը Իր բարիքների համար։ Ամեն։

ԲԱՐԻՔ ԱՐԱ ԿԱՐՈՏՅԱԼԻՆ

«Մի հապաղիր կարոտյալին բարություն անել, երբ քո ձեռքը կարող է օգնել նրան» (Առակ.3:27):

Այս խոսքը ես վերցրել եմ Առակաց գրքի 3-րդ գլխի 27 համարից, ուր Հիսուս մեզ ցույց է տալիս բարության եւ ողորմության ճանապարհը:

«Ի՞նչ է բարությունը, և կամ ի՞նչ է ողորմությունը: Ի՞նչ կապ կա այս երկուսի միջև: Արդյոք սրանք իրար լրացնո՞ւմ են կամ հակառակը»:

Աստված բարի է և ողորմած: Անսահման է Նրա բարությունը մեր նկատմամբ: Ամեն անգամ մեր աղոթքների մեջ խնդրում ենք, որ Աստված մեր մեղքերին թողություն տա ու ողորմած լինի մեր հանդեպ: Ընդհանրական հայրերից մեկն ասում է. *«Քո ողորմությունը թաքցրու աղքատի ծոցում, որպեսզի Դատաստանի օրը այն գտնես Քրիստոսի ծոցում»:*

Առակած գրքից վերցված իմ բնաբանը. *«Մի՛ հապաղիր կարոտյալին բարություն անել, երբ քո ձեռքը կարող է օգնել նրան: Չասես թե՝ «Գնա՛, կգաս՝ վաղը կտամ, մինչդեռ կարող ես բարությունդ անել, քանի որ չգիտես, թե վաղն ինչ է բերելու քեզ» (Առակ.3:28)* մեզ մտածելու առիթ է տալիս ու մի քանի հարցեր առաջացնում, թե ես ի՞նչ պարտավոր եմ բարություն անել կամ բարի լինել, երբ որ ամեն կողմ չար մարդիկ ավելի շատ հարգանք ու հեղինակություն ունեն, քան մենք, որ բարի ենք: Գոնե ժողովրդի մի մասը այսպես է մտածում: *«Արդյոք այսպես մտածող մարդիկ իրավացի՞ են կամ ոչ»,*- կարող է հարցնել որևէ մեկը: Իմ պատասխանը ոչ է, քանի որ Աստված բոլորին հավասար աչքով է նայում և՛ բարուն և՛ չարին:

10-րդ դարի աղոթասաց Սբ. Գրիգոր Նարեկացին ասում է. *«Ամբողջ մարդկության մեղքը եթե վերցնենք, ապա այն նմանվում է մի փխրուն հողի, որը պետք է հալվի և վերանա աստվածային անսահման օվկիանոս ողորմու-*

թյան մեջ»: Բարի գործը և ողորմությունը չափ ու սահման չունեն: Ամեն մարդ անում է իր հնարավորության սահմաններում: Հիշենք Ավետարանից Այրի կնոջ լումայի առակը, երբ Հիսուս Իր առաքյալներին ասած. *«Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ այդ չքավոր այրին ավելի շատ գցեց, քան գանձանակի մեջ մյուս բոլոր դրամ գցողները, քանի որ ամենքը իրենց ավելորդից գցեցին, իսկ նա, իր չքավորությունից, գցեց ամեն ինչ, որ ուներ՝ իր ամբողջ ապրուստը» (Մարկ. 12.41-44):* Այրի կինը ընդամենը երկու լումա էր գցել գանձանակը:

Պողոս Առաքյալը Հռոմեայեցիներին ուղղած իր թղթում ասում է. *«Մի՛ ձանձրացեք բարին գործելուց, որովհետև հարմար ժամանակին պիտի հնձեք առանց թուլանալու»:*

Այս պատմությունը հետաքրքիր է և կոչվում է *«Ճգնավորի վերարկուն»:*

Մի օր, երբ ճգնավորը մտնում է շուկա իր կողովները վաճառելու, հանկարծ աչքն ընկնում է գինետան մոտ հավաքված մարդկանց, որոնց մեջ էր նաև այն աղքատը: Այդ պահին աղքատը պատմում էր իր բաժակակիցներին հետևյալը. «Խմենք եղբայրներ, քանզի այս գինին ձեռք է բերված մի վանականի վերարկուի վաճառված գումարից, ես ձևացրեցի, թե հույժ կարիքավոր մեկն եմ և խաբելով նրանից ձեռք գցեցի այս վերարկուն»: Այս լսելով, գինուց հարբած սկսեցին բարձրաձայն ծիծաղել: Ճգնավորը լսելով այս խոսակցությունը, շատ տխրեց և վշտացավ, որ իզուր տեղն է զրկվել իր վերարկուից ու ընկավ մեծ թախիծի մեջ:

Երեկոյան, երբ տխուր նստած էր իր խցում, թմրությունից ննջում է և տեսնում մի տեսիլք: Արեգակի պես պայծառ, սքանչելի մի երիտասարդ կանգնել էր իր առջև և ասում էր. «Ինչո՞ւ ես այդպես տխրել, նայիր և տես, թե ի՞նչ է իմ հագին» և ճգնավորը նկատում է, որ իր վերարկուն էր նրա վրա, ու Տերն ասում է. «Մի՛ վշտացիր, քանի որ ինչ

տվեցիր՝ ինձ տվեցիր»: Սթափվելով քնից, ճգնավորը գոհանում է Տիրոջից և մխիթարվելով իր վշտից, մեծ ցնծությամբ փառավորում բարերար Աստծուն» (Հոգեշահ գրքերից):

Սրբակյաց Թադեոս Վիտովնիցկին նշում է, որ Երկնավոր Հայրն այնքան ներդաշնակ է ստեղծել մեր օրգանիզմը, որ առանց մեր հրամանների ու ծրագրերի այն համաչափ աշխատում է, սակայն մենք ի՞նչ ենք անում.., մեր մտքերով ու ցանկություններով ավերում ենք այդ ներդաշնակությունը: Պատկերացրեք, եթե Աստված յուրաքանչյուրին գերբնական իշխանությամբ օժտեր, արդեն քանի անգամ էինք ավերել և ոչնչացրել մեր մոլորակն ու տիեզերքը…

Նա նշում է. *«Երբ արթնանում եք, ուշադրություն դարձրեք կենդանիներին, թռչուններին, որոնք ամեն առավոտ իրենց օրը սկսում են գոհություն հայտնելով Աստծուն: Իսկ մենք արթնանալով մեր օրը սկսում ենք անգոհունակությամբ, հոգսաշատ մտքերով, ուրիշներին դատելով, թերագնահատելով: Չէ՞ որ այդ բոլորն արդեն ազդում են առողջության վրա ու խաթարում այն գեղեցիկ ներդաշնակությունը, որն Արարիչը դրոշմել է մարդու էության մեջ: Եվ մենք, փոխանակ պայծառացնելու ու ծաղկեցնելու մեր ներքին յուրօրինակ այդ հրաշքը, ավերում ենք ինքներս մեզ՝ հենվելով հողեղեն խաթարված աշխարհի ու մեղքի հույսի տապալվող սյան վրա: Արդ, միշտ գոհություն հայտնենք Աստծուն և աստվածային սիրո զորությամբ լցվենք, որպեսզի վերականգնվի մեր ներքին խաղաղությունն ու ներդաշնակությունը»:*

Հետաքրքիր է նաև այս պատմությունը, որը կոչվում է *«Թույնը»:*

«Գյուղում մի աղջիկ էր բնակվում: Ամուսնանալուց հետո տեղափոխվում է ամուսնու տուն, սակայն ոչ մի կերպ լեզու չէր գտնում սկեսրոջ հետ: Վերջինս մշտապես խրատներ էր տալիս նրան և նախատում ամեն ինչում:

Մի անգամ, վաղ առավոտյան, երիտասարդ կինը անտառի եզրին ապրող հեքիմի մոտ է գնում:

Ի՞նչն է քեզ ինձ մոտ բերել, գեղեցկուհի՛: Ուզում ես որևէ տղամարդու հմայե՞լ:

Ինձ ոչ ոք պետք չէ, ես իմ ամուսնուն սիրում եմ, բայց նրա մոր հետ ապրելն ուժերիցս վեր է:

Իսկ ինձանից ի՞նչ ես ուզում:

Խնդրում եմ, օգնիր ինձ: Որևէ թույն տուր, որպեսզի թունավորեմ նրան:

Մի՞թե դրա վրա պիտի կառուցես երջանկությունդ: Դե, ինչ արած, խղճում եմ քեզ, կտամ քո ուզած թունավոր խոտաբույսերը: Ամեն առավոտ դրանցով թուրմ կպատրաստես և որպես թեյ՝ սկեսրոջդ կհրամցնես: Բայց մի խորհուրդ պիտի տամ քեզ:

Ի՞նչ խորհուրդ: Կանեմ այն ամենն, ինչ կասես, միայն թե հնարավորիս շուտ ազատվեմ այդ օձից:

Մեր գյուղում նորություններն արագ են տարածվում և քեզ կկասկածեն: Այդ պատճառով էլ, դրանից խուսափելու համար, սկեսրոջդ հանդեպ վերաբերմունքդ փոխիր: Քնքուշ ու բարեհամբույր դարձիր, ժպտա՛: Ստիպված չես լինի երկար տանջվել:

Երիտասարդ կինն այդպես էլ վարվում է: Աքլորականչի հետ արթնանում էր, հացի խմորը պատրաստում, վառարանը վառում, շիլան եփում և թունավոր թուրմը պատրաստում սկեսրոջ համար: Եվ քնքշորեն հրավիրում նրան հրաշք թեյը համտեսելու: «Մայրիկ» էր կոչում, ամեն ինչում՝ ենթարկվում: Ամուսնու ուրախությանը չափ ու սահման չկար՝ մայրն ու կինը հարազատներ էին դարձել: Սկեսուրը հարսին անսահման սիրում էր, վերջինս էլ անկեղծ սիրով էր պատասխանում նրան: Եվ կրկին հեքիմի մոտ է շտապում հարսը և արցունքն աչքերին աղաչում.

Պապի՛կ, աղաչում եմ քեզ: Դու ամեն ինչ կարող ես: Հակաթույն տուր: Չափազանց շատ թուրմ եմ արդեն տվել

սկեսրոջս: Կմեռնի: Իսկ նա հոգատար մայր է դարձել ինձ համար:

Հանգստացի՛ր, անուշի՛կս: Ես քեզ բուրումնավետ խոտաբույսեր էի տվել, որոնցով համեղ և օգտակար թեյ էիր եփում սկեսրոջդ համար: Իսկ թույնը քո սրտում էր, բայց Աստծո օգնությամբ ազատվեցիր դրանից»:

Ինչ բարի գործ որ պիտի անենք, այսօր անենք որովհետև չգիտենք, թե վաղը ի՞նչ է բերելու մեզ: Ապրենք ամեն օրով և փորձենք մեր հնարավորության սահմաններում մի բարի գործ կատարել, գործ, որը եթե մենք չլինենք էլ, կհիշեցնի մեր գոյության մասին: Մեզ պիտի հիշեն այն սիրո ու բարի գործերի համար, որոնք մենք հիշատակ կթողնենք այս կյանքում: Եվ եթե ամեն օր անձանձրույթ աղոթենք հիվանդների, տկարների, անօգնականների, ինչո՞ւ չէ նաև մեր թանկագին ծնողների ու բանտարկյալների համար, կտեսնեք թե ինչքան հեշտ պիտի լինի հաղթահարել ամեն ինչ և կյանքը ավելի գեղեցիկ ու գրավիչ կլինի: Ամեն:

ԾՈՒԼՈՒԹՅՈՒՆԸ ՉԱՐԻՔ Է

«Ծուլությունը հատուկ է թուլամորթին, և գործ անել չսիրող մարդը քաղցած կմնա» (Առակ. 19:15):

Այս խոսքը ես վերցրել եմ Առակաց գրքի 19-րդ գլխի 15 համարից: Ինչպես նկատեցիք խոսքը ծուլության մասին է:

«Ի՞նչ է ծուլությունը, այն չարի՞ք է, թե՞՝ բարիք. օգտակա՞ր է, թե՞՝ վնասակար»:

Նախ ասեմ, որ ծուլությունը յոթը մահացու մեղքերից մեկն է.յոթը մահացու մեղքերն են՝ *հպարտությունը, նախանձը, բարկությունը ծուլությունը, ագահությունը, որկրամոլությունը (շատակերությունը), բղջախտությունը (ցանկասիրությունը) և նրանց հարակից մասերը:*

Սողոմոն իմաստունը ասում է.*»Ծուլությունը հատուկ է թուլամորթին, և գործ անել չսիրող մարդը քաղցած կմնա» (Առակ.19:15):* Նա ոչ միայն գնահատում ու գովաբանում է աշխատավորին, այլև կշտամբում ու հանդիմանում է ծույլին, ամենաթույլ արարածի հետ համեմատության մեջ դնելով նրան. *«Մրջյունի մոտ գնա, ով ծույլ, նախանձիր նրա գործերին և իմաստուն եղիր նրանից ավելի» (Առակ.6:6):*

Ծուլությունը լինելով մահացու մեղք, մի քանի չարիքների արմատն է, նույնիսկ կարելի է ասել *«Ծուլությունը առաքինության գերեզմանն է»:*

«Պողոս Առաքյալն էլ անդադար աշխատում էր ոչ միայն ցերեկը, այլև գիշերը: Սա ի հայտ է բերում նա, երբ ասում է. «Եղբայրներ, հիշեցեք մեր վաստակը և ջանքը, երբ գիշեր-ցերեկ աշխատում էինք» (Ա. Թեսաղ. 2:9): Հաճույքի և հոգևոր հանգստի համար չէ, որ նա աշխատում էր, ինչպիսիք էին եղբայրներից շատերը, այլ այնպիսի ջանք էր թափում աշխատանքի ժամին, որ օգնում էր նաև ուրիշներին: Մի մարդ, որը իշխանություն ուներ դևերի վրա՝ լինելով տիեզերալույս վարդապետ, աշխատում էր

գիշեր ու ցերեկ և մի փոքրիկ իսկ հանգիստ չէր առնում աշխատանքներից» (Սբ. Հովհան Ոսկեբերան Հայրապետ):

Աստված Ինքն էլ դատապարտել է ծուլությունը, ասելով. «Չար և ծույլ ծառա» (Մատթ 25:26): Երբ ծույլին ուզում ես մի տեղ ուղարկել, ասում է.

«Ճանապարհին առյուծ կա, հրապարակում՝ մարդասպաններ»

Ինչպես դուռը շուռ է գալիս իր ծխնիի վրա,

Այնպես էլ ծույլն է թավալվում իր մահճում:

Ծույլն իր ձեռքերը թաքցնում է ծոցում և ալարում է նույնիսկ իր բերանը տանել:

Ծույլն իր աչքին ավելի իմաստուն է թվում, քան այն անձը, որ հարստության բարի լուր է ավետում» (Առակ. 26: 13-18):

Ես ապրում եմ Բրբենկ քաղաքում և ամեն առավոտ, երբ քայլում եմ այգում տեսնում եմ մի քանի տնազուրկների (homeless), որոնք կիսամերկ քնում են գետնին: Նայում եմ ու զարմանում, թե նրանք ինչպե՞ս են դիմանում ցրտին, անձրևին, սովածության: Մենք, որ ապրում ենք մեր տներում, փափուկ անկողիններում, պաշտպանված ցրտից, անձրևից և այլ տեսակի փորձանքներից, ավելի շատ հիվանդ ենք, դժգոհ ու բողոքող կյանքից, քան՝ նրանք: Ես զրույցի եմ բռնվել նրանցից մի քանիսի հետ և փորձել եմ հասկանալ, թե ի՞նչն է պատճառը, որ նրանք հայտնվել են փողոցում, ինչո՞ւ և ինչի՞ համար: Չեմ կարողանում հասկանալ, սա իրենց համար ապրելաձև՞ է, թե՞՝ ծուլության դրսևորում:

Սուրբ Հովհան Ոսկեբերան Հայրապետը պատասխանում է այս հարցին. *«Պարապությունը և ճոխությունը ոչնչի պիտանի չեն, այլ ծառայում են միայն սնափառության և հաճույքներին: Այսպիսի մարդը արհամարհելի է թե՛ տնեցիների, թե՛ ընկերների և թե՛ բարեկամների կողմից: Արդարությամբ կարելի է ասել, որ նա բեռ է երկրի*

վրա և իզուր է ծնվել ու աշխարհ եկել: Ավելի ճիշտ, ոչ իզուր, այլ իր գլխին որպես փորձանք, իր կորստի և ի վնաս ուրիշների համար: Եվ տեսնենք, թե ի՞նչ հաճելի բան կա այդպիսի պարապ և անգործ կյանքում: Ի՞նչ ավելի տհաճ բան կա այն մարդուց, որ չգիտի ինչով զբաղվի: Ի՞նչն է ավելի ամոթալի նրանից, ի՞նչն ավելի խղճուկ: Անձն իր բնությամբ կարիք ունի շարժման և տանել չի կարող անգործությունը: Աստված այն ստեղծել է որպես գործող էակ, դրա համար էլ նա գործում է իր բնության համեմատ, իսկ անգործությունը հակառակ է նրա բնությանը: Ոչ մի այլ ամոթալի բան չկա պարապությունից և անգործությունից, դրա համար էլ Աստված մեր մեջ դրել է աշխատելու կարիքը: Անգործությունը վնասում է ամեն բան և նույնիսկ մարմնավոր անդամները: Քանզի եթե աչքը, կամ ստամոքսը, կամ որևէ մի այլ անդամ մնա անգործության մեջ՝ չկատարելով իր պարտականությունները, այնժամ այն կընկնի ծայր աստիճան հիվանդության գիրկը, բայց ոչինչ այնպես չի տուժում այդ բանից, ինչպես հոգին…»: Փառք եմ տալիս Աստծուն և ուրախ եմ, որ Աստված այնպիսի մի ժողովուրդ է ստեղծել, հանձինս հայ ժողովրդի, որն աշխատասեր է, ժրաջան, ստեղծող ու Աստվածավախ:

«Աղոթքի պտուղը և ծուլության արդյունքը.

Աշակերտն ասում է ծեր վանականին.

Աղոթում եմ, բայց իմ բարի նպատակներից որևէ մեկն իրականություն չի դառնում:

Վանականը պատասխանում է.

Նայիր, թե բարեխիղճ այգեգործն ինչպես է գործում: Նա հողի մեջ մատղաշ ծառը չի տնկում և սպասում, թե երբ է աճելու և պտուղ տալու, այլ կռանում, խոնարհվում և ծառի շուրջ հողը փխրեցնում է, այնուհետև ջրում, մշակում, հոգ տանում՝ ցուցաբերելով սեր և գոհաբանություն առ Աստված: Այդպես էլ աղոթողը նման է այգեգործի, իսկ աղոթքը՝ մատղաշ ծառի: Դու նման ես անբարեխիղճ այգեգործի, որ դալար ծառերը տնկում ես և սպասում, թե երբ պտուղներ կտան, սակայն անմշակ ծառերը չորանում են, ինքդ էլ՝ խռովք ապրում, թե պտուղներ չստացար:

Այդքանից հետո ինչո՞ւ ես Աստծուց դժգոհում, երբ ինքդ ես ծուլանում ու քո տնկած ծառերը չորացնում...

Հարատև աղոթքը հրաշքներ է գործում ու պտուղներ տալիս, որովհետև Աստված նույնպես հարատև է, և Իր պարգևն էլ կտրվի նրան, ով կհամապատասխանի հարատևության մակարդակին...» (Հովհաննես Սրկ. Մանուկյան, «Առակներ»):

Տոնական մի Կիրակի առավոտյան, Սուրբ Հովհան Ոսկեբերան Հայրապետը եկեղեցի է գնում։ Ներկաների քիչ թիվը տեսնելով հուսախաբ է լինում և հետևյալ քարոզն է խոսում.

«Այսօր շատ քչերն են եկել այստեղ։ Ինչ էլ որ լինի արդարանալի չի։ Մենք այսօր Մարտիրոսների հիշատակն ենք տոնում և ոչ մեկը չի եկել։ Ճանապարհի երկարությո՞ւնն է նրանց դժվարացրել, թե՞ պարզապես ծուլությունը։ Ինչպես հոգով ուղիղ, մտքով արթուն և կյանքով լի մարդուն ոչ մի բան չի կարող կանգնեցնել իր ճանապարհին, սրան հակառակ էլ թուլասիրտ ու ծույլ մարդու ճանապարհի վրա էլ ոչ մի արգելիչ պատճառ չեմ տեսնում։

Մարտիրոսները իրենց կյանքը տվեցին ճշմարտության համար, իսկ դուք չե՞ք կարող ճանապարհի կարճության մասին մտածել։ Նրանք իրենց կյանքը տվեցին Քրիստոսի սիրույն, իսկ դուք Նրա համար կարճ ճանապարհ գալը շա՞տ եք համարում։ Մարտիրոսների հիշատակությունն ենք տոնում և դուք ծուլությամբ ու անտարբերությամբ տա՞նն եք նստում…Արդար է, որ ներկա լինեք տեսնելու սատանայի պարտությունը, մարտիրոսների հաղթանակը, Աստծու փառավորվելը և եկեղեցու պատվով պսակվելը»։

Ծուլությունը հոգու թշնամին է։ Մի՛ ծուլացեք, այլ ձեր աշխատանքով ու արդարությամբ փառավորեք Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն։ Ամեն։

ՄԵՂՐՈՎ ԼՑՐՈՒ ՔԵԶ

«Ուզում ես բարությամբ լցվել, թափիր չարը.
Աստված ուզում է քեզ մեղրով լցնել, սակայն դու
լեղիով ես լեցուն, ո՞ւր դնի մեղրը»
Երանելի Օգոստինոս Հայրապետ

Այս խոսքը ես վերցրել եմ Ընդհանրական Քրիստոնեական Հայրերից Երանելի Օգոստինոս Հայրապետի մտածումներից: Շատ գեղեցիկ միտք է և ուսանելի:

Կարելի է Հայրապետի ամեն մի խոսքին անդրադառնալ առանձին-առանձին .

ա. «Ի՞նչ է նշանակում՝ «Եթե ուզում ես բարությամբ լցվել, թափիր չարը»:

Հիսուս ասում է. *«Երկու տիրոջ չես կարող ծառայել, մեկին պիտի ատես և կամ մյուսին՝ սիրես»:* Իհարկե, չես կարող և՛ բարի լինել և՛ չար, անպայման մեկից պիտի ազատվես: Երանելի Օգոստինոսը հստակ ասում է, եթե ուզում ես բարի լինել, ազատվիր չարից, դուրս հանիր նրան քո միջից, հեռացրու նրան, ինչպես մեր Տերը ասաց, երբ չարը Նրան փորձության ենթարկեց քառասուն օր անապատում ծոմ պահելուց հետո՝ *«Ինձանից հեռու գնա, սատանա»:* Այսպես ասելով, դու նրանից կազատվես և կլցվես բարությամբ:

բ. «Աստված ուզում է քեզ մեղրով լցնել, սակայն դու լեղիով ես լեցուն»:

Ի՞նչ են նշանակում այս խոսքերը. իրապե՞ս մենք ամբողջովին լեղի ենք ու լի դառնությամբ, ո՛չ մի քաղցր բան չկա՞ մեր մեջ:

Նայենք մեր ներկա կյանքին ու կտեսնենք, թե մեր ընթացիկ գործերը երբեմն մեզանից շատ ժամանակ են խլում: Աշխատանք, դրամ, վճարումներ, ծախսեր, մտահոգություններ, ընտանեկան կյանք, հարազատներ, քեֆ և ուրախություններ, ծննդյան տոնակատարություններ և այլն, այս բոլորը մեր կյանքը ծանրացնում են, բարձրաց-

նում մեր ճնշումը ու թեթևացնելու փոխարեն, շատ անգամ հասցնում են հուսախաբությունների, բողոքների ու նույնիսկ մահերի: *«Ինչո՞ւ, ի՞նչն է պատճառը, Աստծու տված պարգևը՝ կյանքը այդքան դա՞ռն է, լեղի՞ է»:*

Դառն է և լեղի է, որովհետև մենք չենք ապրում աղոթքի կյանքով: Դժբախտաբար այս հզոր երկրում, ուր ամեն տեսակ հաճույքներ և վայելքներ կան, պակաս է միայն աղոթքի ու ճշմարիտ հավատի կյանքը: Մարդիկ դարձել են նյութի, դրամի երկրպագուն: Նյութը միջոց լինելուց դադարել է և դարձել՝ նպատակ: Աստծու տեղ այդ ենք պաշտում:

գ.«Ո՞ւր դնի մեղրը»:

Այո՛, լեղիով ու դառնությամբ լի մեր կյանքում, ուր ամեն ինչին տեղ ունենք, բացի Աստծուց, ինչպես պիտի կարողանա Իր մեղրը դնել մեր մեջ, այսինքն՝ Իր քաղցրությունը, բարությունը, սերը, նվիրումն ու զոհողությունը: Հիսուս հստակ ասում է, եթե ուզում եք կյանքի դառնությունից ազատվել ինձ մոտ եկեք և ես ձեզ կհանգստացնեմ. *«Եկեք Ինձ մոտ, բոլոր հոգնածներդ ու բեռնավորվածներդ, և ես ձեզ կհանգստացնեմ: Իմ լուծը ձեր վրա վերցրեք և սովորեցեք ինձնից, որ հեզ եմ և սրտով խոնարհ. և ձեզ համար հանգիստ պիտի գտնեք, որովհետև իմ լուծը քաղցր է և իմ բեռը՝ թեթև» (Մատթ. 11:28-30):*

Մինչև մեղանչելը մարդը մարմնով անմահ էր: Եկեղեցու հայրերը բացատրում են, թե նախամարդու հոգին ու մարմինն այնքան նրբորեն էին միահյուսված միմյանց, որ նա օժտված լինելով այդպիսի աստվածատուր շնորհներով, առանց որևէ արգելքի շփման մեջ էր մտնում ո՛չ միայն հրեշտակների և երկնային զորությունների, այլև՝ Աստծու հետ:

Երբ մարդը անհնազանդ գտնվեց Աստծու հրամանին և արհամարհեց իր ունեցած ուրախությունը ու հետևեց փորձիչի՝ սատանայի խոսքին, ո՛չ միայն նոր ձեռքբերումներ չունեցավ, այլև կորցրեց ինչ ուներ և՛

հոգեպես և՛ մարմնապես: Նա սկսեց ապրել մարմնական, կենդանական կյանքով: Իրականության մեջ անկումը միաժամանակ նաև մահ էր մարդու համար, քանի որ կորցրեց այն բարի կենդանությունը, որը վայելում էր դրախտում:

«Աշխարհի առաջին մարդը Աստծու կողմից իրեն ուղղված «Ո՞ւր ես» հարցին իր տված պատասխանում հիշում է թե մերկ լինելու պատճառով ամաչում է:…Բարոյական մերկությունը ավելի տխուր մի պատկեր է ներկայացնում անձի ընդհանուր կեցվածքի մեջ, քան ֆիզիկական մերկությունը…: Աստծու ուղղած հարցումը մարդու համար անակնկալ էր: «Ո՞ւր ես»: Ներկա մարդու կյանքի համար որևէ տեղում իմաստ չունի ո՞ւր լինելը, այլ ի՞նչ վիճակում լինելու նյութն է շոշափում: Ի՞նչ վիճակ է տիրում մարդու ներաշխարհում… Ի՞նչ պիտի պատասխանես, երբ հանկարծ Աստված քեզ հարցնի «Ո՞ւր ես»: Պետք է հստակ մի պատասխան կարողանաս տալ անմիջապես կայծակնային արագությամբ դու քեզ բարոյական հայելու մեջ նայելով: Այդ հայելին երբեք չի խաբում քեզ, որովհետև խիղճդ սրբիչով մաքրված լինելով այնքան պայծառ է, որ իրական եղածիդ հետ կմրցի…Առաջին մարդը իր իսկ ստեղծած վախով սարսափեց Աստծու իրեն ուղղած «Ո՞ւր ես» հարցից: Կարո՞ղ ես հաստատել քո իրավիճակը բարոյական հողի վրա, ճշտելով տեղդ և հայտարարելով ո՞ւր լինելդ ամբողջ կյանքի չափ երկար նրա ճանապարհին…» (Գրիգոր Վրդ. Չիֆթչյան «Ո՞ւր ես» քարոզից):

Այս պատմությունը հետաքրքիր է.

«Անգլիայի Ջորջ թագավորն ու թագուհին մի երեկո պալատի շուրջ զբոսանքի ժամանակ տեսնում են մի փոքրիկ աղջկա, հազիվ տասնամյա, ցնցոտիներ հագած, որը երկու ձեռքով մի ափսե բռնած զգուշությամբ քայլում էր:

Ի՞նչ կա այդ ափսեի մեջ,- հետաքրքրության համար հարցնում է թագուհին՝ նրա գլուխը շոյելով:

Ոսպապուր է ծնողներիս համար, այնտեղ հեռվում ինձ են սպասում,- ասում է աղջիկը:

Թագուհին անմիջապես պայուսակը բացում է և հնչուն մի ոսկի դրամ է դնում աղջկա ափի մեջ: Աղջիկը խանդավառված շնորհակալություն հայտնելուց հետո, ավելի է արագացնում իր քայլերը: Կարճ ժամանակ անց, թագուհին հուզմունքից կարմրած ասում է թագավորին, մատով ցույց տալով աղջկան, որն արդեն հասել էր իր ծնողների մոտ: Տե՛ս, սիրելի՛ս, այդ ընտանիքին նայի՛ր, երեքն էլ ծնկի եկած աղոթում են մեզ համար»:

Բարիք և երախտագիտություն: Երկու հրաշալի քրիստոնեական մոտեցումներ Աստծու ստեղծած մարդկանց նկատմամբ: Մեկը նվիրեց, բարիք գործեց՝ օգնելու նպատակով, մյուսները՝ երախտապարտ եղան և աղոթեցին նրանց համար:

Ընդհանրական Եկեղեցու Հայրերից Սուրբ Կյուրեղ Երուսաղեմացին իր խոսքը ուղղելով նորադարձներին, հետևյալ խրատներ է տալիս նրանց. *«Դեռևս վաղուց ցանկանում էի, ով Եկեղեցու հարազատ և հույժ ցանկալի զավակներ, զրուցել ձեզ հետ այդ հոգևոր ու երկնային խորհուրդների մասին… Բայց անհրաժեշտ եմ համարում բացատրել ձեզ, թե ինչո՞ւ եք կանգնում դեպի արևուտք, ձեռքներդ պարզած և ասում. «Հրաժարվում եմ քեզանից, սատանա», կարծես թե այն ներկա է: Որովհետև աշխարհի արևմտյան հատվածը, որտեղ նայում ենք, խավարի վայրն է, իսկ սատանան ով իրապես խավարն է, խավարի մեջ իշխանություն ունի: Այդ պատճառով դեպի արևմուտք շրջվելով՝ անջատվում և հրաժարվում ենք այդ խավար ու մթին տիրակալից: Եվ ի՞նչ էր ասում ձեզանից յուրաքանչյուրը, երբ կանգնած էիք դեպի արևմուտք. «Հրաժարվում եմ քեզանից, սատանա», հրաժարվում չար ու դաժան բռնակալից. այլևս չեմ վախենում քո իշխանությունից: Քանզի Քրիստոս, մարդ դառնալով, կործանեց քո իշխանությունը, մեռնելով որպես մարդ, իր մահով վերջ տվեց*

մահին, որպեսզի ես չլինեմ մշտապես ստրկացած ու գերության մեջ: Ժխտում եմ քեզ՝ դավադիր և խորամանկ օձիդ: Հրաժարվում եմ քեզանից, քանզի նենգամիտ լինելով՝ բարեկամ ձևացար և ամեն անօրենություն գործեցիր՝ իմ նախահայրերին մղելով ըմբոստության: Հրաժարվում եմ քեզանից, սատանա, քանզի դու ես պատճառ և գործակից ամեն չարության» և շարունակում է. *«Այնուհետև կասես «Եվ քո ամբողջ պաշտամունքը»: Իսկ սատանայի պաշտամունք են անկյանք կուռքերին ուղղված աղոթքները, նրանց պատվին ճրագներ վառելը, կամ աղբյուրների և գետերի մոտ խունկ ծխելը, ինչպես ոմանք այդ արեցին, խաբվելով երազներից և դևերի ուրվականներից, այդ արեցին, կարծելով, որ բուժում կգտնեն իրենց մարմնական հիվանդություններից: Բայց դու նման բաներ չանես:*

Բացի այս ամենից, սատանայի պաշտամունք են նաև հավահմայությունը, գուշակությունը, հմայիլներին հավատալը, մոգությունը և սատանայական այլ նման բաները: Ուստի, այս բոլոր բաներից խուսափիր: Քանզի երբ արդեն հեռացել ես սատանայից և միացել Քրիստոսին, հետո նորից ընկնես այդ ամենի մեջ, դու կրկնակի պատժի կենթարկվես: Դու կզրկվես Քրիստոսից և թե քո հոգու բռնակալ սատանայից, գուցե այն բանի համար, որ նրան խիստ դառնացրել ես՝ նրանից հրաժարվելով:… Ուրեմն, զգուշացիր քեզ համար և ետ մի՛ շրջվիր ներկա կյանքի աղի գործերին ու արարքներին, քանի որ ձեռքդ դրել ես մաճի վրա, այլ բարձրացիր լեռ՝ դեպի Հիսուս Քրիստոս, որը այն վեմն է, որ հանվել է առանց մարդկային ձեռքերի և լցրել ամբողջ տիեզերքը» (Սուրբ Կյուրեղ Երուսաղեմացի, «Կոչումն Ընծայության» գրքից):

Հրաշալի խոսքեր ու խրատներ են: Այսօրվա երիտասարդներն էլ պիտի լսեն Սուրբ Կյուրեղ Հայրապետի այս խոսքերը ու հետևեն դրանց, քանի որ սատանան միշտ գործում է ամեն ժամանակ:

Այսօր քանի՞ հոգի է աղոթքի կյանքով ապրում։ Քանի՞ հոգի է աղոթում իր հիվանդ եղբոր, տարիներով անկողնուն գամված իր ընկերոջ, դժբախտությունների մեջ իր կյանքը անցկացնող հարազատի, քաղցկեղով տառապող մեր հայրենակցի և վերջապես դարիս թունոտ ծխախոտի ու խմիչքի մոլությամբ տառապող մեր հարևանի կամ ընկերոջ համար։ Քանի՞ հոգի։ Բոլորս էլ լավ գիտենք, որ տխուր է իրականությունը։

Բարեբախտաբար կան դեռևս նվիրյալ ու Աստծուն հավատարիմ մարդիկ, ովքեր իրապես ապրում են աղոթքի կյանքով և օրինակ են մեզ բոլորիս համար։ Այդպիսիների աղոթքի շնորհիվ Աստված դեռևս համբերում է, բայց Նրա համբերությունն ու բարկությունն էլ սահման ունեն։ Չմոռանանք հիշել Սոդոմ Գոմորն ու աշխարհի կործանումը ջրհեղեղով։

Եկեք ուրեմն քայլենք Աստծու ճանապարհով, ո՛չ միայն աղոթենք, այլ ապրենք աղոթքի կյանքով, բարի գործեր կատարենք, որպեսզի չարը՝ սատանան մեզ կործանման չտանի, սիրենք և օգնենք ու հոգատար լինենք մեր նմանի նկատմամբ։ Ամեն։

ԱՆԿԵՂԾՈՒԹՅՈՒՆ

«Քո անձը բոլորին օրինակ դարձրու բարի գործերի համար, ուսուցման մեջ պահիր անկեղծություն, սրբություն, պարկեշտություն, ողջամիտ խոսք, պարսավանքի տեղի չտվող, որպեսզի, ով որ հակառակվի, ամոթով մնա և մեր մասին ասելու որևէ չար բան չունենա» (Տիտոս 2:7-8):

Այս խրատները Պողոս Առաքյալը ուղղել է իր աշակերտ Տիտոսին վերջինիս ուղղված նամակի 2-րդ գլխի 7-8 համարներում, ուր նա հատկապես շեշտը դնում է բարի գործերի վրա և կարևորում է, որ իր աշակերտը իր անձը դարձնի իբրև օրինակ՝ անկեղծության, սրբության, պարկեշտության, ողջամիտ խոսքի, որպեսզի հակառակորդները եթե փորձեն քննադատել, ամոթով մնան և չկարողանան որևէ չար բան ասել:

Բոլոր խրատները լավ են՝ սրբությունը, պարկեշտությունը, ողջամիտ խոսքը, սակայն ես այսօր ընտրեցի խոսել անկեղծության մասին.

«Ի՞նչ է անկեղծությունը, ինչո՞ւ պետք է անկեղծ լինենք, ի՞նչ է տարբերությունը անկեղծ մարդու և կեղծավորի միջև»:

Անկեղծության գլխավոր օրինակը Ինքը՝ մեր Տերը եղավ: Այդ պատճառով Պետրոս Առաքյալը հանձնարարում է. *«Իսկ եթե բարիք գործեք և չարչարվեք ու համբերեք, որովհետև այդ բանի համար կոչվեցիք. քանի որ Քրիստոս էլ ձեզ համար մեռավ և ձեզ օրինակ թողեց, որ իր հետքերով գնաք, նա, որ մեղք չգործեց, և նրա բերանում նենգությունը տեղ չգտավ, նա, որ նախատվելով՝ փոխարենը չնախատեց, չարչարվելով՝ չսպառնաց, այլ հանձնվեց արդարությամբ դատողին…» (Ա. Պետ. 2:21-23):*

Դժբախտաբար այսօր աշխարհն այնպիսին է, որ ավելի շատ կեղծավորներն են տեղ գրավում զանազան ասպարեզներում և կարծեցյալ առաջընթաց են ապրում:

Նրանք նման են խավարի, որոնք ուր որ գնում են իրենց հետ տանում են տխրություն, սառնություն և խառնակչություն: Իսկ անկեղծ մարդը, ուր որ գնում է իր հետ տանում է՝ սեր, պարկեշտություն, ողջմտություն, լույս, ջերմություն և արդարություն:

Անկեղծությունը վեհ առաքինություն է, որը կարող է մարդու կյանքում շատ չարիքներ խափանել: Այն բխում է մաքուր նկարագիր ունեցող մարդու սրտից:

Ընտանիքները խաղաղ ապրելու համար կարիքն ունեն անկեղծության: Իր ամուսնու հանդեպ անկեղծ սեր ունեցող կինն է, որ իր տունը կարող է երջանիկ բույնի վերածել: Իր կնոջ նկատմամբ անկեղծ սեր ունեցող ամուսինն է, որ կարող է օժտել իր ընտանեկան բույնը խաղաղությամբ և զարդարել այն բազմապիսի առաքինություններով: Այսպիսի մթնոլորտի մեջ է, որ զավակները ճիշտ կրթություն կստանան և քրիստոնեական մաքուր նկարագիրը կկերտվի նրանց մեջ:

Անգլիացի նշանավոր գրող Վիլյամ Շեքսպիրը գրում է. *«Անկեղծ մարդու խոսքը՝ պատգամ է, սերը՝ անկեղծ ու մտածումը՝ անարատ է, արցունքները սրտից բխած մաքուր պատգամավորներ են, իսկ սիրտը՝ խարդախությունից այնքան հեռու է, ինչքան երկինքը երկրից»:*

Մարդիկ հաճախ իրենց առօրյա գործերում ավելորդ են համարում անկեղծությունը: Ոմանք էլ չեն հավատում կյանքում անկեղծությանը: Այս համոզումը ունեցող մարդկանց խիղճը մթնած է, խավարի մեջ է:

Այս պատմությունը բարի գործերի մասին է. ուսանելի է և օրինակելի.

«Բրայան Անդերսոն անունով մեկը երթևեկում էր մայրուղիով իր հին «Ֆորդով», երբ նկատեց մի անսարք «Մերսեդես», որի կողքին տարեց կին էր կանգնած: Նա կանգ առավ և բարեհամբույր ժպտալով առաջարկեց իր օգնությունը. «Միգուցե ես կարողանա՞մ ինչ-որ բանով օգնել ձեզ»: Պարզվեց, որ ընդամենը անիվն էր ծակվել: Բրա-

յանը նրան առաջարկեց սպասել իր մեքենայում: Նա փոխեց անվադողը, չնայած այդ ընթացքում շատ կեղտոտվեց և կոտրեց մատը: Երջանիկ կինը չգիտեր ինչպես շնորհակալություն հայտներ իր փրկչին: Նա գումար առաջարկեց, բայց Բրայանը հրաժարվեց, միայն խնդրեց. «Ուղղակի դուք էլ օգնեք առաջին պատահած մարդուն, ով օգնության կարիք կունենա»:

Տղայի արարքից տպավորված, կինը շարունակում է իր ճանապարհը: Մոտակա քաղաքում նա կանգ է առնում մի սրճարանի մոտ՝ մի բաժակ սուրճ խմելու: Ներսում աղմկոտ էր, բայց երիտասարդ մատուցողուհին այնպիսի ժպիտով ընդունեց կնոջը, որ նա որոշեց մնալ: Խմելով իր սուրճը՝ կինը հետևում էր մատուցողուհուն, որը հազիվ էր հասցնում, բայց բոլորի հետ բարեհամբույր էր: Ուշադիր նայելով՝ կինը նկատեց, որ աղջիկը նաև հղի է:

Պարզ էր, որ աշխատանքը շատ ծանր էր աղջկա համար: Այդ պահին կինը հիշեց իրեն օգնող տղայի խոսքերը և որոշեց գոնե ինչ-որ կերպ օգնել այդ աղջկան: Նա անձեռոցիկի վրա ինչ-որ բան գրեց, վրան դրեց սուրճի համար գումարը և դուրս եկավ սրճարանից: Աղջիկը մոտեցավ սեղանին, գտավ գրությունն ու գումարը: Այնտեղ գրված էր. «Տեսնում եմ, որ քեզ հեշտ չէ, դրա համար որոշեցի օգնել: Դու ինձ ոչինչ պարտք չես, ուղղակի դու էլ մի բարի գործ արա մեկ ուրիշի համար: Թույլ մի տուր, որ այս բարի գործերի շրջանակը քեզանով ավարտվի»: Անձեռոցիկի տակ կար ևս 400 դոլար: Այս ամենից ոգևորված, աղջիկը մեծ ուժով լցվեց: Նրան և իր սիրելիին իրոք անհրաժեշտ էր այդ գումարը, քանի որ նրանք փոքրիկի էին սպասում: Աղջկա հերթափոխն ավարտվեց: Նրան, ինչպես միշտ, դրսում սպասում էր իրեն շատ սիրող ամուսինը: Փաթաթվելով ամուսնուն՝ աղջիկը շշնջաց նրա ականջին. «Ես սիրում եմ քեզ, Բրայան Անդերսոն… Նրա ամուսինը վերևի կնոջ մեքենայի անիվը փոխող մարդն էր»:

Այս պատմությունը ևս մեկ անգամ ապացուցում է այն փաստը, որ երբ բարի գործ ես անում, այն միշտ հարյուրապատկված ետ է վերադառնում: Փորձեք դուք էլ օրվա ընթացքում բարի գործեր կատարել:

Անկեղծությունը զգացմունքի ցուցիչ է: Այն շատ արագ մաղում է այն մարդկանց, ովքեր մեզ պետք չեն, ընդ որում՝ կյանքի բոլոր իրավիճակներում: Միշտ շրջապատիր քեզ այնպիսի մարդկանցով, որոնց հետ ուզում ես անկեղծ լինել ու բաժանվիր նրանցից, որոնց հետ հարաբերություններդ անկեղծ չեն:

Ուինսթըն Չրչիլը 1940-ին Չեմպըրլենում ի պատիվ իրեն տրված ճաշկերույթին այսպես է արտահայտվել. *«Մարդու միակ ուղեցույցը իր խիղճն է, իսկ մտքում միակ վահանը՝ իր ուղիղ գործերն ու անկեղծությունն են: Անկեղծության վերացումով աշխարհում սերն էլ կվերանա»:*

Կյանքում իրական երջանկությունը անկեղծությունն է: Անկեղծ մարդու խիղճը խաղաղ է, քանի որ խիղճը Աստվածային է և կարևոր արժեք ունի:

Անկեղծությունը հոգեկան մի վիճակ է, որը սակայն մարդու հետ չի ծնվում: Մարդը դաստիարակվում է նրա համար, սովորում անկեղծության սկզբունքները և հագնում է այն մորթի և ոչ թե զգեստի նման:

Եկեք անկեղծ լինենք մեկս մյուսի նկատմամբ, չկեղծենք, բարի գործեր անենք, առավել ևս ամեն օր աղոթքի մեջ անկեղծ ու մտերմիկ զրույց ունենանք Աստծու հետ, պատմենք Նրան մեր օրվա անցուդարձը, մեր կատարած գործերը, ընտանեկան խընդիրները, շրջապատի հետ մեր հարաբերությունները, մի խոսքով ամեն ինչ անկեղծորեն ու սիրով պատմենք Նրան: Թակենք Նրա դուռը՝ առանց հոգնելու: Հավատացեք Նա միշտ և ամեն պահի պատրաստ է մեզ լսելու, օգնելու և պահապան լինելու: Ամեն:

ԽՂՃՄՏԱՆՔ

«Մաքուր խղճմտանք ունեցեք, որպեսզի այն բանով, որ չարախոսում են ձեր մասին, ամոթահար լինեն նրանք, որ բամբասում են ձեր բարի ընթացքը ի Քրիստոս»
(Ա. Պետ. 3:16):

Այս խոսքը ես վերցրել եմ Պետրոս Առաքյալի Ընդհանրական առաջին նամակի 3-րդ գլխի 16 համարից, ուր Առաքյալը խոսում է խղճի կամ խղճմտանքի մասին։

«Ի՞նչ է խիղճը, այն աստվածայի՞ն է, թե՞ մարդկային, ովքե՞ր են խիղճ ունեցողները և անխիղճները»:

Խիղճ կամ խղճմտանք նշանակում է սրտի գիտակցություն։ Մարդու մեջ խղճի արձագանքը Աստծու ձայնն է։ Քրիստոնեական հասկացողությամբ խիղճ ունեցողը Քրիստոսին է պատկանում, որը տեսնում, լսում ու կատարում է Նրա պատգամները և նրանով էլ առաջնորդվում է։ Խղճմտանքը ինքնին առանց բոցի մի լույս է, որը լուսավորում է մարդու միտքը, սիրտը, հոգին ու գործած արարքները։

Սխալը սրբագրելը իմաստություն է։ Ավետարանում կան զանազան դեպքեր, երբ անհատներ սխալները են գործել, սակայն խղճալով իրենք իրենց, փորձել են սրբագրել դրանք. ինչպես՝ Կայենը, ով նախանձից սպանեց իր եղբորը՝ Աբելին, Հուդան, ով մատնեց իր Վարդապետին՝ Հիսուսին, Տրդատ թագավորը, ով հեթանոս լինելով՝ սպանեց Հռիփսիմյանց կույսերին և բանտարկել տվեց Սբ. Գրիգոր Լուսավորչին, Սողոսը, ով հալածում էր քրիստոնյաներին, Դամասկոսի ճամբին Հիսուսին տեսավ ու դարձի եկավ ու դարձավ Պողոս Առաքյալ և այլն։

Անխիղճ մարդը բարոյապես կենդանի մի մեռել է։ Նա չի կարող Քրիստոսին ունենալ իր մեջ, քանի որ Նա լույս է, իսկ անխիղճը քայլում է խավարում։

Այս պատմությունը ուսուցողական է.

ՎԱՃԱՌԱԿԱՆԻ ԽԻՂՃԸ - ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆ

«Գյուղացիներից մեկը իր միանձար որդուն մի հարուստ վաճառականի մոտ հինգ տարով ծառայության է տալիս: Գյուղացին քանի որ մաքուր ու ազնիվ մարդ էր, մտածելով, որ վաճառականը նույնպես այդպիսին է, վճարումը թողնում է նրա խղճին:

Տարիներն անցնում են և գյուղացու տղան դառնում է ճարպիկ վաճառական, այն աստիճան, որ շատերը նրան իրենց մոտ ծառայության են կանչում բավական մեծ գումարով, սակայն տղան քանի որ իր հոր զավակն էր, հարգում է նրա պայմանը ու սպասում, որ հինգ տարին լրանա: Հինգ տարին որ լրանում է՝ գյուղից, իր մորից նամակ է ստանում, թե. «Հայրդ մերձիմահ հիվանդ է, քո հաշիվներդ տիրոջդ հետ վերջացրու և եկ: Փողի համար որքան որ կտա՝ չհակաճառես, որովհետև հայրդ քո վարձի համար թողել է տիրոջդ խղճին, որքան կտա՝ կվերցնես, շատ թե քիչ»:

Որդին շատ է տխրում այդ նամակի վրա և երկար մտածելուց հետո գնում է տիրոջ մոտ ու ասում. «Մորիցս նամակ եմ ստացել, թե՝ հայրս մերձիմահ հիվանդ է, հաշիվներդ վերջացրու և է՛կ»:

Վաճառականն առանց երկար մտածելու ասում է՝ գնա՛, ազատ ես:

Գործակատարը վրդովվում է, թե՝ «Պարո՛ն, բա ես հինգ տարի ծառայել եմ քեզ, թե ինչպես եմ ծառայել քեզ, այդ Աստված գիտե, վերև՝ Աստված, ներքև՝ դուք, հայրս մերձիմահ հիվանդ է, մեռնում է, իմ հաշիվս տվե՛ք գնամ»:

«Ի՜նչ հաշիվ, ի՜նչ Աստված, քեզ կերցրել, խմացրել և փեշակ եմ սովորեցրել, էլ ի՞նչ ես ուզում, քեզ ոչ մի կոպեկ չեմ տա, որտեղ ուզում ես գնա»:

Ահա այսպիսի պատասխան է տալիս անխիղճ վաճառականը: Այդ ժամանակներում քաղաքում մի այսպիսի սովորություն է լինում: Եթե մեկը մահանում է, թաղման օրվա մասին բարեկամներին ո՛չ թե ննջեցյալի տերն է հայտնում, այլ՝ ծխատեր քահանան: Բոլոր ծախսերը կա-

տարելուց հետո, քահանան ընդհանուր հաշիվը ներկայացնում է ննջեցյալի տիրոջը:

Գյուղացու որդին տեսնում է, որ իր տերը խիղճ չունի, մտածում է, թե նա արդեն իր համար մեռած է ու գնում և հայտնում է այդ մասին քահանային: Դե ինչպես կարգն է, քահանան ամեն պատրաստություն տեսնում է և թաղման օրվա մասին հայտնում վաճառականի բոլոր բարեկամներին ու ընկերներին և երեկոյան գնում է վաճառականի տուն: Զարմանում է, երբ տեսնում է, որ նա պատշգամբում նստած թեյ է խմում, ոչինչ չի ասում, նստում է ու ինքն էլ է նրա հետ թեյ խմում:

Քահանայի հետ նստած ժամանակ հերթով մարդիկ գալիս ու գնում են, առանց մի բան ասելու: Վաճառականը զարմանում ու գժվում է, մինչև որ քահանան բացատրում է նրան եղելությունը: Այս իմանալով վաճառականը բարկացած բողոքի է գնում թագավորի մոտ և ասում, որ իր գործակատարն ուզում էր իրեն ողջ-ողջ թաղել, խնդրում է մի դատաստան:

Կանչում են գործակատարին և նա պատմում է ամբողջ եղելությունը, որ իր տերը խիղճ չունի, ուրեմն իր համար մեռած է: Թագավորը լսում է ու դահիճներին ասում, որ նրան տանեն կախելու:

Գործակատարի բացակայության թագավորը երեք անգամ հարցնում է վաճառականին, թե իրեն բան չունի՞ ասելու և նա ոչ մի պատասխան չի տալիս:

Թագավորը մարդ է ուղարկում դահիճների մոտ, որ տղային ետ բերեն՝ չկախեն և վաճառականին տանեն կախելու:

Այդ ընթացքում թագավորը նույն հարցը տալիս է տղային, թե՝ էլ ուրիշ ասելու բան կամ գանգատ չունի՞ տիրոջ վրա:

Առաջին երկու անգամը տղան ոչ մի պատասխան չի տալիս:

Երբ թագավորը երրորդ անգամ է հարցնում,- տղան լացակումած պատասխանում է.

Տե՛ր արքա, ես խղճում եմ նրա զավակներին. մընում եմ նրանց դրության մեջ: Նրանք պիտի լացեն, որ իրենց հորը կենդանի թաղել ենք: Բաց թողեք նրան, ես ոչ մի պահանջ չունեմ նրանից ու հրաժարվում եմ որևէ տեսակի վարձատրությունից:

Թագավորը տեսնելով գործակատար տղայի ազնըվությունը, շատ է ազդվում և հրամայում է, որ վաճառականին ետ բերեն, չկախեն, բայց կանչել է տալիս քաղաքի հայտնի վաճառականներին, որպեսզի հարուստի կարողությունը չափեն ու կիսեն և կեսը հանձնում է գործակատարին: Արդար վճիռ»:

Անխիղճ մարդու դատաստանն էլ այս պիտի լինի:

Պողոս Առաքյալը Կորնթացիներին ուղղած իր երկրորդ նամակում ասում է . *«Քանզի մեր պարծանքն այս է. մեր խղճմտանքի վկայությունը, այն որ սրբությամբ ու Աստծու ճշմարտությամբ և ոչ մարմնավոր իմաստությամբ, այլ Աստծու շնորհքով ենք ընթացել աշխարհում» (Բ. Կորնթ. 1:12);*

«Մարդու բարքը ներքուստ ուղղվում է խղճից և արտաքուստ՝ օրենքից; Որովհետև եթե խիղճը, թյուր կամքից թելադրվելով, կռվում է ընդդեմ ուղիղ բանականության, օրենքը հանդիմանելով սանձում է նրան ու հնազանդության բերում: Խիղճը, իբրև բնության կողմից հաստատված արդար դատավոր և օրենքը՝ իբրև Աստծուց հաստատված արտաքին իրավար…: Երկուսն էլ՝ խիղճն ու օրենքը կարևոր են՝ մարդկանց առաջնորդելու և հասցընելու համար առաքինության՝ իբր մոտակա նպատակի և դրանով էլ՝ երջանկության, իբրև վերջնական նպատակի: Որովհետև ըստ առածի. «Աստված և բնությունը երբեք հենց այնպես չեն գործում…», ասում է Պողոս Պատրիարք Ադրիանապոլսեցին և շարունակում է.

«Խղճահարությունը չար բան է, բայց ավելի չար է անխիղճ լինելը: Ուստի պետք է խղճմտանավոր լինել, այսինքն՝ իբրև փոքրոգի ամեն ինչից չվախենալ, իբրև հանդուգն՝ ամեն ինչին չվստահել, այլ իբրև արի՝ չվախենալ, ուր պետք չէ, և վախենալ, ուր պետք է…:

Մարդու խիղճը նման է շան, որն օտարների վրա հաչում ու նրանց հալածում է, իսկ ծանոթներին քծնում է ու շողոքորթում: Որովհետև երբ մեկը որևէ չար բան է խորհում կամ գործում, խիղճը շուտով հաչում ու ջանում է չարը հալածել՝ իբրև մարդու բնությանն օտար ու թշնամի մեկի: Իսկ երբ մտքում ելումուտ գործելուն չարը տակավ առ տակավ ընտելանում է, այնուհետև խղճմտանքը նրա հետ իբրև ծանոթի հետ է վարվում ու հանդիմանելուց դադարում, այդ պատճառով էլ մարդը համարձակ գլորվում է ամեն տեսակ մոլորությունների մեջ, որոնցից նախկինում, խղճից տանջվելու պատճառով, խուսափում էր: Ուստի պետք է սկզբից ևեթ ջանալ որևէ չարի տեղի չտալ ու խիղճը միշտ արթուն պահել, որպեսզի մարդը չգահավիժի չարիքների խորխորատները» («Խրատի թանգարան»):

Այս պատմությունը կոչվում է *«Խիղճը»*.

«Մի վաշխառու, կիզիչ արևից հոգնած, քայլում է չոր տափաստանով: Ճանապարհի եզրին, թփուտների մեջ, նկատում է մի երեխայի, որը նվաղած ու ցածրաձայն ջուր էր խնդրում:

Վաշխառուն մտքում հաշվարկում է, որ եթե այս երեխային ջուր տա, ապա իր ունեցած ջրի պաշարն իրեն չի բավականացնի ամբողջ ճանապարհին և արագ անցնում է: Որոշ ժամանակ անց տափաստանում անցնող հեծյալ զինվորներ են մոտենում վաշխառուին ու ասում, որ թագավորի որդուն են փնտրում և ով գտնի այդ տղային, մեկ պարկ ոսկի պարգև կստանա:

Վաշխառուի սիրտը սկսում է արագ թրթռալ: Մեծ փութաջանությամբ շրջվում է և գալիս հասնում այն թփու-

տին, ուր երեխան էր ընկած: Հապշտապ թփերի ճյուղերով ծածկում է տղային, որպեսզի ճանապարհով սլացող հեծյալները, ոչինչ չնկատելով, անցնեն: Այնուհետև իր պայուսակից հանում է ջուրը և խմեցնում տղային՝ ուրախությամբ ասելով. Խմի՛ր, խմի՛ր, ինչքան կարող ես. դու ինձ համար շատ թանկ ես, քանի որ թագավորի որդին ես: Տղան խմում է ջուրը, ուշքի գալիս ու պատասխանում.

Ես թագավորի որդին չեմ, այլ քո խիղճն եմ, ինչքան էլ ինձանից փախչես, ինչքան էլ ինձ անտեսես, մեկ է, ուր էլ գնաս ու պտտվես, վերջում ինձ մոտ ես գալու ու մեղքերիդ համար պատասխան ես տալու:

Այս ամենն ասելով՝ տղան, ինչպես հողմը, անհետանում է, իսկ այլայլված ու շփոթմունքի մատնված վաշխառուն հուսահատ գլուխն է բռնում.

Ջուրս խմեց, հացս կես արեց, ես ինչպես պիտի անցնեմ էս տափաստանը...» (Հովհաննես Մանուկյան, «Առակներ»):

Պողոս Պատրիարքի խոսքերը իբրև վերջաբան. *«Ով իր խղճմտանքի դեմ է գործում, չի կարող նրա խայթոցից զերծ լինել. խղճի խայթը մահվանից էլ խիստ է. մահը մի անգամ է մեռցնում, իսկ խղճի խայթը՝ ամեն ժամ: Ուստի ով իր խիղճն իբրև իր անձի անխաբ դատավոր ունի և նրա օրենքներին ու հրամաններին հնազանդվում է, սրտի ներքին տանջանքներից ազատ ու խաղաղ է մնում»:*

Հետևենք Պատրիարքի խրատին ու խղճով փորձենք բարի և արդար գործեր կատարել, որպեսզի հանգիստ ու խաղաղ սրտով շարունակենք մեր կյանքը: Ամեն:

ՍԻՐԵԼ ՄԵՐ ԹՇՆԱՄԻՆԵՐԻՆ

«Բայց դուք սիրեցե՛ք ձեր թշնամիներին և բարությո՛ւն արեք ձեզ ատողներին ու փո՛խ տվեք նրան, ումից հետ առնելու ակնկալություն չունեք: Եվ ձեր վարձը շատ կլինի, և դուք Բարձրյալի որդիները կլինեք, որովհետև նա բարեհաճ է չարերի և ապերախտների հանդեպ: Գթասի՛րտ եղեք, ինչպես որ ձեր Հայրը գթասիրտ է» (Ղուկաս 6:35-36):

Հետաքրքիր խոսքեր են չէ՞, բայց նաև գուցե՝ անհասկանալի. *«Ի՞նչ է նշանակում սիրել մեր թշնամիներին, ո՞վ է մեր թշնամին»,* եթե ոչ չարը՝ սատանան: Արդյոք ճի՞շտ է կատարել այս խոսքը ու սիրել չարին: Մեր Տերը սակայն ուրիշ թշնամիներ նկատի ունեցավ: Տեսնենք թե որո՞նք են դրանք:

Առաջին հերթին ամենակարևոր թշնամին պետք է փնտրենք մեր ներքին աշխարհում: Պետրոս Առաքյալը իր Ընդհանրական Թղթում ասում է. *«Սիրելիներ… աղաչում եմ ձեզ, որ հեռու մնաք մարմնավոր ցանկություններից, որոնք պայքարում են հոգու դեմ» (Ա. Պետրոս 2:11):*

Հիսուս Իր ներողամտության ոգով հորդորեց սիրել կյանքում նաև տեսանելի թշնամիներին և ոչ միայն սեր ցույց տալ նրանց նկատմամբ, այլև ողորմություն անել. *«Եթե թշնամիդ քաղցած է, կերակրի՛ր նրան, եթե ծարավ է, ջո՛ւր տուր խմելու, քանզի այդպես անելով՝ դու նրա գլխին կրակի կարծեր կդիզես, և Տերը քեզ պիտի բարություն հատուցի» (Առակ. 25:21-22):*

Հաճախակի խոսակցության ընթացքում լսում ենք թերահավատ մարդկանցից հեգնանքով ասված զանազան արտահայտություններ Հիսուսի խոսքերի մասին. *«Ով խփում է քո ծնոտին, նրան մյո՛ւսն էլ մոտեցրու»:* Պատկերացնում ենք այդպիսի մարդկանց քմծիծաղը, որի միջից ամբողջ էությամբ երևում է նրանց չար սիրտն ու հավատի պակասությունը: Մարդկանց սահմանափակ ուղեղն ու

մտածելակերպը թույլ չեն տալիս, որ նրանք լիովին հասկանան Աստծու պատվիրանը: Հին Կտակարանում տարածված է այս խոսքը. *«Աչքի դեմ՝ աչք, ատամի դեմ՝ ատամ»,* մի նշանաբան, որն ավա՛ղ, մարդկանց համար շատ ավելի նախընտրելի ու սիրելի էր ու է մինչև այսօր:

Ավելի հեշտությամբ ըմբռնելու համար մեր Տիրոջ այս պատվիրանը, շատ հեռու գնալու պետք չունենք, բավական է միայն հետևենք Նրա երկրային կյանքին: Հիսուս քարոզում էր միշտ խոնարհություն, ներողամտություն, բարություն, անշահախնդրություն և ոչ միայն պարզապես քարոզում էր, այլև Ինքը հրաշալի օրինակ էր հանդիսանում: Կարող ենք հիշել Նրա մատնությունը, չարչարանքը, զրկանքները, հալածանքները, անարժան ու անտեղի անպատվություններն ու վերջապես՝ խաչելությունը: Նա առանց բողոքի, դժգոհության, համբերությամբ տարավ այս բոլորը: Ավելին, նույնիսկ Իր երկրային կյանքի վերջին րոպեներին, խաչի վրա ներեց բոլոր նրանց, ովքեր տանջել ու չարչարել էին Իրեն. *«Հայր, ների՛ր դրանց, որովհետև չգիտեն, թե ինչ են անում» (Ղուկաս 23:34):*

Սակայն այս բոլորի կողքին, մենք հիշում ենք, թե ինչ արեց Հիսուս, երբ տեսավ Իր Հոր աղոթքի Տունը՝ Տաճարը առևտրի կենտրոն դարձած: Նա խարազանը Իր ձեռքը վերցնելով, առանց խնայելու դուրս վռնդեց բոլոր առևտրականներին Իր Հոր Տնից, ասելով՝ *«Իմ տունը պետք է աղոթքի տուն լինի, իսկ դուք ավազակների որջերի եք վերածել այդ» (Ղուկաս 19:46):*

Երբ մարդկանց չարագործություններն ուղղված էին Իր Անձի դեմ, բոլորին ներեց, սակայն չհանդուրժեց, երբ պղծվում էր Սրբությունը:

Ահա թե մենք ինչպես պիտի շարժվենք: Եթե մեկը մեր հանդեպ սխալ կամ անարդար քայլ է առնում, նույն ձևով պատասխանելը կամ վերաբերվելը միայն թշնամություն ու կռիվ պիտի առաջացնի: Իսկ ներողամտությունն ու մեծահոգությունը խաղաղություն պիտի սերմանեն: Եթե ընկերոջդ կողմից ստացած վիրավորանքիդ նույն կերպ չպատասխանես, նրան ակամա քո երկրորդ ծնոտը մոտեցրած կլինես;

Սա վերաբերվում է մեր անձնական կամ առօրյա կյանքին: Ամբողջովին այլ բան է, երբ մեկը համարձակվում է պղծել մեր Սրբությունները: Հետևելով Հիսուսի օրինակին, մենք որպես հայ քրիստոնյա պարտավոր ենք ամեն ձևով պաշտպանել դրանք: *«Իսկ որո՞նք են մեր Սրբությունները: Մեր Ընտանիքը, մեր Եկեղեցին ու մեր Հայրենիքը»:*

Նոր Կտակարանից շարունակելով այս մեջբերումը, պիտի տեսնենք թե Հիսուս ինչքա՜ն տրամաբանական բացատրություն է տալիս վերոհիշյալ խոսքերին.

«Եվ եթե դուք ձեզ սիրողներին սիրեք, ո՞րն է ձեր արած շնորհը, որովհետև մեղավորներն էլ են սիրում իրենց սիրողներին: Եվ եթե ձեր բարերարներին բարություն անեք, ո՞րն է ձեր արած շնորհը, որովհետև մեղավորներն էլ նույնն են անում: Եվ եթե փոխ եք տալիս նրանց, որոնցից հետ առնելու ակնկալություն ունեք, ո՞րն է ձեր արած շնորհը, որովհետև մեղավորներն էլ են փոխ տալիս մեղավորներին, որպեսզի նույն չափով հետ առնեն: Բայց դուք սիրեցե՛ք ձեր թշնամիներին և բարությո՛ւն արեք ձեզ ատողներին ու փո՛խ տվեք նրան, ումից հետ առնելու ակնկալություն չունեք: Եվ ձեր վարձը շատ կլինի, և դուք Բարձրյալի որդիները կլինեք, որովհետև նա բարեհաճ է չարերի և ապերախտների հանդեպ: Գթասի՛րտ եղեք, ինչպես որ ձեր Հայրը գթասիրտ է» (Ղուկաս 6:32-36):

Եթե ուզում ենք, որ մեզ ներեն, մենք էլ պետք է կարողանանք ներել, եթե ուզում ենք, որ մեզ օգնեն, մենք էլ փոխադարձաբար նրանց պիտի օգնենք և վերջապես ով չի ուզում, որ իրեն սիրեն, սակայն այդ սիրույն արժանանում է միայն նա, ով կարող է ուրիշներին սիրել:

Ահա այսպես մենք պիտի շարժվենք իբրև Եկեղեցի, հոգևորական և ժողովուրդ, մեկս մյուսին սիրելով ու ներելով: Ամեն:

«Նավակը ցամաքից մոտոններով հեռացել էր՝ դես ու դեն քշվելով ալիքներից, քանի որ քամին դիմացից էր: Եվ գիշերվա ուշ ժամին Հիսուս եկավ նրանց մոտ՝ քայլելով ծովի վրա: Երբ աշակերտները նրան տեսան ծովի վրա քայլելիս, տագնապահար եղան և ասացին. «Ինչ-որ ուրվական է» ու սարսափից աղաղակեցին: Հիսուս իսկույն խոսեց նրանց հետ ու ասաց. «Սրտապնդվեցեք: Ես եմ, մի՛ վախեցեք» (Մատթ. 14:24-33):

Աշակերտները ճանաչում էին Հիսուսի ձայնը, բայց դեռևս չէին ուզում հավատալ, որ Նա է: Հնարավոր էր, որ ինչպես պատկերն էր երևում նրանց աչքին, այնպես էլ ձայնը կարող էր լսելի լինել նրանց ականջներին: Բոլորը շփոթության և տատանման մեջ էին. արդյոք իսկապես Հիսո՞ւսն է երևացողն ու խոսողը, թե ինչ որ երևութական խաբուսիկ մի բան: Պետրոսը, որն այսպիսի առիթներով խիզախորեն առաջ էր նետվում, ասում է. *«Տեր, եթե Դու ես, հրամայի՛ր ինձ ջրի վրայով քեզ մոտ գալ»:* Հիսուսի դրական պատասխանը ստանալով Պետրոսը փորձում է Հիսուսին ընդառաջ գնալ քայլելով ջրերի վրայով, սակայն Նրան չհասած սկսում է սուզվել, որովհետև վախենում էր ալիքների փոթորկոտ վիճակից: Հիսուս, որ Իր առաքյալների հավատն էր փորձում, տեսնելով Պետրոսի վտանգավոր վիճակը, անմիջապես ձեռքը երկարացնում ու բռնում է նրան: Ջրից դուրս հանելով մեր Տերը ասում է. *«Թերահավատ, ինչո՞ւ վախեցար»:* Ապա նավակը նստելով սաստում է ալիքներին և ամեն ինչ հանդարտվում է:

Առանց Աստծու՝ իմաստություն գոյություն չունի. Նրանից անկախ ճշմարիտ գիտություն չկա: Մարդկային գիտությունը ոչ միայն վստահելի չէ, այլ նաև կործանարար է, երբ գործածվի անկախ Աստծուց, առանց Նրա երկյուղի: Աշխարհի մեծագույն փորձանքները, կործանումներն ու ցավերը ընդհանրապես մարդու գիտութեան պատճառով են եղել: Ոչ մի բան աշխարհին այնքան վնաս

չի պատճառել, որքան մարդը, որովհետև նա մտածել, ապրել ու գործել է առանց Աստծու երկյուղի:

«Վախեցի՛ր Աստծուց և պահի՛ր Նրա պատվիրանները. ահա այս է մարդն ամբողջովին. որովհետև Աստված պիտի բոլոր արարածների դատաստանն անի նրանց կատարած թաքուն գործերի համար՝ լինեն դրանք չար թե՝ բարի» (Ժող. 12:13):

Մարդը ինչո՞ւ պիտի վախենայ իր Հորից: Այս է անընդունելին: Աստված արդյոք սարսափելի, հարվածող, պատժող կամ մարդասպան մե՞կն է: Մենք մեր ծնողներից վախենո՞ւմ ենք: Ո՛չ, ընդհակառակը, սիրում ու հարգում ենք: Աստված մեր Հոգևոր Հայրն է: Բոլորս էլ լավ գիտենք , որ Նա բարի է և ամբողջովին լցված է սիրով: Ուրեմն ինչպես սիրում ու հարգում ենք մեր ֆիզիկական ծնողներին, նույնպես և առավելաբար պիտի սիրենք ու հարգենք մեր Հոգևոր Ծնողին՝ Աստծուն: Նա արժանի է մեր սիրույն և հարգանքին: Եթե վախենալ բառը փոխարինենք «*հարգել, պատկառել» կամ «ակնածել» բառերով,* այն ժամանակ կհասկանանք, թե մարդը Աստծուն հարգելով ու սիրելով կարող է սանձել անմարդկային արարքները: Սպանություն, հափշտակություն, գողություն և կամ այլ տեսակի գազանային արարքների պարագային, ժողովուրդը դրանք կատարողների համար օգտագործում է հետևյալ արտահայտությունը. *«Աստծուց չե՞ն վախենում»* կամ *«Աստծու վախը չունե՞ն իրենց սրտում»*: Անշուշտ կան նաև դրան հակառակ պարագաներ, երբ արդար ու մաքուր մարդիկ մերժում են իրենց առաջարկված անազնիվ գործերը. *«Ես Աստծուց վախենում եմ» կամ «Աստված կա վերևում»* և այլն:

Աստծուց վախենալ նշանակում է երկյուղածությամբ մոտենալ Նրան, պատկառանք ունենալ Նրա ներկայությունից, մեծարել ու փառավորել Նրան: Իրականության մեջ Աստծուց վախենալ նշանակում է ոչ միայն հավատալ Նրա գոյությանը երկնքում, այլ նաև Նրա ներ-

կայությանը երկրի վրա: Աստծուց վախ ունեցողը, ունի իմաստությունը իր կյանքը միշտ իր երկնավոր Հոր հետ տեսնելու, ապրելու և վստահությամբ ու քաջությամբ ասելու. *«Տերն է իմ լույսն ու կյանքը, ո՞ւմից վախենամ. Տերն իմ կյանքի ապավենն է, ո՞ւմից ես դողամ» … (Սաղմոս 26:1):*

«Վախենալ» բառը լսողների մտքում պիտի հասկացվի *«սարսափ»* կամ *«երկյուղ»*: Օրինակ՝ աշխատանքի տեղում գործավորները *«վախենում»* են պատասխանատուից: Դպրոցում՝ աշակերտները *«վախենում»* են տնօրենությունից և այլն:

Կան մարդիկ, ովքեր օրենքը չեն սիրում և չեն ուզում գործադրել, որովհետև ավելի խավարն են նախընտրում իրենց մութ և անազնիվ գործերը կատարելու համար: Իսկ օրենքը սիրող մարդիկ, ընդհակառակը, նախընտրում են լույսը, որպեսզի իրենց բարի ու արդար գործերը երևան: Օրենքը կիրառող երկիրները ավելի շուտ են ծաղկում և կարգ ու կանոնի մեջ մտնում: Ով օրենքը չի հարգում, անկանոն և անկարգապահ մարդ է:

Հիշեք, որ անպայման ոստիկանը կամ հսկիչը չպետք է մեզ հուշի, թե օրենքը չի կարելի խախտել, պետք է լավ հասկանանք, որ Աստծու աչքերը ամենուրեք մեզ են նայում, եթե շեղվենք Իր ճշմարիտ ճանապարհից, անարդար ու անազնիվ գործեր կատարենք, մեկ է, ուր էլ որ լինենք, փախուստ չկա, պատասխան պիտի տանք դրանց համար:

Հետաքրքիր վիճաբանություն է տեղի ունենում երկրի ու երկնքի միջև, թե ո՞վ ավելի շատ առավելություններ ունի, որոնք մարդկանց կարող են հաճույք պատճառել, որպեսզի նրանք ոչ մեկից չվախենան և այդ գեղեցկությունները վայելելով, մոռանան ամեն տեսակ անարդար գործեր կատարելուց:

Վեճը վերջանում է հաշտությամբ՝ փոխադարձաբար իրար առավելություններն ու գեղեցկությունները ըն-

դունելով: Երկինքը խոնարհվում է դեպի երկիր և երկիրը բարձրանում է դեպի երկինք՝ իր լեռների սպիտակափառ գագաթներով գրկում են իրար ու սիրո համբույր տալիս:

Իբրև հայ քրիստոնյաներ, նախ պիտի աշխատենք մեր հոգիները մաքրել ու խաղաղեցնել ու երբ լսենք Տիրոջ ձայնը, թե՝ *«Արտապնդվեցե՛ք, քաջալերվեցեք, Ես եմ, մի՛ վախեցեք»* պատրաստ լինենք, որովհետև Հիսուս չեկավ վախեցնելու, այլ տեր կանգնելու նրանց, որոնք հավատացին Իրեն: Ամեն:

ՉԵՆԹԱՐԿՎԵԼ ՉԱՐԻՆ

«Երթ հետս իմ, սատանա» (Մատթ. 4:10):
«Ինձանից հեռո՛ւ գնա, սատանա»:

Մեր Տէրը Հիսուս Քրիստոս իր քարոզությունների ընթացքում, փարիսեցիների, դպիրների կամ անհատ մարդկանց հետ ունեցած իր հակաճառությունների ու խոսակցությունների ընթացքում, ստիպված էր լինում պատասխանելու սատանայական կամ չար մտքով տրված բազմաթիվ հարցերի:

Բնական է, որ Նրա պատասխանները հիմնված էին այն Սուրբ Գրքի վրա, որին հավատում էին նաև իր հակառակորդներն ու հարցեր տվողները, որոնց նպատակը միայն մեկն էր. այդպիսի հարցերով ծուղակը գցել Նրան:

Ներկա ժամանակներում ևս ամեն քայլափոխի, սատանան կամ գառան մորթի հագած զանազան մոլորեցնողներ, փորձում են կասկածներ սերմանել մեր մտքի ու հոգու, իմացական կյանքի և գործունեության մեջ:

Մենք մեզ կարող ենք հարց տալ, թե ինչքանո՞վ ենք պատրաստ նրանց ասելու. *«Ինձանից հեռո՛ւ գնա, սատանա«:*

Բայց մեր Տերը Հիսուս, իբրև Աստծու Որդի՝ պատրաստ էր: Այստեղ որևէ հավատացյալ նույնպես կարող է հարց տալ, թե՝ ինչպե՞ս:

Մատթեոս և Ղուկաս Ավետարանիչները պատմում են, թե Հիսուս քառասուն օր ծոմ պահելուց հետո, սովածացավ: Այս առիթից օգտվելով, սատանան ծրագրված մոտենում է Նրան ու փորձելու համար ասում. «*Եթե Աստծու Որդին ես, ասա՛, որ այս քարերը հաց լինեն» (Մատթ. 4:3),* այսինքն ապացուցի՛ր, որ հետևողներդ քեզ հավատան: Փորձությունը մեծ էր: Սակայն Հիսուս շատ գեղեցիկ և մեզ համար ուսանելի պատասխան է տալիս նրան. *«Գրված է՝ միայն հացով չի ապրի մարդ, այլ՝ այն ամեն*

խոսքով, որ դուրս է գալիս Աստծու բերանից»: (Մատթ. 4:4), Դժբախտաբար, 21-րդ դարի սկզբին, մենք, մահկանացու մարդիկս, տարված ենք մտածելու, թե ինչպե՞ս հոգանք մեր ֆիզիկական կարիքները՝ ուտելիք, դրամ, առողջություն, ապրուստի հանգստավետ պայմաններ և այլն: Ահավոր վազքի մեջ ենք նյութի ետևից, մանավանդ ամերիկյան այս երկրում: Վազում ենք ու վազում խելահեղորեն, դժբախտաբար, սակայն, չենք անդրադառնում, թէ ո՞վ պիտի մտածի մեր հոգևոր կյանքի մաքրության ու զորացման մասին:

Սատանան իր առաջին փորձի ձախողումից չհուսահատվելով, երկրորդ անգամ է փորձում:

Ղուկաս Ավետարանիչը պատմում է. թե նա նորից է մոտենում Հիսուսին ու Նրան տանելով մի բարձր լեռան գագաթը, ցույց է տալիս աշխարհի բոլոր թագավորություններն ու ասում. *«Քեզ կտամ այս ամբողջ իշխանությունը և սրանց փառքը, որովհետև ինձ է տրված, և ում որ կամենամ, կտամ այն: Արդ, եթե դու իմ առաջ ընկած երկրպագես, բոլորը քոնը կլինի» (Ղուկ. 4:6-7):* Փորձության այսպիսի պահերին, մեր հույսը և ապավենը պիտի լինի միմիայն Աստված, Նրանո՛վ պիտի ապրենք ու Նրանո՛վ շնչենք: Երբ հաջողությունների ենք հասնում, տիրանում բարձր պաշտոնների, ձեռք բերում հարստություն և ունեցվածք, մոռանում ենք, որ Աստված գոյություն ունի, իսկ երբ հանկարծ թեթև ձախորդությունների ու դժվարությունների ենք հանդիպում՝ անմիջապես առաջին հերթին մեղքը գցում ենք Աստծու վրա ու սկսում բողոքել, թե՝ *«Ո՞ւր է Աստված«, «Եթէ Աստված կա, ինչո՞ւ չի լսում մեր աղոթքները ու մեզ փրկում այս վիճակից»* և նմանատիպ արտահայտություններ: Չարը կամ այս դեպքում սատանան, Հիսուսին թելադրում է հույսը դնել Աստծու վրա:

«Փորձենք»,- ասում է սատանան, *«Ինքդ քեզ աշտարակից ցած գցիր»:* Հիսուս, երրորդ անգամ լինելով,

վստահորեն պատասխանում է. *«Գրված է՝ քո Տէր Աստծուն պիտի չփորձես« (Մատթ. 4:7):*

Այսօր ավելի քան երբեք մեր ժողովրդի զավակները թե՛ Հայրենիքում և թե՛ Սփյուռքում փորձությունների ու դժվարությունների մեջ են տարբեր տեսակի աղանդների կողմից, որոնք ամեն ինչ անում են, որպեսզի կտրեն նրանց Հայաստանյայց Առաքելական Մայր Եկեղեցուց: Շատ անգամներ լսել ենք, թե ոմանք փորձում են մեր հավատացյալ հայորդիների ուշադրությունը շեղել օտար եկեղեցիների և հոգևորականների գովքը անելով: Ընտանիքներ կան, որոնք չեն նկատում իրենց տան անդամի բարեմասնություններն ու առավելությունները և ուրիշներին են երանի տալիս:

Այստեղ տեղին է հիշել 5-րդ դարի մեր շնորհալի Կաթողիկոսներից Սուրբ Սահակ Պարթև Հայրապետի խրատական պատասխանը ժամանակի մեր նախարարներին, ովքեր ցանկություն էին հայտնել հայոց թուլամորթ թագավորի փոխարեն պարսիկ մեկին բերել: Հայրապետը երբ տեսել էր, որ չեն ուզում լսել իրեն, վրդովված ասել է. *«Մեր հիվանդ ոչխարը ավելի նախընտրելի է, քան ուրիշի առողջ գայլը»:* Այս մեկ նախադասության մեջ ամեն ինչ ասված է, բացատրության կարիք չկա: Այս օտար ափերում մանավանդ շատ կարևոր է, որ մեր ժողովրդի զավակները չմոռանան իրենց Մայր Եկեղեցին: Մի՛ ծուլացեք, եկեք ձեր Տունը, որ Աստծու Տունն է, բոլորիդ Տունը և թերահավատ մի՛ եղեք, այլ վաղվա օրվա նկատմամբ ավելի հավատով, սիրով ու հույսով լցված շարունակեք ձեր կյանքը: Ձեզանից ամեն մեկը թող իր հոգեկան աշխարհը դարձնի ճշմարիտ եկեղեցի, որպեսզի ո՛չ մի ուրիշ ազդեցություն և ո՛չ մի օտար աղանդ չկարողանա կործանել ձեր տան միասնությունն ու խաղաղությունը: Մեր Տիրոջ Հիսուսի խոսքերն են, որոնք կարծես այսօրվա համար են ասված. *«Զգույշ եղեք սուտ մարգարեներից, որոնք մոտենում են ձեզ ոչխարների զգեստներով, բայց*

ներսից հափշտակող գայլեր են: Իրենց գործերից կճանաչեք նրանց» (Մատթ. 7:15):

Մենք, իբրև հայ ժողովրդի զավակներ, ունենալով մեր ֆիզիկական, հոգեկան և իմացական կյանքի մտահոգությունները, կարող ենք մխիթարվել ու մեր խղճի առաջ հանգիստ զգալ մեզ, եթե Աստծու կողմից մեզ պարգևած կարողություններն ու շնորհները իմաստությամբ գործածենք: Իբրև Հայաստանյայց Առաքելական մեր Մայր Եկեղեցու հավատարիմ զավակներ. ուր էլ որ լինե՛նք, ի՛նչ դիրքի, ի՛նչ կացության ու ի՛նչ տարիքում էլ գտնվելիս լինենք, գոհանանք մեր ձեռք բերած հարստությամբ, ունեցվածքով և աղոթքով, ու հավատով փառք տանք Աստծուն: Աստծուն գոհաբանելով, մենք արդեն իսկ չարի երեսին շպրտած կլինենք այս խոսքը. *«Մեզանից հեռո՛ւ գնա, սատանա»,* որովհետև *«Աստված մեզ հետ է և մենք ամեն ժամ ու ամեն օր փառք և գոհություն ենք մատուցում Նրան»:* Ամեն:

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԱՆՄԵՂՈՒԹՅՈՒՆԸ

«Եվ ով որ ինձ հավատացող այս փոքրիկներից մեկին գայթակղեցնի, նրա համար լավ կլինի, որ նրա պարանոցից էշի երկնաքար կախվի, և նա սուզվի ծովի խորքը» (Մատթ. 18:6):

Հիսուս խոսում է մանուկներին գայթակղեցնելու և արհամարհելու մասին:

Գայթակղեցնել նշանակում է սխալ ճանապարհով տանել, մոլորեցնել կամ նրա մեղանչելուն պատճառ դառնալ: Մանուկները Հիսուսի հավատացողներն ու հետևողներն են, որոնք կոչվում են Երկնքի Արքայության փոքրիկներ և Աստծու զավակներ: Բոլոր մանուկներին էլ Աստված նույն ձևով է ընդունում և նույն աչքով տեսնում նույնիսկ ամենափոքրին հասած վնասը:

«Եվ ով որ ինձ հավատացող այս փոքրիկներից մեկին գայթակղեցնի, նրա համար լավ կլինի, որ նրա պարանոցից էշի երկնաքար կախվի, և նա սուզվի ծովի խորքը» : Այստեղ *«էշի երկնաքար կախվի»* խոսքը կարելի է հասկանալ ծանր կամ ջրաղացի քար իմաստով: Հիսուս շարունակելով Իր խոսքը ասում է. *«Վա՜յ աշխարհին՝ գայթակղությունների պատճառով. գայթակղություններ պետք է, որ գան, բայց վա՜յ այն մարդուն, որի միջոցով կգա գայթակղությունը» (Մատթ. 18:7):*

«Զգույշ եղեք, որ այս փոքրիկներից մեկին չարհամարհեք, ասում եմ ձեզ, որ երկնքում նրանց հրեշտակները մշտապես տեսնում են երեսն իմ Հոր, որ երկնքում է, որովհետև մարդու որդին եկավ փրկելու կորածը» (Մատթ. 18:10-14): Մեր Տիրոջ խոսքերն են սրանք, խոսքեր, որոնք իբրև փաստ են բերվում փոքրիկներին մոլորեցնելու չարության մեծությունը հասկացնելու համար. *«. . . Որ երկրնքում նրանց հրեշտակները մշտապես տեսնում են երեսն իմ Հոր, որ երկնքում է»:*

Հիսուսի այս միտքը կարելի է հետևյալ ձևով բացատրել. *«Այն մանուկները, որոնց դուք համարձակվում եք արհամարհել և մոլորեցնել, մի-մի պահապան հրեշտակներ ունեն, որոնք նշանակված են նրանց խնամելու ու պաշտպանելու համար: Ուրեմն, եթե երկնքում Աստվածային տեսքով բարձրագույն հոգիները (այսինքն՝ հրեշտակները) ծառայում են մանուկներին իբրև պահապաններ և օգնականներ, դուք ինչպե՞ս կարող եք նրանց արհամարհել. մոլորեցնել ու վնաս հասցնել»:*

Մանուկների գայթակղության կարևորությունը ավելի զգալի դարձնելու համար, Հիսուս պատմում է մի առակ հարյուր ոչխարի մասին: Ըստ այդ առակի, մի հովիվ ունենում է հարյուր ոչխար. որոնցից մեկը կորչում է: Հովիվը այդ մեկին գտնելու համար թողնում է իննսունիններին ու գնում կորածի հետևից: Գտնելուց հետո չափից ավելի ուրախանում է, որովհետև նրա համար ավելի մեծ նշանակություն ուներ կորած մեկ ոչխարին գտնելը, քան իննսունինների մնալը: Հիսուսի նպատակն էր ցույց տալ, թե մանուկները ևս մեծ հարգանք ունեն և պահանջում են խնամք ու հոգատարություն: Առակի սկզբում Նա Իր մասին ասում է, թե՝ *«Մարդու որդին եկավ փրկելու կորածը»,* իսկ վերջում վկայում է Իր Երկնավոր Հոր մասին. *»Իմ երկնավոր Հոր կամքն է, որ այս փոքրիկներից ոչ մեկը չկորչի»:*

Առաքյալների միջև ծագած վեճը, թե՝ *«Մեզնից ո՞վ է մեծը երկնքի արքայության մեջ»* և յուրաքանչյուրի ձգտումը հասնելու դրան, գայթակղության մի ուժեղ ալիք էր առաջացրել:

Հիսուսի վերջին խոսքը. *«Խաղաղություն թող լինի ձեր մեջ»* ուղղակի ակնարկում է առիթ տվող վեճը: Երևում է, որ վիճաբանությունը բավականին սուր բնույթ է կրել և առաքյալների մեջ երևացել են երկպառակության ու հակառակության նշաններ:

Մինչև Հիսուսի ժամանակը մեծության չափանիշը ուժը և հարստությունն էր, որը սխալ մտածողություն էր:

Հիսուս ոչ միայն Մեծ եղավ, այլ նաև մեծության գաղափարը արմատապես փոխեց Իր խոնարհությամբ։ Ձեր միջից առաջինը թող նա լինի ով պատրաստակամ է ծառայելու մյուսներին և ով հանձն է առնում նրանց սպասավորությունն ու խնամքը։

Մեր կյանքում հաճախ պատահում է, երբ մենք փոքր կամ մեծ պաշտոն ենք ստանում, այն ժամանակ կարծես աշխարհն սկսում է մեր շուրջը պտտվել և ակամա մտածում ենք, որ մեր ենթակաները կոչված են միայն մեզ ծառայելու համար, իսկ մենք՝ նրանց հրամայելու, պարտադրելու ու պահանջելու, բայց Հիսուս Իր օրինակով մի անգամ ևս հիշեցնում է մեզ, թե իշխանավորը և նույնիսկ թագավորը պարտավոր են խնամք տանել նախ և առաջ իրենց սպասավորների նկատմամբ։ Նա հարցնում է. *«Ո՞վ է արդյոք մեծ, սեղանապե՞տը, թե՝ սպասավորը»,* անշուշտ սեղանապետը, ինչո՞ւ, որովհետև նա նստում է սեղանի ամենաբարձր տեղում, իսկ սպասավորը նրան ծառայում է։ Սակայն սեղանապետը ավելի է մեծանում ու բարձրանում, երբ գիտակցում է ու գնահատում իր սպասավորի արժեքը, սիրում ու խնամում է նրան։ Մյուս կողմից սա ավելի մեծ պարտավորություն է դնում ծառայողի վրա, որն այս անգամ ավելի սիրով, նվիրվածությամբ ու ամբողջ ուժով պիտի ծառայի։

Քրիստոսին հետևել՝ նշանակում է խոնարհ լինել։

Ավետարանը շարունակում է պատմել, թե երբ Հիսուս մի գյուղ է հասնում, սկսում է օրհնել և Իր ձեռքը դնելով բուժում է ամեն տեսակի հիվանդներ։ Գյուղի կանայք երեխաներին գրկած վազում են, որպեսզի Նա օրհնի իրենց զավակներին, այն հավատով, թե այս օրհնությունը նրանց ամեն տեսակ փորձանքներից հեռու պիտի պահի։ Անշուշտ, սա առաջին դեպքը չէր, բայց երևի այս անգամ խառնաշփոթությունը ավելի մեծ էր և առաքյալները իրենց Վարդապետին խղճալով, փորձում էին կարգ ու կանոն սահմանել և երբեմն էլ հեռացնում էին

նրանց: Հիսուս տեսնելով Իր աշակերտների այս արարքը, միջամտում է ու հրամայում նրանց, որպեսզի ետ քաշվեն. *«Թույլ տվեք այդ մանուկներին գալ ինձ մոտ և արգելք մի եղեք նրանց, որովհետև Աստծու արքայությունը այդպիսիներինն է» (Մատթ. 10:14):*

Ավետարանում պատմվածը նոր ու տարօրինակ մի բան չէր: Նույն ցանկությունը դարերից ի վեր կա ու պիտի շարունակվի: Մայրերը, երբ տեսնում են մի պատկառելի ծերունու, նշանավոր անձի, հերոսի, նվիրական մի պաշտոնյայի կամ հոգևորականի, նրա աղոթքն ու օրհնությունն են խնդրում իրենց երեխաների համար և իրենք էլ անձամբ բերում են նրանց խրատելով. *«Գնա, տղաս կամ աղջիկս, նրա ձեռքը համբուրիր: Նա ձեռքը գլխիդ կդնի, քեզ կօրհնի ու դու երջանիկ կլինես»:* Հիսուսի հետ էլ ճիշտ այդպես էր եղել: Գալիլիայից եկող այդ մեծ Վարդապետը, հրաշագործ մարգարեն, Աստծու կողմից ուղարկված պատգամավորը, հակառակ ոմանց թշնամությունների, դարձրել էր ժողովրդի պաշտամունքի առարկան:

Իբրև հայ քրիստոնյաներ մանուկի պես անկեղծ, մաքուր, բարի ու միամիտ լինենք ու այս ձևով կատարած կլինենք մեր Տիրոջ սքանչելի պատգամները: Ամեն:

ԽՆԴՐԱՆՔ ԱՍՏԾՈՒՆ

Հիսուսի պատվերը Իր աշակերտներին պարզ մի ուղերձ էր. «Խնդրեցեք Աստծուց, և նա կտա ձեզ, փնտրեցեք և կգտնեք, բախեցեք և կբացվի ձեր առաջ, որովհետև ով ուզի, ստանում է, ով որ փնտրի, գտնում է, ով որ բախի, նրա առաջ կբացվի» (Մատթ· 7:9):

«Մարդը ի՞նչ է կորցրել, ի՞նչ է փնտրում և ինչո՞ւ է փնտրում»: Պատասխանը պարզ է, նա փնտրում է իր կորցրած առարկան և շոշափելի իրը, այն կարող է լինել նաև անշոշափելի՝ օրինակ՝ հոգեկան խաղաղություն, մխիթարություն և երջանկություն: Սովորաբար մարդը փնտրում է իր սիրած բանը՝ լինեն դրանք ուտելիք կամ իր նմանների բարեկամությունն ու մտերմությունը, քանի որ նրա հոգնած մարմինը հանգստություն, իսկ հոգին՝ լույս է փնտրում:

Աստվածորդին թողեց իր փառքը և Իր Հոր հրամանի համաձայն իջավ երկիր, որպեսզի կորածը փնտրի ու փրկի. . . (Ղուկ· 19:10): Ինչո՞ւ Հիսուս եկավ կորածը փնտրելու, մի՞թե հզոր Արարիչը չէր կարող մի րոպեում նոր մարդ ստեղծել: Աստված այնքան սիրեց աշխարհը, որ Իր Միածին Որդուն ուղարկեց, որպեսզի կորածին ու անհնազանդին փնտրի ու փրկի:

Մարդկային տեսակետից, եթե մոտենանք, կտեսնենք, թե նույնիսկ ծնողները մի քանի առողջ զավակներ ունենալով, նրանց խնամելով, մեծացնելով ու դաստիարակելով հանդերձ, անձնազոհությամբ, առանց տրտնջալու, խնամում են կույր կամ հաշմանդամ երեխային: Ինչո՞ւ, որովհետև նա իր ծնողների ոսկորն ու մարմինն է: Այդպես էլ մարդը Աստծու կերպարն ու նմանությունն է:

Աշխարհի բոլոր բույսերը, թռչուններն ու կենդանիները ստեղծվեցին երկրի ջրից ու նրա հողից, որովհետև Աստված հրամայեց նրանց, որ կյանք ունենան (Ծննդ. 1:20-25): Իսկ երբ հերթը եկավ մարդու ստեղծա-

գործության, Աստված ասաց. *«Մարդ ստեղծենք մեր կերպարանքով ու նմանությամբ, նա թող իշխի ծովի ձկների, երկնքի թռչունների, ողջ երկրի անասունների և երկրի վրա սողացող բոլոր սողունների վրա» (Ծնն. 1:26):*

Աստված որևէ կենդանու կամ ուրիշ մի բանի Իր պատկերն ու նմանությունը չտվեց, այլ մի միայն մարդուն: Բերենք մի օրինակ. տպագրական մեքենայից դուրս եկած նկարները շուկայում վաճառվում են շատ էժան գնով, սակայն հռչակավոր արվեստագետի իրական մի գործ, աճուրդում վաճառվում է միլիոնավոր դոլարներով: Ու եթե այդ արժեքավոր նկարը վնասվի, հազարավոր դոլարներ կծախսվեն այն նորոգելու համար:

Այդպես էլ մարդու ստեղծագործությունը Աստծու մի ծրագրի նախատիպն էր:

Աստված ազատելու համար նրան չարի ու մահվան ձեռքից զոհեց Իր Որդուն և աշխարհ ուղարկեց, որպեսզի մարդուն փրկի: Սակայն դժբախտաբար մարդկությունը այլասերվել էր: Աստծուն պատկանող մարդը, Փրկչի մեջ փոխանակ տեսնելու իր Ազատարարին ու իրեն սիրող Հոր Աստծու կերպարին և նմանությանը, տեսավ նրա մեջ միայն մրցակցին, թշնամուն և գրավողին:

«Ով մոտենում է Աստծուն, պետք է հավատա, որ Աստված կա և վարձահատույց է լինում նրանց, ովքեր փնտռում են իրեն» (Եբր· 11:6): Աստծուն պետք է փնտրել հոգով ու ճշմարտությամբ: Ամենաուժեղ ձայնը մանուկի լացի ձայնն է, երբ նա իր մորն է փնտրում, սակայն մենք աղոթքով փնտրո՞ւմ ենք Աստծուն և կամ երբևէ զգացե՞լ ենք, որ կորած ենք:

Հիսուս եկավ փնտրելու կորածին, մեղավորին, շփոթվածին, հիվանդին և մարդկային ընկերությունից լքվածին: Երբ եկեղեցի ենք գնում առաջին հերթին ո՞ւմ ենք հյուրասիրում ու բարևում, միայն մեր ընկերների՞ն, թե առաջին անգամ եկեղեցի եկող անծանոթին: Եկեղեցում

նոր եկողին ճանաչելը հեշտ է: Նրանք բարեկամներ չունեն ու հետաքրքրությունից դրդված դիտում են ամեն բան:

Հիսուս եկավ դիտեց լքված մարդկությանը, խղճաց և բուժեց կույրերին, հիվանդներին, անդամալույծներին, բորոտներին, կաղերին ու հարություն տվեց մեռելներին: Նա ասաց. *«Առողջներին բժիշկներ պետք չեն, այլ՝ հիվանդներին: Ես չեմ եկել արդարներին կանչելու, այլ՝ մեղավորներին՝ ապաշխարության» (Ղուկ· 5:31)*:

Առանց իմացական հավատի, Հիսուսի շնորհած Աստվածահայտնությունը ու նյութական Եկեղեցին կմնան իբրև անիմաստ գեղեցկություններ: Ո՞վ պիտի իմաստավորի Նրա խոսքերը, եթե ոչ դուք ու մենք, մեր ծառայությամբ և ուրիշներին սիրելով:

Յուրաքանչյուր մարդ, ով իր սրտում ու հոգում զգում է Հիսուսի ներկայությունը՝ բուժվել է: Նա ասում է. *«Գնա քո տունը հարազատներիդ մոտ և պատմիր նրանց այն ամենը, ինչ Տերը քեզ արեց և թե ինչպես խղճաց քեզ» (Մարկ. 5:19):* Հոգևոր ծառայության մեջ մանավանդ կոչումը կարևոր է, սակայն Ավետարանն ասում է· *«Կանչվողները շատ են, բայց ընտրվողները՝ քիչ»:* Ծառայության են կանչվում Աստծու կողմից այն մարդիկ, ովքեր ունեն զոհվելու, նվիրվելու և հավատի շնորհները:

Հիսուս մեզ սովորեցնում է աղոթքի զորության մասին, *«Խնդրեցեք և խնդրանքները կկատարվեն, աղաչեցեք և կլսվեն աղաչանքներդ, բաղխեցեք գթության դուռը. . . »:* Հիսուսի խոսքերը հիմնվում են աստվածային բարության վրա: Աստծուն իբր Հայր ենք ճանաչում. *«Ձեզնից ո՞վ այն մարդը,*- ասում է Նա,- *որից իր որդին եթե հաց ուզի, միթե քա՞ր կտա նրան. և կամ եթե ձուկ ուզի, միթե օ՞ձ կտա նրան: Արդ, եթե դուք, որ չար եք, գիտեք ձեր որդիներին բարի պարգևներ տալ, որքան ևս առավել ձեր Հայրը, որ երկնքում է, բարիքներ կտա նրանց, որոնք իրենից ուզում են» (Մատթ. 11:28-30):*

Ամեն մարդ, պետք է ունենա իր հոգու պոռթկման պահերը, որոնք ստեղծում են իրենց տաղանդավոր գործերը Աստծու ներշնչմամբ՝ ստացած մուսաների միջոցով: Գերմանացի ավետարանիչ Տիփրիք Պոնհոֆերը, որը նահատակվեց Հիտլերի օրով, ասել է՝

«Հիսուս երբ կանչում է մեկին՝ նրան հրավիրում է նահատակվելու»:

Ճշմարիտ քրիստոնյան հրավիրված է տարածելու Աստծու լույսը և աստվածային ճշմարտությունները ու դրանց միջոցով ներազդելու աշխարհի վրա: Սա այնքան էլ հեշտ գործ չէ, ինչպես թվում է: Աստված ուզում է, որ մենք հավատով ու սիրով համագործակցենք Իր հետ: Աշխարհի զանազան երկրներում դժբախտաբար մարդիկ են մեռնում, երկրներ են ավերվում, այս ծանր պահին, այդպիսի քաղաքակրթության դեմ կանգնած է Հիսուսի կյանք տվող կանչը. *«Եկեք ինձ մոտ, բոլոր հոգնածներդ ու բեռնավորվածներդ, և ես ձեզ կհանգստացնեմ…(Մատթ. 11:28-30): Աստծու շնորհքներն են՝ տեսիլք, լույս, պատգամ ու կոչում:* Հիսուսի հաղթական Հարությունից ծնվում է հավիտենական կյանքի տեսիլքը:

Դարեր շարունակ բազմաթիվ թշնամիների լծի տակ տառապող մեր ժողովուրդը, լավ հասկացավ Հիսուսի աստվածային լույսի ու տեսիլքի փրկարար իմաստը, արժևորեց այն ու դրանով զորացած, իբրև ամուր վահան, շարունակեց ու այսօր էլ շարունակում է իր կյանքը:

Հայ ժողովուրդը կարիքն ունի այսօր տեսիլք ունեցող երիտասարդների: Տեսիլքը տեսնվում է արթուն վիճակում: Արթուն լինել նշանակում է ֆիզիկական իմաստով ժիր, կայտառ, աշխույժ և գործոն կյանք ունենալ: Այն տեսիլքը, որ չի վերածվում կյանքի, դառնում է երազ և ինքնախաբեություն:

Իբրև հայ քրիստոնյաներ, մենք այդ տեսիլքն ունեցող, ժայռի վրա հաստատված դարավոր Եկեղեցու և

հերոսական ժողովրդի հավատարիմ զավակները լինելով, շարունակենք իրականացնել մեր նախահայրերի երազն ու տեսիլքը։ Ձեռք-ձեռքի, սիրտ սրտի տված փնտրենք բարին ու գեղեցիկը և Աստծու կողմից մեզ տրված բոլոր շնորհները օգտագործելով, ծաղկեցնենք ու պայծառացնենք Հայաստանյայց առաքելական մեր Սուրբ Եկեղեցին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն ու Մայր Հայրենիքը։ Ամեն։

ՔՐԻՍՏՈՍԻՆ ՄԻԱՆԱԼ, ՆՇԱՆԱԿՈՒՄ Է ՆՐԱՆ ՈՒՆԵՆԱԼ ՄԵՐ ՄԵՋ

«Եթե մեկը Քրիստոսի մեջ է, նա նոր արարած է, որովհետև հինն անցավ. և հիմա ամեն ինչ նոր եղավ»
(Բ. Կորնթ. 5:17):

Պողոս Առաքյալը հոգևոր իմաստով նոր մարդ դառնալու իրողությանը անդրադառնալով, Կորնթացիներին ուղղված իր երկրորդ թղթում ասում է, որ դրա միակ ճանապարհը Քրիստոսին միանալն է, այսինքն՝ ըստ նրա վերանորոգության ընթացքը մարդու կարողությունից բարձր է: Հնարավոր է վերանորոգվել, միայն հույսը դնելով մեր Տիրոջ վրա: Այս փոփոխությունը, լինի դա սովորություն և կամ թե բնավորություն, կարելի է փոխել միայն միանալով Հիսուսին:

Հարց է առաջանում, թե՝ *«Մարդու բնավորությունը կփոխվի՞»:*

Այս հարցը միշտ էլ հուզել է բոլորիս և ամեն անգամ փորձել ենք ինքներս պատասխանել, թե այս մասին մտածելով, ինչը կարող ենք նկատի ունենալ: Այստեղ խոսքը բնավորությա՞ն, թե՞ նկարագրի փոփոխության մասին է:

Բնական ձևով մարդիկ վախենում են վատ բնավորություն ունեցողից և փնտրում են այնպիսիներին, ովքեր լավ բնավորություն ունեն, նրանց հետ ապրելու, ամուսնանալու, աշխատելու կամ նույնիսկ պարզապես խոսելու համար: Այդ է պատճառը թերևս, որ նրանք տարբերություն են ուզում տեսնել մարդկանց սովորությունների, նկարագրի և բնավորության միջև: Եթե մի սովորություն երբեմն մեծ դժվարությամբ փոփոխելի է համարվում, բնավորության փոխվելուն չենք ուզում հավատալ: Երբ երկար փորձերից հետո հաջողություն չենք ունենում փոխելու մեկի բնավորությունը *«Հոգին դուրս*

չեկած՝ բնավորությունը դուրս չի գա», ասում ենք ու ստիպված հաշտվում այդ իրականության հետ:

Հատկապես մի կողակից փնտրելու ընթացքում ուշադրություն ենք դարձնում նրա բնավորությանը: *«Ինչ-պիսի՞ բնավորության տեր մեկն է»* հարցնում ենք հաճախ, նկատի ունենալով ենթակայի նկարագիրը: Նրանք, որոնք *«բնավորություն»-ը և «սովորություն»-ը* նույնացնում են, իրենց ընտրության ընթացքում չեն մտահոգվում, մտածելով, որ դեռևս ուշ չէ դիմացինի մեջ որոշ փոփոխություններ կատարելը: Այսպիսիները, օրինակի համար իրենց ապագա ամուսնու կամ կնոջ թափթըփված վիճակը տեսնելով, այնքան էլ չեն մտահոգվում ու վախենում, մտածելով, որ վերջ ի վերջո նրան *«կարող են կարգի բերել»:* Իսկ նրանք, ովքեր իրենց ընտրելիք մարդու բնավորությանը նայում են իբրև արմատավորված նկարագրային գիծ, պատասխանատու մի որոշում կայացնելուց առաջ երկար բարակ հաշիվներ են անում: Այդպիսիները, ապագայի բարդությունների հեռանկարից վախենալով ասում են. *«Ո՞վ կարող է սրա հետ ապրել»* կամ *«Այս տեսակի բնավորությամբ սա ոչ ոքի հետ էլ չի կարող ապրել»:*

Չմոռանանք, որ Հիսուս, երբ ընտրեց Իր տասնըերկու առաքյալներին, նրանք տարբեր բնավորության տեր մարդիկ էին, սակայն մեր Տիրոջով նրանք միացան ու դարձան մեկ մարմին և մեկ ընտանիքի անդամներ, փոխելով իրենց բնավորության եւ սովորության նույնիսկ ամենավատ գծերը:

Կենդանական աշխարհին կարելի է նայել այլ տեսանկյունից, քանի որ նրանցից յուրաքանչյուրի շարժումը բնազդային է, բնավորությունը կարելի է փոխարինել բնություն բառով: Իրեն խնամող ու կերակրող անձնավորության վզին ևս կարող է փաթաթվել մի օձ՝ նրան խեղդելու համար: Այստեղ օձը իր բնությունն է, որ իրագործած է լինում և ոչ թե ապերախտ է գտնվում: Կամ վագրը, երբ թաթով հարվածում է իրեն խնամող

մարդուն, իր բնության հարազատ մի շարժումն է, որ իրագործած է լինում և ոչ թե երախտագիտության պակաս է ցուցաբերած լինում իր տիրոջ նկատմամբ: Սակայն խելք ունեցող մարդու պարագային՝ նույնը չէ: Նկարագրային գծերի անփոփոխելիությանը ակնարկելով, խոսակցական լեզվի մեջ ասում ենք. *«անցել է արյան մեջ»:*

Բնազդաբար իր կյանքը դասավորող կենդանին չի կարող իր բնությունը չիրագործել:

«Եթե մեկը Քրիստոսի մեջ է, նա նոր արարած է, որովհետև հինն անցավ. և հիմա ամեն ինչ նոր եղավ»:

Ամեն մարդ ինքն իր կյանքի օրինակով կարող է վկայել, թե անկարելի են ջնջել որոշ կարգի սովորություններ: Երբ փորձում ենք խրատել նրանց մոռանալու դրանցից ամենավտանգավորը, նրանք այսպես են արտահայտվում. *«Մյուս բոլոր սովորությունները պատրաստ ենք մոռանալու, բայց այս մեկը չենք կարող»:* Նույնիսկ վտանգավոր վիճակին ծանոթ լինելով հանդերձ, նրանք չեն կարողանում բաժանվել դրանցից: Ավելի վճռական երևալու համար նրանք ասում են, *«Ամեն ինչ մի կողմ դա մի կողմ»,* ցույց տալու համար թե իրենք ինչքանով են կապված այդ մոլության: Կամ իրենց խրատող անձին վերջնական մի պատասխան տալու նպատակով, ասում են, *«Ի զուր տեղը մի՛ փորձիր՝ իմ ձեռքը չէ»:*

Եփրեմ Խուրին ասում է. *«Սովորիր յուրաքանչյուր մարդու մասին բարին խոսել, իսկ քեզ նվաստացնել: Դրանում է մեծ խոնարհությունը, որը դժոխքից հոգին է բարձրացնում, կրքերն է հատում ու հաղթական զենք է սատանայի դեմ»:*

Երբեմն մարդիկ դժբախտաբար ոչ միայն իրենց վատ սովորությունները չեն ուզում վերացնել, այլ իրենց գործը թողած, զբաղվում են չարախոսությամբ, բամբասանքներով ու ինչպես ժողովուրդն է ասում *«սրա նրա*

միսը ծամելով»: Մի խոսքով ոչ այն գործով, որն իրենց է վերաբերում:

Այս պատմությունը հետաքրքիր է.

«Արևելքում մի թագավոր նկատում է, որ իր պալատականներից մեկը շարունակ չարախոսում է իր պաշտոնակիցների մասին: Որոշում է պատժել: Կանչում է նրան իր մոտ ու ասում.

Վերցրու յուղով լիքը այս ամանը և առանց մի կաթիլ իսկ թափելու, շրջիր քաղաքում, եթե չկատարես՝ մահապատժի կենթարկվես:

Պալատականը դողահար, վերցնում է յուղով լի ամանը և երկու սուսերակիր զինվորների առաջնորդությամբ, սկսում է մեծ զգուշությամբ քայլել քաղաքի փողոցներով ու շուկաներով: Մի քանի ժամեր տևող պատիժը հաջողությամբ է վերջանում:

Պալատականը առանց մի կաթիլ իսկ յուղ թափելու վերադառնում է պալատ:

Ի՞նչ կա չկա քաղաքում,- հարցնում է թագավորը, ո՞ւմ տեսար…:

Ոչ մեկին, Տեր իմ, մարդ չտեսա:

Ինչպե՞ս թե մարդ չտեսար, ամբողջ քաղաքը եռուզեռի մեջ է և համարձակվում ես ասել, թե մարդ չտեսա՞ր,- բարկանում է թագավորը:

Ուշադրությունս կենտրոնացրած լինելով միայն ամանի վրա, չկարողացա նկատել անցորդներին,- պատասխանում է պալատականը;

Լավ ասացիր,- ավելացնում է թագավորը,- սրանից հետո ուզում եմ, որ ուշադրությունդ կենտրոնացնես միայն քո գործերի վրա, ինչպես կենտրոնացրել էիր ամանի վրա ու երբեք ուրիշներով չհետաքրքրվես»:

Քրիստոսի հետ միացումը, սակայն, ենթադրում է մի նոր ընթացք, որի մեջ մեծ դեր ունի աստվածապարգև կամքը: Մարդը անասունից տարբերելու կարե-

վորագույն կետերից մեկը արդարորեն պետք է նկատել Աստծու կողմից մարդուն տրված կամքը: Կարիճին ինչքան էլ *«բարի»* նկատենք իր հանդարտ վիճակից դատելով, միշտ հավանականություն կա, որ նա հանկարծ ցատկի ու խայթի; Մեր բնավորությունները արմատացած են մեր մեջ և այնպես են կպել մեզ, կարծեք մեր մորթի գույնը լինեն:

Կասկածից դուրս է, որ Քրիստոսի հետ միացման հիմնական և կարևորագույն կետերից մեկը՝ աղոթքն է, իբրև Աստծու կողմից տրված կամքի զորացման միջոց:

Երբ վատ բնավորությանդ հզոր ուժի դիմաց զգաս, որ խեղճանում ես և չես կարողանում քեզ տիրապետել, մի՛ հուսահատվիր և մի՛ թող քեզ բախտի քմահաճույքին, ասելով. *«Ի՞նչ ուզում է թող լինի, էլ չեմ կարողանում դիմանալ»:* Միշտ հիշի՛ր, որ արժեքավոր մեկն ես և այն կյանքը, որ պարգևած է քեզ, պետք է ապրես արդար ու մաքուր կյանքով, օգտագործելով այն բոլոր բարիքները, որոնք Աստված տվել է քեզ և աղոթքի միջոցով կամաց-կամաց միանալով Հիսուս Քրիստոսի հետ, պիտի կարողանաս դուրս հանել քո միջից բնավորությանդ ամենավատ գծերը, մաքրելով քո հոգեկան աշխարհն ու վստահ եղիր, որ խիղճդ անպայման հանգիստ կլինի և կյանքդ դրախտի կվերածվի: Ամեն:

ՀԻՍՈՒՍ ԿՅԱՆՔ Է

«Ինձ համար կյանքը Քրիստոս է, և ուստի մեռնել այդ կյանքը շահել է նշանակում»
(Պողոս Առաքյալ)

Սխալված չենք լինի, եթե ասենք, թե այսօր աշխարհում հոգևոր քարոզչությունը չափից ավելի էժան միջոց է դարձել: Բոլորն անխտիր, լինեն դրանք՝ կազմակերպություններ, միություններ, վաճառականական հաստատություններ, մեկը մյուսից առաջ անցնելու մղումով, հասկանան կամ չհասկանան, նույնիսկ վախով, ուժ են տալիս քարոզչության մեքենային, որը երբեմն համարվում է *«Անկարողություն»:*

Պողոս Առաքյալի նամակներից մեկում, հանդիպում ենք հետևյալ տողին, որի մեջ լավը, գեղեցիկը ընտրելու համար նա նույնիսկ դիմում է Աստծուն. *«Եվ ահա այս աղոթքն եմ անում. թող ձեր սերը ավելի ու ավելի առատանա գիտության և ամենայն իմաստության մեջ, որպեսզի դուք լավն ընտրեք, հաստատուն մնաք և առանց գայթակղության լինեք Քրիստոսի օրվա համար լցված արդարության պտուղներով…» (Փիլ. 1:9-10):*

Պարզ մի նամակ գրողի մոտ չեմ կարծում, որ հանդիպեք անկեղծ ու սրտից բխած հոգով գրված մի այսպիսի արտահայտության, ուղղված հարազատին, ընկերոջը կամ նույնիսկ անծանոթին, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ այսօր գրեթե ամեն բան հիմնված է շահի վրա և մարդը կարծես կորցրել է իր արժեքը:

Առաքյալը Փիլիպպեցիների Եկեղեցու հավատացյալներին է ուղղում այս տողերը, ուր աղոթում է, որ նրանք ձգտեն գեղեցիկին և կարողանան ընտրել լավը: Ինչ սքանչելի է աղոթել, որ Աստված տվյալ անձի սերը աճեցնի աստվածգիտությամբ ու գեղեցիկ շնորհքով օժտի նրան, որպեսզի նա կարողանա ընտրել լավը.

«Ձեզ բոլորիդ համար աղոթում եմ խնդությամբ՝ առաջին օրվանից մինչև այժմ Ավետարանին ձեր ունեցած մասնակցության համար» (Փիլ.1:4-5):

Կարդացել, լսել կամ գրել ենք՝ *«Ավետարան» «Ավետարանչություն», «Ավետարանական»* բառերը: Սրանք հաճախ գործածվող բառեր են, սակայն նրանց իմաստը մեր ուշադրությունից դուրս է մնում, երբ չենք հասկանում, թե դրանք ի՞նչ են նշանակում: Ավետարանել՝ նշանակում է բարի լուր բերել, իսկ ավետարանչություն՝ բարի լուրի քարոզչություն: Այսօր, մենք՝ քրիստոնյաներս, իբրև հավատացյալներ, գրեթե ոչ մի բանի մաս չենք կազմում, որը քրիստոնյա անհատի հիմնական առաքելությունն է, այսինքն՝ ճշմարիտ հավատի մասին իմանալ և բացատրել մեկ ուրիշին, քրիստոնեական կյանքի ճշմարտությունները սովորեցնել մեր նմաններին ու մանավանդ՝ վկայել Հիսուս Քրիստոսի մասին: Ահա այս կետը կարելի է համարել մեր ժամանակների քրիստոնեական կյանքի մեծագույն թերությունը: Այս է պատճառը, որ բոլորս էլ զարմանքով լսում ենք թե զանազան աղանդների հետևորդներ ինչ մոլեռանդությամբ են կատարում իրենց քարոզչությունը դռնից դուռ ընկնելով: Ինչո՞ւ ենք զարմանում, պատճառը ի՞նչ է, հարցրե՞լ ենք: Պատասխանը պարզ է. Որովհետև մենք իբրև Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Սուրբ Ավազանում մկրտված ու դրոշմված զավակներ, թերանում ենք մեր քարոզչական առաքելության մեջ: Ոչ միայն մեր իմացածը չենք ուզում փոխանցել մեր նմաններին ու մեր զավակներին, այլև չենք փորձում սովորել, իմանալ, թե ո՞րն է մեր Եկեղեցու ճշմարիտ դավանությունը, ինչո՞ւ ենք քրիստոնյա, ո՞րտեղից ենք գալիս և ի՞նչ սքանչելի պատմություն ունենք և այլն: Իմանալով ու հասկանալով արդեն իսկ մենք մեզ ապահոված կլինենք այլ աղանդներին ուշադրություն դարձնելուց ու նրանց անդամները դառնալուց: Իր նամակում Առաքյալը ասում է, թե կաղոթեմ, որ ձեր սերը աճի

աստվածգիտությամբ ու կատարյալ դատողությամբ, որպեսզի կարողանաք ընտրել լավին:

Առաքյալն իր նամակում շարունակում է. *«Ձեզ բոլորիդ համար աղոթում եմ խնդությամբ՝ առաջին օրվանից մինչև այժմ Ավետարանին ձեր ունեցած մասնակցության համար» (Փիլ. 1:9-10):* Գնահատում է նրանց մասնակցությունը:

Այո՛, նա գնահատում է նրանց մասնակցությունը իր աշխատանքին, որովհետև Քրիստոսի ճշմարտությունները քարոզելը հավաքական կազմակերպված աշխատանք է պահանջում; Անցյալում քարոզչությունը միայն Առաքյալների գործը չի եղել, ո՛չ էլ նրանց աշակերտների կամ քահանաների, այլ՝ բոլորի, ամբողջ Եկեղեցու: Եկեղեցու բոլոր անդամները միասնաբար վկայում էին իրենց քրիստոնեական հավատի մասին, ոմանք իրենց կյանքով, իսկ ուրիշներ՝ նահատակությամբ: Իսկ ներկայիս այնպիսի մի վիճակ է ստեղծվել ժողովրդի մեջ, թե քարոզչությունը միայն եկեղեցականի գործն է, որը սխալ մտածում է: Դա բոլորիս գործն է, հավաքական իմաստով: Եվ եթե այս մտածումով պարսպապատենք մեր քրիստոնեական հավատի բերդը, երբ մեզանից յուրաքանչյուրը վկայի իր քրիստոնեական հավատի մասին ամեն հարմար առիթով, ո՞ր աղանդավորը կարող է մոտենալ մեր տներին կամ անցնել նրանց շքամուտքից ու խաբել և մոլորեցնել մեր զավակներից մեկին ու մյուսին:

Ահա նոր ժամանակների քրիստոնեական մեր կյանքի մարտահրավերը. մասնակցել Հայ Եկեղեցին զորացնելու գործին, քարոզչության եւ բացատրության ճանապարհով: Եկեք ընդունենք այս մարտահրավերը և հավաքական ուժով վկայենք մեր ունեցած հավատի մասին. սգավորներին տրված մխիթարական այցելությունների և կամ ուրախ օրերի՝ անվանակոչության, տարեդարձների առիթով, որպեսզի այդ բարի աշխատանքի համար արժանանանք Աստծու սիրույն, գութին, ողորմության, գնահատանքին ու վարձատրության: Ամեն:

ԱՆԴԱՄԱԼՈՒՅԾԻ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆԸ

«Որդեակ քո մեղքերը քեզ ներված են…»
(Մարկ. 2:6):

Այս դեպքը տեղի է ունենում Կապառնայում քաղաքում: Երբ ժողովուրդը լսում է Հիսուսի գալու մասին, ինչպես ամեն տեղ, Նրա մոտ էին բերում զանազան հիվանդներ, որոնք բուժման կարիք ունեին: Առիթից օգտվելով Նրա մոտ են բերում մի անդամալույծի, սակայն շատ մարդ լինելու պատճառով չեն կարողանում մոտեցնել և տանիքի վրա մի անցք բացելով՝ առաստաղից մահճի վրա պառկած նրան իջեցնում են Հիսուսի մոտ: Մեր Տերը տեսնելով հիվանդի ու նրան բերողների հավատը՝ դառնում է դեպի անդամալույծն ու ասում. *«Որդեա՛կ, քո մեղքերը քեզ ներված են…»:*

Բնականորեն այնտեղ գտնվող փարիսեցիներն ու դպիրները իբրև օրենքի ներկայացուցիչներ, ընդվզում են ու բարկանում Հիսուսի այս խոսքերի վրա. *«Այս ի՞նչ է խոսում, սա հայհոյում է. ո՞վ կարող է մեղքերին թողություն տալ, եթե ոչ՝ միայն Աստված»:* Հիսուս կարդալով նրանց մտքերը, դառնում է ու ասում. *«Ինչո՞ւ ձեր մտքում այդ եք խորհում. ո՞րն է ավելի դյուրին. անդամալույծին ասե՞լ՝ քո մեղքերը քեզ ներված են, թե՞ ասել՝ վե՛ր կաց, ա՛ռ մահիճդ և գնա՛ քո տունը» (Մարկ. 2:8-9):*

Ու նայելով անդամալույծին, ասում է. *«Քե՛զ եմ ասում, վե՛ր կաց, ա՛ռ մահիճդ և գնա՛ քո տունը»:* Ու անդամալույծը բոլորի աչքի առջև ոտքի է կանգնում, վերցնում իր մահիճը ու քայլում դեպի տուն: Բոլորը զարմանում են կատարված հրաշքի վրա ու փառավորում Աստծուն, ասելով՝ *«Այսպիսի բան երբեք չենք տեսել»:*

Ինչպիսի՞ դաս կարող ենք քաղել Մարկոս Ավետարանչի այս պատմությունից: Անշուշտ, ներկայացվածը բժշկությունից ավելի շեշտում է, թե Հիսուս օժտված է աստվածային կարողությամբ և թե՝ Նա Աստված է: Ինքը՝

մեր Տերը, գործնականում վկայում է այս մասին, քանի որ տեսնելով անդամալույծի ու նրան բերողների հավատը, առանց հարցնելու բուժում է նրան:

Հավաքական կյանքում, երբ ապրում ենք միասին իբրև նույն Եկեղեցու ու ժողովրդի զավակներ, առավելապես հավատը մնում է ամենակարևորը: Քրիստոնեական Եկեղեցին խարսխված է հավատի հիմնաքարի վրա: Եվ երբ հավաքվում ենք Եկեղեցում, անպայման կարիքը չունենք շոշափելի կերպով դեմ առ դեմ տեսնելու Աստծուն, բավական է միայն, որ հավատ ունենանք: Արդեն հավատալ նշանակում է տեսնել ու զգալ, հասկանալ ու ճանաչել Աստծուն:

Ինչպե՞ս կարելի է բնորոշել հավատը.

ա. Հավատը մարդուն Աստծու հետ կապող կամուրջն է՝ աղոթքի միջոցով.

բ. Հավատի մեջ աճող ու մեծացող զավակները իրենց մեջ գտնում են Աստծու երկյուղն ու իմաստությունը, որին իբրև արդյունք ընտանիքը ուժեղանում է բարոյական ամուր հիմքերի վրա:

գ. Հավատը ներքին մի այնպիսի ապրում է, որը չափ չունի: Երբ հավատում ենք, այն ժամանակ զգում ենք, թե ինչքան հարուստ ենք հոգեպես և ավելին՝ Աստծու ներկայությունն ենք տեսնում մեր ամեն մի քայլում, խոսքում ու գործում:

«*Առանց հավատո չկա բժշկություն, բարոյական բժշկություն, ո՛չ հիվանդ անհատի, ո՛չ հիվանդ ազգի և ո՛չ հիվանդ մարդկության համար… Առանց հավատի կյանքը դատարկություն է, հուսահատություն և մահ» Նա ծակ կարաս է՝ առանց կարող լինելու բովանդակություն պահելու: Ապրելու համար պետք է հավատանք կյանքի էության և նորա նպատակին:… Հավատը անհատին, ազգության և մարդկության դեպի հավիտենականություն է տանում: Ով չի հավատում հավիտենականության, նա մեռած է արդեն, մեռած է ոչ միայն մարմնով, այլ նաև հոգևոր և*

երանավետ կյանքի համար»,- ասում է անցյալ դարի մեր լուսամիտ Կաթողիկոսներից Գարեգին Հովսեփյանցը:

Հրաշալի և իմաստուն խոսքեր:

Իրապես կյանքը պայքար է եղել բոլոր ժամանակներում: Այդ պայքարից հաղթական են դուրս եկել նրանք, ովքեր ճշմարիտ և գիտակից հավատ են ունեցել ու իմաստությամբ են անցկացրել իրենց տրված կյանքի տևողությունը:

Պողոս Առաքյալն իր խրատներից մեկում ասում է. *«Իմաստությամբ ապրենք մեր կյանքը և հասարակության մեջ լսելի դարձնենք Աստծու ձայնը»:*

Այսօր ավելի քան երբեք Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու պարտականությունն է հոգալ հավատացյալների հոգևոր կարիքները և հիշեցնել ամեն մեկին, որ մեր կյանքը լցնենք իմաստությամբ:

Մեզ տրված խորհուրդը ասում է. *«Մի՛ ապրեք անմտորեն, այլ իմաստունների պես»:* Կյանքը սահմանափակ է: Երբ դեռևս մանուկ ենք, մեր քայլերը նախապատրաստվում են մեծերի՝ մեր հայրերի ու մայրերի կողմից, որպեսզի առողջ դաստիարակություն ստանանք, իսկ երբ խելահաս ենք դառնում, մենք ինքներս ենք շարունակում օգտագործել Աստծուց մեզ տրված շնորհներն ու բարիքները:

Պողոս Առաքյալը շարունակում է խրատել. *«Իրար հետ սաղմոսներով, օրհնություններով ու հոգևոր երգերով խոսեցեք»:* Խաղաղ ու հաճելի մի ընտանիք, համայնք կամ հասարակություն ստեղծելու համար մենք պետք է անպայման Աստծու ձայնը լսելի դարձնենք այդ տեղերում:

Մարդը՝ Աստծու ստեղծագործության փառապսակը, միշտ ենթակա է աստվածային հոգատարության: Նրա շնչից ստեղծված մարդը, երբ կարողանա ճանաչել ինքն իրեն, չպիտի ուզի մեղքերի մեջ կորչել, այլ ընդհակառակը՝ պիտի փորձի ապրել ու ընթանալ Աստծու ճանապարհով: 5-րդ դարի պատմիչ՝ Եղիշե Վարդապետը իր

թաղման ճառում ասում է. *«Իշխանության տեր մարդիկ իրենց անունով արձաններ են կանգնեցնում ու իրենց պատկերները նկարում դրամի վրա, որովհետև պատկերադիր նկարով է, որ ոսկին մեծարվում է ու հարգվում աշխարհում»: «Ես՝ իմ կենդանի պատկերը մարդու կենդանի դեմքին նկարեցի»,*- ասում է Աստված: Աշխարհում միայն մարդն է, որ նմանվում է Աստծուն: Աստված միայն մարդուն է երևում, երկրի վրա միայն նրան է սիրում, միայն Աստված է, որ մարդասեր է և միայն մարդն է, որ աստվածասեր է:

Յուրաքանչրուր հայ քրիստոնյա իբրև անհատ մեծ արժեք է ներկայացնում Աստծու աչքին; Հրաժարվելով մեղավոր կյանքից, երբ գիտակցենք մեր բարձրագույն կոչմանը, հավատացեք, Աստծու նման կարող ենք ստեղծագործել: Եկեք, ուրեմն, մեզ տրված աստվածային շնորհները իզուր տեղը չվատնենք ապրելով անասնական մի կյանք, այլ՝ հետևենք մեր անզուգական Հովվին՝ Հիսուս Քրիստոսին:

21-րդ դարի այս զարգացած ժամանակաշրջանում մարդիկ դեռևս Աստծու օգնության կարիքը ունեն: Օտար աստվածաբաններից մեկը, իր գրքերից մեկում, երբ խոսում է մարդկանց մասին, հիշեցնում է մեզ, որ մենք Աստծու ծառայության մեջ ենք: Իրոք, այն օրվանից, երբ մենք իբրև Քրիստոսի հայ ժառանգորդները ստանում ենք Սուրբ Ավազանի մկրտությունն ու ընդունում Սուրբ Հաղորդությունը, այդ րոպեից սկսած մենք դառնում ենք Աստծու ներկայացուցիչները երկրի վրա, ուր մեզ քաղցր պարտականություն է տրվում քարոզելու Աստծու ճշմարտությունները և խնամելու Նրա ձեռքով ստեղծված աշխարհը: Նաև Մկրտության ու Հաղորդության խորհուրդները հայ քրիստոնյա մարդուն զինում են բարոյական բարձր արժեքներով: Նրանց շնորհիվ մենք հնարավորություն ենք ստանում հասկանալու, թե մենք առանձին չենք, այլ՝ իբրև Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու և

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հավատարիմ զավակները ամուր կապերով միացած ենք Աստծու հետ: Իսկ Նրա հետ միություն, նշանակում է վառ պահել աստվածային սերն ու այդ նույն սիրով շաղախել աշխարհի պատմությունը: Մեր ամեն մի խոսքն ու գործը՝ Աստծու փառքի, մեր Սուրբ Եկեղեցու պայծառության, մեր Մայր Հայրենիքի շինության ու մեր բազմաչարչար ժողովրդի ապահովության և համերաշխության համար է: Ամեն:

Աստվածաշնչում գրված է. «Նա քննում է սրտի մտածումներն ու խորհուրդները: Եվ նրա առաջ չկա անտեսանելի արարած, այլ ամեն ինչ պարզ ու հստակ է նրա աչքերի առաջ» (Եբր. 4:12) «Նրանով ապրում ենք և շարժվում ենք և կանք» (Գործք 17:28):

Մարդիկ կարող են իրենք իրենց այս հարցը տալ՝ «*Իբրև քրիստոնյա արդյոք ես իմ մեջ զգում եմ Աստծու ներկայությունը*» կամ «*Ի՞նչ է նշանակում ապրել Աստծու ներկայության մեջ*»:

Աստծու ներկայության մեջ ապրել նշանակում է միշտ հիշել, թե Աստված ամեն րոպե և ամեն տեղ մեզ հետ է, տեսնում է թե՛ մթության մեջ, թե՛ ծածուկ տեղերում, քննում մեր գործերը, կարդում մեր գաղտնի խորհուրդ-ներն ու մտադրությունները:

Ովքեր զգում են Աստծու ներկայությունը իրենց մեջ, նրանք հեռու են մնում չար գործերից, որովհետև իբրև մարդիկ ամեն քայլափոխի կարող ենք մեղանչել, քանի որ չենք գիտակցում, թե Աստված մեր մեջն է: «*Ցույց տվեք մի տեղ,- գրում է Սուրբ Եփրեմ Խուրին,- ուր Աստված չի կարող ինձ տեսնել, այնտեղ կանեմ այն, ինչ պահանջեք ինձանից*»: Կարելի է մարդկանցից փախչել, բայց Աստծու ամենազոր աչքից խուսափել՝ անկարելի է:

Աստծու հայացքը տարածվում է նաև մեր մտքերի, ծրագրերի ու մեր հոգու խորքում թաքնված ձգտումների վրա: «*Տերը քննում է ամենքի սրտերը և նա գիտի բոլորի մտածումները*»,- ասվում է Սուրբ Գրքում. «*Եթե փնտրես նրան, նա կգտնվի քեզ համար իսկ եթե թողնես նրան, նա քեզ կլքի իսպառ*» (Ա. Մնաց. 28:9):

Աստված Աբրահամին սովորեցրեց այս ճշմար-տությունը. «*Ինձ հնազանդ և կատարյալ եղիր*» (Ծն. 17:1): Մենք փորձում ենք լավագույն կերպով կատարել մեր պարտականությունները, երբ զգում ենք, որ մեզ հետևող

ու հսկիչ կա: Այսպես է վարվում զինվորը՝ հրամանատարի, աշակերտը՝ ուսուցչի և զավակը՝ հոր հանդեպ:

Կյանքի նպատակը չի կարող մահը լինել: Այսպես մտածում են միայն հավատից թույլ մարդիկ: Կյանքը մի իրողություն է, որի նպատակը հենց ինքն է: Իմաստունը ճիշտ է, երբ ասում է. *«Աստված մարդուն ստեղծեց անմահության համար»:* Անմահություն նշանակում է կյանքը կյանքի համար: Կյանքը իր բոլոր իրական բարիքներով, իր արդար հաճույքներով, իր ֆիզիկական և հոգեկան վայելքներով, իր երազներով ու տեսիլքներով, իր բոլոր հայտնություններով, խորհուրդներով ու առեղծվածներով և իր ամբողջական արժեքներով: Անմահության գաղափարը միացած Աստծու գաղափարի հետ, ոչ թե թմրեցնում է հոգին՝ *«անտեսելու ու նվազեցնելու երկրավոր կյանքի արժեքը»,* այլ էլ ավելի է բարձրացնում այն:

Աստծու գոյությունն ու հոգու անմահությունը ուրանալը առնվազն անհեթեթություն է: Ուրացումը թուլացնում է ու փչացնում հոգին, իսկ հավատը՝ այն զորացնում և ազնվացնում է: Ճշմարիտ կրոնը հավատի վրա հիմնըված կյանքն է:

«Հեռավոր երկրներից մեկում ապրում էր տարօրինակ գաղափարներ ունեցող մի թագավոր: Ամեն տեսակ հաճույքներ օգտագործած լինելով նա ցանկություն է հայտնում տեսնել նաև Աստծուն ու այդ մասին տեղյակ է պահում իր քաղաքացիներին: Եվ, որպեսզի կարողանա այն իրագործել, մարդկանց տալիս է երեք օր ժամանակ:

Ոչ մեկը չի համարձակվում այս անհեթեթ ցանկությունը կատարել: Հեռու մի այլ երկրից եկած մի հովիվ ցանկություն է հայտնում թագավորին ցույց տալ, թե ո՞ւր է Աստված: Նա թագավորի հետ պալատից դուրս է գալիս: Ամառ լինելով արևը ուղղակի այրում էր: Հովիվը թագավորին խնդրում է նայել արևին, սակայն նա չի կարողանում, քանի որ արևի ճառագայթները ծակում են նրա աչքերը: Երբ թագավորը բողոքում է, թե հովվի նպատակը

իրեն կուրացնելն է, նա պատասխանում է. «Քավ լիցի: Բայց իմացեք, որ Աստծու բյուրավոր փառքերից փոքրագույնն է միայն այս արևը, որը ձեզ ցույց տվեցի: Դուք, որ նրան անգամ չկարողացաք նայել, ինչպե՞ս պիտի կարողանաք տեսնել Աստծուն, Ով միլիոն անգամ ավելի շողշողուն է, քան արևի ճառագայթները: Անզոր են այս աչքերը: Պետք է ունենալ տարբեր աչքեր, որպեսզի հնարավոր լինի Նրան տեսնել»:

Այդքանից հետո թագավորը չի խրատվում և ուզում է իմանալ, թե Աստծու զբաղմունքն ի՞նչ է: Հովիվը խնդրում է նրան, որ հագուստները փոխեն: Երբ հագուստները փոխվում են, թագավորը դառնում է հովիվ, իսկ հովիվը՝ թագավոր, հովիվն ասում է.

«Ճիշտ այն, ինչ որ մենք հիմա արեցինք: Նա մեկին բարձրացնում է և մի ուրիշին խոնարհեցնում, մեկին մերկացնում է, մյուսին շորեր է հագցնում: Մեկին ուրախացնում է, իսկ մյուսին՝ լացացնում: Ահա այս է Աստծու զբաղմունքը» և հրամայում է թագավորին գլխատել ու ինքը դառնում է թագավոր:

Աստվածաշնչում գրված է. «Քո Տեր Աստծուն մի՛ փորձիր»:

Առանց հուսահատվելու ապրենք Աստծու ներկայության մեջ ու Նրա կողմից շնորհված այս գեղեցիկ կյանքը, օգտագործելով մեր ամեն մի րոպեն, քայլենք Հիսուսի ճանապարհով, լինենք ազնիվ, մաքուր և բարի գործեր կատարենք: Ամեն:

Մատթեոսի Ավետարանի 13–րդ գլխի 45-46 համարներում մեր Տերը ուրիշ առակների շարքում պատմում է նաև Իրական Մարգարիտի առակը:

Երանության լեռան վրա Հիսուսի առաջին քարոզով իսկ աշխարհի թշվառությունը, սուգը, ծարավն ու որբությունը մոռացող մարդիկ մի այլ ճշմարտություն տեսան: Երկնքի թագավորությունը ժառանգություն էր տրվում երեկվա խեղճ ու աղքատ, երկրի վրա թագավորներից ու աշխարհի իշխաններից միմիայն զրկանք ու արհամարհանք տեսած մարդկանց:

Հովհաննես Մկրտիչն անապատում խոսում ու նախապատրաստում էր մարդկանց սրտերը, որպեսզի ապաշխարությամբ մաքրվեն, սրբվեն և արդար ու բարի գործեր կատարեն: Հիսուսի խոստացածը, սակայն, ավելի իրական ու շոշափելի էր, քանի որ Նրան հավատացողը պիտի ճաշակեր Աստծու թագավորությունը ժառանգելու քաղցրությունը;

Ամեն ժառանգություն կամ մեծ ու փոքր հարստություն ձեռք է բերվում միմիայն զոհողությամբ, այսինքն՝ ծանր և երկարատև աշխատանքով: Անշուշտ լինում են դեպքեր, երբ մարդու *«բախտը»* բերում է ու չսպասված տեղից անակնկալ կերպով ժառանգում է մեծ հարստություն, սակայն դրանք շատ հազվադեպ են լինում, գոնե ես իմ հոգևոր ծառայության ընթացքում հիշում եմ հազիվ մեկ-երկու դեպքեր: Իրապես չես կարող հարստանալ, եթե գիշեր-ցերեկ առանց հանգստի չաշխատես: Ես կարդացել եմ, որ մի մեծահարուստ մարդ իր ամբողջ կյանքն անցկացրել է մի երազով՝ դառնալ միլիոնատեր: Եվ առանց հանգստի աշխատելով՝ իր կյանքի հիսուներորդ տարուց հետո հասել է իր նպատակին, սակայն, դժբախտաբար կորցրել է իր ամենաթանկագին բանը՝ առողջությունը: Բժիշկը նրան արգելել է նույնիսկ մեկ կտոր միս ուտել և շատ այլ բաներ: Կարդացել եմ նրա խոսքն ուղղված մի

առողջ մարդու. *«Ամբողջ հարստությունս կտամ՝ քեզ պես առողջ լինելու համար»:* Հիսուս, երբ հավատացյալին խոստանում է Երկնքի թագավորությունը, չի մոռանում նաև շեշտել զոհողությամբ դրան հասնելու դժվարություններն ու նեղությունները:

Նա ասում է, որ՝ Աստծու թագավորությունը նրմանվում է մի վաճառականի, որի գործը ապրանք գտնելն ու ծախելն էր: Նաև՝ թանկարժեք մարգարիտներ: Եվ այս վաճառականը մի մարդու մոտ տեսնում է մի թանկարժեք մարգարիտ: Ուշադրությամբ նայելուց, քննելուց հետո համոզվում է, որ այն շատ արժեքավոր է, ուզում է անպայման գնել, այնուհետև վերավաճառել, որպեսզի շատ դրամ աշխատի: Սակայն ցանկությունը քիչ էր. վաճառականն ստուգում է իր գրպանի դրամը, քիչ է գալիս, ապա տուն է գնում, վաճառում է կնոջ ամբողջ ոսկեղենը ու դրամի վերածում, այնուհետև վաճառում է այլ զարդեր և իրեր, մի խոսքով, կարողանում է հավաքել անհրաժեշտ գումարը ու մարգարիտը գնել: Ես պատկերացնում եմ, թե նա ինչպիսի՞ ուրախություն պիտի ապրեր՝ իր առջև դնելով այդ արժեքավոր մարգարիտը (հմմտ. Մատթ. 13:46):

Առակի պատմությունը այս է.

«Աստծու կամ Երկնքի արքայությունն ընդհանուր մտքով նշանակում է, որ Աստված կատարելապես իշխում է ու ամեն ինչ կատարվում է Նրա կամքի համաձայն»,- ասում է 20-րդ դարի Սուրբ Էջմիածնի միաբանության նշանավոր դեմքերից լուսահոգի Կարապետ Եպս. Տեր Մկրտչյանը և շարունակում է. *«Եթե ավետարանների մեջ շատ տեղերում արքայությունը ներկայացվել է իբրև մի բարիք, մի գանձ, որը պետք է աշխատենք ձեռք բերել, այդ նրա համար է, որ նույնիսկ Աստծու հովանավորության տակ գտնվելը, Նրա կամքի համաձայն շարժվելը նկատվում է իբրև բարձրագույն բարիք» (Կարապետ Եպս. Տեր Մկրտչյան, «Քրիստոնության իսկությունը»):*

Հիսուս սակայն բացատրում է, որ Երկնքի արքայությունը միանգամից չի կարող տեղի ունենալ, դրա համար ժամանակ է պետք: Ինչպես որ մանանեխի հատիկի *(մանանեխը ցորենի հատիկից էլ փոքր է)* ամբողջ բույսը պարունակում է իր սկզբնական վիճակում, այդպես էլ յուրաքանչյուր քրիստոնյա, որը մանանեխի հատիկի չափ հավատ ունի, Աստծու արքայությունը ժառանգելու ու ստանալու երազն ունի իր սրտում: Եվ նա կարող է դա ստանալ եթե արժանի է անշուշտ միայն այն ժամանակ, երբ մարմինը մեռնի և մնա Աստծու սիրով ստեղծված նրա անմահ հոգին:

Հասկանալի է, որ ապրելով այս երկրային կյանքում՝ բոլորս էլ մտածում ենք ինչ-որ ձևով ապահովել մեր ընտանիքների նյութականը, որպեսզի քիչ թե շատ լավ ապրելակերպ ունենանք: Իբրև կյանքի վաճառականների՝ մեր բոլորիս առջև միշտ էլ դրվում են թանկարժեք ու արժեքավոր մարգարիտներ և մենք մտածում ենք դրանք վաճառելով ավելի օգուտ ունենալու մասին, որպեսզի մեր ընտանիքների ապագա երջանկությունը ապահովենք, այսինքն՝ ավելի պարզ ասած, հանգիստ քնենք ու դրամական մտահոգություն չունենանք:

Բայց հարց է ծագում, արդեօք ա՞յդ է Իրական մարգարիտը, որը երկար ժամանակ փնտրում ենք: Քրիստոնյա մարդու պատասխանը պիտի լիներ. *«Անշուշտ, ո՛չ»:* Ինչո՞ւ: Ինչպես վաճառականի պարագային ասացինք, նա ամեն ինչ արեց, որպեսզի այդ թանկագին մարգարիտը գնի, այսինքն՝ կարողացավ հավաքել անհրաժեշտ դրամը, նույնը համոզված ենք, պիտի աներ մեզանից ամեն մեկը, եթե դրա անհրաժեշտությունը զգացվեր: Պատկերացրեք, եթե մենք նույնպիսի հավատով, եռանդով ու աշխատասիրությամբ մեր ունեցած հարստությունը տրամադրենք՝ գտնելու Իրական մարգարիտը՝ Ճշմարտության Բանալին, որ է մեր Փրկիչը՝ Հիսուս Քրիստոս, ապա վստահ եղեք, որ անպայման պիտի ժա-

ռանգենք Երկնային թագավորությունը: Ո՛չ մի գանձ, հարստություն և ժամանակավոր երջանկություն չեն կարող փոխարինել հավիտենական այն ուրախությանը, որը Փրկիչը Ինքն է մեզ տալիս Իր թագավորական իշխանությամբ, Իր հույսով ու, մանավանդ, մեր նկատմամբ ունեցած Իր անհուն սիրով:

Ուրեմն, իբրև հայ քրիստոնյաներ, լավ պիտի հասկանանք ու գիտակցենք, որ այս երկրային կյանքի թանկարժեք մարգարիտներն աղոթքի և հավատի միջոցով մեր կատարած բարի ու արդար գործերն են, որոնցով միայն պիտի կարողանանք Քրիստոսին ունենալ մեր մեջ: Քրիստոսին ունենալ մեր մեջ նշանակում է, ինչպես Ինքն է ասում. *«Խաչն առնել ու գնալ Նրա հետևից»,* այսինքըն՝ օգնել կարիքավորին, խնամել հիվանդին, մխիթարել սգավորին, այցելել բանտարկյալներին, բարձրացնել ընկածին, մի խոսքով՝ նմանվել Աշխարհի Լույսին, մեր Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին: Ամեն:

ՃՇՄԱՐՏԱԽՈՍ ՔՐԻՍՏՈՆՅԱՆ

«Ձեր խոսքը լինի «այո»-ն այո և «ոչ»-ը ոչ,, որովհետև դրանից ավելին չարից է» (Մատթ.5:33-37):

Հիսուսի այս խոսքերը ահա երկու հազար տարիներից ի վեր զանգերի ղողանջների նման հնչում են յուրաքանչյուր քրիստոնյայի ականջներում: Մեր Տերը, երբ խոսում էր ճշմարտության մասին, պատվիրում էր, որ մարդիկ իրենց խոստումների մեջ չափավոր լինեն, «*այո*» չասեն, եթե մի բան չեն կարող կատարել և կամ եթե պիտի ասեն, հետո թող չհրաժարվեն իրենց ասածից, որովհետև ճշմարտախոսությունը առաքինություն է, մինչդեռ՝ ստախոսությունը՝ մեծ մեղք է: «*Ես եմ ճշմարտությունը և կյանքը*»,- ասաց Հիսուս:

Նա ճշմարտախոսությունը շատ արժևորեց ու այն նույնիսկ իր Լեռան Քարոզի նյութ դարձրեց, ուր հստակորեն խոսեց նաև սուտ երդման մասին: Ուզում եմ ամբողջությամբ մեջբերել Մատթէոսի Ավետարանի այդ հատվածը. «*Լսել եք դարձեալ, թե ինչ ասվեց նախնիներին. «Սուտ մի երդվիր, բայց պիտի հատուցես Տիրոջը այն, որ երդվել ես»: Իսկ ես ձեզ ասում եմ՝ «Ամենևին չերդվել. ո՛չ երկնքի վրա, որովհետև Աստուծո Աթոռն է, ո՛չ երկրի վրա, որովհետև նրա ոտքերի պատվանդանն է, և ո՛չ էլ Երուսաղեմի վրա, որովհետև մեծ Արքայի քաղաքն է: Եվ քո գլխով էլ չերդվես, որովհետև չես կարող մի մազ իսկ սպիտակ կամ սև դարձնել:: Այլ ձեր խոսքը լինի «այո»-ն այո և «ոչ»-ը ոչ, որովհետև դրանից ավելին չարից է» (Մատթ.5:33-37):*

Հին կտակարանում կարդում ենք, թե Հիսուսի ժամանակ երդումներ և զանազան խոստումներ կատարելը սովորություն ու նույնիսկ կարող եմ ասել պահանջ է եղել: Հետաքրքիր է, որ այսօր, երբ մարդկային ուղեղը զարգացման հզոր բարձունքների է հասել, երդվելու սովորությունը դեռևս գոյություն ունի, մանավանդ պետական դահլիճներում ու դատարաններում: Մեր Տերը, սակայն

Մովսիսական մի շարք հնացած օրենքների հետ, ջնջեց նաև այս երրորդ պատվիրանը. *«Ես հիմա ասում եմ ձեզ, որ երբեք չերդվեք, ձեր «այո»-ն* այո և *«ոչ»-ը ոչ պետք է լինի»:*

Այո՛, ճշմարտախոս քրիստոնյան բոլորովին պետք չունի երդմամբ երաշխավորելու իր որևէ խոսքը կամ խոստումը: Նրա ապրած պարկեշտ կյանքը, անբիծ նկարագիրն ու աղոթանվեր հոգին շատ ավելի վավերական են, քան որևէ երդում:

Հիսուս դատապատրեց փարիսեցիներին, որովհետև նրանք կեղծավոր էին, գործի մեջ անպարկեշտ և չունեին բարի նպատակներ: Դրա համար նրանց նմանեցրեց ճերմակ գերեզմանի, որն արտաքնապես գեղեցիկ է, իսկ ներսից՝ նեխած:

Ճշմարիտ քրիստոնյան գիտի ապրել ու ապրեցնել, քանի որ կյանքը, որ Աստծո կողմից տրվել է մարդուն՝ ապրելու համար է: Մեր սրբերը և մարտիրոսները իմացել են ապրել նույնիսկ տառապանքի ու ցավերի մեջ: Այսօր երբեմն լսում եմ այսպիսի մի արտահայտություն, երբ մարդիկ մի փոքր նեղության ու դժվարության են հանդիպում. *«Մեռնեմ, ազատվեմ ամեն ինչից»:* Մեռնելն այսօր շատ հեշտ է, մանավանդ այս զարգացած ժամանակաշրջանում: Սակայն դժվարն ապրելն է, բարի գործեր կատարելը ու Հիսուսին նմանվելով մարդկանց օգտակար լինելը:

Աստված, սրբություն, կյանք, մահ և սիրտ խաղալիք բաներ չեն ու թեթևությամբ չպետք է առնվեն յուրաքանչյուրիս կողմից: Իրապես աշխարհում շատ ողբերգություններ և ցեղասպանություններ կկանխվեին ու տեղի չէին ունենա, եթե մարդիկ և ինչո՞ւ չէ նաև պետություններ՝ ճշմարտախոսությունից չվախենային:

Երբ Հույն մեծանուն փիլիսոփա Արիստոտելին հարցնում են, թե՝ *«Ի՞նչ է շահում ստախոսը իր սուտ երդումով»,* նա պատասխանում է. *«Նրա շահը այն կլինի, որ*

մարդիկ այլևս չեն հավատա իրեն, երբ իրական ճշմարտությունը խոսի»:

«Այո»-ի և «ոչ»-ի խնդիրը հոգեբանության մեջ ևս կարևոր է: Շատ մարդիկ անտեղի փափկանկատություն են ցույց տալիս և հաճախ էլ քաղաքավարության զոհ են գնում: Ուզում են մի խնդրանք մերժած լինել՝ *«ո՛չ»* ասելով, ցանկություն են ունենում *«այո՛»* չասել, բայց անկարող են: Սրանից շատ տարիներ առաջ Էջմիածին քաղաքում մի մարդ էի ճանաչում, ով կարևոր պաշտոն ուներ: Այս մարդը սիրում էր խոստանալ՝ երբեք որևէ մեկին *«ոչ»* չէր ասում. ուրախացնում էր ում որ խոստանում էր, բայց հետաքրքիրն այն էր. երբ չէր կատարում իր տված խոստումը՝ ինքն էր ուրախանում: Դժբախտաբար այս սովորությունը կարծես մի տեսակ նրա կյանքին մաս կազմող երևույթ էր դարձել: Իմ կարծիքով ավելի լավ է այսպիսի մոլությունից հեռու մնալ՝ *«ստախոս»* անունը չվաստակելու համար:

Աստծո կողմից ամեն մարդ օժտված է զանազան շնորհներով և կարողություններով: Սա անժխտելի է: Մեր Տերը Հիսուս, երբ խոսում էր այս մասին, խրատում էր և հույս էր տալիս մարդկանց, ասելով. *«Եթե մանանեխի հատիկի չափ հավատ ունենաք, կարող եք նույնիսկ լեռները շրջել»:* Աշխարհի ստեղծման օրից Աստված մարդուն տվել է ազատություն և անսահման իշխանություն բնության վրա: Եվ բացի սրանից ամեն մարդ իշխանություն ունի նաև ինքն իր մարմնի, հոգու, սրտի ու մտքի վրա: Ստուգված է և ճշտված, որ մարդը իր ներքին ու արտաքին կարողությունների մեկ տասանորդն իսկ անգամ չի գործածում և նույնիսկ հաճախ այն էլ սխալ է օգտագործում և կամ հակառակը՝ դեպի չարն է գործածում:

Մատթէոսի Ավետարանում Հիսուս պատմում է նաև երկու եղբայրների մասին: Որով ավագ որդին խոստանում է դաշտ գնալ և օգնել իր հորը, բայց չի գնում ու խաբում է նրան: Իսկ կրտսեր որդին իր հորը ասում է *«չեմ գնա»*,

սակայն զգալով, որ հայրը ծեր է և պետք ունի իր օգնության, մոռանում է իր ասածը ու գնում է աշխատելու նրա հետ միասին *(Մատթ. 21: 28-31)*:

Իրապես իր խոսքի տեր եղող մարդը քաջ է, անկեղծ ու վստահելի անձնավորություն է:

Ես կարծում եմ առողջ և երջանիկ կյանքի համար մի մնայուն միջոց կա. մեր սրտերում ու հոգիներում աճեցնել դրական, բարի և գեղեցիկ խորհուրդներ ու ցանկություններ և մանավանդ հեռացնել մեզանից ամեն տեսակի ժխտական զգացմունքներն ու մտածմունքները: Մի խոսքով կյանքի նկատմամբ լինենք միշտ լավատես: Հիշենք մեր սիրելի աշուղ Ջիվանու հայտնի երգի խոսքերը. *«Չախորդ օրերը ձմռան նման կու գան ու կերթան, վհատելու չէ վերջ կունենան, կու գան ու կերթան»*:

Մեր երեխաները պետք է փոքր տարիքից ծանոթանան աստվածային ճշմարտություններին: Բոլորս միասնաբար պիտի ցանենք նրանց սրտերում և հոգիներում՝ բարության, գեղեցիկի, կյանքի նկատմամբ լավատեսության սերմերը և, որ ամենակարևորն է՝ զորացնեք նրանց մեջ հավատն ու քրիստոնեաբար ապրելու ոգին: Միայն այս ձևով պիտի կարողանանք առողջ, գիտակից, հավատով, սիրով, պարկեշտ նկարագրի տեր և մաքրությամբ լի մի սերունդ ունենալ: Ամեն:

ԾԱԾՈՒԿ ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆԸ

«Ճշմարիտ եմ ասում ձեզ, այդ չքավոր այրին ավելի շատ գցեց, քան գանձանակի մեջ մյուս բոլոր դրամ գցողները…» (Մարկ. 12:43):

Մարկոսի Ավետարանի 12-րդ գլխի 41-44 համարներում Հիսուս խոսում է այրի կնոջ լումայի մասին:

Ավետարանն ասում է, թե Հիսուս մի փոքր հանգստանալու համար լուռ կանգնած էր տաճարի մոտ՝ գանձատան առջև և դիտում էր եկող-գնացող ուխտավորներին, ովքեր ուխտավորության հատուկ պարտականությունը կատարելով, գալիս էին գանձանակի մեջ գցելու իրենց դրամական նվերները:

Գանձանակը հաստատվել էր Մովսես մարգարեի կողմից: Հիսուսի ժամանակ Հերովդեսյան տաճարի գանձանակը դրսի կողմից տասներեք տարբեր անցքեր ուներ: Ամեն մի անցքը հատկացված էր տաճարի կամ արարողությունների որոշակի կարիքների համար և ուխտավորը իր կարողության չափով յուրաքանչյուրի մեջ իր նվերը պիտի գցեր:

Բոլորի հետ միասին մոտենում է մի աղքատ, խեղճ ու տառապյալ այրի մի կին, ձեռքին ունենալով միայն երկու լումա, որը հրեական երկու գրոշն էր, շատ փոքր մանր դրամ, այստեղի դրամով կարող է համապատասխանել մոտավորապես քսանհինգ սենթի և այն նետում է գանձանակի մեջ:

Այս խեղճ ու համեստ օրինապահ այրի կնոջ արարքը մեծ տպավորություն է թողնում Հիսուսի վրա: Նա պարտավորված չէր նվեր տալու, բայց հարգելով օրենքը իր պարտքը կատարելու գիտակցությամբ տալիս է իր վերջին գումարը: Առաքյալները նկատում են Հիսուսի դեմքի գոհունակ ժպիտը: Մեր Տերը նրանց Իր մոտ կանչելով ասում է. *«Դուք տեսնում եք այս նվիրատուներին, թերևս ձեր ուշադրությունը գրավեցին և ձեզ գոհունակու-*

թյուն պատճառեցին: Սակայն դրանք այնքան էլ մեծ արժեք չունեն, որովհետև նրանք ո՛չ թե զոհողություն արեցին, այլ իրենց ավելացածից Աստծուն նվիրեցին: Նրանց հետ մի խեղճ կին եկավ և երկու լումա գցեց: Այդ խեղճ կինը, թերևս իրեն զրկեց անհրաժեշտ սնունդից, իր կյանքից զոհողություն արեց, որպեսզի տաճարին նվիրաբերելով կատարի զանձանակի օրենքը: Ի՞նչ իմանաս, թերևս դա նրա մի օրվա ուտելիքի դրամն էր, որից նա իրեն զրկեց: Ահա ճշմարիտ նվիրատվության մի օրինակ, Աստծուն հաճելի մի գործ, չքնաղ ու զորավոր մի առաքինություն: Աստծուն մատուցած նվերի արժեքը ոչ թե գումարի նյութական չափն է, այլ զոհողության...»:

Մեր Տերը չի կարողանում տանել կեղծավորությունը, *«քանի որ ասում են և չեն անում» (Մատթ. 23:3)* և հիանալի կերպով տեսնում էր հրեա ղեկավարների վարած հակասական կյանքը. դրսից՝ սուրբ, արդար, օրինապահ, իսկ ներսից՝ կեղծ, անօրեն և օրինազանց: Մեր ժողովուրդը հրաշալի կերպով է բնութագրել այսպիսի մարդկանց. *«Դրսում՝ քահանա, ներսում՝ սատանա»:*

Հիսուսի խրատն է. *«Զգույշ եղեք, որ ձեր ողորմությունը մարդկանց առջև չանեք, որպես թե այն լիներ ի ցույց նրանց... Այլ երբ դու ողորմություն անես, թող քո ձախ ձեռքը չիմանա, թե ինչ է անում աջը, որպեսզի քո ողորմությունը ծածուկ լինի...» (Մատթ. 6:1-4):*

Բարի գործ կատարող մարդու մեջ Աստված է բնակվում:

Որպեսզի ավելի հասկանալի լինի, թե նվեր տալն ինչքան կարևոր է, բերենք կուժի օրինակը. երբ այն լիքն է ջրով, այլևս կարիք չկա լցնելու, իսկ երբ դատարկվում է, նորից ենք լցնում: Նույնն է նաև մարդու պարագային, երբ նա պահում է Աստվածային շնորքները ու չի վերադարձնում Աստծուն, հետ չի ստանում, եղածն էլ է կորցնում, իսկ երբ նվիրում է, Աստված նրան առատորեն վարձատրում է:

Աստվածաշնչի Դ-րդ Թագավորության գրքում պատմված դեպքը դրա վառ ապացույցն է.

«Մի այրի կին, որի ամուսինը սովի ժամանակ շատ մարգարեների էր կերակրել, գալիս է Եղիսե մարգարեի մոտ ու ասում, թե իր ամուսինը մեռել է և պարտատերերը եկել են, որպեսզի իր երկու որդիներին պարտքի դիմաց իբրև ստրուկ տանեն իրենց մոտ: Մարգարեն նրան հարցնում է, թե տանը որևէ բան ունի՞ և իմանալով, որ միայն օծելիք յուղ ունի, հանձնարարում է, որ գնա հարևաններից ինչքան դատարկ աման ունեն վերցնի, ապա իր զավակների հետ մտնի տունը, դռները փակի ու լցնի բոլոր ամանները: Կինը այդպես էլ անում է: Բոլոր ամանները լցվում են յուղով, մինչև որ որդիները հայտնում են իրենց մորը, որ այլևս ամաններ չկան: Այդ ժամանակ յուղը դադարում է շատանալուց (հմմտ. Դ. Թագ. 4:1-6): Այրի կնոջ ամուսինը բարի գործ էր կատարել, իր ունեցվածքից բաժին էր հանել մարգարեներին, որպեսզի ապրեն: Պատմությունից երևում է, որ Աստված հատուցեց նրա կնոջն ու զավակներին՝ իրենց այս բարի գործի համար: Պիտի տաս, որ ստանաս, ինչպես շենք կառուցող վարպետը, քանի դեռ իր ձեռքում քար կամ շինանյութ ունի, բանվորը նորը չի տալիս նրան, իսկ երբ սկսում է շարել, պակասում և նորից է ստանում:

Սողոմոն իմաստունը խրատում է. *«Որդյակ, եթե ուզում ես այս կյանքի դժբախտություններից հեռու մնաս, արդար վաստակիցդ պատիվ արա Տիրոջը և Նրա պտղից բաժին հանիր քո արդարության արմատներից»:* Հոգևոր իմաստով այս խրատը պետք է հասկանալ հետևյալ ձևով. արդար վաստակը՝ բարի գործերն են՝ *պահքը, աղոթքը, ողորմությունը, քաջությունը և այլն,* պտուղների արմատները հոգևոր իմաստությունն են՝ *հավատը, հույսը և սերը:*

Հիսուս առաջին հերթին խոսքը ուղղում է Իր առաքյալներին, որոնք՝ իբրև կենաց խոսքը տարածողներ, պատ-

գամ էին ստանում իրենց կյանքը ամբողջությամբ նվիրելու Հիսուսին և Նրա Ավետարանին: Եվ պատմությունը վկայում է, որ առաքյալները և մեր Եկեղեցու հայրերն իրենց կյանքը լրիվ նվիրեցին Աստծուն ու Քրիստոսի ճշմարտությունը տարածելուն, ինչպես տառապյալ այրի կինը, ով իր ամբողջ ունեցածը, թեկուզ երկու լումա, նետեց Տաճարի գանձանակի մեջ

Հիսուս այսօր Իր խոսքն ուղղում է ամեն մեկիս, բայց Նրա խոսքը չպետք է հասկանանք բառացի կերպով: Մեզ տրված գլխավոր պատգամը այն է, որ երբ նվիրում ենք, սրտանց ու հավատով պետք է տանք, առանց կասկածելու, քանի որ մենք դատավոր չենք, որպեսզի դատենք որևէ մեկի սխալ արարքը կամ մեղքը. կա Գերագույն Դատավոր, որ է Աստված, թողնենք ամեն ինչ Նրա հույսին:

Ավետարանի պատմությունը մեզ հրավիրում է մտածելու, որ այդ խեղճ, աղքատ, տառապյալ այրի կինը իր օրվա սնունդը զոհելով, իր խղճի պարտականությունը կատարեց՝ նրա մեջ խառնելով սեր, համոզում ու գիտակցություն: Երանության մեջ կլինենք բոլորս, եթե մենք էլ ճիշտ այս գիտակցությամբ և զոհողության ոգով շարժվենք: Ամեն:

Ո՞Վ Է ՄԱՐԴԸ

Ինչպես միշտ, այսօր էլ յուրաքանչյուրիս հետաքրքրում են այս հարցերը. *«Ո՞վ է մարդը, ինչպե՞ս ստեղծվեց, ո՞ւմ կողմից ստեղծվեց, ի՞նչ նպատակով և ի՞նչ վիճակի հասավ ստեղծվելուց հետո»:*

Նախ դիմենք Աստվածաշնչին և երբ բացենք Ծննդոց գրքի առաջին գլխի, 27 համարը, այնտեղ կհանդիպենք այս արտահայտության. *«Աստված մարդուն ստեղծեց իր պատկերով... (Ծննդոց, 1:27)* և շարունակելով կկարդանք. *«Աստուած ստեղծեց աշխարհը՝ երկինքն ու երկիրը, ցամաքն ու ծովը, կենդանիներին ու թռչուններին և տեսաւ, որ ամեն ինչ գեղեցիկ ու բարի է, ասաց՝ «թող լինեն»:* Բայց Աստծու ստեղծագործության գագաթնակետը հանդիսացավ Մարդը, որին Նա ստեղծեց հողից և Իր շունչը տվեց նրան: Ծննդոց գլխի առաջին գլխի 26-28 համարներում նաև կարդում ենք. *«Աստուած ասաց. «Մարդ ստեղծենք մեր կերպարանքով ու նմանությամբ, նա թող իշխի ծովի ձկների, երկնքի թռչունների, ողջ երկրի անասունների և երկրի վրա սողացող բոլոր սողունների վրա: Եվ Աստված մարդուն ստեղծեց իր պատկերով, Աստուծո պատկերով ստեղծեց նրան...» (Ծննդոց 1:26-28):*

Ահա այսպես մարդը, *(որին Աստված Ադամ կոչեց, որ նշանակում է Հողածին, հողից ծնված)*, ստացավ Աստծո պատկերը և Նրա կերպարանքը: Երբ որևէ մեկը ընթերցի Սուրբ Գիրքը ու հանդիպի այս արտայայտության, ի՞նչ պիտի հասկանա. կարծո՞ւմ եք, որ բացատրելի պիտի լինեն նրա համար այս խոսքերը: Բնական է, որ իբրեւ մարդ, նա այսպես պիտի մտածի. քանի որ Աստված մարդուն ստեղծեց Իր պատկերով, ուրեմն՝ նա ուներ քիթ, բերան, ականջներ, ձեռքեր, ոտքեր և այլն, այն ինչ որ սովորական մարդը ունի:

Ուրեմն, ի՞նչ պիտի հասկանանք *«Աստված մարդուն ստեղծեց իր պատկերով»* արտահայտությունը կարդալով: Ամենակարճ և հստակ պատասխանն այս է.

«Մարդն Աստծուն նմանվում է իր հոգով, որովհետև Նա Իր շունչը փչեց նրա մեջ, Իր հոգու շունչը, որպեսզի մարդը հավիտենապես ապրի»: Սկզբնական շրջանում քանի մարդը դրախտում էր, Աստծու կամքով անմահ էր, սակայն երբ անհնազանդ գտնվեց ու արտաքսվեց դրախտից երկիր, անմահությունը փոխակերպվեց մահվան, և մարդն ապրում է մի որոշ ժամանակ՝ առանց իմանալու, թե ինչքան, ապա մեռնում է, սակայն նրա հոգին, որ տրվել էր Աստծու կողմից, մնում է անմահ ու վերադառնում է իր Տիրոջ մոտ:

Մարդն իր ազատ կամքով, ապրում է իր կյանքը, երբեմն հաջող կամ անհաջող, մեղավոր կամ անմեղ, բարի կամ չար, իմաստուն կամ անխելք, ուրախ կամ տխուր, հավատացյալ կամ անհավատ և կամ այլ նմանօրինակ ձևերով: Կյանքի ճանապարհները շատ են: Նա, ըստ իր կամքի, ընտրում է իր կյանքի ուղղությունը և պատասխան տալիս իր գործած արարքների համար: Երբ լինի Քրիստոսի Երկրորդ Գալուստը և Ահեղ Դատաստանը, ոչ մեկը մյուսի փոխարեն պատասխան չի տալու Գերագույն Դատավորին, որ է Քրիստոս: Ավետարանը ցույց է տալիս երկու ճանապարհներ, մեկը կորստյան, իսկ մյուսը՝ կյանքի ու փրկության՝ Քրիստոսով: Մեր Տերն ասում է. *«Մտեք նեղ դռնով, ինչքան լայն է դուռը և ընդարձակ՝ ճանապարհը, որ դեպի կորուստ է տանում և բազմաթիվ են նրանք, որ մտնում են դրանով: Ինչքան անձուկ է դուռը և նեղ՝ ճանապարհը, որ տանում է դեպի կյանք, և սակավաթիվ են նրանք, որ գտնում են այն» (Մատթ. 7:13-14):*

Ձեզանից որևէ մեկը կարող է նաև այս հարցը տալ. *«Աստված հոգի է, հասկանալի է. հետևաբար մարդը մարմնավոր էակ լինելով, կարո՞ղ էր աստվածային դեմք կամ պատկեր ունենալ»:*

Իհարկե: Բայց ավելի հստակեցնելու և հասկանալի դարձնելու համար իմ պատասխանը, տեսնենք թե ի՞նչ է ասում 5-րդ դարի մեր թարգմանիչ վարդապետներից

Եզնիկ Կողբացին. *«Երբ Աստված ցանկություն էր ունենում երևալ իր սրբերին, ոչ թե ուրիշ կերպարանքով էր երևում, այլ միայն մարդկային դեմքով, «որին ստեղծեց իր պատկերով» և սա իզուր տեղը չարեց, այլ, որպէսզի սկզբից սովորեցնի, պատրաստի մարդկանց, իմանալու, թե երբ իր Որդուն ուղարկի աշխարհ իբրև մարդ, տարօրինակ բան չհամարեն սա, այլ մանավանդ իմանան, որ ինքը Աստված այդ կերպարանքով էր հայտնվել« (Ե. Կողբացի «Եղծ Աղանդոց» 1:23):* Ինչպես Աստված չի տեսնվում իբրև հոգի, մարդու հոգին էլ չի երևում, բայց հայտնվում է նրա խելքի ու ազատ կամքի մեջ: Նրա պարտականությունն է լինել մաքուր և պահել իր հաղորդակցությունը Աստծու հետ, որովհետև, ըստ Ավետարանի՝ *«սուրբ, մաքուր, անմեղ սիրտ ունեցողներն են, որ պիտի տեսնեն Աստծուն: «Երանի նրանց որ սրտով մաքուր են, որովհետև նրանք Աստծուն պիտի տեսնեն» (Մատթ. 5:8):*

Ի՞նչ եք կարծում, մարդիկ պիտի գոհանա՞ն այս պատասխանով. ես գոնե կարծում եմ, որ ոչ, բայց հարկավոր է իմանալ, որ մեր սահմանափակ ուղեղը ամեն բանի չի հասնում. քանի որ հոգեկան աշխարհի իրողությունները ապացույցներով չեն հաստատվում, այլ՝ հավատով: Այն ինչին, որ մեր խելքը չի հասնում, պիտի փորձենք հավատի ճանապարհով տեսնել: 12-րդ դարի մեր Կաթողիկոսներից Ներսէս Շնորհալի Հայրապետը, շատ գեղեցիկ ձևով է բացատրում այս. «*Անհասկանալին հասկանալու միակ միջոցն է հավատալ Սուրբ Գրքում ասվածներին»,* որովհետև աստվածային ծնունդին մեր խելքը չի հասնի և խոսքով էլ չի բացատրվի: Որով քրիստոնյաների պարտավորությունն է՝ խոնարհությամբ ընդունել Սուրբ Գրքում ավանդվածներն ու սուրբ հայրերի բացատրությունները և լավ սովորել Ավետարանի պատմությունները» (Քրիստոնեական, էջ 37):

«. . . Մարդու հավատն ու կյանքը համաձայն պիտի լինեն իրար հետ» (Քրիստոնեական, էջ 141, 142): Սրա

համար մեր Մայր Եկեղեցու զավակները պետք է, որ փոքր հասակից լավ սովորեն Ավետարանը, կատարելապես հմտանան իրենց Եկեղեցու պատմության ու ավանդությունների մեջ, որպեսզի կողքից եկող քամիները նրանց չնետեն մեր պապերի ավանդած կրոնի ոգուն խորթ, տեսակ-տեսակ այլ կրոնների ու աղանդների մեջ:

Ինչպիսի՞ դասեր պիտի քաղեն քրիստոնյաները, սրբակենցաղ մի կեանք ունենալու համար:

Երեք գլխավոր կետեր կան, որոնց վրա կարող ենք ասել հիմնված են քրիստոնեական կրոնի բարոյական պատվիրանները.

ա. Ճանաչել ճշմարիտ Աստծուն.

բ. Հարգանք ունենալ քո անձի նկատմամբ.

գ. Սիրել ընկերոջը:

20-րդ դարի մեր հայրենասեր Հայրապետներից և 1918 թվականի Սարդարապատի հերոսամարտին իր եռանդուն մասնակցությունը բերած Երջանկահիշատակ Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանցը, *«Ո՞վ է մարդը»* հարցմանը, այսպես է պատասխանում. *«... Կառապա՞ն եք, կարող եք բարի, ազնիվ և արդար կառապան լինել: Կոշկակա՞ր եք, կարող եք երեսի քրտինքով վաստակած, մաքուր հաց ուտել և կերակրել ձեր զավակներին...: Ծնո՞ղ էք: Ի՞նչ թանկագին բան է զավակը, խելոք մանչուկը, սիրունիկ աղջիկը: Արտաքուստ ի՞նչ փոքրիկ բաներ են մայրական պարտավորությունները՝ սնունդ տալ, լողացնել երեխային, մաքրել ու լվանալ նրա շորերը, քնցնել ժամանակին և այլ բազմաթիվ այսպիսի մանր բաներ: Բայց այս մանր բաներից են կախված մտածող ու զգացող՝ բանական և բարոյական մի էակ ստեղծելը»:*

Դժբախտաբար այսօր մարդիկ չեն ուզում հետաքրքրվել Աստուծո գոյությամբ: Միակ բանը, որով զբաղված են ժամանակակից մարդկանց գրեթե մեծագույն մասը, իրենց առօրյա կյանքն է, որից դուրս նրանց ուրիշ ոչինչ չի հետաքրքրում: Բարեպաշտ մի հայ կին հարցնում է կրոնից

հեռու իր բարեկամին. *«Քեզ երբեք եկեղեցում չեմ տեսնում, ի՞նչ է պատահել«:* Մարդը պատասխանում է. *«Վերնինին չանհանգստացնենք եկեղեցով, աղոթքով կամ նման բաներով: Նա իր գործին, մենք էլ մեր գործին...»:* Ինչպիսի՜ անտարբերութիւն:

Չնայած այս մասին միշտ էլ խոսել ենք ու առանց ձանձրանալու պիտի շարունակենք խոսել, բայց մեկ է մարդիկ, դժբախտաբար, չեն լսել և երբէք էլ չպիտի լսեն, ու միշտ էլ պիտի արհամարհեն Ամենազոր Աստծու ձայնը:

Սակայն եկեք հոռետես չլինենք, հույսներս չկորցնենք, այլ լավատեսորեն, հավատով ու սիրով մոտենանք կյանքի բոլոր դժվարություններին, նեղություններին ու նույնիսկ ամենատխուր երևույթներին: Եվ եթե ամեն օր աղոթենք, անձանձրույթ աղոթենք, կտեսնեք թե ինչքան հեշտ պիտի լինի ձեզ համար հաղթահարել ամեն ինչ, և կյանքը ձեզ համար շատ ավելի գեղեցիկ ու գրավիչ պիտի լինի: Քանի որ Աստուծո պատկերով ենք ստեղծված, փորձենք նմանվել Նրան, սիրենք իրար, բարի, ազնիվ, արդար ու մաքուր սիրով և ներողամիտ լինենք մեկս մյուսի նկատմամբ: Ամեն:

ԱՇԽԱՐՀԻ ՇԱՀԸ

«Ի՞նչ օգուտ է մարդուն, եթե աշխարհը շահի, բայց իր անձը կորցնի....» (Ղուկ.9:25-26):

Հիսուս ասում է. *«Ով սիրում է իր անձը պիտի կորցնի այն, իսկ ով այս աշխարհում իր անձն ատում է, այն կպահի հավիտենական կյանքի համար» (Հովհ. 12:25):* Ըստ մեր Տիրոջ, այն անձը, ով որ մտածում է միայն իր մասին, մեկ է մի օր պիտի մեռնի ու հեռանա այս կյանքից, ի՞նչ օգուտ է, եթե նա ապրել է անիմաստ կյանքով: Այդ անձը պիտի գիտակցի, որ իր ապրած անիմաստ կյանքի համար պիտի արժանանա հավիտենական պատժի: Ո՞վ պիտի հիշի նրան կամ ինչպե՞ս պիտի հիշեն: Իսկ նրանք, ովքեր չեն մտածում իրենց անձի մասին, այն պիտի պահեն հավիտենական կյանքի համար: Ո՞ւր է հավիտենական կյանքը, չէ՞ որ մենք գիտենք, թե մարդ իբրև Աստծու ստեղծած արարածը ապրում է ժամանակավոր մի կյանքով, ինչպե՞ս կարող է իր անձի մասին չմտածող մարդը այն պահել հավիտենական կյանքի համար: Շատ պարզ է, երբ մենք մշտապես հիշում ենք նրան, իբրև Աստծու ճանապարհով ապրած մարդու, ով կարողացել է բարի ու արդար գործեր կատարել, ապա նա մեր հիշողության մեջ մնում է մնայուն կերպով: Որով իր բարի անունով նա ապահովում է հավիտենական կյանքը:

Հիսուս շարունակում է Իր խոսքը. *«Եթե մեկը կամենում է իմ հետևից գալ, թող ուրանա իր անձը և իր խաչը մշտապես վերցնի և գա իմ հետևից. որովհետև, ով որ կամենա իր անձը փրկել, այն պիտի կորցնի, իսկ ով որ իր անձը ինձ համար կորցնի, այն պիտի փրկի: Ի՞նչ օգուտ է մարդուն, եթե աշխարհը շահի, բայց իր անձը կորցնի ու տուժի…» (Ղուկ. 9:23-25):*

Ֆրանսիացի նշանավոր զորահրամանատար Նապոլյոն Բոնապարտը իր կյանքի մայրամուտին ասել է, թե մենք բոնակալներս փորձեցինք ուժով և ճնշումով Թա-

գավորություններ հիմնել, որոնք կործանվեցին, սակայն եկավ Մեկը, որի անունը Հիսուս էր և Նա հիմնեց ԻՐ ՍԻՐՈ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ, որին մինչև այսօր միլիոնավոր մարդիկ են հետևում:

Այո՛, այն ինչ որ նյութական է, կորստյան ենթակա է: Ուր որ չկա բարոյականություն, այնտեղ ուշ թե շուտ կյանքը պիտի մեռնի, ինչպես եղավ Հռոմեական Կայսրության, Ասորեստանի Հզոր Պետության, Բյուզանդական Կայսրության և Խորհրդային Միության պարագաներում: Այս պատմությունը հետաքրքիր է և ճիշտ ցույց է տալիս նյութի վրա հիմնված Թագավորության կործանումը, որը կոչվում էր *«ՓՈՒՉ, ԴԱՏԱՐԿ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ»:*

«Աշխարհում մի թագավորություն կար, որտեղ բազմաթիվ հարուստ ու պարապ մարդիկ էին ապրում: Նրանք զվարճանալուց բացի ուրիշ ոչինչ չէին անում, միայն ուտում էին, խմում ու պարում և որպեսզի սերունդները հիշեին իրենց՝ մի հուշարձան կառուցեցին, որի վրա գրված էր. «Երգի՛ր ու պարի՛ր, երգի՛ր ու պարի՛ր, իսկ դու էլ՝ մահ, կողքով անցիր»:

Բայց ժամանակի ընթացքում այս թագավորության հարստությունն սպառվեց, ուժերը պակասեցին և հեռավոր երկրներից եկած ցեղերը գրավեցին այն: Բոլոր բնակիչներին գերեվարեցին ու սպանեցին, տներին ու հողակտորներին տիրացան: Նախկին անհոգ թագավորությունը մոռացվեց, միայն հուշարձանի արձանագրությունն էր հիշեցնում զվարճալի ժամանակների մասին: Զավթիչները ցանկացան դա էլ ոչնչացնել, բայց մի ծերունի խորհուրդ տվեց թողնել այն.

Թող նախկին գրառումը մնա գալիք սերունդների համար, միայն մի քանի խոսք ավելացրեք դրա վրա. «Ով պարում էր այստեղ ու երգում արդեն վաղուց է հողում փտում»:

«Երիտասարդներից մեկը նպատակ էր դրել հարստանալ: Եվ տարիներ շարունակ գիշեր ցերեկ աշխատելով

առանց հանգստի, տիրացել էր մեծ հարստության. քաղաքներից մեկի բարձունքին ամենաթանկանոց բնակարաններից մեկն էր ձեռք բերել իր բոլոր հարմարություններով: Ուրախացել էր, որ հարուստ էր, քանի որ երկար տարիներ այդ նպատակով էր չարչարվել: Սակայն որոշ ժամանակ անց նրա մոտ հայտնաբերվում է անբուժելի հիվանդություն: Հիսուսի խոսքն է. *«Ի՞նչ օգուտ է մարդուն, եթե աշխարհը շահի, բայց իր անձը կորցնի....»:* Ի՞նչ եք կարծում, այս մարդու համար ի՞նչ օգուտ էր, որ հսկա հարստություն ուներ, ի՞նչ պիտի կարողանար անել այդ հիվանդության դեմ, որը բուժել անհնար էր: Փորձենք ոչ միայն հարստանալ, այլ նաև նրա միջոցով բարիք գործել: Հիսուս ոչ թե հանդիմանում կամ քննադատում է հարուստներին, այլ նրանց հորդորում է, որ այն օգտագործեն բարի գործեր կատարելու համար:

Հակոբոս առաքյալն ասում է. *«Ով որ գիտե, թե ինչ է բարին, և չի անում, նրա համար այդ մեղք է» (Հակ. 4:17): Այո՛, իրապես մեղք է, երբ կարող ես բարի գործ անել և չես կատարում: Իսկ խիղճդ ո՞ւր է, խիղճ, որը Աստծուց է:*

Այս պատմությունը թե՛ հետաքրքիր է և թե՛ ուսանելի.

«Մի պատանի էր գնում ճանապարհով: Հանկարծ տեսնում է գետնին մի մետաղադրամ է ընկած: «Մետաղադրամն էլ է փող»,- մտածում է նա ու վերցնելով այն դնում է դրամապանակի մեջ:

Հետո սկսում է մտածել. «Իսկ ի՞նչ կանեի, եթե հազար ռուբլի գտնեի: Հորս ու մորս համար նվերներ կգնեի»: Հազիվ էր այդ մասին մտածել, երբ զգում է, որ դրամապանակը ծանրացել է: Նայում է դրա մեջ, իսկ այնտեղ արդեն հազար ռուբլի կար:

«Տարօրինակ է,- զարմանում է պատանին,- մի մետաղադրամ էր, իսկ հիմա հազար ռուբլի դարձավ: Իսկ ի՞նչ կանեի, եթե տասը հազար ռուբլի գտնեի: Մի կով կգնեի և հայրս ու մայրս կաթ կխմեին»: Եվ արագ

դրամապանակի մեջ է նայում, իսկ այնտեղ արդեն տասը հազար ռուբլի էր:

«Այ քեզ հրաշք,- ուրախանում է պատանին,- իսկ ի՞նչ կանեի, եթե հարյուր հազար գտնեի: Մի տուն կգնեի, կամուսնանայի և հորս ու մորս էլ կտեղափոխեի նոր տուն»: Եվ կրկին դրամապանակի մեջ է նայում. հարյուր հազարն այնտեղ էր:

Դրամապանակը փակում է ու մտածմունքի մեջ ընկնում. «Միգուցե պետք չէ՞ հորս ու մորս նոր տուն տանել: Իսկ եթե նրանք կնոջս դուր չգա՞ն: Թող հին տանն ապրեն: Կով պահելն էլ հեշտ չէ, ավելի լավ է այծ գնեմ: Շատ նվերներ էլ չեմ գնի, ինձ համար պետք է հագուստ գնեմ»: Եվ պատանին զգում է, որ դրամապանակը թեթև-թեթև է: Բացում է այն, իսկ այնտեղ միայն մեկ մետաղադրամ էր»:

Երբեմն զարմանում եմ, որ օր առ օր մենք մեզ ստիպում ենք երկրային բարիքներ կուտակել ու հավաքել, սակայն նույնիսկ մեր բոպե իսկ չենք նվիրում երկնքում գանձեր հավաքելուն: Խոսքով ասում ենք՝ հավատում ենք Աստծուն, սակայն մեր գործերով ցույց ենք տալիս, որ այլ չաստվածների ենք հետևվում՝ ինչպես՝ դրամ, հարստություն, մեր անձի ու «ես»-ի մեծարանք և պատիվ, բայց ի՞նչ օգուտ է սրանցից, քանի որ այն ինչ նյութական է, կորստյան ենթակա է:

Եվս մի պատմություն, որը հետաքրքիր է և ուսանելի.

«Փոքրիկ տղան ոտաբոբիկ կանգնած էր կոշիկի խանութի ցուցափեղկի մոտ և առանց աչքը թարթելու նայում էր ապակու մեջ դրված մի զույգ տաք, կաշվե և հավանաբար շատ հարմար աշնանային կոշիկների: Այդ պահին տեսնելով փոքրիկին նրան է մոտենում գեղեցիկ և լավ հագնված մի կին ու քնքշորեն հարցնում.

Փոքրիկ, ի՞նչին ես այդպես անընդհատ նայում, ինչ-որ բանի մասի՞ն ես մտածում:

Ես խնդրում եմ Աստծուն, մորաքույր, որպեսզի նա ինձ մի զույգ տաք կոշիկներ տա,- պատասխանում է տղան:

Առանց որևէ մի խոսք ասելու, կինը զգուշությամբ բռնում է տղայի ձեռքը և մտնում է կոշիկի խանութ: Նա խնդրում

է վաճառողին բերել վեց զույգ մանկական գուլպաներ և եթե հնարավոր էր՝ տաք ջուր, օճառ ու սրբիչ: Երբ աշխատակիցը բերում է այն ամենը, ինչ որ խնդրել էր կինը, նա երեխայի հետ գնում է մի անկյուն, հանում իր ձեռնոցները և սկսում լվալ երեխայի ոտքերը, ապա չորացնում սրբիչով: Հետո նրանք սկսում են փորձել մի քանի զույգ կոշիկներ, այդ թվում նաև այն աշնանային կոշիկները, որոնց տղան նայում էր դրսից: Դրանք ճիշտ տղայի ոտքով էին:

Այդ բարի կինը գնում է բոլոր կոշիկները և նաև մի քանի զույգ գուլպաներ: Մեկը նա հագցնում է տղային, իսկ մնացածը դնում է տոպրակի մեջ ու տալիս նրան: Հետո նա շրջում է տղայի գլուխն ու ասում.

Ինձ թվում է հիմա դու քեզ ավելի լավ ես զգում, այդպես չէ՞:

Բարի մորաքույրը արդեն շրջվել էր, որ գնա, հանկարծ փոքրիկը բռնում է նրա ձեռքն ու արցունքոտ աչքերով հարցնում.

Մորաքույր, Դուք Աստծու կի՞նն եք»:

Ահա բարության, ողորմության ամենամեծ օրինակը: Օգնել կարիքավորին, տկարին ու անկարին, նշանակում է այդ բարիքը Հիսուսին անել:

Եկեք այնպես ապրենք մեր կյանքը, ինչպես վերևում փոքրիկին իր օգնությունը ցուցաբերած մորաքույրը: Եթե ոչ՝ ի՞նչ օգուտ է…: Օգնենք ու սիրենք: Հիսուս եղավ մեզ համար մեծագույն օրինակը՝ օգնեց, բուժեց ու սիրով Իր կյանքը զոհաբերեց խաչի վրա մեր փրկության համար: Մեզ մնում է հետևել Նրա օրինակին ու դառնալ Նրա Սիրո Թագավորության մշտական բնակիչները: Ամեն:

ԱՍՏԾՈՒ ՈՂՈՐՄԱԾՈՒԹՅՈՒՆԸ

«Ամեն ծառ, որ բարի պտուղ չի տա, կտրվում և կրակն է գցվում» (Մատթ. 3:10):

Այս խոսքը Մատթեոսի Ավետարանի 3-րդ գլխի 10-րդ համարից է:

Կարդալով հասկանում ենք, թե մեր ամենօրյա փորձառությամբ նույնիսկ անկարելի է հաստատել այս դատավճռի ճշմարտությունը:

Սբ. Հովհաննես Մկրտիչը, իբրև Մեսիայի գալստյան նախակարապետը արդեն իսկ հայտնել էր, թե սա Հիսուսի գործունեության առաջին պայմաններից մեկն է: 21-րդ դարում ենք ապրում, գարգացած մի ժամանակաշրջանում, ուր տեխնիկան իր վերջին խոսքն է ասում, սակայն երբեմն ցավով տեսնում ենք, թե ինչքան անպտուղ վնասակար ծառեր կան, որոնք աճում են մեր աչքի առաջ, իգուր տեղը զբաղեցնելով հողն ու արգելք լինելով ուրիշ պտղատու ծառերի ծաղկելուն, որոնք խեղդվում են և կորցնում իրենց կենսունակությունը: Այսպիսի պահերին մենք ներքին ընդվզումով մեր բողոքի ձայնն ենք բարձրացնում առ Աստված ասելով, թե՝ *«Ինչո՞ւ է այսպես, ինչո՞ւ են արդար մարդիկ տանջվում, իսկ մեղավորները հասնում հաջողությունների»:* Այս միտքը ոչ միայն սաղմոսերգուին է տանջել, այլ միշտ զբաղեցրել ու այսօր էլ ներկայիս մտահոգում է մեզանից շատերին և մենք փոխանակ այս լուծումը Ավետարանում փնտրելու՝ ընկնում ենք մտորումների մեջ:

Այսպիսի մտատանջող մի հարց էր հետաքրքրում նաև այն հրեաներին, ովքեր Հիսուսի մոտ գալով պատմում են, թե Հրեաստանի դատավոր Պիղատոսը մի խումբ Գալիլիացիների սպանել էր տվել Երուսաղեմի տաճարում գոհաբանության միջոցին, այնպես որ նրանց արյունը խառնվել էր այլ զոհերի արյան հետ: Մեզ համար ուսանելի է այս դեպքում Հիսուսի վերաբերմունքը, որը ամենա-

գեղեցիկ օրինակն է:

Պատմությունից հայտնի չէ, թե ե՞րբ և ի՞նչ առիթով է Պիղատոսը այս արյունոտ գործը կատարել. միայն Հովսեփիոս պատմիչի նկարագրությունից գիտենք, որ նրա օրով հաճախ են տեղի ունեցել այսպիսի արյունահեղություններ, որովհետև հրեա ժողովուրդը ոչ մի կերպ չէր կարողանում հաշտվել հեթանոս հռոմայեցիների տիրապետության հետ և ամեն անգամ, երբ նրանց կողմից բռնանալու մի նոր կարգադրություն էր լինում կամ պղծվում էին հայրենի սրբությունները, գրգռում էր ժողովրդի զայրույթը և խռովությունը բռնկվում էր մի տեղից, որը հռոմայեցի զինվորները իսկույն խեղդում էին արյան մեջ: Այսպիսի խռովություններ պատահում էին ավելի հաճախ Երուսաղեմի մեծ տոներին, երբ տաճարի շուրջը ուխտավորների ահագին բազմություն էր հավաքվում և ամեն մի չնչին դեպք կարող էր մոլի ոգևորություն ներշնչել ամբոխին. գլխավոր դեր խաղացողները և ապստամբների առաջին շարքերում կռվողները սովորաբար Գալիլիացիներն էին լինում, որոնք իբրև լեռնային ավելի ազատ ժողովուրդ, Երուսաղեմից հեռու գտնվելով, վառ ջերմեռանդությամբ լցված դեպի մայր տաճարն ու հայրենիքի հին սովորությունները՝ միշտ կենդանի էին պահում նախանձախնդրության և անկախության ոգին:

Հովսեփիոսը հիշում է, որ Պիղատոսը մի ջրանցք էր կառուցել տվել, որը չընդունելով ժողովուրդը իր բողոքի ձայնն էր բարձրացրել. հնարավոր է, որ Ավետարանում պատմված դեպքը կապ ուներ սրա հետ: Բնական է, որ հրեաների կողմից տաճարում կատարված արյունահեղությունը պիտի նկատվեր իբրև սոսկալի մի ոճիր և ամեն հավատացող հրեա պիտի հարցներ. *«Ինչպե՞ս է Աստված թույլ տալիս դա. մի՞թե այն մարդիկ, որոնք դեպի Հայրը ունեցած իրենց սիրո համար զոհաբերվեցին Նրա սեղանի առաջ հանցավո՞ր էին, որ պատժվեցին»:* Այսպիսի հարցը բնական է, որ հրեաների կողմից պատրաստված հերթական մի ծուղակ էր Հիսուսին դատապարտելու և նրան մեղադրելու համար, եթե սխալ խոսքեր լսվեին Նրա բերա-

նից:

Հիսուս Իր տված բացատրությամբ նախ հասկացնում է, որ այս Գալիլիացիները իզուր էին անմեղ նահատակներ համարվում. քանի որ նրանց ունեցած ոգին ճշմարիտ Աստծու ոգին չէր: Հրեաները կարծում էին, թե նրանք Տիրոջ պատիվը պաշտպանելու և Նրա անունը փառավորելու համար էին զոհ գնացել: Մինչդեռ հակառակն էր տեղի ունեցել: Ըստ Աստվածային պատվերի «*սուր վերցնողը սրով պիտի ընկնի»* և այդպիսին իրավունք չունի պաշտպանության սպասելու այն Աստծու կողմից, ով դատապարտում է եսասիրությունն ու անտեղի համարձակությունը: Սպանված Գալիլիացիները իրապես իրենց հանցանքի պատիժն էին կրել. սակայն դա ուրիշների համար չպիտի փաստ լիներ այն մտածումով, թե իրենք հանցավոր չեն, որովհետև անպատիժ են մնում. ընդհակառակը ամեն մի այսպիսի դեպք կամ հանկարծակի պատահար, պիտի ստիպի, որ յուրաքանչյուրս մենք մեզ քննելով հարց տանք, թէ նույնպիսի մի պատահարի մենք եւս արժանի չե՞նք:

Եթե դեպքը այնպես պատահեր, որ մենք անսպասելի կերպով ներկայանայինք Գերագույն Դատավորի առաջ, ի՞նչ պատասխան կարող էինք տալ մեր կյանքի ու կատարած գործերի համար: Ընկածին ոտքով խփելը հատուկ է թույլ և վախկոտ մարդկանց: Դժբախտաբար որոշ մարդիկ կարծում են, թե իրենք բարոյապես բարձր խիղճ ունեցողներ են ու իրենց իրավունք են վերապահում խառնվելու Աստծու որոշումներին և դատաստանին, հարցնելով, թե *«Մեր Տերը ո՞ր մեղքերի համար է պատժում մարդկանց»:* Փոխանակ ժամանակ կորցնելու ու խառնվելու Աստծու գործերին, ավելի լավ է նախ տեսնեն իրենց աչքի գերանը, ապա ուշիշի շյուղը ու հարց տան իրենք իրենց, թե Աստված ինչո՞ւ իրենց չի պատժում, քանի որ բոլորի պես նրանք էլ մեղավոր են: Այսպիսի մտքեր առաջացնելու և հարցի պատասխանը տալու նպատակով է, որ Հիսուս Տաճարում զոհված Գալիլիացիների մասին բացված խոսակցությանը անմիջապես կցում է թզենու օրինակը:

Այգում տնկված մի թզենու ծառ կար: Ամեն անգամ, երբ Տերը գալիս էր, պտուղ չէր գտնում նրա վրա. երկար գնալ գալուց հետո հրահանգում է, որ այգեպանը այդ ծառը կտրի, որպեսզի իզուր տեղը հողը չզբաղեցնի:

Այգեպանը խելացի մարդ լինելով, խնդրում է Տիրոջից, որ մի տարի ևս համբերի, որպեսզի ամեն խնամք տանի և շուրջի հողը փորելով նոր միջոցներ մտածի՝ *«Եթե հաջորդ տարի էլ պտուղ չտա»,*- ասում է նա, *«կտրելը հեշտ է»:* Թզենու ծառը ամենալավ օրինակը պիտի լինի բոլորիս համար, երբ մենք այսօր տեսնում ենք անազնիվ ու անարդար մարդկանց, որոնք ապրում են և առանց քրտնելու դրամ կուտակում ու անկախ մեր կամքից մեր մեջ բողոքի ձայն է բարձրանում առ Աստված. «*Այսպիսիները ինչո՞ւ են ապրում, ինչո՞ւ Աստված անպետք, անպտուղ և չորացած ծառը արմատով չի հանում և ամեն չար գործ չի պատժում»:*

Պատասխանը պարզ է և հասկանալի. ինչպէս թզենու ծառը թանկ էր այգեպանի համար և նա ժամանակ է խնդրում Տիրոջից, այնպես էլ մեզանից յուրաքանչյուրը մեծ արժեք է ներկայացնում Երկնավոր Հոր համար, Ով մեղավորի մահը չի ցանկանում, այլ նրա չար ճանապարհից ետ դառնալն ու ապաշխարելը: Չենք ուզում ընդունել, որ իբրև բանականություն, խիղճ ու կամք ունեցող մարդիկ, իրավունք չունենք հոռետես լինելու ու կորցնելու մեր հույսը և հավատը: Քամու մի փոքր ալիքից, այսինքն՝ նեղություններից, դժվարություններից և նույնիսկ մի փոքր դժբախտությունից հետո, մտածում ենք, թե ամեն ինչ կորավ, այլևս չենք կարող շարունակել մեր կյանքը: Մոռանում ենք, որ մեր հույսն ու ապավենը Ամենազօր Տերն է, Ով մեզ պիտի հասնի մեր աղոթքի ու հավատի շնորհիվ:

Ծերունի ուսուցիչներից մեկն ասել է. *«Եթե մեզ թույլատրված է խոսել Աստծու առաքինությունների մասին, յավ իմացեք, որ Նրա ամենամեծ առաքինությունը՝ ներողամտությունն է»:* Եվ իրապես, ինչպե՞ս պետք է կառավարվեր տիեզերքը, եթե նրա Ստեղծիչ-Արարիչը այդ առաքինությունը չունենար, եթե Նա այգեպանի պես իմաստությամբ, համբերությամբ ու սիրով չխնամեր մեզ մինչև ցանկալի արդյունք տալը:

Մեր այսօրվա կյանքից ճանաչում ենք հայ մարդկանց, *(ես շեշտում եմ մեր ժողովրդի զավակներին, որովհետև մեր նպատակը առաջին հերթին մեր ցավը բուժելն է, առանց անտեսելու այլ ժողովուրդներինը),* որոնք սխալ ու անազնիվ ճանապարհների մեջ ընկնելով, շատ վտանգա-

վոր են դառնում: Նրանք ամեն բոպե կարող են մեծ վնաս-ներ հասցնել թե՛ իրենց ընտանիքի անդամներին և թե՛ շրջապատի մարդկանց: Բայց ի զարմանս մեզ հանկարծ հանգամանքները փոխվում են և Աստուած անտեսանելի կերպով այնպիսի մի նոր, շրջադարձային ուղղություն է տալիս նրանց կյանքին, որ նրանք դառնում են օրինակելի ու արդար մարդիկ իրենց շրջապատի և հաճելի՝ երկնա-վոր Տիրոջ համար:

Ավետարանից կարող ենք օրինակ բերել Սողոսի պարագան, ով քրիստոնյաների թունդ հալածողն էր, սակայն Հիսուսի կանչով դարձավ նշանավոր Պողոս Առաքյալը: Ո՞վ կարող է ասել, թե մեզանից որ մեկի հա-մար ինչ է սահմանված Աստծու գրքում: Այո՛, մենք մեզ իրավունք ենք վերապահում ապավինելու Աստծու ներո-ղամտությանը և ողորմածությանը, սակայն երբեք չպետք է մոռանանք, որ այնուամենայնիվ պտղատու ծառն է միայն կյանքի արժանի, իսկ անպտուղ չորացած ծառը՝ կացինով կտրվելու ու այրվելու: Ներողամիտ Դատավորը մի տարի, երկու տարի, տաս-քսան կամ հարյուր տարի կարող է սպասել, բայց միևնույնն է մի օր Իր Դատաստանը պիտի անի՝, թե՝ ո՞չ: Այդ ժամանակ վա՛յ մեղավորներին, նրանց վախճանը հայտնի է՝ *«կտրվել և այրվել»:* Ամեն:

ՊԻՂԾ ՈԳՈՒ ՎԵՐԱԴԱՐՁԸ
(ՄԱՏԹ. 12:43-45):

Ավետարանում կան պատմություններ, որոնք, չգիտես ինչո՞ւ, ուշադրության չեն արժանանում, օրինակ՝ Մատթեոսի Ավետարանի 12-րդ գլխի 43-45 համարներում նշված *«Պիղծ ոգու վերադարձի»* բացատրությունը:

«Սակայն պիղծ ոգին դուրս է ելնում մարդուց, շրջում է անջրդի վայրերում, հանգիստ է որոնում և չի գտնում: Այն ժամանակ ասում է՝ դառնամ իմ տունը, որտեղից դուրս եկա. և գալիս է ու այն գտնում դատարկ՝ մաքրված ու կարգի բերված: Այն ժամանակ գնում և վերցնում է իր հետ իրենից ավելի չար յոթը այլ ոգիներ և մտնում բնակվում է այնտեղ. և այդ մարդու վերջը լինում է ավելի վատ, քան առաջ էր…» (Մատթ. 12:43-45):

Սուրբ Գրքից գիտենք, որ մարդը ծնվում է Ադամական մեղքով, այսինքն մեր ծնված օրից չարը բնակվում է մեր մեջ, միևնույն ժամանակ մենք մեր ծնողներից, առաջին ուսուցիչներից ու հոգևոր պատգամներից սովորում ենք, որ այս երկրային կյանքում պարտավոր ենք բարի գործեր կատարել, որպեսզի չարից հեռու մնանք: Չարը կա մեր մեջ, մի ձևով կծկվում է ու իրեն հարմար մի անկյուն գտնելով՝ սպասում է մեր հոգիներում… Բարին, իշխանությունը իր ձեռքը վերցնելով, փորձում է մարդկանց սիրով ու գեղեցկությամբ լավ կյանք պարգևել:

Սակայն, վստահ եմ, որ մեզանից ամեն մեկը, իր փորձառությունից ելնելով, կարող է ասել, որ երբեմն հակառակն է պատահում, երբ բարին իր դիրքերը զիջում է և չարը, առիթն օգտագործելով մի րոպե իսկ չի կորցնում, անմիջապես անցնում է գործի: Ատելություն, նախանձ, բամբասանք, բարկություն, անբարյացակամություն, ագահություն, ո՞րն ասեմ, ինչո՞ւ չէ, նաև անտարբերություն: Մեզանից ո՞վ ծանոթ չի սրանց:

Դժբախտաբար տեսնում ենք, որ մեր մեջ բարին ու չարը փոխն ի փոխ են աշխատում: Եթե այդպես է, ապա

դա շատ վտանգավոր ու ոչ աստվածահաճո մի կյանք է, որը մենք ապրում ենք: Հիսուս ասում է, որ մարդը չի կարող երկու տիրոջ ծառայել, մեկին պիտի ատի, մյուսին՝ սիրի, չի կարող միաժամանակ և՛ առողջ լինել և՛ հիվանդ: Կա՛մ մեկը, կա՛մ մյուսը:

Բոլորիս էլ քաջ հայտնի է, որ բնության մեջ ջերմություն պարունակող միջավայրում մանրեներն իրենց շատ լավ են զգում, արագ բազմանում են ու տարածվում: Պիղծ ոգու համար էլ հոգին իդեալական հանգստի մի վայր է, որի մասին է զգուշացնում մեզ Տերը: Սակայն մեղքի պատճառը միայն չարի գոյությունը չէ, այլ մանավանդ մեր հավատի պակասությունն է: Այո՛, մի՛ զարմացեք, հավատի պակասությունն ու թուլությունն է: Բժիշկները զանազան վարակիչ հիվանդությունների դեմ տարբեր դեղեր են մեզ սրսկում, որպեսզի մեր մարմինը կարողանա դիմադրել: Չարի դեմ պայքարելու համար մեր միտքը, սիրտն ու հոգին կարիք ունեն Աստծու ճանաչման, Նրա պատգամների ներարկման ու զորացման: Որքան Աստծու հանդեպ հավատը խոր արմատներ թողնի մեր մեջ, այնքան մենք չարից պաշտպանված կլինենք:

Ինչո՞ւ ենք սակայն մենք այսքան վախենում չարից ու փորձում հեռու մնալ նրանից, որովհետև չարը հոգու խավարն է, նա մեզ դեպի մահ է առաջնորդում: Չարը մարդուն անճանաչելիորեն կարող է այնպես կերպարանափոխել, որ տարիներ հետո նրան կարող ենք չճանաչել: Չարը չի կարող մարդուն կերպարանափոխել, եթե իրապես նրա մեջ Աստված է բնակվում, սակայն ավելի հստակեցնելու համար մեր ասածը բերենք մարդու կերպարանափոխության մի օրինակ.

«Վերածննդյան շրջանում ապրող (խոսքը 15-16-րդ դարերի մասին է) մի երիտասարդ՝ դեռևս աշխարհում անհայտ, բայց խոստումնալից մի նկարիչ, ավետարանական ընթերցումներից հիացած ու ներշնչված, որոշում է Հիսուս Քրիստոսի պատկերը հավերժացնել կտավի

վրա: Այս նպատակով փողոցներում, հյուրանոցներում, պալատներում շրջելով՝ հարմար մի մարդ է փնտրում, որի դեմքը ազնվություն, խոնարհություն, իմաստություն և սեր արտահայտի: Երկար որոնումներից հետո մի հյուրանոցում նա գտնում է մի հարուստ երիտասարդի, որն իր փնտրածն էր: Հիսուսի նկարը պատրաստ էր… Անցնում են տարիներ, նկարիչը, արդեն աշխարհում մեծ հեղինակություն ձեռք բերած, ուզում է մատնիչ Հուդային նկարել ու փնտրում է մեկին, որի դեմքը հոգնած լինի, տանջանք, դժգոհություն և ատելություն արտահայտի, մի խոսքով՝ Հիսուսի ճիշտ հակառակ դեմքը: Փողոցների անկյուններում նստած մուրացկանների դեմքերն ուսումնասիրելուց հետո վերջապես գտնում է իրեն հարմար մեկին: Խեղճ աղքատ ծերուկին իր արվեստանոցն է տանում, կերակրում ու ապա անցնում է աշխատանքի: Նկարելու ժամանակ ծերունին խորամանկորեն ժպտում է: Մեծ Վարպետը հարցնում է նրան ժպտալու պատճառը: Ծերունին հիշեցնում է նրան, որ ինքն այս նույն արվեստանոցում եղել է արդեն մի անգամ՝ քառասուն տարիներ առաջ, երբ երիտասարդ նկարիչը իրեն այստեղ էր բերել՝ Հիսուս Քրիստոսի պատկերը նկարելու համար:

Մի՞թե մարդ կարող է այսքան փոխվել, որ Հիսուսի անմեղությունը արտահայտող դեմքի նմանությունն ունենալով՝ քառասուն տարիներ անց մատնիչ Հուդային նմանվի, ուղղակի անհավատալի է, բայց իրականություն է»:

Այս իրական և հուզիչ դեպքը մի լավ օրինակ է տեսնելու համար, որ մարդ, հեռանալով բարուց, գեղեցիկից ու մանավանդ Աստծուց, ժամանակի ընթացքում ինչքան կարող է փոխվել:

Փորձենք մեր միջից հանել չարը ո՛չ թե գեղեցիկ խոսքերով, այլ հավատով ու, մանավանդ գործով, և ո՛չ թե վաղը, այլ հիմա՝ հենց այս պահին: Դուք կարող եք հարցնել՝ ինչպե՞ս: Շատ պարզ կերպով: Օրինակ՝ ամեն մեկս,

իմանալով թե չիմանալով, կարող է նեղացրած լինենք մեր բարեկամներից, ընկերներից կամ ծանոթներից ոմանց կամ նրանք նեղացած կլինեն մեզանից, այս պահին փորձենք ներել նրանց և ոչ միայն ներենք, այլ նաև ներողություն խնդրենք: Մեր Տերը սքանչելի մի օրինակ է, քանի որ Նա խաչի վրա Հորից խնդրեց, որ ների Իրեն տանջողներին, չարչարողներին ու, վերջապես՝ խաչողներին; Աստված բնակվում է այնտեղ, որտեղ կա ներողամտության ոգի, որովհետև ներելը մեծ առաքինություն է:

Եթե սիրենք ու ներենք, հեռու կմնանք չարիքից: Ամեն:

ԽՈՆԱՐՀՈՒԹՅԱՆ ԴԱՍԸ

«Ով որ բարձրացնում էիր անձը՝ կխոնարհվի, և ով որ խոնարհեցնում է իր անձը՝ կբարձրացվի»
(Ղուկ. 18:14):

Ճաշու Ավետարանից վերցված այս խոսքերը Ղուկասի Ավետարանի 14-րդ գլխի 11-14 համարներից է:

Կարծես թե Հիսուս այս արտահայտությունը ասած լինի ոչ թե երկու հազար տարիներ առաջ, այլ այսօր, որովհետև ամեն մարդ՝ փոքր թե մեծ, հարուստ թե աղքատ, կին թե տղամարդ, փորձում են իրենք իրենց բարձրացնել, իրենց «ես»-ը առաջ քաշել՝ առանց հաշվի առնելու արժանավո՞ր են, թե՞՝ ոչ: Այս առակով Հիսուս փորձում է խոնարհ լինելու դաս տալ փարիսեցիներին: Ղուկաս ավետարանիչը պատմում է, որ մի օր, երբ Հիսուս ճաշի էր հրավիրված փարիսեցիներից մեկի տունը, նկատում է, որ ժամանող հյուրերը փորձում էին սեղանի պատվավոր, վերևի աթոռները գրավել: Նա պատկերավոր մի առակով սովորեցնում է նրանց, որ երբ խնջույքի են հրավիրվում, գլխավոր աթոռները չգրավեն, որովհետև, երբ իրենցից ավելի պատվավոր հյուրեր ժամանեն, տանտերը ստիպված պիտի կլինի նրանց սեղանի ներքևի աթոռներին նստեցնել, այն ժամանակ ամոթով պիտի մնան:

Ընդհակառակը, եթե սկզբից նրանք ներքևի աթոռների վրա նստեն և ապա տանտիրոջ կողմից հրավիրվեն սեղանի վերևի աթոռներին նստելու, իրենց խոնարհությամբ ներկաների մեջ հարգված անձեր պիտի հանդիսանան *(հմմտ. Ղուկաս 14:8-11):*

Հետաքրքիր է՝ թե ինչո՞ւ Հիսուս խոսեց այս մասին, ի՞նչ ցանկացավ ասել այս առակով և յատկապես ինչի՞ վրա ուզեց հրավիրել հրավիրյալների ուշադրությունը:

Հիսուս ներկաների ուշադրությունը հրավիրեց երկու առաքինությունների վրա:

Առաջինը՝ խոնարհության:

Երկրորդը՝ անշահախնդիր հյուրասիրության, ուրիշներին հարգելու ու պատվի արժանացնելու վրա՝ նրանց ուրախացնելու նպատակով:

«Խոնարհվիր, որպեսզի բարձրանաս». սքանչելի նշանաբան է: Երբ մի ուրիշը քեզ բարձրացնում է, դու ավելի մեծ պատվի ես արժանանում, քան, երբ դու ինքդ քեզ ես փորձում բարձրացնել: Մեծության արժանի է այն մարդը, ով գիտի խոնարհ լինել. . . Եկեք կարդանք այսօր հրատարակվող նոր գրքերը, թերթենք հայախոս և այլ լեզուներով տպվող անթիվ ու անհամար թերթերը, ի՞նչ կտեսնենք: Դժբախտաբար, ուսումնասիրելով դրանք՝ կհասկանանք, թե ինչքան հեռու ենք գնացել այն պատմական ու փառավոր օրերից, երբ Սուրբ Մեսրոպ Մաշտոցի նման մի համեստ վարդապետ, Սուրբ Սահակ Կաթողիկոսի պես մի ժրաջան առաջնորդ, Վռամշապուհ թագավորի պես հավատով ու ազնիվ հայորդի, Թարգմանիչ վարդապետների նման խոնարհ սպասավորներ հոգևոր հեղափոխություն կատարեցին մեր ժողովրդի ու Եկեղեցու կյանքում: Նրանք գիտեին, թե Աստված ինչպիսի շնորհներ էր պարգևել իրենց և ճաշկերույթին կանչվող մարդկանց պես ցանկություն չունեին բարձր տեղ նստելու, այլ խոնարհաբար, լուռ, անաղմուկ, առանց սպասելու որևէ գնահատանքի և պատվի, նույնիսկ ավելիով կատարեցին իրենց հրաշալի գործերը: Փառք ու պատիվ նրանց հիշատակին:

Արդեն երկու հազար տարի է, որ մարդիկ խոսում են Աստծու անչափելի խոնարհության մասին: Ավետարանի հեղինակներից սկսած՝ բոլոր նրանք, ովքեր Քրիստոսի խոսքն են քարոզում, հիշում են Աստծու ցուցաբերած մեծագույն խոնարհությունը մարդկության պատմության ընթացքում:

Ով որ խոնարհվում է Աստծու առաջ, կբարձրանա և հաջողությունների կհասնի: Արդյոք չկա՞ն մարդիկ, ովքեր կյանքի մեջ որոշ հաջողությունների հասնելուց հետո Աստծու զորությունն իսկ մոռանում են, մարդիկ, ովքեր

նվազագույն հեղինակություն և շքանշաններ ստանալուց հետո սուր են ճոճում իրենց նմանների դեմ՝ մոռանալով, որ բոլորս էլ համահավասար արժեք ունենք Աստծու աչքում: Պողոս առաքյալը իր հորդորը կարդալով այսպիսիներին, հրավիրում է նրանց ընթանալ ճշմարիտ կյանքի ճանապահով. *«Հագե՛ք ուրեմն, գութ, ողորմություն, քաղցրություն, խոնարհություն, հեզություն, համբերատարություն՝ հանդուրժելով միմյանց, ներելով միմյանց…» (Կոդոս. 3:12-13):*

Հետաքրքիր է իմանալ *«Մեծամիտ Տասնապետի»* այս պատմությունը.

«Տարիներ առաջ Միացյալ Նահանգների մի նավահանգստում խարիսխ նետած բեռնատար նավի վրայից զինվորները հսկայական գերաններ էին դուրս բերում: Տասնապետը, ձեռքերը կանթած, աջ ու ձախ հրամաններ էր արձակում, երբեմն զայրացած հայհոյում էր զինվորներին: Բեռնակիր զինվորները, մի մեծ գերան երկու ծայրերից բռնած, փորձում էին ցամաք իջեցնել, բայց չէր հաջողվում: Իսկ տասնապետը շարունակում էր գոռալ ու հայհոյել: Այդ ժամանակ մի անցորդ, նկատելով ծանր վիճակը, մոտենում է նրան ու հարցնում.

- Ըստ երևույթին գերանը շատ ծանր է, դուք ինչո՞ւ չեք օգնում այն իջեցնելու համար:

Տասնապետը արհամարհանքով նայում է մարդուն ու ասում.

- Պարոն, ես տասնապետ եմ, իսկ եթե շատ եք մտահոգված զինվորների կացությամբ, համեցե՛ք ինքնե՛րդ օգնեցեք նրանց:

Անցորդը, առանց որևէ պատասխանի, մոտենում է զինվորներին, բռնում է գերանի մի ծայրից ու դժվարությամբ դուրս բերում նավից: Ապա քրտնած մոտենում է տասնապետին ու ասում.

- Պարո՛ն տասնապետ, ահա՛ իմ հասցեն: Խնդրում եմ նման դեպքերում ինձ կանչեք, ես ամենայն սիրով կգամ ձեզ և ձեր զինվորներին օգնության:

Անցորդը հասցեն տալիս է տասնապետին ու լուռ հեռանում:

Տասնապետը հետաքրքրությունից դրդված կարդում է թղթի վրայի գրված հասցեն և ապշում: Նա Ամերիկայի Միացյալ Նահանգների առաջին նախագահ Ջորջ Վաշինգտոնն էր…»:

Ահա ձեզ խոնարհության մի գեղեցիկ օրինակ:

Սակայն այս ժամանակավոր կյանքում խոնարհությունը իբրև զգեստ հագնելուց ավելի, պետք է դրանով ապրել: Կյանքի այս ձևը մարդու առաջ բացվող մարտահրավերներից մեծագույնն է: Իզուր չի ասված. *«Խոնարհությունը աստվածային է»:* Այս խոսքը երկու իմաստ ունի. *Նախ՝ խոնարհվելը սովորական մի գործ չէ ու ամեն մարդու բան էլ չէ, այլ առանձնահատուկ ներքին ուժ է պահանջում և երկրորդ՝ խոնարհությունը մարդուն նմանեցնում է Իր իսկ Ստեղծողին՝ Արարիչ Աստծուն:*

Հրավիրյալների այս առակում յոթ մահացու մեղքերից մեկի՝ հպարտության քանդիչ ուժին հակադրված է խոնարհությունը: Եթե հետադարձ հայացք նետենք մեր պատմությանը, կտեսնենք, որ մեր հայրապետները, առաջնորդները, գիտնականները, հրամանատարները, զորավարները և հերոսները, բոլորն էլ խոնարհ սիրտ են ունեցել: Իբրև ապացույց իմ այս խոսքերի՝ ուզում եմ հիշել 7-րդ դարի մեր Ամենայն Հայոց Կաթողիկոսներից Հովհան Օձնեցի Հայրապետի դեպքը, որը, կարծում եմ խոնարհության լավագույն դասն է բոլորիս:

«7-րդ դարում Հայաստանը գտնվում էր Արաբական խալիֆայության տիրապետության տակ: Հարկերը շատ ծանր էին ու ժողովուրդը դժվարանում էր վճարել: Հովհան Օձնեցի Կաթողիկոսն իր ժողովրդին այս վիճակից ազատելու համար, տեսակցություն է խնդրում ամիրա-

պետից: Արաբ խալիֆը, որը լսել էր Վեհափառի իմաստության, մանավանդ արտաքին գեղեցկության մասին, սիրով համաձայնվում է ընդունել նրան: Վեհափառը գնում է նրա մոտ մեծ շքախմբով՝ Սուրբ Պատարագի շքեղ հագուստներով, մորուքի վրա ոսկու փոշի ցանած: Տեսակցության ընթացքում արաբ խալիֆը, որ քիչ թե շատ ծանոթ էր Հիսուս Քրիստոսին ու գիտեր Նրա հեզ և խոնարհ լինելու մասին, Կաթողիկոսի ուշադրությունը հրավիրում է այս պարագայի վրա: Վեհափառի խնդրանքով բոլոր ներկաները դուրս են գալիս վրանից ու Կաթողիկոսը մերկանում է իր փառահեղ զգեստներից; Խալիֆը ապշած տեսնում է, որ Վեհափառն իր մերկ մարմնի վրայից հագել էր մազից հյուսված կոշտ մի զգեստ, որի պատճառով նրա մարմնից արյուն էր հոսում: Արաբ խալիֆը, ի պատիվ Հայոց Հայրապետի հեզության, խոնարհվում է նրա առաջ և պատիվներով ճանապարհում նրան: Թեպետ նա արտաքինով հպարտ էր երևում, բայց ներքնապես Հիսուսի նման խոնարհ սիրտ ուներ»:

Խոնարհ սիրտ ունեցող մարդը միշտ մտածում է առաջ գնալու մասին: Նա չի զոհանում իր իմացածով ու չի պարծենում իր հավաքած իմաստությամբ, այլ հին մեծ իմաստասերի նման ասում է. *«Մի բան գիտեմ ու դա էլ ոչ մի բան չիմանալս է»:*

Ուրեմն, եթե մենք էլ ուզում ենք մեր կյանքում բարձրանալ ու մեծ լինել մեր ընտրած ասպարեզում, պարտավոր ենք մեր անձն ազատել հպարտության մեղքից և մեր Փրկչի՝ Աստվածորդու նման խոնարհ լինել. *«Խոնարհվեցե՛ք ուրեմն Աստծու հզոր ձեռքի տակ, որպեսզի Նա ձեզ բարձրացնի ժամանակին» (Ա. Պետրոս 5:6):* Ամեն:

ԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՎՆԱՍՆԵՐԸ

«Անմիտ, հենց այս գիշեր հոգիդ քեզնից պահանջելու են…» (Ղուկ. 12:20):

Ղուկասի Ավետարանի 12-րդ գլխի 13-21 համարներում Հիսուս պատմում է մի ագահ մեծահարուստի մասին, որի շտեմարանները լիքն էին ցորենով: Այդ տարի նրա բախտից արտերը շատ բերք են տալիս ու նա, փոխանակ եղածը բաժանելու աղքատներին, մտածում է իր ունեցած հին շտեմարանները քանդելու և նորերը՝ ավելի մեծերը, կառուցելու մասին: Հարուստը ինքն իրենից գոհ ասում է. *«…Ով մարդ, շատ տարիների համար ամբարված բազում բարիքներ ունես, հանգի՛ստ արա, կե՛ր, խմի՛ր և ուրա՛խ եղիր» (Ղուկ. 12:19):* Աստված տեսնելով նրա ագահությունը, ասում է. *«Անմի՛տ, հենց այս գիշեր հոգիդ քեզնից պահանջելու են, իսկ ինչ որ պատրաստել ես, ո՞ւմն է լինելու: Նույնպես է նաև նա, ով իր անձի համար գանձ կհավաքի և Աստուծով չի հարստանա» (Ղուկ. 12:20-21):*

Այս առակով Հիսուս դատապարտում է անմիտ հարուստի անձնասիրությունը, որովհետև որևէ մեկը չի ստեղծվել ապրելու միա՛յն իր և հարստությանը գերի դառնալու համար: Հարուստի պես չպետք է մոռանանք ամենակարևոր պատվիրանը՝ սիրել և խոնարհվել Գերագույն Աստծու առաջ, որպեսզի ուժ ստացած կարողանանք օգնել մեր եղբայրներին:

Այս առակը ցույց է տալիս, թե ագահությունն ինչպես կարող է նվաստացնել մարդուն: Երբեմն մարդիկ կարծում են, թե երկրային կյանքի հարստությունները մեր անձնական աշխատանքի արդյունքն են միայն, մինչդեռ Աստված է, որ պարգևում է մեզ դրանք: Առաջին Թագավորաց գրքում ասվում է. *«Տերն է աղքատացնում ու հարստացնում, ստորացնում ու բարձրացնում» (Ա. Թագ. 2:7):*

Ագահությունը նյութական վախկոտություն է, որովհետև ագահ մարդն ամեն անգամ դրամ ծախսելիս մտածում է, որ այդ ձևով իր հարստությունը կցամաքի:

Դրամ հավաքողների գումարները շատ անգամ ուրիշներն են կերել, իսկ Ազգին ու Եկեղեցուն իրենց գանձերը նվիրողներն անմահացել են պատմության մեջ և ստացել հազարավորների օրհնությունը:

«Արծաթ սիրողը չի կշտանա արծաթից, ոչ էլ հարստություն սիրողը՝ իր եկամուտներից, ուստի դա ևս ունայնություն է» (Ժող. 5:9):

Աստծու համար դրամն ամեն ինչ չէ: Երբ փարիսեցիները մեր Տիրոջ մոտեցան և դրամի գործածության մասին հարցեր տվեցին, Նա պատասխանեց. *«Տվե՛ք կայսրինը՝ կայսեր, իսկ Աստծունը՝ Աստծուն» (Մատթ. 22:21):*

Այսօր եկեղեցական և համայնքային կյանքում դրամը մեծ տեղ ունի: Երբեմն Եկեղեցին էլ դրամի կարիք ունի իր ծախսերը հոգալու համար: Սա չի նշանակում, թե Եկեղեցին վաճառատեղի է: Կրոնը, հավատը և աստվածային զորությունը դրամով չեն կարող վաճառվել: Վա՛յ նրանց, ովքեր փորձում են Եկեղեցին դրամական անսուրբ գործարքների վայրի վերածել*: «Գրված է՝ «Իմ տունը աղոթքի տուն պիտի կոչվի, իսկ դուք ավազակների որջ եք արել այդ»,-* ասաց Հիսուս և վաճառականներին ու դրամ փոխողներին դուրս վռնդեց Տաճարից *(Մատթ. 21:13):*

Մեր մեծ բանաստեղծ. Հեքիաթասաց Հովհաննես Թումանյանն ագահության մասին մի գեղեցիկ հեքիաթ ունի, որը կոչվում է *«Ոսկու կարասը»*: Ամեն հեքիաթ կյանքից վերցված ճշմարտություն է, սա՝ նույնպես:

«Պատմությունը երկու աղքատ գյուղացիների մասին է, որոնցից մեկը եզներ չունենալու պատճառով իր հողը վարձով է տալիս հարևանին: Այս հողագործը վար ու ցանք անելիս արտում կարաս է գտնում՝ մեջը լիքը ոսկի, ու վազելով մյուս գյուղացու մոտ՝ նրան ասում է, թե այդ ոսկին իր բաժինն է, քանի որ ինքն է այն գտել, իսկ

հարևանը առարկում է՝ ասելով, որ ոսկին իրենն է, քանի որ իր հողում է գտնվել: Վիճում են իրար հետ, երկար են վիճում, թե ում պիտի պատկանի ոսկին. շատ կռվելուց հետո որոշում են գնալ թագավորի մոտ, որպեսզի նա որոշի, թե ոսկին ումն է: Թագավորը, լսելով ոսկու մասին, ագահությունից աչքերը խոշոր բացում է ու հանդիմանում նրանց խիստ հրամայական տոնով. «Ո՛չ քոնն է, ո՛չ դրանը, իմ հողում կարասով ոսկի է դուրս եկել, իմն է» ու իր մարդկանցով գնում է, որպեսզի այն վերցնի, բայց երբ բացում են կարասի բերանը, տեսնում են, որ նրա մեջ լիքը օձեր են. գյուղացիները գնում են, ոսկի է դուրս գալիս, թագավորն է գնում՝ մեջը լիքը օձեր են հայտնվում:

Թագավորն իր երկրի իմաստուններին հրամայում է բացատրել այս երևույթը: Նրանք ասում են. «Աստված կարասով լիքը ոսկին աղքատ հողագործներին պարգև է ուղարկել իրենց ազնվության ու արդար աշխատանքի համար: Երբ որ նրանք են գնում, իրենց արդար վարձին են գնում ու միշտ էլ ոսկի են գտնում, իսկ երբ որ դու ես գնում, գնում ես ուրիշի բախտը հափշտակես, դրա համար էլ ոսկու տեղ օձ ես գտնում»:

Որպեսզի հողագործները նորից չվիճեն իրար հետ, թե ո՞ւմ է պատկանում ոսկին. նրանց երկու երեխաներին ամուսնացնում են իրար հետ ու յոթ օր, յոթ գիշեր հարսանիք անում և իրենց արդար ու ազնիվ աշխատանքի դիմաց Աստծու կողմից պարգև ուղարկված ոսկին էլ տալիս են նրանց:

Հեքիաթը այսպես է վերջանում. «Բարին էստեղ, չարը էն ագահ թագավորի մոտ»:

Աստված Իր պարգևներն է տալիս, որ մենք բոլորս էլ երջանիկ ապրենք: Մեզ տրված է խելք, իմաստություն, ինչպես նաև Ավետարանի ճշմարտությունները, որ ճանաչենք երկրավոր բարիքները գործածելու լավագույն միջոցները՝ թշվառներին, հիվանդներին, ծերերին ու անօգնական մարդկանց օգնության հասնելու համար:

Եթե մեր բարիքները ճիշտ ձևով օգտագործենք, չենք մտածի, թե որտեղ պահենք դրանք, այլ լավագույն նպատակի համար գործածելով՝ կվարձատրվենք թե՛ Աստծու և թե՛ մարդկանց կողմից;

Իզուր չէ, որ մեր հայրապետներն ագահությունը դրել են ո՛չ թե սովորական մեղքերի մեջ, այլ համարել են յոթը մահացու մեղքերից մեկը՝ *հպարտության, նախանձի, բարկության, ծուլության, շատակերության և ցանկասիրության հետ միասին:*

Մեր ունեցած նյութական հարստությունը եկեք օգտագործենք այն հավատավոր հոգիների համար, ովքեր մեր սիրո և օգնության կարիքն ունեն: Աշխատենք նյութական հարստության միջոցով ձեռք բերել ամենակարևորը՝ հոգևոր հարստությունը, որը մեզ կուղեկցի Երկնքի արքայություն ու դեպի անմահություն տանող գաղտնի ճանապարհը: Ամեն:

ՍԻՐՈ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

«Եվ եթե ունենամ ամբողջ հավատը մինչև իսկ լեռները տեղափոխելու չափ, բայց սեր չունենամ, ոչինչ եմ. . .»
(Ա. Կորնթ. 13:3):

Մեծ Պահքի շրջանի մեջ գտնվելով, վստահ եմ, որ ամենքս էլ մեր հաճույքներին ու ցանկություններին սահմանափակումներ ենք դրել և բոլորս էլ գտնվում ենք ապաշխարության մեջ: Ապաշխարություն, այսինքն՝ հեռացում աշխարհից, գսպում մեր հաճույքների, ախորժակի և շռայլության: Ամեն մի զսպվածություն ու չափավորություն անիմաստ է, եթե այն չի տրվում հանուն աստվածահաճո գործերի: Զսպել ախորժակը, ո՛չ թե իր կազմվածքի ու առողջության, այլ՝ իր չկերածը սովածին տալու համար: Չշռայլել՝ ո՛չ թե իր քսակը ավելի մեծացնելու, այլ՝ ողորմության համար: Ներել՝ սիրելու համար... Շատերը պահքը դարձնում են նպատակ, այնինչ այն իբրև միջոց պետք է ծառայեցնել: Շատերն էլ մյուս ծայրահեղութեան մեջ են ընկնում. ընդհանրապես բացառելով պահքի նշանակությունը:

Բայց այդ բոլորից վեր կանգնած է մի առաքինություն, առանց որի մենք ոչինչ ենք, իսկ եթե այն ունենք, իրապես երանելի ենք:

Դա ՍԵՐՆ է, առաքինություն, առանց որի անիմաստ է դառնում ամեն ինչ: Սերն է, որ իմաստավորում է պահքն ու ծոմապահությունը, առանց նրա՝ չկա քրիստոնեություն: Սերն է, որ իմաստավորում է աղոթքն ու ծեսը, առանց նրա՝ չկա հավատ: Սերն է, որ իմաստավորում է մարդկային հարաբերություններին, առանց նրա՝ չկա Եկեղեցի: Սերն է, որ ստեղծեց աշխարհը, առանց նրա՝ չկա մարդկություն: Սերն է, որ փրկեց աշխարհը, առանց նրա՝ չկա փրկություն: Աստված սեր է, առանց նրա՝ մենք ԱՆԱՍՏՎԱԾ ԵՆՔ:

Միջկրոնական և ազգերի միջև իրար նկատմամբ

ունեցած ատելությունները գալիս են սիրո պակասից:

Փողոցով քայլելիս արժանացա մի քրիստոնյա հավատացյալի քմծիծաղին: Զարմանալի է, մենք երկուսս էլ նույն Աստծուն ենք պաշտում, որտեղի՞ց այդ չարությունը: Հասկանում եմ, թե՝ ո՞րտեղից: Սիրո պակասից: Ինչպես լույսի պակասը խավարն է, այնպես էլ սիրո պակասը՝ ատելություն է ծնում:

Աստված աշխարհը և մարդուն սիրով ստեղծեց: Եվ ամեն բան բարի էր, գեղեցիկ ու հավասարակշռված: Բայց կամաց-կամաց սերը պակասեց: Առաջին մարդը՝ Ադամ, մեղանչեց, Կայենը նախանձից սպանեց իր եղբորը՝ Աբելին: Ատելությունը մտավ աշխարհ: Աստված սեր է, բայց նաև արդար դատավոր է: Աստված չկործանեց մարդկությունը, այլ միայն ջրով մաքրեց ատելությունն ու անհավատությունը: Իսկ սերը չկործանեց, այլ նրան տապանի մեջ ապահով իջեցրեց Արարատի գագաթին: Նորից հավասարակշռություն տիրեց աշխարհի վրա: Եվ նորից սիրո պակաս՝ մեղսալից Սոդոմ: Երկու հազար տարի *առաջ*՝ նույնպես աշխարհն ապականված ու անսեր էր: Բայց այս անգամ Աստված չկործանեց այն, այլ՝ *«Աստված այնքան սիրեց աշխարհը, որ մինչև իսկ Իր Միածին Որդուն տվեց, որպեսզի, ով նրան հավատում է, չկորչի, այլ ընդունի հավիտենական կյանքը» (Հովհ. 3:16):*

Աստված իմանալով հանդերձ, որ չարությունը շատ է և հնարավոր է, որ Իր Միածին Որդուն չարչարեն, տանջեն ու խաչեն, ուրիշ ելք չտեսավ և աշխարհ իջավ ինքը՝ Սերը: Սուրբ Ներսէս Շնորհալին գրում է.

«Սերդ սիրով խոնարհեցիր...»:

Եվ խաչվեց սերը՝ Հիսուս Քրիստոս, տալով Իր պատգամը *«Սիրեցեք միմյանց»:*

«Եթե խօսեմ մարդկանց լեզուները և հրեշտակներինը, բայց սեր չունենամ, կնմանվեմ մի պղնձի, որ հնչում է, կամ՝ ծնծղաների, որ դողանջում են: ...Եվ եթե իմ ունեցվածքը տամ աղքատներին և իմ այս մարմինը մատնեմ այրվելու, բայց սեր չունենամ, ոչինչ եմ: Սերը երբեք չի անհետանում, թե մարգարեություններ են, պիտի չքանան, թե լեզուներ՝ պիտի լռեն, թե գիտություն՝ պիտի անցնի... իսկ երբ գա կատարյալը, շատից քիչը կանհետանա»:

«Արդ մնում են հավատ, հույս, սեր. Սրանք՝ երեքը, և սրանցից

մեծագույնը սերն է» (Ա. Կորնթ. 13:1, 3, 8-10, 13):

Ահա Պողոս Առաքյալի օրհներգը. ո՛չ թե օրենքը, այլ օրհներգը, որովհետև սերը օրենք չի ճանաչում. Սերը՝ օրհնություն է:

Այժմ հարց տանք իրար ու անկեղծ լինենք մեր պատասխանների մեջ: *«Կարևո՞ր էր արդյոք, որ Հիսուս ծնվեր Բեթղեհեմում և ինչո՞ւ»:* Հիսուսի ծնվելը Բեթղեհեմում կարևոր էր, թե կարևոր չէր, այնքան էլ էական չէ, այլ՝ գլխավորն այն է, թե մենք ինչքանո՞վ ենք տեղ տալիս Նրան մեր սրտի ու հոգու մութ քարանձավում կամ արդյոք Սիրո Արքան ծնվե՞լ է մեր սրտի և հոգու մեջ: Երկնքում, այո՛ փայլում է Սիրո աստղը և ճանապարհ ցույց տալիս մոգերին, բայց նրա ճառագայթները որքանո՞վ են լուսավորում մեր հոգին և մենք արդյո՞ք դեպի այդ աստղն ենք առաջնորդում մեր կյանքի անիվը: Հիսուս խաչվեց ու Հարություն առավ, իսկ գուցե այն այդպես էլ խաչվա՞ծ է մնացել մեր հոգում կամ նրան այդպես էլ հարություն չտվեցի՞նք մեր հոգու գերեզմանում: Եվ այդպես էլ փակ մնաց այն՝ ատելության, չարի, նախանձի ու նենգության հսկա գերեզմանաքարով, որը նույնիսկ Հիսուս չի կարող շարժել, երբ մենք այդ չցանկանանք:

Աստծուն հավատացողը բնական է, որ ատում է սատանային: Բարուն հավատացողը, ատում է չարին: Աստծուն հավատալով չենք կարող ատել մեր եղբորը:

«Եթէ մեկն ասի, թե սիրում է Աստծուն, և ատի իր եղբորը, սուտ է խոսում, ով չի սիրում իր եղբորը, որին տեսնում է, ինչպե՞ս կարող է սիրել Աստծուն, որին չի տեսել» (Ա. Հովհ. 4:20): Ատելությունը չարիքի արմատն է: Այն արմատախիլ անելու միակ ուժը՝ Սերն է: Չպետք է ատել մարդկանց: Սերը կյանք է:

Մեծ Պահքի ապաշխարության շրջանին այս մտածումները բոլորիս մտքով էլ կարող են անցնել: Սրանք մտորումներ են, որոնք հուզում են ամենքիս, որովհետև ի վերջո իբրև մարդիկ, բոլորս էլ անզոր ենք մեր Տիրոջ զորության առաջ: Ամեն:

ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

«Խորհուրդ մեծ եւ սքանչելի, որ յայսմ աւուր
յայտնեցաւ» (Շարական)
«Մեծ և սքանչելի խորհուրդ, որ այսօր հայտնվեցիր»

«Ի՞նչ պատահեց երկու հազար տարիներ առաջ», ամեն տարի այս հարցն ենք տալիս ու հուզումով պատասխանում., թե՝ *«Ծնվեց Մանուկ Հիսուսը»* ու շարունակում ենք. թե՝ *«Ո՞վ էր Նա, ինչո՞ւ աշխարհ եկավ և ի՞նչ նպատակի համար»:* Հիսուս ծնվեց պարզ մի մսուրում Հրեաստանի Բեթղեհեմ քաղաքի քարայրներից մեկում անշուք ու անաղմուկ: Նա չարժանացավ մեծամեծ պատիվների, չմեծացավ պալատում, չհագնվեց գեղեցիկ հագուստներ, չապրեց ըստ պահանջի, սակայն դրա փոխարեն նա տիրացավ ամենամեծ փառքին. երկնքի հրեշտակները երգեցին ու գովերգեցին Նրա Սուրբ Ծնունդը՝

«Փառք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»: «Բարձունքների մեջ Աստծուն փառք և երկրի վրա խաղաղություն ու մարդկանց միջև հաշտություն» և դրանից բացի մանուկ Հիսուսը գրավեց պարզ հովիվների ուշադրությունը:

Երուսաղէմի Պատրիարք Թորգոմ Արքեպիսկոպոս Գուշակյանն ասում է.

«Խոնարհության, հնազանդության, աղքատության և բարեպաշտության այդ անլուռ քարոզը, քարանձավից և մսուրից արտասանված, փոխադարձվեց փառաբանությամբ, որը հրեշտակները հնչեցրեցին երկնային բարձրությանց մեջ արձագանքող անհուն մի երգով և, որը հովիվները արտահայտեցին երկրպագությամբ, իրենց հոգիների բովանդակ երկյուղածության մեջ: Բնության ծոցում իրենց ամբողջ կյանքը բարության և խաղաղության մեջ քաղցրացրած այդ լռակյաց էակները, որոնց խոսքը իրենց սրինգների երգն էր միայն եղել երկնքի ու երկրի գեղեցկությունների առջև, այդ օրը զարմաց-

րեցին բոլոր նրանց լսողներին, ինչպես ավետարանիչն է վկայում, հավատի և սիրո այնպիսի խոսքերով, որոնք անտարակույս գերագույն մի ներշնչումից էին թելադրվում նրանց» («Ամբողջ երկեր Թորգոմ Պատրիարք Գուշակյանի, Ե. Քարոզներ, Երուսաղեմ, 1940, էջ 113):

Իսկ Արևելքից եկող մոգերը երկնքում փայլող աստղին հետևելով, եկան Հիսուս Մանուկի մոտ, երկրպագեցին Նրան և գեղեցիկ նվերներ տվեցին՝ ոսկի, կնդրուկ և զմուռս:

Դարեր շարունակ մարդիկ մոգերի կողմից Հիսուսին տրված յուրաքանչյուր նվերին կարևոր նշանակություն են տվել: *«Ի՞նչ են նշանակում այս նվերները և ի՞նչ կարևորություն է տրվել սրանցից ամեն մեկին»:*

Առաջինը՝ *ՈՍԿԻՆ,* ամենամաքուրը մետաղներից, գեղեցիկն ու գրավիչը: Ո՛չ ժանգոտվում է և ո՛չ էլ փչանում, կարող է խորհրդանշել հոգին: Թագավորին հատուկ նվեր է. այն լինելով մետաղների թագավորը, արժանի նվեր եղավ Մարդկանց՝ Թագավորի *համար:*

Երկրորդը՝ *ԿՆԴՐՈՒԿԸ, ԱՆՈՒՇԱՀՈՏ ԽՈՒՆԿՆ է, որը ծխվում է Աստծու առաջ և քահանային հարմար նվեր է.* այն օգտագործվում էր և այսօր էլ գործածվում է Սուրբ Խորանի սպասարկության ու այլ ծիսակատարությունների ժամանակ: Քահանան պաշտոնի բերումով մի կամուրջ է Աստծու և մարդկանց միջև, ուստի մեր Տերը իբրև Քահանայապետ, մեզ վերստին արժանացրեց Աստծու ներկայությունը ունենալ մեր մեջ:

Երրորդը՝ *ՋՄՈՒՌՍԸ,* որը գործածվում էր մեռածների մարմինը ավելի երկար *պահպանելու համար,* այսինքն՝ զմռսելու համար: Այն խորհրդանիշն է հանդիսանում մեր մարմնի, որն իբրև Աստծու տաճար պիտի ընծայվի Նրան և պահվի փչանալուց: Հիսուս աշխարհ եկավ մարդկանց մեջ ապրելու և խաչի վրա Իր կյանքը գոհեց նրանց փրկության համար: Մոգերը իրենց բերած գեղեցիկ նվերներով գուշակել էին, թե Հիսուս պիտի լիներ ճշմարիտ Թագավորը, կատարյալ

Քահանայապետը և ամբողջ մարդկության Փրկիչը:

Երուսաղեմի միաբան Եղիշե Եպիսկոպոս Դուրյանը գեղեցիկ կերպով է բնորոշում Հիսուսի Ծնունդը.

«Ո՞ւր է նա»: - Բայց ահավասիկ, այստե՛ղ ձեր աչքի առջև երևում են մսուրն ու խանձարուրը, չե՞ք տեսնում նրա մեջ հանգչող հրաշքի Մանո՛ւկին, Կույս Մո՛րը...:

«Գրքերն ու գրքի մարդը մինչև այստեղ կարող են մեզ տանել...: Ավելի՜ հեռուն գնալու և այս տեսարանից այն կողմ փայլատակող ճշմարտությունը ողջունելու համար պետք ունենք Հավատքի՝ Մոգերից ժառանգված նույն լույսին, որը գիտի, թե ուր վերջապես պիտի արձակի իր մաքուր ճաճանչը...»

...Որևէ մեկը, որը կմոտենա Հիսուսին և չունի իր Հավատքի պայծառության մեջ փայլող լույսը, չպիտի կարողանա հասկանալ «այն մեծ և սքանչելի խորհուրդը որ Հայսմ Ավուր Հայտնեցավ... (Եղիշե Եպիսկ. Դուրյան, «Ո՞ւր է որ ծնավ», Երուսաղեմ):

Սուրբ Ծննդյան այս գեղեցիկ օրը, հասկանալի է, թե ի՞նչ է մեզանից սպասվում: *«Մոտեցեք Աստծուն և վերցրեք լույսը»: Հաղորդվեցեք և տեսեք թե ինչքան քաղցր է Տերը» (Պատարագամատույց)* Սուրբ Պատարագին երգված խոսքերը, պարզ են դարձնում, թե ի՞նչ է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու առաքելությունը: Նպատակը մեկն է՝ հայ հավատացյալների կյանքում ավելի ուժեղ կերպով արմատավորել Հիսուսի օրինակը ու մաքուր մի կյանք ապրելու գիտակցությունը:

Ամեն մարդ ունի իր ծննդյան օրը, երբ ամեն տարի իր մտերիմներով և հարազատներով հավաքվում են ու նշում այն: Սակայն, երբ նշում ենք Հիսուս Քրիստոսի ծնված օրը, այն չենք ընկալում իբրև տարեդարձ, այլ ամեն տարի տոնում ենք որպես խորհրդավոր ու սքանչելի մի Ծնունդ, Ծնունդ, որն իր հետ բերում է նոր հույզեր, նոր ապրումներ, նոր սպասելիքներ և նոր անակնկալներ: Երբ մի երեխա է ծնվում, նկատի են առնում, թե ո՞ր երկրում ծնվեց ու ինքնաբերաբար նա դառնում է այդ երկրի քա-

ղաքացին: Սակայն որտե՞ղ է ծնվում մեր Տերը ամեն տարի, ո՞ր երկրի քաղաքացին է Նա: Հիսուս ծնվում է բոլոր նրանց մեջ, ովքեր պատրաստ են ընդունելու Նրան իրենց հոգիներից ներս՝ իբրև մսուր:

Նորից իր խոսքն է ասում Երուսաղեմի Պատրիարք Թորգոմ Արքեպիսկոպոս Գուշակյանը.

«Այդ մեծ և ճշմարտապես սքանչելի Խորհրդի առջև ի՞նչ պիտի լինի մերը, ի՞նչպես պիտի փառաբանենք մեր Փրկչի ծնունդով մեզ հայտնված մեծ ճշմարտությունը: Ամեն քրիստոնյա, որ տարվա մեջ գեթ մի անգամ հաղորդության մեջ է դնում իր հոգին այս տոնի իմաստի հետ, այդ հարցը պիտի տա ինքնիրեն...» («Ամբողջ երկեր Թորգոմ Պատրիարք Գուշակյանի», Ե. Քարոզներ, Երուսաղեմ, 1940, էջ 115):

Ո՛չ մի թագավոր իր ունեցած ամբողջ իշխանությամբ և ուժով, ո՛չ մի իմաստուն փիլիսոփա ու ո՛չ մի բռնատեր, չեն կարողացել երկրագնդի վրա այնպիսի փոփոխություններ ու հեղաշրջում մտցնել, ինչպես արեց պարզ մսուրում ծնված Մանուկ Հիսուսը: Մեռելները հարություն առան, հիվանդները բժշկվեցին, թշնամիները բարեկամացան, մեղքերի մեջ թավալվողները՝ սրբվեցին... Այո՛, այս բոլորը եղան ու շարունակվում են կատարվել ամեն օր, սակայն միայն նրանց համար, ովքեր իրենց ամբողջ կյանքում ճանաչեցին ու այսօր էլ ճանաչում են ճշմարիտ Աստծուն:

Երջանկահիշատակ Գարեգին Ա. Հայրապետը ասել է. *«Քիչ է ասել Աստված քաղցր է, քիչ է ասել թե Աստված սեր է, մինչև որ այդ սերը չներթափանցի ու անձի ներքին էության, ներքին բովանդակության մաս չդառնա, հավատքի մեջ չշաղախվի, այդ ճշմարտությունը կմնա վերացական մի ճշմարտություն՝ թղթի վրա՝ մտքում»:*

Քրիստոնեական աշխարհում Սուրբ Ծննդյան տոնի առթիվ բազմաթիվ սովորություններ ու ավանդություններ են տեղի ունենում, որոնք երկրից երկիր, քաղաքից քաղաք և գյուղից գյուղ տարբերվում են: Սակայն այդ

բոլոր նվիրականացած սովորությունների մեջ Անդորայի իշխանության տակ գտնվող *Պիրենյան լեռների մի գյուղում* իրապես օգտակար, գեղեցիկ ու ամբողջովին քրիստոնեական մի սովորություն կա:

«Ամեն տարի Սուրբ Ծննդյան Տոնի օրը, եկեղեցու Սուրբ Մեղանի մի անկյունում, բարձերի մեջ նստեցնում են գյուղի ամենաաղքատ մանուկին ու բոլոր բնակիչները Արևելքից եկած մոգերի օրինակով այցելում են նրան և Հիսուսի դերը կատարող մանուկին ընծայում ամեն տեսակ պարգևներ՝ արծաթ, ոսկի, դրամ, հագուստ, ինչպես նաև գառնուկ, ուլիկ, հավ ու այլ նվերներ: Բնականաբար բոլոր մեծ ու փոքր զանազան պարգեվները պատկանում են միայն ու միայն մանուկին, որը նստած է Սուրբ Մեղանի մի անկյունում, ժպտուն կամ լալագին և կամ անտարբեր անցուդարձին: Այդ մանուկը մի քանի ժամվա ընթացքում թոթափում է իր վրայից աղքատի զգեստներն ու թշվառությունը և դառնում ոսկեղենիկ իշխանիկ»:

Այո՛, մեծ է մարդկանց տառապանքը: Այսօր աշխարհի տարբեր երկրներում դժբախտաբար դեռևս կան ընտանիքներ, որոնք անտուն են, *առանց տաքության, առանց հագուստի և ուտելիքի, մարդիկ, որոնցից շատերը զրկված են* տարրական խնամքից ու մանավանդ անհույս են, բազմահազար երեխաներ, որոնք զուրկ են մայրական գուրգուրանքից ու փայփայանքից:

Աղոթենք և չզրկենք նրանց մեր խնամքից ու օգնությունից:

«Հավատացյալի համար չկա փառաբանության ավելի մի մեծ գործ, քան ցանկություն հայտնել իր մեջ ունենալու Աստվածային կյանքը և կամ մոտենալու Աստծուն, միանալու Նրա հետ ու ծնելու իր մեջ, այսինքն՝ միշտ սրբագործելու իր անձն ու կյանքը Նրա սիրով և հավատքով. . .», ասում է Թորգոմ Պատրիարք Գուշակյանը:

ՇԱՐԱԿԱՆ ՕՐՀ. ԴԿ.
«ԽՈՐՀՈՒՐԴ ՄԵԾ ԵՒ ՍՔԱՆՉԵԼԻ»

Խորհուրդ մեծ եւ սքանչելի որ յայսմ աւուր յայտնեցաւ. հովիւք երգեն ընդ հրեշտակս, տան աւետիս աշխարհի:

Ծնաւ նոր արքայ ի Բեթղեհէմ քաղաքի. որդիք մարդկան օրհնեցէք, զի վասն մեր մարմնացաւ:

Անբաւելին երկնի եւ երկրի ի խանձարուրս պատեցաւ. ոչ մեկնելով ի հօրէ ի սուրբ այրին բազմեցաւ:

Խորհուրդը, որ այսօր հայտնվեց մեծ է և սքանչելի. հովիվները երգում են հրեշտակների հետ ու ավետիս տալիս աշխարհին:

Մի նոր Արքա ծնվեց Բեթղեհեմ քաղաքում, մարդկանց որդիներ, օրհնեցեք , որովհետև մեզ համար մարմին առավ:

Երկնքի ու երկրի անբավելին խանձարուրի մեջ փաթաթվեց և առանց Հորից բաժանվելու սուրբ այրում բազմեց:

«Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ»
«Օրհնեալ է Յայտնութիւնն Քրիստոսի»
«Զեզ և մեզ մեծ ավետիս»: Ամեն:

ՄԵԾ ՊԱՀՔԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԵՎ ԱՐԺԵՔԸ

«Միթե կարելի՞ բան է, որ հարսանքավորները սուգ պահեն, քանի փեսան նրանց հետ է» (*Մատթ. 9:15*):

Մեր Տերը այս հարցը ուղղեց նրանց, ովքեր չէին հասկացել պահքի բուն նպատակը: Նրանք չգիտեին, որ Հիսուսի աշակերտները ունեին մի ուրիշ կերակուր, որն ամեն օր ճաշակում էին Նրա բերանից բխող օրհնաբեր խոսքով և անմիջականորեն վայելում նույնինքն Աստծուն: Հետևաբար, կարիք կա՞ր մաքրվելու և մոտենալու Աստծուն, երբ Նա Ինքն էր մոտեցել մարդկանց:

Մեր Տերը մեզ հետ չէ այսօր, սակայն մարդիկ զգո՞ւմ են արդյոք Նրա ներկայությունը իրենց մեջ, եթե այդպես է, ապա ինչո՞ւ են շարունակվում զանազան տեսակի մեղքերի շարանները. ոխը, ատելությունը, նախանձը, վիճաբանությունները և այլն: Տերը մեր կողքին է, բայց մենք մերժում ու հեռացնում ենք Նրան մեզանից, ինչպես Անառակ Որդին, բայց երբ անդրադառնանք և ցանկանանք վերադառնալ, կարիքը պիտի ունենանք մի կողմ դնելու աշխարհային մտահոգությունները, որոնք խճողել են մեր մտքերն ու հոգիները. կարիքը պիտի ունենանք վերանորոգվելու, մտածելու և մեր ներաշխարհում ամփոփվելու ու լռության մէջ լսելու Տիրոջ ձայնը: Այս է իսկական պահքը: Աստված ուզում է, որ մենք իբրև Իր հարազատ զավակները մշտապես ուրախ լինենք, բայց մյուս կողմից էլ ընդունում է զղջումի և անդրադարձի համար մեր թափած արցունքները, նրանք նկատելով որպես մերժման բողոքներ մեր կատարած սխալների ու մեղանչումների դեմ, խոնարհվում է, մխիթարում ու հույս է տալիս մեզ:

Պահքի կարևորությունը շեշտելով և բուն իմաստն ու բովանդակությունը բացատրելով Ավետարանիչը նկարագրում է, թե Հովհաննես Մկրտչի աշակերտներին տարօրինակ էր թվում այն հանգամանքը, որ Հիսուս Իր առաքյալներին և հետևորդներին չէր ստիպում պահք պահել,

ինչպես իրենց ուսուցիչն էր անում: Հիսուս նրանց պատասխանում է. *«Միթե կարելի՞ բան է, որ հարսանքավորները սուգ պահեն, քանի փեսան նրանց հետ է, բայց կգան օրեր, երբ փեսան նրանցից կվերցվի, և ապա ծոմ կպահեն»:*

Սրանով մեծ Վարդապետը հստակ ցույց էր տալիս, որ պահքը, ծոմը, աղոթքը միջոցներ են և ոչ թե նպատակ: Իրական նպատակը Աստծուն մոտ լինելն ու Նրա ներկայությունը զգալն է: Եկեղեցին, հավատարիմ Քրիստոսի խոսքին, խրատում է մեզ երեք բան անել - *աղոթել, պահեցողություն անել և ողորմություն տալ:*

Աղոթքը մեզ մոտեցնում է Արարչին, պահեցողությունը մարմնական սննդից ավելի շեշտում է հոգևոր սննդի կարեւորությունը, իսկ ողորմածությունը առիթ է տալիս մեզ մեր ունեցածը բաժանելու Աստծու զավակների՝ տվածների, աղքատների, կարիքավորների, բանտարկյալների և հիվանդների հետ:

Մեր Եկեղեցում Մեծ Պահքին կարևոր տեղ է տրված: «Ինչո՞ւ: Ի՞նչ արժեք և նշանակություն ունի այն»: Անցյալում մեր հայրերի սահմանած օրենքները ի՞նչ կապ ունեն այսօրվա մեր կյանքի հետ: Երբ ամբողջ աշխարհը փոխվել է և փոխվում է, արդյոք ավելորդ չէ՞ խոսել «պահք-մահք»-ի մասին: Եվ դեռևս Մեծ Պահքի հետ կապված ուրիշ բաներ. մեղք, մեղքի գիտակցություն, զղջում, ապաշխարություն կոչվածը և այլն: Ծիծաղելի չէ՞ արդյոք այսպիսի բաների մասին խոսելը գիտության և աստղանավորդության ներկա դարում:

Շատերը ոչ միայն ամոթ, այլև անհանդուրժելի են գտնում վերոհիշյալների մասին խոսելը, դրանք համարելով տգիտության, սնոտիապաշտության, միամտության և նման բաների արդյունք:

Սակայն ծառը իր պտղից է ճանաչվում:

Ներկա դարում երևացող չափից դուրս ազատությունը իր պտուղներն է տալիս: Մեր այսօրվա քաղաքակիրթ կյանքը լցնող մի քանի իրողությունների պարզ մատնանշումն իսկ բավական է հասկանալու, թե ինչի՞ ենք հասել այսպես մտածելով ու գործելով:

ա. Ընտանեկան կառույցի խախտում:

Ամենուրեք ամուսնալուծումների երկար շարքը բավական է հստակ պատկերացում կազմելու այս մասին:

բ. Սեռի այլասերումը եւ շահագործումը:

Անբարոյականության քարոզչությունը, անչափահասների սեռային կյանքը, անհամար վիժումներն ու դրանց ցավագին հետևանքները և այլն:

գ. Չարութեան աճը:

Դաստիարակությունը բոլոր ձևերով - մամուլ, վեպեր, գծանկար-պատմվածքներ, հեռուստացույց, կողոպուտներ, ավազակային հարձակումներ, կանխամտածված սառը ոճիրներ, ահաբեկչություն և այլն:

դ. Անծրագիր, աննպատակ և անտարբեր կյանք:

Կյանքի դեմ դառը արտահայտություններ, անվերջ դժգոհություններ, փախուստ պատասխանատվություններից՝ թմրեցուցիչների գործածությամբ կամ այլ ինքնախաբեություններով, քաջության պակասը, ծայրահեղ հուսալքումները, անտարբերությունը և բազմաթիվ անձնասպանությունները:

Այս բոլորիդ հետո, ի՞նչ եք կարծում, կարելի՞ է դրանք թույլատրելի, բնական և օրինաչափ համարել: Եթե այո՛, այն ժամանակ անուրանալի ձևով պիտի ընդունենք նաև մեղքի ներկայությունը մեր շրջապատում և մեր կյանքից ներս:

Եթե մեղքը կա և կա անշուշտ, երբեք ավելորդ չպիտի լինի խոսել զղջման ու ապաշխարության մասին:

Պարզ ու հստակ է Աստծու խոսքը և Նրա պահանջած պահեցողությունը այս է. *«Ուղղումը մեր կյանքի, թերությունների սրբագրությունը, մարդկային և ընտանեկան հարաբերությունների բարեփոխումն ու բարվոքումը, բարոյական ամուր և օրինաբեր սկզբունքների հասկացողությունը և մեր պատասխանատվությունների ու դերի գիտակցումը»:*

Պահեցողությունը միայն որոշ տեսակի ուտելիքներից մեզ զրկելու նպատակ չի հետապնդում, այլ մղում է, որ մեր անձերը զերծ պահենք հոգեկան աշխարհը փչացնող չար խորհուրդներից ու խոսքերից: Հովհան Մանդակունի Հայոց Հայրապետը ասում է. *«Պահքը միայն ուտել-խմելը չէ, այլ խուսափելն է ամեն տեսակի մեղքերից: Պահք են քիչ խոսելը, չբարկանալը, չնախանձելը, վրեժխնդրի չլինելը, խոնարհությունն ու հնազանդությունը»:*

Իսկ Սուրբ Գրիգոր վարդապետ Տաթևացին ավելացնում է. *«Սատանան միշտ պահքի մեջ է, ոչինչ չի ուտում, բայց մեղք գործելուց չի դադարում ու չի հոգնում: Ոմանք պահոց օրերին ոչխարի միս չեն ուտում, բայց մարդու միս են ուտում, որն ավելի ծանր մեղք է»:*

Այսօր Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին թելադրում է պահք պահել, որը նշանակում է՝ աղոթքով, ժուժկալությամբ, մաքրությամբ և արդարությամբ փակել մեղքի ճանապարհը:

ԱՀԱ ԱՅՍ Է ՄԵԾ ՊԱՀՔԻ ԱՐԺԵՔԸ:

Աստված նմանվում է բարի և իմաստուն մի պարտիզպանի, որը բացված ակոսներից թունավոր խոտերն է մաքրում, պտղատու ծառերից անպետք և ավելորդ ճյուղերն է կտրտում, որպեսզի ծառը տեսքով գեղեցիկ. հոտավետ և քաղցրահամ պտուղներ տա: Նա մեր բարի ու արդար գործերը և մեզ ուրախացնող բարիքները չի խլում մեզանից, այլ ընդհակառակը, ազատում է մեզ ստորացնող մեղքերից, կրքերից ու ցանկություններից:

Աստված մեզ կանչում է, որպեսզի մենք Իրենով երջանիկ լինենք և ներկա ու ապագա կյանքի ապահովությունը ունենանք: Առանց Աստծու՝ կյանքը մութ է: Նրա թևերի տակ ապրել նշանակում է՝ հավիտենական ապահովություն ունենալ, քանի որ Նա է բոլոր բարիքների աղբյուրը: Աստված մեզ չի ստեղծել միայն այս ժամանակավոր կյանքի համար, որ մի քանի տարիներ ապրենք, տառապենք ու մեռնելով՝ փոշիանանք: Նա Իր պատկերով

ստեղծած մարդու համար մեծ ու փառավոր ապագայի ծրագրեր ունի, որոնք իր ժամանակին անպատճառ պիտի գործադրի: Մի՛ խաբվեք, գերեզմանը կյանքի վախճանը չէ: Մահը այն դուռն է, որի միջով այս կյանքից հավիտենականության պիտի անցնենք: *«Երանելի են այն մեռելները, որոնք Տիրոջով են ննջում»:* Այս է Ավետարանի պատգամը, որը հավիտյան չի փոխվում: Չխաբվենք, մեր անհավատությամբ՝ ո՛չ Աստված Իր գոյությունից կդադարի և ո՛չ էլ Նրա դատաստանը կվերջանա, բայց Նրան չհետևելով՝ մենք կկորչենք: Հետևաբար՝ *միշտ աղոթեցեք:* Ամեն:

ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

«Այստեղ չէ նա, քանի որ հարություն առավ»
(Մատթ. 28:6):

Հիսուսի դատարկ գերեզմանում երևացող հրեշտակի այս ցնծագին արտահայտությունը մեծ ուրախություն պատճառեց Յուղաբեր կանանց և Նրա առաքյալներին: Նույնը ապրում ենք և մենք՝ քսանմեկ դարեր հետո: Հիսուսի Հարությունը քրիստոնյա աշխարհի մեծագույն տոնն է: Մենք հայերս այն կոչում ենք նաև Սուրբ Զատիկ:

Ի՞նչ է նշանակում *«Զատիկ»:* Այս բառին տրված զատվելու, բաժանվելու մեկնաբանության մեջ, նկատի է առնվել հրեաների Եգիպտական գերությունից բաժանումը, իսկ Քրիստոսի Հարությամբ՝ մեղքից և մահից բաժանվելն ու վերջնական իմաստով վերադարձը դեպի Աստված:

Սուրբ Զատկի սովորություններից է միմյանց կարմիր ներկված հավկիթներ նվիրելը: Համաձայն ավանդության Մարիամ Մագթաղենացին, Հռոմում ներկայանալով Տիբերիոս Կայսրին (14-37թթ.) և վկայելով իր քրիստոնյա լինելը, նրան կարմիր ներկված հավկիթ է նվիրում՝ ասելով. *«Քրիստոս Յարեաւ ի մեռելոց»:* Հավկիթը խորհրդանշում է նոր կյանքի սկզբնավորումը, իսկ կարմիր գույնը՝ Քրիստոսի արյունը:

Մեր առօրյա կյանքում գեղեցիկ սովորություն կա օրվա տարբեր ժամերին բարև տալ միմյանց, սակայն մենք դա կատարում ենք առանց անդրադառնալու դրա իմաստի ու կարևորության վրա:

Մանավանդ Սուրբ Զատկի տոնին, երբ ողջունում ենք իրար, թե' *«Քրիստոս Յարեաւ ի մեռելոց»* և ստանում պատասխանը' *«Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի»,* անհրաժեշտ է մի պահ կանգ առնել, մտածել ու կենտրոնանալ այս ողջույնի մեջ խտացված խորիմաստ պատգամի վրա, ուր կարող ենք գտնել երեք վսեմ և հրաշալի մտա-

ծումներ:

ա. Ողջունելով Քրիստոսի Հարությունը, հավատում ենք, թե իսկապես Աստծու Միածին Որդին հոգով և մարմնով երեքօրյա թաղումից հետո Հարություն առավ:

բ. *«Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի»* պատասխանելով, հավատում ենք, թե այս պատմական հրաշափառ դեպքը պսակվել է Աստվածային օրհնությամբ:

գ. Ամեն մեկս իբրև քրիստոնյա հավատով և ամբողջ հոգով պիտի ընդունենք Հիսուսի Հարության հույսը, որովհետև այս հրաշալի դեպքը մեզանից դուրս կատարված մի իրողություն չէ, այլ՝ մեր միսն ու արյունը:

Աստվածորդին խաչվեց, թաղվեց ու Հարություն առավ և ապրում է մեր սրտում: Սակայն Զատկական ճշմարիտ պատգամը այս չէ: Ճիշտ է, որ ավետարանները այս բոլորը նկարագրում են գեղեցիկ ու հոգեխռով ձևով, բայց ամենակարևորը այն է, որ աշակերտները գտան մի դատարկ գերեզման: Ահա այս նույն խորհրդին է, որ հայ քրիստոնյան հավատացել է դարերի ընթացքում, հետևելով Պողոս Առաքյալի խոսքերին *«Եվ եթե Քրիստոս հարություն չի առել, ի զուր է մեր քարոզությունը, ի զուր է և ձեր հավատը» (Ա. Կորնթ. 15:14):*

Երջանկահիշատակ Վազգեն Վեհափառ Հայրապետը հրաշալի կերպով է բնութագրում Հարության Հաղթանակը.

«Քրիստոսի Հարության հիշատակը լոկ պատմական մի դեպքի տարեդարձը կամ տոնակատարությունը չէ, այլ միշտ նորոգվող հոգեկան մի հրաշալի ապրում, որ համակում է մարդկանց ողջ էությունը, ամեն տարի միշտ նույն ուժգնությամբ, միշտ նույն թարմությամբ, միշտ նույն ջերմությամբ: Ամեն տարի, կարծեք նոր է, որ Հարություն է առնում Հիսուս իր գերեզմանից: Կարծեք մեզանից ամեն մեկի հոգու գերեզմանից է հառնում Նա» («Աստվածահրավեր պատգամներ», Լոս Անջելես, 2004, էջ 7):

Դժբախտաբար մենք հավատում ենք միայն պատմական Քրիստոսին, հաճախ ճիշտ այնպես, ինչպես հավատում ենք փիլիսոփա Սոկրատին, Արիստոտելին, Բուդդային, որոնք ապրել ու քարոզել են գեղեցիկ բաներ և անցել պատմության գիրկը, սակայն այդ չէ բուն Քրիստոսը: Գլխավորը ապրող, ներգործող ու հոգիները հեղաշրջող Հիսուսն է, որի հետ մշտնջենապես հաղորդակցության մեջ պիտի լինենք: *«Ինչո՞ւ ողջին մեռելների մեջ եք փնտռում: Այստեղ չէ՝ այլ հարյավ» (Ղուկ. 4:5-6):*

Այո՛, մենք փնտրում ենք Հիսուսին երբեմն սիրով ու սրտով, բայց երբ Նա հանդիպում է մեզ, չենք ճանաչում Նրան, *«պարտիզպան»* կամ *«ճամբորդ»* ենք կարծում, որովհետև հոգսերով տարված մեր սրտում եղածն է միայն, որ տեսնում ենք, փոխանակ իրականությունը տեսնելու: Նրան փնտրում ենք բամբասանքների, սրա ու նրա կարծիքի մեջ... Պատմական Քրիստոսը կարող է ներշնչել, բայց չի կարող հեղաշրջել:

Զատկի առավոտյան գլորված քարը գալիս էր հիմնովին հեղաշրջելու մարդու դիրքորոշումը մահվան հանդեպ: Այդ քարի գլորվելուց ի վեր աշխարհը այլևս նույնը չմնաց: Ժամանակին, հին աշխարհի մարդիկ մտածում էին, թե երկրագունդը հարթ ու տափարակ գետին է, սակայն դեպի Նոր Աշխարհ ուղևորությամբ գիտության ու մարդկանց մտքերը հիմնովին փոխվեցին: Հին գիտնականներն ու աստվածաբանները հավատում էին, թե մեր երկրագունդը տիեզերքի կենտրոնն է, բայց Գալիլեյի գյուտից հետո, աշխարհը փոխվեց: Այնպես, ինչպես յուրաքանչյուր գյուտ մի քար է գլորել աշխարհի ու մարդկանց մտքերից ի բնության նկատմամբ մի նոր մոտեցում ցույց տվել մարդուն, այնպես էլ, Հիսուսի գերեզմանի քարի գլորումը եկավ Մարդու Կյանքի ու Մահվան հանդեպ ունեցած իր գաղափարները հիմնովին հեղաշրջելու ու նոր և ավելի դրական մի դիրքորոշում տալու նրան:

Քրիստոնեական Եկեղեցու իջնելը պատմության թատերաբեմի վրա եղավ արդարև մեծագույն *«շարժումը»,* որը մի կողմ գլորեց նախապաշարումների, կուռքերի, հեթանոսության ու ընկերային խտրությունների քարերը ի խախտեց չարի *«իշխա-*

նություններն ու պետությունները» (Եփես. 6:1), որոնք լայնորեն բացվել էին Աստծու դեմ ու հանգցրեց ցանկության և սուտ գիտության կրակները:

Այդ մեծ *«շարժը»* երբեք չի կանգնել, այլ միայն թուլացել է երբեմն ու դանդաղել: Միլիոնավոր մարդիկ շարժման մեջ են Ավետարանը լսելու համար. մեր օրերի հոչակավոր հոգևորականների քարոզչական շարժումները այդ են ապացուցում: Այսօր Եկեղեցին հսկայական աշխատանք է տանում շարժելու հ մի կողմ գլորելու համար գերեզմանաքարերը թմրեցուցիչների, անարդարությունների, պատերազմների, ցեղային խտրականությունների, որոնք մարդկության մեծ մասին փորձում են պահել մեղքի ու մահվան գերեզմաններում:

Մեզ համար կարևոր հարց է, թե՝ *«Ի՞նչ շարժում կա Հայ Եկեղեցու կյանքում»:* Չի կարելի ակնկալել *«մեծ շարժում»,* բայց որտեղի՞ց պիտի գա *«սաստիկ հովի այն հնչյունը», որ* պիտի *«շարժի»* Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ջրերը, որպեսզի նրա մեջ նետվողները կարողանան բժշկվել իրենց հոգեկան հիվանդություններից: Այդ*«շարժումը»* միայն «Երկնքից» *կարող է գալ,- ասում է երջանկահիշատակ Շնորհք Պատրիարք Գալուստյանը. «Մենք մեր աղոթքներով նախ պիտի շարժենք երկինքը, որպեսզի երկինքն էլ շարժի եկեղեցու ավազանի ջրերը, կյանքի և կենդանության շունչ դնելու համար նրա մեջ, մեզ վերակենդանացնելու հարության շնչով» («Տաղավար Տոներ», 1976, էջ 186):*

Սուրբ Զատկի պատգամը այս է: Մահը պարտված է և կյանքը հաղթական: Այլևս ազատ ենք մեղքի ու մահվան կապանքներից և կարող ենք քայլել գլուխներս բարձր ու արժանապատվությամբ, լի հույսով և ուրախությունը մեր աչքերում ու սրտերում, որովհետև Սուրբ Զատիկը այսօր և հավիտյան մեր Փրկչի հրաշափառ Հարությամբ մեզ տրված մի Նոր Կյանքն է:

«Քրիստոս Յարեաւ ի մեռելոց»
«Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի»: Ամեն:

ժողովրդի միջից մեկը նրան ասաց. *«Վարդապետ, ասա եղբորս, որ ժառանգությունը ինձ հետ բաժանի»:* Եվ Նա ասաց. *«Ով մարդ, ինձ ո՞վ դատավոր կամ բաժանարար կարգեց ձեր վրա»:* Ապա ժողովրդին ասաց. *«Տեսեք, որ զգույշ լինեք ամեն տեսակ ագահությունից, որովհետև մարդու կյանքը իր կուտակած հարստության մեջ չէ» (Ղուկ. 12:13-15):*

Մեր Եկեղեցու նշանավոր Հայրերից Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանյանի բացատրությունը.

«Ահա մի միջադեպ ևս, որը առիթ է ընծայում Հիսուսին՝ խոսել աշխարհի բարիքների մասին: Մի օր Հիսուս քարոզում էր, երբ հանկարծ ժողովրդի միջից մի ձայն լսվեց.- «Վարդապետ, մեր հայրը մեռավ պետք է եղբորս հետ ստացած ժառանգությունը բաժանենք, բայց եղբայրս ինձ զրկում է և ողջ ունեցվածքը ցանկանում է գրավել, դու, որ պատրաստ ես խեղճերին օգնել համոզիր եղբորս, որ արդարությամբ իմ բաժինը տա»: Հիսուս չէր զլացել օգնել ո՛չ մի խեղճի, եթե դիմել էին Իրեն, սակայն երկու հիմնական պատճառով մերժեց այդ բողոքողին:

«*Առաջին*, նախ, որ պարզ բարերարության մի գործ չէր առաջարկվածը, այլ *օրինական ու դատական:* Անհրաժեշտ էր լսել նաև մյուս եղբորը՝ իմանալու համար, թե ինչո՞ւ է զլանում եղբոր բաժինը տալ կամ իրո՞ք բողոքողը զրկված մեկն էր, թե ուղղակի այս ձևով ցանկանում էր խաղ խաղալ: Հետևաբար Հիսուս պատասխանեց. *«Ե՞րբ ես լսել, թե այս երկրում դատավորի պաշտոն եմ ստանձնել որ ինձ բողոք ես ներկայացնում, կամ ե՞րբ եմ ես ժառանգություններ բաժանելու և իրավարարի գործ կատարել, որ դիմում ես ինձ» (Ղուկ. 12:13):*

«Երկրորդ պատճառը՝ *բարոյական էր:* Մեր Տերը շարունակ այս աշխարհի բարիքն անարգելու, ինչքից ու ստացվածքից հրաժարվելու, միայն բարոյական ու հոգևոր

բարիքները որոնելու քարոզ էր խոսել և բոլորովին էլ հարմար չէր երկու եղբայրների նյութական շահով զբաղվել, մեկին կամ մյուսին ավելին ստանալուն օգնել, որ նշանակում է քաջալերել ագահության զգացմունքն ու մտածումը: Ահա այս է Հիսուսի ասածը. *«Ամենքդ էլ զգուշացեք դրամ ու հարստություն ձեռք բերելու մտածումից, որովհետև մարդու ճշմարիտ կյանքն ու հոգու օգուտը ունեցվածքի շատությունից չէ»* և շարունակում է. *«Ով իր երջանկությունը հիմնում է գանձերի, ինչքերի ու վայելքների վրա, զանց է անում իր համար երկնավոր գանձեր, հոգևոր հարստություններ ու վայելքներ ստեղծելը: Նույնպես է նաև նա, ով իր անձի համար գանձ կհավաքի և Աստուծով չի հարստանա»» (Ղուկ. 12:21) (Մաղաքիա Արք. Օրմանյան, «Համապատում», Ս. Էջմիածին, 1997, էջ 405):*

Եվ Իր աշակերտներին ասաց. *«Դրա համար էլ ասում եմ ձեզ. հոգ մի արեք ձեր հոգու համար, թե ինչ եք ուտելու, ո՛չ էլ մարմնի համար, թե ինչ եք հագնելու, որովհետև հոգին առավել է, քան կերակուրը, և մարմինը՝ քան՝ հագուստը:... Ձեզնից ո՞վ հոգս անելով, կկարողանա իր հասակի վրա մեկ կանգուն ավելացնել:... Եվ դուք մի՛ մտահոգվեք, թե ի՞նչ եք ուտելու կամ ի՞նչ եք խմելու, և մի՛ մտատանջվեք... Իսկ ձեր Հայրը գիտե, որ այդ ամենը պետք է ձեզ: Այլ դուք հետամուտ եղեք Աստծու արքայությանը, և այդ ամենը ավելիով կտրվի ձեզ»... (Ղուկ. 12:22-31):*

Երբ Հիսուս խրատում է ասելով, թե հոգու և մարմնի կարիքների, կերակրի ու հագուստի անհրաժեշտության մասին մի՛ մտածեք, ուզում է ասել, որ հոգին կյանքից ու մարմնից, ապրելուց, կերակրից ու հագուստից ավելի արժեքավոր պիտի համարվի: Աստված, որ մտածում է և խնամում ագռավին, ծաղիկներին և այլ թռչունների, որոնք առանց սերմանելու, հնձելու և հավաքելու շարունակում են իրենց կյանքը, ուրեմն ինչքա՛ն *ավելիով պիտի հոգա Իր իսկ ստեղծած մարդու մասին,* որն առավել է, քան թռչուններն ու բույսերը: Մարդը հակառակ իր աստվա-

ծային ծագման, առանց Աստծու օգնության, իր ցանկությամբ չի կարող նույնիսկ իր հասակի վրա մի կանգուն անգամ ավելացնել, զարմանալիորեն այս իմանալով հանդերձ, համարձակվում է մտածել, թե առանց Աստծու օգնության սեփական ուժերով կարող է ավելի մեծ արդյունքի հասնել: Շուշան ծաղիկը, որին ոչ մեկը չի ջրում, չի խնամում, ավելի գեղեցիկ է, քան Սողոմոն իմաստունը իր ողջ հարստությամբ և կարողությամբ: Միայն մի տարբերություն կա, շուշանը ծաղիկ է, այսօր՝ թարմ է, վաղը՝ կարող է չորանալ, մյուս օրը' կրակի բաժին դառնալ, բայց մարդը իբրև Աստծու կատարյալ ստեղծագործությունը անշուշտ որ ավելի բարձր է, քանի որ օժտված է Նրա անմահ հոգով: Մենք իբրև քրիստոնյաներ հավատում ենք, որ Աստված կա և ամեն ինչ Նրա տնօրենությամբ է կատարվում:

Այնուհետև Հիսուս շրջվելով Իրեն հետևող բազմությանը՝ փոքրիկ հոտին, քաջալերում է նրանց, որ երբեք չվախենան արտաքին դժվարություններից և չարի որոգայթներից: Երկնավոր Հայրը Երկնքի Արքայությունն ու Ավետարանը տվել է փոքրիկ հոտին: Մեր Տիրոջ խոսքերն են. *«Վաճառեցեք ձեր ինչքերը և ողորմություն տվեք. և ձեզ համար շինեցեք չհնացող քսակներ և անհատնում գանձեր երկնքում, ուր ո՛չ գողն է մոտենում, և ո՛չ ցեցը՝ փչացնում, որովհետև, ուր որ ձեր գանձն է, այնտեղ և ձեր սրտերը կլինեն» (Ղուկ.* 12:33-34):

Այս աշխարհի գանձերին սպառնում են գողերը, իսկ ցեցերը՝ վնասում են շտեմարանները, սակայն Երկնքում Աստծու գանձին ո՛չ գողն է մոտենում, ո՛չ էլ ցեցն է ապականում, սիրտն էլ հանգիստ ու ապահով է: Մարդը միշտ սրտով կապված է իր գանձին. նրա մասին է մտածում և վախենում սպառնացող վտանգներից: Երկրային գանձին կապված սիրտը միշտ դողում է, իսկ երկնայինին կապվածը՝ ազատ է վախից ու կասկածից և երջանկություն է վայելում, (Մաղաքիա Արք. Օրմանյան, *«Համապատում»,* Ս. Էջմիածին, 1997, էջ 406408):

Այս պատմությունը ուսանելի է.

«Երկու եղբայր են լինում, մեկը հարուստ, մյուսը՝ աղքատ: Հարուստ եղբայրը քրիստոնեական սիրով լցված լինելով, միշտ օգնում է իր աղքատ եղբորը երկար ժամանակ անձանձրույթ կերպով: Մի օր էլ մտածում է իր եղբորը հարստացնել: Տոպրակով բավական մեծ գումար տանում ու դնում է մի տան անկյունում, այնտեղ, ուր նրանք սովորաբար քայլում էին: Եղբոր թևը ընկնելով, հարուստը նրան տանում է ճիշտ այն ճանապարհով, ուր նա պահել էր տոպրակով դրամը: Դրամին հասնելու համար ընդամենը մի քանի քայլ էր մնում: Հանկարծ աղքատը ասում է իր հարուստ եղբորը. «Եղբայր, եթե ես կուրանամ, ինչ ես կարծում, կարո՞ղ եմ քայլել առանց որևէ մեկի օգնության» և չսպասելով նրա պատասխանին, ուզում է, որ նա փորձելու համար իր աչքերը կապի: Հարուստ եղբայրը նրան հորդորում է մի փոքր էլ սպասել, որից հետո նրա խնդրանքը կկատարվի: Սակայն փոքր եղբայրը չի լսում նրան ու համառորեն ցանկանում է, որ նա իր աչքերը կապի: Շատ խնդրելուց, աղաչելուց հետո, հարուստ եղբայրը տոպրակով դրամից մի քանի քայլ այս կողմ, ստիպված կապում է նրա աչքերը: Աղքատ եղբայրը աչքերը կապած անցնում է դրամի կողքով: Հարուստ եղբայրը հասկանում է, որ եղբոր գրքում գրված է, որ նա այդպես էլ աղքատ պիտի մնա: Երբ հասնում են դրամին, եղբայրը վերցնում է այն ու շարունակում քայլել իր աղքատ եղբոր հետ»:

Հոգևոր հարստություն ունենալ նշանակում է աղոթքով ու հավատով մաքրված և սրբված արդար գործեր կատարել, գործածել Աստծու տված բարիքներն ու պարգևները, օգնել կարիքավորին, խնամել հիվանդին, այցելել բանտարկյալներին և հոգատարություն ցույց տալ նրանց նկատմամբ, իսկ ամենակարևորը՝ անշահախնդիր սիրել մարդկանց: Հոգևոր հարստությունը մնայուն արժեք է, ո՛չ կարող է գողացվել և ո՛չ էլ կփչանա: Աշխատենք հոգեպես հարուստ լինել և հայ քրիստոնյային վայել կեցվածքով ու վարմունքով օրինակ հանդիսանալ մեր նմաններին: Ամեն:

Ո՞Վ Է ԻՄ ԸՆԿԵՐԸ

Օրենքի ուսուցիչներից մեկը Հիսուսին հարցրեց. *«Իսկ ո՞վ է իմ ընկերը» (Ղուկաս 10:29):* Այս հարցմանը պատասխանելու համար մեր Տերը պատմում է *«Բարի Սամարացու»* առակը.

«Մի մարդ Երուսաղեմից Երիքով էր իջնում և ընկավ ավազակների ձեռքը, որոնք նրան մերկացրին, վիրավորեցին և կիսամեռ թողեցին ու գնացին: Պատահեց, որ մի քահանա նույն ճանապարհով իջնի, նրան տեսավ և թողեց անցավ, նույնպես և մի ղևտացի նույն տեղով անցնելիս, տեսավ և թողեց անցավ: Մի սամարացի, որ ճանապարհորդում էր, եկավ նույն տեղով նրա մոտ, և տեսնելով նրան՝ գթաց: Եվ մոտենալով՝ կապեց նրա վերքերը, վրան ձեթ ու գինի ածեց և դնելով նրան իր գրաստի վրա՝ տարավ մի իջևան և խնամեց նրան: Եվ հաջորդ օրը, երբ դուրս էր գալիս այնտեղից, իջևանատիրոջը երկու դահեկան հանեց տվեց և ասաց. «Խնամիր նրան և ինչ որ ծախսես դրա վրա, իմ մյուս անգամ գալուն կհատուցեմ քեզ» (Ղուկաս 10:29-35):

«Ո՞վ է իմ ընկերը»: Այս հարցի պատասխանը առակը ինքը տալիս է արդեն: Ոմանք ենթադրում են, որ առակում հիշված մարդը, ով ավազակների ձեռքն ընկավ նույնինքն *«ընկեր»* կոչվողն է: Այս ենթադրությունը հակասում է ճշմարտության: Ընկերը ավազակների ձեռքը ընկնող մարդուն օգնողն է և ո՛չ թե նույնինքն ավազակների ձեռքը ընկնողը: Ո՞վ էր օգնողը, եթե ոչ Քրիստոս: Հետևաբար, Քրիստոս Ինքնիրեն էր, որ ներկայացնում էր իբրև ընկեր, ճշմարիտ ընկեր, օգնող ընկեր: Առակը պատմելուց հետո, Հիսուս Օրենքի ուսուցչին հարցրեց. *«Արդ, ըստ քեզ, այդ երեքից ո՞րը մերձավորի պես վերաբերվեց նրան, ով ավազակների ձեռքն էր ընկել»:* Եվ սա ասաց. *«Նա ով նրան բարիք արեց»: Հիսուս նրան ասաց. «Գնա՛ և դու նո՛ւյն ձևով արա» (Ղուկաս 10:36-37):*

Մեզ շնորհված է գեղեցկագույն առիթը Հիսուսի

նման ընկեր լինելու մեր շրջապատի համար: Չփորձենք գտնել պատասխանը, թե՝ *«Ո՞վ է իմ ընկերը»* հարցմանը, այլ լինենք ուղղակի պատասխանը: Թույլ տանք, որ Հիսուս մեր միջից սիրի կարոտյալներին, վերականգնի գլորված-ներին, սփոփի վշտահարներին և մխիթարի սգավորնե-րին:

Լինենք մեր Տիրոջ ձեռքը մեկնված հիվանդներին: Լինենք Նրա տաքուկ շունչը՝ ցրտահարներին, ոտքը՝ կյանքի ճանապարհին կաղացողներին, Նրա քաղցրու-թյունը՝ դառնացածներին, օգնականը՝ անօգնականներին, կարեկցող սիրտը՝ սրտաբեկներին, քաջալերությունը՝ հուսահատվածներին, ուրախարար ներկայությունը՝ տը-խուր մարդկանց, զորավիգը՝ անգործներին, բալասանը՝ խոցոտվածներին, այցելուն՝ անտեսվածներին և սիրող եղ-բայր բոլոր նրանց, ովքեր դրա կարիքը ունեն:

Մանավանդ և ավելիով լինենք երկնքի ժպիտը երկրավորների համար: Ժպտացողների թիվը հետզհետե նվազում է: Աշխատենք այդ թիվը շատացնողներից մեկը լինենք: Պահենք մեր դեմքի վրա Հիսուսի ժպիտը: Թող մարդիկ մեր ժպիտի մեջ տեսնեն մահվան վրա հաղթա-նակ տարած մարդու ժպիտը:

«Գնա՛ և դու նո՛ւյն ձևով արա»: Մենք էլ նույնը անենք առանց խտրականության ու սիրահոժար կերպով: Վստահաբար այդպիսի վերաբերմունքը մեր նմանի հան-դեպ հիմնովին պիտի փոխվի, եթե երբեք մտածենք, որ յուրաքանչյուր մարդ, որին տեսնում ենք, ապրում ու գործակցում ենք, մեկն է, որի հետ շատ երկար ճանապարհ պիտի անցնենք: Պատկերացրեք մի աշակերտ, որը պետք է ապրի մի ուրիշի հետ իբրև սենյակակից երկու-երեք տարի, բնական է, որ ուզի կամ չուզի խաղաղասեր ու սիրալիր վերաբերմունք պիտի ունենա նրա նկատմամբ՝ հանգիստ մի կյանք ապրելու համար: Այնպես էլ յուրա-քանչյուր ճշմարիտ քրիստոնյա, պիտի աշխատի սիրով ու առողջ հարաբերության մէջ լինել իր նմանների հետ,

որովհետև ոչ թե երկու-երեք տարիներ պիտի անցկացնի նրանց հետ, այլև՝ անվախճան և անավարտ մի հավիտենականություն:

Մի մոռանաք, որ մեր Տերը Ինքնիրեն պատկերացրեց. *«Քաղցած էի, և ինձ ուտելիք տվիք, ծարավ էի, և ինձ ջուր տվիք խմելու. օտար էի, և ինձ ձեր մեջ առաք, մերկ էի, և ինձ հագցրիք, հիվանդ էի, և ինձ տեսնելու եկաք, բանտում էի, և ինձ այցի եկաք» (Մատթ. 25:35-36):* Եթե Հիսուս Ինքնիրեն տեսավ այսպիսի մարդկանց մեջ, ճիշտ պիտի չլինե՞ր, որ մենք էլ Իր ներկայությունը տեսնեինք նրանց մեջ:

Հիսուսի սերը դասախոսություն չէ, որ մարդկանց առջև կանգնենք ու խոսենք: Դա նման կլինի մի ծարավ մարդու, որին փոխանակ ջուր տալու, խոսենք ջրի օգտակարության մասին: Հեշտ է ավազակների ձեռքը ընկած, կողոպտված, վիրավորված ու գետինը թողնված մարդուն ասել. *«Ընկեր, ցավում եմ քեզ համար: Վեր կաց, ուժերդ հավաքիր և տուն գնա»:* Հեշտ է կիսամերկ և օրվա հացի կարոտ մեկին ասել. *«Գնացեք խաղաղությամբ, տաքացեք և հագեցեք և դուք նրանց չտաք մարմնին անհրաժեշտ բաները, ի՞նչ օգուտ է» (Հակ. 2:16): Աստծու անունով խոսելը, բայց Նրա անվան համար չգործելը՝ կեղծ քրիստոնեություն է: Բարության և միայն Բարու մասին ճառելը, բայց բարին չգործելը, սուտ բարեպաշտություն է: Հեշտ է ուրիշներին ասել որ Հիսուս սեր է, Նա ձեզ սիրում է»:* Ամեն մարդ կարող է մեր Տիրոջը ներկայացնել իբրև եղբայր տառապյալների համար, բայց արդյոք ամեն մարդ կարո՞ղ է իր հերթին Նրա նման եղբայր լինել տառապյալների համար: Հարց է:

Բարի Սամարացու սերը ունեցող մարդը, օգնում է և՛ բարեկամին և՛ թշնամուն, ծանոթին և անծանոթին հավասարապես. *«Եթե քաղցած է քո թշնամին, հաց տուր նրան, և թե ծարավ, ջուր տուր նրան. այս անելով կրակի կայծեր կկուտակես նրա գլխին: Թույլ մի՛ տուր, որ չարը հաղթի քեզ, այլ բարիով հաղթիր չարին» (Հռոմ. 12:20-21):*

Ով կուզի կերակրել մի կորյունի, որը հետագայում իր հոշոտիչը պիտի դառնա: Ո՞վ ցանկություն պիտի ունենա խղճալ մեկին և օգնել, եթե նա ապագային անողորմ պիտի լինի իր նկատմամբ: Սակայն Հիսուս կերակրեց, ծառայեց ու քարոզեց այնպիսի մարդկանց, ովքեր ծաղիկներով, ոստերով ու արմավի ճյուղերով գովաբանեցին և երկինք բարձրացրին նրան «ովսաննա»-ներով», սակայն շատ չանցած փշե պսակ դրեցին Նրա գլխին, չարչարեցին, ապա՝ խաչեցին:

Մեր սիրտը խորապես ցավում է, երբ տեսնում ենք, որ *«ընկեր»* ու *«բարեկամ»* անվանումները տրվում են ավազակներին, փոխանակ տրվելու նրանց ձեռքն ընկած մարդկանց օգնողներին: Դարեր շարունակ մարդիկ փնտրել են՝ *«Ո՞վ է իմ ընկերը»* հարցի պատասխանը: Իսկ դու, ի՞նչ ես մտածում, ո՞ւմ ես նկատում քո ընկերներդ, բարձր դիրք վայելող մարդկա՞նց, մեծահարուստներին ու երևելիների՞ն, քեզանով հետաքրքրվողներին ու կարևորություն տվողների՞ն, քեզ սիրողներին ու ծառայություն մատուցողների՞ն: Կասկած չկա, որ սրանք բոլորն էլ լավ ընկերներ կարող են լինել, բայց լավ ընկեր կարող են լինել նաեւ ժողովրդի հասարակ և անտեսված խավը կազմող մարդիկ: Հակաքրիստոնեական է սիրել ոմանց և ատել ուրիշներին: Ցավալի է, որ մարդիկ ոմանց իրենց գլխի վրա են դնում, իսկ ոմանց էլ իրենց ոտքերի տակ առնում: Հետևելով մեր Տիրոջը քրիստոնյա մարդն էլ պիտի սիրի բոլորին հավասարապես և արդարորեն, պիտի սիրի լինեն նրանք ողորմած, թե՝ ողորմության կարոտ, գթառատ, թե՝ անգութ:

Աստուած սիրեց մեզ առանց պայմանի և ակնկալության, առանց մեզ կանչելու հաշվետվութեան կամ դատաստանի, առանց մեզանից աղերսագիր, զղջումնագիր կամ խոստումնագիր պահանջելու, ուրեմն՝ մենք էլ նույնը պիտի անենք:

Մեր նմանները ասելով, նկատի չունենք մեր հարազատներին ու հարևաններին: *«Իրապես որո՞նք են մեր*

ընկերները»: Հիսուս ուզում է մեզ սովորեցնել, որ մեր ընկերները միայն մեր հարազատները, ազգականները, ազգակիցներն ու հավատակիցները չեն կամ մեր հարևանները: Ընկեր պետք է համարենք զանազան երկրներում ապրող, տարբեր հավատի, կրոնի, դասակարգի, ցեղի և գույնի մարդկանց:

Հիսուս գտել էր *«Ո՞վ է իմ ընկերը»* հարցի պատասխանը: Ամեն մարդ, որ ապրել է կամ ապրում է այս աշխարհում՝ մեր Տերը նրան ընկեր է նկատում: Մարդիկ ստեղծված են իրար համար: Մեր Տիրոջ համար չկա աշխարհում մեկը, որն արժանի չի անընկեր մնալու, չկա մեկը, որի մասին մտածելը ավելորդ է, չկա մեկը, որի փրկությամբ մտահոգվելը ժամանակի կորուստ է: Հիսուսի համար ամեն մարդ պետք ունի փրկության և Փրկչին, ամեն մարդ արժեք է, ամեն մարդու իրավունքն է սիրվելը:

Եթե աշխարհասեր մարդուն հարցնենք, թե՝ *«Ո՞վ է ընկերդ»,* նրա պատասխանը պիտի լինի. *«Ինձ օգտակար հանդիսացողը, ինձ համար շահի աղբյուր եղողը»:* Արդեն այսպիսի մարդուց այլ պատասխան էլ չես կարող սպասել: Բայց մեր պատասխանն ու վերաբերմունքը տարբեր պիտի լինի: Ինչն է, որ քեզ իբրև քրիստոնյա աշխարհիկ մարդկանցից պիտի տարբերի. եթե նրանք ընկեր են նկատում միայն իրենց օգնողներին, դու իբրև քրիստոնյա ընկեր պիտի նկատես ո՛չ միայն քեզ օգնող մարդկանց, այլ նաև քո օգնությանը պետք ունեցողներին:

«Սամարացին նախ նայեց կիսամեռ մարդուն, գթաց նրան, ապա մոտեցավ և նրա վերքերն օծեց ձեթով ու գինով: Այստեղ ձեթը խորհրդանշում է լույսը, իսկ ձեթով օծելը՝ հավատը, հույսը և սերը: Գինով օծումը խորհրդանշում է ահն ու երկյուղը, քանզի գինին կսկծեցնում է վերքը: Վերքերը կապելը խորհրդանշում է Տիրոջ տասը պատվիրաններն ու Եկեղեցու յոթ խորհուրդները տալը: Տերը մեր փրկության համար ընդհանուր դեղ պատրաստեց, ձեթը՝ Հոգու մկրտության, իսկ գինին՝ Տիրոջ Արյանը հա-

դորդվելու համար: Սրանցով մեր հոգու վերքերը բուժվեցին, մեղքերում մեռածներս կենդանացանք, և մեզ համար բացվեցին արքայության դռները» («Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Տոները», Սուրբ Էջմիածին, 200, էջ, 131):

Թող որ Բարի Սամարացու աստուածսիրության և եղբայրսիրության կրակը բորբոքվի մեր սրտերում, որպեսզի շտապենք օգնելու որևէ ժամանակ հարձակման ենթարկված ու վիրավորված մեր եղբայրներին և քույրերին:

Թող որ Սուրբ Հոգին մեր բերանները բացի օրհնաբանությամբ, որպեսզի համարձակորեն և սրտի ցնծությամբ օրհներգենք երկնքի ու երկրի միակ Տիրոջը, Բարի Սամարացուն՝ Հիսուս Քրիստոսին, Ով անարժաններիս արժանի արեց դառնալու Ամենասուրբ Երրորդության Սիրո Ընտանիքի անդամները: Ամեն:

ԱՏԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՉԱՐԻՔ Է

Ատելութիւն գրգռէ զհակառակութիւն»
«Հակառակությունն ատելություն է գրգռում»
(Առակ. 10:12):

Աստված Մովսես մարգարեին տասնաբանյա պատվիրաններով հրահանգեց *«Մի՛ սպանիր»:* Հովհաննես Ավետարանիչը գրում է. *«Նա որ իր եղբորը ատում է՝ մարդասպան է»,* որովհետև սպանության սկիզբը ատելություն է: Մարդ նախ ատում է, ապա՝ սպանում: Մարդասպանությունը Կայենից սկսեց, ով իր եղբորը Աբելին խաբելով սպանեց: Կայենի գործերը չար էին, իսկ Աբելինը՝ բարի: Աբելը սիրված էր Աստծու և իր ծնողների կողմից. ահա դրա համար Կայենը ատեց իր եղբորը: Ատելությունը եղավ բոլոր մեղքերի սկիզբն ու պատճառը: Նրանից ու նախանձից ծնվեցին՝ քենն ու ոխը, իսկ ոխակալությունից՝ նենգությունը, խաբելն ու սուտ խոսելը:

«Որո՞նք են Կայենի յոթը մեղքերը»:

ա. Աստծուն իր պտուղներից և բերքից վատն ու անպետքը նվիրեց: բ. Նախանձեց: գ. Ատեց: դ. Նենգությամբ խաբեց եղբորը: ե. Սպանեց: զ. Որպես առաջին ոճրագործ չար օրինակ եղավ աշխարհին: է. Երբ Աստված հարցրեց, թե՝ *«Ո՞ւր է քո եղբայր Աբելը» (Ծնն. 4:9),* նա ստեց ու ասաց. *«Չգիտեմ»:* Աստված նրան հարցրեց, որպեսզի զղջալով *«մեղա»* ասեր, մինչ նա լրբությամբ պատասխանեց. *«Մի՞թե ես իմ եղբոր պահակն եմ» (Ծնն. 4:9):* Աստված ասաց. *«Այդ ի՞նչ արեցիր, քո եղբոր արյան կանչը երկրից բողոքում է ինձ» (Ծնն.* 4:10): *Աստված յոթը պատիժ ուղարկեց Կայենի վրա: Նախ նրան անիծեց. «Արդ, անիծյալ լինես երկրի վրա, որը բացեց իր բերանը եղբորդ՝ քո ձեռքով թափած արյունն ընդունելու համար: Դու պիտի մշակես հողը, բայց նա պիտի չկարողանա քեզ տալ իր արդյունքը» (Ծնն.* 4:11-12*): Ծառի նման պիտի դողդողաս. «Ահ ու դողի և երերման մեջ պիտի լինես երկրի վրա»*

(Ծնն. 4:12): *Ծովի ալիքներից պիտի տատանվես: Մարդասպան Կայենի վրա նշան դրեց. «Նա ով կսպանի Կայենին, յոթնապատիկ վրեժի կարժանանա: Եվ Տեր Աստված նշան դրեց Կայենի վրա, որպեսզի ոչ ոք, ով հանդիպի նրան, չսպանի» (Ծնն.* 4:15):

Ատելությունը թշնամական մի կեցվածք է, որը մարդ ունենում է որևէ անձի նկատմամբ, երբ նրան սիրելուց դադարում է ու ցանկություն է ունենում հարվածելու: Նրա համար Առակագիրը գրում է. *«Հակառակությունն ատելութիւն է գրգռում»:* Ատելությունը բազմատեսակ մեղքերի դուռն է: Նրանից առաջ են գալիս՝ *բարկությունը, նախանձը, անգթությունը, վայրագությունը, հպարտությունը, վրեժխնդրությունը, կասկածն ու համառությունը:* Իսկ ատելությունը առաջ է *գալիս անձնասիրությունից ու փառասիրությունից:*

Համաձայն Անգլիացի նշանավոր գրող Բայրընի՝ *«Ատելությունը սրտի խենթություն է»:*

Երկու տեսակ մարդասպանություն կա: Առաջինը՝ արյունով և մի անգամ, երկրորդը՝ առանց արյան ու անդադար, ատելության ոգով:

Մարդիկ հաճախ անիրավ տեղն են իրար ատում: Այս երևույթը հնից ի վեր գոյություն ունի: Արժի լսել Սաղմոսերգուին, որը պաշտոնական բերանն է մերօրյա մի շարք անիրավությունների. *«Տե՛ս թշնամիներս որքա՜ն բազմացան և անիրավ ատելությամբ ինձ ատեցին» (Սաղմ. 24:19):* Աշխարհը այնպիսի մի վիճակ է ստացել, որ մարդը ուզում է իր կամքը պարտադրել դիմացինի վրա: Մարդիկ ամեն ինչ նյութական զորության մեջ են ուզում տեսնել, նկատելով, որ ապրելու համար նյութը էական է: Եվ եթե չեն կարողանում նյութապես ճզմել դիմացինին, սկսում են ատել նրան, գոհացում տալու համար իրենց փառասիրություններին:

Այս է պատճառը, որ աշխարհի չորս կողմերում տաք կամ սառը ատելություն կա: Գոյություն ունեն ազգա-

միջյան և համայնքային անհասկացողություններ: Այս բոլորը առաջ են գալիս իրար գործերին խառնվելուց: Մեր հանրային կյանքում, եթե ամեն մարդ իր գործին նայի, վստահ եմ, որ արդյունքը կլինի շինարար և արդյունավետ:

Ատելությունը թույնի է նման: Մարդը եթե այդ թույնը չկարողանա իր ատած անձի մեջ ներմուծել և նրան սպանել, անպայմանորեն այդ հյութից կամ նյութից ինքը պիտի թունավորվի ու նրա արյունով բարոյապես պիտի սպանվի:

Ամերիկացի նշանավոր քարոզիչ Հենրի Էմիրսըն Ֆոստիքը ասում է. *«Մարդկանց ատել մի առնետից ազատվելու համար, նմանվում է ինքն իր տունը կրակի տալուն»:* Որով ատող անձը առավել կերպով վնասում է ինքնիրեն, քան՝ ատողին:

Վերևում նշեցինք, թե ատելությունից առաջ են գալիս մի շարք հոռի արարքներ, որոնք չարիք են պատճառում:

Օրինակի համար բարկությունը. *«Թե բարկանաք էլ, մեղք մի՛ գործեք, արեգակը ձեր բարկության վրա թող մայր չմտնի: Ամեն դառնություն, բարկություն, զայրույթ, աղաղակ և հայհոյություն թող վերանա ձեզնից՝ իրենց չարությամբ հանդերձ» (Եփես. 4:26, 31):*

«Իսկ եթե ձեր սրտերում դառն նախանձ և հակառակություն ունեք, մի պարծեցեք, որ սուտ եք հանում ճշմարտությունը» (Հակ. 3:14):

Ամեն ասպարեզ ունի իր սկզբունքները: Եթե մի մարդ իր դիրքի ու հավատի սկզբունքին կառչած տեղի չի տալիս՝ դա չի նշանակում թե այդ անձը համառ է, այլ՝ ընդհակառակը՝ օրինապահ մեկն է: Իսկ նա, ով ի շահ իր փառասիրությունների, ուզում է ոտնակոխ անել այդ ըսկզբունքները, դա նշանակում է նա ոտնահարում է նրա իրավունքները: Իսկ եթե ենթական չի կարողանում հաջողվել իր մտադրության մէջ՝ սկսում է ատել դիմացինին:

Ահա այստեղ է, որ Սաղմոսերգուն ատվողի բերանով ասում է. *«Բայց ովքեր մեղանչում են իմ դեմ, նրանք ամբարշտանում են իրենց հոգու մեջ, և ովքեր ատում են ինձ, նրանք սիրում են մահը» (Առակ. 8:36):*

Այս պատմությունը ուսանելի է.

«Ժամանակին մի իշխան կար՝ խիստ չար, անիրավ ու անխիղճ, ով իր հարկերով շատ էր նեղում քաղաքի բնակիչներին: Ամեն մարդ անիծելով նրա մահն էր ուզում. միայն մի այրի կին մշտապես աղոթում էր նրա առողջության ու կյանքի երկարակեցության համար: Այս լուրը հասնում է չար իշխանին, ով հետաքրքրության համար գնում է այրի կնոջ մոտ ու հարցնում նրան. «Ես քեզ բարություն չեմ արել ո՞վ կին, դու ինչո՞ւ ես աղոթում ինձ համար»: Իմաստուն կինը պատասխանում է. «Քո հայրը շատ վատ մարդ էր, ես անիծեցի և նա մեռավ, իշխանությունը անցավ քեզ և դու աւելի խիստ, դաժան ու չար եղար: Վախենում եմ, որ մեռնես և քո որդին քեզանից ավելի վատ ու անխիղճ լինի»:

Արդար մարդը ոչ մեկին չի ատում, որովհետև այս անցողիկ կյանքում ատելությունը մարդկային չէ:

Մեր Տերը ոչ մեկին չատեց: Սաստեց, խարազանեց, սիրեց և առանց ատելու ու առանց Իր սկզբունքից շեղվելու խաչ բարձրացավ, կամովին մահը գրկեց, սակայն փարիսեցիների փառասիրությանց և եսասիրությանց խաղալիք չեղավ:

«Տիրոջ հանդեպ զգացված երկյուղն ատում է անիրավությունը, թշնամանքն ու հպարտությունը և չարի ճանապարհը» (Առակ. 8:13):

Մեր Տերը իր դասերից մեկում հետևյալն է շեշտում. *«Ոչ ոք չի կարող երկու տիրոջ ծառայել կամ մեկին կատի և մյուսին կսիրի, կամ մեկին կմեծարի և մյուսին կարհամարհի. չեք կարող ծառայել Աստծուն և մամոնային» (Մատթ. 6:24):*

Ոչ ոք չի կարող միանգամից թե՛ բարին և՛ թե չարը սիրել: Ոչ ոք չի կարող միաժամանակ թե՛ Աստծուն և թե՛ սատանային պաշտել:

Աստծուն հավատացողը ատում է սատանային: Բարուն հավատացողը՝ ատում է չարը, Աստծուն հավատալով ոչ ոք չի կարող ատել իր եղբորը: Ոչ միայն Սուրբգրականորեն, այլ և մարդկայնորեն ներելի չէ այդպիսի մի արարք:

«Եթե մեկն ասի, թե սիրում է Աստծուն, և ատի իր եղբորը, սուտ է խոսում, ով չի սիրում իր եղբորը, որին տեսնում է, ինչպե՞ս կարող է սիրել Աստծուն, որին չի տեսել» (Ա. Հովհ. 4:20):

Ատելությունը չարիքի արմատն է: Այն արմատախիլ անելու կարողություն ունեցող միակ կացինը՝ Սերն է:

Չպետք է ատել մարդկանց, այլ պետք է ատել չար սովորությունները:

Ուստի այն քրիստոնյաները, ովքեր իրար ատում են՝ մարդասպան են: Բոլորս էլ քույրեր ու եղբայրներ ենք, քանի որ նույն ավազանում ենք մկրտված ու Արարչին որպես *«Հայր»* ենք ընդունում: Ուրեմն մի՛ ատեք իրար: Մի՛ նախանձեք: Մի՛ չարախօսեք: Ոխ մի՛ պահեք: Մի՛ անարգեք: Այլ իրար սիրեցեք ու ներեցեք: Ամեն:

ՀՈԳՈՒ ԾԱՐԱՎԸ

Հովհաննու Ավետարանի 7-րդ գլխի 37-րդ համարում կարդում ենք.

«Մեծ տոնի վերջին օրը Հիսուս կանգնած էր և աղաղակում էր ասելով. «Եթե մեկը ծարավ է, թող ինձ մոտ գա և խմի: Ով ինձ հավատում է- ինչպես Գիրքն է ասում,- նրա ներսից կենդանի ջրերի գետեր պիտի բխեն»: Նա այս ասում էր Հոգու մասին, որին ընդունելու էին իրեն հավատացողները, քանի որ Հոգին դեռևս չկար, որովհետև Հիսուս դեռ փառավորված չէր» (Հովհ. 7:37-38):

Ինչքան սրտառուչ է այս կոչը նրանց համար, ովքեր իսկապես հավատացել են իրենց առաքելությանն ու կոչմանը այս կյանքում: Ի՞նչ կա ավելի գեղեցիկ բան քան Քրիստոսով ծարավը հագեցնելը: Ո՞վ արդյոք չի ապրել մարմնական ծարավի դառնությունը և նրան զուգընթաց՝ նաև հոգևոր ծարավի ահավորությունը:

Աստվածորդին, իբրև կյանքի աղբյուր, հավիտենական ջուր խոստացավ սամարացի կնոջ միջոցով, բոլոր իրեն հավատացողներին ասելով. *«Բայց ով որ խմի այն ջրից, որ ես եմ տալու նրան, հավիտյան չպիտի ծարավի: Իսկ այն ջուրը, որ ես նրան տալու եմ, նրա մեջ կլինի բխող ջրի աղբյուր հավիտենական կյանքի համար» (Հովհ. 4:14):* Ուրեմն Քրիստոս Իր շնորհներով պիտի պայծառակերպի բոլոր նրանց, ովքեր կդիմեն Իրեն իրենց ծարավը հագեցնելու համար: Քրիստոս Ինքը այն ժայռն է, որից միայն հավիտենական ջուր է բխում: Պողոս Առաքյալը Կորնթացիներին ուղղած իր թղթում ասում է. *«Եվ բոլորն էլ նույն հոգևոր ըմպելիքը խմեցին, որովհետև խմում էին հոգևոր այն վեմից, որ գնում էր նրանց հետ և այն վեմը Ինքը Քրիստոսն էր» (Ա. Կորնթ. 10:4):*

Մեր Տիրոջ խոստացած ջուրը հավատացյալին մաքրելուց ու սրբելուց հետո, հավիտենականության ժառանգորդ է դարձնում, այլ խոսքով հավատացյալին վերածում է Սուրբ Հոգու Տաճարի:

Նոր Կտակարանում հանդիպում ենք *երկու ջրամանների:* Ջուրը ո՛չ թե միայն քրիստոնեական աշխարհի, այլ զանազան կրոնների մեջ ընդունված է որպես բյուրեղացման և մաքրության խորհրդանիշ:

ա. Մատթեոսի Ավետարանում Երուսաղեմի կառավարիչ Պիղատոսը, երբ Հիսուս Նազովրեցու դատն էր տեսնում, մի ջրաման վերցնելով իր ձեռքերը լվաց:

Պիղատոսը տեսնելով, որ հրեաները ուզում են անպայման անմեղ մարդուն խաչ բարձրացնել, որպեսզի խռովություն չլինի, ջուր վերցրեց և նրանց ներկայությամբ ձեռքերը լվաց ու ասաց. *«Այդ արդարի արյունից անմասն եմ ես, դուք գիտեք»:* Իսկ ամբողջ ժողովուրդը պատասխանեց. *«Դրա արյունը մեր վրա և մեր որդիների վրա»: Այն ժամանակ Պիղատոսը նրանց համար արձակեց Բարաբբային և Հիսուսին գանակոծել տալով տվեց նրանց ձեռքը, որ խաչվի» (Մատթ. 27:24-25):*

Պիղատոսը ձեռքերը լվանալով հեշտ ճանապարհը գտավ, այն է՝ հրաժարվել որևէ պատասխանատվություն ստանձնելուց: Հակառակ որ նա տեսավ ու հասկացավ Քրիստոսի անմեղությունը, սակայն ինչ-ինչ քաղաքական պատճառներով չկարողացավ նույնիսկ փրկելու փորձ կատարել: Ներկա դարում էլ կան մարդիկ, ովքեր երբեմն դժվարությունների հանդիպելով կամ ընտանեկան խռովություններ ունենալով, հեշտ ճանապարհ են ընտրում ասելով. *«Մեռնեմ ազատվեմ ամեն ինչից»:* Ճշմարիտ և քաջ քրիստոնյան պայքարող մեկը պիտի լինի իր աղոթքով ու հավատով: Պետք է ո՛չ միայն ապրել, այլ նաև ապրեցնել:

Վերոհիշյալ ավետարանական հատվածներում հանդիպում ենք լվացման արարողությանց, որոնք տարբեր նպատակներ են հետապնդում:

ա. Մեր Տերը Հիսուս Քրիստոս, ծնկի գալով լվանում է Իր աշակերտների ոտքերը' ծառայելու խոնարհագույն օրինակը տալով մեզ:

բ. Մինչդեռ Պիղատոսը մերժում է ծառայելու պատասխանատվություն ստանձնել, որպեսզի քաղաքական դրդապատճառներով հրեաների կողմից խռովություն չառաջանա:

Այսօր, 21-րդ դարում ավելի քան երբեք մարդկությունը պետք ունի Կենաց Ջրին, հագեցնելու համար ծարավ հոգիները, որովհետև մարդիկ չարացած և մոլեգնած վիճակ ունեն իրենց անձնական ու ընկերային կյանքում: Ամբողջ աշխարհը լցված է Պիղատոսներով, որոնք հազար ու մի տեսակ անարդարություններ, ավազակություններ կատարելով, նրա նման անմեղ ձևանալով իրենց ձեռքերը լվանում են պատասխանատվություն չստանձնելու համար: Չկա մի օր, որ չկարդանք կամ չտեսնենք ահռելի ոճրագործություններ, սպանություններ և քստմնելի գայթակղություններ: Նույնիսկ հավատացեալ ժողովուրդը շվարած ու շփոթված մի վիճակ ունի, թե՝ *«Ի՞նչ է լինելու այսքան անարդարության ու չարության վերջը: Ո՞վ պիտի պատասխան տա այսքան դժբախտությունների, ցեղասպանությունների ու ոճրագործությունների համար և չգիտի այլևս ո՞ւմ դիմի»: «Ո՞րն է այս բոլորի բանալին, ո՞վ կարող է հանգստացնել ու խաղաղեցնել աշխարհի մարդկությանը»:*

Պատասխանը մեկ է, մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս. *«Ես եմ ճանապարհը և ճշմարտությունը և Կյանքը: Ոչ ոք չի գա Հոր մոտ, եթե ոչ՝ ինձանով» (Հովհ. 14:6):* Եկեղեցին է, որ մեր Տիրոջ միջոցով խաղաղության միակ նավահանգիստ կարող է դառնալ փոթորկալից ծովի դիմաց. *«Խաղաղություն եմ թողնում ձեզ, իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ...» (Հովհ. 14:27):* Որքա՜ն կարևոր է այս խաղաղությունը ամբողջ մարդկության համար:

Երբ խոսում ենք ծարավի ու ջրի մասին, հիշում ենք, իրապես, Հիսուսի վերջին խոսքը խաչի վրա *«ծարավ եմ»: «Այնուհետև Հիսուս, գիտենալով, թե ահա ամեն ինչ կատարված է, որպեսզի կատարվի գրվածը, ասաց՝ ծարավ եմ: Եվ*

այնտեղ քացախով լի մի աման կար. զինվորները լեղախառն քացախով մի սպունգ թրջեցին և այն դրին եղեգի ծայրին ու մոտեցրին նրա բերանին: Երբ Հիսուս լեղախառն քացախը բերանն առավ, ասաց. «Ամեն ինչ կատարված է»: Եվ գլուխը կախելով հոգին ավանդեց» (Հովհ. 19:28-30):

Բոլոր մարդկանց ծարավությունը ճիշտ Հիսուսի պես վերջանում է այսպես քացախի դառնությամբ: Ահա թե ինչու, մեր Տերը համայն մարդկության ծարավությունը Իր Անձի վրա վերցնելով՝ խաչվեց, որպեսզի Իր արյունը Կենաց Ջրի վերածելով, հազեցնի նրանց հավիտյան. *«Զինվորներից մեկը տեգով խոցեց նրա կողը, և իսկույն արյուն և ջուր ելավ» (Հովհ. 19:34):*

«Դեպի քեզ կարկառեցի ձեռքերն իմ. հոգիս հողի պես ծարավի է քեզ: Լսիր ինձ փութով, Տեր, քանզի շունչս պակասեց իմ ներսում, մի՛ շրջիր երեսդ ինձնից, որ չնմանվեմ գերեզման իջնողներին» (Սաղմոս 142:6-7),- ասվում է Սաղմոսաց գրքում:

Ինչքա՜ն ճիշտ և ինչքա՜ն հարազատ է սաղմոսերգուի ընդգծած այս համեմատությունը մարդու վերաբերյալ՝ Աստծու ծարավի և հողի՝ անձրևի ծարավի միջև:

Մարդու ծարավը շատ նման է հողի ծարավին: Ինքն էլ հող է արդեն, որովհետև հողից է ստեղծված: Բայց մարդը ունի մշտական ծարավը իր Արարչի՝ Աստծու նկատմամբ: Ճիշտ է, որ բոլոր ժամանակներում էլ եղել են մարդիկ, ովքեր ցանկացել են մերժել Աստծու ծարավը, Նրա անհրաժեշտությունը, նույնիսկ Նրա գոյությունը, հայտարարելով, թե մարդը կարիքը չունի Աստծուն՝ այս աշխարհում երջանիկ ու վայելքով լի մի կյանք ունենալու համար:

«Հոգիս հողի պես ծարավի է քեզ: Լսիր ինձ փութով, Տեր... մի շրջիր երեսդ ինձնից»,- աղաչում է սաղմոսերգուն: Որովհետև, եթե երեսդ դարձնես ինձանից, կընդմանվեմ նրանց, ովքեր գուբ, այսինքն գերեզման պիտի իջնեն ու հող դառնան: Ընդհակառակը, երեսդ դեպի ինձ

դարձրու, այն ժամանակ կնմանվեմ արևի բացված կենսահորդ ու կենսախայտ ծաղիկին: Ահա թե ինչքան խորն է մարդու հոգու, զգացումի ու գիտակցության մեջ Աստծու ծարավն ու պահանջը: Աստված միանգամայն արև է, անձրև է, կենսահյութ է մարդու համար: Ահա թե ինչու մարդը Նրա անհագ ծարավը ունի:

«Հայ ժողովուրդը դարերի ընթացքին եղավ միշտ Աստծու ծարավի ժողովուրդ: Հաճախ մահվան չափ ճնշվեց ու բռնադատվեց իր հավատի համար, հաճախ էլ զլացվեց իրեն իր ուզած ձևով և իր ուզած չափով Աստծու իր ծարավը հագեցնելու ազատությունը: Բայց ոչ մի ուժ չկարողացավ հանգցնել Նրա մեջ Աստծու ծարավի կրակը: Ծաղրի, արհամարհանքի, նախատինքի մշտնջենական առարկա մի՛թող մեզ և մի՛թույլ տուր, որ մեր իրավունքը, մեր հայրենական ժառանգությունը հափշտակիչների սեփականությունը մնա, մի՛թույլ տուր, որ մեր սեփականությունը վերստին ու վերստին մեր ձեռքից հափշտակվի բռնաբար, դավադրաբար, վայրենաբար: Ողորմությանդ և գթությանդ լույսը ի վերջո ծագեցրու մեր վրա Տե՛ր, չբավարարող շնորհքովդ շրջապատիր մեզ և Քեզանով լիացրու, Քեզանով կշտացրու, ինչպես քաղցրատեղերը առատ անձրևով ես կշտացնում և վերակենդանացնում ծարաված, անապատականացած հողերը: Տե՛ր, ծարավի՛ ենք Քեզ ջո՛ւր եղիր մեզ» (Մեր հոգևորականներից մեկը խոսել է Սուրբ էջմիածնի Մայր Տաճարում, Միջինքին, 1 Մարտ 1990-ին):

Դրախտում, գիտության ծառի պտուղը ճաշակելով, մարդու ներսում անհագ ծարավ առաջացավ: Ծարավը նշանակում է երկու բան: Առաջինը՝ *ներքին ծարավն է, տանջող և նվազեցնող պահանջը, իսկ երկրորդը՝ արտաքինից այդ ծարավը հագեցնելը:* Ո՞րն է մարդու ներքին աշխարհում ծարավը հագեցնելու պատճառը: Երբ մարդը թողեց կենդանի ջրի ակնաղբյուր Աստծուն, ենթարկվեց այս կատաղի ծարավին: Երկրորդ՝ մարդու ներսում կան մի շարք ծարավներ: Առաջինը՝ *կյանքի ծարավ,* քանի որ ոչ մեկը չի ուզում մեռնել, երկրորդը՝ *ուրախության ծարավ,* և

երրորդը՝ *սիրո ծարավ:* Աստված գիտի, որ մարդը շատ անգամ անտեսված, լքված է, չի նկատվում նույնիսկ իր նմանների կողմից, ուստի պետքը ունի սիրո և ուշադրության: Ուրեմն, կան նաև՝ *կարոտության ծարավ* ու *հոգևոր ծարավ:* Այս ծարավը ոչ մի բան չի կարող գոհացնել: Հոգին ծարավ է և գոհացում է ուզում: Դարերից ի վեր, մարդիկ փորձել են զանազան միջոցներով իրենց ծարավը հագեցնել, բայց հակառակն է տեղի ունեցել՝ ավելի են ծարավել. *«Ով որ այս ջրից խմի, նորից կծարավի, բայց ով որ խմի այն ջրից, որ ես եմ տալու նրան, հավիտյան չպիտի ծարավի» (Հովհ. 4:13):* Պատասխանը այս է: Սովորական ջուր խմելով՝ մենք նորից պիտի ծարավենք, սակայն, Աստծու տված ջրից խմելով՝ երբեք չպիտի ծարավենք: *«Իսկ ո՞րն է այդ ջուրը»:* Շատ պարզ ու հստակ է: Աստծու բերանից դուրս եկած յուրաքանչյուր խոսքը:

Այսօր, մեր Տերը պատրաստ է և ուզում է Իր կենդանի ջուրը մեզ տալ, միայն թե մենք մեր չար ու անարդար սրտով, մեղքերով ու պղծությամբ, հպարտությամբ հ մարդկային բոլոր մոլություններով ուժը ունենանք Տիրոջ առաջ խոստովանվելու և մեղքերի թողություն ու ներում ստանալով, հագեցնելու մեր հոգու ծարավը:

Կան չորս կարևոր մտածումներ, որոնցով կարելի է գոհացում տալ մեր ծարավին:

ա. *Տիրոջ արյամբ մեղքերի թողություն* և մեղքի գերությունից փրկություն:

բ. *Մեր Տիրոջ մտերիմ սիրով:* Հիսուս խոստացավ ամեն օր մեզ հետ լինել՝ Իր սիրով գոհացնելու համար: Քրիստոսի սերը կենդանի ջուր է, որը մեր կյանքը երջանիկ է դարձնում:

գ. *Տերը մեզ գոհացնում է Իր Սուրբ Հոգով, զորությամբ ու կարողությամբ:*

դ. *Տիրոջ Երկրորդ Գալուստով:* Վերջնական գոհացում և բավականացում պիտի լինի, երբ մեր Տերը Հի-

սուս Իր Հոր փառքով ու բազում հրեշտակներով վերադառնա և մեզ փառավոր մարմին տա:

Ըստ Գրիգոր Տաթևացու, ջուրը տասներկու ձևով է իմաստավորվում:

«Առաջինը՝ *բնական:* Երկրորդը՝ նշանակում է *ժողովուրդ:* Երրորդը՝ *բարեբախտություն:* Չորրորդը՝ *դըժբախտություն:* Հինգերորդը՝ *ազահություն:* Վեցերորդը՝ *հեշտասիրություն:* Յոթերորդը՝ *լվանում է:* Ութերորդը՝ *նեղություն:* Իներորդը՝ *հանգստություն:* Տասներորդը՝ *իմաստություն: Տասնմեկերորդը* ՝ լուսավորություն: *Տասնըերկուերորդը* ՝ կոչում կամ տեսություն» *(«Գրիգոր Տաթևացի «Գիրք Հարցմանց» Պրակ Գ):*

Մինչև տասներկուերորդը ամեն մի օրը նվիրված է ինչ որ մի բանի:

«Ավելի հարմար գտանք խոսել վերջինի՝ Տասներկուերորդի մասին, ուր ասվում է. *«Ինչպես փափագում է եղջերուն աղբյուրի ջուրը»:* Երկրի չորս կողմերում, չորս հողմեր կան, *արևելյանը տաք է ու խոնավ,* ինչպես ասում են բժիշկները: *Արևմտյանը,* հակառակ սրան, *հով է ու չոր: Հարավայինը տաք է ու չոր: Հյուսիսայինը,* սրան հակառակ, *հով է ու խոնավ:* Այսպես էլ մարդու չորս տարիքում փոխվում են չորս հողմերը: Նախ մանկության հասակում, երբ ծնվում է երեխան, *արևելյան հողմ է՝ տաք ու խոնավ:* Պատանեկության հասակում *հարավային հողմն է՝ տաք ու չոր:* Երիտասարդության հասակում *հյուսիսային հողմն է՝ հով և խոնավ:* Տարեց հասակում *արևմտյան հողմն է՝ հով և չոր:* Իսկ ծերության ժամանակ *հյուսիսային հողմն է՝ հով ու խոնավ»:*

«Իսկ մարդու մեջ չորս ջրերը չորս տարրերից են՝ աղի, դառը, քաղցր և հոսած: Աղի ջուրը աչքի մեջ է, որպեսզի կարգավորվի ջերմությունը: Դառը ջուրը ականջում է, որ պահպանի մուտքը: Քաղցր ջուրը բերանում է՝ համերը ճաշակելու համար, իսկ հոսած ջուրը մեջքում է, որպեսզի պահպանվեն ծնունդները» (Գրիգոր Տաթևացի, «Գիրք Հարցմանց», «Մարդու

մեջ եղած չորս հողմերի և չորս ջրերի մասին» պրակ Թ):

Գիտության և ճշմարտության իմացումը մարդու կյանքի գլխավոր նպատակակետն է եղել շարունակ: Ուսանողը իր աշակերտական գրասեղանից սկսած գիտության ծարավով է ապրում իր կյանքը, գիտնականը ինչքան որ հմտանում է իր ասպարեզում, դեռևս պահանջքը ունի ավելիին: Իր ծարավը հագեցնել փորձող մարդն է, որ կարող է բարձունքներ նվաճել: Վա՛յ այն մարդուն, որ կարծում է թե իր ծարավը հագեցրել է:

Ամեն մեկս իբրև հավատացյալներ մեր կյանքում հրավիրվում ենք լվացվելու: Երկու ճանապարհ կա, որից միայն մեկը կարող ենք ընտրել. ծառայելու պատասխանատվություն ստանձնել կամ անտարբերության մէջ կորստյան մատնվել: *«Ով ծարավ հոգիներ, եկեք՝ Կենաց Ջրից խմեցեք»:* Այդ Կենաց Ջուրը Ինքը մեր Տերն է՝ Հիսուս Քրիստոս: Մոտեցեք և ձեր կենդանի կյանքով խմեցեք Նրա հավատի Ջրից ու անմահացեք և ձեր զանձերը հաստատեք Նրա վրա՝ բարի գործեր կատարելով ու արդար և մաքուր կյանք ունենալով, Աստծու փառքի համար: Ամեն:

ՓՅՈՒՆԻԿԵՅԻ ԿՆՈՋ ՀԱՎԱՏԸ

Լավ չէ մանուկների հացն առնել և շներին գցել» (Մատթ. 15:26):

Եթե մի ակնարկ գցենք մեր Տիրոջ երեք տարվա առաքելության վրա, պիտի տեսնենք, որ Նրա գործունեության կարևոր մի մասը կազմում են բժշկությունները:

Ղուկասը, հեթանոսությունից դարձի եկած անտիոքացի բժիշկը, իր արհեստի բերումով Ավետարանում լայնորեն անդրադարձել է մեր Տիրոջ կատարած բժշկություններին:

Մանրակրկիտ կերպով ուսումասիրելով Նոր Կտակարանում արձանագրվածը նկատում ենք, որ բոլոր բժշկությունների հիմքը եղել է *հավատը:*

Հիսուս Իր գործունեությունը հավատի վրա հիմնելով, հրաշք է գործել միայն այն ժամանակ, երբ հավատ է գտել ենթակայի կամ ժողովրդի մոտ: Եթե հավատի թերություն նկատեր, հրաշք չէր կատարում: Օրինակի համար Մատթեոս Ավետարանի 9-րդ գլխի 27-29 համարներում նկարագրվում է, թե Հիսուս ինչպե՞ս է բուժում երկու կույրերին և մի համրի: Երբ նրանք խնդրում են իրենց բուժել Հիսուս ասում է. *«Հավատո՞ւմ էք, որ ես այդ բանը ձեզ կարող եմ անել»:* Նրանք ասացին Նրան. *«Այո՛, Տեր»:* Այդ ժամանակ դիպավ նրանց աչքերին և ասաց. *«Ըստ ձեր հավատի թող լինի ձեզ» (Մատթ. 9:27-29):*

Մեր Տերը օժտված էր բժշկելու աստվածային զորությամբ: Նա հրաշագործելու ժամանակ կերպարանափոխվում էր, աստվածային ճառագայթը շողում էր Իր անձի մեջ: Իր անձնավորությունից բխող զորությունը ներգործում էր հիվանդի հոգեբանական աշխարհում և բարեփոխում նրա գոյավիճակը: Հիշենք տասներկու տարի արյունահոսությամբ տառապող կնոջ պատմությունը, որտեղ Հիսուս մատնանշում է, թե Իրենից մի ուժ դուրս եկավ, երբ կինը դիպավ իր հագուստի քղանցքին. *«Մեկն*

ինձ դիպավ, որովհետև զգացի, որ ինձնից զորություն դուրս եկավ»: «Երբ կինը տեսավ, որ ծածուկ չմնաց նրանից, դողալով եկավ և ընկավ նրա առաջ ու ամբողջ ժողովրդին պատմեց, թե ինչ բանի համար դիպավ նրան և թե ինչպես իսկույն բժշկվեց: Եվ Հիսուս ասաց. «Քաջալերվիր, դուստր, քո հավատը փրկեց քեզ, գնա խաղաղությամբ» (Ղուկաս 8:47-48):

Շատ քչերը միայն կարող են ունենալ և գործածել գերբնական այդ ուժը: Օրինակի համար Առաքյալները, հակառակ որ մշտապես Հիսուսի հետ էին չկարողացան բուժել մի հիվանդի, ինչո՞ւ, որովհետև ըստ Վարդապետի, նրանք դեռնս չէին բարձրացել աստվածային ուժի գործածության և այդ հիվանդությունը կարելի էր բուժել միայն աղոթքով ու ծոմապահությամբ:

Ուրեմն, մեր Տերը հրաշք էր գործում կամ բուժում միայն այն ժամանակ, երբ անհատը հավատ ուներ:

Ահա այսպիսի մի դեպք է նկարագրում Մատթեոս Ավետարանիչը *(Մարկոսն էլ ունի 7:27) «Փյունիկեցի Կնոջ հավատը»* անվան տակ *(Մատթ. 15:21-28):*

Առաջին պահին կարդացողին ընդվզեցուցիչ է թվում Ավետարանից վերցված մեր այս խոսքը. *«Լավ չէ մանուկների հացն առնել և շներին գցել» (Մատթ. 15:26),* սակայն նրա իմաստը հասկանալու համար լավ կլիներ, որ ուղղակի կարդայինք Մատթեոս և Մարկոս Ավետարանիչների միջադեպի նկարագրությունը:

«Հիսուս այդտեղից ելնելով գնաց Տյուրոսի և Սիդոնի կողմերը: Եվ ահա այդ շրջաններից եկած քանանացի մի կին աղաղակում էր ու ասում. «Ողորմիր ինձ, Տեր, Դավթի Որդի, աղջիկս չարաչար դիվահարվում է»: Բայց նա նրան պատասխան չտվեց և նրա աշակերտները մոտենալով, աղաչում էին նրան ու ասում. «Արձակիր նրան, որովհետև մեր հետևից աղաղակում է»: Նա պատասխան տվեց ու ասաց. «Այլ տեղ չեմ ուղարկված, եթե ոչ Իսրայելի տան կորուսյալ ոչխարների մոտ»: Իսկ կինը մոտենալով երկրպագում էր նրան ու ասում. «Տե՛ր,

օգնիր ինձ»: Նա պատասխանեց նրան և ասաց. «Լավ չէ մանուկների հացն առնել և շներին գցել» Եվ նա ասաց. «Այո, Տե՛ր, որովհետև շներն էլ կերակրվում են իրենց տիրոջ սեղանից ընկած փշրանքներով»: Այն ժամանակ նրան պատասխանեց և ասաց. «Ով կին,- մեծ է քո հավատը թող քեզ լինի՝ ինչպես որ կամենում ես»: Եվ նրա դուստրը նույն ժամին բժշկվեց» (Մատթ. 15:26):

Ընդհանրական Քրիստոնեական Եկեղեցու Սրբերից՝ Սուրբ Հովհան Ոսկեբերան Հայրապետը հետաքրքիր մեկնաբանություն է տալիս Փյունիկեցի կնոջ հավատի մասին (Մատթ. 15:27-28):

«Տես իր (կնոջ) խոնարհությունն ու հավատքը. Հիսուս հրեաներին անվանեց «մանուկներ», բայց կինը այս պատասխանից չհուսահատվեց, այլ հակառակը՝ (իր հերթին) նրանց «տերեր» անվանեց, և ուրիշներին գովելուց չտխրեց ու ասաց. «Այո, Տեր, նույնիսկ շները հացի փշրանքն են ուտում, որ թափվում է տերերի սեղանից»: Ահավասիկ տես կնոջ իմաստությունը: Նա չհանդգնեց հակառակ խոսել ուրիշների մասին: Ուրիշներին գովելու պատճառով չվիրավորվեց, ոչ էլ հանդիմանությունից՝ վրդովվեց: Տես իր հաստատակամությունը: Երբ Տերը ասաց, թե՝ «Արդար չէ մանուկների հացն առնել և շներին տալ»: Կինը պատասխանեց. «Այո, Տեր»: Հիսուս նրանց (հրեաներին) «մանուկներ» կոչեց, իսկ կինը՝ (ոչ միայն մանուկներ), այլ՝ «տերեր»: Հիսուս գործածեց «շուն» բառը, իսկ կինը բնութագրեց «շան» գործողությունը: Տեսնո՞ւմ ես կնոջ համեստությունը:

Այս ամենից հետո, համեմատիր նրա խոնարհությունը հրեա ժողովրդի հպարտության հետ. «Աբրահամի որդիներ ենք և երբեք ոչ ոքի չենք ծառայել, ինչպե՞ս ես ասում, թե ազատ կլինեք» (Հովհ. 8:33): Մենք պոռնկությունից չենք ծնվել, մեր Հայրը մեկ է՝ Աստված» (Հովհ. 8:41): Այս կնոջ պարագան տարբեր է: Նա ինքնիրեն «շուն» է անվանում և նրանց «տերեր»: Այդ պատճառով նա երեխայի նման եղավ: Եվ ինչ ասաց Քրիստոս. «Ով կին, մեծ է քո հավատը, թող քեզ լինի ինչպես որ կամենում ես» (Մատթ. 15:28):

Ուրեմն, կարող ենք ենթադրել, թե Տերը կնոջն անտեսեց, որպեսզի բարձրաձայն հայտարարի ու վարձատրի նրան, ասելով. «Թող քո ցանկությունը լինի», այսինքն՝ «Քո հավատը այնքան զորեղ է, որ կարող է ազդել ավելի կարևոր դեպքերում»: Այս ձայնը նման է այն խոսքին, որն ասաց. «Թող լույս լինի: Եվ լույս եղավ» (Ծնունդց 1:3) «Եվ նրա դուստրը նույն ժամին բժշկվեց» (Մատթ. 15:28):

Տեսնո՞ւմ ես, թե ինչպես այս կինը ոչ քիչ չափով մասնակցեց իր աղջկա բուժմանը: Տես Հիսուս չասաց, թե՝ «Թող քո աղջիկը կատարյալ լինի», այլ՝ «Քո հավատը այնքան զորեղ է, որ կարող է ազդել ավելի կարևոր դեպքերում»: Այս խոսքերը ամենևին պատահական չէին և ոչ էլ ասվեցին կեղծավորաբար, այլ (հիրավի) կնոջ հավատը մեծ զորություն ուներ ու այն շատ ուսանելի է:

Տերը այս միջադեպի հետ կապված որոշակի զորության ցուցադրում կատարեց, որի հետևանքով էլ կնոջ աղջիկը անմիջապես բուժվեց» (Սուրբ Հովհան Ոսկեբերան Հայրապետ, Մատթեի մեկնություն):

Հիշյալ դրվագը Հիսուսի կյանքում պատահած կարևոր նկարագրություններից մեկն է. այն խորհրդանշում է հրեաների մերժումը Վարդապետի *քարոզության, որը հեթանոսները ընդունեցին:* Հրեաներից մերժված ու մի կողմ նետված հացը՝ ուրախությամբ ընդունվեց հեթանոս ժողովուրդներից: Հիսուս զիջեց Փյունիկեցի կնոջ խնդրանքին, տեսնելով նրա սերը իր հիվանդ դստեր նկատմամբ և մանավանդ նրա ունեցած խոր հավատը:

Գարեգին Արք. Պեքճյանը Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում իր խոսած քարոզում հետաքրքրորեն հիշում է իր մոր հավատի մասին.

«Ես կհիշեմ իմ մորս հավատքը, որ տարիներ առաջ, երբ իմ ձեռքես բռնած որպես պզտիկ երեխա, եկեղեցի կտաներ առանց բառ մը հասկնալու հայերեն, առանց գիտնալու արարողության տևողությունը, և ամեն անգամ հինգ ժամ Եկեղեցի ներկա ըլլալեն հետո, կելլեինք Եկեղեցիեն դուրս, և մայրս

կդառնար ինծի, կըսեր. «Տղաս, այսօր նորեն քահանան պակաս բան մը կարդաց»: Տեսեք մորս հավատքը, այն անձը, որ բառ մը իսկ չէր հասկնար աղօթքներեն, չի գիտեր լեզուն, չի գիտեր արարողության տեղողությունը, բայց հինգ ժամ արարողության ներկա գտնվելե հետո, կըսե, որ բան մը պակաս կարդացվեցավ: Աս կնշանակե, թե մայրս իր հավատքին մեջ, Եկեղեցվո մեջ միայն Աստուծո ներկայության մեջ կգտնվեր, Անոր հետ կիտ-սեր և ապրում մը ուներ՝ Աստուծո ներկայությամբ արդարորեն ապրիլ, Անոր հետ միասին աղոթել, Անոր հետ միասին եկեղեց-վո մեջ ապրում մը ունենալ,- ահավասիկ կրոնքին առաջին և հիմնական սկզբունքներեն մեկը» (Գարեգին Արք. Պէքճյան, Ուիտի Պատարագ Մայր Տաճարում, 24 Օգոստոս 2003թ.):

Այո', իրապես ապրել հավատով Աստծու ներկա-յության մեջ:

«Լավ չէ մանուկների հացն առնել և շներին գցել» խոսքը հասկանալով, տեսնում ենք, որ Աստծու արքա-յությունը բաց է բոլոր նրանց առաջ, ովքեր սրտանց հավա-տում են մեր Տիրոջը ու հետևում Նրա ուսուցումներին, որպեսզի հավիտենապես վայելեն Նրա ներկայությունը իրենց կյանքում:

Հետաքրքիր է իմանալ.

«Պղատոնի իմաստասիրական գործերում կարդում ենք.

Սոկրատ փիլիսոփայի մահվան ժամանակ, երբ իր բարեկամ Կրիտոնը նրա վերջին ցանկության մասին է հարցնում, մեծ Իմաստասերը տալիս է հետևյալ պատասխանը.

«Կրիտոն, Ասկլեպ աստծուն պարտք եմ մի աքաղաղ, վճարիր այդ պարտքը, մի մոռացիր» ու ավանդում է հոգին»:

Այստեղ ամեն ինչ պարզ է, հակառակ, որ փիլիսո-փաները հավատացյալ չեն եղել, սակայն այս պարագային Սոկրատի ասածը չէր վերաբերում պարզ մի անձի, այլ բժշկության աստուած Ասկլեպին, որը նրա հոգին բժշկում էր մարմնի տագնապից:

Երանի հասկանանք, որ մեր ապրած ամբողջ կյանքը ծնունդից մինչև մահ, երազի պես է, գալիս ենք ու գնում: Սակայն կան մարդիկ, ովքեր իրենց այս կյանքը այնպես են արժևորում և իմաստուն կերպով անցկացնում, որ գալիս են, բայց չեն գնում, այլ մնում են բոլորի սրտում: Այսպիսի դեպքերում նրանց մասին խոսելիս առավելապես Հայաստանում ապրող հայորդիները ասում են' *մեծատառով Մարդ էր,* գիտենք, որ *մարդ* բառը գրվում է փոքրատառով, իսկ *Աստծու* անունը մեծատառով: Այս ձևով ժողովուրդը տալիս էր իր գնահատականը մեռնողի մասին, որի գլխավոր առաջնորդող ոգին այս ժամանակավոր կյանքում եղել էր՝ հավատը և սերը Աստծու ու մարդկանց նկատմամբ: Այսպիսիների հոգին արժանանում է Երկնային Արքայության: Իսկ դու, սիրելի հավատացյալ հայորդի, չե՞ս ուզում հետևել այս տեսակի մարդկանց օրինակին: Եթե այո՛, ուրեմն քո այս կարճ կյանքում եղիր գթասիրտ, բարի ու ազնիվ և դու էլ Աստծու կամքով ու հրամանով, արժանի կլինես Նրա Երկնային Թագավորությանը: Ամեն:

ԳԱՆՁԵՐ

«Ինչ որ ունես, վաճառիր և տուր աղքատներին և երկնքում գանձեր կունենաս, և արի իմ հետևից»
(Ղուկ. 18:22-23):

Ավետարանական այս բառերը մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի խոսքերն են, երբ Նա Իր աշակերտների հետ էր: Այդ ժամանակ մի երիտասարդ և հարուստ մարդ, որն իր կյանքի ընթացքում պատվիրանները պահող մեկն էր եղել, մոտենում է մեր Տիրոջը ու իր հարցը ուղղելով Նրան պատասխանում է. *«Բարի Վարդապետ, ի՞նչ պիտի անեմ, որ հավիտենական կյանքը ժառանգեմ» (Ղուկ. 18:18):* Հիսուս նրան ասում է. *«Ինչո՞ւ ինձ բարի ես կոչում, ոչ ոք բարի չէ, այլ միայն՝ Աստված: Պատվիրանները գիտես. մի՛ շնացիր, մի՛ սպանիր, մի՛ գողացիր, սուտ մի՛ վկայիր, մեծարիր քո հորը և մորը»:* Եվ նա ասում է. *«Այդ բոլորը պահել եմ իմ մանկությունից»:* Երբ Հիսուս այս լսեց, ասաց նրան. *«Դեռ մի բան պակաս է քեզ. ինչ որ ունես, վաճառիր և տուր աղքատներին և երկնքում գանձեր կունենաս, և արի իմ հետևից» (Ղուկ. 18:22-23):*

Այս կյանքի ընթացքում հաճախ մեզ էլ է ուղղվում այս հարցը, թե ինչպե՞ս անենք, որ արժանի դառնանք ժառանգելու հավիտենական ու երկնային կյանքը:

Ավետարանի պատվիրանները պահելու համար քիչ է միայն համոզված լինել, թե դրանք պահելը բավական են և կասկածել, այն վախով, թե դրանք կարող են մեզ զրկել այս կյանքում վայելելիք բարիքներից, ինչպես մտածում էր հարուստ երիտասարդը, ով զգաց ու տխրեց, որովհետեւ շատ ունեցվածք ուներ: Նրա համար ունեցվածքը, հարըստությունը մի տեսակ արգելք էր արժանանալու իր ցանկությանը. *«Երբ նա այս լսեց, տրտմեց, որովհետև չափազանց հարուստ էր» (Ղուկ. 18:23):*

Մեր կյանքը միշտ ենթարկվում է զանազան ալեկոծումների, ինչո՞ւ, որովհետև մեզ պակասում է առողջ մտածելակերպը նույնիսկ մեր ապագայի նկատմամբ, թե ինչպե՞ս պիտի անցկացնենք մեր կյանքի օրերը և վազե վազ փորձում ենք հարստություն կուտակելու ու միմիայն նրա մեջ տեսնելու մեր ապագա երջանկությունը: Ցավալի ու խղճալի մի հոգեվիճակ է այս: Մեր օրերը սահմանափակ են ու մենք բոլորս էլ պանդուխտ ենք այս կյանքի ճանապարհորդության մեջ: Ինչքա՜ն երջանիկ պիտի զգայինք, եթե կյանքի նկատմամբ մեր մտածելակերպը փոխվեր Ավետարանի ճշմարիտ խոսքերի ազդեցության տակ և դա առիթ լիներ, որպեսզի օգնության ձեռք երկարեինք զրկյալներին ու կարոտյալներին, որոնք վստահաբար պիտի հրճվեն և նրանց ուրախությունը մեզ պիտի պարգևի հոգեկան մեծ գոհունակություն ու խղճի և մտքի հանգստություն:

Աստծու պատվիրանները պահելը և՛ աշխարհային և՛ թե հոգևոր կյանքում կարևոր է: Դրանք պահող անձը, երբեք վախ չունի, թե կարող է ձախորդություն ունենալ իր կյանքում, որովհետև հետևում է իր խղճի ձայնին ու միշտ բարձր է մնում բոլոր այն հակասական երևույթներից, որոնք հանդիպում են իրեն, կամա թե ակամա, իրեն դժվարութեան մատնելու ու իր հավատի մեջ թուլություն մտցնելու մտածումով:

Թորգոմ Պատրիարք Գուշակյանն ասում է. *«Քո պակասությունը հարստությունդ է»,*-ակնարկեց Հիսուս երիտասարդին. *«Բայց սա ճշմարտազանցության Իր ձեն էր միայն, հաջորդ բառերով Նա ամբողջացնում էր Իր միտքը, երբ ասում էր. «Ծախիր ունեցածդ և աղքատներին բաժանիր. Իր պատգամն էր. «Քո հարստությունը թերություն է քեզ համար, եթե դու չկարողանաս այն բարի նպատակի գործածել:... Երիտասարդը իր հարցի պատասխանը ստանալուց հետո, տխրած, հնարավոր է՝ զայրացավ էլ,- այդ նշանակում է նաև «խոժոռված» - հեռացավ Հիսուսի մոտից: Կեղծիք էր հավիտենական կյանքի*

պայմանների մասին նրա հարցասիրությունը, իր մակերեսային կատարելություններից շլացած՝ նա դեռ ավելիի ձգտումը ուներ. միայն թե չէր սպասում այդպիսի պատասխանի, չէր կարող մտածել, թե ինչ որ իրեն թանկագին մի բան էր թվացել իբրև բոլորի դժվար վիճակը պիտի ցույց տրվեր իրեն, չէր հասկացել իր պակասը, որովհետև երկրավոր և նյութական արժեքների մեջ միշտ մտասույզ, չէր կարողացել կշռել, թե իսկապես ինքը ի՞նչ արժեք ուներ»:

«Ու սա է դրամը սիրելու ամենադաժան հետևանքներից մեկը, անգետ դարձնել մարդուն իր բուն արժեքին ու դրա համար նույնիսկ, նրանց արժանիքի, որոնք իր դասակարգից չեն, այսինքն չքավոր են ըստ աշխարհի..» («Ամբողջ երկեր» Թորգոմ Պատրիարք Գուշակյանի, Ե. Քարոզներ, Երուսաղեմ, 1940, էջ 100-102):

Մահից առաջ Մեծն Ալեքսանդր Մակեդոնացու զորավարները նրան հարցնում են.

«Ո՞ւմ ես թողնում թագավորությունը»:

Նա պատասխանում է.

«Հզորագույնին (այսինքն՝ բոլորից ուժեղին): Նա հասկացել էր, որ ամենամեծն ու ամենաուժեղը Աստված է, ոչ թե աշխարհը նվաճող և ծունկի բերող Մեծն Մակեդոնացին»:

Ավետարանում շատ օրինակելի պատգամներ կան պահելու համար պատվերները մեր ծնողների, ուսուցիչների և մեր կյանքի առաջնորդների: Ավետարանական պատգամը ասում է. *«Պատվիր քո հորն ու մորը, որպեսզի բարիք գտնես, երկար ապրես բարեբեր այն երկրի վրա, որ Տեր Աստված տալու է քեզ» (Ելք. 20:12):* Մի պատգամ, որը վերաբերում է բոլորիս: Ինչքա՜ն դաստիարակիչ խոսքեր են այս պատգամները, որոնք մեր վրա պարտականություն են դնում հարգել մեր ծնողներին, մեր ալեհեր հայրերին ու մայրերին, լսել նրանց մեզ տրված խրատները, այն վստահությամբ, թե դրանք կատարելու պարագային կստանանք նրանց սերն ու օրհնությունը, որը շատ ու շատ բաներից ավելի կենսական է:

Հետաքրքիր է այս պատմությունը և ուսանելի զավակների համար.

«Մի զավակ, կորցնելով իր սիրելի մորը, դառնացած գոռում էր «Աստված չկա, նա մորս ընդմիշտ հեռացրեց ինձանից»: Երկար ժամանակ նա սգում է իր մոր մահը ու անդադար բողոքում Աստծու դեմ: Մի գիշեր, տեսիլքով (տեսիլքը - կես քուն, կես արթուն վիճակն է) նրան է հայտնվում մայրը, ծովի նման ջրերի մեջ մինչև կոկորդը կանգնած և խոսում է. «Տղաս, այս ջրերը արցունքներդ են ու ցաված խոսքերդ, որոնց մեջ պիտի խեղդես ինձ, ինչպես որ ջրասույզ ես արել հույսերդ: Սակայն ուզածս քո աղոթքներն են ու ողորմությունդ կարոտյալներին իմ անունիս համար, սա է այն ամենը, որ մերժել ես իմ հոգուս»:

Տղան ապշած հարցնում է մորը. «Մայր, ինչպես իմանամ, որ դու ես ինձ երևացողը, ողջ առողջ առջևս կանգնած, երբ սառը դիակդ հողի մեջ դրվելը տեսա»: Մայրը ժպտում է նրան ու ասում. «Հոգին տեսնելու համար սրտի աչքեր են պետք. գնա նայիր տերևի վրա նստած թրթուրին, շերամին, որն իր պատյանում է ամփոփված, այնտեղ խավարն է թագավորում, կարծում ես նա մեռա՞վ, բայց ո՛չ, բոժոժը պատռվում է ու ոսկեթև թիթեռնիկն է ծնվում: Ճանաչո՞ւմ են թրթուրին, ոչ, բայց նա այժմ թիթեռնիկ է, լի կյանքով ու ջերմությամբ: Ուստի, վեր կաց, որդիս, և մի՛ սրբապղծիր շրթունքներդ Աստծու առջև, որով Ինքն իսկ է ամբողջ կյանքը: Եվ հավատը ամոթով չի թողնի քեզ»:

Մեր մանկության ու պատանեկության տարիներին մեր ուսուցիչներն ու դաստիարակները, մեզ ցույց տվեցին կյանքի իսկական ուղղությունը և դրանով մեզ դարձրեցին բարոյականով ու հավատով զորացած մարդիկ: Մենք այսօր պետք է հարգենք անմոռանալի վաստակն ու հիշատակը նրանց, ովքեր հանդիսացան մեր այսօրվա կյանքի իսկական և օրինյալ դաստիարակները:

Աշխարհային հասկացողությամբ, երբ այսքան կարևոր տեղ ենք հատկացնում մեր կյանքի դաստիարակներին ու նրանց տված պատվիրանների պահպանմանը, ինչքա՜ն ևս առավել կարիքն ունենք գիտակցելու ու հաս-

կանալու մեր Երկնավոր Հոր մեզ տված պատգամների կարևոր իմաստը, որոնք մեզ տրվեցին Ավետարանի ճանապարհով: Այդ պատվիրանների գործադրության ճանապարհին, չմոռանանք հիշելու բոլոր նրանց, ովքեր դժբախտությանց մեջ են և մեր աջակցությամբ ու օգնությամբ, կարող ենք սրբել նրանց արցունքը և շնորհել իսկական երջանկությունը: Նրանց հետ ուրախակից լինելու և օգնության ձեռք երկարելու գիտակցությունը արդեն իսկ նշանակում է Աստծու պատվիրանները գործնական ճանապարհով իրագործել ու իմաստավորել մեր կյանքը:

Թորգոմ Պատրիարք Գուշակյանը շարունակում է. *«Ու այդ պատճառով անհրաժեշտություն է իր չափի մեջ պահել դրամի համար զգացված սերը: Առանց սանձի՝ մի գազան է այն, մի բռնավոր, որը խորտակում է ամեն ինչ որ գեղեցիկ է հոգու մեջ: Պետք է կարողանալ գետնին տապալել մարդուն Աստծու դեմ պատերազմի մղող այդ բռնավորին: Ի՜նչ երանելի ուրախություն պիտի լինի նրա համար, որը հնարավորությունը ունենա դա անելու...»:*

Սա այն մոլությունն է, որը փչացնում է բոլոր մյուս առաքինություններին, երբ մի անգամ իրեն իբրև բույն է դարձնում սիրտը, այնտեղ այլևս տեղ չունի սերը, ո՜չ ընկերոջ, ո՜չ ընտանիքի, ո՜չ ազգի, ո՜չ Աստծու և ո՜չ իսկ իր անձի - այս վերջինը անշուշտ իր լավագույն իմաստով – այո՜, ո՜չ իսկ իր անձի նկատմամբ: Կարող ենք զարդարված լինել մի քանի բարեմասնություններով, բարի կենցաղավարության և նույնիսկ բարեպաշտության շնորհներով, բայց եթե նրանց հետ կա, եթե նրանց տակ ծածկված է դրամի կամ ստացվածքի մոլությունը, այն կնսեմացնի, անտեսանելի կդարձնի ամեն ինչ ու մեջտեղում կերևա ինքը, իբրև չբուժվող մի ախտ, չնվաճվող մի թերություն, հոգու ամբողջ գեղեցկությունը տգեղացնող մի մեծ պակասություն: Ի զուր չի, որ հառաչել է հնության ամենամեծ բանաստեղծներից մեկը, «Գարշելի արծաթսիրություն, ի՜նչ ահավոր ոճիրների ես առաջնորդում դու հաճախ մարդկային սիրտը» {«Ամբողջ երկեր» Թորգոմ Պատրիարք Գուշակյանի, Ե. Քարոզ-

ներ, Երուսաղեմ, 1940, էջ 100,103):

Թող Աստծու օրհնությունը իջնի բոլորիս վրա, մեզ շնորհի Իր պատվիրանները պահելու և գործադրելու հավատն ու զոհաբերության ոգին, որպեսզի այդ գիտակցությամբ ու նվիրյալ հավատով և գործնական հողի վրա օգտակար հանդիսանալու հասկացողությամբ, կատարենք մեր պարտականությունը բոլոր նրանց հանդեպ, ովքեր կարիքն ունեն մեր աջակցության և օգնության ու այս ձևով իրավատերը և ժառանգորդը կարող ենք դառնալ հավիտենական ու երանավետ կյանքի, փառավորելու համար մեր Երկնավոր Հորը: Ամեն:

«Երանի՛ հոգով աղքատներին,, որովհետև նրանցն է երկնքի արքայությունը» (Մատթ. 5:3)

«Երանի՛ սգավորներին, որովհետև նրանք պիտի մխիթարվեն»:

«Երանի՛ ողորմածներին, որովհետև նրանք ողորմություն պիտի գտնեն»:

««Երանի՛ նրանց, որ քաղցն ու ծարավն ունեն արդարության, որովհետև նրանք պիտի հագենան»:

Երանի՛ հեզերին, որովհետև նրանք երկիրը պիտի ժառանգեն» (Մատթ. 5:4-7) և այլն:

Մեր Տերը զգում ու ապրում էր Իր առաքյալների ու հետևորդների վիճակը: Ուստի պետք էր պատրաստել, քաջալերել և հավատի ու հույսի զրահներով ամրացնել նրանց, որպեսզի հեթանոս աշխարհում կարողանային Իր վարդապետությունը տարածել, որն այդքան էլ հեշտ չէր:

Սուրբ Ներսես Շնորհալի Հայրապետն ասում է. *«Երանությունը բոլոր բարիքների, իսկ թշվառությունը՝ բոլոր չարիքների լիությունն է»:*

Գրիգոր Տաթևացին բացատրելով *«Երանություն» և «երանելի» բառերը ասում է. «Իմաստասիրական երեք մտածողություններ կան. նախ ստոյիկյանները, որոնք ասում են, թե երանությունը կայանում է հոգու առաքինության մեջ: Երկրորդ՝ ճեմականները, (արիստոտելյաններ), որոնց համար երանությունը կայանում է ճշմարտության մեջ: Եվ երրորդ՝ էպիկուրյանները, որոնք ասում են, թե երանությունը կայանում է մարմնական բարի հեշտությունների մեջ: Առաջին երկուսը թեև հոգեպես իմանում են դրանց իմաստը, սակայն անցավոր են. իսկ վերջինների բացատրությունը, բոլորովին սուտ և մարմնավոր է...»:*

Հունարեն լեզվում գոյություն ունեն երկու հոմանիշներ, որոնք օգտագործվում են *«աղքատ»* բառի նշանակությամբ: Նրանցից մեկը վերաբերվում է այն աշխատա-

վոր մարդուն, որը ոչ մի ավելորդ բան չունի պահած, իսկ մյուսը՝ այն մարդուն, ով ընդհանրապես ոչ մի բան չունի: Համաձայն Քրիստոսի ուսուցման, իսկական երջանկությունը գտնվում է *«աղքատ»* հոգի ունենալու մեջ: Եբրայերեն լեզվում *«աղքատ»* բառը նշանակում է այն անօգնական և խոնարհ անհատը, ով իր ամբողջ հույսը դրել է Աստծու վրա: Այս իմաստով է, որ Սաղմոսերգուն գործածել է *«աղքատ»* բառը. *«Աղքատն այս Տիրոջը դիմեց, և Տերը լսեց ու իր բոլոր նեղություններից փրկեց նրան» (Սաղմ. 33:7):* Եսայի մարգարեն ասում է, թե Տիրոջ ծառան պետք է աղքատների մոտ ուղարկվի. *«Տիրոջ հոգին ինձ վրա է, դրա համար իսկ նա օծեց ինձ, ուղարկեց ինձ՝ ավետարանելու աղքատներին, բժշկելու բեկվածներին, գերիներին ազատություն քարոզելու և կույրերին՝ տեսողություն» (Եսայի 61:1-2):*

Սուրբ Ներսես Շնորհալի Հայրապետն ասում է. *«Աղքատության երկու վիճակներ կան. մեկը ցանկալի, իսկ մյուսը՝ արհամարհելի: Ցանկալի է մեղքերի աղքատությունն ու առաքինությունների հարստությունը»:* Ապա ավելացնում է. *«Ինձ թվում է, թե հոգով աղքատությունը կամավոր խոնարհությունն է, որի գեղեցկագույն օրինակը Քրիստոս Ինքն է, ինչպես առաքյալն է ասում, «մեզ համար աղքատացավ Նա, որ մեծատուն էր»:* Առակաց գրքում ասվում է. *«Ով որ հույսը դնում է Տիրոջ վրա՝ երանելի է»:* Այսպես, Հոբ երանելին երբեք իր հույսն ու ակնկալությունը չկտրելով Աստծուց, կարողացավ դիմանալ սատանայի կողմից իրեն տրված բազում դժբախտություններին ու համբերությամբ և հավատով, հաղթական դուրս եկավ նրա հետ ունեցած մենամարտից:

Պատկերացրեք մի ագահ մարդ, որի ձեռքը պատահաբար ընկնում է մի փաստաթուղթ, որտեղ ասվում է, թե այսինչ վայրում գանձ է պահված, սակայն այդ գանձին հասնելու համար շատ աշխատանք ու նույնիսկ տառապանք է հարկավոր: Ի՞նչ եք կարծում, մի՞թե այդ դժվարությունները կարող են հուսահատեցնել նրան: Նա պատ-

բաստ է կանչել իր բոլոր ընկերներին, որպեսզի օգնեն իրեն այդ գործում, նրանց, որոնց հետ միասնաբար կարող է ձեռք բերել թաքնված գանձը: Սա այն նյութական գանձն էր, որի մասին հայտնում է փաստաթուղթը, սակայն ճշմարիտ գանձը քողարկված է անհայտության մեջ: Ուրեմն մենք, որ ցանկանում ենք ձեռք բերել մաքուր ոսկին, եկեք միավորենք բյուրավոր ձեռքեր՝ մեր աղոթքները, որպեսզի գտնվի այդ գանձը և բոլորին բաժանվի հավասարապես: Չէ՞ որ առաքինությունը բաշխվում է բոլոր նրանց, ովքեր ցանկություն ունեն հասնելու նրան:

Հմուտ նկարիչը անտեղյակ մարդուն կարող է ասել, որ գեղեցիկ դեմք ստեղծելու համար հարկավոր են արտաքին որոշ տվյալներ՝ այսպիսի մազեր, աչքեր, հոնքեր, այտեր, մի խոսքով ամեն մի բարեմասնություն, որով գեղեցկությունը դառնում է կատարյալ: Իսկ Նա, Ով Միակ Երանելիի նմանությամբ մեր հոգիներն է կերտում, բառերով հայտնում է այն ամենը, ինչը երանություն է ծնում:

Մեր Տերը խոսեց նաև աղքատության և հարստության մասին, շեշտելու համար նյութի կարևորությունն ու անկարևորությունը: Նա հաճախ հստակեցրեց նյութի կարևորությունը մարմնավոր կյանքի, իսկ անկարևորությունը՝ հոգևոր կյանքի համար. աշխարհի վրա հարստություն դիզելու երկու ձևեր կան: Առաջինը՝ արդարությամբ և ճակատի քրտինքով, որը հաճելի է Աստծուն և մարդկանց, իսկ երկրորդը՝ անիրավությամբ ու խարդախությամբ: Այս վերջինը դատապարտելի է Աստծու և մարդկանց առջև:

Մեծահարուստը եթե ագահ է, ապրում է աղքատի պես:

Այստեղ հարց է ծագում, թե՝ *«Ի՞նչ է աղքատությունը»:*

Տեսնենք, թե ի՞նչպես է պատասխանում այս հարցին անցյալ դարի Երուսաղեմի Պատրիարք Թորգոմ Արքեպիսկոպոս Գուշակյանը.

«Աղքատությունը կամ, եթե ուզում եք, ավելի լայն իմաստով մի բառ օգտագործելու համար ասենք, տառապանքը երբեմն կարծվածի պես չարիք կամ անեծք չի մարդու ճակատին գրված, այլ՝ բարոյական զգացողություն ունեցողների համար կատարյալ մի օրհնություն: Տառապանքի սալի վրա է, որ կամքի երկաթը փոխվում է պողպատի: Չքավորության դպրոցում է, որ մարդը սովորում է կյանքի ամենաառողջ վարդապետություն-ները» («Ամբողջ երկեր» Թորգոմ Պատրիարք Գուշակյան, Ե. Քարոզներ, Երուսաղեմ, 1940, էջ 206):

Աղքատությունը դրսևորված է զանազան կերպե-րով: Մեկը կարող է դրամով աղքատ լինել, մյուսը՝ մտքով, մի ուրիշը՝ սրտով, հոգով, ուսումով և այլն:

«Երանի՛ հոգով աղքատներին»:

Մարդն ինչքան էլ իրապես հարուստ լինի, նորից ինչ-որ մի բանի կարիքը ունի, որովհետև դրամը երբեք հոգին չի կշտացնում: Հոգին էլ ստամոքսի նման միշտ սովածանում է և սնունդ պահանջում: Ստամոքսին հացով կարելի է գոհացնել, բայց հոգուն՝ ոչ: Հոգու *«աղքատություն»-ը* մարդու երազած հոգևոր հարստությունն է. *«Որովհետև,*- ասում է Հիսուս,- *դրանով միայն հնարավոր պիտի լինի ժառանգել Երկնքի Արքայությունը»:*

Թորգոմ Պատրիարք Գուշակյանն ասում է. *«Բայց ո՞վ է ուրեմն «Հոգով աղքատ»-ը: Հին և նոր Կտակարաններում պարզված բազմաթիվ սկզբունքների վրա հիմնվելով, «հոգով աղքատ» ասելով հասկանում ենք իր անհամեմատելի դժբախ-տությանց մեջ ինքնիրեն խոնարհ զգացող մարդուն, որը չի հու-սահատվում ո՛չ վշտից և ո՛չ էլ մահվան չափ տագնապեցնող տառապանքներից:*

…«Հոգով աղքատ»-ը այսինքն ըստ աշխարհի անզոր, անօգնական, բոլորի կողմից մերժված և արհամարհված մեկը

ու լինելով այդպիսին, նա չի կորցնում երբեք ապրելու և աշխա-տելու ցանկությունն ու քաջությունը, որովհետև ամեն ինչ սպասում է Աստծու կողմից, մեծ հույս ունի Նրա վրա: «Հոգով

աղքատ»-ը նա է, որ չի կորցնում իր հույսը Աստծու վրա ու երանի նրան, երջանիկ է նա, որովհետև երջանկությունը Աստծու վրա դրված անսակարկ հույսն է» («Ամբողջ երկեր» Թորգոմ Պատրիարք Գուշակյան, Ե. Քարոզներ, Երուսաղեմ, 1940, էջ 192-193):

Այս պատմութիւնը հետաքրքիր է.

«Պատմվում է, թե Հույն մեծ Փիլիսոփա Դիոգինեսը մի օր այցելության է գնում Պղատոն մեծ փիլիսոփային: Երբ Դիոգինեսը նրա տան դռնից ներս է մտնում, նայում է փառավոր կահավորմանը և քայլելով գեղատեսիլ ու արժեքավոր գորգերի վրայից, բարձրաձայն ասում է: «Այսպես կկոխկոտեմ Պղատոնի հպարտության վրա»:

Պղատոնը ձայն չի հանում և մի օր էլ փոխադարձ այցելությամբ երբ մտնում է Դիոգինեսի բնակարանից ներս, գետնի վրա հին ու ծակծկված մի կարպետ է տեսնում, որի վրայից քայլելու ժամանակ ասում է. «Այս կարպետի անցքերի միջից, ես տեսնում եմ Դիոգինեսի փառքը»:

Հպարտությունը կայանում է աշխարհային հարստության ու փառքի մեջ, իսկ խոնարհությունը՝ հոգեկան և իմացական հարստության մեջ *«Հոգով աղքատ»* լինելը համարվում է հոժարակամ խոնարհությունը: Առաքյալը բերում է Աստծու աղքատության օրինակը. *«Զեզ համար աղքատացավ, Նա, որ հարուստ էր, որպեսզի դուք Նրա աղքատությամբ հարստանաք» (Բ. Կորնթ. 8:9):* Առանց չարչարանքի անկարելի է հասնել խոնարհության: Թշնամին քնած չի, նա միշտ պատրաստ է չար սերմեր ցանել, որպեսզի մարդը հեռանա Աստծու ճշմարիտ ճանապարհից: Այդ չար սերմը *հպարտության* մոլությունն է:

Մեր եկեղեցական Հայրերից Գրիգոր Տաթևացին ասում է.

«Հոգու աղքատությունը աշխարհականից հրաժարվելն է, այսինքն՝ մարմնական հեշտանքները սիրելուց, առատությունից, պատվից, քանի որ աշխարհական սերը պարունակում է այս երեքը:

Եվ հոգով աղքատ են, ովքեր չեն ձգտում ցանկասեր ախտերի. աղքատ են հոգով խոնարհները, ովքեր երկյուղած են. աղքատ են հոգով, նաև մարմնով աղքատները, ովքեր ոչինչ չունեն և ամեն ինչ ունեն» (Գրիգոր Տաթևացի «Գիրք Հարցմանց»):

Արդարև մեր Տերը երանի է տալիս այն անձերին, ովքեր իրենց միջից հանել են աշխարհային ցանկություններն ու ճոխությունները և հետևում են հոգևոր կյանքի առաքինություններին:

Ուրեմն՝

«Երանելի են նրանք, ովքեր խոնարհությամբ ու համեստությամբ ապրում են իրենց կյանքը մշտապես կապ պահելով իրենց Արարչի հետ, հեռանալով իրենց «ես»-ի տիրապետությունից, դառնում են Աստծու ճառագայթը այս երկրի վրա ու ապրում ծառայասիրությամբ մի կյանք:

Երանելի են նրանք, ովքեր Աստծու մեծության գիտակից մշտապես ապրում են աղքատացյալ մի կյանք, ի խնդիր հարստության և աստվածային շնորհքների լիության:

Երանելի են նրանք, ովքեր գիտակցելով իրենց անօգնականության, իրենց ամբողջ հույսը դնում են Աստծու վրա, ապրելով կատարյալ հնազանդության մեջ Նրա հետ, ի խնդիր երկնքի արքայության:

Եվ վերջապես՝ «Երանելի են նրանք, որոնց կյանքի մեկնակետն ու նպատակակետը աստվածահաճո կյանքն է»: (Գրիգոր Տաթևացի «Գիրք Հարցմանց):

Այս երանության արժանանալու հեռանկարով ապրեցին և ստեղծագործեցին Քրիստոնեական Ընդհանրական Եկեղեցու ու մեր հայրերը և երկհազարամյա պատմություն ունեցող Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին:

Այսօր մենք ևս օրինակ ունենալով նրանց, փորձենք հետևել այդ երանական կյանքին, որպեսզի ապագա մեր օրերը լինեն ավելի պայծառ ու հույսով լի:

Հոգու աղքատությամբ մարդու մեջ դադարում են կրքերը, ատելությունները, ագահությունը, սպանությունների ծրագրերը և աշխարհային տեսակ-տեսակ ցանկությունները ու խաղաղություն է տիրում նրա ներսում:

«Հոգով աղքատ»-ը ծարավ է արդարության, որովհետև արդարությունը Աստծու Թագավորությունը ժառանգելու մեջն է: Մարդ կարող է ամեն ինչ կորցնել այս աշխարհում, բայց ապրել սրբի պես, և հոգով աղքատ»,- ասում է Սուրբ Բարսեղ Հայրապետը և շարունակում է. *«Այս թագավորությունը ժառանգելու հույսը պետք է քաջությամբ և զվարթությամբ լցնի հավատացյալին՝ իր բոլոր նեղությունների մեջ»:*

Մանուկի համար երջանկությունը կայանում է իր անմիջական հաճույքին գոհացում տալու մեջ: Օրինակ, փոքրիկներից մեկը, երբ քաղցրեղենի խանութի առջևից է անցնում, բնականաբար նրա մեջ արթնանում է դրանք համտեսելու ախորժակը, եթե գոհացում տրվի երեխայի քիմքին, նա իրեն գոնե այդ պահին երջանիկ կզգա, բայց դուք պատկերացրեք, եթե որևէ պատճառաբանությամբ նրան խոստանանք հաջորդ օրը գնել քաղցրեղենը, գիտեք ի՞նչ կլինի, ամենայն հավանականությամբ փոքրիկը չպիտի հավատա եղած խոստմանն ու իրեն դժբախտ պիտի զգա, քանի որ նա ապրում է ներկայով և նրա համար դեռևս ապագան գոյություն չունի:

Քսանմեկերորդ դարի աշխարհի երիտասարդությունը կարծում է, թե գտել է իր երջանկությունը ազատ, հաճույքներով լի և շռայլ ու հեշտալի կյանք կատարելու մեջ: Սակայն ինչո՞ւ ենք զարմանում և գուցե արդարացի զայրանում: Պետք է հասկանանք, որ այսօրվա երիտասարդությունը փորձում է իր վրայից նետել ամեն տեսակ պարտավորություն, չստանձնելու համար որևէ պատասխանատվություն, քանի որ նա երջանկություն է զգում իր այսպիսի ժամանակավոր հաճույքների մեջ, անզուսպ կերպով հետևելով դրանց գործադրմանը, առանց մտածելու, թե դրանք ի՞նչ հետևանքներ կարող են ունենալ և

ինչպիսի՜ խոր աղդեցություն կթողնեն վաղը իրենց հոգեկան աշխարհի վրա:

«Հոգով աղքատ» անձը միշտ առիթը ունի զարգանալու և առաջդիմելու: Նա երբեք չի բավականանում իր իմացածով և ամեն րոպե ցանկանում է մի նոր բան սովորել: Եթե մարդկային քաղաքակրթության նպաստող անձերի կյանքը ուսումնասիրենք, կտեսնենք, որ նրանք բոլորն էլ *«աղքատ հոգի»* են ունեցել:

«Ունեցվածքներից աղքատանալը՝ ուժերով հարստանալ է: Դիտեցեք թե իրենց կյանքի ո՞ր շրջաններում է, որ մեծ գիտնականները արել են իրենց ամենակարևոր գյուտերը ու մեծ մատենագիրները երբ են գրել իրենց գլուխ գործոցները. գրեթե միշտ՝ իրենց տանջանքի ժամանակ և ապրելու համար հարկադրված ստեղծել են ամենաբացառիկ ու բուռն դժվարությունների միջոցին... Աշխարհի ամենամեծ միաբանության հիմնադիրը իր կրոնական գինվորության մեծագործությունը հիմնելուց առաջ ինքնիրեն ենթարկել է կամավոր ապաշխարության ամենածանր չարչարանքներին: Տառապանքի սանդուխքն է ամենաապահով ելարանը, արժանիքի ստույգ բարձրություններին հասնելու համար»,- ասում է Թորգոմ Պատրիարքը («Ամբողջ երկեր» Թորգոմ Պատրիարք Գուշակյան, Ե. Քարոզներ, Երուսաղեմ, 1940, էջ 204):

Աստծու Թագաւորությունը արտաքին մի տեղում կամ վիճակում չէ, այլ մարդու անձի մեջ. *«Զեր ներսում է Աստծու արքայությունը»,*- ասաց Հիսուս: Աղքատ հոգի ունեցողը իր համեստ նկարագրով, բայց ուժեղ հավատով սրբակյաց մի կյանքով է ապրում: Հայ հավատացյալը եթե մի անգամ հագնի այդ նկարագիրը, կմոտենա Աստծուն և իր երանելի կյանքը կհասնի Գերագույն Երջանկության, որը Երկնքի Թագավորությունն իսկ է:

Թորգոմ Պատրիարքը շարունակում է. *«Զդաստարենք երբեք հավատալուց. հոգով աղքատը նա է, որ բոլոր մարդկանցից և աշխարհից անիրավված ու հալածված, երբեք չի կորցնում ապրելու իր կորովն ու քաջությունը, որովհետեւ մշշ-*

տական հույս ունի Աստծու բարեգթության վրա, գերազանցապես երջանիկ մարդն է. իսկ այդ հույսը կարող է ծնվել և զորանալ այն հոգիներից ներս միայն, ուր Աստված է թագավորում: Աստծու թագավորությունը և երջանկությունը, պետք է փնտրել այնտեղ, ուր նա կարող է միայն գտնվել՝ սրտի, խղճի և հոգու մեջ» («Ամբողջ երկեր» Թորգոմ Պատրիարք Գուշակյան, Ե. Քարոզներ, Երուսաղեմ, 1940, էջ 196):

Ուրեմն եկեք մեր աղոթքով, հավատով ու սիրով իրար միանանք, որպեսզի կարողանանք ձեռք բերել մեր երազների երազը՝ հոգևոր երջանկությունը: Ամեն:

ԵՐԱՆԻ՛ ՈՂՈՐՄԱԾՆԵՐԻՆ

«Երանի՛ ողորմածներին, որովհետև նրանք ողորմություն պիտի գտնեն» (Մատթ. 5:7):

«Երանի՛ նրանց, որ սրտով մաքուր են, որովհետև նրանք Աստծուն պիտի տեսնեն»:

«Երանի՛ հոգով աղքատներին, որովհետև նրանցն է երկնքի արքայությունը»:

«Երանի՛ սգավորներին, որովհետև նրանք պիտի մխիթարվեն»: (Մատթ. 5:4) և այլն:

«Որո՞նք են ողորմածները»: «Ի՞նչ է նշանակում ողորմություն անել կամ տալ»: «Անհրաժե՞շտ է ողորմություն տալ և կամ ինչո՞ւ պիտի տանք»:

Սրանք հարցեր են, որոնք բնականաբար պատասխանի կարոտ են յուրաքանչյուր ճշմարիտ քրիստոնյային լուսաբանելու համար:

Այս չի նշանակում սակայն, որ ողորմածները նրանք են միայն, ովքեր նյութապես օգնում են ուրիշներին: Նրանք, ովքեր հակառակ իրենց աղքատ լինելուն, ցավում ու տառապում են ուրիշների դժբախտությունների և նեղությունների համար, իրենց հոգին լցնում են գթասրտությամբ, սրտակից ու կարեկցող են դառնում իրենց եղբայրներին, փորձում են ինչ որ ձևով մխիթարել և ուրախացնել նրանց:

Եղբայր *ասելով այստեղ պիտի չհասկանանք միայն նույն մորից ծնված զավակներ, այլ բոլոր քրիս-տոնյաներին, ովքեր եղբայր են իրար հետ Քրիստոսով միացած:*

«Տվեք՛, և պիտի տրվի ձեզ... այն չափով, որով չափում եք, նույն չափով պիտի չափվի ձեզ համար» (Ղուկ. 6:38):

«Տո՛ւր նրան, ով քեզնից խնդրում է. և ով կամենում է քեզնից փոխ առնել, երես մի դարձրու նրանից» (Մատթ. 5:42):

Ի՞նչ եք կարծում՝ *«Ի՞նչպես և ի՞նչ ձևով մարդ կարող է ողորմած չինել իր եղբայրների նկատմամբ»:*

Նախ՝

ա. Ուտելիք, դրամ, խմելիք, հագուստ և դեղեր տալ կարոտյալներին, ծերերին, որբերին, անտուններին և անօգնականներին: Եսայի մարգարեն վկայում է. *«Եթե դու քո միջից հեռացնես խարդախությունը, ձեռնձգությունն ու տրտունջի խոսքերը, քո հացը հոժար սրտով քաղցածներին տաս և չքավոր մարդկանց կըշտացնես, այն ժամանակ խավարի մեջ կծագի քո լույսը, քո խավարը կվերածվի միջօրեի» (Ես. 58:10):*

Իսկ Հակոբոս Առաքյալն ասում է. *«Սուրբ և անարատ բարեպաշտությունը Աստծու և Հոր առաջ այս է. այցելել որբերին և այրիներին իրենց նեղության մեջ, անարատ պահել իր անձը աշխարհից» (Հակոբ. 1:27):*

բ. Բաժնեկից դառնալ դժբախտների ցավերին ու տանջանքներին, այցելել նրանց և օգնել, որ հնարավորության չափով ազատվեն նրանցից, թեթևանա իրենց ցավը և մեղմանան տանջանքները: Կարեկցել տգետներին և փոխանակ արհամարհելու՝ օգնել, որ տեսնեն գիտության լույսը, զարգանան և օգտակար մարդիկ դառնան իրենց հարազատների ու մարդկության համար:

գ. Հավատից շեղվողներին և տկարացածներին զգուշացնել ու քաջալերել՝ ապաշխարությամբ և գոջումով քավելու իրենց մեղքերը:

Սակայն այս բոլորը պետք է անել առանց ցուցամոլության և աննկատ: Չպետք է, այնպես անել, որ մարդիկ տեսնեն մեր արած ողորմությունը: Հիսուս ասում է. *«Այլ երբ ողորմություն անես, թող քո ձախ ձեռքը չիմանա, թե ինչ է անում քո աջը, որպեսզի քո ողորմությունը ծածուկ լինի և քո Հայրը, որ տեսնում է, ինչ որ ծածուկ է, կհատուցի քեզ հայտնապես» (Մատթ. 6:3-4):*

դ. Հարգել բոլոր մարդկանց արժանապատվությունը և իր կյանքի օրինակով ցույց տալ, թե բոլոր մարդիկ եղբայրներ են իրար հետ:

Ողորմածությունը գլխավոր առաքինություններից մեկն է: Ողորմած են, գթասիրտ, բարին կամեցող, ուրիշների

վշտերին կարեկցող, բարեգործ, անշահախնդրորեն օգնության հասնողները: Ողորմություն բաշխել կարող են ոչ միայն նյութապես ապահովվածները՝ կարիքավորներին դրամական օգնություն տալով, այլ ընդհանրապես բոլորը, ովքեր ցավակից են լինում նեղության, դժբախտության մեջ ընկածներին, փորձում են բարի գործով կամ խոսքով մխիթարել նրանց:

Քանի որ մարդը և՛ հոգի է և՛ մարմին, ապա կարիք ունի հոգալու իր՝ թե՛ մարմնավոր և թե՛ հոգևոր կարիքները: Հետևաբար ողորմածությունը լինում է երկու բնույթի՝ *հոգևոր և մարմնավոր:*

ա. ՄԱՐՄՆԱՎՈՐ ողորմածություն է, երբ հնարավորության սահմաններում կերակրում ենք, ջուր տալիս և կամ հագցնում կարիքավորներին, հյուրընկալում օտարներին ու այցելում հիվանդներին: Ողորմածությունը պարգևում է ներքին գոհունակություն, որովհետև ամենամեծ ուրախությունը կարոտյալին օգնելն է: Այս բարի գործը կատարելով հոգեպես թեթևանում ես, քանի որ դա անում ես անվարձահատույց, որովհետև գիտակցում ես, որ նա այդ օգնության կարիքը ունի և որ ամենակարևորն է ու ընդունելի մեր Տիրոջ կողմից՝ *քեզ փոխադարձել չի կարող:*

բ. Մարմնավորի կողքին կարևոր է ՀՈԳԵՎՈՐ ողորմածությունը: Մեղավորին մոլության ճանապարհից ետ դարձնելը, ճշմարտության ճանապարհը սովորեցնելը, ճիշտ և բարի խորհուրդներ տալը դժվարին կամ վտանգավոր վիճակում գտնվողներին, մերձավորների համար Աստծուն աղոթելը, վշտացյալին մխիթարելն ու սփոփելը, չարին չարությամբ չհատուցելը, վիրավորներին օգնելը, սրանք բոլորն էլ հոգևոր ողորմածության արտահայտություններն են:

Ճշմարիտ և աստվածահաճո է այն բարեգործությունը միայն, որն արվում է Աստծու և մարդկանց նկատմամբ մեր ունեցած անկեղծ ու անշահախնդիր սիրուց: Մեր Տերը պատվիրում է. *«Զգույշ եղեք, որ ձեր ողորմությունը*

մարդկանց առջև չանեք, որպես թե այն լիներ ի ցույց նրանց, այլապես վարձ չեք ընդունի ձեր Հորից, որ երկնքում է» (Մատթ. 6:1):

Ողորմածությամբ պիտի շահենք Երկնքի Արքայությունը: Այս պարագան մեր Տերը Հիսուս հայտնում է վերջին դատաստանի նկարագրության մեջ. *«Այն ժամանակ թագավորը պիտի ասի նրանց, որ իր աջին են. «Եկեք, իմ Հոր օրհնյալներ, ժառանգեցեք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստված արքայությունը. . . » (Մատթ. 25:34-36, 40):*

«Կյանքում ամեն ինչ ողորմություն է, և ամեն ինչ կյանքում կարող է ուրախություն լինել, եթե ուրախալից սրտով հավասարապես ընդունվեն թե՛ այն, ինչ տրվում է, թե՛ ինչ որ վերցվում է: Մենք հաճախ մտածում ենք, թե ուրախություն լինում է միայն նրանից, ինչը ստանում ենք. իսկ ինչպիսի մեծ, ցնծալի ուրախություն է լինում, երբ ինչ-որ բանից կարծես զրկվել ենք, սակայն դրանով դրսևորվել է Աստծու իմաստուն հոգածությունը... Օգնիր մեզ, Տեր, հասկանալու, որ ամեն ինչ ողորմություն է...» (Մետրոպոլիտ Անտոնի Սուրոժսկի, 5 Նոյեմբեր 1967թ. «Քրիստոնյա Հայաստան» - 2006»):

Կարող եմ ասել, որ այս ճշմարտությունները գալիս են՝ առաջինը՝ մարդկանց նկատմամբ ունեցած Աստծու սիրուց, որովհետև Նա այնքան սիրեց մեզ, որ ստեղծեց Իր պատկերի համաձայն, այսինքն՝ Իր հոգու շունչը տվեց առաջին մարդուն: Իսկ երբ մեր նախածնողները մեղանչեցին, Իր անսահման ողորմածությամբ փրկեց նրանց, Իր Միածին Որդուն աշխարհ ուղարկելով, Ով խաչի վրա Իր արյունը թափեց և Իր հրաշալի Հարությամբ հաղթելով մահվան, մեզ մի նոր կյանք պարգևեց: Պողոս Առաքյալը Տիտոսին ուղղած իր նամակում ասում է. *«Իսկ երբ մեր Փրկիչ Աստծու քաղցրությունը և մարդասիրությունը հայտնվեց, ոչ այն արդարության գործերի համար, որ մենք արեցինք, այլ իր ողորմության համաձայն փրկեց մեզ վերստին ծննդյան ավազանի միջոցով և նորոգությամբ Սուրբ Հոգու...» (Տիտոս 3:4-5):*

Պատմեմ մի ճգնավորի կյանքի մասին:

«Նա ապրում էր մենակության մեջ, մոռացված բոլորից, թեև ինքը շատերին էր ծառայում, բայց նրանք ում ծառայում էր, նրա մասին քիչ էին հոգ տանում: Եվ մի անգամ մի հավատացյալ, որ ներկա էր նրա առավոտյան աղոթքին, որում նա գոհանում էր Աստծուց Նրա անթիվ բարերարությունների համար,- ասում է նրան. «Ինչպե՞ս կարող ես ստել Աստծու առաջ և ինչպե՞ս կարող ես Նրանից շնորհակալ լինել Նրա պարգևների համար, չէ՞որ Նա քեզ ոչինչ չի տվել...»: Իսկ ճգնավորը, նայելով այդ հավատացյալին, ասում է. «Դու կյանքն այնպես չես հասկանում ինչպես հարկն է: Դու մտածում ես, որ ես չունեմ ընկերներ, ջերմություն, կերակուր, ոչինչ կարծես թե չունեմ: Բայց ես այլ կերպ եմ տեսնում ամեն ինչ: Տերը նայել է իմ հոգու խորքը և տեսել, որ ես չեմ աճի մինչև այն չափը, որին Ինքը կանչել է ինձ, եթե ինձ չտրվի և՛ քաղցել, և՛ մրսել և՛ միայնակ լինել: Եվ նա ինձ ավելցուկով է տվել թե՛ մարդկանցից անտեսվելը և մոռացումը, թե՛ զրկվածությունն այն ամենից, ինչ փնտրում են մարդիկ: Դու սրանում զրկվածություն ես տեսնում, իսկ ես իմ օժտվածությունը...»

Մետրոպոլիտ Անտոնի Սուրոժսկին ասում է.

«Մեզանից ոչ ոք այդպիսի ծայրահեղ պարագաներում չի ապրում, և մեզանից քչերը կկարողանային այդ ամենը կրել և փրկվել, այլ մեզանից յուրաքանչյուրը շարունակ բողոքում է, թե ինքն ինչ որ բանից զրկված է. իր վրա ուշադրություն չեն դարձնում, իր հետ ընկերություն չեն անում, իր մասին հոգ չեն տանում, ինքը չունի այն, ինչը կուզեր ունենալ մարմնավոր, հոգեկան և հասարակական աշխարհում: Մենք միշտ խոսում ենք նրա մասին, ինչը չունենք, և երբեք չենք մտածում, որ Տերը մեզ չի զրկել, այլ օժտել է և ազատելով մեզ, հնարավորություն տալով հարուստ լինելու, սակայն այլ կերպ:

Մտածե՛ք այս մասին, որովհետև տրտունջը, նախանձը և նման այլ զգացումները ո՛չ միայն ավերում են մեր հոգին, այլև անտեղի փոթորիկ են ստեղծում, դրա համար առիթ էլ չկա, եթե միայն հասկանայինք, թե որքան առատորեն Տերը մեզ պարգև-

ներ է բաշխում և ինչպես է քայլ առ քայլ տանում ապականացուից դեպի անապականը, ունենալու կեղծ վիճակից դեպի ճշմարիտ հարստացումը» (Մետրոպոլիտ Անտոնի Սուրոժսկի, 5 Նոյեմբեր 1967թ. «Քրիստոնյա Հայաստան» - 2006»):

Մեր եկեղեցական Հայրերից Գրիգոր Տաթևացին ասում է.

«Ողորմությունն այն է, որով երկրավորները շահում են երկնավորներին:

Ողորմությունը կամավոր ցավակցությունն է ուրիշների թշվառությանը:

Ողորմությունը տասնչորս կերպ է իրականանում, որոնցից յոթը մարմնավոր են, յոթը՝ հոգևոր.

ՄԱՐՄՆԱՎՈՐ ԵՆ ՍՐԱՆՔ.

Քաղցողներին կերակրելը, ծարավին ջուր տալը, մերկին հագցնելը, օտարներին ժողովելը, գերվածներին փրկելը, հիվանդներին այցելելը, մեռածներին թաղելը:

Առաջին վեցը Ավետարանն է սովորեցնում, յոթերորդը՝ Տուբիթի գիրքը:

ՀՈԳԵՎՈՐ ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆ ԵՆ.

Նախ հանցավորին ներելը, մեղավորին հանդիմանելը, տգետներին ուսուցանելը, երկմիտներին խրատելը, տրտմածներին մխիթարելը, ընկերոջ փրկության համար աղոթելը, համբերել սեփական անձի դեմ գործած անիրավություններին: Եվ այս վերջինը ողորմության գործ է ասում, որովհետև փափուկ և խոնարհ պատասխանը խորտակում է ընկերոջ բարկությունը և շահում նրան»: (Գրիգոր Տաթևացի «Գիրք Հարցմանց»)

Մարդ միշտ էլ կարիք է ունեցել Աստծու ողորմածության և Նա շնորհներ է տվել այն չափով, որքանով որ մարդը ողորմած է եղել իր նմանների նկատմամբ: Ով որ օգնում է իր եղբորը և ներում նրա մեղքերը, Աստված էլ օգնում է նրան: Եթե ներենք նրանց, Աստված էլ կների մեզ *(Մատթ. 6:14-15):*

Ուրեմն՝ *«Ի՞նչ է ողորմությունը»:*

ա. ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՏՔ է: Աստված շատերին է հարստություն տվել, սակայն նրանք ողորմություն չեն անում: Այդ պատճառով էլ ծանր կլինի նրանց պատիժը: Նա Իր բարիքները բաշխեց բոլորին, բայց որոշ մարդկանց մեծ հարստություն տվեց, որպեսզի նրանք առիթ ունենան ողորմություն անելու աղքատներին ու չքավորներին: Սակայն այս մեղավոր աշխարհում դա ինչքանո՞վ է օգտագործվում, միայն Աստծուն է հայտնի:

բ. ՊԷՏՔ է ՈՂՈՐՄԱԾ ԼԻՆԵԼ ԲՈԼՈՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ: Հիսուս Ինքը գթասրտության և ողորմածության լավագույն օրինակը եղավ: Մարդիկ Նրա մոտ հիվանդներ էին բերում՝ խնդրելով, որ Նա մոտենա և բժշկի նրանց: Եվ ոմանք անմիջապես ապաքինվում էին՝ միայն Նրա հագուստի փեշերին դիպչելով: Հիսուս պատվիրեց Իր աշակերտներին, որ Իր անունով բժշկեն բոլոր հիվանդներին անխտիր:

Մեր Տերը հրամայեց բարեգործ ու ողորմած լինել և այս աշխարհի աղքատներին Իր եղբայրները կոչեց:

Մեղքի մասին խոսելիս Նա ասաց, որ Աստծու արքայության մեջ պիտի վարձատրի ողորմածներին, իսկ անգութը պիտի պատժվի դժոխքի կրակով: Հակոբոս առաքյալն ասում է. *«Ով որ գիտե, թե ինչ է բարին, և չի անում, նրա համար այդ մեղք է» (Ա. Հակոբ. 4:17):*

Իր ժամանակին փարիսեցիները Հիսուսին քննադատեցին, երբ ճաշում էր մեղավորների ու կարոտյալների հետ, սակայն մեր Տերը ասաց նրանց, թե Աստծու համար ավելի մեծ արժեք է ներկայացնում մի մեղավորի փրկվելը կամ մեկին երջանկացնելը:

Այս պատմությունը հետաքրքիր է.

«Իշխաններից մեկը թագավորի կողմից ուղարկվել էր արքունի ինչ-ինչ գործի: Եվ երբ նա գնում էր ճանապարհով, տեսավ մի աղքատ մեռածի, որ մերկ ընկած էր: Երբ տեսավ այդպես ընկած, գթալով ողորմեց նրան, իջնելով կառքից հանեց վրայից իր պատմուճանը, գցեց մեռածի վրա, ծածկեց նրան և

գնաց: Մեկ այլ ժամանակ ևս նույն իշխանը արքայի կողմից առաքելությամբ ուղարկվեց ինչ-որ մի տեղ: Երբ ելավ քաղաքից, այնժամ չարի ազդմամբ ձիուց ընկավ և նրա ոտքերը կոտրվեցին: Ծառաները նրան տուն տարան և բժիշկներ հրավիրեցին նրան օգնություն ցույց տալու համար: Հինգ օր անց նրա ոտքերը սկսեցին սևանալ: Երբ բժիշկները տեսան նրա ոտքերի սևանալը, սկսեցին ակնարկել միմյանց և ասել, թե պետք է կտրել նրա ոտքերը, ապա թե ոչ՝ նրա բոլոր անդամները կփտեն, կնեխեն և նա կմեռնի: Եվ ասացին նրան. «Այսօր մենք տուն գնանք և վաղը կգանք, կբժշկենք քեզ»: Իսկ հիվանդը ասաց իր ծառային. «Գնա բժիշկների հետ և տես, թե ի՞նչ են մտածում»: Ծառան, ըստ նրա խոսքի, գնաց բժիշկների մոտ, որոնք բացատրեցին նրան իրենց տիրոջ վիճակը: Ծառան տուն վերադառնալով, արտասվելով հայտնեց տիրոջը նրանց ասածը: Արդ, երբ իշխանը լսեց այս մասին, տրտմությունից քնել չկարողացավ: Ամբողջ գիշեր կանթեղը պայծառորեն վառվում էր:

Կեսգիշերին հիվանդը տեսավ մի մարդու, ով պատուհանից ներս մտավ, կանգնեց նրա մոտ և ասաց,- «Ինչո՞ւ ես տրտմել ու լալիս»: «Լալիս եմ, որովհետև բժիշկներն այսինչ բանն ասացին»,- պատասխանում է նա: Անծանոթն ասում է. «Ցույց տուր ինձ քո ոտքերը»: Հայտնված անծանոթն ինչ-որ բանով օծեց դրանք ու ասաց. «Վեր կաց և քայլիր»: Նա վեր կացավ և չկարողացավ քայլել: Հայտնվածն ասաց նրան. «Դեռ կաղո՞ւմ ես» և դարձեալ օծեց նրա ոտքերը: Այնժամ իշխանը վեր կացավ և բոլորովին առողջացած քայլեց: Իսկ այն հայտնված բարեկամը ողորմության մասին բազում խոսքեր ասաց նրան, թե՝ «Տերն ասում է. «Երանի ողորմածներին, որովհետև նրանք ողորմություն կգտնեն» և անողորմ դատաստան է լինելու նրա հանդեպ, ով ողորմություն չի գործում»: Ապա ասաց. «Խաղաղություն քեզ»: Իշխանն ասաց. «Յանկանո՞ւմ ես գնալ, մինչդեռ քո մասին չես հայտնել, հանուն Տիրոջ, ասա ո՞վ ես դու»: Եվ անծանոթն ասաց, «ճանաչո՞ւմ ես այս պատմուճանը»: Իշխանը թե՝ «Այո՛, տեր իմն է»: Եվ անծանոթն ասաց. «Ես այն մեռյալն եմ, որին դու տեսնելով մերկ ընկած ճանապարհին, սրանով

ծածկեցիր: Եվ արդ, Տերն առաքեց ինձ բժշկելու քեզ: Իսկ դու գոհացիր Աստծուց և ողորմությունը մի՛ մոռացիր»: Այս ասելով դարձյալ ելավ պատուհանով, որով և մտել էր ու գնաց: Իշխանը բոլորովին առողջացավ, գոհաբանեց Աստծուն և ուրախ էր, որովհետև ողորմածությունը, որը սիրում էր և միշտ ուներ, արդյունքով երևաց նրան ու հաստատվեց նրա մեջ»:

«Վարք հարանց» ժողովածուից

Ձեզանից յուրաքանչյուրը իբրև քրիստոնյա, մանավանդ իբրև դարավոր և հերոսական մի Ազգի զավակը, թող լինի ողորմած, գթասիրտ և ներող մարդկանց նկատմամբ: Մի՛ սպասեք որևէ վարձատրության կամ գնահատանքի, դուք ձեր բարի գործը կատարեցեք և ձեր ողորմությունը տվեք՝ կարիքավորին, հիվանդին ու անօգնականին առանց սպասելու որևէ վարձատրության:

Մեր Տերը այնքան սիրեց մարդկանց, որ Իրեն դրեց բոլոր դժբախտների և հիվանդների տեղում: Իրապես, եթե մենք էլ նույնը կատարենք, այն ժամանակ միայն կհասկանանք, թե ինչո՞ւ պետք է միշտ ողորմություն անել: Ամեն:

ՍՐՏՈՎ ՄԱՔՈՒՐ ՄԱՐԴԻԿ

«Երանի՛ նրանց, որ սրտով մաքուր են, որովհետև նրանք Աստծուն պիտի տեսնեն» (Մատթ. 5:8):

«Երանի՛ հոգով աղքատներին, որովհետև նրանցն է երկնքի արքայությունը»:

«Երանի՛ սգավորներին, որովհետև նրանք պիտի մխիթարվեն»:

«Երանի՛ ողորմածներին, որովհետև նրանք ողորմություն պիտի գտնեն»:

«Երանի՛ է ձեզ, երբ ձեզ նախատեն ու հալածեն և իմ պատճառով ձեր մասին սուտ ասեն: Ցնծացեք և ուրախացեք, որովհետև երկնքում ձեր վարձը շատ է, քանի որ այսպես հալածեցին մարգարեներին, որոնք ձեզնից առաջ են եղել» (Մատթ. 5:3-12):

Հիսուս օրհնեց և երանի տվեց բոլոր նրանց, ովքեր մաքուր սիրտ ունեն, գովեց այն մարդկանց, ովքեր իրենց անձնական կյանքում առաքինի են և մտածում են իրենց սրտի մաքրության մասին, որովհետև մաքուր սրտում միայն կարող է զորանալ և աճել արմատները մեր հավատի:

Մյուս կողմից, Նա խստորեն հանդիմանեց փարիսեցիներին և դպիրներին, որոնք կարևորություն էին տալիս իրենց արտաքինին և անտեսում սրտի մաքրությունը. *«Վա՛յ ձեզ կեղծավորներիդ՝ օրենսգետներիդ և փարիսեցիներիդ, որ բաժակի ու պնակի դուրսը մաքրում եք, մինչ ներսից նրանք լի են ձեր գողությամբ և անժուժկալությամբ: Կույր փարիսեցի, նախ մաքրիր բաժակի ու պնակի ներսը, որպեսզի դրանց դուրսն էլ մաքուր լինի» (Մատթ. 23:25-26):* Բաժակի դրսի կողմը ասելով Հիսուս ակնարկում էր մարդկանց արտաքին երևույթին, իսկ ներսի

կողմ բացատրությամբ՝ հասկանում էր սիրտը: Այս մասին Առակաց գրքում ասվում է. *«Ամենայն զգուշությամբ պահիր և պահպանիր քո սիրտը, որովհետև նրանից է բխում կյանքի աղբյուրը» (Առակ. 4:23):*

Սիրտը աղբյուրն է բարու և չարի: Այս է պատճառը, որ երբ բարի գործեր կատարող մի մարդ ենք տեսնում, ուրախությամբ *«բարեսիրտ»* անունն ենք տալիս նրան, իսկ երբ չարիք գործողի ենք հանդիպում, տխրությամբ ասում ենք' *«չար սիրտ ունի»:* Հիսուս այս ճշմարտության լավագույն սահմանումն է արել. *«Բարի մարդը իր սրտի բարի գանձերից բարին է բխեցնում, իսկ չար մարդը՝ չարն է բխեցնում, որովհետև սրտի ավելցուկից է, որ խոսում է նրա բերանը» (Ղուկ. 6:45):*

Հետաքրքիր է այս պատմությունը.

«Պատմվում է, թե երկու եգիպտացի վանականներ պատահաբար հանդիպում են մի կնոջ, որը գետի չափազանց խոր մի ծանծաղուտի մեջ խրված, չէր կարողանում այն կողմ անցնել: Վանականներից մեկը նրան գրկելով, ապահով մյուս կողմն է անցկացնում, սակայն այս արարքը գայթակղեցնում է իր ընկերոջը: Վերջապես, երկար ճանապարհ անխոս անցնելուց հետո, նա բարկությամբ հանդիմանում է իր եղբորը հոգեվոր ուխտը դրժելու համար: Մյուս վանականը պատասխանում է. «Ես նրան գրկեցի և գետի մյուս կողմը անցկացրեցի ու այնտեղ թողեցի, սակայն դու դեռևս նրա հետ ես»:

Սրտի մաքրություն նշանակում է Հիսուսին կրել մեր մտքի ու սրտի մեջ, Իր անվամբ արտաքսելով չար խորհուրդները, որպեսզի մեր սրտերը մաքուր մնան:

Որպես մաքուր սրտի լավագույն օրինակ, Հիսուս նկատի է ունենում մանուկների սրտերը, որոնք դեռես մեղքը չեն ճանաչում: Նրանք նման են աղբյուրի այն ջրերի, որոնք հողից դուրս եկած րոպեից մաքուր ու ջինջ են: Նույնն է նաև սիրտը: Իր նախնական վիճակում միշտ նա

մաքուր է: Բայց երբ այնտեղ տեղ են գտնում չար ցանկությունները և վատ զգացումները՝ կեղտոտվում է:

Սբ. Ներսես Շնորհալի Հայրապետն ասում է. *«Եթե մեկը սիրտը մաքրի ամեն տեսակ կեղտոտություններից, պիտի տեսնի իր հոգու մեջ գեղեցկությունը աստվածային կերպարանքի, այնպես, ինչպես, երբ մեկը մաքուր հայելիով արևին դիտի, թեպետ դժվար և սակայն հայելիի ճառագայթներով լույսի ուժգնությունը կտեսնի, այնպես էլ մենք, երբ մաքրվենք մեր կեղտոտություններից, պիտի կարողանանք Աստծուն տեսնել»:*

Մարդկանց սրտերը չորս տեսակ են լինում՝ *քարացած, մակերեսային, փշոտ և բարի:*

ա. ՔԱՐԱՑԱԾ ՍԻՐՏ - *Միրտը քարացած է լինում, երբ մարդ չի լսում Աստծու խոսքը և միայն իր հաճույքների մասին է մտածում, ամեն ինչ իր անձնական շահերի համար է անում, չի մտածում Աստծու և իր կարիքավոր ընկերոջ մասին: Այդպիսի մարդն անձնասեր է, այսինքն՝ իր անձը ամենաշատն է սիրում:*

բ. ՄԱԿԵՐԵՍԱՅԻՆ ՍԻՐՏ - *Մակերեսային է այն մարդու սիրտը, ով Աստծու խոսքը լսելով և կամենալով բարիք անել դժվարութեան պահին մոռանում է իր տվորածը և վարվում ըստ հին տվորության, կարծես թե երբեք չի էլ լսել Աստծու Նրա պատվիրանների մասին:*

գ. ՓՇՈՏ ՍԻՐՏ - *Մարդու սիրտը փշոտ է, երբ նա լսում է Աստծու ձայնը և ցանկանում հետևել Նրան, սակայն իր սրտից չի հեռացնում չար սերմերը, այսինքն՝ սուտը, հայհոյանքը, գողությունը, ավազակությունը և այլ վատ տվորությունները, որոնք բարիք գործելու ցանկությունը խեղդում են մարդու մեջ:*

դ. ԲԱՐԻ ՍԻՐՏ - *Մարդու սիրտը բարի է, երբ լսում և մտքում պահում է Աստծու խոսքը, հոգին մաքրում է չար ցանկություններից, կատարում իր կրոնական պարտավորությունները, տվորում դասերը, սիրում ընկերներին... այդպիսի մարդու կյանքը բարի պտուղներ է տալիս:*

Քրիստոնյայի կյանքի ամենամեծ նպատակը Երկընքի Արքայությունը ժառանգելն է: Հիսուս նրան հասնելու համար հիմնական պայման դրեց սրտի մաքրությունը: Երբ Իր աշակերտները վիճում էին, թե ո՞վ պիտի լիներ իրենցից մեծը Երկնքի Արքայության մեջ, Հիսուս մի մանուկ առավ, կանցնեցրեց նրանց դիմաց և ասաց. *«Ճշմարիտ եմ ասում ձեզ, եթե չդառնաք ու չլինեք մանուկների պես, երկնքի արքայությունը չեք մտնի» (Մատթ. 18:3),* այսինքն, եթե մանուկի պես մաքուր սիրտ չունենաք և անմեղ չլինեք, չեք կարող մտնել այնտեղ, ուր Աստված հատկացրել է արդարների համար:

Մեր Հայրապետները և բոլոր սրբերը հավատում էին, որ Աստծուն կարող են տեսնել միայն նրանք, ովքեր բարի զգացումներով և առաքինութիւններով լի սիրտ ունեին ու այդ անհատնում գանձանակից շարունակ բարիք էին հանում և առատորեն բաշխում իրենց եղբայրներին ու նվիրում Աստծուն:

Բարի սիրտ ունեցողների և եղբայրական վերաբերմունք ցույց տալու ամենամեծ օրինակը տալիս է Հիսուս, պատմելով Բարի Սամարացու ուսանելի առակը, որը կարող եք կարդալ Ղուկաս Ավետարանչի 10-րդ գլխի 30-35 համարներում: Առակի բովանդակությունը այն է, որ ավազակների կողմից կողոպտված, վիրավոր մի մարդու օգնության ձեռք երկարելով, Բարի Սամարացին կատարում է իսկական ընկերոջ, մաքուր սիրտ ունեցող մարդու գործ, օգնելով խնամքի կարոտ մարդուն, ինչը չի կարելի ասել քահանայի և Ղևտացու համար, ովքեր իրենց խիղճը կորցրած անտարբեր գտնվեցին խնամքի ու օգնութեան կարոտ մարդու նկատմամբ:

Հայերեն լեզվում *սուրբ* նշանակում *է մաքուր, անարատ, նվիրական, կեղտից ազատ, անխառն, զուտ:* Կրոնական իմաստով *«Սուրբ առնել զանձն»* նշանակում է *«Ինքն իր անձը*

Աստծուն նվիրել» (Մալխասյանց-Աճառյան):

«Սրտի մաքրությունը,- ասում է Գարեգին Հովսեփ-յանց Կաթողիկոսը,- *ճշմարտության գերիշխանությունն է մեր խղճի և հոգու մեջ, որ ազնվացնում է մեր զգացումները ու ջերմացնում մեր հոգին բարու, գեղեցիկի և ճշմարտության գաղափարների համար» (Գարեգին Հովսեփյանց, «Դեպի Լույս և Կյանք», «Գանձասար», Երևան, 1994, էջ 55):*

Սաղմոսերգու մարգարեն գեղեցիկ կերպով է բնորոշում սուրբ մարդու տիպարը.

«Նա, ով անբասիր է ընթանում, արդար գործ է կա-տարում, ճշմարտություն խոսում իր սրտում: Ով չի նենգել իր լեզվով և ընկերոջը վատություն չի արել մերձավորներից նա-խատինք նա չի ստանում և չարագործն անարգված է նրա աչ-քում: Այդպիսին փառաբանում է նրանց, ովքեր երկյուղ ունեն Տիրոջից, երդվում է իր բարեկամին և երդումն իր չի դրժում: Իր արծաթը վաշխով չի տալիս, իրավունքի դեմ կաշառք չի վերցնում: Ով անում է այս, նա հավիտյան չի սասանվի» (Սաղմ. 14:2-5):

Բարի սիրտ ունենալ նշանակում է քրիստոնյային վայել կյանք ունենալ, որովհետև ով չի կատարում մեր Տի-րոջ պատվիրանները՝ խնամել հիվանդին, օգնել կարիքա-վորին, ձեռք մեկնել բանտարկյալին, կնշանակի նա չի ընթանում ճիշտ ճանապարհով և նրա սիրտը չի կարող մաքուր լինել։

Այս պատմությունը Հայրենի մեծանուն գրող Ավետիք Իսահակյանի զրույցներից մեկն է, որը ուսանելի է.

«Դարեր առաջ փառատենչ ու դրամասեր մի իշխան էր ապրում Արևելքում: Նա կովազան էր, անհանգիստ, դավադիր, ագահ ու անկուշտ և ուզում էր աշխարհակալ լինել: Մի անգամ նորից հարևան երկրների դեմ պատերազմի է գնում և հաղթա-կանորեն հասնում ամրակուռ մի քաղաքի պարիսպներին, որը

պաշարելով վրաններ է խփում նրա շուրջբոլորը:

Մի օր իշխանը զբոսանքի է դուրս գալիս քաղաքի շրջակայքը, երբ վերադառնալիս է լինում իր զինվորական վրանները, անցնում է մի գերեզմանատան միջից և հետաքրքրությունից դրդված սկսում է կարդալ շիրմաքարերի արձանագրությունները. «Անուն, ազգանուն, մեծահարուստ վաճառական, ծնվեց այսինչ թվին, մեռավ այնինչին և չապրեց ոչ մի օր»: Ի՞նչ տարօրինակ գրություն, զարմանում է իշխանը: Կարդում է մեկ ուրիշը. *«Անուն-ազգանուն, հոչակավոր զորապետ, միշտ հաղթական, ծնվեց-մեռավ, ապրեց միայն մի օր»* և ապա՝ *«Անուն-ազգանուն, մեծափարթամ կավածատեր, հողատեր, ծնվեց- մեռավ, ապրեց յոթ տարի»:* Նորից՝ *«Անուն-ազգանուն, ծնվեց-մեռավ, մարդասպան, ապրեց երեք տարի»:* Ի վերջո՝ *«Անուն-ազգանուն, խորիմաստ հեղինակ, իմաստասեր մարդ, ծնվեց-մեռավ, ապրեց իր կյանքի բոլոր օրերը»:*

Իշխանը անկարող լինելով լուծել մահարձանների գրությունները, հրամայում է գտնել-բերել մի տեղացու, որը կարող էր բացատրել այս առեղծվածը: Զինվորները բերում են գերեզմանոցի ծերուկ պահակին և իշխանը հրամայում է նրան մեկնել յուրաքանչյուր գրությունը: Ծերուկը ասում է. «Հնից սրբագործված ավանդություն ու սովորություն էր մեր մոտ, երբ մի քաղաքացի մեռնում էր, գյուղի ծերունիները հավաքվում էին քննելու համար նրա արժանի և անարժան գործերը: Քաջություն, խելք, հարստություն անարժեք են, երբ չեն օգտագործված, չեն ծառայեցված ուրիշների համար: Իր անձի համար ապրված օրերը նժարի մեջ թեթև են կշռում, իսկ բարիք գործած օրերը ծանր են և այդ օրերը ապրած օրեր են համարվում: Ընկերության ու ազգի համար նվիրվողն է, որ իսկապես ապրում է, որովհետև կյանքի իմաստը ուրիշին բարիք անելու մեջ է: Եվ այսպես կյանքի մեջ բարիք և ողորմություն արած օրերն են հաշվում և թիվը գրվում է տապանի վրա: Ահավասիկ այստեղ ննջող իմաստունը հրաժարվեց կյանքի հաճույքներից, խորա-

պես զգաց թշվառի և կեղեքվածի տանջանքները, նա տառապեց քաղցածի ու կեղեքվածի հետ, միխիթարեց և օգնեց կարիքավորին, իսկ հարստահարողին սաստեց: Նրա կյանքի և ոչ մեկ օրը իզուր չանցավ: Այս մարդասպան ավազակը կյանքի վերջին երեք տարիներին զղջաց և դրանք անցկացրեց ճամբորդներին անվճար սառը ջուր հրամցնելով, ուստի ապրեց երեք տարի:

Իսկ այստեղ պառկած զորապետը մի պատերազմում թշնամու մի զինվորի խնամեց ընդամենը մեկ օր: Մի քիչ այն կողմում ննջող մեծահարուստը միայն մի բան արեց, գանձեր դիզեց և հարստություն, կյանքում ոչ մեկին բարություն չարեց և միայն իր մարմնի մասին մտածեց: Եվ իմաստունները գրեցին... չապրեց և ոչ մի օր»:

Իշխանը լսեց ծերունու մեկնությունները, առանձնացավ, մտածեց և ապա նահանջի հրաման արձակելով թողեց հեռացավ իր երկիրը: Այնտեղ նա սկսեց բարի ու արդար գործեր կատարել, ուրիշների բարօրության համար ապրել և ամեն իրիկուն քնելուց առաջ մտածում էր. *«Ես բախտավոր եմ ու երջանիկ: Հիմա է որ ես ապրում եմ»:*

«Արժի, որ մենք էլ ամեն իրիկուն քնելուց առաջ մտածենք ու մենք մեզ հաշիվ տանք, ապրո՞ւմ ենք իրապես, թե մեռած ենք արդեն»:

Բարի մարդ և մաքուր սիրտ ունենալու մի երևույթ է նաև մեր Եկեղեցու հանդեպ ունեցած մեր սերն ու նվիրումը, որը մենք չենք կարող կատարել տունը նստած սուրճ խմելով կամ հեռուստացույց դիտելով, այլ՝ Եկեղեցի գալով և մեր մասնակցությունը բերելով: Կարևոր է, որ գանք, որպեսզի մեր Աղոթքի Տունը շեն մնա ու դատարկ և որբ չմնա, ո՛չ միայն Աղոթքի Տունը, այլ նաև մեր հոգին դատարկ ու անսնունդ չմնա, որը նույնպես կարևոր է:

Մաքրենք մեր միտքն ու հոգին ամեն տեսակ կեղտոտություններից, պայծառացնենք և զորացնենք մեր հավատը, ամենօրյա մեր աղոթքներով ուժ առնենք ու փոր-

ձենք նմանվել մեր սրբերին, որոնք մեզ նման մարդիկ էին, սակայն իրենց *«ես»ը* ատելով, այն պահեցին հավիտենական կյանքի համար:

«Երանի՛ նրանց, որ սրտով մաքուր են, որովհետև նրանք Աստծուն պիտի տեսնեն»:

Երանի, հազար երանի բարի ն մաքուր սիրտ ունեցողներին: Ամեն:

ՔՐԻՍՏՈՍԻ ԱՎԵՏԱՐԱՆԸ
ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԼԻՆ

«Երանի՛ խաղաղարարներին, որովհետև նրանք Աստծու որդիներ պիտի կոչվեն» (Մատթ. 5:8):

«Երանի՛ հոգով աղքատներին, որովհետև նրանցն է երկնքի արքայությունը»:

«Երանի՛ սգավորներին, որովհետև նրանք պիտի մխիթարվեն»:

«Երանի՛ նրանց, որ սրտով մաքուր են, որովհետև նրանք Աստծուն պիտի տեսնեն» (Մատթ. 5:3-11) և այլն:

Իր կյանքի ու ժամանակի արժեքը իմացող յուրաքանչյուր մարդու համար կարող ենք ասել, թե աշխարհի բոլոր բարիքներից ամենացանկալին ու ամենակարևորը՝ խաղաղությունն է:

Խաղաղ խիղճը, միտքը, հոգին և խաղաղ ժողովուրդը կարող են բարոյապես և տնտեսապես բարձրանալ ու զորանալ:

Անգնահատելի ու անփոխարինելի մի գանձ է խաղաղությունը: Եթե Աստված նվեր տար ամբողջ աշխարհը մեզանից մեկին և սակայն վերցներ նրանից խաղաղությունը՝ վստահ եմ նա ամենադժբախտ մարդը պիտի լիներ:

Մի ընտանիք, կազմակերպություն և մի ժողովուրդ, որոնք խաղաղ չեն, կնշանակի թե մեղքի մեջ են և մեղավոր մեկը, մարդ թե հասարակություն ապստամբ մեկն է ու հակառակորդ Տիրոջ սիրո օրենքներին: Աշխարհում համաժողովներ են գումարվում, զինաթափություններ են ստորագրվում, բանակցություններ են կատարվում և դաշինքներ կնքվում ազգերի միջև խաղաղության, սակայն դեռևս շատ երկրներում շարունակվում են պատերազմները միմյանց միջև և զոհվում են հազարավոր

մարդիկ, քաղաքներ և գյուղեր են քանդվում ու որբերը շատանում են: Ե՞րբ պիտի հասնենք կատարյալ խաղաղության: *«Աստված գիտի,-* ասում են մարդիկ: Այս հարցը հուզում է ամեն մարդու, անկախ իր ազգությունից ու անշուշտ առավել ևս՝ մեզ հայերիս, որովհետև մենք և մեր Հայրենիքը օդի ու ջրի պես միշտ պետք ունենք խաղաղության:

Մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս աշխարհ եկավ իբրև *«Խաղաղության Իշխան և Արդարության Արեգակ»:* Նա խաղաղություն հաստատեց, բաժանեց և ստեղծեց Իր ամբողջ կյանքով, գործով ու խոսքով: Երբ առաքյալները սարսափի էին մատնվել ալեկոծ ծովի վրա, Նա Իր օրհնյալ ձեռքերով հրաման տվեց հովերին և ջրերին ու խաղաղություն տիրեց: Նա խաղաղություն շնորհեց նույնիսկ Իր աջ կողմը խաչվող ավազակին: Եվ ի վերջո նա Իր խաղաղությունը ժառանգ թողեց Իր առաքյալներին:

«Խաղաղություն եմ թողնում ձեզ, իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ. ձեզ չեմ տալիս այնպես, ինչպես այս աշխարհն է տալիս, ձեր սրտերը թող չխռովեն, և չվախենաք...» (Հովհ. 14:27):

Ի՞նչ խաղաղության մասին էր, որ խոսում էր մեր Տերը: Այն ժամանակները, երբ շատ ազգեր և ժողովուրդներ, տառապում էին Հռոմեական հզոր կայսրության տիրապետության տակ և երազում էին ազատ, անկախ ու խաղաղ մի երկիր լինելու մասին, արդյո՞ք պիտի օգներ Հիսուսի բերած խաղաղությունը նրանց: Եթե առարկայական մտածենք, անշուշտ՝ ոչ, որովհետև Հիսուս ո՛չ զինվորական բանակներ և ո՛չ էլ բավականաչափ զենք ուներ, որ կարենար հաղթել Հռոմեական հզոր կայսրության: Նրա բերած խաղաղությունը ուրիշ էր: Հիսուսի խաղաղությունը աստվածային էր, երկնային, հրաշալի, որ չի վերջանում, չի կորչում և հավիտենական է: Այդ խաղաղու-

թյունը ունեցողները կրակից ու սրից են անցնում, օձերի և կարիճների վրա են կոխում, մարմին ու ինչք են զոհում և սակայն՝ ոչ մեկը չի կարող խլել նրանցից այդ խաղաղությունը: Մի խոսքով Հիսուսի բերած խաղաղությունը՝ Հոգու խաղաղությունն է: Նրա բերած խաղաղությունը ջնջում է խռովությունները, հալեցնում հակառակությունները, շոգիացնում փառասիրությունները, ոչնչացնում է նախանձի ու ատելության արմատները և լցնում սրտերը սուրբ ուրախություններով:

Աշխարհի խաղաղության բանալին Քրիստոսի Ավետարանն է:

Ինչքան ուրախ և երջանիկ պիտի լինի մի ընտանիք, եթե տան բոլոր անդամների միջև կա Աստծու սերը, որը բերում է համերաշխություն և փոխադարձ հասկացողություն, այսինքն՝ այնտեղ իշխում է Հիսուսի թողած Հոգու խաղաղությունը: Նրա համար Հիսուս ասում է, եթե Իմ խաղաղությունը ունենաք, *«թող չխռովեն ձեր սրտերը և չվախենաք»:*

Մի ընտանիք, որը Աստծուն չի ճանաչում և ապրում է ճշմարտութեան լույսից հեռու, իր կյանքի մեծ մասը պիտի անցնի վշտերի ու նեղությունների մեջ: Եվ եթե ընտանիքի անդամները միացած չեն իրար հետ քրիստոնեական սիրով ու ներողամտության ոգով, շարունակ պիտի վիճեն և կռվեն իրար հետ, նույնիսկ չպիտի ուզեն խոսել ու տեսնել իրար և մի օր էլ դժբախտաբար պիտի դառնան իրար մոլի հակառակորդներ: Այս է ճշմարտությունը:

Ուրեմն, ի՞նչ պետք է անեն մարդիկ, որ ունենան Հիսուսի խաղաղությունը: Միակ ճանապարհն է. սեր ունենալ Աստծու, Եկեղեցու և մարդկանց հանդեպ: Ահա բանալին Նրա մեզ թողած խաղաղության: Երկու հազար տարիներ առաջ մեզ ժառանգ թողած Հիսուսի պատգամը

«Միրեցեք միմեանց» պիտի լինի Նրա խաղաղության բանալին:

Հիսուսի խաղաղությունը մարդկության համար պարգևների պարգևն է: Սակայն՝

«Ե՞րբ է մարդկային ընկերությունը եղել «այն աստվածային տաճարը, ուր հոգիները կարողանային ունենալ իրենց աննենգ ու երջանիկ թևախառնումը»: «Մարդու թշնամին իր ընտանիքն իսկ չի՞ եղել: Անհատը չի՞ տեսել իր դեմ հավաքականությանը և փոխադարձաբար: Արյունը արյան դեմ բորբոքված, լեզուն լեզվի դեմ սրված և կրոնը կրոնի դեմ զինված չե՞ն: Խիղճը սար չի՞ քաշել խղճի և միտքը մտքի դեմ: Ողջագուրվող կրծքի տակ դաշույնը պահված և համբերող շրթներին դավող թույն չի՞ թափված:...» ասում է Կ. Պոլսի Պատրիարք Գարեգին Տրապիզոնցին և շարունակում է.

«...Աշխարհի խաղաղությո՞ւնը: Նա խաղաղեցնո՞ւմ է իրապես տիեզերական Խիղճը, ընկերային այն բոլոր աններդաշնակությունների առջև, որոնցով մարդիկ իրենց «կենցաղի ծովն» են միշտ ալեկոծում...: Նա մոռացնել՞ է տալիս մշտապես երեկվա «չարիքը» այսօրվա «բարիք»-ով, հնարավորություն տալով, որ «յուրաքանչյուր մարդ ճշմարտությունը խոսի իր ընկերոջ հետ, խաղաղությամբ և արդարությամբ դատաստան տեսնի իր դռների մոտ, չունենա վատ խորհուրդներ ընկերոջ մասին իր սրտի խորքում և չսիրի՞ սուտ երդումը...»:

«Օ՜հ, սրանցից ո՛չ մեկը չի կարող տալ դժբախտաբար աշխարհի խաղաղությունը:... Չե՞ք ճանաչում «խաղաղության ավետարանչ»-ի ձայնը. «Խաղաղությո՞ւն եմ թողնում ձեզ, իմ խաղաղությո՞ւնն եմ տալիս ձեզ - (Հովհ. 14:27-28): Այդ խաղաղությունն է, որ հաշտեցնում է երկինքն ու երկիրը իրար հետ եւ հիմնում «Աստծու թագավորությունը»: Եվ Աստծու թագավորությունը ուրիշ բան չէ արդեն, բայց եթե «արդարություն, խաղաղություն և ուրախություն տիեզերքը լցնող Սուրբ Հոգով»: Այդ խաղաղությունը շինարար է, ստեղծագործ ու հավիտենական»

(«Ընտիր Քարոզներ», հատաքածո, Անթիլիաս, Լիբանան, 1955, Գարեգին Պատրիարք Տրապիզոնցի, էջ 92, 93. 94-95):

«Երանի՛ խաղաղարարներին, որովհետև նրանք Աստծու որդիներ պիտի կոչվեն»: Հիսուս երանի է տալիս խաղաղությունը ցանկացողներին, պահպանողներին և նրա համար պայքարողներին ու շեշտելով իր խաղաղության կարևորությունը ամենամեծ շնորհը տալիս է նրանց, ասելով, որ նրանք Աստծու Որդիները պիտի կոչվեն: Ի՞նչ մեծ պատիվ է լինել Աստծու Որդին:

Այստեղ ուզում եմ հիշել երջանկահիշատակ Վազգեն Վեհափառի խոսքը.

«Ամեն բանի մասին կարելի է տարակարծիք լինել և վիճել, խաղաղությունը սակայն վեր պետք է լինի ամեն վեճից և դառնա բոլորի համար մտածելու և գործելու գերագույն կանոն՝ ամեն տեսակի հարցերը լուծելու»:

Խաղաղություն ցանկացողը նա է, ով կարողանում է իր խաղաղությունը փոխանցել ուրիշներին, մեկը, որի հետ շփվելիս և հաղորդակցվելիս մարդկանց հոգիները խաղաղվում են, լցվում հոգևոր կյանքի ճշմարտություններով: Արդ, Քրիստոսի խաղաղությունը, որ ամեն Կիրակի բաշխվում է Եկեղեցում՝ մշտապես կանչում է մեզ: *«Լսեցեք ինձ և բարիքներ ճաշակեցեք ու բարության մեջ ձեր հոգիները վայելք պիտի զգան» (Ես. 55:2):*

Երանի նրանց, ովքեր կարողանում են պահել Տիրոջ պատգամը, սակայն գուցե շատերն ասեն, որ դժվար է խաղաղարար լինել, մանավանդ այս անօրեն աշխարհում, ուր անարդարությունն ու չարությունն են թագավորում: Հովհաննես առաքյալը պատասխանում է այդպիսիներին. *«Եվ նրա պատվիրանները ծանր չեն, քանի որ ամեն օր ամեն ոք, որ Աստծուց է ծնված, հաղթում է աշխարհին:*

Եվ այս է այն հաղթությունը, որ հաղթում է աշխարհին՝ մեր հավատը» (Ա. Հովհ. 5:4), որովհետև մեր Տերը

սկզբից զգուշացրեց մեզ, որ նեղ է Իր դուռը, դուռ, որը մեզ արքայություն է խոստանում: Նա երբեք մեզ չի խաբել, նեղ է ճանապարհը, որը մեզ պիտի մոտեցնի հավիտենական դռներին, սակայն խաղաղության Ավետարանն է, որը մեզ հաղթել պիտի տա, ինչպես որ Հիսուս հաղթեց աշխարհին:

Այնտեղ, ուր տիրում է խաղաղությունը, անպայման առկա է նաև շինարար աշխատանքը: Պարզ է, որ երկարատև խաղաղություն վայելող երկրում, միշտ զարգանում է շինարարությունը, արդյունաբերությունը, իսկ ժողովուրդը՝ առաջադիմում: Նույնը կարող ենք տեսնել Եկեղեցում: Եթե Եկեղեցու անդամները ձգտում են խաղաղ և համերաշխ հարաբերություններ հաստատել միմյանց հետ, անպայմանորեն հոգևոր վերելք են ապրում: Վաղ քրիստոնեության շրջանում, ինչպես պատմում է *«Գործք Առաքելոց»* գիրքը, հավատացյալներն ապրում էին սիրով ու խաղաղությամբ: Այդ իսկ պատճառով էլ քրիստոնեությունն արագ տարածվեց աշխարհում: Հասկանալի, թե ինչո՞ւ Եկեղեցու և ժողովուրդների մեծագույն երազանքը դարեր շարունակ եղել է խաղաղությունը:

Մեր եկեղեցական հայրերից Գրիգոր Տաթևացին ասում է.

«Խաղաղությունը առաքինության կայանն է, որ լցված է հեշտությամբ ի Աստված առանց մարմնականի, աշխարհիկի և սատանայականի: Եվ եթե որևէ պակասություն լինի, անզոր է դառնում, ուստի պարզ է, որ խաղաղություն կարող է ունենալ հույժ մաքրված հոգին:

Արդ, խաղաղարարները ավելի շատ են Աստծո որդի ասվում, քան այլք, որովհետև չնայած ողորմությունը ավելի է մարդուն նմանեցնում Աստծուն երևացող գործերով, սակայն ըստ ներքին էության ավելի նմանեցնում է խաղաղությունը:

Խաղաղություն է նաև համացեղակիցների հետ սիրով ապրելը:

Եվ խաղաղությունը երեք տեսակ է.

Նախ, որ խաղաղեցնում է ուրիշներին իբրև միջնորդ:

Երկրորդ՝ իրենց այլոց հետ, ինչպես հեզերը ըստ առաքյալի խրատի, բոլորի հետ խաղաղության մեջ եղեք:

Երրորդ՝ ինքն իր հետ, ինչպես առաքինիներն են ունենում հոգու, մարմնի մտքի ներդաշնակ խաղաղություն և չեզոքացնում այն հակամարտությունը, որն ունի մարմինը հոգու դեմ:

Սրանք բոլորը կոչվում են երանելիներ, քանզի Աստծո որդիներ են համարվում:

Հարց - Ո՞րն է Աստծո Որդու խաղաղությունը:

Պատասխան - Այն, որ մեղքը, չար կամքը և սատանային, որոնք խռովարար էին, մեջտեղից դուրս բերեց ու խաղաղություն հաստատեց երկնքի և երկրի միջև:

Նախ, խաղաղություն հաստատեց Իր անձով, որովհետև աստվածային և մարդկային բնությունը միավորեց Իր մեջ՝ մի կամքով և մի անբաժանելի գործունեությամբ:

Երկրորդ՝ հաշտեցրեց Հոր Աստծուն արարածների հետ և պարգևեց Սուրբ Հոգուն:

Երրորդ, հաշտեցրեց հրեշտակներին և մարդկանց՝ վերացնելով հրեղեն սուրն ու թշնամանքը:

Չորրորդ, հրեաներին և հեթանոսներին մի եկեղեցում ժողովեց:

Հինգերորդ, խաչողների և չարչարողների համար աղոթք արեց:

Արդ, առաջինը խաղաղության հաստատումն էր ինքն Իր հետ, վերջինը՝ Իր և ուրիշների միջև, իսկ միջինը՝ ուրիշների միջև (Գրիգոր Տաթևացի «Գիրք Հարցմանց»):

Մեր, համերաշխություն, խաղաղություն... Ահա այս երեքն են, որ ամփոփված են այս երանիի մեջ և անքակտելի կապված, քանզի չկա սեր՝ առանց համերաշխության կամ խաղաղություն՝ առանց սիրո...: Եվ սրանից մեծագույնը սերն է, որից և բխում են մյուս երկուսը:

Մեր կյանքում բազում են այն օրինակները, երբ խաղաղություն պիտի սերմանեինք, բայց եղանք խռովարար, երբ

համերաշխությունից առավել անհաշտությունը սիրեցինք: Սակայն եթե այդ պահերին հիշենք *«Աստծու որդիներ պիտի կոչվեն»-ը,* համոզված ենք, որ այլ կերպ պիտի վարվենք:

Մի՞թե կա ավելի մեծ երանություն, քան այն, որ Աստված մեզ Իր որդիները կոչելու շնորհն է տալիս՝ փոխարենը խնդրելով մեզանից, որ սիրենք խաղաղությունը, սիրենք միմյանց...

Այո՛, Քրիստոսն է մեր խաղաղությունը, Նա Ինքն է մեծագույն դեսպանը խաղաղության, հաշտության կամուրջը՝ մարդ արարածի և Արարչի միջև:

Այս երանիին արժանանալով զարմանալիորեն պիտի տեսնենք, որ զերծ ենք մնում մեղքերի մի մեծ ընտանիքից՝ *բարկություն, ատելություն, զայրույթ, նախանձ, չարություն և այլն:*

Ամեն կիրակի պատարագիչի շուրթերից լսվող *«Խաղաղություն բոլորին»-ը* թող լցնի մեր սրտերը սիրով միմյանց նկատմամբ, քանզի, եթե չսիրեցինք, չենք կարող խաղաղարար լինել՝ չենք կարող Քրիստոսինը լինել. *«Եթե դուք միմյանց սիրեք, դրանով բոլորը պիտի իմանան, որ դուք իմ աշակերտներն եք» (Հովհ. 13:35):*

Ուստի՝ *«Եվ Աստուծո խաղաղությունը, որ վեր է քան ամենայն միտք, պիտի պահի ձեր սրտերը և մտածումները Քրիստոս Հիսուսով» (Փիլ 4:7):*

Աղոթենք, որ Աստված մշտական խաղաղություն պարգեվի համայն աշխարհին և առավելապես մեր ազատ ու անկախ Հայրենիքին:

Աղոթենք նաև, որ մեր Տերը Իր խաղաղությամբ մտնի ամեն հայ ընտանիքից ներս, այնտեղ հաստատելու համար համերաշխություն, նվիրվածություն և ամենակարևորը՝ սեր ու հավատ իրար նկատմամբ: Ամեն:

ՄԻ՛ ՄԱՏՆԻՐ

«Հուդա՛, համբուրելո՞վ ես մատնում մարդու Որդուն» (Ղուկ. 22:48):

Գեթսեմանիի պարտեզում Հիսուսն այս հարցը տվեց Իր աշակերտ Հուդա Իսկարիովտացուն:

Մինչ այդ Հուդան իր հետ եկած զինվորներին ցույց էր տվել իր ուսուցչին և ասել. *«Ում հետ ես համբուրվեմ, նա՛ է, նրա՛ն բռնեցեք» (Ղուկ. 22:48):*

Այս խոսքերը կարդալիս բազմաթիվ հարցեր են ծագում յուրաքանչյուրիս մտքում. ո՞րն է տարբերությունը քրիստոնեության և մյուս կրոնների միջև, ինչո՞վ է նա առավել կամ պակաս, ինչո՞ւ մենք՝ հայերս, ուրիշ մի այլ կրոն չդավանեցինք, այլ քրիստոնյա դարձանք: Հայ հավատացյալները կարող են պատասխանել, թե այն հավիտենական կյանք է խոստանում, մեկը կարող է առարկել՝ ասելով, թե նույնը խոստանում են նաև բոլոր մյուս կրոնները, կամ քրիստոնեությունը բարություն ու ազնվություն է քարոզում, այդ դեպքում կարող են պատասխանել, թե կրիշնայականությունը երևի նույնպես բարության նշույլներ ունի: Որոշ կրոններում էլ կան նույն պահքն ու ծեսերը, ապաշխարությունն ու մեղքերի թողությունը, և միակ Աստծու գաղափարը: Ուրեմն վերջապես ո՞րն է քրիստոնեության առավելությունը: Պատասխանը պարզ ու հստակ է: Քրիստոս և Իր ապրած կյանքը: Եթե մյուս կրոններն ու նրանց հիմնադիրներն ավելի գաղափարախոսներ և փիլիսոփաներ էին, Քրիստոս ապրված ու ապրող կյանք է, քանի որ Նա Իր կյանքով մեզ օրինակ հանդիսացավ: *«Ես եմ ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը» Ոչ ոք չի գա Հոր մոտ, եթե ոչ ինձանով» (Հովհ. 14:6)»,- ասաց Հիսուս:*

Եթե ընդունում ենք, որ Հիսուս մեզ հետ ու մեր մեջ է, նշանակում է այսօր էլ Բեթղեհեմի աստղը՝ իբրև կյանքում մոլորված հոգիների ուղեցույց, շողում է երկնակամարում, այսօր էլ մենք Մարիամի ու Մարթայի պես ողբում ենք մեր հանգուցյալներին և մտածում, որ եթե Աստված այստեղ լիներ, մեր հարազատը չէր մեռնի, այսօր էլ անառակ որդիների պես շատերս թափառում ենք բախտի նավով՝ մոռացած հայրական տուն ու հայրենիք: Ինչպես միշտ, այսօր էլ մեր շուրջն են փարիսեցին ու մաքսավորը, թերահավատ Թովմասը, կարճահասակ Զաքեոսն ու ձեռքերը լվացող Պիղատոսը, մատնիչ Հուդան ու աստվածասպան ժողովուրդը:

Ամեն բան իր տեղում է, դերերը նույնն են, միայն անցել է երկու հազար տարի, և տարբեր են դերակատարները: Մե՛նք ենք դրանք՝ այսօրվա ապրողներս:

Այսօր ես ուզում եմ խոսել դրանցից միայն մեկի՝ Հուդա Իսկարիովտացու մասին, բայց ոչ թե նրա, ով ապրելով երկու հազար տարի առաջ, համբուրելով մատնեց իր Վարդապետին, այլ այ՛ն Հուդայի, ով այսօր էլ կա և ապրում է: Մե՛ր միջի Հուդայի, քանի որ, երբ մենք սկսում ենք խոսել Հիսուսի ժամանակներից, այնպես է թվում, թե մենք խոսում ենք անցած-գնացած բաներից: Ո՛չ, այսպիսի մոտեցումով մենք սպանում ու կործանման ենք հասցնում քրիստոնեությունը: Հերովդես թագավորն այսո՛ր էլ փնտրում է Նորածին Արքային՝ Մանուկ Հիսուսին, Բարի Սամարացին մի՛շտ մեզ հետ ու մեր մեջ է և Հուդան մատնում է երեկ, կմատնի նաև այսօր ու վաղը:

Այստեղից կրկին հարց է ծագում, թե «*Ո՞րն է տարբերությունը Հուդայի և մյուս մեղավոր մարդկանց միջև, ինչո՞ւ Հիսուս ներեց գողին, ավազակին, շնացողին ու անառակին, բայց չներվեց Հուդան, արդյոք սա անարդարություն չէ*»:

Եթե մակերեսորեն մտածենք Հուդայի արարքը մեծ հանցանք չէր: Ինչո՞ւ, որովհետև Հիսուսին բոլորն էին ճանաչում, Նա քարոզում էր երես առ երես Տաճարում ու փողոցներում, ժողովրդի մեջ էլ գիտեին Նրան: Հուդան ուղղակի ցույց տվեց մեկին, Ում բոլորը ճանաչում էին, ուրեմն ինչո՞ւ մարդու նկատմամբ այդքան անսիրտ ու դաժան լինենք:

Այդ բոլորը, սակայն մեզ թվում է առաջին հայացքից: Փորձենք գտնել բուն արմատը և ավելի խորը կերպով հասկանանք, թե ի՞նչ է նշանակում մատնիչ: Աստված հանդուրժում է բոլոր մարդկային մեղքերը և պատրաստ է ներելու, բայց Նա չի ներում մատնիչներին, մանավանդ, երբ նրանք մատնում են սուսիկ-փուսիկ, ժպտերես, կեղծ բարոյականության եւ համբույրի քողի տակ:

«Ո՞վ է մատնիչը»: Հիշենք հայոց պատմությունը, քանի՛ քանի՛ բերդեր են ընկել մատնիչների պատճառով, քանի՛ քանի՛ անմեղ կյանքեր ու ճակատագրեր են կործանվել նրանց մատնությամբ: Մատնիչն ունի մարդկային բոլոր մեղքերը՝ հպարտություն, նախանձ, չարություն, ագահություն, ատելություն, վախկոտություն ու խորամանկություն:

Վերջապես *«Ո՞վ է մատնիչը»:* Մատնիչը նա է, ում օգտագործում ու հետո կախաղան են բարձրացնում հենց իրենք՝ նրան վճարողները՝ պատճառաբանելով, թե՝ *«Այսօր նրա՛ն մատնեցիր, վաղն էլ ինձ ես մատնելու»:* Ահա՛ թե որտեղ է թաքնված չարի գլուխը: Այ՛ս է մատնիչի վախճանը:

Ռուս մեծ մանկավարժ Սուխլոմլինսկին իր հուշերում այսպիսի մի դեպք է պատմում.

«Երբ ինձ նշանակեցին բանտի հատուկ ուղղիչ դպրոցի տեսուչ (խոսքը պատանիների բանտի մասին է, ուր գողերին ու ավազակներին դաստիարակում էին), ես մտածում

էի՝ ինչպես կառավարել երկու հազար գող ու ավազակ 14-ից 18 տարեկան հանցագործ տղաների: Մի քանի օրից իմ մոտ կանչեցի յոթ աշակերտի, որոնց քիչ թե շատ վստահում էի, ու ասացի, որ պետք է ինձ օգնեն, որպեսզի կառավարենք դպրոցը: Տղաների մեջ նրանք պետք է տեսնեին, թե ինչ էր կատարվում ու ինձ տեղեկացնեին:

Մի քանի ամսից ես ամեն ինչ հսկում էի: Իմ աշակերտները գալիս ու պատմում էին ինձ օրվա լուրերը: Ես հանգստացնում էի սխալ գործողներին, պատժում ու հեռացնում: Այդ յոթ հոգին բարեխղճորեն կատարում էին իրենց տեսչի հանձնարարությունը, սակայն մի քանի ամսից ես դադարեցրի իմ աշխատանքը: Ինչո՞ւ, որովհետև սարսափեցի: Ես դաստիարակում էի յոթ լրտես ու յոթ մատնիչ: Եվ որոշեցի, որ եթե ես այնպիսին չպետք է լինեմ, որ հավատան, վստահեն ու կիսվեն ինձ հետ, ուրեմն ես լավ մանկավարժ չեմ»:

Մեզ թվում է, որ մատնությամբ, զրպարտությամբ, ուժով ու չարախոսությամբ կարող ենք մեր կյանքում հաղթանակներ տոնել, բայց դա առնվազն չհասունացած մարդու սխալ մտքի արդյունքն է: Գուցե մատնությունն ու զրպարտությունն էլ կարող են հաղթանակներ տոնել, բայց որքան կարճատև են դրանք, վկան առկա է՝ մարդկության պատմությունը: Եվ միայն սիրո հաղթանակն է մնայուն ու հավերժական, վկան Հիսուս Քրիստոսն է:

Աշխարհակալներ, ավաղ, միա՛յն իրենց վախճանին զգացին, թե կյանքը սպառել էին նյութական արժեքների ձգտումով: Մարթին Լութեր Քինգը, նրանցից մեկի մասին խոսելով, ասում է. *«Ֆրանսիայի մեծ զորահրամանատար Նապոլյոն Բոնապարտը, մի ակնարկ կատարելով իր ապրած կյանքի վրա, հայտարարեց. «Ալեքսանդր Մեծը, Կեսարը, Շարլըմանը և ես կառուցեցինք հսկա կայսրություններ, սակայն դրանք բիրտ ուժը ունեցան իրրև հենարան: Ժամանակներ առաջ Հիսուս սկսեց մի կայսրություն,*

որի հենարանը եղավ սերը և մինչև այսօր միլիոնավոր մարդիկ զոհվում են Նրա համար»:

Բոնապարտը նույնիսկ խոստովանել է. *«Բացի ավետարանից՝ ես ոչ մի բանի առաջ ծունկի չեմ գա, որովհետև ես աշխարհը գրավեցի զենքով, բայց Հիսուս առանց զենքի՝ սիրով»:*

Բոլորս էլ ունենք մեր սխալներն ու թերությունները, մեղավոր ենք, ինչպես Հիսուսի աշակերտները: Շատերը լքեցին Հիսուսին, Պետրոսն ուրացավ, Թովմասը կասկածեց Նրա Հարությանը, մյուս աշակերտները դավաճանեցին ու փախան խաչից ու Խաչյալից, բայց բոլորն էլ Սուրբ Հոգու զորությամբ մեծ քարոզիչներ դարձան, ու նրանց սխալները չհիշվեցին: Միայն Հուդան կրեց մատնիչի անսրբելի կնիքն ու մարդկության հավերժական անեծքը:

«Ովքե՞ր են մատնիչները»: Գերմանացի մեծ մտածող Դանթե Ալիգերիի «Աստվածային կատակերգության»՝ մատնիչներն ու հայրենիքի դավաճանները տառապում են ու պիտի տառապեն դժողքի ամենաստորին մասերում:

Մի՛ մատնեք, որպեսզի ձեզ տեսնելով՝ ձեր ընկերներն իրենց ճանապարհը չշեղեն, և ձեզ մոտենալով՝ ձեր իսկ բարեկամները խոսակցությունը կիսատ չթողեն:

Մի՛ մատնեք, թող ձեր պատճառով մարդիկ չդատվեն եւ չխաչվեն, լավագույն դեպքում Պիղատոսի պես լվացեք ձեր ձեռքերը և ինչ լինելու է թող լինի, բայց մի՝ խաբվեք երեսուն արծաթով, որպեսզի չլսեք Տիրոջ ձայնը. *«Հուդա՛, համբուրելո՞վ ես մատնում մարդու Որդուն»:* Մի՛ վերցրեք կյանքի այդ դերը և մի՛ փորձեք խաղալ այն:

Ամեն օր աղոթեցե՛ք, որպեսզի հեռու մնաք չար գործերից, մանավանդ մատնությունից, նախանձից, անեծքից, քանի որ աղոթող մարդը չի կարող այս մոլություններն ունենալ, որովհետև բարության և ճշմարտության գլխավոր աղբյուրը հանդիսացող մեր Տերը Հիսուս Քրիստոս, նրա մեջ է: Ամեն:

ԱՍՏԾՈՒ ԴՐԱՄԱՊԱՆԱԿԻ՞Ց ԵՍ ԳՈՂԱՑԵԼ

«ՄԻ՛ ԳՈՂԱՑԻՐ» (Տասնաբանյա պատվիրաններից)

Այս խոսքը Մովսես մարգարեին Աստծու տված Տասնաբանյա պատվիրաններից մեկն է: Փորձենք հիշել դրանցից մի քանիսը· *«Ես եմ քո Տեր Աստվածը, Ինձանից բացի ուրիշ Աստված չպիտի ունենաս»: «Կուռքերին չպիտի պաշտես»: «Պատվի՛ր հորդ և մորդ»: «Մի՛ սպանիր»: «Մի՛ շնացիր»* և այլն: Այս քարոզի բնաբան եմ ընտրել· *«Աստծու դրամապանակի՞ց ես գողացել«* անունը: Աշխարհում ամեն կողմ էլ գողություն կա: Ոմանք մեծ գողեր են նկատվում, ոմանք էլ՝ փոքր: Օրինակի համար, եթե մեկը մեքենայից ձայնագրիչ է գողանում, ասում ենք *«մի մեծ բան չէր, թեթև գողություն էր»* և շատ ուշադրության չենք արժանացնում ու մեքենայի տիրոջն էլ ասում ենք· *«Բախտդ բերել է, էժան ես պրծել»:*

Արհեստի մեջ էլ գողությունը *«մանր արարք է համարվում»:* Սակայն ինչ լինում է *«մանրից»* է սկսվում: Ժողովուրդը մի լավ խոսք ունի· *«Հու գողացողը, ձի էլ կգողանա»:* Տասը պատվիրանների մեջ հստակ գրված է ու պատվիրված· *«Մի՛ գողացիր«* և վերջ, չես կարող այսքան և այնքան գողանալ, այլ ուղղակի արգելք է դրված, որը պատժելի է և՛ մարդկային և՛ աստվածային օրենքներով:

Խորհրդային Միության տարիներին, անաստվածության շրջանում, գողությունը դժբախտաբար համատարած երևույթ էր, բանվորից մինչև նախագահ օղակի նման մեկը մյուսից գողանում էր: Հիշում եմ, 13, 14 և 15 տարեկանին, երբ Հոգևոր Ճեմարանի ուսանող էի, ամառային արձակուրդներին մորս հետ գնում էի շինարարության վրա աշխատելու իբրև բանվոր, որպեսզի կարողանամ օգնել ընտանիքիս մի քիչ նյութապես թեթևացնելու համար տան բեռը: Ամեն օր աշխատանքից վերադառնալիս, մայրս

իր հետ վերցնում էր մի փոքր տոպրակով ավազ կամ շաղախ (ցեմենտ), փայտի կամ երկաթի կտոր: Քանի որ ես հոգևոր կրթություն էի ստացել, այդ բաները ինձ խորթ էին թվում ու դառնացած մորս ասում էի· *«Մամ, շենքի վրա աշխատում են ավելի քան հիսուն բանվորներ, վարպետներ և ինժեներներ: Եթե ամեն մեկը քո նման մի բան տուն տանի, պատկերացնո՞ւմ ես կառուցվելիք շենքի վիճակը»:* Մայրս էլ թեթև ժպիտով անկեղծորեն արդարացնելու համար իր արածը, պատասխանում էր· *«Է՛հ, տղաս, մեր արածը ինչ է որ, ինժիները մեքենայով է տանում«:* Այդ ժամանակներում *«Մի՛ գողացիր»* աստվածային պատգամի *«մի»*-ն հանված էր և թողնված էր միայն *«Գողացի՛ր»*-ը:

Գողությունների տեսակները շատ են ու բազմազան, բայց թողնենք դրանք: Ի՞նչ եք կարծում, ո՞րն է ամենամեծ գողությունը: Վստահ եմ, որ ձեզանից շատերը կարող են ասել՝ դրամատների (բանկերի) գողությունները, որտեղից միլիոններ են գողանում կամ ավազակային հարձակումները ընտանիքների և այլ հաստատությունների վրա: Սակայն մեզանից ոչ մեկի մտքով չի անցնում, թե ամենամեծ գողությունը ո՞րն է: Բոլորս էլ նյութական գողության մասին ենք խոսում կամ մտածում, սակայն ամենամեծ գողությունը համարվում է այն, որ Աստծու Դրամապանակից ենք գողանում: Այո՛, այո՛, մի՛ զարմացեք, Աստծու Դրամապանակից: Հիմա ձեզանից շատերը ծիծաղելով կասեն· *«Տեր հայրը խելքը թռցրել է, ի՞նչ է խոսում, ո՞վ համարձակություն կարող է ունենալ Աստծու Դրամապանակից գողանալ կամ արդյոք Աստված Դրամապանակ ունի՞: Աստված նյութական հարստություն ունի՞, որ Դրամապանակ էլ ունենա ու մենք հասնենք երկինք և գողանանք»:* Բնական է, որ այսպիսի հարցեր բոլորս էլ կարող ենք ունենալ, երբ հարցը Աստծուն է վերաբերում:

Այս հետաքրքիր պատմությունը վստահ եմ ձեզ կլուսաբանի:

«Հավատացյալ մի մարդ, որ տարիներ շարունակ երազել էր ուխտի գնալ Երուսաղեմ, վերջապես կարողանում է հավաքել անհրաժեշտ գումարը ու ճամբորդել: Անշուշտ նա իր հետ վերցնում է ճամբորդության անհրաժեշտ իրեր, գնում է մեծաքանակ գորգեր Տաճարին նվիրելու համար, բարձում դրանք ուղտերի վրա և բավական շատ դրամ վերցնելով իր հետ, ճանապարհվում է դեպի Երուսաղեմ: Մեծ դժվարություններ հաղթահարելով, նույնիսկ ավազակային հարձակումների ենթարկվելով ու փրկվելով, վերջապես հասնում է Երուսաղեմ և նույն օրը Տաճարի Լուսարարապետին տեղեկացնում իր գալստյան մասին: Հանդիպելով նրան Տաճարին նվեր բերած մետաքսե թանկարժեք գորգերը հանձնում է Լուսարարապետին, որը կարգադրում է դրանք անմիջապես դնել ներսում: Ժամանակը գալիս է, Տաճարի դռները փակվում են և բոլորը գնում են հանգստանալու: Հանկարծ ժամկոչը դռան արանքից ծուխ է նկատում և նայելով տեսնում, որ գորգերը վառվում են: Մոտ գտնվող մարդիկ նրա աղաղակը լսելով սարսափահար վազում են դեպի Տաճար, բացում դռները և ո՛վ զարմանք, հավատացյալի նվիրած գորգերը այրվել ու մոխրացել էին: Հետաքրքիրն ու զարմանալին այն էր, որ կողքի ո՛չ մի գորգ ու իր չէր վառվել: Ներկաները ավելի քան ապշած և զարմացած էին ու մեկը մյուսին նայելով ասում էին· «Ինչո՞ւ, ի՞նչն է պատճառը»: Լուսարարապետը սպասում էր պատասխանի և հավատացյալը նրան առանձին պատմում է պատճառի մասին:

Նրա պատմածից հասկանալի էր, որ նա վաճառական է եղել: Ծնողները միշտ խորհուրդ են տվել նրան Կիրակի օրերը նվիրել Աստծուն, չաշխատել: «Կիրակի օրերի շահը թող Աստծու Տան համար լինի քո նվիրատ-

վություններով»,- ասել են նրան: Մարդը սկզբում լսել է իր ծնողների խորհուրդը և Կիրակի օրերի շահույթը նվիրել եկեղեցիներին: Սակայն տեսնելով իր շուրջի առևտրականներին, որոնք Կիրակի օրերն էլ էին աշխատում, մոռանալով ծնողների բարի խորհուրդը, շահելու ակնկալիքով ինքն էլ է միանում նրանց ու Կիրակի օրերը առեվտուր անում: Ահա այդ հավաքած գումարով էլ գնում է թանկարժեք մետաքսե գորգերը և իր ուխտը կատարելու համար դրանք նվիրում Երուսաղեմի Տաճարին:

Ծերունազարդ Լուսարարապետը ուշադրությամբ լսելուց հետո, ասում է նրան· *«Տղա, բայց դու այդ գումարը գողացել ես Աստծու Դրամապանակից, քանի որ Կիրակի օրերը Նրան է պատկանում: Այդ օրը չի կարելի առևտուր անել, ո՛չ էլ սակարկության մեջ մտնել Աստծու հետ, առօրյայի և Կիրակիի դրամական հաշիվները բաժանելով: Աստված աշխարհը, ամեն ինչ և մարդուն վեց օրում ստեղծելուց հետո յոթերորդ օրը հանգստացավ ու Իր օրինակով մարդուն թելադրեց նույնպես հանգստանալ և Իրեն երկրպագել ու ոչ թե Իր հաշվին ապրել»: Այդ պատճառով էլ Աստված քո ուխտը ընդունելի չհամարեց և նվիրածդ գորգերը այրվեցին ու մոխրացան»:*

Ամեն բարիքի հիմքը՝ Աստվածպաշտությունն է: Աստծուն տրված ամեն տեսակի նվերներ անարժեք են դառնում, երբ դրանք Նրան երկրպագելու փոխարեն են ձեռք բերվում, նման այն հավատացյալ մարդու գորգերին, որոնք կրակից մոխրացան: Հիշենք Աստվածաշնչից Աբելի ու Կայենի ընծաների պարագան: Աբելի *ընծան մաքուր, սուրբ, անարատ և անխարդախ էր*, իսկ Կայենինը՝ դրա հակառակը: Դրա համար Աբելի ընծան ընդունվեց Աստծու կողմից, իսկ Կայենինը՝ ոչ: Ի՞նչ պատահեց: Կայենը ատելությունից կուրացած, նախանձեց ու սպանեց իր եղբորը:

Այս պատմությունը լսելուց հետո, մենք իբրև վաճառական, արհեստավոր, արվեստագետ և կամ այլ մասնագիտություն ունեցող հավատացյալ մարդիկ, պիտի համարձակվե՞նք դիպչել Աստծու Դրամապանակին: Վաճառականի նվիրած գորգերը այրվեցին ու մոխրացան: Վերջապես ե՞րբ պիտի սովորենք պատմությունից դասեր քաղել:

Կարծում եմ ամեն ինչ ավելի քան հստակ է, Կիրակին Աստծու օրն է: Եկեք այդ օրը աղոթենք ու նվիրենք Նրան, որպեսզի հաջորդ օրերը Աստված մեր գործերին հաջողություն տա և մեզ առողջ պահի; Կիրակի օրերի հանգստով միասնաբար փորձենք լցնել Աստծու Դրամապանակը՝ մեր սիրով, հավատով և արդար ու մաքուր կյանքով: Ամեն:

ԻՄ ԽՈՍՔԵՐԸ ՃՇՄԱՐԻՏ ԵՆ

«Երկինք և երկիր պիտի անցնեն, բայց իմ խոսքերը չպիտի անցնեն« (Մատթ. 24:35):

Մատթեոսի Ավետարանի 24-րդ գլխի 35 համարից է այս խոսքը, ուր մեր Տերը խոր և ուժեղ արտահայտությամբ հայտարարում է, որ երկինքն ու երկիրը մնայուն չեն, իսկ Իր խոսքը, ճշմարտությունը և Աստծու հայտնությունն են, որ հավիտենական են:

Ինչպես հայտնի է բոլորիս, Հիսուսի խաչափայտը դարեր շարունակ կորած էր: Չորրորդ դարի սկզբին Կոստանդիանոս կայսեր մոր՝ Հեղինե թագուհու կողմից այն գտնվել է աղբանոցում: Ըստ ավանդության՝ երեք նույնանման խաչեր են հայտնաբերվում և, որպեսզի հայտնի լինի, թե ո՞ր խաչափայտն է Հիսուսինը, մահացած մի պատանու մարմինը հերթով դնելով նրանց վրա, նրա կենդանությամբ գտնում են Տիրոջ խաչափայտը:

Եկեք մի պահ գնանք երկու հազար տարիներ առաջ և տեսնենք, թե ի՞նչ ունեին առաջին դարի քրիստոնյաները իբրև քարոզության ուժ և միջոց: Գիտությո՞ւն, հարստությո՞ւն, քաղաքական ո՞ւժ, իշխանությո՞ւն: Ոչ մեկը, ինչ որ ունեին, իրենց հավատացած ճշմարտությունն էր, իրական և ճշմարիտ խոսքն էր, որը նիզակից, սրից ու զենքից ավելի ուժեղ էր:

Այդ խոսքն ամփոփվեց նաև գրի մեջ, որը ճանաչվում է իբրև Սուրբ Գիրք՝ Աստվածաշունչ: Սուրբ Գիրքը այն ուժն է, որով քրիստոնյաները կարողացան աշխարհում Աստծու ճշմարտությունն արտահայտել գրի ու գրականության և արտասանված խոսքի միջից:

Ամեն տարի մեր Եկեղեցին ոգեկոչում է Թարգմանիչ Վարդապետների հիշատակը՝ գլխավորությամբ

Սուրբ Մեսրոպ Մաշտոցի: Մեր այբուբենը ծնվեց Աստծու խոսքի, ուժի նկատմամբ մեր ժողովրդի կարոտով և դրա գերագույն արտահայտությունը եղավ Սուրբ Մեսրոպ Մաշտոցը: Գտավ գիրը, որպեսզի Աստծու խոսքը թարգմանի, ժողովրդին տա՝ գրով կենդանացնելու համար: Ահա թե ինչու մեզ համար Աստվածաշունչը ամենանվիրական գիրքն է եղել ու է մինչև այսօր: Մեր հայրերը ամբողջ պատմության ընթացքում հայտարարեցին 5-րդ դարի Եղիշե պատմիչի խոսքերով՝ *«Մենք իբրև Հայր ճանաչում ենք Ավետարանը և իբրև Մայր՝ Եկեղեցին»:*

Հարց տանք մեզ, թե՝ *«Արդյոք մենք որդինե՞րն ենք այս ուխտի և հետևո՞ւմ ենք մեր հայրերի օրինակին»:*

Եթե մեր պատասխանը ոչ է, ապա ո՞ւր է մեր որդիական սերը, ինչո՞ւ դարեր շարունակ հայտարարեցինք այս խոսքերն իբրև Եկեղեցու կյանքի նշանաբան: Եկեք դառնանք իսկական զավակներն այդ սուրբ ծնողների՝ Ավետարանի և այն կենդանի կերպով մեր ժողովրդի մեջ թարգմանող ու տարածող Հայ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Գիրը Սուրբ Գիրքը չէ, այլ ավելին է, քան գիրը: Հոգին է, որ արտահայտվում է գրի միջից: Պողոս առաքյալն ասում է. *«Օրենքը, որ գիր է, սպանում է, իսկ հոգին՝ կենդանացնում» (Բ. Կորնթ. 3:6):* Ավետարանին մոտենալիս մեր ժողովուրդը համբուրում է ոչ թե արծաթը, մագաղաթը, այլ հաղորդվում է այդ հոգու հետ, որն այդ գրի, մագաղաթի միջից փոխանցվել է մեզ բոլորիս Քրիստոսից, մեր հայրերի զոհողության ու նահատակության ճանապարհով: Սուրբ Գիրքը պետք է կարդալ՝ այդ հոգու հետ հաղորդակցվելու, այլ ոչ թե գիտականորեն քննելու համար, այսինքն՝ այն պետք է կարդալ հավատով: Պողոս Առաքյալը Կորնթացիներին ուղղած իր թղթում ասում է. *«Քանզի նման չենք ուրիշների, որ Աստծու խոսքի*

վաճառքով են զբաղվում, այլ իբրև անկեղծ մարդիկ, իբրև Աստծու կողմից ուղարկվածներ, խոսում ենք Քրիստոսով Աստծու առաջ» (Բ. Կորնթ. 2:17):

Փառք ենք տալիս Աստծուն, որ մեր ժողովուրդը իմաստությամբ կարողացավ գործնական հողի վրա արժեվորել Ավետարանը և նրա ճշմարտությունները գրի միջոցով սփռել մեր երկրում:

Աշխարհում ինչքան երկրներ քանդվեցին ու կործանվեցին, ինչքան եկեղեցիներ, պալատներ, դղյակներ, գրքեր, ձեռագրեր ոչնչացվեցին, սակայն Աստծու խոսքը միշտ կենդանի մնաց:

Երջանկահիշատակ Վազգեն Վեհափառի այս հրաշալի խոսքերը կարծես ճիշտ այսօրվա համար ասված լինեն. *«Հայե՛ր, սի՛րտ առեք, սգի, աղոթքի առաջ ժամից հետո, դարձե՛ք արևին ու արիացե՛ք: Միացե՛ք սիրով սեպուհ ազգի, եղե՛ք միաբան, մեկ կամք, մեկ հոգի, ձեռք-ձեռքի՛ տվեք, հաստա՛տ մնացեք հայոց աշխարհի սեգ լեռների պես և ձեր հայացքը Վեհամայր Մասիսներն ի վեր՝ կրկին ուխտեցե՛ք հավատարիմ մնալ հայոց պատմության, հայոց ազգության և հավիտենական Մայր Հայաստանին»:*

Եկե՛ք Վեհափառ Հայրապետի այս խոսքերը իբրև առաջնորդող ոգի ունենալով՝ մեր ոսկեդարի Հայրերի նման Աստվածաշունչը փոխադրենք մեր կյանքի մեջ և այն համարենք մեր ուղեցույցը, որպեսզի նրա շնչով ավելի զորանանք մեր հավատքի մեջ, ուժ առնենք ու լցվենք սիրով մեկս մյուսի նկատմամբ: Ամեն:

ԲԱՐԻՔԻՑ ՉԱՐԻՔ ԿԼԻՆԻ՞

«Ով խփում է քո ծնոտին, նրան մյո՛ւսն էլ մոտեցրու» (Ղուկ 6:29):

Լսել եք անշուշտ, որ չարիքից բարիք է լինում, սակայն բարիքից չարիք լինո՞ւմ է: Հարցը բավական դժվար է, քանի որ ապացուցված պատասխան տալը այդքան էլ հեշտ չէ: Հաստատ ասված «այո»-ն կարող է նշանակել, թե ինչ որ տեղ մենք վստահ ենք մեր պատասխանի մեջ, այսինքն՝ մեր կատարած գործը մի բարիք է և երկրորդ՝ թե այն երբեմն կարող է մեզ առաջնորդել դժբախտության: Հնարավոր է և բացառված չէ:

Մեր առօրյա կյանքում մարդիկ այնպես են մտածում, թե նույնիսկ իրենց թշնամուն անգամ կարող են նվաճել նրան բարիք կատարելով և նա կպարտվի մարդասիրական ուժի դիմաց, կթուլանա և զինաթափ կլինի բարիքի քաղցրությունից ու քնքշությունից:

Մեր Տերը՝ Հիսուս, իբրև Աստծու Որդի չարիքին բարիով պատասխանելու խրատն ու հորդորն էր տալիս Իր հետևորդներին, ասելով. *«Ով խփում է քո ծնոտին, նրան մյո՛ւսն էլ մոտեցրու»:* Սա կարելի է ասել ինքնին չարին պարտության մատնելու մի ռազմամիջոց է: Պետրոս Առաքյալն էլ նմանատիպ մի խոսք ունի այս մասին. *«Չարի փոխարեն չար մի՛ հատուցե՛ք, կամ նախատինքի փոխարեն՝ նախատինք, այլ, ընդհակառակը, օրհնեցե՛ք, որովհետև այդ բանին իսկ կոչվեցիք, որպեսզի ժառանգեք օրհնությունը» (Ա. Պետրոս 3:9):*

Երբ մարդուն դժբախտություն կամ անհաջողություն է պատահում, նրան հանգստացնելու և խաղաղեցնելու համար ասում են. *«Մի՛ մտածիր, ամեն չարիքի մեջ մի բարիք կամ մի լավ բան կա»:* Հավանաբար այս խոսքը

ասվում է այն ժամանակ, երբ բարիքից չարիք կարող է առաջանալ և նույնիսկ զարմանք պատճառել:

Որպեսզի ավելի հասկանալի լինի կարծում եմ այս պատմությունը հետաքրքիր է.

«Նորապսակ մի զույգ ավանակի (էշի) վրա նստած ճանապարհորդում է (Հին ժամանակներում լավագույն փոխադրության միջոցներից մեկը այդ էր): Ճանապարհին նրանց մի կույր է հանդիպում: Հարսը խղճալով նրան, օգնելու նպատակով ամուսնուն խնդրում է, որ նրան վերցնեն, նստեցնեն ավանակի վրա ու տանեն: Ամուսինը ավելի փորձված լինելով չի ուզում վերցնել, սակայն վերջապես հարսի խնդրանքներին ընդառաջելով կույրին նստեցնում են ու իրենք էլ ոտքով շարունակում իրենց ճանապարհը: Երբ մոտենում են քաղաքին, կույրը մարդկանց ձայներ լսելով, սկսում է բարձրաձայն բղավել, թե իրեն ընկերակցող երիտասարդը ցանկանում է իրեն կողոպտել, առևանգելով իր կնոջն ու ավանակին: Մարդիկ հավաքվում են, բնականաբար հավատում են կույրին ու նրանց տանում քաղաքի դատավորի մոտ; Կույրին օգնող մարդիկ վկայություն են տալիս, որ իրապես երիտասարդը նրան կողոպտելու ցանկություն ուներ: Սակայն դատավորը լսելով երիտասարդ զույգի լացակումած աղաչանքները ու նրանց ասածների հակառակ խոստովանությունները, չի հավատում կույրին ու նրանց երեքին փակում է առանձին սենյակներում: Գիշերը առաջինը նա մոտենում է հարսի դռանն ու լսում, որ նա զղջում է իր ամուսնուն չլսելու և կույրին օգնած լինելու համար. երկրորդ՝ մոտենում է ամուսնու դռանը ու լսում, որ նա զղջացել է իր կնոջը լսելու և մարդասիրական օգնություն ցույց տալու համար, ապա մոտենում է կույրի դռանն ու լսում նրա խոսքերը. «Այսպես թե այնպես, շահավոր պիտի դուրս գամ այս դատից, կամ կնոջը պիտի տան կամ ավանակը…»: Դատավորը այս

լսելուց հետո, հասկանում է եղելությունը, նրանց անմիջապես հանում է սենյակներից, կնոջն ու ավանակին վերադարձնում երիտասարդին, իսկ կույրին պատժում է ոտքերի տակ գավազանի երեսուն հարված նշանակելով»:

Այս պարագայում ի վերջո ճիշտ է բարին է հաղթում, սակայն պատմությունը ցույց է տալիս, որ ժամանակավորապես չարը ևս հաջողություն է ունենում իր ծրագրերը իրագործելու ճանապարհին: Մինչև դատավորի ճշմարտությունը բացահայտելը, մարդիկ համոզված էին, թե կույրը անմեղ ու արդար է, քանի որ մտածում էին, թե Աստված արդեն իսկ նրան պատժել է կույր ստեղծելով, մի տեսակ խղճահարություն ունենալով նրա նկատմամբ, սակայն հետո հասկացան նրա անխիղճ ու անարդար լինելը և գտան, թե նա արժանի է դատավորի նշանակած պատժին;

Մեր ամենօրյա կյանքում կարող ենք բերել բազմաթիվ օրինակներ, երբ մարդիկ տուժում են իրենց կատարած բարի գործերի համար: Բարիքից չարիք կարող է լինել, քանի որ նրանք այս կյանքում քույր և եղբայր են ու տխրությունը և ուրախությունը խորհրդանշում են նույն սրտի երկու մասերը;

Բարության աղբյուրը Աստված Ինքն է և Իր օրինակով է, որ մարդիկ բարիքներ են կատարում իրենց նմանների նկատմամբ: Սակայն հաճախ կատարված բարիքից առաջացող չարիքն է, որ նվազեցնում է բարեգործների ուժը, նրանց զգուշացնելով վերահաս վտանգներից:

Այս պատմության նման այսօր էլ շատ ու շատ դեպքեր են կատարվում, օրինակի համար կարծեցյալ մուրացկանին մոտեցող քանի՛ քանի՛ երեխաներ են առե-

վանգվել ու անհետ կորել մեծ վիշտ պատճառելով նրանց բարիք գործելու խրատող ծնողներին;

Ամերիկյան քաղաքների ներկա իրականության մեջ դժվար է նույնիսկ կողմնորոշվել մի աղքատի օժանդակություն ցուցաբերելու հարցով, երբ նկատի ունենանք նրան տված նյութականի օգտագործման նպատակը: Վատ մոլությունների մեջ ընկնելով անտուն մնացած մուրացկաններից շատերը մարդկանց կողմից նվիրաբերված գումարները հաճախ չեն ծառայեցնում բուն նպատակին, այլ օգտագործում են թմրադեղերի ու ոգելից խմիչքների գնման համար: Կան մարդիկ, որոնք ավելի մարդասիրական մոտեցում են ցուցաբերում, նույնիսկ իմանալով այս մասին, նրանք մի տեսակ սա օգնություն են համարում, որպեսզի մուրացկանները բավարարեն իրենց մոլության ցանկությունը՝ չտառապեն ֆիզիկապես և հոգեպես: Այսինքն՝ *«Նա էլ մարդ է և պետք ունի օգնության, որ իր հաճույքը կարողանա բավարարել, թեկուզ բացասական և ժխտական իմաստով»:* Հետաքրքիր մոտեցում է և առիթ է տալիս մեզ մտածելու այս մասին: Սա նման է այն վիճակին, երբ բժիշկը իմանալով հանդերձ, որ հիվանդը ծխելու պատճառով տառապում է քաղցկեղից, նրան թույլատրում է օրական մի հատ ծխախոտ ծխել, հաշվի առնելով, որ տարիների ընթացքում նրա վարժված մարմինը խոր պահանջ ունի…

Այո՛, բարիքից չարիք է լինում, ինչպես նաև չարիքից՝ բարիք: Սակայն իմաստությունը կայանում է այս երկուսի հավասարակշռությունը պահպանելու մեջ, այսինքն՝ պիտի կարողանանք շրջահայաց և չափավոր լինել:

Յուրաքանչյուր մարդ թող ինքնիրեն հարց տա, արդյոք կարո՞ղ է այնքան արթուն լինել, որ ուրիշները չկարծեն, թե անհասկացող ու թույլ մեկն ենք: Որպեսզի

այսպիսի մեկը չկարծեն քեզ, փորձիր չափավորել կատարածդ օժանդակությունները, ինչո՞ւ չէ քննելով նաև դրանց հետևանքներն ու ազդեցությունները շրջապատիդ կյանքի վրա:

Ահա բարիքի արմատը, որի աղբյուրը, լավ հիշի՛ր և մտաբերի՛ր, բանականության ծնողն է՝ Աստված:

Նոր Կտակարանում Հիսուս պատմում է Բարի Սամարացու մասին (Ղուկ. 10:29-37): Մոտավորապես այսպիսի պատմություն էլ սա է.

«Աղքատներից մեկը ամեն օր տեսնում է մի հարուստ ու բարի մարդու, որն անցնում է իր գեղեցիկ ձիու վրա նստած: Նա այնքան է հավանում այդ ձիուն, որ երևակայությամբ պատկերացնում է, որ այն իրենն է;

Մի հարմար առիթով նա տեսնելով, որ ձիավորը գալիս է, հիվանդ ձևանալով ընկնում է գետնին և օգնություն խնդրում հարուստից: Ձիավորը բարի մարդ լինելով, անմիջապես ձիուց իջնում է և փորձում օգնել հիվանդին: Գետնին փռված գողը, սակայն, հանկարծ արագ վեր է կենում, ցատկում ձիու վրա ու սկսում է քշել: Ձին կորցնող մարդը նրա ետևից կանչում է, որ կանգնի ու լսի իրեն: Գողը կանգնում է բավական հեռավորության վրա ու սպասում հարուստի խոսքին. «Նժույգիս նմանը չկար այս քաղաքում և դու այն գողացար,- ասում է հարուստը,- թող քոնը լինի ու բարով վայելես, սակայն մի՛ խնդրանք ունեմ քեզանից, այն, ինչ որ ինձ արեցիր, ուրիշին մի՛ պատմիր, որովհետև կարող է պատահել, որ իսկական մի հիվանդ օգնության կարիք ունենա և գետնին ընկած լինի ու ոչ մեկը նրան չմոտենա, կարծելով թե նա ձևացնում է, որ հիվանդ է» :

Դժբախտաբար շատերը կան, որոնք բարի գործերից ավելի իրենց հասցրած չարիքներն ուրիշներին պատմելով՝ հպարտանում են: Հատկապես դրամական գործարքների մեջ

եղող անձինք, իրենց կտրիճ կարծելով, կուրծք են ծեծում հպարտանալով, թե այսինչ կամ այնինչ անձից այսքան դրամ են կորզել: Մանավանդ և առավելապես, եթե դա տեղի է ունեցել մի հարուստ մարդու հետ, տասի տեղ հարյուր շահած լինելու մասին են պատմում ու կարծում են, թե դա մեծ հաջողություն է իրենց համար:

Փոխադարձ վստահությունը ամուսինների, ընկերների ու բարեկամների միջև, եթե առողջ հարաբերություն կարող է ստեղծել, պետությունների ու ազգերի միջև էլ խաղաղ պայմանների ծնունդ կտա, որից կարող են օգտվել բոլորը: Այդ վստահության պահպանման համար պատասխանատու ենք բոլորս, որը կարող է ստեղծվել ու պահպանվել անկեղծությամբ և սիրով: Ձիավորին խաբող սուտ հիվանդները ավելի շուտ են աճում ու բազմանում, երբ գողերը պատմում են իրենց *«հաջողակ»* արարքների մասին;

Արդյոք դու, սիրելի եղբայր, որ կարդում ես իմ այս խոսքերը, ուրիշներին պատմո՞ւմ ես քո կատարած «քաջագործությունների» ու չարիքների մասին: Եթե այո՛, սխալ ես անում: Նայի՛ր ուշադիր շուրջդ, փնտրի՛ր ու կտեսնես, որ բազմաթիվ այլ պատճառներ և առիթներ կարող ես գտնել հպարտանալու և ինքնասիրությունդ շոյելու համար: *«Չարիքներո՞վ» ու «ճարպկություններո՞վ»* պիտի հպարտանաս, ամոթ է, ուրիշ բան չմնա՞ց: Իմացիր, որ այդ բոլորի վերջը կործանում է: Սերը դարձրու քո ամենօրյա բարիքի աղբյուրը: Բարությունը չարության աղբյուր չի կարող դառնալ, եթե դեպքեր էլ կան, մեկ է, դրանք չեն կարող ստվեր գցել իսկական բարության կարևորության ու օգտակարության վրա: Ամեն;

ՆԵՐԵԼՈՒ ԵՎ ՍԻՐԵԼՈՒ ՈԳԻՆ

«Հայ՛ր, ների՛ր դրանց, որովհետև չգիտեն, թե ինչ են անում» (Ղուկ. 23:34):

Մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի խոսքերն են խաչի վրա: Պատկերացրեք, արյունլվա, չարչարված, տանջված, արհամարհված, ապա խաչված Հիսուս խնդրում է Իր Հորից, որ ների նրանց: «*Հա՛յր, ների՛ր դրանց, որովհետև չգիտեն, թե ինչ են անում*»: Ի՜նչ մեծություն: Նոր Տարվա և Սուրբ Ծննդյան Տոներն են, ուրախության և ցնծության օրեր: Հիսուս մեզ օրինակ է հանդիսանում, որ սիրենք ու ներենք մեկս մյուսին. կարո՞ղ ենք: Եթե չենք կարող, ինչպե՞ս պիտի շնորհավորենք միմյանց և սկսենք մի նոր կյանք Նոր Տարվա ընթացքում: Ինչպե՞ս կարող ենք Մանուկ Հիսուսի Սուրբ Ծննդյան Տոնը ողջունել. *«Քրիս-տոս Ծնաւ եւ Յայտնեցաւ», «Զեզ և մեզ մեծ ավետիս»* ասել, բարի լուր տալ, երբ չենք կարող սիրել և ներել մեկս մյուսին: Ի՞նչն է մեզ խանգարում, չէ՞ որ մենք քրիստոնյա ենք:

Հիսուս մեզանից ուղղակի պահանջում է կատարել Իր պատգամը և այն դարձնել մեր կյանքի ապրելու ձևը: Պատկերացրեք, եթե մեր հայրերն ու մայրերը իրենց զավակների հանդեպ ներողամիտ չլինեին, ի՞նչ պիտի լիներ այդ ընտանիքի վիճակը: Զղջումն ու ապաշխարությունը ներելու պայմաններն են: Մեղանչողին քանի՞ անգամ կարելի է ներել: Այս հարցը հուզում էր նաև Առաքյալներին, որոնք հարցրեցին Հիսուսին, թե՝ *«Տեր, քանի՞ անգամ, եթե եղբայրս իմ դեմ մեղանչի, պետք է ներեմ նրան. մինչև յո՞թն անգամ»:* Հիսուս պատասխանեց. *«Քեզ չեմ ասում թե՝ մինչև յոթն անգամ, այլ՝ մինչև յոթանասուն անգամ յոթը» (Մատթ. 18:21-22):*

«*Ինչո՞ւ ներել*» վերնագրով այս պատմությունը կարծում եմ հետաքրքիր կլինի:

«Թշնամիները հարձակվում են մի քաղաքի վրա: Բնակիչները փախչում են դեպի գետը՝ մյուս ափը անցնելու և փրկվելու համար: Ծանր քայլերով, քրտինքը երեսին գետին է մոտենում մի երիտասարդ՝ հսկա պարկը ուսին գցած: Ափի մոտ կանգնած փոքրիկ նավակի միջից մի մարդ այդ տեսնելով ասում է նրան.

Եղբայր, պարկդ թող ու մտիր նավակ, քանի որ այն կարող է միայն երկու մարդ տեղափոխել:

Երիտասարդը պատասխանում է.

Չեմ կարող իմ պարկը թողնել ու դրանից հրաժարվել, այն լցված է քարերով, որոնցով մեր քաղաքի բնակիչները ինձ հարվածել և ցավ են պատճառել: Ես դրանք հավաքել եմ ու մյուս ափ պիտի անցկացնեմ, որպեսզի դրանցով հարվածեմ ինձ ցավ պատճառողներին:

Եղբայր, դու այդպես և նավակը կխորտակես և մեզ՝ քո պարկի հետ միասին, դատարկիր այն ու նավակ մտիր:

Երիտասարդը պարկը դնում է գետնին, բացում նրա բերանը, հանում տարբեր չափի քարերն ու մինչև հիմա որոշում է, թե ի՞նչ մեծության քարերը թողնի պարկում... Այդ ընթացքում նավակը հեռանում է ափից ու երևում են թշնամիները: Երիտասարդը այնքան կուրացած էր վրեժխնդրությունից, որ նախընտրում է թշնամու ձեռքն ընկնել, նույնիսկ մեռնել, քան թե ներել իրեն ցավ պատճառողներին: Նրա մեջ խոսում էր վրեժ լուծելու և «արյունով արյունը լվալու» ցանկությունը: Ի՞նչ եք կարծում, ճի՞շտ էր նրա որոշումը:

Հոգևոր իմաստով պարկը շալակած Երկնքի Արքայություն մտնելը անհնար է... մանավանդ, երբ թշնամին մեղքի միջոցով

ներխուժել է մեր կյանքից ներս» (Հովհաննես Մանուկյան, «Առակներ», Երևան էջ 12):

Ցավոք այսօր ներման շնորհքը պակասում է մեր մեջ: Փոխանակ մտածենք այդ պակասը լրացնելու մասին, ամեն մեկս մի դատավոր դարձած այնպիսի ատելությամբ ենք լցված իրար նկատմամբ և այնպիսի դատեր ենք տեսնում, որ նույնիսկ անհավատ մարդկանց նախանձն են շարժում:

Եկե՛ք այս Նոր Տարվա և Սուրբ Ծննդյան Տոները առիթ ունենալով՝ ներենք միմյանց, ողջույն տանք իրար սիրով ու հավատով, իսկ եթե մեկը մեր հանդեպ սխալ է գործել կամ նեղացրել է մեզ, մենք չդառնանք վրիժառու ու գիշեր-ցերեկ մտածենք այս մասին, այլ թողնենք Աստծու հույսին, Նրա դատաստանին և հիշենք մեր Տիրոջ խոսքը. «*Իմն է վրեժխնդրությունը և ես կհատուցեմ» (Հռովմ. 12:19):* Մի՛ սպասեք խաղաղություն այնտեղ, ուր բացակայում է ներելու և սիրելու ոգին:

Մեղքը մի սև ամպ է, որը ստվերի մեջ է դնում Աստծուն, Նրան պահում ու հեռացնում է մեր տեսողությունից:

Աստված ներում է մեզ երկնքից, իսկ մենք երկրի վրա ապրելով պարտավոր ենք ներել մեր նմաններին: Ներման չափանիշը սերն է: Աստված սեր լինելով՝ անհունորեն ներում է:

Ինչո՞ւ չներենք մեր եղբորը, մի՞թե մենք Աստծուց ավելի մեծ ենք… *«Եթե դուք մարդկանց ներեք իրենց* հանցանքները, ձեր երկնավոր Հայրն էլ ձեզ կների» *(Մատթ. 6:14-15)*,- ասում է Հիսուս:

Ներենք միմյանց և ասենք. *«Խաղաղություն բոլորին»*: Ամեն:

ԿՅԱՆՔԻ ԻՄԱՍՏԸ

Ի՞նչ ենք փնտրում այս կյանքում
և ի՞նչ է կյանքի իմաստը

Պողոս Առաքյալը իր աշակերտ Տիմոթեոսին ուղղած երկրորդ նամակի 3-րդ գլխի 1-17 համարներում գրում է.

«Վերջին օրերին չար ժամանակներ պիտի գան, երբ մարդիկ պիտի լինեն անձնասեր, փողասեր, հպարտ, ամբարտավան, հայհոյող, ծնողներին անհնազանդ, անշնորհակալ, անմաքուր… մեծամիտ, ավելի շատ հեշտասեր, քան աստվածասէր…» (Բ. Տիմ. 3:1-4):

Այս խոսքերը կարդալուց հետո, ակամա մտածում ենք, թե մենք իբրև մարդիկ *«Ի՞նչ ենք փնտրում այս կյանքում և թե ի՞նչ է կյանքի իմաստը»:*

Քանի դեռ երիտասարդ ենք, ձգտում ենք կյանքը զգալ մեր ձևով, այսինքն՝ երազանքները իրականություն դարձնել. տքնաջան աշխատել, սիրել, սիրվել ու փորձել վայելել կյանքի բարիքները: Գլխապտույտ այս վազքի մեջ մենք ուզենք, թե չուզենք աճում ենք, ինչպես ասում են՝ *«հասակ»* ենք առնում և, երբ հասնում ենք մի տարիքի, ինքներս մեզ հարց ենք տալիս, թե՝ *«Ի՞նչ ենք արել ոչ միայն մեր ֆիզիկական մարմնի առողջության, այլ մանավանդ՝ մեր հոգու հասունության համար»:*

Հոգու նպատակը Քրիստոսին հասնելն է, որը հնարավոր է միայն հավատով ու աղոթքով: Քանի երիտասարդ ենք, ամեն ինչ անում ենք, որ մի բանի հասնենք. ոմանք հաջողություններ են ունենում և մեծ հարստություն են կուտակում, դառնում մեծահարուստ, ուրիշներ գիտության մեջ են առաջ գնում, իսկ ոմանք էլ համեստորեն շարունակում են իրենց կյանքը մշտապես փառք տալով Ամենակարող Աստծուն:

Նրանք ովքեր միայն նյութական հարստություն էին կուտակել և դարձել մեծահարուստ, հասկանում են, որ միայն դրամով ոչ մի արդյունքի չեն հասել, գիտությամբ առաջ գնացողները, հասկանում են, որ միմիայն գիտությամբ շատ բանի չես կարող հասնել: Իսկ նրանք, որոնք գոհացել են իրենց վաստակով և միշտ Աստծուն փառք են տվել ու օգնել իրենց նմաններին, ուրախ և գոհ են իրենց անցկացրած տարիների համար, որոնք լցրել են իմաստությամբ:

Այս պատմությունը կոչվում է « ԱՐԴԱՐ ՄԱՐԴԸ» կարծում եմ հետաքրքիր կլինի.

«Մի երիտասարդ ուխտել էր անմաքուր բան ամենևին չուտել և մի օր նա գնաց գետի եզրը ու տեսավ, որ ջուրը մի խնձոր է բերում: Երիտասարդը տված էր, առավ խնձորը ու կերավ, ապա միտքն ընկավ իր ուխտը և խղճմտանքով գնաց գետն ի վեր. գտավ մի այգի և իմացավ, որ խնձորն այդ այգուց էր: Երիտասարդն ասաց այգետիրոջ. «Ողորմիր ինձ և առ խնձորի գինը կամ արդար արա, որովհետև ես անմաքուր բան ամենևին չեմ կերել»: Եվ բուրաստանի տերն ասաց. «Կեսը, որ իմն է, քեզ եմ բաշխում և կեսը, որ իմ եղբորս է, նրան տեր չեմ: Եվ իմ եղբայրը հեռու է այստեղից վեց օրվա ճանապարհ»: Եվ երիտասարդը ճանապարհ ընկավ և գտավ այն մարդուն, ասաց. «Կամ առ քո կես խնձորի գինը և կամ ինձ բաշխիր»: Եվ մարդն ասաց. «Ո՛չ գինը կառնեմ և ո՛չ քեզ կբաշխեմ: Թե կուզես, որ քեզ բաշխեմ, ես մի աղջիկ ունեմ՝ որ <u>ո՛չ ականջ ունի և ո՛չ էլ լեզու և ո՛չ ձեռք և ո՛չ ոտք,</u> նրան կին առ, որ քեզ բաշխեմ»:

Երիտասարդն անճարացած առավ այդ աղջկան, և երբ առագաստ մտան, տեսավ, որ աղջիկը ամենևին առողջ էր: Եվ երիտասարդն աներոջն ասաց. «Ինչո՞ւ էիր ծաղրում քո աղջկան»: «Եվ նա ասաց. <u>Ես ճշմարիտ էի, որովհետև</u>

ծնված օրից իմ աղջիկը արեգակի լույսը երդիկից է տեսել և օտար մարդու ձայն չի լսել և օտարի հետ չի խոսել և ձեռքով մեղք չի շոշափել և ոտքը դռնից դուրս չի դրել: Եվ ես քեզ նման արդար մարդ էի ուզում, և ահա դու եկար»: (ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՅԳԵԿՅԻ, «Աղվեսագիրք», էջ 76):

Երբեմն մարդիկ ինձ հարց են տալիս. թե՝ *«Տեր Հայր, եթե գամ եկեղեցի, ի՞նչ կարող եմ ստանալ»:* Ես էլ անկեղծորեն պատասխանում եմ. *«Եկեղեցին քեզ պիտի տա հոգու հանգստություն և խաղաղություն, որը ոչ մի գումարով չես կարող գնել. իսկ դա կարծում ես քի՞չ է»:*

Ձեզանից շատերը ապրել են Խորհրդային Հայաստանում, ես՝ նույնպես: Դեռևս այդ տարիներից կարծես սովորություն էր դարձել և կամ կարելի է ասել ընդհանուր մտայնություն էր, թե եկեղեցի պիտի գնան միայն տարիքն առած մարդիկ: Անշուշտ սա սխալ մտածում է, երբեք էլ այդպես չի եղել: Պատանիները և երիտասարդները, որոնք դեռևս հասունացման շրջանում են գտնվում, ոչ թե պիտի խուսափեն եկեղեցի գալուց, այլ ընդհակառակը, եթե ուզում են հեռու մնալ կյանքի բացասական և ողբերգական մոլություններից, հաճախ պիտի գան եկեղեցի, որպեսզի գտնեն այն հարցերի պատասխանները, որոնք կօգնեն իրենց ճիշտ կառուցել կյանքը, ապրեն ոչ թե ժամանակավոր մարդկանց հաճելի կյանքով, որի ավարտը հուսախաբությունն ու հուսահատությունն է, այլ աստվածահաճո կյանքով, որը նշանակում է, թե նրանք երկնային կյանքը ապրում են երկրի վրա:

Քարոզիս սկզբում կարդացի Պողոս Առաքյալի խոսքերը. *«Վերջին օրերին չար ժամանակներ պիտի գան երբ մարդիկ պիտի լինեն անձնասեր, փողասեր, հպարտ,*

ամբարտավան, հայհոյող, ծնողներին անհնազանդ, անշնորհակալ, անմաքուր, անհաշտ, անգութ, բանսարկու, անժուժկալ, դաժանաբարո, անբարեսեր, մատնիչ, հանդուգն, մեծամիտ, ավելի շատ հեշտասեր, քան աստվածասեր, մարդիկ, որ ունեն աստվածպաշտության կերպարանք, սակայն ուրացել են նրա զորությունը»: Եթե մարդիկ, առավելապես երիտասարդները ավելի մոտ լինեն Աստծու Տանը, աղոթքով ու հավատով անցկացնեն իրենց տարիները, հեռու կմնան *անշնորհակալ, ծնողներին անհնազանդ, հայհոյող, անգութ, անմաքուր լինելուց և աստվածավախ ու բարի ժառանգներ կլինեն:*

Դժբախտաբար տարբեր տարիքի շատ մարդիկ այսօր գալիս են եկեղեցի միայն Ծնունդից Ծնունդ կամ Զատիկից Զատիկ և կամ այն ժամանակ, երբ խնդիրների ու դժվարությունների մեջ են ու այլևս ճար չունեն և վերջին հույսը եկեղեցին է կամ հոգևորականը: Եթե հասկանանք իր ժամանակին, կյանքում մեր կորցրածը ոչ մի տեղ չենք կարող գտնել, բայց եկեղեցում կգտնենք ամենամեծ գանձը՝ *«Հոգու խաղաղությունը»:* Հավատացեք ամեն մարդ հոգու խաղաղության կարիքն ունի, որը մեզ կարող է տալ միայն Աստված: Եկեղեցի գալով դուք լսում եք Աստծու ձայնը, որը կանչում է ձեզ դեպի Իրեն: Աստված բնակվում է բոլոր նրանց սրտերում, ովքեր լսում են Նրա ձայնը, փնտրում Տիրոջը, ձգտում դեպի այն ամենը, ինչով ապրում է Եկեղեցին:

Երանի այսպես լիներ, սակայն իրականությունն այլ է: Մեր օրերում հատկապես երիտասարդների համար դժվար է ապրել քրիստոնեական կյանքով, որը նշանակում է լողալ գետի հոսանքին հակառակ, որովհետև այսօրվա կյանքում *բարեգործությունը, բարությունը, մեծահոգությունը, սերը, հասկացողությունը, ազնվությունը* չասենք մոռացված, բայց մի կողմ թողնված կամ կարելի է

ասել մերժված արժեքներ են: Յուրաքանչյուր մարդ, սակայն, պետք է գիտակցի, առավելապես երիտասարդները, որ Եկեղեցին ժամանակավոր, կեղծ արժեքների մասին չի կարող քարոզել:

Հայաստանում և այստեղ ևս ես ականատես եմ եղել, որ մեր զավակները Եկեղեցի են գալիս միայն մոմ վառելու համար, շատ քչերն են, որ մնում ու մասնակցում են Սուրբ Պատարագի արարողության: Ասում են, երկար է, չենք հասկանում: Սրանք դատարկ խոսքեր են: Ես կարող եմ շատ օրինակներ բերել դրա հակառակը ապացուցելու համար, բայց այսօր դրա ժամանակը չի: Պետք է հասկանանք ու գիտակցենք, որ Եկեղեցին այն հոգևոր Տունն է, Աղոթքի Տունն է, որը օդի ու ջրի պես անհրաժեշտ է մեզ բոլորիս, մանավանդ այս օտար ափերում: Եկեղեցին չի ստիպում մեզ կտրվել աշխարհիկ կյանքից, կոչ չի անում ապրել միայնակ, անձը զրկել կյանքի վայելքներից ու չի վախեցնում դժոխքով և սատանայով, ինչպես անում են օտար ուսմունքի մոլորեցնողները, այլ՝ ընդհակառակը, ուրախացնում է Քրիստոսի բերած բարի ավետիսով: Այն հորդորում է մեզ լինել երկրի աղը և աշխարհի լույսը *(Մատթ. 5:13-14),* ինչը նշանակում է՝ ապրել այն բարձրագույն արժեքներով, որոնք մեզ ժառանգ են թողել մեր Տերը և մեր Սուրբ Հայրերը:

Պողոս Առաքյալը Տիմոթեոսին ուղղած իր երկրորդ նամակը վերջացնում է այս խոսքերով, որը հրաշալի օրինակ է մեզ բոլորիս, խոսքեր, որոնք երկու հազար տարի հետո էլ այժմեական են.

«Իսկ դու հետևեցիր իմ վարդապետությանը, իմ վարմունքին, կամեցողությանը, սիրուն, համբերատարությանը և այն հալածանքներին ու չարչարանքներին, որոնք պատահեցին ինձ Անտիոքում, Իկոնիոնում և Լյուստրայում. գիտես թե ինչպիսի հալածանքների ենթարկվեցի,

բայց Տերն ինձ փրկեց այդ բոլորից: Եվ բոլոր նրանք, որ ուզում են աստվածապաշտությամբ ապրել Քրիստոս Հիսուսով, հալածանքների մեջ պիտի լինեն: Իսկ չար ու խաբեբա մարդիկ չարից այն կողմ էլ պիտի գնան, իրենք մոլորված՝ պիտի մոլորեցնեն ուրիշներին: Բայց դու հաստա՛տ մնա այն բանի մեջ, որ սովորեցիր և որին հավատարիմ եղար, գիտես, թե ումից ես սովորել, որովհետև մանկուց գիտես Սուրբ Գրքերը, որոնք կարո՛ղ են իմաստուն դարձնել քեզ փրկության համար այն հավատի միջոցով, որ Քրիստոս Հիսուսի մեջ է» (Բ. Տիմ. 3:10-15):

Հետևենք Պողոս Առաքյալի խրատներին և շարունակենք մեր կյանքը մշտապես հավատարիմ մնալով մեր Սուրբ Հայրերի ճշմարիտ հավատին, հավատ, որը ավելի քան երկու հազար տարուց ի վեր դարձավ ամուր վահանն ու պաշտպանը մեր Հայրենիքի և մեր ժողովրդի: Ամեն:

ՀՐԵԱ ՕՐԵՆՍԳԵՏԻ (ՓԱՍՏԱԲԱՆԻ) ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

«Եթե այդ խորհուրդը կամ այդ գործը մարդկանցից է, կքանդվի, իսկ եթե Աստծուց է, չեք կարող դրանք ձախողեցնել. մի գուցէ աստուածամարտ էլ դառնաք»
(Գործք 5:38-39):

Այս խոսքերը ես վերցրել եմ Գործք Առաքելոցի 5-րդ գլխի 38-39 համարներից:

Գամաղիել անունով մի հրեա օրենսգետ հանձն առավ պաշտպանել Հիսուսի աշակերտներին, երբ քրիստոնեություն քարոզելու համար նրանց ձերբակալել էին: Իրապես իր գործին գիտակ օրենսգետը կարևորությամբ նկատի է առնում խնդրի երկու կողմերը և եթե հավատում է արդարության ու գործի մաքուր լինելուն, ամեն գնով փորձում է պաշտպանել արդարին: Ահա այդպես եղավ պարագան այս օրենսգետի հետ: Նա տեսնելով Հիսուսի աշակերտների կատարած հրաշագործությունները, հակառակ իր հրեա լինելուն, անվախ, համարձակորեն, օրենքի սահմաններից դուրս չելնելով՝ հանձն է առնում պաշտպանել նրանց իրավունքները:

Հիսուսի Հարությունից հետո որոշ ժամանակ անց, առաքյալները ստանալով Սուրբ Հոգու շնորհները, զբաղվեցին Ավետարանի քարոզչությամբ, ինչպես որ իրենց Վարդապետը Համբարձման լեռան վրա նրանց կտակ էր թողել. «*Գնացե՛ք ուրեմն աշակերտ դարձրե՛ք բոլոր ազգերին, նրանց մկրտեցե՛ք Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով…» (Մատթ. 28:19):* Բնական ձևով, ինչպես որ հրեաները Հիսուսին չարչարեցին, տանջեցին, փշե պսակ դրեցին Նրա գլխին և ապա խաչեցին, նույն ձևով պիտի վարվեին ու հալածեին Նրա հետևորդ առաքյալների հետ,

որոնք տաճարում քարոզում էին քրիստոնեությունը և մարդկանց դարձի բերում:

Եվ այդպիսի մի օր, երբ առաքյալները իրենց քարոզչական գործն էին կատարում, ձերբակալվում են ու բանտ տարվում, այն մեղադրանքով, որ նրանք իբրև թե խռովություն են սերմանում ժողովրդի մեջ: Երբ նրանք Քահանայապետի մոտ հարցաքննության են բերվում, Գամաղիել անունով մի հրեա ուսուցիչ, առաջ անցնելով պաշտպանում է առաքյալներին՝ ասելով. «*Արդ, ասում եմ ձեզ, հեռո՛ւ մնացեք մարդկանցից և բա՛ց թողեք նրանց, որովհետև եթե այդ խորհուրդը կամ այդ գործը մարդկանցից է, կքանդվի, իսկ եթե Աստծուց է, չեք կարող դրանք ձախողեցնել. մի գուցէ աստուածամարտ էլ դառնաք» (Գործք 5:38-39):*

Այդ քաջ և ազդեցիկ արտահայտությունը կատարողը Հիսուսին հավատացողներից մեկը չէր, սակայն որպես օրենսգետ, պաշտպանում է առաքյալներին, հակառակ, որ նրանք որևէ ձևով չպիտի կարողանային նյութապես վճարել նրան: Այսօր ոչ մի օրենսգետ երեսիդ չի նայի, եթե իմանա, որ հնարավորություն չունես նրան վճարելու իր ուզածի չափով: Իսկ Գամաղիելը ոչ միայն պաշտպանեց առաքյալներին, այլև նրան հաջողվեց համոզել դատական ատյանին նրանց չվնասելու և ազատ արձակելու: Շնորհիվ այս օրենսգետի, առաքյալները ազատվեցին և շարունակեցին իրենց քարոզչությունը. «*Ժողովականները հավանություն տվեցին նրան և առաքյալներին կանչելով, գանահարեցին նրանց ու պատվիրեցին, որ Հիսուսի անունով այլևս չխոսեն և արձակեցին նրանց» (Գործք 5:40),*- ասվում է Գործք Առաքելոց գրքում:

Քրիստոս արդեն իսկ գոյություն ունեցող օրենքի վրա հիմնեց Իր նոր կրոնը: Հիշեցե՛ք Իր խոսքը. «*Նոր պատվիրան եմ տալիս ձեզ, որ սիրեք միմյանց, ինչպես որ*

ես ձեզ սիրեցի. դուք էլ միմյա՛նց սիրեցեք: Եթե դուք միմյանց սիրեք, դրանով բոլորը պիտի իմանան, որ դուք իմ աշակերտներն եք» (Հովհ. 13:35): Սիրո այս նոր կրոնը հնի համեմատ ավելի ուժ ու եռանդ տվեց նրանց, որոնք ընդունեցին այն: Անշուշտ որ այն ժամանակվա պայմաններում քրիստոնեության տարածումը լուրջ սպառնալիք նկատվեց:

Գամաղիելը լինելով օրենքի մարդ, գիտակցեց և հասկացավ առաքյալների քարոզչության բուն էությունը, սակայն նրանց կատարածի մեջ որևէ սպառնալիք չնկատեց: Որպեսզի նա կարողանար փաստել իր պաշտպանության արդարացիությունը, ներկայացրեց անցյալից քաղաքական ապստամբության երկու օրինակ: Այդ երկու ապստամբությունը ունեցել էին մեծ թվով հետևորդներ: Երբ այդ շարժումների պարագլուխները՝ Թևդասն ու Հուդա Գալիլիացին *(Գործք 5:36-37)* սպանվեցին, նրանց հետևորդները ցրվեցին և իրենց շարժումները այլևս չշարունակվեցին: Սբ. Գրքում այսպես է գրված նրանց մասին, *«Ով՛ իսրայելացիներ, զգո՛ւյշ եղեք թե այս մարդկանց ի՞նչ պիտի անեք: Այս օրերից առաջ մեջտեղ ելավ Թևդասը, որն իր մասին ասում էր, թե ինքը երևելի մեկն է և նրան հարեցին թվով մոտ չորս հարյուր մարդիկ: Նա սպանվեց և բոլոր նրանք, որ նրա հետ միաբանել էին, բաժան-բաժան եղան, ու նրանցից ոչինչ չմնաց: Դրանից հետո, մարդահամարի օրերին, մեջտեղ ելավ Հուդա Գալիլիացին և շատ ժողովուրդ ապստամբեցրեց իր հետևից նա էլ կորավ, ու բոլոր նրանք, որ նրա հետ համաձայնել էին, ցիրուցան եղան» (Գործք 5:35-37):*

Ուստի Գամաղիելը եզրակացնելով ասում է, եթե Աստված կողմնակից էր Քրիստոսի հետևորդներին, հակառակ բոլոր դիմադրություններին ու հալածանքներին, նրանք հաջողություն պիտի գտնեին: Իսկ եթե առաքյալ-

ների սովորեցրածը մարդկային իմաստություն է միայն՝ առանց աստվածային օգնության, մտահոգվելու կարիք չկա, նրանք պիտի ձախողվեն և անհետանան, ինչպես պատահեց վերևում մեր հիշած շարժումների պարագային:

Իրապես Աստված մարդկանց հավատացողին կամ անհավատին շնորհել է պարզ մի տրամաբանություն, տեսնել և տարբերել լավը՝ վատից: Ուրեմն, մեր միտքն ու կամքն է, որ մեզ մոտեցնում է ընտրելու բարին կամ չարը: Երբ դեմ հանդիման ենք գալիս ճշմարտության, միայն այն ժամանակ ենք գիտակցում, թե ինչքան հեռու ենք նրանից:

Գամաղիելը տեսել էր քրիստոնեության տված արդյունքն ու բարիքը և նրա համար հետաքրքիր էր իմանալ այդ նոր օրենքի ու կանոնի լրացուցիչ հատկանիշների, իմաստի և իրագործելիության մասին: Ուստի այն բոլոր բժշկություններն ու հրաշքները, որոնք տեսել էր նրանց կողմից, իզուր տեղը չէին կատարվել: Սակայն նա հուսահատված էր և սաստիկ նեղված իր կրոնի ռաբբիներից, որոնք չէին կարողացել անել Հիսուսի առաքյալների կատարած աշխատանքի նույնիսկ կեսի չափը:

Այդ հրեա օրենսգետը Աստծու օգնությամբ գործածեց իր իմաստությունը և զգուշացրեց իր մարդկանց, որ չվնասեն քրիստոնեության քարոզիչներին: Պարզ խոսքերով նա բացատրեց, որ եթե քրիստոնեությունը սուտ էր, նա շուտով կձախողվեր, իսկ եթե Աստծուց, ոչ ոք չէր կարող լռեցնել, որովհետև նրա ետևում Աստված էր կանգնած:

Եկեղեցին իր հիմնադրությունից մինչև այսօր, գործում է Հիսուսի անունով: Եկեղեցին ժողովուրդն է, ապրող ու շնչող մարդիկ, որոնք ծառայելով և աղոթելով փորձում են գտնել դեպի Աստծու Թագավորությունը տանող ճանապարհը: Բայց ծառայելուց և աղոթելուց

առաջ, մարդիկ պետք է գիտակցեն ու հասկանան, թե ի՞նչ է ճշմարտությունը; Եթե չճանաչենք և չհասկանանք Աստծու ճշմարտությունը, շատ հավանական է, որ նույնիսկ կարող ենք Նրա դեմ գործել, ինքներս մեզ հավատացնելով, թե ծառայում ենք Աստծուն: Մեր մտածումները և գործերը պետք է համապատասխանեն աստվածային ճշմարտության: Այդ պարագային միայն մեր աշխատանքները լավ արդյունք կունենան: Մի պահ կանգ առնենք և հարց տանք մենք մեզ, թե արդյոք մեր գործերը համապատասխանո՞ւմ են ճշմարտության: Կարելի է ասել, թե ճշմարտությունը ճանաչելը ավելի անհրաժեշտ է, քան նույնիսկ այն հասկանալն ու բացատրելը: Մենք կարող ենք լավ ուսուցիչներ լինել մեր իմացածը բացատրելու կամ սովորեցնելու, բայց կարևոր է, որ հավատանք այդ ճշմարտության ու գնահատենք այն: Ավետարանի ճշմարտությունը իմանալու, հասկանալու և գնահատելու համար, այն ամեն օր պիտի կարդանք ու ոչ միայն պարզապես կարդանք կարդացած լինելու համար, այլ գործադրենք ու նույնիսկ սովորեցնենք լավ և բարի օրինակ հանդիսանալով ուրիշներին, որոնք դեռևս քայլում են խավարի մեջ:

Գամաղիելը՝ օրենքի այս բարի ուսուցիչը քննեց ու նկատի առավ այս բոլոր պարագաները և ապա նոր հանձն առավ պաշտպանել առաքյալներին՝ ճշմարտության քարոզիչներին ու քրիստոնեությունը:

Հիսուս մեզ սովորեցրեց ամենամեծ ճշմարտությունը՝ *«Սիրեցեք մեկդ մյուսին»,* օգնեցեք և աղոթեցեք մեկդ մյուսի համար ու Իր Վարդապետությունը հաստատեց Սիրո այս անքակտելի հիմքի վրա:

Եկեք մենք էլ մեր այս կարճ երկրային կյանքում հետևենք Սիրո պատվիրանին՝ մեր ընտանիքներից ներս, մեր շրջապատում և ամենուր ու փորձենք ապրել մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի, օրինակելի կյանքով՝ *արդար, մաքուր, ճշմարիտ և ուղիղ ճանապարհով,* որպեսզի կարողանանք նայել «*Աստծու աչքերին»*: Ամեն:

ՄՏԱԾԻ՛Ր ԵՎ ԳՈՐԾԻ՛Ր

«Քո առջև Տերը կրակ ու ջուր է դրել, որին կամենաս՝ կմեկնես քո ձեռքը» (Սիրաք 15:14-17):

Սիրաքի այս խոսքը հետաքրքիր է: *«Ի՞նչ է ուզում սրանով նա մեզ հասկացնել· ի՞նչ է նշանակում Տերը քո առջևդ կրակ ու ջուր է դրել»:* Իմ կարծիքով այս խոսքերով Սիրաքը ուզում է մեզ հասկացնել, թե մարդը Աստծու ամենակատարյալ էակն է, աշխարհում ստեղծված բոլոր բարիքներից ամենաուժեղն ու խելացին, քանի որ Աստված նրան տվեց այն, ինչից զրկեց կենդանիներին, բույսերին, ծառերին, այսինքն խելք, մտածելու կարողություն, խիղճ ու ազատ կամք, որով մարդը կարողանում է ինքը ընտրել լավն ու բարին, չարն ու վատը: Դժբախտաբար, շատ անգամ այդ նույն մարդը ընկնում է չարի ծուղակը ու զրկվում աստվածային շնորհներից: Դա գալիս է հավատի պակասից: Ում հավատը խորն է, նա նման է այն իմաստուն մարդուն, որն իր տունը կառուցում է ամուր ժայռի վրա և երբեք էլ չի մոլորվի չարի որոգայթներից: Ուրեմն, հասկանալի ու պարզ է, որ մարդուն տրված է մտածելու և կողմնորոշվելու կարողություն:

Այս պատմությունը դրա վառ ապացույցն է·

Մի ազգի մեջ սովորություն կար, ըստ որի իրենց արքան մեկ տարի միայն կարող էր թագավորել: Երբ տարին լրանում էր, նրան մերկացնում էին և աքսորում մի կղզի, որտեղ սովից ու ծարավից մեռնում էր և նրա փոխարեն մի ուրիշին էին թագավոր դնում ու այսպես շարունակ: Հետո մի խելոք մարդ նստելով գահին՝ մտածում է. «Իմ թագավորելու մեկ տարին երբ լրանա, անշուշտ ես էլ պիտի արժանանամ նույն վիճակին, ինչ որ իմ նախորդները: Նրանց պես ինձ էլ մերկ պիտի աքսորեն, բոլոր ունեցվածքս այստեղ պիտի մնա, իսկ ես այնտեղ քաղցած

ու ծարավ պիտի մեռնեմ: Դրա համար էլ քանի դեռ իշխանությունն իմ ձեռքում է, գանձարանիս հարստությունը և ունեցվածքս նախորոք ուղարկեմ այդ կղզին ու երբ թեկուզ մերկ էլ գնամ այնտեղ, որևէ հոգս չեմ ունենա»: Այսպես մտածելով իրեն հավատարիմ մարդկանց միջոցով սկսում է գանձարանի փողերն ու ունեցվածքը ուղարկել այդ կղզին: Շատ ուրախ էր, քանի որ հոգս չուներ, թե իրեն մերկ պիտի աքսորեն և մտատանջվեր, թե ունեցվածքը մնացել է այստեղ, ինչպես մյուս թագավորներինը: Ու մտածում է, թե այնտեղ սրանից ավելի լավ կյանք կվարի և այդ մտքից ավելի էր ուրախանում: Վերջապես, երբ տարին լրանում է, նախորդ թագավորների պես նրան էլ են մերկացնում և աքսորում այդ կղզին: Բայց ի տարբերություն մյուսների, այս թագավորը տխուր չէր և ուրախությամբ էր գնում, որովհետև հույսն իր հետ էր, չէ՞ որ նախորոք պատրաստություն էր տեսել և այնտեղ տուն կառուցել: Այնտեղ հաստատվելուց հետո, ուրիշ մարդիկ էլ է բերել տալիս ու բազմամարդ մի քաղաք կառուցում, իսկ ինքը առոք փառոք դառնում է նրանց թագավորը՝ մինչև իր կյանքի վերջը:

«Ի՞նչ է այս պատմության իմաստը, ինչպե՞ս կարելի է բացատրել»:

Ամեն մարդ իր անձի թագավորն ու իշխանն է, որովհետև Աստված մարդուն ազատ ստեղծեց, ինչպես Սիրաքն է ասում. *«Նա իսկզբանե մարդուն ստեղծեց և նրան թողեց իր իսկ կամքի ձեռքին… Քո առջև Տերը կրակ ու ջուր է դրել, որին կամենաս՝ կմեկնես քո ձեռքը»: (Սիրաք 15:14-17):* Բայց մահից հետո մարդը իր տերը չի և կամքն այլևս իր ձեռքում չի, այլ ապրողների, դրա համար, երբ մեռնենք, հիշյալ թագավորների պես շուտով մեզ էլ կմերկացնեն ու կուղարկեն Արքայություն կամ դժողք՝ ըստ մեր գործերի: *«Սիրաքի պես կրակն ու ջուրը առջևդ դրված է. կարող ես ուզածիդ պես ձեռքդ մեկնել: Ջուրն՝*

արքայության, իսկ կրակը՝ Դժողքի խորհրդանիշն է: Բայց պետք է, որ մահդ դեռ չեկած՝ այն խելոք թագավորի պես մտածես»: «Երբ ես մեռնեմ, այսքան ունեցվածքից ինձ կզրկեն ու մերկ դժողք կաքստրեն: Իսկ ողջ ունեցվածքս կմնա այստեղ: Երբ դժողք գնամ, մի կաթիլ ջրի կարոտ պիտի մնամ»:

Ավետարանում կա ևս մի պատմություն, որը Հիսուս Ինքը պատմեց՝ *«Աղքատ Ղազարոսի և մեծահարուստի» մասին: Այս պատմությունը կարող ենք կարդալ Ղուկաս ավետարանչի 16-րդ գլխի 19-31 համարներում:*

«Մի մեծահարուստ մարդ կար, որ բեհեզ ու ծիրանի էր հագնում և ամեն օր առատապես ուրախություն էր անում: Եվ Ղազարոս անունով մի աղքատ մարդ ընկած էր նրա դռան առաջ՝ վերքերով ծածկված:

Եվ ցանկանում էր լցնել որովայնը այն փշրանքներով, որոնք թափվում էին մեծահարուստի սեղանից: Եվ դեռ շներն էլ գալիս էին ու լիզում նրա վերքերը: Երբ աղքատը մեռավ, հրեշտակները նրան տարան Աբրահամի գոգը· մեծահարուստն էլ մեռավ և թաղվեց: Եվ դժողքում, մինչ սա տանջանքների մեջ էր, բարձրացրեց իր աչքերը, հեռվից տեսավ Աբրահամին և Ղազարոսին էլ՝ նրա գրկում հանգստացած: Եվ նա աղաղակեց ու ասաց· «Հա՛յր Աբրահամ, ողորմի՛ր ինձ և ուղարկիր Ղազարոսին, որ իր մատի ծայրը թրջի ջրով և զովացնի լեզուս, որովհետև այս տապից պապակում եմ»: Եվ Աբրահամը նրան ասաց· «Որդյա՛կ, հիշի՛ր, որ դու ստացար քո բարիքները այնտեղ, քո կյանքի ընթացքում, իսկ Ղազարոսն էլ՝ չարչարանքները· այժմ սա այստեղ մխիթարվում է, իսկ դու այդտեղ պապակում ես: Եվ այս բոլորից բացի, մեծ վիհ կա մեր և ձեր միջև: Եթե ուզենան այստեղից ձեզ մոտ անցնել, չեն կարողանա· ոչ էլ այդտեղից մեկը կարող է մեր մոտ անցնել»: Մեծահարուստն ասաց· «Արդ, աղաչում եմ քեզ,

հա՛յր, որ Ղազարոսին ուղարկես իմ հոր տունը,- որտեղ ես հինգ եղբայր ունեմ,- որպեսզի նրանց վկայություն տա, որ նրանք էլ չգան տանջանքների այս վայրը»: Եվ Աբրահամն ասաց· «Նրանք ունեն Մովսես ու մարգարեներ, թող նրա՛նց լսեն»: Եվ նա ասաց· «Ո՛չ, հա՛յր Աբրահամ, բայց եթե մեռելներից մեկը նրանց մոտ գնա, նրանք կապաշխարեն»: Եվ Աբրահամը նրան ասաց· «Եթե Մովսեսին ու մարգարեներին չեն լսում, մեռելներից մեկն էլ եթե հարություն առնի, չպիտի համոզվեն» (Ղուկաս 16:19-31):

Ընտանեկան մի հավաքույթ կար, որի ընթացքում զրուցում էի մի երիտասարդի հետ, որը մեքենա վերանորոգելու արհեստանոց ուներ (body shop): Այս արհեստանոցը բավական մեծ էր և երիտասարդը աշխատում էր իր երկու եղբայրների հետ: Խոսքի ընթացքում հարցրեցի, թե՝ *«Քանի՞ օր են աշխատում»:* Նա պատասխանեց՝ *«Յոթը օր»: «Իսկ ե՞րբ եք հանգստանում»,* իմ զարմացական հարցին, նա ծիծաղելով պատասխանեց· *«Այն աշխարհում կհանգստանանք»*: Ես էլ կես կատակ, կես լուրջ ասացի· *«Հետաքրքիր է, ես իբրև քահանա այսքան մարդկանց հետ գործ ունեմ, սակայն մինչև օրս մեկը այն աշխարհից չի եկել ու պատմել այնտեղի կյանքի մասին, ի՞նչ երաշխիք ունեք, որ այնտեղ լավ է: Եթե այստեղ, երկրի վրա, չեք կարողանում ձեր ժամանակն այնպես դասավորել, որ գոնե Կիրակի օրերը մի քանի ժամով Աստծուն փառաբանեք, ապա ի՞նչ կարող եք անել երկնքում, ուր Աստծու դատաստանը պիտի լինի, այսինքն՝ բոլորս էլ հաշիվ պիտի տանք մեր երկրի վրա կատարած գործերի համար»:* Երիտասարդը քմծիծաղ տվեց, հասկացավ, բայց թե ինչքանո՞վ հետևեց իմ խորհրդին, չգիտեմ: Փաստը մնում է փաստ: Մեր երիտասարդների մեծ մասը, չասելու համար բոլորը մտածում են միայն դրամ կուտակելու և հարստանալու

մասին, որը շատ ողբերգական է ու կործանարար, քանի որ միայն նյութը շահելով, դժբախտաբար հոգին են դատարկում:

Ի՞նչ եք կարծում, եթե այսօր Հիսուս գա, պիտի հավատա՞ն Նրան: Չգիտեմ ձեր պատասխանը ի՞նչ պիտի լինի, բայց իմ երկար տարիների քահանայական փորձառությունն ասում է, որ Նրան էլ չպիտի հավատան, քանի որ աշխարհը շատ քիչ բանով է տարբերվում երկու հազար տարի առաջ Հիսուսի ապրած ժամանակներից, երբ Նրան չհավատացին, այլ՝ ընդհակառակը մոլորված համարեցին, և ոչ միայն դա· այլ անմեղ, արդար ու մարդկանց բարիքներ արած Աստծու Որդուն չարչարեցին, տանջեցին, փշե պսակ դրին գլխին, ապա՝ խաչ բարձրացրին: Այո՛, դա այդպես է: Ո՞վ պիտի լսի Նրան, եթե գա· այսօրվա բռնակալնե՞րը, իրար սպանողնե՞րը, մանուկներին գայթակղեցնողնե՞րը, նույն սեռով իրար հետ ամուսնացողնե՞րը, հարազատ մայրերին բռնաբարող որդինե՞րը, դատարկ եկեղեցի-նե՞րը· ո՞ր մեկն ասեմ: Հիշենք Աստծու խոսքը Աբրահամին· *«Եթե քաղաքում (խոսքը Սոդոմ Գոմորի մասին է) տասը արդար մարդ գտնեմ, չեմ կործանի» (Ծննդոց 18:32-33):* Սոդոմ Գոմորի կործանման պատճառների պատմությունը կարող եք կարդալ Ծննդոցի 19-րդ գլխում: Եթե Աստված այսօր նույն հարցադրումը անի մեզանից յուրաքանչյուրին, պիտի կարողանա՞նք գտնել մի քանի արդար մարդ, որոնք ամբողջ սրտով, ամբողջ հոգով ու ամբողջ մտքով սիրում են Աստծուն: Եվ եթե չգտնենք, ի՞նչ է լինելու աշխարհի վախճանը՝ Սոդոմ Գոմո՞ր, Զրհեղե՞ղ, թե՞՝ ...

Ուրեմն այս անցողիկ կյանքում ի՞նչն է մնայուն ու արժեքավոր: Հիսուս տալիս է դրա պատասխանը·

«Վաճառեցե՛ք ձեր ինչքերը և ողորմություն տվեք· և ձեզ համար շինեցե՛ք չհնացող քսակներ և անհատնում գանձեր երկնքում, ուր ո՛չ գողն է մոտենում, և ո՛չ ցեցը՝ փչացնում. Որովհետև, ուր որ ձեր գանձն է, այնտեղ և ձեր սրտերը կլինեն» (Ղուկ. 12:33-34): Ամեն:

ՄԻ՛ ՏՐՏՆՋԱ, ԱՅԼ ՀՈՒՅՍ ՈՒՆԵՑԻՐ

«Տերը ում սիրում է՝ խրատում է, պատժում է ամեն մի որդու, որին ընդունում է» (Եբր· 12:6):

Ապրում ենք այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ մեր շուրջը մարդիկ կամա թե ակամա բողոքում են ու դժգոհում դժվարություններից և նեղություններից: Այո՛, կարելի է ասել նույնիսկ Ամերիկայի նման հզոր մի երկրում տնտեսական դժվարին մի ժամանակում ենք ապրում: Ժողովրդական հայտնի ասացվածք կա. *«Աստված ցավը, նեղությունը, դժվարությունը քարին տվեց, չտարավ, բայց մարդը՝ դիմացավ»:*

Երբ մարդը նեղության մէջ է, նրա վիճակն ավելի ծանր է դարձնում անընդհատ դժգոհելն ու տրտնջալը: Եկեղեցու հայրերից մեկն այսպէս է ասում. *«Սատանան միշտ կանգնում է մեր առաջ բաց բերանով, որ եթե Աստծուն անարգող, հայհոյող ու տրտունջ պարունակող բառ գցես, այն բռնելով նորից կգա, բայց եթե միշտ գոհություն մատուցես Աստծուն, քաղցի կմատնես նրան և կստիպես փախչել»:*

«Չե՞ս կարող լռել,- խորհուրդ է տալիս Սուրբ Հովհան Ոսկեբերանը,- *ասա, բայց ոչ հայհոյանք, այլ շնորհակալություն, բողոքի փոխարեն՝ օրհնություն: Աղաղակիր Տիրոջը, գոչիր՝ Նրան փառաբանելով: Դրանից և տանջանքդ կթեթևանա, քանի որ երախտագիտության հետևանքով սատանան կփախչի և Աստծու օգնությունն էլ արագ կհասնի քեզ»:*

Մենք երկու հազար տարուց ավելի քրիստոնյա ենք, հակառակ դրան պատմության ընթացքում ավելի հաճախ ենք փորձությունների ենթարկվել, քան այլ հեթանոս ազգեր, որոնք տիրողի ու թագավորողի դիրքում են եղել: Առանձին վերցրած՝ սա կարելի է ասել նաև անհատ

մարդկանց մասին: Ո՞րն է սրա պատճառը: Երբ այս մասին հարցնում են փորձառու մի հավատացյալի, նա ասում է. *«Տեսե՞լ եք, թե ինչպես է որսորդը թռչուններ որսում. որոնք արդեն սպանված-ընկած են, նրանց այլևս ձեռք չի տալիս, որովհետև գիտի, որ դրանք իրենն են, և ընկնում է կենդանի թռչունների ետևից: Ահա այդպես էլ սատանան երբեք չի պատերազմում մեղքի մեջ կորածների, անհավատների հետ, որովհետև գիտի, որ իրենն են և տարբեր փորձութիւններով պատերազմում է հավատացյալների դեմ՝ նրանց հոգիները կորստյան մատնելու համար»:* Աստված, սակայն, մենակ չի թողնում իր հավատացյալին և սատանայի փորձություններն ու դժվարությունները փոխակերպում է մարդկանց օգուտի համար ավելի լավ վիճակների, որպեսզի նրանց հայացքը դարձնի դեպի երկինք:

Սրբերի պատմությանը ծանոթանալիս, տեսնում ենք, որ նրանք ենթարկվել են ահավոր չարչարանքների: Այսօր էլ կան շատ մարդիկ, որոնք նյութական և կամ այլ զանազան նեղությունների ու դժվարությունների մեջ են: Սկիզբում իբրև բնաբան օգտագործեցի այս խոսքը. *«Տերը, ում սիրում է՝ խրատում է, պատժում է ամեն մի որդու, որին ընդունում է»:* Ավելի պարզ, նշանակում է Աստված ում որ սիրում է, նրան նեղություններ եւ դժվարություններ՞ է տալիս, որպեսզի տեսնի, այդ հավատացյալը կամ անհատը պիտի կարողանա՞ դիմանալ: Երևի ձեզանից շատերը նույնիսկ կարող են վրդովվել Աստծու այս տեսակ վերաբերմունքից: Ինչպես թե, ուրեմն Աստված մեր հավատը կասկածի տա՞կ է դնում: Անշուշտ՝ ո՛չ: Գիտեմ, որ բոլորս էլ, ես էլ մեջը լինելով, ուզում ենք, որ մեզ հետ միշտ միայն լավը լինի, մանավանդ, եթե Աստծուն սիրում ու հավատարիմ ենք: Ոմանք դժգոհում են, որ ճոխությամբ չեն ապրում: Եկեք նայենք, թե ինչպես է վարվում այգեգործը: Նա թույլ չի տալիս, որ ծառը փարթամությամբ աճի.

գարնանը կամ աշնանը թեթևացնում է ծառի ճյուղերը, որպեսզի այն առողջ լինի, շատ բերք տա և երկար ապրի: Ճիշտ նույն կերպ էլ Աստված որոշ զրկանքներով մարդուն կատարելության է հասցնում ու հետո շնորհում բարիքներ:

Սուրբ Հովհան Ոսկեբերանն ասում է. «*Չկա բարի կամ արդար մարդ առանց մեղքի և չկա վատ մարդ առանց առաքինության»:* Այնուհետև շեշտելով, որ մարդու բնությունն Աստծու կողմից չար չի ստեղծվել, ասում է. *«Ոչխարը չի կարող վայրենի լինել, իսկ գայլը՝ հեզ, որովհետև նրանց բնությունն է այդպես, իսկ մարդը մեկ լինում է չար, մեկ՝ հեզ, որովհետև օժտված է ազատությամբ և հետևաբար չարը բնությունից չէ»:*

Հասկանալի է և նույնիսկ ընդունելի, որ Աստված մեղավոր մարդկանց նեղություններ ու դժվարություններ է տալիս, որպեսզի նրանք խրատվեն: Երանի խրատվեն: Բայց այդ դեպքում, ազնիվ, արդար, հավատով մարդիկ և մանավանդ սրբերը ինչո՞ւ են չարչարվել ու մինչև այսօր չարչարվում են, ի՞նչ է նրանց մեղքը: Պարզ մարդիկս երբեմն չարչարվում ենք, որպեսզի մեղքերից սրբվենք, իսկ սրբերը… նրանք չարչարվում էին արդարություն և պսակ ընդունելու ու այդ միջոցով իրենց մեծագույն սերը ցույց տալու Աստծու հանդեպ: Եթե ձեզանից շատերը նեղություններ ու դժվարություններ ունեն, թող չմտահոգվեն և չհուսահատվեն ու չկարծեն, թե Աստված մոռացել է իրենց: Նեղությունները երկու տեսակ են լինում՝ *հավատացյալների և անհավատների: Հավատացյալները լցված են հույսով և համբերությամբ, իսկ անհավատները՝ հուսահատությամբ: Հավատացյալները ավելի հանգիստ են մեռնում ու փառքի մեջ, քանի որ սովորել են այն խոսքը. եթե Քրիստոսի չարչարանքներին մասնակից են, Նրա փառքին էլ հաղորդակից պիտի լինեն, իսկ անհավատների*

պարագային նեղության դեպքում նրանց հանգիստ և փառք չկա: Հովսեփ Գեղեցիկի օրինակը մեզ կարող է մխիթարել, քանի որ նա բանտ նետվելով հույսով և համբերությամբ կրեց բոլոր նեղություններն ու վերջում հասավ մեծ փառքի և հանգիստ ու խաղաղ կյանք ունեցավ:

Մենք էլ իբրև Աստծուն սիրող և փառաբանող մարդիկ, չտրտնջանք ու չդժգոհենք մեր կյանքից, այլ հույսով լի կրենք մեր խաչը և այնպես ապրենք ինչպես Նա՛ է մեզ պատվիրել ու կտեսնենք, թե ինչպես աստվածային օրհնությունը և սերը լցվում են մեր սրտերից ու մեր ընտանեկան հարկերից ներս: Ամեն:

ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

«Ձքոյս ի քոյոց, քեզ մատուցանեմք».
«Չէ՞ որ քոնն է ամեն ինչ, և քեզնից ստացածն է,
որ տալիս ենք քեզ» (Ա. Մնաց. 29:14) և
Պատարագամատույց

Գոյապահպանման ու գոյատևման հրամայականն է՝ հին և նոր սերունդի սկզբունքային ներդաշնակությունն ու համաձայնությունը:

Բնական է ակնկալել, որ ուսյալ ու զարգացած երիտասարդները իրենց նյութական և բարոյական ներդրումները կատարեն մեր ազգային եւ եկեղեցական կյանքում: Սա նրանց համար որքան իրավունք, նույնքան էլ պարտավորություն է:

Հայ ժողովուրդը ներկայիս կարիքն ունի մարդկանց, որոնք ավելի շահագրգռված են վսեմ գաղափարներով և արժեքներով, քան՝ գիտությամբ, մարդկանց, որոնք ոչ միայն հետամուտ են իրենց մտային հորիզոնները ընդարձակելու, այլև պատրաստակամությունը ունեն ազնվացնելու ու զարգացնելու իրենց սրտերը. Հավատալու իրենց առաքելությանը, մարդկանց, որոնք իրենց անձը զոհելով, իրենց *«էս»-ը* մի կողմ թողնելով, վճռականությունը ունենան հասկացողության նոր ճանապարհներ բացելու մեր հայրենիքի ու ժողովրդի կյանքից ներս:

Երիտասարդները պետք է լավ հասկանան ինքնավստահության և ինքնահավանության տարբերությունը. այսինքն՝ ինքնավստահությունը որքան որ օգտակար է, սակայն ինքնահավանությունը՝ հպարտությունը, (գոռոզությունը), նույնքան վնասակար է:

Մեր ժողովուրդը իրավունքը ունի ակնկալելու իր ներկա ուսյալ և ապագա պատասխանատու ու իրավասու սերունդներից, պատրաստ լինելու՝ իրենք իրենց զի-

նելու գիտության և մշակույթի լավագույն զենքերով, բարոյական ու հոգևոր բարձր և վսեմ սկզբունքներով, որպեսզի կարողանան պահել, պահպանել և հետագայում փոխանցել մեր նոր սերունդներին մշակութային ու հոգևոր մեր հարուստ ժառանգությունը;

Անփույթ, անհոգ ու անտարբեր վերաբերմունքը թե՛ քրիստոնեական, թե՝ ազգային ավանդությունների և թե՛ հոգևոր ժառանգության հանդեպ, ուրիշ բան չի, եթե ոչ *«բարոյական անձնասպանություն»:*

Պետք է հստակորեն հասկանալի դառնա այն իրողությունը, թե նոր սերունդը հակառակ իր բոլոր թերություններին, եթե այսօր ուշադրության էլ չարժանանա կամ անտեսվի, ապա անկասկած ուզենք թե չուզենք ապագան նրանցն է: Եվ սա՛ է իրականությունը: Հին սերունդը անշուշտ կարիքն ունի երիտասարդության աշխուժության, վարակիչ խանդավառության, աշխատանքի անընսպառ կորովի և ջերմեռանդ նվիրումի:

Դրան հակառակ նոր սերունդն էլ իր հերթին պետք ունի հին սերունդի փորձառության և իմաստության, առանց մոռանալու, թե՝ *«ծառը իր արմատո՛վ է միայն ծառ, թե չի կարելի լավ ներկայով ապրել և ապագան կերտել, առանց անցյալի գնահատման»,*- ինչ որ հաճախ կրկնում ենք մեր խոսքերում:

ԿՅԱՆՔԻ ԵՐԳԸ - Հետաքրքիր է.

«Հնդկական մի քաղաքի արվարձաններից մեկում սրնգահարը մեղմ հնչյունների ելևեջներով մի խորը փոսի մոտ նվագում է: Ծանր ռոքի սիրահար մի քանի երիտասարդ զինված երաժշտական գործիքներով հավաքվում են նրա շուրջը: Նրանցից մեկը հարցնում է.

Դու գիտե՞ս, թե ի՞նչ է ռոք երաժշտությունը.

Սրնգահարը չի պատասխանում, այլ շարունակելով նվագել՝ զարմացած հայացքով նայում է նրանց:

Երիտասարդն այս անգամ հեգնանքով ասում է.

Ահա ևս մի մարդ, որ հնամենի երաժիշտ է: Մենք հիմա քեզ կներկայացնենք մոդեռն, կյանք պարգևող երգերը և թե ի՞նչ է ծանր ռոքը, ու դու կհասկանաս, որ ժամանակակից, կյանքից ինչքան հետ ես ընկել:

Ռոքի սիրահարները հպարտորեն սկսում են բարձրաձայն նվագել և երգել: Այդ պահին փոսի միջից ֆշշոց է լսվում, և երկու հսկա կոբրա են դուրս գալիս ու առաջանում դեպի այդ երիտասարդները, որոնք սարսափից քարանում և լռում են:

Սրնգահարն ասում է.

Ինչո՞ւ դադարեցրիք ձեր մոդեռն երգերը, միգուցե այս կոբրաները դրանք գնահատեն, հանդարտվեն ու ձեզ իսկապես կյանք պարգևեն ···»:

Սրնգահարը շարունակում է նվագել և օձերը ետ են քաշվում…» (Հովհաննես Մանուկյան, «Առակներ», Երևան 2012, էջ 45):

Ժողովրդի հին ու նոր սերունդները չպետք է մոռանան, թե քաղաքակրթական, մշակութային և հոգևոր արժեքները ոչ թե մի սերունդի, այլ շատ սերունդների հավաքական ջանքերի ձեռակերտն են: Բացառություն չի նաև մեր ժողովրդի պարագային: Ուստի միացյալ ուժերով, հանրային բոլոր գործոնները ի սպաս դնելով, ինչպես նաև գիտությունն ու իմաստությունը գործածելով, պիտի աշխատենք տեր կանգնել մեր ավանդական հայրաժառանգ արժեքներին:

Այս սրբազան, նվիրական գործն ու առաքելությունը նոր սերնդի ու ամեն անհատի թե՛ առանձնաշնորհումն է և թե՛ պարտավորությունը:

Ամեն ասպարեզում, լինեն դրանք հոգևոր, մշակութային, կրթական, գիտական, մարմնամարզական և

այլն, հին սերունդին հարգելով ու գնահատանքի արժանացնելով, երիտասարդները կատարած կլինեն Աստվածային պատվերը. *«Պատվիր հորդ ու մորդ, որպեսզի կյանքիդ օրերը երջանիկ և ուրախ լինեն»*: Երիտասարդները մեծերին պատվելով, ապահոված կլինեն իրենց ապագա հարգանքը, քանի որ պատգամը այս է՝ *«Զքոյս ի քոյոց, քեզ մատուցանեմք»,* այսինքն՝ «*Քոնը՝ քեզ ենք մատուցում»:* Աստծու աչքերն ու ականջները բաց են, նա լսում է ու տեսնում: Աստված օրհնի հայ ժողովրդի հին ու նոր սերունդներին: Ամեն*:*

ԱՎԵՏԱՐԱՆԻ ՈՍԿԵ ՕՐԵՆՔԸ

«Այն ամենը, ինչ կկամենաք, որ մարդիկ ձեզ անեն, այդպես և դո՛ւք արեք նրանց…» (Մատթ.7:12):

Այս խոսքը ես վերցրել եմ Մատթէոս Ավետարանչի 7-րդ գլխի 12 համարից: Ի՞նչ ճանապարհ է ցույց տալիս մեզ մեր Տերը այս գեղեցիկ և ուսանելի պատգամով: Փորձենք կամաց-կամաց քանդել այն կծիկը, որը թաքնված է այս խրատում:

Ինչպես կարդում ենք Մատթեոսի Ավետարանի 5-րդ գլխում, մեր Տերը Իր աստվածային ճշմարտությունները քարոզեց ներկաներին Լեռան վրա: Ինը երանիների շարքը, որ Հիսուս սովորեցրեց, շատ ուսանելի էին, հիշենք մի քանիսը. *«Երանի հոգով աղքատներին, որովհետև նրանցն է երկնքի արքայությունը»: «Երանի սգավորներին, որովհետև նրանք պիտի մխիթարվեն» (Մատթ. 5:3-8)* և այլն, հույս և հավատ ներշնչեցին ներկաներին ու կարծես հոգեպես նետահարեցին նրանց սրտերը ու նրանցից շատերը իսկույն որոշեցին հետևել Նազովրեցի Վարդապետի ուսուցումներին, որովհետև Նա այս աշխարհի բազմապիսի տառապանքների և չարչարանքների դիմաց խոստանում էր երանավետ մի կյանք Աստծու ներկայության՝ հանդերձյալ կյանքում: Հիսուս տեսնելով այս ծարավ ժողովրդի պատրաստակամությունը, մեծապես քաջալերված՝ ինը երանիներից հետո, նրանց տվեց գործնական պատվերներ, որպեսզի դրանք կարողանան գործադրել իրենց առօրյա կյանքում ու ապա հայտարարեց Ավետարանի ոսկե օրենքը. *«Այն ամենը, ինչ կկամենաք, որ մարդիկ ձեզ անեն, այդպես և դո՛ւք արեք նրանց, որովհետև այդ իսկ են Օրենքն ու մարգարեները»*:

Բոլոր ժողովուրդների կյանքում բարոյականի ըմբռնման ու գործադրման եղանակը մեծապես ազդել է նրանց պատմության ապագայի կառուցման վրա: Կայսրություններ իրենց զարգացման ու բարգավաճման գագաթնակետին էին հասել, երբ կարողացել էին բարձր պահել իրենց քաղաքացիների և ենթակաների բարոյական կերպարը, այսինքն՝ ավելի պարզ ասած ընտանեկան սրբությունը, արդարությունը, հոգևոր կյանքը և այլն, արժեքներ, որոնք բարձր կարող էին պահել կայսրության ու տվյալ ժողովրդի բարոյականը և հավիտյանս դարձել նրանց ապագա կյանքի ամուր պատվանդանը, ավելին, դա նշանակում էր նրանց ապագա տունը կառուցել ամուր ժայռի վրա: Իսկ եթե դրան հակառակ նույն այդ կայսրության կամ տվյալ ժողովրդի բնակիչները, դատարկվելով վերևում իմ հիշած բարոյական արժեքներից, գիշեր ցերեկ իրենց ժամանակն անցկացնում էին ընկնելով հաճույքների ետևից, զբաղվում էին անառակությամբ, ստախոսությամբ և խաբեբայությամբ, մի խոսքով ապրում էին անհոգ, անտարբեր ու անարդար մի կյանքով, պատմությունը ցույց է տվել, որ դա՛ է եղել նրանց քայքայման ու կործանման պատճառը:

Եկեք թարմացնենք մեր հիշողությունը. ո՞ւր են այսօր իրենց ժամանակաշրջանի ամենահզոր և բարձրագույն մշակույթ ունեցող՝ Բաբելացիների, Պարսիկների, Ասորեստանցիների, Եգիպտացիների, Հռոմայեցիների կայսրությունները: Պատմությունը ցույց տվեց, որ նրանք բոլորն էլ քայքայվեցին ու կործանվեցին, որովհետև բարոյապես մեռան:

Ուրեմն, կարելի է վստահ ասել, որ բարոյականությունը հանդիսանում է ազգերի գոյատևման հիմքը:

Ավետարանից մեջբերված այս ոսկե օրենքն իր մեջ մեծ իմաստ ունի, որովհետև, երբ մարդ միայն իր անձի

մասին է մտածում և սպասում, որ բոլորն իրեն գովաբանեն ու փառաբանեն, այդպիսին հիվանդ է:

Դժբախտաբար այսօր աշխարհում աճող երեվույթներից մեկը ինքն իր մասին մտածելու հոգեվիճակն է:

Միշտ ես, ուրիշն ինձ համար կարևոր չէ:

Ահա մի մտածելակերպ, որը պարզ բառով կոչվում է *անձնասիրություն:* Մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, ասում է. *«Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ,… ով սիրում է իր անձը, կկորցնի այն, իսկ ով այս աշխարհում իր անձն ատում է, այն կպահի հավիտենական կյանքի համար» (Հովհ. 12:24-25):*

Շատերն այն կարծիքին են, որ բարձր դիրքի վրա գտնվող մարդիկ բոլորն էլ կրթված են լինում: Սխալ մտածում է: Ռուս ակադեմիկոս Դիմիտրի Լիխաչովը, որը բացառիկ գիտելիքներով օժտված գիտնական էր, ռուսական հեռուստատեսությամբ իր ելույթներից մեկում ասում է. *«Ժլատը կարող է ձևանալ առատաձեռն, տգեղը՝ գեղեցիկ և այլն: Բայց ներքին կուլտուրայից զուրկ մարդը երբեք չի կարող ձևանալ կուլտուրական: Դա Աստվածատուր է»:*

Անհատներ թե ընկերություններ, բուժվել են հոգեկան և մտային շատ ու շատ հիվանդություններից:

Ապրում ենք գեր զարգացած, խառնաշփոթ մի դարում և դժբախտաբար կան մարդիկ, որոնք, որպեսզի չկատարեն Հիսուսի այս ոսկե օրենքը, առանձնանում են, քաշվում իրենց պատյանի մեջ, ապրում են մեկուսացված մի կյանք, վախենալով ուրիշների ընկերությունից, հեռանում են բարեկամների շրջապատից: Հարց է առաջանում, *«Ինչո՞ւ, ի՞նչն է պատճառը»:* Պատասխանը ավելի քան պարզ է, որովհետև նրանք նախանձում են իրենց նմանին, չեն ուզում մի լավ բան անել և իրենց ստորացված ու նվաստացած են զգում, երբ տեսնում են նրա հաջողությունները:

Ուստի, մեր Փրկիչը՝ Հիսուս, լավ հասկանալով վերևում իմ հիշած ուսանողի և նրա պես մարդկանց, իրապես գիտական մի լուծում է տալիս այս հարցին, Իր Լեռան Քարոզում դրական խրատների շարքում պատգամելով նաև Իր ոսկե օրենքը. *«Այն ամենը, ինչ կկամենաք, որ մարդիկ ձեզ անեն, այդպես և դո՛ւք արեք նրանց…»:*

Եթե հոգեբանորեն մոտենանք մարդկության կյանքին, ապա կարող ենք ասել, թե մարդը ընդհանրապես ավելի շատ տրամադրված է գործադրելու *«մի՛ արա»* ժխտական օրենքը, քան թե *«արա»-ի* դրական ձևը, այլ խոսքով շատ ավելի հեշտ է «*մի բան չանել»,* քան թե՝ *«մի բան անել»:* Երեխաների պարագային սա շատ ավելի շեշտված է: Ինչքան ասում ես *«մի՛ արա»,* նա կարծես ավելի շատ է նույն բանը անում, քանի որ ինչպես ժողովուրդն է ասում *«արգելված պտուղը ավելի համով է»:*

Այսօր, դժբախտաբար, մեր սպասվածից ավելի է թիվը այն քրիստոնյաների, որոնք Հիսուսի այս ոսկե օրենքը չեն գործածում իրենց կյանքում. քարոզում են, խրատում, սովորեցնում, ցույց են տալիս դրա ճանապարհը, բայց դժբախտաբար իրենք չեն կատարում: Եթե հիշում եք, Հիսուսի ժամանակ նույնը անում էին նաև փարիսեցիները, որի համար էլ մեր Տերը քննադատեց նրանց կեղծավորությունը, ասելով. *«Վայ ձեզ կեղծավորներիդ, օրենսգետներիդ և փարիսեցիներիդ, որ բաժակի ու պնակի դուրսը մաքրում եք, մինչ ներսից նրանք լի են ձեր գողությամբ և անժուժկալությամբ: Կույր փարիսեցի, նախ մաքրի՛ր բաժակի և պնակի ներսը, որպեսզի դուրսն էլ մաքուր լինի» (Մատթ. 23:25-26):*

Եթե մարդիկ իրապես տրամադրված լինեն հետևվելու մեր Տիրոջ դրական ուսուցումներին, խրատներին և մանավանդ այս ոսկե օրենքին, նրանց սրտերը կլցվեն Հիսուսի սիրով և այն նրանց կմղի անկեղծ սրտով սիրելու,

ներելու և օգնելու իրենց նմաններին: Ահա այդ ժամանակ մարդու սրտում կմեռնի *«ես»-ը* և բոլորս ուրախությամբ ու ցնծությամբ կդիմավորենք մի նոր մարդու, կյանքի հանդեպ լցված նոր ծրագրերով, նոր մտահղացումներով և բարոյական մեծ ուժով ու մաքրությամբ:

Պատկերացնում եք, եթե այսպիսի մեծ ուժով և քրիստոնյայի պարտականության գիտակցությամբ օժտված մարդկանցով լցված լինի աշխարհը՝ ինչ երանություն, կունենանք դրախտային կյանք, նույնիսկ երազել չի կարելի: Բայց դժբախտաբար իրականությունն այլ է: Ճանապարհը բաց է բոլորիս առաջ կատարելու Ավետարանի ոսկե օրենքը: Փորձեք այսօրվանից, ինչո՞ւ չէ հենց այս պահից, ու միացեք ձեզ նման բազմահազար քրիստոնյաներին և երբ մտնեք աշխարհային կյանքի մեջ, հոգսերի ծանրության տակ, հիշեք ու հետևեք Հիսուսի հրաշալի պատգամին և իրագործեք այն, կտեսնեք, թե ինչքան թեթև, հանգիստ ու խաղաղ ձևով պիտի շարունակեք ձեր կյանքը: Ամեն:

ԳԹԱՍՐՏՈՒԹՅՈՒՆ

«Գթասիրտ եղեք, ինչպես որ ձեր Հայրը գթասիրտ է» (Ղուկ. 6:36):

Այս խոսքը ես վերցրել եմ Ղուկաս Ավետարանչի 6-րդ գլխի 36 համարից, ուր մեր Տերը խոսում է գթասրտության մասին:

«Ի՞նչ է նշանակում գթասիրտ լինել, ինչո՞ւ գթասիրտ պիտի լինենք, ի՞նչ արդյունք կարող ենք ունենալ գթասիրտ լինելով»:

Ճշմարիտ հրաշքը հենց գթասրտությունն է: Գթասիրտ եղեք մեկդ մյուսի նկատմամբ: Խիղճ ունեցողը՝ անպայման գթասիրտ է, որը նրա խղճի արտահայտությունն է:

Ընդհանրական Քրիստոնեական Հայրերից՝ Սուրբ Հովհան Ոսկեբերան Հայրապետն ասում է. *«Հարուստներն ու կուշտ մարդիկ, անտարբեր նայելով սովյալներին ու աղքատներին և նրանց չօգնելով, հավասարվում են մարդասպաններին»:* Հիսուս լավ ճանաչելով մարդկանց, պարզ խոսքերով բացահայտում է բոլոր ժամանակների ու ժողովուրդների գլխավոր մեղքը՝ անգթությունը: Իսկ երբ խորամուխ ենք լինում այս ճշմարտության մեջ և սկսում սարսափել մարդու բարոյական գիտակցության անլույս խավարից, երկնային մեղմ արշալույսը՝ գթասրտությունն է ծագում երկրի վրա, որի ետևում երևում է հենց Աստվածային Սիրո Արեգակը՝ Հիսուս Քրիստոսը:

Գութը քարակոփ լեռներից ավելին է. նա շարժում է քար սրտերը: Աշխարհում գութը հենց հրաշքն է: Գթությունը ողորմության բանալին է: Անգլիացի մեծ մտածող Շեքսպիրի համաձայն. *«Գթությունը օրենքի առաքինությունն է, որը բռնապետները այն անգութ կերպով են օգտագործում»:*

Մարդու սիրտը շարժող միակ զորությունը գթասրտությունն է և նրա աներևույթ մղիչ ուժը՝ աստվածային սերն է, որը երկնատուր մի շնորհք է տրված Աստծու կողմից: Գթասիրտ մարդը Աստծու պարտեզի պտղառատ ծառն է: Բավական չի լավ մարդ, հավատացյալ, հարուստ, գիտուն, աղոթող լինել, այլ պետք է դրանք սիրով ու գթությամբ արժևորել՝ առանց փառքի ակնկալության: Հիսուսի քարոզածը այս էր:

Սողոմոն իմաստունը հավատացյալին պատվիրում է գթասրտությունը դրոշմել իր սրտի տախտակի վրա: Առանց գթության որևէ սիրտ կնմանվի մի մսակույտի:

Գթության տիրապետած սրտում Աստծու խաղաղությունն է տիրում: *«Ողորմած մարդը բարություն է անում իր հոգուն, բայց անողորմ մարդը խորտակում է իր մարմինը» (Առակ. 11:17):*

Գթասրտությունը սիրո արտահայտությունն է: Սեր չունեցող մեկը, չի կարող գթասիրտ լինել, որովհետև այն աստվածային հատկություն է:

Գթասրտությունը առաքինություն է: Դրա լավագույն օրինակը անդամալույծի բժշկությունն է: Հովհաննես Ավետարանիչը 5-րդ գլխի 7-9 համարներում պատմում է անդամալույծի բուժման մասին. «*Ահա այդ սրահներից մեկում, մի անդամալույծ կար, որը երեսունութ տարիներից ի վեր այնտեղ հիվանդ պառկած սպասում էր:…Հիսուս Իր աստվածային ամենագետ և խորաթափանց հայացքը շեշտակի ուղղելով հիվանդ անդամալույծին, քաղցր մի ժպիտով հարց է տալիս նրան. «Կամենո՞ւմ ես առողջ լինել»: Հիվանդի պատասխանը երևում էր նրա աչքերից: Հիսուս շեշտակիորեն նայում է նրա աչքերի մեջ և հրահանգում. «Վեր կաց, վերցրու քո մահիճը և գնա»:*

Նա անմիջապես ոտքի է ելնում, վերցնում է իր մահիճը և սկսում քայլել:

Հիսուս Իր աստվածային զորությունը օգտագործում է հիվանդի նկատմամբ գթասիրտ լինելով: Պատկերացրեք ձեր վիճակը. երեսունութ տարի տառապել եք հիվանդությամբ, անկողնու մեջ պառկած, կորցրած ամեն հույս, տանջվել ու տառապել եք և ահա գալիս է մեկը, որը ձեզ հարցնում է. «Կամենո՞ւմ ես առողջ լինել»: Հիվանդի ուրախության պատասխանից հետո, հետևում է գթասրտության ամենավառ օրինակը. «Վեր կաց, վերցրու քո մահիճը և գնա»:

«Գաբրիել Հրեշտակապետը իր գթասրտությունն է ցույց տալիս հարբեցողի նկատմամբ:

Այս պատմությունը, որ կոչվում է «Ժամանակդ հասել է» հենց դրա մասին է.

«Հարբեցողի խմելու ժամանակ Գաբրիել հրեշտակապետը գալիս է ու ասում, «Ժամանակդ հասել է մեռնելու, եկել եմ, որ քեզ տանեմ»: Հարբեցողը անակնկալի է գալիս, բայց մի քիչ խելքը գլուխը գալուց հետո պատասխանում է. «Լավ, պարզ է, ես ոչինչ անել չեմ կարող, բայց մի խնդրանք ունեմ»: «Ի՞նչ է խնդրանքդ»,- հարցնում է Հրեշտակապետը: «Կարելի է այս մի շիշն էլ խմեմ, նոր մեռնեմ»: «Ինչո՞ւ չէ, կսպասեմ»: Հարբեցողը սկսում է իր կյանքի վերջին շիշը խմել, այդ ընթացքում հոգնությունից Հրեշտակապետը ննջում է: Նրա քնած ժամանակ հարբեցողը նկատում է, որ Հրեշտակապետի թևի տակ թուղթ կա: Հետաքրքրության համար կամաց հանում է այդ թուղթը և տեսնում է, որ ցանկ է, ուր գրված են նրանց անունները, որոնք պիտի մեռնեն և վախով նկատում է, որ իր անունը ցանկում առաջինն է: Հարբեցողը գրիչը վերցնում է ու իր անունը ջնջելով գրում է ցանկի վերջում:

Որոշ ժամանակ հետո Հրեշտակապետը զարթնում է ու ասում. «Երազ տեսա և ինձ ասացին, թե հակառակ որ հարբեցողությամբ ես անցկացրել կյանքդ, բայց լավ մարդ ես եղել ու ոչ մեկին վնաս չես հասցրել և վատություն չես արել, քեզ լավություն անելու համար ես մեր օրենքը պիտի խախտեմ ու փոխանակ սկզբից սկսեմ մարդկանց մեռցնել, պիտի գամ ցանկի ամենավերջից, որպեսզի քեզ կարողանամ օգնել»:

Հրեշտակապետը ցանկացավ իր գթասրտությունը ցույց տալ մի մարդու նկատմամբ, որը հակառակ հարբեցող լինելու, բարի ու արդար մարդ էր: Սակայն մարդը ուզեց խառնվել Աստծու գործերին և իր կյանքի անիվը շրջել: Բայց հակառակը ստացվեց: Դուք էլ մի՛ փորձեք, մի՛ չարաշահեք Աստծու գթասրտությունը: Նա գիտի, թե ե՞րբ և ինչպե՞ս գթասիրտ լինի մեր նկատմամբ: Մենք փորձենք ապրել աղոթքի կյանքով ու ընթանանք Աստծու ճանապարհով:

«Գթասիրտ տղայի» այս պատմությունը վստահ եմ պիտի հուզի շատերիդ, նրա գութը մեծ մայրիկի՝ տատիկի նկատմամբ, ուղղակի ապշեցուցիչ է: «Փոքրիկ տղան մայրիկի ձեռքը բռնած գնում էր: Արևոտ, սակայն ցուրտ օր էր: Տղան բոլորովին չէր զգում ցուրտը, քանի որ տաք էր հագնված, նաև շատ ուրախ էր. օրը կիրակի էր, ինքն արդեն դասերը պատրաստել էր և ազատ էր, հայրիկն էլ իրեն նոր խաղալիք էր գնել: Մայրիկը մի պահ կանգ առավ տարբեր մրգերով բեռնված վաճառասեղաններից մեկի առջև:

Մրգավաճառները կշռեցին և տոպրակների մեջ լցրեցին կարմրաթուշ խնձոր, բուրավետ նարինջ ու մանդարին, կիտրոն, անուշահամ այլ մրգեր: Տղան արդեն կանխավայելում էր համեղ միրգը, պատկերացնում էր, թե ինչպես է տանը նարնջից ծաղիկ ստանալու, ինչպես է

դրանք գեղեցիկ ձևավորմամբ դասավորելու մրգամանի մեջ: Հանկարծ նա լսեց մի ծեր տատիկի ձայնը. նա ձեռքը մեկնել և վաճառողին խնդրում էր.

Միրելիս, ինձ մի խնձոր տուր: Շատ քաղցած եմ, ուտել եմ ուզում, այսօր դեռ ոչինչ չեմ կերել: Վատ եմ զգում, շատ թույլ եմ… Տղան չլսեց, թե մրգավաճառն ինչ ասաց: Նա անդադար նայում էր տատիկին, նրա խորշոմած ձեռքին, մաշված վերարկուին, պատառոտված ոտնամաններին: Գլխաշորի տակից երևում էր ևս մեկ ճերմակ գլխաշոր: Տղան հիշեց իր տատիկին, ով նույնպես զույգ գլխաշոր էր կապում: Նա պատկերացրեց իր տատիկի բարի աչքերը, տաք ձեռքերը, նրա պատրաստած համեղ բլիթները: Ծեր տատիկի աչքերից արցունք էր հոսում և կորչում դեմքը պատած կնճիռների մեջ:

Մի պահ նրան թվաց, թե այն տատիկն իր տատիկն է՝ մրսած, ցնցոտիների մեջ, քաղցած ու միայնակ: Անծանոթ տատիկը հուսահատ մոտեցել էր մեկ այլ մրգավաճառի՝ փորձելով նրա գութը շարժել: Տղան նայում էր տատիկին, իսկ նրա ձեռքն արդեն մեկնվել էր փաթեթներին և շոշափում էր պարունակությունը: Տղան արագ դուրս բերեց տոպրակից խնձոր, նարինջ և էլի ինչ-որ մրգեր, և մոտենալով տատիկին, մեկնեց դրանք նրան՝ շշնջալով.

Վերցրեք, խնդրում եմ: Ապա արցունքոտված աչքերով մոտեցավ մորը և արագ բռնելով ձեռքն, ասաց.

Գնանք, մայրիկ: Մի փոքր հեռանալով՝ տղան շրջվեց. տատիկը դեռ կանգնած էր նույն տեղում: Խնձորը մնացել էր ձեռքում, իսկ մյուս մրգերն արդեն տեղավորել էր գրպաններում: Նա տեսավ, թե տատիկն ինչպես էր ժպտում, ապա խաչակնքեց: Տղան թեթևացած շունչ քաշեց: Արդեն գիտեր, որ շուրջը մարդիկ կան, ովքեր ոչ միայն

արևի, այլ մերձավորների ջերմության կարիքն ունեն: Եվ նա շատ ուրախ էր, որ կարող է ինչ-որ մեկին օգնել»:

Գթությունը երկնատուր մի շնորհք է Աստծու կողմից տրված: Գթասիրտ մարդը Աստծու պարտեզի սաղարթախիտ և պտղառատ ծառն է:

Մայր Թերեզան քարոզում էր բարություն և գթասրտություն: Կալկաթայում, հենց փողոցում հազարավոր մարդիկ էին մահանում: Նա ստեղծում է մահացողների համար նախատեսված տունը, որտեղ մահամերձ, անօթևան մարդուն շրջապատում էին սիրով և հոգատարությամբ, որպեսզի նա լիարժեք ապրեր իր վերջին օրերը: Երբ մահամերձ Մայր Թերեզային հարցնում են՝ եղե՞լ են արդյոք նրա կյանքում հանգստյան օրեր և տոներ, նա պատասխանում է. *«Այո՛, իմ մոտ ամեն օր էլ տոն է»:* Նա գթասիրտ էր և օգնում էր աղքատներից ամենաաղքատին:

Մի մտածող այս միտքն է արտահայտել.

«Այն դեպքում, երբ աշխարհում տիրապետող դառնան միայն կարեկցանքի ու գթասրտության երկու հատկանիշները, աշխարհը կլքեն մարդկային գիտակցության այնպիսի բացասական դրսևորումներն, ինչպիսիք են՝ պատերազմները, տեռորիստական գործողությունները, ատելությունը: Նաև շատ ուրիշ հատկանիշներ, որոնք ներկայումս բնորոշ են մարդկությանը, անէության գիրկը կանցնեն:

Եվ գլխավորը կդառնան միայն բոլոր կենդանի էակների նկատմամբ ձեր հոգածությունն ու ձեր Սերը յուրաքանչյուր Աստվածային դրսևորման նկատմամբ:

Ձեր կյանքում որքա՞ն հաճախ եք մտորում այն մասին, թե ի՞նչ ազդեցություն կարող էիք գործել ձեր շրջապատի վրա, եթե միայն ձեր սրտում տեղ գտնեին կարեկցանքի ու գթասրտության այդ երկու հատկանիշները: Խնդրում եմ այդ հատկանիշները չշփոթել խղճահարու-

թյան և ձեզ մոտիկ մարդկանց մասին հոգ տանելու հետ: Քանզի այն դեպքում, երբ կապվածություն եք զգում ձեր մերձավորների հետ և փորձում, ինչպես ձեզ է թվում, նրանց նկատմամբ տածել կարեկցանք ու գթասրտություն, ապա հենց ինքներդ եք տառապում: Քանի որ գթասրտության ու կարեկցանքի հատկանիշները, եթե իրապես են դրսևորվում ձեր կողմից, կախված չպետք է լինեն այն բանից, թե ինչ կարգի ազգակցություն գոյություն ունի ձեր և այն մարդկանց միջև, ում նկատմամբ գթասրտություն ու կարեկցանք եք տածում:

Դուք կարող եք ընդհանրապես չճանաչել այն մարդկանց, որոնք տառապում կամ օգնության կարիք են զգում, բայց սիրո և օգնության ձեր սրտի առաքումն ունակ է փոխելու այն իրադրությունը, որում գտնվում են այդ մարդիկ…»:

Մեր հավատը գործի վերածենք, գթասիրտ լինենք, օգնենք հիվանդին, կարիքավորին, բանտարկյալին, նեղություն ու ցավեր ունեցողներին և՛ բարոյապես և՛ նյութապես, սա կլինի քրիստոնեական ոգու ամենավառ արտահայտությունը ու ընդունելի Աստծու կողմից:

Զաքարիա մարգարեն ասում է. *«Արդար դատով դատեցեք, ողորմությո՛ւն և գթությո՛ւն արեք՝ յուրաքանչյուրն իր եղբորը: Մի՛ կեղեքեք այրուն, որբին, պանդխտին և տնանկին: Թող ոչ ոք իր սրտում ոխ չպահի իր ընկերոջ դեմ՝ նրա գործած չարիքների համար» (Զաք. 7:9-1):* Ամեն:

ԱՆԻՐԱՎՈՒԹՅՈՒՆ

«Դատ դատատանի ժամանակ որևէ մեկի հանդեպ անիրավություն մի՛ արեք: Անիրավություն մի՛ արեք նաև չափելու, կշռաքարերի ու կշռելու մեջ»
(Ղևտ. 19:35):

«Ի՞նչ է անիրավությունը, ինչո՞ւ են մարդիկ անիրավություն անում, ի՞նչ է անարդարությունը, արդյոք անարդարությունը և անիրավությունը նո՞ւյնն են»: Սրանք հարցեր են, որոնց պատասխանները մեր առօրյա կյանքում ցայտուն կերպով առկա են:

Ասենք, որ անիրավությունն ու անարդարությունը նույն միտքը ունեցող բառեր են: Երկուսի պարագային էլ մի ուրիշի իրավունքը խլելու գործողություն կա: Այդ պատճառով էլ իմ բնաբանիս մեջ օգտագործված խոսքը զգուշացնում է այսպիսիներին. *«Դատ դատատանի ժամանակ որևէ մեկի հանդեպ անիրավություն մի՛ արեք: Անիրավություն մի՛ արեք նաև չափելու, կշռաքարերի ու կշռելու մեջ»:*

Փաստորեն, եթե նայելու լինենք առօրյա մեր կյանքին, կտեսնենք, որ մարդիկ անիրավություն են գործում բարոյական գործերի, առևտրի, քաղաքականության և ազգային գործերի մեջ:

Անիրավության առաջին և գլխավոր մեղքը ագահությունն է, իսկ երկրորդը՝ տիրելու, զավթելու, նվաճելու հոգեբանությունը, և այդ ճանապարհին մեռնում է աստվածայինը՝ խիղճը և մաքուր սիրտը: Մարդը անիրավությամբ և անարդարությամբ թաթախվում է կեղտի մեջ:

Զարմանալիորեն այսօրվա աշխարհում այսպիսիներին մարդիկ սիրում են անվանել՝ *«ճարպիկ մարդ է, աչքը բաց և իր գործը իմացող»:* Այդպիսիները մարդկանց աչքին թոզ փչելու համար նույնիսկ կարող են Եկեղեցի

գնալ, ծունկի գալ, *«Տեր ողորմեա»* լսել, Սուրբ Հաղորդություն ստանալ, դրամ նետել գանձանակի մեջ, ուրիշներին ցույց տալ իբրև թե աղոթող են և Աստված կա իրենց մեջ։

Հակառակ նրան, որ մարդիկ շատ լավ գիտեն, որ այսպիսի անիրավություններ արգելված են Աստծու և պետության կողմից, սակայն անհասկանալի պատճառներով նորից են կատարում, որովհետև դրամը քաղցր է և բարձր ամեն ինչից։

Ազնիվ աշխատանքով դրամ շահելը ընդունելի է և՛ Աստծու և՛ մարդկանց կողմից, սակայն խարդախությամբ ու անիրավ ձևերով դրամ վաստակելը դեմ է Օրենքի և խղճի առաջ։ Ով որ այս ճանապարհի վրա է, ո՛չ Աստված ունի և ո՛չ էլ՝ խիղճ։

Անիրավ մարդու ցայտուն օրինակ է Ավետարանից Անիրավ Դատավորի և այրի կնոջ օրինակը, դատավոր, որ ո՛չ Աստծուց էր վախենում և ո՛չ էլ մարդկանցից ամաչում *(Ղուկ. 18:5)։*

Սողոմոն իմաստունի այս պատմությունը անիրավության և խաբեբայության լավագույն օրինակն է.

«Երկու կին գալիս են Սողոմոն իմաստունի մոտ։ «Մենք երկուսով ապրում էինք նույն հարկի տակ,- բացատրում է նրանցից մեկը,- ես մի որդի ունեցա, իսկ դրանից երկու օր հետո արու զավակ ունեցավ նաև այս կինը։ Բայց մի գիշեր նրա որդին մահացավ։ Օգտվելով առիթից, որ ես քնած եմ՝ նա իմ կողքից վերցնում է երեխայիս ու տեղը իր մահացած որդուն դնում։ Երբ ես արթնացա ու նայեցի մեռած երեխային, իսկույն նկատեցի, որ նա իմը չէ»։ Այդ ժամանակ երկրորդ կինն առարկում է. «Ոչ, ողջ մանուկը իմն է, իսկ մեռածը՝ նրանը»։ Առաջին կինը թե՝ ոչ, մեռած մանուկը քոնն է, իսկ կենդանին՝ իմը։ Եվ նրանք այսպես վիճում են։ Ինչպե՞ս պիտի վարվի Սողոմոն իմաստունը։

Նա հրամայում է մի սուր բերել, ապա ասում է. «Ողջ երեխային երկու կտոր արեք. կեսը տվեք մեկին, կեսը՝ մյուսին»:

Ոչ,- ճչում է իսկական մայրը:- Խնդրում եմ, մի՛ սպանեք նրան, այլ տվեք այդ կնոջը:- Իսկ մյուս կինն ասում է. «Մանուկը ո՛չ ինձ լինի, ո՛չ էլ քեզ: Կիսեք նրան»: Այստեղ Սողոմոն իմաստունը միջամտում է. «Մի՛ սպանեք երեխային: Տվեք նրան առաջին կնոջը: Նա է իսկական մայրը»: Սողոմոն իմաստունը գլխի է ընկնում, թե ով է իսկական մայրը, քանի որ վերջինս այնքան է սիրում իր զավակին, որ անգամ պատրաստ է նրան տալու ուրիշին, միայն թե երեխան կենդանի մնա»:

Անիրավ, խաբեբա և անարդար մարդկանց թվում է, թե իրենք մահ չունեն և հավիտենապես պիտի ապրեն ու այդպես մտածելով շարունակում են անիրավություններ անել և ուրիշների ունեցվածքներին տեր դառնալով հարստություն են կուտակում, սակայն մոռանում են Աստծու հիշեցումը. *«Անմիտ, հենց այս գիշեր հոգիդ քեզնից պահանջելու են, իսկ ինչ որ պատրաստել ես, ո՞ւմն է լինելու» (Ղուկ. 12:20):* Անիրավ մարդկանց խորհուրդ կտանք, որ գնան գերեզմանատուն և ննջեցյալներին մի հարց տան, թե իրենց հետ ի՞նչ են տարել ու հետո գան և շարունակեն իրենց կյանքը:

19-րդ դարի մեր եկեղեցականներից Գևորգ Եպիսկոպոսը իր խոսքն ուղղում է անիրավ մարդկանց և ինչո՞ւ չէ նաև մեզ, որ կարծում ենք ավելի արդար ենք, քան նրանք, որ մեղանչել են Աստծու դեմ անիրավություններ գործելով. *«Քննեցեք, եղբայրներ, ձեր անցած ճամբան և տեսեք ձեր աշխատասիրության չափն ու ձեր աշխատանքի պտուղները. տեսեք, թե ի՞նչ եք տվել աշխարհին, ի՞նչ բարոյական գործեր եք կատարել Աստվածային պատվիրանների հանդեպ:*

Հարցրեք ձեզ, թե՝ ո՞ւր և ե՞րբ նեղություն եք կրել հանուն Աստուծո, հանուն ճշմարտության, ո՞ւր և ե՞րբ զրկվել ու տանջվել եք ի սեր Աստուծո և ի սեր ճշմարտության և չարության հաղթելով բարին կատարել։ Գալիս եմ էական պատվիրանին, սիրո պատվիրանին և հարցնում՝ դուք որ ամեն օր ձեր անձի համար շատ աշխատանք եք թափում, նույնը անո՞ւմ եք արդյոք ձերայնիններին, մեղանչածչե՞ք արդյոք ձեր հոր ու մոր դեմ։ Ցույց տվե՞լ եք ձեր կյանքը ընկերոջը՝ ձեր կեսին ոսկու նման մաքուր սեր ու հավատարմություն։ Մեղանչածչե՞ք երբեք որդիներիդ հանդեպ. առաջնորդել եք նոցա եկեղեցի՝ ճշմարտության, արդարության և սիրո տաճարը. մարգե՞լ եք նոցա աշխատանքի, գործով կրթե՞լ եք նրանց սիրտը ողորմած լինելու, դաստիարակե՞լ եք նրանց ազգային հոգով, սնուցե՞լ եք նրանց հոգին մանկական անմեղ զվարճություններով, որոնք մանկան մատղաշ հոգու էական պայմաններն են՝ թե՞ նվիրել եք ձեզ ձեր անձի հաճույքներին ու զվարճություններին՝ այդ ամենը հավատալով միայն օտար կանանց։

Եղե՞լ եք ձեր խեղճ դրացիների ճշմարիտ բարեկամն ու եղբայրը. զգացե՞լ եք նոցա հոգսերն ու կարիքները, և ամոքելով նոցա վշտերը՝ ուրախացե՞լ եք նոցա հետ, թե՞լոկ ականատես եք եղել և իսկույն երես շրջել, որ չտանջվեք ու չվշտանաք, եթե միայն կարեկցելու ընդունակ եք։ Ի՞նչ եք արել ձեր համայնքի կարիքների համար, ի՞նչ եք արել ձեր ազգի ցավերը ամոքելու համար. ավելի հեռուն կերթամ, ի՞նչ եք արել աշխարհի բարոյական վերածնության համար, դուք, որ բողոքում եք աշխարհի բարոյական անկման դեմ, դուք, որ պարծենում եք, թե ճշմարիտ քրիստոնյաներ եք, ավետարանի հարազատ զավակներ։

Վախենամ եղբայրներ, որ մենք բոլորս և՛ հարուստ և՛ աղքատ, և՛ ուսյալ և՛ անուս դիտելով մեր կյանքն ու գործերը և գիտակցելով մեր պարտքերը կարմրենք ու լռենք, եթե մեր հոգու ապականված թանձր մշուշի մեջ աստվածային խղճի ձայնը դեռ ընդունակ է արձագանք տալու» (Գևորգ եպիսկոպոս, «Քարոզներ»)

Երբեմն իբրև հոգևորական լսում եմ այսպիսի արտահայտություններ, թե՝ *«Ինչո՞ւ անիրավ, ավազակ, խարդախ, անարդար, կողոպտիչ մարդիկ ավելի լավ ու երկար են ապրում, իսկ դրան հակառակ առաքինություններով օժտված և բարի ու արդար կյանքով ապրողները լավ վիճակում չեն և ժամանակից շուտ էլ հեռանում են այս աշխարհից»:* Սրա պատասխանը կարող ենք գտնել Ամոսի գրքում, ուր այս մասին ասվում է. *«Դրա համար աղքատներին նեղելով, և նրանցից ընտրությամբ կաշառք առնելով՝ շքեղազարդ ապարանքներ պիտի շինեք, բայց չեք բնակվի նրանց մեջ, գեղեցիկ այգիներ պիտի տնկեք, սակայն նրանց գինին չեք խմի, քանի որ ես իմացա ձեր բազում ամբարշտությունները, և սարսափելի են ձեր մեղքերը: Արդարին ոտնակոխ էիք անում՝ կաշառք առնելով, և աղքատին դռնե դուռ էիք գցում: Ահա թե ինչու նա, ով իմաստուն է, այդ ժամանակ կլսի, քանի որ ժամանակը չար է: Բարին փնտռեցեք և ոչ թե չարը, որպեսզի ապրեք և ձեզ հետ կլինի Ամենակալ Տեր Աստվածը, ինչպես որ ասում է, թե՝ «ատեցինք չարը և սիրեցինք բարին» (Ամոս 5:11-14):*

Իսկ Պողոս Պատրիարք Ադրիանապոլսեցին շարունակում է. *«Եթե Աստված մարդու կամքին թողներ աշխարհի բարիքներն ունենալը, ինչպես կամենում են, որքան կամենում են և ուր կամենում են, այս աշխարհն ավազակների ու հափշտակողների հրապարակ կլիներ, և ամենքը զրկող ու անիրավ կլինեին: Ուժեղները տկար-*

ներին կհաղթեին, և տկարներն էլ միաբանվելով ընդդեմ ուժեղների կելնեին, մինչև որ միմյանց ջնջեին երկրից: …» («Խրատի Թանգարան», «Այս կյանքի վիճակը»):

Բնական է, որ բոլորս էլ պիտի մեռնենք լավ թե վատ, արդար թե՛ անիրավ, հարուստ թե՛ աղքատ, բայց երանի այն մարդուն, ով իր աչքերը կփակի խղճի կատարյալ խաղաղությամբ և հոգեկան հարստությամբ կմտնի հավիտենականության մեջ:

Փորձենք ապրել մաքուր սրտով ու խղճով, առանց խաբեբայության, անիրավության ու խարդախության, որպեսզի հաճելի լինենք և՛ Աստծուն և՛ մարդկանց: Ամեն:

ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆ

«Միայն ձեր շահը մի՛ փնտռէք, այլ յուրաքանչյուր ոք՝ ընկերոջ շահն էլ» (Փիլ. 2:4):

Այս խոսքը ես վերցրել եմ Պողոս Առաքյալի Փիլիպպեցիների ուղղված նամակի 2-րդ գլխի 4-րդ համարից, ուր Առաքյալը խոսում է այն մասին, որ ամեն մարդ միայն իր շահը չպիտի փնտրի, այլ նաև՝ ընկերոջը: Մի խոսքով Առաքյալը մեր ուշադրությանն է հանձնում մարդկանց հետաքրքրության մասին:

Երկու տեսակ հետաքրքրություն կա՝ լավ և վատ: Վատ հետաքրքրությունը չար նկարագրի արդյունք է և պարզապես հավատի պակասությունն է: Ըստ Առաքյալի՝ աշխատել չսիրողների և ծույլերի արարք է: Վատ հետաքրքրությունից տարվածները *«Միաժամանակ և անգործության են վարժվում՝ շրջելով տնից տուն. և ոչ միայն դատարկապորտներ են, այլև շատախոս և ավելորդ հետաքրքրասեր. և խոսում են բաներ, որ պետք չէ խոսել» (Ա. Տիմ. 5:13):*

Առաքյալը դատապարտում է այս դիրքը: Հավատացյալը հեռու պիտի մնա նման պարագաներից: Հեռու մնալու պայմանը այն է, որ ամեն մարդ իր գործով պիտի զբաղվի և հետաքրքրվի լավ բաներով, որոնք իրենց կազնըվացնեն ու կզարգացնեն:

Հետաքրքրությունը մարդու ներաշխարհից բխած մի երևույթ է: Ամեն մարդ հետաքրքրվում է իր նախասիրություններով:

Ամեն համայնքում էլ կան մարդիկ, որոնք կարծես թե իրենց գործով ու տնով չեն զբաղվում, այլ հետաքըրքրվում են ուրիշների կերածով ու խմածով և նրանց կյանքով: Բնական է այս անելով, նրանք չեն հարստանում, սակայն լուրերը լցնում են ստերով ու չափազանցություն-

ներով և դրանով ուրախացնում են սատանային, դժբախտացնելով ու վիրավորելով ազնիվ մարդկանց։

Եթե այսպիսի մարդկանց լսողներ էլ կան, ապա նրանք էլ հանցակից են, քանի որ տեղյակ լինելով այսպիսիների ստախոսությանն ու չափազանցությանը, նրանց կարևորություն են տալիս և հավատում նրանց ասածներին;

Առաքյալը խստիվ դատապարտում է այս դիրքը։ Նա հստակ կերպով ասում է. *«Ստուգեցեք, թե ո՞րն է հաճելի Տիրոջը, և խավարի անպտուղ գործերին մասնակից մի՛ եղեք, այլ մանավանդ մերկացրեք դրանք» (Եփես. 5:11)* և շարունակում է. *«Տեսեք, թե ինչպիսի զգուշությամբ պիտի ընթանաք. ոչ թե ինչպես անմիտներ, այլ՝ ինչպես իմաստուններ» (Եփես.5:15)։ «Միայն ձեր շահը մի՛ փնտռեք, այլ յուրաքանչյուր ոք՝ ընկերոջ շահն էլ»։*

Մարդկային քաղաքակրթության զարգացումը կախում ունի ընկերոջ լավը փնտրող մարդկանցից։ Եթե ուրիշի լավը կամ օգուտը չփնտրենք կլճանանք ու մենք մեզանով կմնանք։ Ուրիշի լավը փնտրելու ձևերը բազմաթիվ են, բայց այդ բոլորի գլուխն է բարոյական օգուտը։

Այս պատմությունը հետաքրքիր է.

«Երիտասարդ աղջիկը գալիս է հոր մոտ և սկսում նեղսրտել. «Հա՛յր, հոգնել եմ, այնքան ծանր կյանքով եմ ապրում, այնքան դժվարությունների ու փորձությունների միջով եմ անցնում, որ, կարծես, միշտ լողում եմ հոսանքի դեմ։ Այլևս ուժ չունեմ… ի՞նչ անեմ»։ Հայրը պատասխանի փոխարեն, ջրով լցված երեք հավասարաչափ կաթսա է դնում կրակի վրա, ապա մեկի մեջ գցում է գազար, մյուսի մեջ՝ ձու, իսկ երրորդի մեջ սուրճ է լցնում։ Որոշ ժամանակ անց նա կաթսայից հանում է գազարն ու ձուն, երրորդ կաթսայից լցնում սուրճը մի բաժակի մեջ և հարցնում աղջկան.

Ի՞նչ է փոխվել:

Զուն և գազարը եփվեցին, իսկ սուրճը լուծվեց ջրում, – պատասխանում է աղջիկը:

Ո՛չ, դուստր իմ, դա միայն մակերեսային հայացք է իրերի վրա,- ասում է հայրն ու բացատրում,- Տե՛ս, պինդ գազարը, մնալով ջրի մեջ, դարձավ ավելի փափուկ ու ճկուն: Փխրուն ու հեղուկ ձուն դարձավ պինդ: Արտաքնապես դրանք չփոխվեցին, այլ միայն իրենց կառուցվածքը փոխեցին արտաքին հավասար անբարենպաստ պարագաների ազդեցության տակ՝ եռացող ջրի մեջ…

Շարունակելով միտքը՝ հայրը եզրափակում է ասածը. «Այդպես և մարդիկ են. արտաքնապես ուժեղները կարող են թուլանալ ու տկարանալ այնտեղ, որտեղ նուրբ ու փխրուն մարդիկ դառնում են ավելի ուժեղ…»:

Իսկ սո՞ւրճը, – զարմացած հետաքրքրվում է դուստրը:

Սուրճն ամենահետաքրքիրն է: Այն ամբողջությամբ լուծվեց նոր՝ թշնամական կամ խորթ միջավայրում՝ նրան դարձնելով եռացած համեղ ըմպելիք: Այնպես որ, աղջի՛կս, կան յուրահատուկ մարդիկ, ովքեր իրենք են փոփոխում միջավայրը և ոչնչից ստեղծում են նորն ու գեղեցիկը՝ քաղելով իրավիճակից օգուտ և գիտելիքներ, – դստեր գլուխը շոյելով՝ հայրը տվեց հուսահատ դստեր հարցի պատասխանը»:

Եթե ուրիշի բարոյական օգուտը չփնտրենք, մենք մեզ կնվաստացնենք: Հանրային կյանքում գոյություն ունեցող ծառայության ձևերը պարզապես ուրիշի լավը փնտրելու համար են և արդյունք են վսեմ հետաքրքրությունների, որոնք մաքուր նկարագրերի և հոգեկան առաքինությունների պտուղներն են:

Դժբախտաբար իրականությունն այլ է: Այսօր մարդիկ ոչ թե Աստծու, այլ իրենց փառքն են փնտրում, և ամեն

ինչ անում են, որպեսզի միայն իրենք փառավորվեն, առանց հասկանալու, որ իբրև մարդիկ իրենք ժամանակավոր են ու իրենց փառքը նույնպես, բայց Աստծու փառքը՝ հավիտենական է։ Ինչ որ նրանք կազմակերպում են՝ համերգներ, ճաշկերույթներ, հանդիսություններ, գինեձոններ, հավաքույթներ, միշտ ուզում են, որ իրենք պատվավոր տեղերում երևան ու առաջինը իրենք խոսեն ու ներկայանան։ Իսկ եթե փորձես մի քիչ շեղվել և կշեռքի նժարը թեքել այլ մարդկանց կողմը, պարզ է, թե դեպի ո՞ւր կարող ենք գնալ։ Իսկ ոմանց հետաքրքրասիրությունը չափ ու սահման չի ճանաչում, ամեն ինչի մեջ իրենք են, ամեն բանում իրենց ասածը պիտի լինի։ Իրենք անպայման պիտի իմանան, չիմանան… հանկարծ սրտի կաթված կստանան։ Ամեն խմբում իրենք ներկա են, եթե նույնիսկ արժանի էլ չեն ու այդքան շնորհքներ էլ չունեն, բայց մեջն են, որովհետև իրենց հետաքրքրասիրությունն է խեղդում, թե ի՞նչ պիտի լինի։ Երանի այդպես չլիներ, այլ խոնարհությունն ու համեստությունը թագավորեին մարդկանց սրտերում։ Բայց ավաղ…։

«Մի օր բարեպաշտ մի մարդ ներկայանում է անգլիացի մի փիլիսոփայի ու ամբաստանում մի մեծահարուստի իբրև անաստված։

Փիլիսոփան լսելուց հետո, հանգիստ պատասխանում է նրան.

Սխալվում եք, հարցը չի վերաբերում անաստվածության, որովհետև աշխարհում անաստված մարդ գոյություն չունի։ Այն մեծահարուստը, որի մասին խոսում եք, հավատում է մի գերագույն էակի, միայն մի տարբերությամբ, որ այդ ամենազոր էակը՝ հենց ինքն է»։

Այս պատմությունից կարելի է դաս քաղել, թե ուր որ Աստված արմատախիլ է եղել, երկրպագությունը գնում

է հիվանդ *«ես»*-ին։ Սա վերաբերում է նաև հետաքրքրասեր մարդուն, որի *«ես»*-ը ամենազոր է իր համար։

Պողոս Պատրիարք Ադրիանապոլսեցին ասում է. *«Աննենգ ու պարզամիտ մարդիկ մեկի մասին դատելիս իրենց կասկածն ավելի շրջում են դեպի բարի կողմը, իսկ նենգավորներն ու խորամանկները՝ դեպի չար կողմը: Որովհետև մարդկանց հատուկ է իրենց նման ճանաչել ու համարել ուրիշներին և ըստ այդմ դատել նրանց խոսքերի ու գործերի մասին: Ուստի, պարզամիտներն արագ են խաբվում, որովհետև բոլորին հավատում են՝ կարծելով, թե բոլորն էլ պարզամիտ են, իսկ խորամանկները ոչ ոքի չեն հավատում, և այս երկու ծայրերն էլ մոլություն են: Որովհետև ինչպես որ պատշաճ չէ բոլորին հավատալ, այդպես և պետք չէ բոլորին նենգավոր կարծել, այլ պետք է իրերի մասին արդարությամբ դատել, առանց աջ կամ ձախ շեղվելու» («Խրատի Թանգարան»):*

Կեղտոտված բերանը կարող ենք ջրով լվանալ, բայց ոչ՝ սիրտը։ Այն մաքրելու համար կարիքն ունի զղջման։ Խղճի արցունքը միայն կարող է մաքրել կեղտոտված սիրտը։

Ուրեմն, փորձենք մաքրված սրտով ու խղճի մտոք մեկս մյուսին օգնական լինել՝ աղոթքով, հավատով և սիրով։ Ամեն։

ՀԵՂԻՆԱԿԻ ՏԱՐԲԵՐ ՏԱՐԻՆԵՐԻՆ
ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ԳՐՔԵՐԸ

1.	Տիրոջ Խորանը	Լոս Անջելոս	2006
2.	Հավատքի ուժը	Լոս Անջելոս	2006
3.	Տիրոջ Խորանը Բ. հրա.	Լոս Անջելոս	2007
4.	Սիրո Աղավնին	Լոս Անջելոս	2008
5.	Անառակ Որդու վերադարձը	Լոս Անջելոս	2009
6.	Իրական Մարգարիտը	Սբ. էջմիածին	2008
7.	Ճշմարտախոս Քրիստոնյան	Սբ. էջմիածին	2008
8.	Ո՞վ է իմ ընկերը	Սբ. էջմիածին	2010
9.	Սիրո առաքելությունը	Սբ. էջմիածին	2010
10.	Ճշմարտության բանալին	Սբ. էջմիածին	2014
11.	Լույսի շողեր	Սբ. էջմիածին	2014
12.	Լուսեղեն ճանապարհ	Սբ. էջմիածին	2014
13.	Աստվածասեր մարդը	Սբ. էջմիածին	2018
14.	Հավատի Դարբնոցը	Սբ. էջմիածին	2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
Օրհնության խօսք	5
Նախաբան	6
Շնորհակալության խոսք	10
Երկու խոսք	11
Ամուր ժայռը՝ Հայաստանյայց Առաքելական եկեղեցին	13
Սուրբ Էջմիածնի խորհուրդը	18
Աղավնու սիրտը՝ մայրը	27
Աստվածասեր մարդը	35
Արդարի աղոթքը	39
Հիսուս թակում է մեր դուռը	44
Ընտանիքը ուժ է	49
Հոգևոր կուրություն	56
Նմանվեցեք Աստծուն	61
Փորձություն	65
Խոստովանություն	70
Նախանձոտ մարդը	76
Բամբասանքը մեղք է	81
Աշակերտների «Սխալը»	86
Մեղքը ո՞ւմն է	91
Թող Քո կամքը լինի	96
Ճշմարիտ իմաստունը	101
Ընտրվածների մասին	106
Խոսքի և գործի արժեքը	110
Քաջ և զոհվող Հովիվը	115
Բարտիմիոս կույրի խնդրանքը	124
Բարիք արա կարոտյալին	128
Ծուլությունը չարիք է	133
Մեղրով լցրու քեզ	137

Անկեղծություն 143
Խղճմտանք 147
Սիրել մեր թշնամիներին 153
Հիսուսի քաջալերիչ ձայնը 156
Չենթարկվել չարին 160
Մանուկների անմեղությունը 164
Խնդրանք Աստծուն 168
Քրիստոսին միանալ 173
Հիսուս կյանք է 178
Անդամալույծի բժշկությունը 181
Աստծու ներկայությունը 186
Իրական մարգարիտը 189
Ճշմարտախոս քրիստոնյան 193
Ծածուկ ողորմությունը 197
Ո՞վ է մարդը 201
Աշխարհի շահը 206
Աստծու ողորմածությունը 211
Պիղծ ոգու վերադարձը 216
Խոնարհության դասը 220
Ագահության վնասները 225
Սիրո առաքելությունը 229
Սուրբ Ծնունդ 232
Մեծ Պահքի խորհուրդը և արժեքը 238
Սուրբ Հարություն 243
Ժառանգության բաժանարարը 247
Ո՞վ է իմ ընկերը 251
Ատելությունը չարիք է 257
Հոգու ծարավը 262
Փյունիկեցի կնոջ հավատը 270
Գանձեր 276
Հոգով աղքատներ 282
Երանի ողորմածներին 291

Սրտով մաքուր մարդիկ 300
Քրիստոսի Ավետարանը՝
Խաղաղության բանալի 308
Մի՛մատնիր 316
Աստծու դրամապանակի՞ց ես գողանում 321
Իմ խոսքերը ճշմարիտ են 326
Բարիքից չարիք կծնվի՞ 329
Ներելու և սիրելու ոգին 335
Կյանքի իմաստը 338
Հրեա օրենսգետի իմաստությունը 344
Մտածի՛ր և գործի՛ր 349
Մի՛ տրտնջա, այլ հույս ունեցի՛ր 354
Հին ու նոր սերունդի համաձայնությունը 358
Ավետարանի ոսկե օրենքը 362
Գթասրտություն 367
Անիրավություն 374
Հետաքրքություն 380
Հեղինակի գրքերը 385
Բովանդակություն 386
Կենսագրություն 389

ԱՐԺԱՆԱՇՆՈՐՀ ՏԵՐ ՀՈՎՍԵՓ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ

Արժ· Տ· Հովսեփ Ավագ Քահանա Հակոբյանը ծնվել է 1950 թվի Հոկտեմբերի 7-ին, Էջմիածին քաղաքում, Հայաստան:

1960-62 թվականներին հաճախել է Էջմիածին քաղաքի Սբ· Աստվածածին եկեղեցին:

1962-ի Սեպտեմբերին ընդունվել է Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարան:

1967-ին ձեռամբ Մայր Տաճարի Լուսարարապետ՝ Գերշ· Տ· Հայկազուն Արքեպս· Աբրահամյանի ձեռնադրվել է Սարկավագ:

1968-ին ավարտել է Հոգևոր Ճեմարանը և նույն տարվա Հունիս ամսին նշանակվել Կաթողիկոսարանի Քարտուղար:

1974-ի Փետրվարի 16-ին ամուսնացել է Մերի Մանվելյանի հետ:

1974-ի Դեկտեմբերի 22-ին Մայր Աթոռում ձեռնադրվում է ամուսնացյալ Քահանա և 1975-ի Մարտին նշանակվում Էջմիածին քաղաքի Սբ· Հռիփսիմե վանքում իբրև ծիսակատար, միաժամանակ շարունակելով Կաթողիկոսարանի Քարտուղարի պաշտոնը:

1977-ին Տեր Հոր ընտանիքը բախտավորվում է արու զավակով, որին ի հիշատակ իր վաղամեռիկ եղբոր անվանակոչում են Խաչատուր:

1978-ի Մայիսին իբրև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ներկայացուցիչ, Տեր Հայրը մի Վարդապետի հետ մասնակցում է Հյուսիսային Ամերիկայի Արևելյան Թեմի Հոգևորականաց Համագումարին:

Ամերիկայից վերադարձին շարունակում է իր ծառայությունը Մայր Տաճարում և նույն թվականի Սեպտեմբեր ամսից նշանակվում Էջմիածին քաղաքի Սուրբ Աստվածածին եկեղեցու պատասխանատու, ապա՝ Վանահայր:

1979-1993 թվականներին ծավալել է թե՛ շինարարական և թե՛ հոգևոր լայն գործունեություն, պատշաճ մակարդակի հասցնելով եկեղեցու առաքելությունը: Այդ թվականներին Երջանկահիշատակ Վազգեն Վեհափառի հանձնարարությամբ ստեղծում է նախապատրաստական դպրոց բաղկացած 9-14 տարեկան փոքրիկներից ու պատանիներից: Դպրոցի նպատակն էր պատրաստել եկեղեցական արարողություններին որոշ չափով գիտակ պատանիներ Հոգևոր Ճեմարանների համար:

Այդ փոքրիկներից և պատանիներից շատերը այսօր արդեն իսկ ձեռնադրյալ հոգևորականներ են կուսակրոն կամ ամուսնացյալ և ծառայում են Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն՝ ի Հայաստան և ի Սփյուռս աշխարհի:

1994-ի Դեկտեմբերին Տեր Հայրը ընտանյոք տեղափոխվել է Ամերիկայի Միացյալ Նահանգներ և 1995-ի Հուլիս ամսից մինչև այսօր շարունակում է իր հոգևոր ծառայությունը Հյուսիսային Ամերիկայի Արևմտյան Թեմում՝ զբաղեցնելով զանազան պաշտոններ:

2015 թվականից Թեմի ընդունված կարգի համաձայն անցել է թոշակի և շարունակում է իր հոգևոր ծառայությունը Թեմից ներս ու իր նպաստն է բերում Հայաստանայյց Առաքելական Սուրբ Եկեղեցուն ու մեր հավատացյալ ժողովրդին: